լաւ համարեալ զթիւրութիւնն աճել յուղղութէն թե-
պէտ և վաղնջուց էր և հաստատուն հռովհէական օրի-
նօք։

Կոյնպէս և ստերգուածին մահապարտ էր, որպէս աս-
տուածամարտ և թշնամանող մեծվայելուչն դիցն՝ վկայ
կոչելով ստութէն զանուն նոցա, և որպէս թշնամի մարդ-
կան՝ զի խղճ զհաստատուն կայ ընկերութէն նոցա, զանւ
կեղծութէն իմն և զհաւատարմութէն։ Կւ զրպարտողին
նոյն պատուհաս էր՝ յոր զանմեղն զրպարտէր։ Կարծոյց՝
որ ոչ ապրեցուցանէին զհարստահարեալն, մահ դատնու-
թէն որպէս յելուզակաց պատուհաս էր նոցա։ Կթէ չէր
ոք կարող ի թիկունս հասանել զրկելոյն, սակայն պարտ
էր յայտնել զհարստահարողն. և դատաստանք էին ընդ-
դէմ վրիպելոցն յիրաւանց աստի։ Կովին օրինակաւ քա-
զաքացիք պահապանք էին միմեանց, և աշխարհն համօ-
րէն՝ անոդեան չարագործաց։

Ալէր ումեք օրէն անպիտան լինել աշխարհին. անձին
իւրաքանչիւր պարտ էր գրել զանուն իւր և զտունն յար-
քունի դիւանին՝ որ էր ի ձեռս իշխանաց, և նշանակել
անդ զգործ իւր, և ուստի իցէ նմա պարէն։ Կւ որ ստու-
թէ՛ լինչ ոք գրեր, մահու մեռանէր։

Ի կարձել զիմոս, զպատճառս դատարկակեցուն և Ելք. ա.
նենգութէն և խորամանկութեան, Կչէքիս արքայ եհան Ղեւ.
հրաման կարի խոհականութէ՛։ Կնմաստունքն և բարե-
կարգք յաշխարհայդ, իբր ասէ Կթէնք և Հռովմ, տազ-
նապեցան յայմ ժամանակի ի գտանել չափ արդար՝ որով
լեզի սանձել զխստուի փոխատուին ի պահանջել զիմոս
իւր, և զիմոսառուին անհատատարմութիւն՝ ի չառնուլ
յանձն, կամ յանիմոյն առնել գհատուցումն պարտեացն։
Կիտաց Կգիպտոս խմաստութէ՛ ի միջոցին կալ, և ա-

ռանց զզուելոյ զանձնական ազատութեն քաղաքացեաց և աւերելոյ զազգատոհմն, ստիպեր տարհնազալ զպարտապանն՝ առ երկիւղի գաղջեցուցանելոյ զնմուն իւր հասա-
տագծութեն։ Զեր օրէն փոխ առնուլ ումեք առանց դրաւ դնելոյ առ փոխատուին գնդրմին հօր իւրոյ, զոր ինամով գմնասել եդիպատացին՝ պահելն պատուով՝ ի
տան իւրեանց, զորմէ ասացաք զկնի. վասն որոյ և գիւ-
րին եր առ ջօջի՝ ի տեղի ածել զայսոսիկ։ Լուծ անկարճ-
տութեան և գաղջութ եին գանգաղել՝ ի Տանել անտի
զգրաւն պատուական. և որ պարտաւոր մեռաներ այսմ
յանցանաց, ոչ տային նմա զպատիւ՝ զոր մեռելոյն ընծայել սովորութեի եր։

ա։ Ոխիդորս նշանակէ զվերխակ ոմանց յօրէնադրացն հելլենացւոց՝ զի արգելուին, օրինակ իմն, առնուլ յերկրագործաց փոխանակ պարտեացն գձիս նոցա, զարօր, և զայլ անօթս հողագործութեն. զի անգիտութեի համարեին խափանել այնու զտուապեալսն և՝ի պարտացն վնարե-
լոյ և՝ի կենացն պահպանութ. բայց սակայն թեպ տային՝ի բամս արկանել զնոսին իակ զհողագործն՝ որոց միայն է զայն ետ գործս՝ի գործ արկանել. որով՝ի նոյն ան-
կանելին եպիբամս, մանաւանդ և զաշխարհն զրկելին յիւ-
րոց անտի կարևոր քաղաքացւոց՝ որ յօգուտ հասարա-
կաց վաստակին, և ուրուք՝ի սոսկականաց ոչ է խնամա-
տարի՝ի վերայ անձանց նոցա։

Հազմանուտեի օրէն եր եդիպատացւոց, բայց միայն՝ի քրմանցն՝ որք ոչ կարելին անցանել յերկրորդ անկողին։ Որպիսի որ և Հանդիպէր կնոյն, յազատաց կամ՝ի սորը-
կաց, որպիսք նոցա ազատ և օրինաւոր համարեալ եին։

Վաղ՝ի միտ առնուլք զնոր աղջամուղջն՝ յոր աղդք ամենիմատաքն կարծեցեալք՝ ընկղմեալ կայեին, իբրև տե-
սանելիք զի ամենատեի եղբարց ընդ քոյս ոչ միայն յօ-
րինաց անտի հրամայեալ եր առ եդիպատացիս, այլ գրե-
տեի և՝ի կրօնս նոցին հաստատեալ, և յօրինակս գիւրն՝
զորս՝ի վաղ ժամանակաց պահեր աշխարհն ամ՝ որ այն
ինքն էն Աիւրիս և Ասիս։

Եբեր. ե. ե։ Ետերոց մեծագոյն պատիւ տանելին եդիպատացիք։ Օրինք եին երիտասարդաց յառնել առաջի նոցա. և ամ ուրեք զպատիւ բարձին՝ նոցա հնորհել։ Լսոտի այս օրինք անցեին՝ի Պարսիս։

Լաջին քան զամ առաքինութե եդիպատացւոց երախ-
տագիտութեի եր։ Լսոյ առաքինութեե պարծանք, զոր ժառանգեցին քան զամ մարդիկ, վկայէ զնոսա և ըն-

դէլաստրս լեալ քան զամենեսեան ։ Հ աղկալ է բաբե-
բաբութեի՛ հասարակաց և իւրաքանչիւրոցն խաղաղու-
թե ։ Որ ձանաչէ զՀնարքն՝ սիրէ և առնէ, և չալածա-
կան եղեալ ապերախտութեի՛ այնչափ յատակի ցանկու-
թե բարերարելոյ , զի անհնարին է այնուհետև չսիրել
զնա ։ Պատուել առ Թագաւորս իւրեանց պարծէին եգիպ-
տացիք լինել երախտագէտս ։ Զի կենդանութե՛ նոցա՝
պաշտէին զնոսա իբրև կենդանի պատկերս դիցն, և յետ
մահու նոցա՝ սգային իբրև զհասարակաց Հայր ամե-
ղոյդեանն ։ Այս խոստովանութե՛ սիրոյ և պատուոյն
յառաջ գայր յանշուշտ հաւանութե՛նէ նոցա՝ զի ամե
որ բազմեցուցանէ զԹագաւորս ի գահ , տալով նոցա
փառս ի վերայ այլ մարդկան . և թէ սոքա յանձինս
իւրեանց բերէն զվեհ նորայն նմանութե՛ , զոյզ ընդ կա-
տարն և կարողութե՛ ունելով բարերարութե՛ ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս օրմոյ և երջանկի եգիպտացոց ։

Ո՛չնի Թագաւորաց՝ առաջին աստիճան քրմացն էր
Այգիպտոս ։ Ի՛ւրաքանչիւր ինորհս և բազում եկամուտս
ունէին, և երկիր նոցա ազատ էր յհարկաց ։ Ի՛ս-
տանօր հնոյ բանից ծննդոց գրոցն նշանարին, զի առ ժա-
մանակօք Յոսեփեայ երկիր քրմացն ոչ եմուտ ընդ մէնա կ. 22։
ջնեալոր Տարկաւ Թագաւորին՝ որպէս զսլոյց եգիպտաց-
ւոցն ։

Յառնոյ Թագաւորն ինքնին Տաղորդս կոչէր զնոսա
խորհրդոց իւրոց և առաջնորդութե՛ . քանզի յհամ ձա-
ւայս Թագաւորութե՛ն առաւել քաջակիրթք նոքա էին
և խնամոտունք , և միամտակալք ընդ աքսորսի , և Տասարա-
կաց բարւոյն նախանձաւորք ։ Ի՛նդամանսն աւանդա-
պահք էին կրօնից և գիտութե՛ց , որով պատուականք
էին յոյժ առաջի ևկացն և բնակաց , որք առ նոսա ըն-
Թանային ամենեքին՝ զորբութիւն ուսանել և զխորին գի-
տութիս ։

Այգիպտացիք պանծան սկզբնապատճառք լեալ տնից Երդ. ե.
և Տանդիսից աստուածապաշտութե՛ն ։ Ի՛նչ ի տնից աստի
նոցա էր ի Լուբաստ քաղաքի , ուր ընթանային յամե-
նայն Այգիպտոսէ ոչիք առաւել քան զնոքեին բիւր, Թէպ
զմանկտին ։ Այր միւս ևս տուն Աստղագնացն անուանեալ՝
որ կատարէր ի Այսիս ։ Որոց ոչն գտանէին անդ, պարտ

էր ընդ ամ երեսս երկրին եգիպտացւոց ջահս լուցանել ի պատուհանս տանց իւրեանց ։

Վաղաքդ իւրաքանչիւր այլ և այլ անասունս գենուին ի գոմ, բայց օրինք էին հասարակաց՝ յամ ողջակիզս դնել ձեռս ի գլուխ սպանդին, նզովել գնա, և աղաչել զդիս՝ դարձուցանել ի նա զամ չարիս, որ եգիպտացւոցն պահեալ էին ։

Հեգիպտոսի ընկալաւ Պիւթագորաս զհաճոյականն իւր վարդապետութեան մարմնափոխութեանն։ Վասնզի եգիպտացիք յետ մահու՝ մարմնոց ի մարմինս ասէին անցանել հոգւոց մարդկան. իսկ գնեղասորացն՝ արգելուլ ի մարդ մինս աղտեղի և անարդ գազանաց, զի քաւեսցին անդ զմեղս իւրեանց, և յետ դարուց ելցեն միւսանգամ անձառորեալ այլ մարմինս մարդկան ։

Պլուտ. յԻսիսէ։ Խրոխտ. ։

Անհնեական մատեանքն էին միշտ ի ձեռս քրմաց, յորս ամ կանոնք իշխանութեանն և խորհրդոցն գիցապաշտութեանն աւանդեալ կային, այլ գրեեալ միշտ ընդ քօղով նշանաց և առակաց. որք առադաստեալ զձեմարտուեցին՝ առաւել պատկառելի ընծայեցուանէին զայն, և յորդորագոյնս առնէին զմարդիկ ի ցանկալ գիտութեան։ Պրօշեալն Հարպոկրատեայ, կանգնեալ ի սրբատաճարին եգիպտացւոց մասն ի չըթհուն, ազգ իմն թուեր առնել զի բազում ինչ խորհրդոցդ էն անդ ի պահեստի, զորս ոչ աւանիենգուն է տեսանել։ Օնոն տային խրատ և պիճնգապէք՝ որ կային ի մուտս ամ մեհենաց։ Պիտէ աշխարհ ամ՝ զի բրգունք և կոթողք, սիւնք և անդրիք, և համառօտիւ՝ ամ արձանք հրապարակին սովորաբար դրուագեալ էին մեհենային գրովք, այսինքն է խորհրդաւոր նշանագրօք. որ կամ տառք էին անծանօթք ասմկին, կամ նմանութիք կենդանեաց՝ որ ծածուկ և առակաւոր իմաստս տային։ Օ որօրինակ նապաստակին՝ խորին և սուր մտադրութիք էր նշանակ, քանզի արագաւուր է ի կեանսն. արձան դատաւորի ձեռնատ և ակնկորեալ՝ օրէնսիկը զպարտս նոցա՝ որ իրաւարարքն էին ։

Երկրին բանից պէտք էն ի մանրապատում ձառս կրօնից եգիպտացւոց. այլ ես զերեւելին մասնումն յերբ կուս բովանդակեցից գլուխս. զպատմօն այլ և այլ աստուածոց, և զմանես յուղարկաւորութիքն ։

ԳՕՂՈՒԱԾ Ա.

Պաշտօն այլ եւ այլ ասպուածոց։

Ել եղև ուրեք քան զեգիպտացւոցն ազգ մնոտիապաշտ։ Ի՛ստուածք բազմամբոխ էին նմա՝ կարգաւ և աստիճանաւ զանազանեալք, զորոց ոչ է մեր բանս աստանոր. զի այն առասպելաբանութիւնն անկ է և ոչ պատմութիւն, Ի՛նդ այլոն էին և երկուք պաշտեցեալք առ ամենայն եգիպտացիս, Ոսիրիս և Իսիս, որ համարեցան լինել արեգական և լուսին. քանզի սիրելոյն դիցակրօնութիւն ի պատմանէ լուսաւորացդ եղև։

Իսկ յաստուածոց աստի երկիրս պագանէր Եգիպտոս և անբաժին բազմաց. արջառոյ, շան, գայլոյ, բազեի, տիեռասան, քաջահաւուն կամ ցեղի, և կատուի, այլոցն հանդերձ։ Իսազում այն էին յանբանից աստի՝ որ ի քաղաքս ինչ միայն պաշտօն առնուին. և զոր որ յազգացն եգիպտացւոց ի բագին հանէր ի կենդանեաց, գաւրելի էր այն առ ազգս մերձաւորս նորա։ Ի՛ստի հանապազորդ պատերազմունք քաղաքի ընդ քաղաքի, զոր հնարեցաւ պատիր քաղաքավարութեամբ մոլոյ ուրումն ի Թագաւորացդ նոցա, զի զբաղեցուսցէ զնոսա ի պատեր բազմունս կրօնից՝ չտալ նոցա պարապ և տեղի միաբան նեղոյ ընդդէմ իշխանութեանդ, Պատիր և անհնձանաւ ասէմ զքաղաքավարութիւնդ, վասն զի հակառակ ընդդէմ է Հնարիս բարւոյ իշխանութեանդ՝ որպ է զնմա անդամս տէրութեանն անձուկ յօդիս կապել, և կատարեալ միաբանութեանդ մնասնոյն լինել զորաւոր։

Ազգք իւրաքանչիւր նախանձաւորք էին իւրեանց դիցն։ Ել նոր ինչ է առ մեզ, ասէ Ակիեբրոն, տեսանել աւարառուիս տաճարաց և յափշտակութիւնս արձանաց. այլ առ եգիպտացիս անշուք է և զտիեռն չարչարել ումեք կամ զցեղ կամ զկատու. և քան ամենայնն չտալ մի այսպիսի գործել զնմանէ առաւել յանձն առնուին։ Ի՛նահայրատ էր որ կամաւ զմի ոք ի կենդանեաց նեաց աստի սպանանէր. իսկ զցեղ կամ զկատու ոչպէս ոք և սպանանէր՝ մահուամբ լուծանէր պատուհաս։ Ո՛այս ինչ Ոփոդորոս պատմ ինքնին ականատես եղեալ Եգիպտոս՝ մինչ բնակէրն անդ, զի հաւանմեցուց ուրումն ականաւ և յանգիստս սպանեալ զկատու՝ դիմեաց ամբոխն մնջելին ի տուն նորա. և չկարացին ապրեցու-

ցանել գնա, ոչ սաստ թագաւորին որ անդէն վաղվաղակի արձակեաց ի վերայ ի պահապանաց իւրոց, և ոչ երկիւղ հռովմէական անուան։ Կենդանասպառութեանն յոժարեցին եգիպտացիք ուտել զմիմեանս ի ժամանակի սաստկի սովոյ, քան ձեռս մեռել ի կարծեցեալ աստուածս։

Ելբռ. Ը. էն։ Դիոդ. ա. պլէն. Ը. Ի։

Ի կենդանեաց աստի քան զամենեսեան հռչակաւոր եր արքասէր Պսիս, Լսպատոս ի հելլենացւոց ձախեալ։ Ասեկնեցին նմա մեհեանս հոյակապս. ի կենդանուն[թ]ենորա մեծապատիւ մեծարէին զնա, իսկ յետ մահու բազում առաւելու[թ]ս։ Ի սուգ մտաներ Լսգիպտոս ամ, և զայն մեծահանդէս յուղարկաւորութեն կատարէին նմա, զոր դժուարին է հաւատալ։ Ընդ Ս ադամ Պտղոմեաւ իբրև մեռաւ ծեռու[թ]ս արքասն Պսիս՝ ծախք թաղման նորա, բայ յայլոց սովորական ծախուց, առաւել եղեն քան զյիսուն տաղանդ։ Օ յեռոյ աւուր պատուին հաստուցեալ մեռելոյն, խնդրեին յաջորդ նմին գտանել՝ հետևոյզ եղեալ ընդ ամ Լսգիպտոս։ Ո՞անայեին զնա ի նշանացն՝ որով յայլոց անտի զանազաներ. ի ձակատուն խայտուց սպիտակ ի տիպ շունհանաւն, յոս նորա ձև արծուոյ, և ի լեզուին բզեղի։ Իբրև լսեալ գտանել զնա, յաջորդեր ցաւոյն ուրախու[թ]ի. և ընդ ամ Լսգիպտոս կատարէին տօնք և խնջոյք։ Օ այն ինչ նոր աստուածն տանէին ի Մեմփիս՝ ժառանգել զնորոգ իշխանու[թ]ին, և հանդիսիւք բազմօք պայազատեր զգաշն։ Ցեսցուք զկնի զի Պամբիւս ի գառնալ իւրում կորակոր յարշաւանացն Լ[թ]ովպիա, ի ցնծու[թ]ե տեսեալ զԼսգիպտոս վասն գիւտի Պսիսայ աստուածոյն, և ոտնհարու[թ]ի արկա ծից իւրոց համարեալ, սատակ ի սրամոու[թ]ի բազկու[թ]ե իւրոյ զընչուզ զուարճս, և ոչ տայ նմա վայելել յերկար յիւրում աստուածու[թ]ին։

Ցայտնապես ահ տեսանի՝ զի որ[թ]ին ոսկի զոր կանգնեաց Պարայեւ առ լերամբն Պնոյ, արքասիք էին բնակ կու[թ]եան նորա Լսգիպտոս, և նմանու[թ]ի աստուածոյն Պսիսայ. որպէս և յետոյ ուրեմն կանգնեցան յերկոսին առնմանս իսրայելեան Թագաւորու[թ]է ի Ցերոբովամայ արքայէ, որ և ինքն իսկ բազում ժամանակս պանդխտացեալ եր Լսգիպտոս։

Ոչ շատ համարեին եգիպտացիք խուսնս արկանել կենդանեաց, այլ ցայն վայր անմտացան մինչև յաստուածս[թ]ե ածել զարմանս պատրիզաց իւրեանց. զոր և բազում հանձարով կշտամբէ երկիմաբանն քերդող.

Յ[թ]ես. իբ. գէն. ԺԸ։

Ի՛նքնաճանաչիդ Վ ոլուսիէ ,
Ո՞ր երբէք ոչ վիտիցէ ,
Ի՛մ յետսամիտ էգիպտացի
Որոյ հրեշից պաշտօն տանի ։
Կէսք տիտեռան երկրպագէն ,
Կէսք յօձակուլ ցեծոյն սաբանն ։
Շ ողեալ կապկին սրբանուէր
Ո՛ակեձաճանչ փայլէ պատկեր ։
Ո՛ւր հինաւուրց Ի՛մերէ քաղաք
Հարիւր դրամբք կայ հարթյատակ ։
Նո՛ւ ի Ա՛ենոն կիսակործան,
Հնչէն քրնար լարք դիւթակաս ։
Ինդ ըզծովու աստ ըզգետոյ
Պաշտէն լուղակ մի առ միոյ ։
Ինդ ամենայն քաղաք ըզշուն ,
Ի՛սկ զՊհնահիտ ոչ ոք համբուն ։
Ըզպրաս և սոխ մեղք են խլել ,
Նո՛ւ ատամամբք պատառոտել ։
Ո՛վ սուրբ ազանյն, որոց պարտիզ
Ի՛ուսուցանէ աստուածս այսպէս ։

Ո՛ արմանք են տեսանել զազգ մի պանծացեալ յաչխարհ Հի իմաստութե՛ւ և գիտութե՛ւ և անզգայեալ հեղեալ ՚ի մնասպաշտութիւն յայս այլանդակ և ամօթալից ։ Վ՚Ասի զպաճարսն առնուլ ՚ի պաշտօն և զաղխակ ձՀիս , դնել գնոսա ՚ի տաճարս , մեծածախ [1] խնամածութեամբ դարմանել , ՚ի մահ զսպանդող նորա մատնել , զմուսել և արքունի հրամանաւ շրիմս պատրաստել նոցա , զպրաս և զսոխ և զայծոսիկ աստուածացուցանել , և ՚ի կարիս իւրեանց առ այնպիսի աստուածս կարդալ , օգնութեան առ ՚ի նոցանէ ակնունել և պահպանութե՛ւ , այսոքիկ անազգակուրթիւք դժուարահաւատք մեզ Թուին , բայց ՚ի բռնագնակ հնութենէ վկայեալք են ։ Վ՚տանես ՚ի մեհեան հրաշազարդ , ասէ Վ ուկիանոս, ուր ամենաստ ոգ Պաւիէր ։ կի և արձաթի ձաՀանչէն ։ Տ՚եսք հետաքննին յուզեն անդ աստուածս իմն , և գտանեն արագիլ , կապիկ և կատու ։ Վ՚եղեցկի նկարագիր , յարե գինի , յոգունց ապարանից՝ որոց պաՀուՀանք զարդու չէն տեսքը իւրեանց ։

1 Վ՚ասյե Դիւդորոս զի առ խորով ծախսեալ ոչ ինչ պակաս էին ծախս այս ոտն չհարիւր պատիկ ։ ԱՐ ։

Գործ. ա։ Կենդանասպառնալիքն եղիսպատուհասից ազգի ազգի պատ-
ճառս տան։ Առաջին՝ յառասպելեալ· քանզի ասեն ի
միաբանել երբեմն մարդկան ընդդէմ աստուածոց, փա-
խեան աստուածքն Այգիպտոս, և թաքեան ընդ բազ-
մադիմի կերպարանօք կենդանեաց· և աստի աստուա-
ծական նոցա ընծայեցաւ պաշտօն։

Երկրորդ [1] ի շահից անտի՝ զոր անբանիցդ ազգ տան
մարդկան· արջառք ի մշակութիւն, ոչխարք ի գեղջն և ի
կաճին, շունք յորս և ի պահպանութիւն տանց, որոյ վասն
և զԱնուբիս աստուած շանագլուխ ստեղծին· ցեծ՝ որ
յայգիս արագիլ է, զի որսայ զօձս թռչականս· որոց ա-
զատ ինացեալ՝ ապականէին արգիւք զԱյգիպտոս· տի-
տեռն կենդանւոյ երկակենցաղ, խնս որ ի ջուրս և ի ցա-
մաքի ունի բնակութիւն, սոսկալիութիւնոյ [2] և անձուկն զգ-
րուելիք, զի պահէ զաչխարհն յերբեմն հիւսից ասպատա-
կաւորացն արաբացւոց, և Հիւլոս կամ մուկին փարատ-
նի՝ զի ջտեռանց կարձէ ջսեղունդ չաձել ի բազմու-
թիւն, որ ինասակար է յոյժ աչխարհին։ Կենդանիս այս
կրկին օրինակաւ հատուցանէ աչխարհին զայս օգուտ։
Մի՝ սպառէ ժամուն յորում տիտեռն հեռանայ, և եր-
կեալ խորտակէ զձուս նորա, այլ ոչ ուտէ։ Նա միւս
եա՝ մինչդեռ տիտեռն զբնով անկեալ դնի յամին Նէ-
ղոսի, որ և միշտ բերանաբաց նիջէ, կենդանիս այս չքռ-
տի զօղեալ ի տղմի անդ՝ ոսանու չայան թօթափել ի
կոկորդ նորա, մնանէ մինչև ի փորոտին և կրծէ· ապա
ծակեալ զորովայնն, զի անդ կակուղ է յոյժ մորթ նո-
րա, բանայ իւր անցս և ելանէ անվնաս, չաղեցող եղեալ
խորագիտութիւնք՝ ամէնի զօրութեն անարգիլ գաղանին։

Համաստասիրացն չգտեալ հանդիպատ յանգոր պատճա-
ռանդ ի պատրուակել զանբերելի անտեղութիւնն՝ որ
զՀեթանոսական օրինացն քահանայն ածէն, ընդ որս և
հնբեակաք յանձնիս իւրեանց շինիկին, հանձարեցին, մա-
նաւանդ զկնի քրիստոնէութես արմատանալոյ, և երրորդ
խնս պատճառս անամնապատուհասիք եղիսպատցւոցն, որ-
պես եթէ ոչ ի չնչաւորս անդր նոցա պաշտօնն դադա-
րիցէ, այլ յօրինակեալն նոքօք յատուածս։ "Յամս
տասերքն, ասէ Պղատառքոս ի կիրս անդ՝ յորում ի
քննուն առնուս զերկոսին հնչակաւոր դիս եղիսպատցոց

1 Նորին խակ եղիսպատցիք նշա- նամանէ։ Կիւ. բն. ասք. ա. ձա։
ւակք ծաղուս, ի գաղանաց զոր ոչ 2 Մէնանդրի նոցա հատանէ յեօթն
աստուածացուցին, բայց եթէ առ և տասն կախտանս առասել։ Երդոց.
չահ ինչ օգտի զոր գառանէին ի ք. կէ։

զ|ախս և զ||սիրիս, պատուհէն զպատճէնդ աստուծոյ՝ յո-
լում մասին և երևեսցի, նա և յանկինդանս. ապա և ես
առաւել 'ի կենդանիս : |Ա|րդ գովելի են՝ ոչ որ զաղա-
բանդ պաշտիցեն, այլ որ նոքօք յաստուածաբանէն անդը
'ի վեր ելանիցեն Հայելիս գնասս արժան է ասել՝ տուեալ
մեզ 'ի ընութենէ, յորս նկարի աստուածութէնն սքանչե-
լապէս, կամ թէ գործիս ինն՝ զորս 'ի ձեռն առնու յերե-
ւան ածել նովաս զանհասական իմաստութէն իւր : |Ա|ստ
արդ թէպետև 'ի միոջ վայրի կուտեսցի՝ ամ ոսկի և ա-
կանը աշխարհի 'ի զարդ արձանաց, մի արձանացն ընծայ-
եսցի պաշտօն. զի ոչ 'ի Հարտարարուեստ երանգան է
աստուածութէնն, և ոչ 'ի նիւթ ապականացու անշարժ
և անզգայ,, 'ի գիրս անդ ասէ դարձեալ Պլուտարքոս.
« Օ որ օրինակ արեգակին և լուսնին, երկինքդ, երկիր և ծով
Հասարակաց մարդկուես է, սակայն այլ և այլ անուանք
են նոցա ըստ զանազան ազգաց և լեզուաց, այսպէս թէ-
պէտ մի է աստուածութէն և մի իմանակալութէն տեսուչ
տիեզերաց՝ ընդ որով են յորով արբանեակք, սակայն
միոյ այսմ աստուածութէն այլ և այլ են յորջորջութիւնք
անուանց, այլ և այլ պաշտօն ըստ օրինաց և կարգաց իւ-
րաքանչիւր աշխարհի »:

|Ա|յս իմաստք, յորում է 'ամ փաստ բանական յար-
դարացուցանել զկռապաշտութիւն, բաւական արդեօք
իցեն 'ի վերարկել զամենեսեան : |Ա|յդ ինչ վայելչական
գիտութէն աստուածային յատկութէնն՝ ցոյցս տալ նոցա
և խնդիր լինել կերպարանացն 'ի ջնկս անարգ և փղուն
պաճարաց, 'ի տիտեռն, յօձ և 'ի կատու : |Ո|չ ապաքէն
նուաստութէն է այդ և ձաղանք աստուածութէնն՝ որում
և խօթամիտք զննաշխարհիկն և զվեհ ընծայեն կերպա-
րանս :

|Ա|յս և իմաստասէրդդ աւանիկ ոչ միշտ հաւատարիմ
եկեն 'ի զգալեաց աստ յաներևոյթն աթարիչն վերանալ :
|Ա|սանիմք 'ի գրոց՝ զի կարծեցեալ իմաստունդդ վասն ՀՌովմ. ա.
ամբարտաւանութէն իւրեանց և ապերախտութէն արժա- 21—26:
նապէս մատնեցան 'ի կարիս անարգուե, և չիմաբեցան
քան զնամին, զի փոխեցին զփառս անեղծին ոչ 'ի նմա-
նութէն պատկերի թռչնոց և չորքոտանեաց և սողոց, և
պաշտեցին զարարածս, և ոչ զարարիչն :

|Ի|զգ, որ 'ի տիեզերս ծայրացեալ էր երկրաւոր իմաս-
տութէն, թողացաս չայ՝ լինել տեսարան պլանդակ և ծաս
զգալից կռապաշտութէն, զի երևեսցի զինչ է մարդ. և
ած առ 'ի ցուցանել զամենակարող զօրութէն իւրոց ընտր

Հայն, զհատոր անապատս Կոստանդնուպոլսոյ դարձոյց ի դրախտ երկրաւոր, լցեալ զնոսա ի կանխահատեալ յիւրում ժամանակին երկնակրօնին բազմաժողով դասուք միաչնակեցաց, որ յորդորմամբ բարեպաշտութեան և խստամբեր ասպաշարութեամբ պարծանս հետուն քրիստոսական կրօնիցս։ Եւ զանդաղեմ ածել առ այս յաբացոյց երևելոյն. և ընդ արտուղութեամն ակն ունիմ ներեկոյ հանդիպել յընթերցողին։

Հատոր Շ։ Հրաշակերտ մեծ ի ստորինն Գերմանիդ, ասէ վարդապետն Ֆլեւրի ի եկեղեցական պատմութեան, էր քաղաքն Ասիրինկ. քան այլովք բնակչօքն՝ կրօնաւորօքն յաւետ բազմաւոր ներքոյ և արտաքոյ։ Շինուածք արքունի և տաճարք կոյս փոխարկեալ էին ի վանորայս, որք բազում էին թուով քան զառանձնակեաց տունս։ Այս ի դրունսն անգամ և յաշտարակսն բնակէին միանձունք։ Աստուածասան եկեղեցիք էին հանդիսարան ժողովրդեանն, ի ծոց գնատրունս մենաստանաց։ Այսի ի քաղաքի անդ քան հազար կուսանաք, և բիւր մի աբեղայից։ Օ գայգ և գգերեկ ընդ ամ տեղիս լսելի լինէին ձայնք փառատրութեանցն այ։ Արքունի գնամանաւ կայսեր դէտք ի դրունս, տեսանել գհիւրս և զարքատս. և որ նահին գտանեն՝ նմա անկաներ հիւրընկալել զնոսա։

ԳՕԴՈՒԱՆ Բ.

Հանդէս յոտղարկաւորութենէ։

Մնայ ինձ ձառել համառօտիւ զհանդէս յոտղարկաւորութենն, Պատիւ զոր ամ ազգք յամ ժամանակի տային մարմնոյ մեռելոյ, և բարեպաշտ խնամք զոր տանէին միւտ գերեզմանաց, Թուին տպաւորագոյնս դրոշմել զնշմարտութենին յառաքեանսն Թէ մարմինքն այն յաւանդի կան անդանօր։

Ի բերանոյն ձառի տեսաք կանխաւ զմեծագործութեն շնուածոյ դամբարանացն եդիպտացւոց։ Եւ միայն իբրև նուիրական արձանս յիշատակի աւագամեծաց իւրեանց առ յապա դարս մարդկան կանգնէին զնոսա, այլ և բնակարանս համարեին մարմնոց գայնոսիկ ի դարս Դիոդ. ա։ երկարաձիգս. իսկ զտունս իջևանս կոչէին՝ յորս ի հարեւանցի բնակէ մարդ և ի սուղ կեանս՝ որով չէ արժան յարել ի նոսա։

Իբրև յընտանեաց նոցա որ մեռանէր, ամ տոհմայինք նորա և բարեկամք թողուին ի բաց զառաջին հանդերձս իւրեանց և ի թեփս համակէին. հրաժարեին ի քաղաք նեաց, ի գիւղս և յամ համագամոյ։ Իսկ երկարէին աւուրք սգոյ ցաւուրս քառասուն կամ եօթանասուն, որպես ինքն ըստ պատուականութեանն անձանցն։

Իրրեակ ընծայեալ զմանկիկն զմարմնոյ վառաւորաց զգոյն մեծամեծաց պահել էր, և ծախքն հասանէին ի տաղանդ մի արծաթոյ։ Պաշտօնեայք բազումք ի սպասս կային արարողութեան։ Ելեալ զուգեղն ընդ ռնգունն դատարկէին երկաթով որ սմին իրի կապեալ էր։ Իսկ զքէր զնորա վայթէին և զընդերս, հերձեալ ի կողմանէ եթովպացի քարիւ սուր իբրև զածելի։ Լային զդատարկ տեղին ընուին իւղովք և պէսպէս անուշահոտ խնկովք, Իսկ քանզի դատարկումն այն, առ որ և հատանել հարկ էր, բանսեղծ Թուէր նոցա և անգթասիրտ՝ սպասաւորք դրծոյն անդէն ընդ կատարելն փախչէին. զի որ անդն կային՝ վերջս զՀետ նոցա հոսեալ, հալածէին զնոսա։ Իսկ որ զմարմինն օծանելին դիակապիկքն՝ պատուականք ելին յոյժ. որոց գործ էր ընուլ զայն զմանսով, կինամոմիւնիս, և ամ խնկովք անուշից։ Իսկ ապա պատելին զայն կտաւի ազնիւ պատառակաւքօք, օծեալ խակուղ ռեհատաք, և ծեփեալ ընտիր ընտիր իւղովք անուշիւք։ Յարծի սովին հնարիւք անեղծ մնալ ևերեսացս, և յօնիցն և արտևանաց։ Իսկ զայս օրինակաւ զմանսեալ զմարմինն՝ տային զայն ապա ազգականացն, որ առեալ դնեին ի բաց գդըոցի՝ ըստ չափոյ հասակի մեռելոյն. և ապա կանգնէին զայն ուղիղ յատին, յեց յորմին կամ ի շիրիմն իւրեանց՝ եթէ էին նոցա, և կամ՝ ի տունս։ Իսկ ե ահա զոր Աւուսայն անուանեն. և մինչև ցայսօր գայ Ալեքսիոսէ, և բազումք ի հնասիրաց պահէն զայն ի Թանգարանս իւրեանց։ Իսկ ահա երեւի քանի հոգք էին եգիպտացւոց ընդ դիակունս։ Իրանախտուրեն նոցա առ ծնողս իւրեանց՝ անմահ էր. որդիք ի տեսանել ըզմարմինս նախնեացն, յիշատակէին զառաքինութիւնս նոցա՝ որոց և աշխարհն վկայեալ էր, և յորդորամիտ լինէին ի սէր հայրենասիրութ օրինացն։ Ի յուզարկաւորութեն Ջոսեփոյ Արիմաթեացւոյ տեսանի մանն ինչ ասացեալ արարողութեցս։

Ալ կայեալ էր, ասացի, աշխարհն առաքինութեն նոցա. քանզի յառաջ քան զմուծանելն ի սրբազան պատպաքան շիրմացն՝ դատաւճիռ գնա առնէին հրապարակաւ։

Լու այս հանգամանք յուղարկաւորութեանն եգիպտացւոց է մի յերևելի իրաց հնախօսութեան։

Ախիթարութեան մեծ էր առ հեթանոսս՝ յիշատակ բարի առ մարդիկ՝ ի մահուն իւրեանց. և յայմ երկրաւոր բաց աստի բարեաց՝ զայս ևեթ անկապուտ՝ ի մահուանէ համարէին։ Այլ Եգիպտոս չէր օրէն անխտիր զայմ մեռեալս՝ ի գովութեն առնուլ. այսմ պատուոյ հասարակաց դատաստանաւ հարկ էր հասանել։ Զողով դատաւորացն գումարեր յայնկոյս լճի միոյ, ընդ որ նաւակաւ անցանէին։ Կաւաւարն՝ ի լեզու եգիպտացի կոչէր Վաբրոն, ըստ որում և Հելլենք ուսեալ Աքերփեոսի, որ եղեալ էր Եգիպտոս, ստեղծին զառասպելն իւրեանց նաւակին Վարոնի։ Ընդ վախճանել ուրուք տանէին զնա՝ ի դատաստան. լսէին հրապարակաւ խօսելոյ դատախազին. եթէ զկեանս վախճանելոյն չար ցուցանէր, նզովէին զյիշատակ նորա, և զրկէին զնա՝ ի թաղմանէ։ Օ արմանայր ժողովուրդն ընդ զօրութիւն օրինացն որ և յետ մահու հասանէր. և այր իւրաքանչիւր շարժեալ յօրինակ անտի՝ զգոյշ լինէր երկիւղիւ չխայտառակել զյիշատակ իւր և զազգատոհմ։ Իսկ եթէ արդարանայր վախճանեալն՝ ի մեղաց՝ թաղէին պատուով։

Այլ այն առաւել զարմանալի էր՝ ի հասարակաց յայնմ հարցափորձի մեռելոց, զի և ոչ զահ արքունի կարող ինչ էր ազատել զոք յայնմանէ։ Կնայէին՝ ի թագաւորս առ կենդանութեանն նոցա. զնոյն պահանջէր աշխարհին խաղաղութիւն. բայց չէին նոքա ազատ՝ ի դատաստանէ յետ մահուն, և ոմանք ոչ իսկ արժանի եղեն թաղման։ Այսպիսի ինչ և առ իսրայելացիսն անցանէր, որպէս տեսանեմք՝ ի գիրս՝ չարագործ թագաւորացն ոչ թաղել՝ ի շիրիմս հարց իւրեանց։ Զստի ուսանէին նոքա՝ զի թէ մեծութեն փառաց գեր՝ ի վերոյ դնէ զնոսա դատաստանաց մարդկան՝ ի կենդանութեն, սակայն զկնի գարձեալ՝ ի նոյն անկանին՝ յորժամ մահն հաւասարէ զնոսա ընդ այլս։

Զդէպ իբրև վճիռ առնէին անպարտ առնէր զվախճանեալն, սկսանէին ապա զկարգ թաղմանն։ Զբնականն՝ ի վերայ նորա արտասանէին, այլ առանց յիշատակի տոհմին. զի ամ ազգն ազնուական համարեալ էր։ Այլ ոչ հաստատուն և ճշմարիտ գովութեն համարէին՝ որ ինչ ոչ հայէր յանձնական վաստակս մեռելոյն։ Գովէին զնա թէ՝ ի մանկութեն քաջ դաստիարակեալ էր, և՝ ի զարգանալ տիոյն աստուածպաշտութեն զհետ կրթեալ, ար-

դարուքեն առ մարդիկ, քաղցրուքեն, համեստութեան, պարկեշտուքեն և ամ առաքինուեց որ առն բարուոյ անկ լցեն։ Այս ժողովուրդն առ հասարակ ծափս հարկանեը, և մեծամեծ գովուեիս մատուցանեը վախճանելոյն, որպէս զի այնուհետեւ ի հոյլս առաքինեացն դասու պարախառնիցի յաւեժաբար՝ յաղքայուքեն Սանդարապետին։

Ի վախճան յուղարկաւորուքեցս ձառի ի դեպ է ասել ինչ մանկանց զայլ և այլ եղանակաց՝ որով հինք վարեին առ մարմինս մեռելոց։ Սմանք, որպէս ասացաք զեգիպտացւոց, յետ զմուսելոց դնեին յերևելի տեղւոջ և պահեին զտեսիլ նոցա։ Սկսաք այրեին ի խարուկի, և այս սովորուքեն եր հռովմայեցւոց։ Ասկ այլք հողոյ տային։

Փոյթ պահպանուքեն մարմնոց արտաքոյ ծածկուքեի գերեզմանաց՝ նախատինք Թուի հասարակաբար մարդկուքեն, և մանաւանդ այնոցիկ զորս պատուել համարիին նովաւ. զի նշաւակէ զնուաստուքեն նոցա և զտգեղուքեն. և որչափ խնամ կալցին նոցա՝ ոչ այլ ինչ ցուցանեն յաչս տեսողաց քան զտխրական և ահաւոր նշմարանս կերպարանաց նոցա։ Սովորուքի այրելոց զդիակունս՝ անողորմ Թուի և խժական. քանզի փուքթայ եղծանել զմնացորդս սիրելեաց։ Ասկ Թաղել զմեռեալս՝ առանց իրիք երկբայուքեն, առաւել հնագոյն է և բարեպաշտական. զի հատուցանէ երկրի զառեալն ի նմանէ, և պատրաստս առնէ զմեզ ի հաւատս՝ զի որ միանգամ առ ի նմանէ նէն հաստեցաւ մարմին, կարէ և միւսանգամ յառնել անտի։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Յաղագս վէնուորուքեն և պատերազմի։

Վէնուորուքեն արուեստ յոյժ պատուական եր յունգիպտոս։ Յետ ցեղից քրմացն՝ ականաւոր քան զամենեսեան էին աղգատոհմք ի վէնուորուքեն կարգեալք, որպէս և առ մեզ։ Ոչ շատ ինչ համարէին պատուել միայն զնոսա, այլ և առատաբար հատուցանէին վարձս։ Ամենամիւմ ի զօրականէն էին երկոտասան ածուք, ազատք ի հարկաց և յամ բաժից։ Ածուն եր չափ անդոյ երբեմն ի կէս մերոյ արտաւարի։ Նաց ի հնորհաց աստի տային նոցա օր ըստ օրէ հինգ լիտր հաց ըստ բերան, երկու լիտր միս, և ստոմանաւ գինի։ Այլ չափ ինչ

բաւական էր՝ ի կերակրել զկես տան իւրեանց. և այս-
ա. սկս առաւել վառէին՝ ի սէր և՝ ի քաջուլն. և ըստ Աւետ-
դորի՝ ստունգանուելի համարեալ էր, ոչ միայն օրինաց
ողջամիտ քաղաքավարութեան՝ այլ և ուղղատես մնաց,
զպահպանուելի և գյայտահռուելի աշխարհին հաւատալ
արանց, որ ոչ ինչ շահ անձանց գիտեն՝ ի նորին փրկու-
թենէ։

Ւ։ւ։դ. ։. Աւառատուն բիւր զինուորաց, զորս յոտին ունէր միշտ
։ւ։։—։։։։ Աղիպատոս, ի քաղաքացւոց անտի նոքա էին՝ զորս մեծաւ
զգուշութիւ կրթէր։ Աւրիական և կորովի դասակարգու-
թիւ պատրաստէր զնոսա՝ ի ձգնուլն մարտի։ Աւրուեստ է
որպէս զՅոզին՝ նոյն և զմարմինն ածել՝ ի կազմուելն։ և
այս, զոր սղերգուն թիւ մերով կորուսաք, քաջածանօթ
էր նահապետին, և գիւտ եգիպտացւոց։ Հետի ընթացք
և ձիրնթացք և կառաշաւք՝ սբանչելի ձարտարութիւ ւնէ
Ւ։։գ։։։։ ։. նէին Աղիպատոս։ և չէր ուրեք ընդ տիեզերս ընտիր
։։։։։։։ ։. այրուձի քան զեգիպտացւոցն։ զոր գիրք ոչք յորով ու-
։։։։։։։ ։։։։։։։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Յաղագս գիտութեանց և արուեստից։

Եգիպտացւոցդ ազգ հնարագէտ էր ձարտարութիւն, այլ յերս կենցաղոգուստս պարապեցուցանէր զայն։ Եւ զմէկ նոցա լցին զԱգիպտոս նորանշան և նորագիւտ արուեստիւք, և ոչ ինչ թողին նոցա անծանօթ յօգտակարաց անտի ՚ի կատարումն մտաց, և ՚ի հնութիւնս կենց ցաղոյս և ՚ի բարօրութիւն։ Հնարագիւտ ձարտարք սիմանեաց՝ կենդանեաւ և յետ մահու ընդունէին փոխարկնս արժանի վաստակոց իւրեանց։ Զկին իւրն զկիր եր կուց Հերմեսից նոցա որբազանեալ՝ իբրև աստուածեղէն մատեանք պաշտեցան։ Զառաջին ՚ի մէջ ազգաց՝ առ եգիպտացիսդ երևեցաւ մատենադարանք։ Զնուանա կոչումն նոցա ՚ի նախամէ յորդորէր՝ մտանել ՚ի ներքս և կրկտել զգաղտնիս. զի կոչեին զնոսա ԲԱՀԿԱՐԱՆ ՀՈԳԻՈՑ։ որ անդ ապաքինէր ՚ի վշաստկարագունէն ախտից իւրոց ՚ի տգիտութէ։

Զառաջինք եղեն ՚ի հետազօտուէ ընթացից աստեղաց՝ վասն հարթուէն աշխարհին և օդոյն յատակութեան և պարզութէ։ Եւ քննութիւք նոցա առաջնորդեցին ուղղել զշրջան տարւոյ ըստ արեգական։[1] զի որպէս ասաք դէ Պիտոլոմէոս, տարին առ նոսա անդստին ՚ի վաղ ժամանակաց բոլորեր աւուրբք երեքհարիւր վաթսուն և հնգիւք, և վեց ժամիւ։ Եւ ՚ի ձանաչելոյ զանդաստանս իւրաքանչիւր՝ որ ճանկելին ամ ըստ ամէ ՚ի ջուրց ՚ի հեղձ սի, հարկաւորեցան եգիպտացիք ապաքինել յարտաչափս, որով իակ և իսկ ուսան զերկրաչափութէ։ Յորս զնին խուզարկուք էին բնութէ, որ ընդ պարզ երկնիւք աշխարհին և ընդ բոցակիզադոյն արեգականք զօրաւոր էր և ծննդական։

Այս այս է, որ ետ նոցա հանձարել և կատարել զբժշկութիւնս ՚ի ներքինոցն ՚ի ներհակ ախտից, առաջին բնակիչս յաշխարհի, հասին յայս գիտութիւնս յաստուածոցն, որոց վարին հայոց և Յունաց, և Հռոմայ, ինչպէս և ոչ ինչ անվիշտագոյն պահանջիր զգիտութիւնն աբեգիպտեացոյ ասին, զոր Պլուտարքոս մինչեւ ցայսմ ոչ գտաւ զոր ինչ ՚ի ներքս ՚ի ներհակ ախտից։ Եւ զայս ինչ ասեն զգիտութիւնս ՚ի ներքինոցն ՚ի ներհակ ախտից, զոր գրեցին գիտունն վարչինեանս նոսայ։

[1] Ուրեմն զարմանամ զի եգիպտացիք, առաջին բնակիչս յաշխարհի, հասին յայս գիտութիւնս յաստուածոցն, որոց վարին հայոց և Յունաց, և Հռոմայ, ինչպէս և ոչ ինչ անվիշտագոյն պահանջիր զգիտութիւնն աբեգիպտեացոյ ասին, զոր Պլուտարքոս մինչեւ ցայսմ ոչ գտաւ զոր ինչ ՚ի ներքս ՚ի ներհակ ախտից։ Եւ զայս ինչ ասեն զգիտութիւնս ՚ի ներքինոցն ՚ի ներհակ ախտից, զոր գրեցին գիտունն վարչինեանս նոսայ։

կականն արուեստ։ Ալէ՛ ի հաձոյս բժշկացն Թագուհին ըզ-
հանգամանս խնամածութեանց հիւանդաց, այլ սահմանեալ
ունէին կանոնս՝ որոց հարկ էր հպատակել. և էին այսո-
քիկ վաղնջուց քննութենէք հմուտ ձարտարաց, որ և՛ ի
մեհենական մատեանսն գրոչմեալ կային։ Այս որ նոցին
հետևէին, ոչ էին երաշխաւորք յաջողութենէն. իսկ եթէ
ոչ՝ ինքեանք ինային պարտաւորք, և գատաստան մահու
էր՛ ի վերայ նոցա։ Սակաւ յանդգնութենի ստանուն բժշկ-
կացն սահմանէր, բայց մարթ էր և նորանոր գիւտից խա-
փան լինել և կատարման արուեստին։ Ի՛ժիշկ իւրաքանչ-
իւրք, ասէ Հիպոկրատոս, պարապեր՛ ի գործման միոյ սակ. ե. ՅԶ.
ուի. էր որ աչաց, էր որ ատամանց, և յայլսն ըստ սմին
օրինակի։

Ալ ինչ զբրգանցն ասացաք և զբուժելէն և զանհամար
կոթողացն, զտաճարաց և զասպարանից, որոց դեռ կան
նշխարք պատուականք ընդ ամ Հիպիստոս, յորս և մի-
քան զմի առաւել փայլէր մեծագործուն Թագաւորացն՝
որ կառուցին զնոսա, արուեստագիտացն Ճարտարութե՛ն
որ՛ ի գործ անդր կարգեցան, Հարստութե՛ն զարդուց՝ որ
սփռեալ էին՛ ի նոսա, և որ առաւել՛ ի գեղեցկութենէն
էին նոցա՝ Հղկութե՛ն համեմատութեց և չափակցութեց,
չինուածք՝ յորոց՛ ի յոլովն մինչև ցարդ կէնդանի պա-
հեցան երանգք գեղոյն յարկածից ամենասպառ ժամա-
նակին, այս ամ ասեմ՝ ցուցանէն՛ ի ծայրագոյն կատա-
րումն հասուցեալ Հիպիստոս զՀայբարապետութե՛ն,
զնկարչութե՛ն, զքանդակագործութե՛ն և զայլ արուեստս։

Դէտ. ա. Հրամարէք էին առ նոսա Թաւերք և կրկեաք, որ ոչ
օգտէն տալ մարմնոյ հաստատուն կորով և զօրաւոր
առողջութե՛ն. այլ և ոչ զերաժշտութե՛ն[1] համարէին Թէ
իցէ ինչ, որ Թուէր նոցա զաղջուն առ ոչինչ պիտանա-
ցու, այլ և ընտակար և Թուլացուցիչ ոգւոց։

1 Ջերաժշտութիւն ոչ միայն ձեռակար, իբրև մեղկիչ արուեստ
անպիտան համարին լինել, այլ և ոգւոց։ Դէտ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Յաղագս երկրագործաց, հովուաց և արուեստաւորաց։

Երկրագործք, հովիւք և արուեստաւորք, երբեակ առ-
նիմանք յետին կարգի եգիպտացւոց, սակայն պատուա-
կանք էին առնոսա յոյժ՝ մանաւանդ երկրագործք և հո-
վիւք։ Հարկ էր և բարգաւաճագունեցին գոլ գործոց և
անձանց, որպէս աչք են ի մարմնի. այլ նշոյլ նոցա ոչ
անգոմանելի առնէ զազգուկ և զձեռս և զոտս, և ոչ զան-
արգագոյս ի մասանց անտի։ Ետ սմին օրինակի և առ
եգիպտացիս՝ քրմացն և զօրականաց և գիտնոց թէպէտ
և էին առանձին նշանք պատուոյ, սակայն և ամ-
բուեստք թէ և դուզնաքեայք՝ արգոյք էին. զի ոչ ան-
իիրք ի մեղաց համարեին արհամարհել զայր քաղաքա-
յի՝ այր վաստակք, որ զինչ և իցէ, կենցաղօգուտք էն։
Ի և այլ իմն նախնական պատճառս իմանալ այսմ
ուղղագատ և խոհական մտաց նոցա, որով վարեցան
հարուստ ժամանակս։ Վասնզի անհնարին համարեցան սե-
բեալք էին ի Վամայ, առ ժամային յիշատակ հասարա-
կաց հօրն անմոռաց առ ամենեսին յատաջին ժամանակ՝
հաստատեաց հաւասարութեի ինչ առ նոսա, մինչև եգիպ-
տացւոցն ամենեցուն ազնուականս կոչել։ Ի գաբեին զա-
նազանութեի աստիճանաց և նուաստագունիցն արհամար-
հութեի է ի հեռաւորութեի հասարակաց արմատոյն, ի
մոռացօնս արկեալ զի և յետին չինականք, եթէ ի վեր
կոյս ի սկիզբն անդր ընթանային, յաղնականն հօրէ
իջանեն՝ որպէս զաւագ տանուտեարս։

Որպէս զինչ և իցէ՝ սակայն ոչ գոյր Ա>գիպտոս վճ-
ռակ նուաստ և անարգ. վասն որոյ և ամ արուեստք
զարգանային ի կատարումն իւրեանց։ Ճարակ նոցին,
պատիւ, խառն էր ընդ ամ. առն իւրաքանչիւր գործ
օրինք սահմանեին, մինչեւ ինն սերունդ յորդիս։ Ոչ
օրէն երկուս ունել արուեստս կամ փոփոխել։ Ոմն
իւրաքանչիւր ոք տեսեալ հանապազօր, և ի նմն ի վարժ
անկեալ անընդհատ ի մանկութենէ, և զանցինիւր փորձ
ի հայրենին յաւելեալ, առաւել յաջողելիս յարուեստս
իւրաքանչիւր։ Ի[illegible]ոյ զայս, և օգտակարս այս սովորութե
ի վաղ ժամանակաց արմատացեալ յազգի անդ և յաշ-
խարհի հատաներ զամ տարապարտ ամբարհաւաճութեի,

և տայր ամենեցուն ուրախ լինել յիւրում վիճակեալ բաղդին, և մի զատուիլ ԹԷին ածել շահսէր մնօք և ամարտասան և յողդողդ։

Այս իսկ էր պատճառ չքնաղ գիւտից անքակից՝ զոր իւրաքանչիւր ոք հանճարէր ի կատարումն իւրոյ աշրուեստին, առ ի կեանս պիտանացու և ի գիւրութիւն վաճառականուԹ։ Օ առաջինն յառաստկէս գրեի զառ ի Վիտրուրոսէ պատմեալ զեգիպտացւոյն Հարատարուն, արուեստիս իմն բեհեզաւորեալ ձագս հանել առանց ի Թուխոյտալոյ մորեղոյն գնուն։ Վակայն ամ արդի ձագ նասպարհորդք վկայեն այսմ արժանատես ճշմարտուԹիՀ, զոր ոչ անծանօթ լինել ասեն և Հերոդոտս։ Ասա նոյն պատմելոյ՝ գնեն եգիպտացիք գձուս ի փուռն, չաֆուլ ըստ բնական տապոյ մորեացոյ ջեռուցեալ, և ծնանին անտի վառեակք առոյգք՝ որպէս ստածեալքն ըստ օրինի ի ԹուխոյտԹ։ Ոչ ժամանակ է իրացն՝ յերից գեղեռեքերի մինչև ցեղս տապիլի. զի յայլ ժամանակս տարեցոյն տօթ անհնարին է Հրդիպատոս։ Օ չորս ամիսն զայն գնեն ձու ի Թուխոյ առաւել քան զերեսուն բիւր, որ ԹէպԷտ ոչ ամենեքին ի ծնունդ գան, այլ ԹեղԹև ծախիւք մատակարարեն բազմահոյլ երամս Հաւուց։ Վորձ է ըստ պատշաճի զփուռնն ջեռուցանել, և մի քան ըզչափն։ Այուրք իբրև տանն պիտին ի ջեռուցանել զայն, և գրեԹէ նոյնպէս և ի Հանել զձագս։ Օ ուարձանալ իմն ասեն տեսիլ լինել զձագուցն ծնունդ. ոմանց ըզգլուխս միայն Հանելով ի գուբս, այլոց զկէս մարմնոյն, և կիսոց բովանդակ արտաքս ելեալ, և անդէն ընդ միջ ձուոյն վազս առեալ. որ արդարև զուարճալի է։ Օ որ ինչ յոլովք ի ձանապարհորդաց գրեն զայսմանէ, ի տեսանել ի գիրս ձանապարհորդութեաԼ ըզսխալինն կուռ
Յ. ՅԷ. նելեայ։ Օ սոյն և Պլինիոս յիշատակէ. բայց երևի ի Հնումն եգիպտացւոց փոխանակ փռան յաղթևս Հանել զձագս։

Օ երկրագործս և զհաշնագարմանս յարգի յոյժ լինել առացի Հրդիպատոս, սակայն ի կողմանս ուրեք գաղչելի էին խաշնագարմանք։ Վերկուց ասաի արՀեստից Հին ձամ ՀաստուԹիւնք երկրին և առատուԹի։ Օ արմանալի իմն է եգիպտացւոյն ջան և ՀաստատուԹիՀ ԹԷ ծրչափ ինչ Հանելին յերկրէ անտի՝ որ և ոչ ընդարձակ յոյժ տարածուԹիՀն էր, այլ բաբերարուԹիՀ Վերոպի և ի բնակչացն վաստակաՀք ՀնարագիտուԹիՀ աքանչելի լեալ արգասանդուԹիՀ։

Ա.յս և ա՛մ ուրէք հնարաւոր է՝ ուր խնամք առաջ նորդաց զօգուտ հաւատակաց դիտեսցին։ Ա.րքեպիսկոպոսաց լեալ և խաչնարածուլեալ այլբիւր են անսպառ ա՛մ բանից և օգտից՝ ուր ուրէք թագաւորուլեալ և քաղաքավարուլեալ օրինաւք, որպէս Ա.գիպտոս, Ձեռնկալուլեան նոցա և պաշտպանուլեալ եղեցի փոյթ։ Ա.յս մեղ մեծ է՝ զի զարդիս այսչափ անարդ ենթուն յաչս ամենեցուն, թէ պէտ և նոքին իսկ են՝ որ զա՛մ պէտս և զփափկուլեան կենացդ մատակարարեն ա՛մ կարգի և վճռակի, զոր մեք առ փառաւորս ունիմք։ "Վա՛նգն, ասէ վարդապետն Ցովհաննէս՝ ի հրաշալի գիրս բարուցն իսրայէլացւոց՝ յորում խորանին ջննուլեաւ առնէ բանիս այսորիկ, շինականն է որ կերակրէ զքաղաքացին, զզօրավար, զդատաւոր և զշահապ, զանշուշականն և զեկեղեցական. և յոր հնարս և մտանիցեմք գարձուցանել զարծաթն ի վաճառս՝ և զվաճառս յարծաթ՝ հարկ է ամենայնի դառնալ գալ յարդիւնս երկրի, և յանապատս՝ զոր նայն մնացանէ։ Ա.ստ ի բաղդատել ընդ միմեանս զայս ամենայն կարգս մարդկան՝ նուաստագոյն քան զամենեսին ղերկրագործս համարիմք. և բաղում այն է զի տմարդի քաղաքացին և անպիտան, որպ ոչ է զօրուլեի, ոչ ուշիմուի և ոչ վաստակաք, առաւել յարգոյ է՝ ընչիցն և՛ւ եթէ առաւելուլեաբ, և զի բարեկեաց վարէ կենցաղ։ Ա.կայն և այլազգ ինչ խորհեցեալ, յերկիր ուր ոչ յոյժ խոր իցէ բազդի, կամ թէ չիցէ անդ ազնուականուլեի անդորձ կենաք, ուր ոչ ոք՝ բայց միայն օրինաք իշխեսցեն, և իւրաքանչիւր յիւրն գոյից ինքնիշխանաբար կեցցէ՝ սակաւուբն շահագործեալ քան անարգուլեի յանձն առնուլ վանն մեծուլեան, ուր բնաւ իսկ նախատինք իցեն անգործուլիւնն մեղկուլեի և կաբևորացն առ՝ի կեանս տգիտուլեի, և ուր կորովուլեաբ մարինայ և առողջուի փոյթ իցէ մարդկան՝ քան անձնդիւրուբ, անդ ապաբէն առաւել յոյժ պատուական է արօրադիր առնել զերկիր և խաչնա արածել՝ քան ի խաղս և ի զբօսանս անցուցանել ըզկեանս։ Ա.ւ ոչ առ՝ի գտանել զայսպիսի մարդիկ՝ հարկ է՝ ի հնարեալն Պղատոնի ընթանալ՝ ի հասարակապետուլեի։ Ա՛եծ մանն աշխարհիս զանն չորեքհազար այսու կենդաղով ձահաւորեցան, ոչ իսրայէլացիք միայն՝ այլ և եգիպտացիք և Հելլենք և հռովմայեցիք, ազգք առաւելեալք ի հրահանգս և ի հանճար, պատեբազմագք, և լցեալք ա՛մ գիտուլեբք։ Ա.յ սոցանէ ուսանիմք յարդել զնշակուլեի և զխաչնարածուլեի. զառաջինն՝

զի ՚ի վերայ կանեփոյն և վշոյ, ուստի կուտէ է, մնատա-
կարարել և ցորեան և միրգս և արմտի առատութեամբ,
պարէնս ամենից. և զերկրորդն՝ զի ՚ի վերայ փոփուկ
խոտոյնացն՝ զոր պատրաստել մեզ ՚ի սեղան, միայն զօրա-
վիգն է գոգոյես արուեստից և վաճառականութեանն մեր
Թովբն և առաւելութ. Օշոն և Թագաւորք կամին, և
է իսկ յօգուտ նոցա փառք և նպաստ անսպատական
աշխատասիրացն՝ որ զծանրութեն աւուրն արդարև բառ-
նան և զոհի, և զատուար բեռն աշխարհին նոքա տա-
նին. այլ այս Թագաւորացն կամք յոյսով ուրեք դերևա-
նան յանողորմ և յանչագ զօշաքաղութենէն Հարկապա-
Դնդ. ձՀ. 608: Հանք վերակացուաց, Ի ՚ի պատմութեան գեղեցիկ պա-
տասխանի Տիբերեայ կայսեր առ մի ոմն ՚ի կուսակալաց
աշխարհին Ասիոյ, զի առատագոյն եհան նա եկա-
մուտս յերկրէն՝ ընդշն կարծեցեալ գտանել առաջի ինք
քնակալին, և յղեաց առ նա գանձս առատ քան զօրէն
սովորական. Արուր Տիբեր, որ ՚ի սկզբան Թագաւորու-
թեան իւրոյ ձարտար ՚ի խորհուրդս էր, կամ գէթ ՚ի
բանս, արար պատասխանի, Օ կուսիս կամիմ զխաշանց
իմոց, և ոչ զմորթ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Յաղագս պղպեղոյն եգիպտական երկրին:

Պնայ ինձ ասել զանկոց ինչ աշխարհին եգիպտաց-
ւոց, և զառաւելութենէ բերոցն արմտեաց:

Պղպէր է տունկ ինչ երկրին՝ որ շառաւիղս խիտ առ
խիտ վերընձիւղէ եռանկիւնս, վեց կամ եօթն կանգուն
Պլն. ԺԷ. ՚ի բարձրութիւն, Ազանկիւղ ՚ի տերեւս արմատոյ գրեին ՚ի
ԾՀ: սկզբանէ, ապա ՚ի կէղեւս ծառոց, և յետ այնորիկ ՚ի
տախտակս մանապատս գոտւոյն հնարեցան գրոշմել գրեր
Երեմ. ա. Ե, եաւ՝ որպ ասի ՚ի ծայրերսին էր սուր ՚ի գրել, և միւսն լայն
առ ՚ի ջնջել. ուստի եղև ասել Ավետիսոյ,

Ա՛ռ ՚ի զմատեան վերծանելի տալ ՚ի գիր,
Այն զծայր գրչիդ ՚ի ջնջելոյ դադարիր.

յայտ արարեալ զի ընտիր մատենագրին ջնջել պարտ է
յաձախ զգրեալսն և ուղղագրել: Ընդոյ ուրեմն Պա-
պիրն մուծաւ դիւրայարմար հարթ կէղեւօքն ՚ի գրուել,

որ և Պիղատոս կոչէր՝ յորմէ մատեանն հառ անուանա-
կոչել առ լատինս .

Ա՛ինչ չև Ա՛եմիխա ուսեալ ՚ի հիւս Լուկ.
՚ի Պիղատոսացըն գետաբոյս ։

Պ՚իւտ սքանչելի , ասէ Պլինիոս [1], կենցաղօգուտ և կա-
րևոր , որ զմատակս հանգոյն և զմատակաւորս անմա-
հացուցանէ ։ Ա՛յրեան Ա՛ղեքսանդրի ընծայէ զայս մե-
ծին՝ գտեալ ՚ի Ժամմանակի կառուցանելոյ զԱ՛ղեքսան-
դրիա . այլ գիւտս այս երեց քան զժամանակն զայն լեալ
յայտ է , և Ա՛ղեքսանդր յառնեցոյց զայն ՚ի պիտա-
ուտ ՚ի ՝Յաւելս դարձեալ Պլինիոս՝ Ա՛ւմենայ պէր-
գամացւոց արքայի փոխանակեալ ընդ Պապիր Թղթոյ
գնագաղաձի , նախանձ բերելով Պտղոմէոս արքային և
գիպացուց , և յաղթող լինել պանծացեալ մատենա-
դարանին նորա , այր պապիրեայք էին մատեանքն ։ Ա՛յս
է մնագաղաձն մերձ խոյոց յղկեալ ՚ի պէտս գրութեան .
որ առ այլ ազգս պերգամեան Թուղթ անուանեցաւ՝
վասն ՚ի Թագաւորացն Պերգամոյ գտանելոյ ։ Ա՛յսու
նեաւոյն մատենից մնագաղաձեայք են առ Հասապակ , կամ
՚ի մերձ որձու գրեալ՝ որ փափուկ ևս է քան զյաձա-
խեայն մնագաղաձ ։ ՚Ի բերուն է զարմանալ ընդ սպիտա-
կութիւն և ընդ նրբութիւն այժմու Թղթոյս , զոր ՚ի
հնոյն և յաղտեղի կապերտից գործէն ՚ի գունհայոյն ժո-
ղովելոց ։ Ո՛ պապիր և յառագաստս նաւու ՚ի կիր արկա-
նէին նաեւնիք և ՚ի պարանս , ՚ի գգեստս և յայլ ինչ իրս ։

Ա՛ՏԱՒՆ կամ Վ՚ՅՈՍ է բոյս ինչ երկրին բազմանալով ՚ի Պլին. ժԳ. ։
գետս , յորմէ կտաւն գործի բարակաւանն ։ Ո՛ստոյր յոյժ
էին եգիպտացիք ՚ի նկատել զայն և յանկանել , որպէս
զի Տաճիս Թելիցն երևել ՚ի նրբութենէն ։ Ո՛ սա սովո-
րութիւն էր քրմացն և մեծամեծաց զգենուլ զի արգե-
լեալ իակ էր քրմաց ասուեցն զգեստ ։ Ա՛յ ձառաւշտու-
թիւն մեծ էր եգիպտացւոցն յայսմանէ , և յղկէին գոր-
ծաճս կտաւն յաձախութիւ յայլ աշխարս ։ Ա՛յլ ՚ի գոր-
ծել զայնսոսիկ վաստակէին բազմութիւ եգիպտացւոց , մա-
նաւանդ կանայք ։ Ա՛յս և Ա՛ղեսայեայ բանին յայտ է , ԺԹ. ։
՚ի սպառնալեացս աշխարհն երաշտոյն ՚ի վերայ եգիպտաց
ւոց՝ որով վաստակոց նոցա խափան լինէր . « Ա՛մաչեսո-

1 Ա՛ձգա չէտ այնորիկ չաձա- Թոյն պիտաուբ կեայ ազգ մարդ-
խեցին վարել զայն ՚ի գործ՝ որով կան ՚ի չէշտաակս ։
է անմահանի մարդկան ... ՓԶԶ.

ցեն, ասէ, և կատաւագործքն բարեկամինքը, և որ գործէն զբեհեղն »։ Լ դարձեալ տեսանել ի սուրբ գիրս՝ զի և յայս ինչ ՚ի պատակառ եղեալ կարկուտն, զոր տեղացոյց Եփ. Թ. 31։ Աստուած Հրէից, ապականեաց զամ զկատուն՝ որ սերմանացեալ էր յամենեան մարտի։

Պէս. ԺԹ. ՚ի 6։ Ասէ Հեզեկ. ազգ ինչ կատուոյ ամենամուրբ, զոր ծիրանեաց դոյն սովոր էին ներկել։ Լ՚ե Թամկագին էր բեհեզն, և ՚ի զգեստ ձոխ և բարեկենցիկ մարդկան, Պլինիոս ակիզբն յանկիզելի վշոյն արարեալ, երկրորդ զան կարգէ, և ՚ի զարդ տիկնոջն ասէ լեալ և ՚ի սեթևեթ [1]։ Լ՚ե զսա Եփ. Է. 7։ եգիպտացւոցն գործ լմնեալ ահաւասիկն սուրբ գիրք. «Լ՚ահ հեղ ընդ դիպակիկ գործեցաւ քեզ ՚ի պատառաւ Աստղոսոյ »։

Լամմ՚ և ոչ զԱստուածաճանաչեալ բոյս անչիւտակ առնել, զյաձախեաճն և զյարգոյ Աստղիպտոս, զորոյ ըզհատս վաբկին երբեմն ՚ի գործել հաց։ Լ՚ը սորա ազգ ինչ Աստիրկի, յորմէ Լ ուտատակերքն անուանեալ ազգ՝ զի պտղովն նորա պարենաւորէին. որ այնպես հաձոյ եր ՚ի ձաշակել՝ զի եթէ արդար ասաց Հոմերոս, որք ուտեինն յայնմանէ՝ զբաղցր մխտանին հայրենեացն ՚ի մոռացմունս արկանէին. զորոյ և Աղեքսս զվորձ էառ ՚ի դառնալ նրբուամ ՚ի Տրովադայ։

Լ՚ինեայն բերքն և արմտիքն Լգիպտոսի ազնիւք էին, և բաւականքն, որպէս Պլինիոս ասէ [2], ՚ի լուսնի աշխատ էին լաւութենէն և առատութենէ։ Լ՚ոքոբ և գործատուքն ապրէին, որպէս է ահա տեսանել ՚ի չինողս բրգանցն։

՚Ի վերայ դաշտական հարստութենէն եգիպտացւոց, և Լ՚եղեսս՝ որսովք ձկանցն, և պաղպտաթաւտ դաշտս կենդանեացն պատրաստեալ՝ բարելից զանեղանս նոցա կազմէր ազնիւ և ազգի ազգի ձկամբքն, և բազմամանուկդ խորտկօք, որոյ իարայելացիքն ցանկացան Լգիպտոսի յանապատի անդ տրամիոցքն և ապտտամբք՝ ՚ի Թիւ. ԺԱ. 4. 5։ տացէ մեզ միս ուտելոյ »։ և « Օ՚ի միեցաբք զձուկնն, Եզր. ԵԷ. 3։ զոր ուտէաք Լգիպտոս ձրի, և զսեխն և զմեղրապտոյ և զպրասն և զսոխն և զխոտոր . . . Աինչ նատեաք առ կաթսայ մսոյն, և ուտէաք Հաց յագ »։

Լ՚այլ մեծ և գերազանց ձոխութիւն Լգիպտոսի էր ցորեան առատ, մինչև բաւական լինելոյ ՚ի համաշխարհա-

1 Ասկա յետ այնորիկ բեհեզ զիտէ՝ որ ՚ի փափկութենէ տիկնոջն մանուածոյ հնարեցաւ։

2 Եգիպտոս, արգաւանդ աբ դառն ՚ի բերս պտղոց՝ մինչև անձ կանայք նոցա երկիրն առ յոյժ առատութենէ պարենիցն բուսաբերեցաց։ Տես. ԵԷ։

կան սովոր կերակրել զՅաղգս որ չուրջ բնակեալ էին. որպէս և եղևն իսկ առ Յովսեփաւ։ Այլ ի ժամանակս յետինս Հռիփսեոս ամուր էր ապաստանի քաղաքացն Հռոմայ և Կոստանդնուպոլսի. և շահեմարան անսպառ համբարոց։ Ընդ սպառնալիս մի ևս Հռիփսեոսի ի Կոստանդնուպոլիս ածէին ցորեան, որով չարախօսք զրպարտեցին զսուրբն Գրիգորիս Հայրապետն, յիրաւի ծանրացաւումն եղև ինքնակալն Կոստանդիանոս. քանզի առանց պարենիցն Հռիփսեոսի ընդունելոյ՝ քաղաքն այն ոչ կարէր կեալ։ Նմին իսկ ինքնակալ Հռոմայ խնամ յոյժ ունէին ի վերայ Հռիփսեոսի, զի իրրև դայեակ Հռոմայ և մնացիչ նա էր։ Այլ Նեղոս, որ զնա բուսական առնէր ի խնամն և ի զարմանն երկուցն այնոցիկ բազմաճոխ քաղաքաց աշխարհի, և ի սով ուժգնն հասուցանէր զնա երբեմն։ Այս զարմանք են զի խնաստուն հոգոյզ Թեմիսն Յովսեփայ, որ ի ժամանակս կն առաւել ամբարեաց ցորեան վասն ամացն ամոթ Թեան, ոչ ուսան արք անուանիք կիրթք ի քաղաքավարութիւն՝ յապահովել նովին նախահոգ զգուշութիւնք զվնաս երկրին յերեսաց յոզդոզդ և յեղեղուկ ալեացն Նեղոսի։ Պլինիոս կրտսերն ի ներբող Տրայիանոսի ձառ տար նկարագրէ զգետին անձկութիւն սովոյն, որ եղև Հռիփսեոս առ ինքնակալութեամբ նորին կայսեր, և արդէս մարդասիրաբար ի թիկունս եհաս նա աշխարհին։ Օ որ ոչ անհաձոյ ընկերցանելեացն վարկանիմ համառօտել աստ զնմանս նորա։ Հռիփսեոս, ասէ, որ անձրևաձիրն երկնից անկարօտ պանծայր լինել յաձումն և ի ջուղ ցրնոյ, և ի վերայ բարեբեր գետառաց մշտայաղթ, յանկարծակի ինն երաշտիւ պատուհասեցաւ, և անհնարին անպտղութիւն։ Վասնզի Նեղոս աղբիւր անսպառ առատութեան, նուաղեալ ի սովորականն իւր ծովածաւալ յորդութենէն, զմեծ մասն երկրին ոչ ողողեաց։

Խնդրեաց յայնժամ [1] Հռիփսեոս օգնականութիւն, փոխանակ գետոյն՝ ինքնակալին աղերս ածեալ։ Հռ մինչ ի հասանել գուժկանին ի Հռոմ և տալ զլօթեն՝ նոյնպէս և յապաղումն օգնականութենէն եղև. քանզի Թուէր ինն ի փառաւորել զմարդասիրութիւն կայսերն պատահար արկածիցն այն լեալ։ [2] Վասնզոյց կար-

1 Ի ջուրցն ողողելոյ և կամ ա- հած։
սել յարգասաւորութիւն վրիպեալ աչխարհն, որ զգետն միշտ աղբր- սէր ինքնակալին յայնժամ աղերս

2 Համառօտ ի վալ ժամանակ կաց՝ զի ոչ ուսանէք հնար է կեալ և կերակրել քաղաքիս մերում,

ծիք կին առ աւինեսին՝ զի առանց եգիպտական պարեւ-
նիսն ոչ կարէ կեալ քաղաքս մեր ։ Զգոն այն, խրոխտ և
ամբարհաւատ, Թէպէտ և նկուն լեալ՝ սակայն պարծէր
կերակրիլ լինել յաղթականին, և բաղդի նորա մնօրէն,
և գետոյն խրոխ սահմանել զնա ի բարեկենդանութէն
կամ ի թշուառութէն. այլ արդ գՀունձան անդրէն հա-
տուցաք Ղեզոսի, և զառ ի նմանէն ընկալեալ պարէնս
դարձուցաք նմա ։ Ասացի արդ Հրիպտոս զիորձ առեալ
զի ոչ մեք կարօտ եմք նմա, այլ է նա տարուկ մեր. զի-
տասցէ՝ զի ոչ պարէնս յղէ առ մեզ, այլ հարկս հարկա-
նէ, և յիշեսցէ անմոռաց զի կեցցէ Հռոմ առանց Հ-
գիպտոսի, այլ ոչ Հգիպտոս առանց Հռոմայ ։ Այսպա-
մամ արդ լիներ աշխարհն այն արգաւանդ՝ եթէ էր ա-
զատ. տեր նորա՝ փրկիչ եղեւ նմա և Հայր ։ Օ արմացաս
երկիրն զի առանց վատահոգ մշակացն լցան ամբարք ցո-
րեանց. և ուստի յաձախէին նմա, ոչ գիտեր, այն ան-
բաւ տարաշխարհիկ և ձրի Հոխութիւք։ Այսպ ի վերայ
հասեալ Հեռաբնակ աղգին, և աստի առ նոսա զօրաս-
վիզն փուքթով ժամանեալ, ցուցին ակնբեւ Թէ զի՛ բարի
է ընդ ձեռամբ լինել Հռոմայեցւոց։ Օ եղաւ՝ բաղում
անգամ և ողղեաց Ղեզոս զանդաստանս Հգիպտոսի,
այլ ոչ ուրեք յորդագոյն քան զայս ի փառս Հռոմայ։
Հաձեցեալ երկիրք, հաշտեցեալ ի Հանդէս Համբերուե
աղգին և կայսերն մարդասիրութէն, ընդրհել անդրէն
Հգիպտոսի զընիկին արգասաւորութիւն։

Ի կրամբելոյ աստ Պլինիոսի զնաւփառս պարծանս
եգիպտացւոց ընդ յորդել Ղեզոսի՝ երևի մի ի սեփա-
կանագոյն նոցա քնաւորութեանցն. և յուշ ածեմ զգե-
ղեցիկ առածն՝ Հգեհիելիս ասացեալ՝ այ առ փարաւոն
արքայ Հգիպտոսի. " Ի՞նչ ասիկ ես ի վերայ քո, փա- Եզեկ. 32. 2.
րաւոն արքայ եգիպտացւոց, վիշապ մեծ՝ որ նստիս ի մէջ
գետոց, որ ասես Թէ իմ են գետքս, և ես արարի զսո-
սա ,, ։ Վ՞ասղի տեսանէր ասծ զմեծամտութիւն նորա ան-
հնարին, և զյանդուգն յանձնառաստամբութէ, որով հա-
մարեր որպէս անհրամանն յերկրէն զերծել Ղեզոսի, և
զարգասիս յորդւոէ նորա՝ ի խնամոց իւրոց, և իւրովքն

բայց միայն Հրգիպտոսէ։ Պերճանայր բարձրամտեր ազգն այն խրոխտ, զի Թէպէտև նկուն լեալ այլ զյաղթողն ինքն կերակրէր, և զի ի գետոյն իւրմէ և ի ձեռաց իւրոց և մէզ յագուրդ և սով։ Պարձուցաք արդ Ղեզոսի զբարեխ-
իւր. յետս ընկալաւ զգործեանն զոր առաքեաց, և զՀունձան յղեալս յինքն տարաւ վերստին։
1 Բազում անգամ դեսն այն ողղեաց զՀգիպտոս, այլ ոչ ուրբեք առատագոյն քան զայս ի փառս մեր զեղեաւ։

կամ նախորդացն իւրոց վաստակօք յաջողել. « Իմ է դէտս այս, և ես արարի զնա »։

Այնչ չև վախճան արարեալ երկրորդի մասինս զբաւ- դուց եպիստացուց՝ ազգ առնեմ ածայոց բանիցն մտա- դիր լինել, որ աստ անդ սփռեալ կան 'ի պատմութեան Աբրահամու, Յահակայ և Յակոբայ և Յովսեփայ և Մովսեսի, որ տան հաւատոյս և պայծառութեի բազում ինչ իրաց՝ զոր արտաքսոցն մատնադպիրքն զայսմանէ վի- պագրեն։ Օի է տեսանել 'ի բանս անդ զարելայրմամբ կարգաւորութեի Աստիպտոի և զդրանն արքունի և զա- մենայն թագաւորութեին, զհոգս արքայի՝ որ ամ իրաց աշխարհին խելամուտ էր, և զի էին նմա օրինաւոր ա- տեան խորհրդով, և պաշտօնեայք ընտրանաւ, և սպա- ռազինութեի ամենակալ հանապազ 'ի պատրաստի ըստ ազգս իւրաքանչիւր՝ հետեւակազօր և հեծելախումբ, և կառք զեղանդազինք։ Աստանալք յամ գաւառս և պա- հակապանք, ամբարանոցք հասարակաց, և ամբարապետք քաջք՝ իմաստութեբ և կարգօք բաշխել զցորեան, ար- քունիք պատշաճաւոր՝ սպասաւորօք հանդերձ թագաւո- րին, որ են զօրավարք և պահանորդք, տահապետք և մնատակարար. և համայն ասել՝ որ ինչ անկ է 'ի տան Թագաւորի, և որ ինչ վայել 'ի շուք արքունեաց։ Եւ առաւել ինչ քան զայսոսիկ տեսանել անդ զահ և զդո- ղունն յերեսաց ածասաստ սպառնալեաց, զի ոչ ինչ 'ի խորաչնին տեսութեի նորա ծածկի, և զի է ինքն իշխան և Թագաւորաց, և զսրբասի 'ի հնութեի իբրև յերեսս նէ՝ որ և կործանումն Թագաւորութեին հաստատել կա- րող է։

Դան. ժբ. 10. 20։

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ.

Պատմութիւն Եաֆեթացոյ։

Ի վաղնջուց ժամանակացն վէպս չիք քան զառա- ջնոց Թագաւորացն Աստիպտոսի իբրև նահ և անստգի։ Ընդն այն խորհիլ, յամառեալ պանծացեալ 'ի հնութեի և 'ի դիցախառն ազնուականութեի, փառս համարեցաւ անցեալ ունել սկիզբն 'ի խորս անբաւութեի ժամանակաց՝ իբրև մատաղեր յաւիտենից։ Ուրուք եթէ հաձոյ ումեք Թուեսցի հաւատալ նախ դիք, և ապա դիւցազունքն կիա- աստուածք կարգ ըստ կարգի պայազատեալ տիրեցին

Դեսպ. ա. 41։

ամն աւելի քան բիւրս երկու ։ Ո՞ առասպելք և պարծանք մնոցի ։

Ձետ դիցն և դիւցազանց՝ Թագաւորք ասպ տիրէցին եգիպտացիք, զորոց յերեսուն Հարստուխս կամ՝ ի կարգս իշխանութեանէ արար Մանեթովս մատենագրութեանս ։ Այս էր ինքն Մանեթովս եգիպտացի, քրմապետ և դիւանագիր մեհենական աւանդիցն եգիպտացւոց . վարժ ի հնէ լեալ դպրութեան, որ միոյ եգիպտացւոց՝ ի Հերմէսէ մանաւանդ , որպէս ասէ , և յայլոց՝ ի վաղնջուց յիշատակաց՝ որ՝ ի դիւանս մեհենացն՝ ի պահեստի կային, առեալ վիպագրեաց առ եղեալ բառսերէն Պտղոմեաւ՝ ի հրամանէ նորա ։ Որ եթէ իցէն Ճշմարիտ երեսուն Հարստութիւնն՝ ի նմանէ աւանդեալ՝ ժողովին մինչև՝ ի Թագաւորել Կղեբսանդրի ամք աւելի քան զՀինգ Հազար և երեքբիւր . որ յայտնի իսկ անհատատրմելիք իրք են ։ Այս Նրատոսթենէսի կիւրենացւոյ , զոր Պտղոմէոսն Այերգետէս կոչեաց Կղեբսանդրիա , է արարեալ տումար երեսուն և ուրի Թագաւորաց Թեբայ , այլ՝ ի Մանեթովսի յիշատակացն ։ Ո փոյթ դժուարութեանցս լուծանելոյ յոյժ Ճգնեցան արք բազմահմուտք . այլ դիւրագոյն միաբանելն Հնարք , որով և ամենեքին վարին արդ վիպագիրք իրացս , այս է . մի զիւրաքանչիւրոց Հարստութեանցն Թագաւորս ի միմեանց բարձառուս կարգել , այլ ոմանց աստ և ոմանց անդ ՝ի նմին ժամանակի Թագաւորեալ ։ Զորք գլխաւոր Հարստութիք եղեն Այգիպտոս . Թեբացւոցն և Թիւնացւոց և մեմփացւոց և տանիսացւոց ։

Այլ ես ոչ ածեմ զկարգ Թագաւորացն իւրաքանչիւրոց , որոց Հազիւ յիշատակք մնացեալք են ՝ի վէպս , այլ որչափ ինչ՝ ի Հմտութէ և ՝ի վարժս մանկաւունն գիտացից . զի նոցա զգիրս զայս գրեմ՝ քան զարգացելոցն ։ Այս որ ինչ Այրոդոտեայ և Պիտոդորի սիկիլիացւոյ զԹագաւորսն Այգիպտոսի ասացեալ է՝ զայն ամ Հոգացայց այսր ՝ի ներքս բերել , ոչ ինչ Հայեցեալ՝ ի յայնքդուրեանն Ճշգրիտ կարգ , մանաւանդ առ խարխափ սեմոյ պատմութեանս . և ոչ զերկոսին զոսոս վիպագիրս միաբանել խոստանամ ։ Օ՛ի նոցա կէտ նպատակին , մանաւանդ Այրոդոտեայ , ոչ էր ոզջ ածել զկարգ Թագաւորացն եւ գիպտացւոց , այլ որոց մատենագրութիւնք արժանի վէպք իցեն և օգտակար ՝ի հրահանգս ։ Օ՛ նոցին կալայց և ես շաւիղ . և է ինձ ակնկալութիւն անպարտաւ լինել այնու՝ զի ոչ անձամբ զանձն, և զմանկտին ընդ իս , առեալ ձգիւ-

ցեմ՝ի բաւիղս անել, ուստի և նեբհունք Տաղիւս զերծաւ նել թէ կարասցեն՝ կարգի պատմութեամն Տետևեալ և ժամանակագրութ՝ ի շարագրածս իմասնոց երկայ նապատում զոցանէ գոցեն ինդրողք Ձառագրեալ ։

Լրոդոտոսի՝ի մատենից քրմացն եգիպտացւոց ա ռեալ և վիպագրեալ, ըստ նոցին և պատգամս յոլով ու րեք և Տրաշս՝ի ներքս ածէ, զորս կանխեմ ազդ առնել՝ զի ուշիմ ընթերցողն ուղիղ զառապելեացն արասցէ դատաստան ։

Լգիպտացւոցն նախնի պատմութեան ամբ ժողովին երկու Տազար Տարիւր յիսուն և ութ, ինքեանք՝ի բնէ յե բիս մասունս Տատեալ ։ Լրձամբջին միապետութեանն ժա մանակ, ՝ի Ա՝ենեայ սկիզբն առեալ և՝ի Ա՝եսորեմայ յորդւոյ Լրամայ ։ ՝ի թուականութենէ աշխարՀի 1816, մինչ ցամն 3479, յորում ժամանակի Կամբիւս արբայ Պարսից զմիապետութիւն եբաղձ յաշխարՀին ։ միտ մուռ ամբ 1663 ։ Լրկրորդ՝ յորում ժամանակի պատ մութիւնբ եգիպտացւոց ընդ Յունացն խառնին և ընդ Պարսից մինչև ցմահ Լրեբանդրի մեծի ։ ամբ՝ի միա սին 202 ։ Լրրորդ՝ ի կանգնելոյ վերստին Թագաւորու թեանն եգիպտացւոց՝ի Պ ագոսեանց կամ՝ի Պտղո մեանց իջելոցն՝ի Պ ագոսէ մինչև՝ի մահ Կղեոպատրայ՝ որ վերջին եկաց դՀնոյ Լ՝գիպտոս յամի 3974 ։ միանբ գամսոյն ամբ 293 ։

Օ առաջնոյն սկիզբն կալայց ասել, և զայլոցն յետ այնորիկ կարգաւ ։

ԹԱԳԱՒՈՐՔ ԵԳԻՊՏԱՑԻՈՑ։

ԱՄԱՍՆԱ 1816 - 2188

Ա՝ենէս ։ Յառաջինեցունց՝ի վիպասանիցն վկայեալ սա նախ Թագաւոր եկաց Լ՝գիպտոս ։ և ոչ վայրապար զանձ նել զնոյն ինքն ասեն լինել զՍ՝եսորեմ որդի Լրամայ ։ Լրամ երկրորդ որդի եր Նոյին ։ սա՝ զինի յանդգնութենէ խորհրդոյն աշտարակագործութեան՝ի Լրաբելն, իբրև բաժանեալ սփռեցաւ ազգ Նոյի ընդ տիեզերս, դէմ եգեալ չորաւ՝ի Լրբրահամ ։ և ի ինքն անշուշտ՝ որ յետ ժամանակաց աստուածացեալ անդ, կոչեցաւ Լրամազդ Լ՝մին ։ Սորա էին որդիք չորք ։ Լրուշ, Ա՝եսորեմ, Ծանթ. Ժ.Ե.

1 ՝ի ՀամանուԱնան Մարչմայ Բենչրոնի ։ և՝ի Ձառս Հերն Դիոսանէ սոպեի, ՝ի Մաքենոփոռենոս Հերն Գնոյ և Սչենի։

փուղ և Վաննան ։ Վռուշ կալաւ զԱթովղիա ։ Ինքն արեմ զԱգիպտոս, զոր և ածային գերք յանուն նորա յաձախ և յանուն չոր նորա անուանին ։ Փուղ զկողին Լիբիոյ յարևմտից Ագիպտոսի ։ և Վաննան զգաւառն՝ որ ապա յանուն նորա կոչեցաւ ։ Եւ բնակիչք երկրին քամանացիք՝ նոքին իսկ են, զոր Հելլենք փիւնիկեցիս սովոր են կոչել ։ որում պատճառս տալ ոչ կարեմ, ոչ օտար յորջորջելն և ոչ առաջնոյ անուանն ի մոռացօնս լինելոյ ։ Դարձայց ի Միսոպեան։

Եւսեբ. ք. ա. Դիոդ. ա. 42։

Ինքնեքին զամանէ զնոյն ինքն զՄինոս լինել ասեն ։ որ ի վերստանելին առաջնին Թագաւորեալ պատմի Աղիպտոս, և պաշտօն դիցն հաստատեալ անդ և գահամունս զոհից ։

Ասուրբոս ։ Ոչհետ բազում ժամանակաց շինեալ սա քաղաք անուանի զմոեբէ, և անդ հաստատեաց զաթոռ Թագաւորելն ։ Ո մեծագործ շինուածոյ և ըստ ձոխութեանն քաղաքիս կանխեցի ասել ։ Լակ կառուցող սորին ոչ այն Ասուերոսն է հնագիրն անգթութեան ։

Դիոդ. ա. 44. 45։

Սեմնէս ։ Ո սորա հրաշակառոյց գաստակերտս մանրապատում առնէ Դիոդորոս ։ յորոց ի միում էին ճարտարարուեստ քանդակք և նկարագործ չքնաղ պատկերք՝ ուրեք արշաւանաց նորա ի վերայ բակտրիացւոց, ազգ Լիբիոյ, քանզի ի վերայ նոցա խաղաց քառասուն բիւրու հետեւակաց, և քսան հազարաւ հեծելոց ։ և այլուր գաւառացն հոլմնելոյ յատեան, և զպարտ նոցայա գահերիցուն արկեալ կերպարան Ձմարտութեանն գաւազան, և զնովաւ խոնեալ մատեանք, առ ի խրատ՝ զի պարտ է գաւառացոյ հմուտ լինել օրինաց և անաչառ ի դատաստանի։ Ինդ և ինքն Թագաւորն նկարեալ էր մատուցանելով գերզ զսակին և զարծաթ, որ ի բովլոյն Աղիպտոսի հատանէին ամի ամի, աւելի քան զՀազար վեցհարիւր բիւրս լերայից ։ Փոքր ինչ ի բացէ մանուհատարանն հրաշակերտ, հինն քան զամենեսին ի վեպս, արձանագրեալ հանդերձ ԹԱԳԱՒՈՐԱՆ ՀՈԴՈՑ ։ Եւ առ մատենադարանաւն անդրէն գերք եգիպտացւոց, և միւմ միւմ ի նոցանէ Թագաւորն ընծայէր զպատշաճ ձօնիսն ։ յայտ արարեալ առ յապայ մարդկան, զի զնմ ժամանակս իւր բարեպաշտ առ գիտն եղեաց, և արդար առ մարդիկ ։

Իր նորա շերիմ մեծագործ պատեալ ոսկի շղթայիւ, կանգնաւ միով ի լայնութեն, և շղթայիւ նորա երեքհարիւր վաթսուն և հինգ կանգնոյն, յիւրաքան-

ՇԻԲԱՆ նշանակեալ էր և մեռ արեգական և այլոց համ- ԱՄԱՆՈՒ
աստեղաթեանցն ։ Վ՚ասղի անդստին յայնց ժամանա-
կաց եգիպտացիք բաժանեցին զտարին յերեսնեակս եր-
կոտասան՝ յամիս ։ յաւելուած ՚ի վերայ երկոտասանիցն
արարեալ ամի ամի աւուրս հինգ և ժամ մի ։ Ի հրա-
շակերտ շրջմին՝ հարստահարիւն նիւթոյ և ձարտար ա-
րուեստ մրցեին ընդ միմեանս ։
ՈՒԿՍՈՐ ։ Պայազատեալ զՍիմանդ կառոյց զԱՀ- Դիոդ. ա. 46.
փիս , հարիւր և յիսուն ասպարիզաւ ՚ի շրջաբերեալն ,
՚ի ծայր կոյս Տիւղպայի՝ ուր ՚ի բազում առաջս բաշխի ՚Ն-
ղոս ։ Յո ՚ի հարաւոյ հողակոյտ կանդնեաց բարձրաբերձ ,
յաջմէ և յահեկէ խրամն խորաձորս փոսացուցեալ ընդ-
ունարան յորդուելոյն գետոյն ։ Յո շրջքանակի ամրա-
Կարքեդոն անգօր, որպէս ասացաք, ՚ի սկզբանէ՝ աՃեաց ապա և զօրացաւ, և ոչ ամիսոփեալ խրոխտն այն Ա՛ֆրիկէ՝ ընդարձակեաց և արտաքոյ զաշխարհակալութիւն իւր ։ Կալաւ զԱրդկիա, և մեծի մասին Աֆրիկէ լեայ տիրեաց, և զՊաննիա գրեթէ բովանդակ նուաՃեաց · և գաղթականս հզօր ընդ ՚ամ կողմանս առաքեալ՝ զամն աւելի քան զվեց հարիւր ծովակալեաց, և զօրացաւ ՚ի մրցումն ընդ յաղթ պետութիւնս աշխարհի՝ վաՃառականութեամբ իւրով, անհամար զօրաց բազմութեամբ, աՀաւոր ամենակազմ նաւուքն, և առաւել ևս քաջութիւք զօրավարացն իւրոց ։ Օ յոլովս յաչխարհակալուելոնց նոցա ժամանակագրութիւք Հանդերձ ատուգա պատումՀ առնել ոչ կարեմ, այլ սուղ ինչ Համառօտիւ ասել՝ զի և աշխարհացն Հմուտ լեցին ընթերցողք զորս յաՃախ յիշատակել Հանդերձեալ եմ ՚ի յաջորդսդ ։

ԵՐԿՐԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ԿԱՐԴԵՑՈՒԱԾՈՑ ՑԱՓՐԿԷ

Սկիզբն պատերազմանց արարին կարքեդոնացիք ՚ի խա- Յ.....ն · ժ· · ։
փան Տարիկին՝ զոր սահմանեալ էր տալ ափրիկէացւոց ընդ երկրին բնակութեՀ · որով այս պատերազմունքս ոչ են նոցա ՚ի փառս ։ ՚Ի մանչի կամելով ինն ծածկել գնուաստութիւն իւրեանց՝ գնչանակս իրին ինդրելին բառնալ, զդեՏարիկ՝ որ զեկամուտ բնակութեՀն նոցա անդ ցուցանէր · այլ առ ժամն ոչ յաՀողեաց նոցա այն ։ Ա՛ինոյն իրաւունք ափրիկէացւոցն էին, և իրաւանցն ՚ի դէպ պատե

բացին վէմարեցաւ, և յետս մնացին հարկ եղև կարքեդո-
նացւոց զհափշտակեալ հարկին ընուլ։

Գ՚պա ի Պաւրիտանիա ածեալ պատերազմ և ի
Գերմանիա, կալան անդ երկիր բազում. և յաջողու-
թեամբն խրախուսեալ, խափանեցին չայժամ զՀարկին՝
զոր գժկամակութեա տային, և կալան զմեծ մաս զաւրիւ-
կեցւոց աշխարհին։

Ս՚այսու ժամանակաւ վէմէն սաստիկ եղեն կարքեդո-
նացւոց ընդ կիւրենացիս ի վերայ սահմանաց։ Կիւրենն
էր քաղաք ամուր, զոր Ներտոն կառոյց սպարտացի
յետս միջերկրական ծովուն հուպ Լ՚ազուան մեծ։ Պա-
շինս ապա եղեն ընդ միմեանս, զի յերկաքանչիւր կող-
մանց երիտասարդք կրկին ի միում պահու չարձակեալք
յերկուցն քաղաքաց, ի կիւրենայ և ի Կարքեդոնէ, ու-
րանօր հանդիպին միմեանց՝ անդ լծին սահմանք։ Չաղ-
թող եղեն կարքեդոնացիք եղբարք երկու համանուն՝ որ
կոչէին Փիլենք։ Իսկ կիւրենացիք պատճառս ի վերայ
նոցա յուզեալ որպես թէ վաղ քան զժամանակն մե-
կնեալ լցեն ի չարձակարանէն՝ ոչ յանձն առնուին կալ
ի պայման դաշինն, բայց եթէ ի փարատել զնմ կաս-
կած նենգութե թաղեցին կենդանւոյն եղբարքն քաջ
ընթացք ի տեղւոջ ուր միմեանց հանդիպեցան. և նո-
քա յանձն առին։ Որոց կարքեդոնացիք կանգնեցին անդ
բագինս կրկին յանուն նոցա՝ աստուածական առնելով
պատիւս. և չայմ հետէ կոչեցաւ տեղին այն Փիլենեանցն
բագինք, ուր էին սահմանք տէրութե կարքեդոնաց-
ւոց՝ որ անտի ձգեալ տարածանէր մինչև չարձանն Հե-
րակլէ։

ԵՐԿՐԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ԿԱՐՔԵԴՈՆԱՑԻՈՑ Ի ԿՂԶԻՍ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻՆ

Սբռեբ. Ե. 224։ Դիոդ.Ե.296։

Ո՚վ մուտս կարքեդոնացւոցն ի Պաւրդինիա ոչ ոք ի
մատենագրաց ստուգիւ ժամանակագրէ, և ոչ՝ թէ զի-
արգ տիրապետեցին անդ։ Ո՚օրավինն մեծ եղև նոցա
կղզին այն, և չայ պատերազմունս՝ հաստատ կէին նո-
ցա անդ առաւտ կերակրոց։ Կիեղուց իբր վաթսուն աս-
պարիզաւ անջրպետեր զնա ի Սկիւռնայ։ Ի Հարաւա-
կողմն նորա յերկիր արգաւանդ էր մայրաքաղաքն Կա-
լարիս։ Կինդը իբրև հասին կարքեդոնացիք՝ բնակիչք
կղզւոյն ամրացան ի լերինս հիւսիսակողմանն ամմատոյցս,
ուստի չեղև հնար հանել զնոսա։

'Կաև զԿաղէարեան կղզիսն կալան կարքեդոնացիք. որ արդ կոչին ասկորիկ և Կինորիկա։ Կաւանիսն մագոնեան կուչեցեալ՝ անդ 'ի Կինորիկա, 'ի զօրավարէն կարքեդոնացւոց 'ի Կագոնայ զանունն կալաւ, որ անդ զառաջինն եղև և ամրացոյց զսոյն։ Կակ զի ո Կագոնս այս էգէ՝ ոչ է յայտ. երևի բազում իրօք եղբայր գոլ Կինիբալայ։ Կյ և տեղին այն մինչև ցայսօր մի 'ի մեծամեծ նաւահանգստից միջերկրական ծովուն։ Լէո. լը. է։

'Ի կղզեաց աստի առնուին կարքեդոնացիք յաջողաձեռն պատրաստութս, որպիսիք ոչ էին 'ի վերայ երկրի. որք գործ մեծ 'ի պատերազմունս գործէին և 'ի պաշարել զքաղաքս. և որք քան զիշիւս լսեր՝ վէմս մեծամեծս, և մերթ գնտակս [1] կապարեայս, պարսիւքն ձգէին. այսպէս ինքն Թաւիով և ուժգնութիւ՛ մինչև զառաջատս խորտակել և զևահանս և զզրահս ամուրս. և քաջագործութիւն իմն՝ զի և 'ի մազոյ ոչ վրիպէին։ Կիանգի 'ի մանկութենէ բնաւ կիւք կղզեացս այսոցիկ մարզէին 'ի պարսիւ. որոց մանրք յոստս բարձունս ծառոց զհացիկն նախաձաշսն դնէին՝ զի առ քաղցոյն արկցեն զսոյն 'ի վայր պարսաքարիւն։ Լսոտի և կղզիքն Կաղէարեանք 'ի Հռունաց կուէցան, իբր ասել մրցաւորանք կամ կրթաւարանք, յորս մարդիկն 'ի տղայ տիոց պարսաքարել ուսանէին։ Սոր. ֆ. 167։

ԵՐԿՐԱԿԱՒՈՐՈՒՆՔ ԿԱՐՁԵՐԻՆԱՑՈՑ 'Ի ՍՊԱՆՈՒԻ

Կինչ չև 'ի Ձառայն մատուցեալ՝ կարևոր համարիմ տալ սուղ ինչ տեսութիւն զաշխարհին սպանիացւոց։

Հերիւն բաժանի Կպանիա. 'ի Կետիկէ, 'ի Կուսիտանէ և 'ի Ցարակոն։ Կլուս. բ. է։

Կետիկէ, կալեալ զանունն 'ի Կետիս գետոյ, կայր 'ի հարաւոյ. և 'ի նմա աշխարհն՝ որ կոչի արդ Թագաւորութիւն Կրանադայ, և Կ անդալուսիա՝ որ է մասն նորոյն Կաստիլիոյ, և Կետուրիա։ Կադիս քաղաք 'ի համանունն իւր փոքրիկ կղզւոջ յարևմտից Կանդալուսիոյ, հարիւր և ութսուն ասպարիզաւ հեռի 'ի Կեստեայ։ Հերակլէս մինչև ցայսվայր զաշխարհակալութիւն իւր հաստուցեալ, որպէս ամենեցուն յայտ է, աստ զարձանսն եդե- Սոր. ֆ. 171։

1 Լուծանի գունդն կապարեայ 'ի հրոյ հալեալ ծորէ։ Սէնէկ. բն. պարսեալ. և 'ի չիեզոյ օդոյ իբրև Խոտ. է. ծէ։

կուս առ յիշատակէ յաղթութեանն ըստ սովորութեանժամ
մանակին կանգնեաց՝ որպէս ի ծագ աշխարհի հասեալ։
Եւ թէպէտ արձանքն յերկարութենէ ժամանակաց ան-
ԵԴԵՍ. 139-142: հետացան, այլ անուն նոցա պահեցաւ անդ։ Քաջ յա-
ղագս տեղւոյ արձանացս ոչ միաձայն խօսին մատենա-
գիրք։ Եւ ետիկէ էր արգաւանդագոյն մասն աշխարհին,
Հարուստ, և բազմամարդ. յորում էին քաղաքք երկե-
բիւր՝ բնակեալ ի Յունդեաստանեն կամ Յունդուքանից
կոչեցելոց ազգաց։ Բայց Եւետիս գետով էին քաղաքք
երեք. մերձ յակունսն Կասպից, և ապա Կորդուքաց՝
ուստի էին Հուկասոս, և Աենեկա՝ երեցն և կրտեր. և
Հիսպալիս։

Հուսիտանիա ունի սահմանս յարեւմտից զՄիկիանոս,
ի հիւսիսոյ զՈւբիան և ի հարաւոյ զՆաս գետս։ Բայ
ի միջոցի երկուց գետոցս է և գետն Յագուս։ Եւ է ու-
սիտանիա կլեցեալն այժմ փորթոկալ հանդերձ մա-
սամբ նորայս և հնոյն Կասպացոյ։

Տարակոնի սահմանք էին՝ ծնացուած աշխարհին Սպա-
նիոյ, աշխարհ Ոուբիոյ և Ս աղենտիոյ, Կատալանիա,
Աելտիբերիա, Լաւարրա, Հանտաբրիա, Պատրիա,
Վասկեկիա, երկիր Եգիմնի և Կաստելլայքն կրկին մե-
ծաւ մասամբ։ Եւ կոչեցաւ աշխարհս այս Տարակոն՝ ի
Տարակոնայ հռչակաւոր քաղաքէ. առ որում մերձ կայ
և Խարբենն կամ Խարկելլոնն՝ կալեալ զանուանն, որ-
պէս կարծեմ, ի Խարկայ. քանզի այս մանկանուն էր
Միլկարայ հօր մեծին Հնիբաղայ։ Ազգք անուանիք
յաշխարհին Տարակոնայ են Աելտիբերք՝ բնակեալք յայն
կոյս Իբերայ, Կանտաբերք՝ որ են այժմ բնակիչք Խա-
քալոյ, Կարպետանեայք՝ որոց մայրաքաղաք Տոլետոն,
և Կրետայք, այլոլքն Հանդերձ։

Կպանիա փարթամ ի բոլս ոսկւոյ և արծաթոյ, և
բնակեալ յազգայ պատերազմողաց, գրգռեր և զաքա-
հուքիւն կարքեդոնացւոցն և զիառասիրութիւն, որ վա-
ճառականքն էին մանաւանդ քան աշխարհակալք՝ ըստ
սահմանի պետութեանց։ Քաջ գիտէին Նոքա զոր
Ղ. 312: Ղիոդորոս գնահատեաց նոցա ասելր զիւնիկիեցւոց. Թէ
զբարեպատեհ տգիտութիւն սպանիացւոց, որ անգէտք էին
անբաւ գանձուցն ծածկելոց ի ծոց երկրի իւրեանց, յա-
գուտ արկեալ Նոքա զառաջինն կասկածեցին ի նոցանէ
զգանկալին գանձն ընդ անարգ վաճառոյ փոխանակեալ։
Վարձեալ և զայն զմաւա ածէին, զի եթէ երկիրն զայն
Նուաճեսցեն՝ գունդս պատերազմող անդ առաւել քան

զպէտս բաւականին գացեն՝ ի նուաձել զայլ աշխարհս, որպէս և եղեն։

Զնականութեի զոր ետուն կաթեդռնացիք քնակեալց Յ...ի Ադիսայ, որք նեղէին յարեւանց սպանիացւոցն, եղև առաջին պատճառք անցանելոյ նոցա ի Սպանիա։ Գնաց Դ...ն. 500. կէին ի Կադիս հատուած ի Տիւրոսէ, որպէս յԱրիստիկ և ի Կարքեդոն. և էր Կադիս երիցագոյն քան զնոսա ժամանակաւ։ Ի կառուցանել զայն՝ սահմանեցին անդր տիրացիքն պաշտօն Հերակլէայ, և կանգնեցին նմա մեհեան մեծակառոյց՝ որ անուանի յոյժ եղև յամենայն ժամանակի։ Խարեբադէ յաղողութիւ առաջին արշաւանացս իւրեանց ի Սպանիա։ Օ հաւաստի ժամանակ մնից կաթեդռնացւոցն անդր ոչ գիտեմ, և ցոր վայր հաստ ի սկզբան. քանզի երեւի մեղմով յառաջ խաղացեալ նոցա զառաջինն, զի էր առաջն նոցա ազգ քաջ պատերազմող՝ որ ի վերայ աշխարհին այնուհետեւ մարտնչէր. և ոչ յաղթել կարէին նոքա, որպէս նշանակէ զայս Աթաթոն, եւթէ սպանիացիք համագունդ կռուէին ընդ 158. նիզակակիցք միմեանց։ Ի յայլ սոքա ազգ իւրաքանչիւր և գաւառ ինքեան միայնակ պատերազմեալ՝ հարկաւ մի ըստ միոջէ նուազ լինէին։ Յաւուրն եղև պարտուլն նոցա, ասաի և յերկարել պատերազմին, և դժուարել նուաճումէ երկրին։ Ա ան այսորիկ ասէ ամն ի մատենագրաց, [1] զի ի Սպանիա նախ քան յայլ աշխարհս ի ցամաքի յարձակեցան հռովմայեցիք, այլ ի վերջէ քան զամենեսին նուաճեցին զայն. քանզի զամն աւելի քան զերկերիւր ուժգնիւ մարտուցեալ, ապա ընդ լծով սրարին զայն ի սպառ։

Պողիբիոս և Լիւիոս ի ձառս պատերազմացն՝ զոր մղեցին ի Սպանիա Սիփիար և Յոտրուբաղ և Հննիբաղ, զորոց ի մեծոյ ասասցուք, տան իմանալ զի չև եւս ցայնժամ կալեալ էին անդ կաթեդռնացիք երկիր քաղաքաւ, և զի գաւառք բազումք ինային նոցա ի նուաճել։ Ի յայլ ասպ ի քան ամ ի սպառ գրեթէ նուաճեցին զայնոսիկ։

Ի ժամանակի իբրև Հննիբաղ Յոտալիա ասպատա- Պ...էբ. ֆ. կեր, ծովեզերեայք ամ աշխարհին ափրիկեցւոց ի փիւ- 1922, և. 9։ ղիեանցն բազնեաց, որ հնուց առ երի կան Յ...աղաւանս

1 Ի գաւառս ցամաքի նախ ի յետոյ քան զամենեսին նուաճեցին Սպանիա մեին հռովմայեցիք, այլ զայն. Լիւ. իբ. ձբ։

մեծ, մինչև ցարձանան Հերակլի էին ընդ ձեռամբ կարքեդոնացոց։ Յանցանել ընդ նեղուցն՝ նուաճեալ ուշ նէին զարևմտեայսն Սպանիոյ, որ Հայի Յովհաննու, մինչև ի պիւրենեան լերինս։ Այս միջերկրականին ծովեզերք Սպանիոյ, և այնոքիկ ընդ ձեռամբ նոցա էին, ուր և կառուցին զնորն Կարքեդոն՝ կալեալ վաղագոյն զերկիրն զայն, և մինչև յԻբերոս սահմանք էին նոցա։ Այս ընդարձակ տերութիւն էր կարքեդոնացոց. այլ ի միջերկրեայս աշխարհին էին և այլ ազգք՝ որ ոչ հնազանդ դեցան նոցա։

ԵՐԿՐԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ԿԱՐԹԵԴՈՆԱՑՒՈՑ Ի ՍԻԿԻԼԻԱ

Պատերազմունք, զորս ի Սիկիլիա մղեցին կարքեդոնացիք, առաւել ծանօթք են։ Որոց արդ սկիզբն արաբեալ ի Թագաւորութենէն Լաբդբսի՝ որ հարկեցոյց զպարքեդոնացին ածել զղէնս իւրեանց ի վերայ Սիկիլիոյ, դադարեցուցից զպատմութիւն նոցա յառաջին պուճնիկեան պատերազմին. որ է չափ ժամանակի իբր երկերբուր և քսան ամաց։ Յերեք հազար հինգ հարիւր և ի քսան թուականութենէն ախտացին մինչև յերեք հազար յեօթն հարիւր յերեսուն և ութ։ Ի սկզբան պատերազմացս, Սիրակուսա՝ որ անուանին էր և ամուր ի քաղաքս Սիկիլիոյ, եղև ընդ ձեռամբ երեցուց եղբարցն Վենոնի, Հերոնի և Թրասիբուղեայ, որք հուպ ընդ հուպ զիմիանս փոխանորդեցին։ Յետ նոցա ռամկապետուբ վարեցաւ ամն առաւել քան զվեթսուն։ Այսպա կալան զայն Դիոնեսիոս երեցն և կրտսեր, Տիմոլեան, և Գաթոնիդես։ Այս ապա հնազանդեցաւ Պիւռոսի ամս սակաւ։ Այս իշխանք էին Սիկիլիոյ զամ ժամանակս պատերազմացն, զորոց ահա առաջի կայ ինձ ասել. և ոչ սակաւ այսոքիկ օգնեն ի միտ առնուլ ձրչափ զօրուբեր էր կարքեդոնացոց յորժամ ի մարտ ընդ հռովմայեցիսն խիզախեցին։

Անճն և հուսկաւոր ի կղզիս միջերկրականին է Սիկիլիա ի ձև եռանկիւնի, յորմէ և եռանկիւնն կոչեցաւ և եռակողմն։ Նովքեզերք արևելից կողմանն, որ ի յոնիական հայկն ծուլ կամ ի ծոլն յունաստանի, ի պատքենեան հրուանդանէ՝ զոր արդ Կասսառօ ասեն, ձգին մինչ ի Պեղորն՝ որ է կոչեցեալն արդ գլուխ փարոսի։ Այս անդ քաղաքք երևելիք՝ Սիրակուսա, Տոռոմին և

Ա՝եսսանա ։ Կողմն հիւսիսոյ ։ որ հայի Լ՝ատալիա ։ ի՝ ամա-
հրուանդանէն Պէղորնի ձգի մինչ ի լիլիբեան հրուան-
դան ։ Լ՝ե քաղաքք անուանիք անդ Մ՝ԼԷ ։ Հիմերա ։ Պա-
նորմոն ։ Լիլիբէ ։ Մ՝ոտիա և Լիլիբէոն ։ Լ՝ե հարաւա-
կողմն ։ որ հայի ընդ Լ՝իբիկէ ։ ձգի ի՝ Լիլիբեայ մինչ ի՝
Պաքէն ։ և գլխաւոր քաղաքք անդ՝ Մ՝ԷլԷնոն ։ Լ՝ակրա-
գանդ ։ Գէղա և Լ՝ամարլիեն ։ Օ կղզիս զայս անջրպետէ
Լ՝ատալիոյ նեղուց մղտաւ և կ՝իսով ։ որ կոչի Վարռո
Ա՝եսսանայ ։ քանզի հնուց է ի՝ քաղաք անդր դիտանոց
նեղցին ։ Իսկ ի՝ Լիլիբեայ Լ՝իբիկէ՝ հազար և հինգ հա-
րիւր ասպարիզաց են անցք ։ զոր առ Պարբոնի վրիպա- Ը. 267։
կաւ գոլ եդեալ քան կամ քան և հինգ ասպարէզ ։

Ո՝չ կարեմ հաւաստեաւ կամ դուշակելով ասել՝ եթէ
երբ նախ կարքեդոնացիք գիմեցին պատերազմաւ ի Մի-
կիլիա ։ բայց գիտեմք զայս՝ զի զկողմն մի երկրին ունէին
ի՝ դաշնաւորել ընդ Հռովմայեցիս յորում ժամանակի 3501 ։ 245
բարձաւ Թագաւորութիւն ի՝ Հռովմայ, և բդեաշխք փո-
խանորդեցին, քանն և ութ ամաւ յառաջ քան զծրշա-
ւանս Ա՝նեբդալ յաղթողացոյ ։ ի՝ Հաւս
դաշանց այսոցիկ ։ որ առաջին ի մէջ երկուց ազգացն
կռեցան ։ էն և Լ՝իբիկէ և Սարդինիա իբրև սահմանք
կարքեդոնացոց ։ իսկ Մ՝իկիլիա մասամբքն՝ որ նոցա անկ
էին ։ Լ՝ըգել դնի անդ յայսմանպէս՝ մի ումեք ի հռով-
մայեցւոց կամ ի դաշնաւորաց նոցա անդր քան ըզ-
հրուանդանն Պէղեցիկ նաւարկել ։ որ մօտ էր տեղին այն
ի՝ կարքեդոն ։ և որք վաճառս ի՝ քաղաք անդր ածէին մի
ինչ աւելի քան զվաղնջուց սակն հատուցանէին ։ Յորում
կ տեսանել զկարքեդոնացոցն արհաւն զգուշանի՝ չտալ
մեւս հռովմայեցւոց յերկիր իւրեանց ։ և մի գիտել
զերս իւրեանց ։ իբրև անդստին ի նորածին զօրութենէ
նոցա խիթացեալ ։ և երկնեալ զնախանձ և զկասկա-
ծանս՝ յոր սպա յետ ժամանակաց համարձակեցան եր-
կարաձիգ խիստ պատերազմաբքն ։ և մնչելին առելութիւ-
միմեանց՝ որ կործանմամբ ևԷթ միոյ յերկուցն խափաներ ։

Յետ ոչ բազում ամաց կռելոյ դաշնացս այսոցիկ Դ՝ԽԲ. ԺԱ. 1. 16. 22։
դաշնակից եղեն կարքեդոնացիք ընդ Վ՝ԱեՂքսեայ ար- 3520 ։ 264
քային Պարսից ։ Վ՝ասղի սա ի մտի եդեալ քնջկինք
առնել ըզՅոյնս զանհաշտ Թշնամիս իւր, օգնականութիւ
կարքեդոնացոց խորհեցաւ գյաղողուԹիւն գործոյն հնա-
բաւորել, որք անդստին ահաւորք էին հզօր զօրուԹիւնն ։
Լ՝ե կարքեդոնացիք քանզի ցանկային բովանդակ ունել
զՄ՝իկիլիա, մտադիւրագոյն զպատերհուԹիւն իրին ընկա-

լան ։ Ալփտ եդին , ժամ սահմանեցին յարձակել Ա՛մ զօրուԹեամբ ի վերայ Հունաց , քնակելոցն ի Սիկիլիա և Իտալիա , մինչ ինքն Վասերքսէս անդր ի յոնաստան արշաւեսցէ ։

Օ՛ամն երիս կազմեցան ի պատերազմ ։ Ալփ համապ ցամաքային զօրաց կաբդեդոնացւոց՝ էին բիւրք ի բրև երեսուն , և տորմիղ երկուց հազարաց պատերազմիկ նաւաց , և նաւք փոքունք բեռնաբարՔ աւելի քան զերեք հազար ։ Ի՛յսու ամենակազմ ահեղ պատրաստուԹիւն չու արար ի կաբդեդոնէ Ի՛միլկար զօրավար անուանի ի ժամանակին . և ի Պանորմոն առ վայր մի հանգուցեալ զզօրականն , խաղաց ապա ի վերայ քաղաքին Հիմերայ , որ ոչ կարի հեռի է ի տեղւոջէ անտի , և պաշարեաց զայն ։ Վասերն իշխան քաղաքին խուճապեալ՝ ազդ արար Վեղղոսի որ Թագաւորեր ի Սիրակուսա ։ Ի՛ր փութայցաւ Վեղղոս եՀաս յիսուն հազարաւ հետեւակաց և հինգ հազար հեծելովը . որովք քաղաքացիքն խրախուսեալ , հզօրապէս մարտեան և պահեցին զքաղաքն ։

Վեղղոս այր բազմահմուտ իրաց պատերազմի՝ առաւել և աւ ձարտար էր ի խորամանկուԹիւն ։ Սուրհանդակս եր կու , որք ԹուղԹ ի քնակեալ Ալէլեոն քաղաքի ի Սիկիլիա տանէին առ Ի՛միլկար , կալան ածին առաջի նորա և էր զրեալ ի ԹղԹին այս . զի այրուձի զոր խնդրես՝ գայցի ի սահմանեալ աւուրն ։ Ի՛ր ընտրեաց Վեղղոս մեծ րոց անտի գնդաց հեծեալս և գնոսա արձակեաց ըստ ժամադիր պայմանին ։ Ի՛ր մնեալ նոցա ի բանակ անդր Թշնամեաց իբրև ի Ալէլեոեայ եկեալք՝ դիմեցին ի վերայ Ի՛միլկարայ և սպանին զնա , և գնաւս նորա Տրդիգ արարին ։ Ի՛նդին ժամմանակի և Վեղղոս Հարաւ ընդ կարքեդոնացիս . որք զառաջինն քաջուԹիւ դիմամարտեալ , ապա իբրև զգացին զմահ զօրավարին և զՏրկիւզուԹիւն հաւացին՝ լուծան լքան և ի փախուստ դարձան ։ Ի՛ր եղև կոտորած խիստ ի տեղւոջն , և անկան ի նոցանէ բիւրք աւելի քան զՏնգետասան ։ Ի՛ր ապրեալքն ի նոցանէ ամրացեալ յամայի ուրեք , և ոչ կարացեալ առ ի չգոյէ կարևորացն յերկարել անդ՝ անձնատուր եղեն ։ Ի՛ ժամմանակի մեծի Թերմոպիլեան պատերազմին , յորում երեքբիւրք սպարտացիքն արեամբ չափ Հակառակ կացին Վասերքսեայ ի յոնաստան , ի նմին աւուր եղև պատերազմն այս ։ Ի՛ւլ ինն ազգ զմահ Ի՛միլկարայ պատմէ Էրոդոտոս ։ Հաւանեաւ , ասէ , յաձախեաց ի Կարքեդոն՝ Թէ Ի՛միլկար ի սպառսպուռ ջաղխքանան զօրացն

ոչ ևս հանդուրժեալ կեալ անարգութիւնք, ընկէց զանձն ի ամբարձ-
փայտակոյտ անդր հրաբորբոք ուր զնարդազհան յա-
ձախեր առնել։

Իսկ կարեմ ասել զաղմուկ և զխռովութիւնն կարքեդո-
նացւոց, յոր խուճապ տագնապին և ցաւք և վշտութիւնք
արկին զնոսա՝ ի գոյժ խորտակելոյ ի սպառ զօրացն։
Լուաւեր նոցա որպէս ահա առ դուրս հասեալ Թշնամին։
Արանղի այսպէս բնաւորեալ կին՝ յարկածս վտանգաց
սլտաբեկ լինել զառաջինն։ Հրեշտակս փութով արձակ
կէին առ Վեղոն՝ ազերսել զնա ի հաշտութիւն, յանձն
առեալ զնմա։ Իսկ Վեղոն մարդասիրութիւնք ընկալաւ
զնոսա, և յաղթութիւնն մեծաւ ոչ խրոխտացեալ՝ առա-
ւել ևս հեզ և քաղցր առ Թշնամին ցուցաւ։ Ատա-
դիւրագոյն արար ընդ նոսա խաղաղութիւն, բայց միայն
առեալ ի նոցանէ երկու հազար տղայոց՝ ձծախս պա-
տերազմին. և մեհեանս կրկին հրամայեաց կառուցանել,
զի ի տեսիլ ամ ժողովրդեանն կացցէն անդ ի պահես-
սի Թուղթք դաշնացն պայծառիկ։ Եւ ինչ ծանր Թուեցաւ
կարքեդոնացւոց փոխանակել զայն ընդ խաղաղութեին՝
որում ոչ ակն ունէին, և էր նոցա կարևոր յոյժ։ Այս
որպէս ձախողակի սովորութիւն էր առ նոսա՝ արկածից
մարտին զզօրավարն առնել, զԱրիսգոն որ-
դի Միլկարայ փոխանակ Հօրն պատուհասեցին յաջորոյս.
և եկաց նա ի Աւելիսն քաղաք ի Սիկիլիա՝ մինչև ի մե-
ռանել։

Վեղոն իբրև դարձ արար ի Սիրակուսա՝ կոչեցեալ
զամ քաղաքացիսն գալ ժողովել զնուռք իւրեանց, յան-
դիմանն եղև նոցա անպէն միաչակ տալ զհամար գործոց
իւրոց։ Այս սակս յատենաբանել անդ խափաներ յա-
խտադէտ բարբառոյ ժողովրդեանն՝ որ զարմացեալ
կէին ընդ նա։ Օ՛ի ոչ որպէս զբռնաւոր ոք հարստահար
ազատութեէ աշխարհին ընկալաւ զնա ժողովուրդն, այլ
իբրև փրկիչ և բարերար. և աւետիքին իբրև ի միոջէ
բարբառոյ աղաղակեցին՝ կեցցէ արքայ Վեղոն, Այս չետ
ժամանակաց և երկուց եղբարց նորա չնորհեցին զպա-
տիւն զայն։

Վեգեստացիք կասկածեալին յոյժ ի վրէժիմդրութենէ Դիոդ. ժբ.
սիրակուսացւոց. քանզի ի մեծի պատերազմին՝ յորում 169-171. 179
186։
աթենացիք սաստկապես հարան յանդիման Սիրակու- 359 . 336
սայ, և Նիկիաս բազմութեէ նաւացն կորեաւ, և ինքեանք
գումարեալ կէին ընդ Թշնամիս նոցա։ Այս իբրև սեղմա-
ցիք ի Վեգեստա յարձակեցան՝ առաքեցին նոքա առ

կարբեդոնացիս խնդրել օգնութիւն, յանձն առեալ հնազանդել նոցա։ Յերկարախորհուրդ եղեն կարբեդոնացիք ի վերայ բանիս այսորիկ՝ վարանեալք։ Յանկայնի տիրել անձնատուր եղելոց քաղաքին, տակաւին և խիթալիս ի զօրութենէ սերակուսացոց, որոց յառաջ քան զսակաւ ինչ ժամանակս աճենացւոցն խորտակեալ էր, և ահարկու լեալ յաղթութեան։ Յետոյ ուրեմն աշխարհակալութեամբ տեսնել յորդորեալ՝ խոստացան վաղ հասանել յօգնութիւն նոցա։

Յայնմ եղև հոգ պատերազմին Վնհիքեաղ, որ էր յայնժամ Ոսփետ նախասպատիս յաշխարհին։ Սա թոռն էր Վիւկարայ՝ որ պարտեցաւն ի Վեղենկ, և սպանաւ առ դրունս Հիւերայ. և որդի Վհագոնի՝ որ աքսորեցաւ։ Ծոռ արար Վնհիքեաղ բազմախուռն զօրօք և նաւաց բազմութեամբ՝ վրէժխնդիր լինել ի վերայ տան իւրոյ և աշխարհին, և կարձել զնախատինս պարտութեան։ Եւ հասեալ ի ջրհորն կոչեցեալ Լիլիբեան, յորմէ յետոյ կռչեցաւ անուն քաղաքին՝ որ անդ կառուցեալ էր, նստաւ պաշարեաց զՎելինան։ Եւ ի վերայ նորա սաստկացաւ պատերազմն՝ արիաբար երկուստեք ձգտեալ, մինչև կալ նանց անգամ անդ արիանալ։ Վյա յերկար պատերազմաւ առնն զքաղաքն կարբեդոնացիք, և աւար հարին զայն՝ ոչ խնայեալ յայր և ի կին, ի ծեր և ի տղայ։ Եւ որ փախստեամբ ի նոցանէ ապրեցան՝ զնոսա միայն թողին ի քաղաքի անդ, զոր յապահանութեան դարձուցեալ էր, մնակել զերկիրն և տալ հարկս նոցա։ Վյս ամ էր երկերիւր քառասուն և երկրորդ՝ յետ չինելոյ քաղաքին։

Վյս պաշարեաց Վնհիքեաղ զՀիւերա և առ զայն պատերազմաւ. և ոչ ողորմեցաւ բնակչացն, և զքաղաքն կործանեաց յետ երկերիւր և քառասուն ամաց հիմնարկութեանն նորա։ Եւ զգերին, արս երիք հազար, անողորմ տանջանօք անարգամահ արար ի տեղւոջ անդ՝ ուր Վիլ կար սպանեալ էր ի հեծելոցն Վեղենկի, իբրև հաշտ առնել կամեցեալ և հանգուցանել անողորմ սպանդիւքն զՀոգի նորա։ Եւ դարձաւ Վնհիքեաղ ի Կարբեդոն, և ամ քաղաքն ընդ առաջ եղեալ՝ ընկալան զնա ձայնիւ ցնծութեամբ։

Վշաւել ևս ի յաջողութենէ աստի խրախուսեալ կարբեդոնացիք ի խորհուրդս նուաճելոյ ի սպառ զՎիկիլիա, յետ երից ամաց կացուցին անդրէն զօրավար զՎնհիքեաղ։ Եւ զի յաշխատութենէ պատերազմին հրաժարեր

նա վասն ծերութեն եւտուն նմա օգնական զԱմիկոն որդի Աղնանի՝ ի տանէ նորա։ Եւ կազմեալք մեծաւ առաքեցաւ տոքմիղ նաւացն՝ ի Ախիլիա. և էր բազմութեն զօրականն՝ երիտասան ըստ Տիմէի, և ըստ Լիփորսի՝ եօթն բեւռւն բիւր։ Ինտի և Թշնամիքն կազմեցան զդէմ ուղնել նմա։ Եւ առաքեցին սիրակուսացիք առ ազգս դաշնաւորս՝ զօր՝ ի նոցանէ խնդրել յօգնականութիւն, և առնամ քաղաքս Ախիլիոյ՝ խրախուսել զնոսա քաջութեամբ մարտնչել՝ ի վերայ աշխարհին։

Օ առաջին յարձակումն Թշնամեացն Ակրագանդ հանդերձեալ էր կրել, քաղաք բազմահարուստ և ամրապատրիսպ՝ կառուցեալ իբրև զԱթենսն՝ ի ծովեզր Ախիլիոյ հանդէպ ափրիկեացոց աշխարհին։ Օ քաղաքն զայն պաշարեաց նախ Ինքիզաղ. և զինեալ զայն շուրջանակի, ուստի հնար էր՝ ի ներքս անկանել՝ անդր զամենայն զօրսն իբրև ժողովեաց. և ամբարձ հողաբլուրս՝ ի բարձրութիւն պարապացն յաւելեալ շիրմոյ՝ զորս ետ կորձանել շուրջ զքաղաքաւն։ Յակ յետ աւուրց սակաւ ժամուն՝ ի զօրսն հարաւ, և մեռան անթիւ բազմութիւն՝ ի զօրացն, և ինքն իսկ զօրավարն։ Օ այն արկածս կարքեդոնացիք՝ ի ցասմանէ դիցն վարկուցեալ՝ ի վրէժ Թշնամանացն առ մեռեալս, քանզի և զատուերս նոցա Թուէին քաղումք տեսանել զիշերի, ոչ ևս ձեռն արկին՝ ի գերեզմանսն. և կամեալ յաղթեն՝ ըստ անողորմ և ամպարիշտ կրօնիցն իւրեանց զոհեցին մանուկ մի տղայ Լաւռնոսի, և այլս բազում ծովահեղոյզ արարին՝ ի պաշտօն Պոսիդոնի։

Յակ որ՝ ի ներքս՝ ի քաղաքի անդ էին՝ զօրացեալ առ վայր մի ընդդէմ Թշնամեաց, ապա առ սովոյն վտանգն վհատեցան, և խորհուրդ կալան մերկել անտի՝ ի գիշերին յայնմիկ։ Ա լոյս մեծ էր նոցա Թողուլ զտուն և զտեղի, զինչս և զաշխարհ. այլ յանկուճիւն կենաց առաւել քան զայր զօրանայր՝ ի նոսա։ Եւ Թող զայս. էր անդ տեսանել ողորմ տեսարան զկուռլթս կանանց՝ զի երեքհարիւր տանէն զաղաջերի մանկտին ապրեցուցանել զնոսա յանգթութենէ յաղթականին. և այն անհնարին աղէտ տարակուսի՝ Թողուլ անդ չէերս և զՀիւսդս որ ոչ կարէին փախչել կամ դիմամարտել։ Հասին նոքա ամբացան՝ ի քաղաք մի ժամուտը, որում անուն էր Վէզա, և անդ առ սակաւ ինչ լսան ներել աղէտին հանդեան։

Յայն վայր գիւրամուտ եղեալ՝ ի քաղաքն Ախիլիոն,

ԱՄԱՀՇ Հրամայեաց սրակոս առնել զամենեսեան՝ որ ունացեալ էին անդ։ Այլ ոչ գոյր չափ աւարին զոր բարձին անտի կառքեդմացիք. քանզի եր Ալգրագանդ մի ի բազմադանդ քաղաքաց Ասիկիլիոյ, յորում էին բնակիչք բիւրք քանս, և ոչ երբէք ի պաշարման եղեալ եր կամ յաւարի քաղաքն այն։ Այլ անդ պատկերք նկարագործք բազում յոյժ, և մանրիք և անդրիք չքնաղք և ցանկալիք բնակչացն, անդ և հնչակաւոր ցուրն պղնձի փաղարեան, զորս առհասարակ տարան ի կարքեդոն։ Այլ տեսեալ պաշտօնեայն քաղաքին ամիաս ուրն։ Ասիկիոն հանգոյց զգօրս իւր անդ ի ձմերոցս. և խարխարեալ զպարիսպս քաղաքին՝ եւ ապա անտի ի մուտս գարնանոյն, և պաշարեաց զՎեղա, և էառ զայն պատերազմաւ. քանզի ոչ ինչ օգնեցին նմա զօրքն յօգնութիւն հասեալ անդր ի բռնաւորն Վիտելիոսէ՝ որ բռնանայր ի Սիրակուսա։ Այլ դադարեցոյց Ասիկիոն զպատերազմն, դաշինս հաստատեալ ընդ Վիտելիոսեայ՝ զի կարքեդոնացիք ի վերայ աւազին աշխարհակալութեն ի Սիկիլիա՝ կացցին և զերկիրն սիկացւոց[1], և զԱելիոսն և զԱլգրագանդ և զՀերմերա և զՎեղա և զԱամպրիսէ. և ի քաղաքս անպատրիսպս կեցցեն բնակիչք նոցա, և հարկեսցեն կարքեդոնացւոց, զի լեռնատացիք և մեսսանացիք և այլ ամք ազգք Սիկիլիոյ կացցեն յօրէնս իւրեանց և յիշքնիշխան ազատութենէ, և սրբակուսացիք ընդ ձեռամբ Վիտելիոսի։ Ո դաշինս զայսոսիկ հաստատեալ՝ դարձաւ ապա Ասիլիոն ի կարքեդոն. ուր սրածուէն ախտ անդրէն չարաչար կեալ ամբոխ բազում ի քաղաքացւոց անտի մեռանի։

Դիոդ. ժԳ. 188-278։ Յան 600. 412

Ել յայլ ինչ պատճառէ արար Վիտելիոս հաշտուել ընդ կարքեդոնացիս՝ բայց զի ժամ առեալ հաստատեսցի յիւրականութենէ իւր, և կազմեսցի ի պատերազմ՝ զոր խորհէր ածել ի վերայ նոցա։ Վասնզի գիտեր զհզօրս գօրութենէ նոցա, և ամ կազմութեք պատրաստեր յաղթել նոցա։ Այլ քաջ յաջողեցաւ ի խորհրդս իւր նաև խանձարուրութեք ժողովրդականն։ Վասնզի ի համբաւ նոր բա, և ի ցանկութենէն ընտելանալոյ նմա, ակնկալութեք շահու, և վարձիւք զոր ձարտարացն խոստանայր, խուռն յամ կողմանց ընթացան անդր ի Սիկիլիա՝ որ ի ժամանակին յայնմիկ ընդ ամ ազգս էին հմուտք արուեստից։ Սիրակուսա ողջոյն եղև գործարան մի, և համայն արուեստաւորք ի նմա զբաղեալք ի գործել սուսերս և

1 Ոմ էին երբեմն ծովեզերք ամն ի ընդ սիկիացւոցն։

սաղաւարտ և զրահս և մեքենայս պատերազմի, և զա-
մենայն կազմածս և զսպառազինութիւն նաւուց։ Լաւ հինգ
կարգ թիակաւոր անդ յայնժամ հնարէցաւ. քանզի յա-
ռաջագոյն երեքկարգեան թիովք էին պատերազմիկքն
նաւք։ Իսկ ի Վիտեսիոս առ ընձեռ կացեալ յորդ-
որեր զվաստակաւորս պարգևօք և գովութիւք ըստ իւ-
րաքանչիւր քաջութեանէ. և մանաւանդ ամէնք քաղցրու-
որ քան զնմանէ ինչ առաւել սրէ գՀանճար և զխոյն Ձար-
ատաց. և սեղանակից եւս առնէր ընդ իւր երբեմն ըզ-
Ձարտարս արուեստից։

Իբրև ետ ինչ կազմ էր և պատրաստ, և ատեն և
անտի հասեալ զօրացն ի մի վայր Ժողովեցան, կոչեաց
Վիտեսիոս զսիրակաւսացիս և յայտնեաց նոցա զնորս-
հուրդս իւր, զի կարքեդոնացիք ահա ոսոխք են մեզ, և
խորհին բռնանալ ունել զԱիկիլիա, և զնմանէ քաղաքս
Հունաց նուաճել. և եթէ ոչ զառաջս նոցա կալցուք՝
հասցեն ընդ հուպ այսր ի Սիրակուսա. զի զոր ցարդ
յապաղեն՝ կոտորած ժանտախտին դանդաղեցոյց զնոսա.
պարտ է մեզ զպատեհս զայս յօգուտ արկանել։ Ա-
պէտ և ատելի էին սիրակուսացւոց և բռնաւորն և բըռ-
նութիւն, այլ զօրացաւ ի նոսա ատելութիւն ընդդէմ կար-
քեդոնացւոց, և առ սէր քաղաքավարութիւնէ քան յիրա-
նանց արդարութենէ՝ ծափս Տարին ամենեքին գովելով
զբանս նորա։ Լաւ բռնաւորն զուր տարապարտուց ա-
ռանց հրատարակելոյ զիտորհուրդ պատերազմին՝ մատ-
նեաց յաւար և ի մոլեգնութիւն նոցա զինչս և զանձինս
կարքեդոնացւոց, որք ի դաշինսն յուսացեալ՝ անդ ի
Սիրակուսա վաճառաշահ լինէին։ Լաւ ահա դիմեալ ի
առնս նոցա՝ ուաք առին զնմանէ ինչս նոցա, արդարութիւն
համարեալ պատուհասել զնոսա ի վրէժ անգթութենէ զոր
նոքա արարին ընդ բնակիչս երկրին, և ամենեքին ի նոյն
խորհուրդ նենգութիւն և խժդժութիւն միաբանեցին սիկի-
լացիք. և համարձակ պատերազմին յայտնեցաւ ընդդէմ
կարքեդոնացւոց։ Իսկ Վիտեսիոս ի չքմեղս եղեալ՝
հրեշտակս առաք ի կարքեդոն ազատ առնել զնմանէ քա-
ղաքս Սիկիլիոյ, սպառնացեալ ի վերայ նոցա պատե-
րազմ։ Այնչ դեռ կարքեդոնացիք յայն աղեամն կային՝
երկիւղ մեծ գոյժս այս արկ ի նոսա։

Այսպէս զՎոլտիա պաշարեցին Հռոմք՝ զբաղաք զհնուց
կարքեդոնացւոց ի Սիկիլիա, այնպիսի ձեռնտ՝ զի Վոլ-
կոն զօրաւոր նաւատորմիղն Թշնամեաց ոչ կարաց հասա-
նել յօգնութիւն։ Հառաջ մատուցին զմենեքեանս, Տարին

զբաղաքն մանգլիճօք, և ի սարիսպս անգր զվեցկոմ գեան աշտարակն մերձեցուցեալ զանուանէնն՝ որ ի բարձրութէն տանց հասանէին, անշնարին խուճապ տա- գնապի ի վերայ պաշարելոցն հասուցանէին անտի բաղըս տրօքն նորաշնաւ մինչեւցուիւք՝ նետս և քարինս ի վերայ թշնամեացն ասստուածք տեղացեալ. Ջերկարեաց գործ պատերազմին՝ պաշարելոցն հզօր դիմամարտութիք. և ապա առին զքաղաքն, և զամ բնակիչս նորա սրով կո- տրեցին, բայց միայն յապաստանելոցն ի մեհեանս։ Վխմնեսիոս Թողեալ զաւարն զօրականին, և նստուցեալ անդ զօր բազում պահակապանս, և վերակացու քաղա- քին զայր հաւատարիմ, դարձաւ ի Վիրակաւսա։

Դնդ. ԺՀ. 279. 295։ Յով. ԺԹ. 2. 3։

Ի դառնալ ամին Իմիլկն, Վոփետ ի կարգեդնաց- ացն կարգեալ, եկն անդրէն ի Միկիլիա ստուարագոյն բանակաւ. եհաս ի Պանորմոն, և զՎոլտիա կալաւ վերստին պատերազմաւ, և այլ ևս բազում քաղաքս. և յաջողութէն զօրացեալ՝ խաղացոյց ընդ ցամաք զզօրս իւր պաշարել զՎիրակաւսա, և տօրմիղ նաւացն գծովա- փամբքն երթայր, և առաջնորդ նոցա Վադոն։ Ի տե- սիլ Իմիլկնի զարհուրեցաւ քաղաքն։ Կալաք առաւել քան զերկերիւր, լցեալ աղեղնաւեալ աւարաւ Թշնա- մեաց, գեղեցիկ կարգօք յաղթանակաւ մնին ի նաւա- հանդիսին մեծ. և զՀետ նոցա այլ ևս հինգ հարիւր նա- ւակք։ Եհաս ի նմին պահու և բանակն, երեսուն բիւր հետեւակաց և երեք հազար հեծելոց՝ որպէս հաւաստէն ոմանք։ Ի մեհենին Վրամադրաց անդ եհար Իմիլկն զհօրան իւր, և բանակեցոյց զզօրս իւր հեռի ի քաղա- քէն երկոտասան ասպարիզաւ։ Վյս մատուցեալ յասպա- րէզ կարգայր զԹշնամին. նոքա զդուշացեալք հրաժա- րեցին ի պատերազմէն. և զայն Իմիլկն շատ համարեալ զի խոստովան եղեն զտկարութիւն իւրեանց առաջի զօրու- թեան նորա՝ դարձաւ ի բանակն. յուսացեալ վաղ ընդ փոյթ տիրել քաղաքին՝ իբրև անփախուստ ի ձեռն ու- նելով զօրն։ Իպահանեաց զերկիրն մամ՝ շուրջանակի զաւուրս երեսուն, և յաւեր դարձոյց զաշխարհն, կա- լաւ զարձակավայրս Վկրագնոյ, և կատարեաց զմեհենս Վեմեարի և Պերսեփոնէայ։ Վյս ի պետս ամրութեան բանակին աւերեաց զգերեզմանս շուրջ զքաղաքաւն, յորս եէին և շիրիմք հոյակապք Վեղեմի և կնոջ նորա Վեմարետայ։

ԵՒս յոյժ յերկարեցին յաջողութիքս այս՝ հուպ ընդ հուպ ընդունայնացուցեալ զնախակալ յաղթանակին

փառս . առ՝ ի խրատ մարդկան , ասել վիպագիրն , զի որ խրոխտանայր՝ վաղ կամ անագան՝ ի միտ առցէ զանձրուէթի իւր՝ ի հղօրագունէն : Ինչ գեռ Խմելին որպէս տիրեալ քաղաքաց Ակիլիլոյ՝ խորհէր նուաճմամբ Ասբակուայ՝ ի գլուխ տանել զյաղթութիւն , Ճարակեցաւ ախտ ժանտ՝ ի բանակին, և արար կոտորած խիստ . քանզի ամառն էր , և տօթ սաստիկ՝ ի տաւուծն յայնմիկ : Այսպ տիրիկեցիքն վարակեալ՝ մեռան առիւծս բազում առանց բժշկութեան : Որոց զդեհակունն՝ ի սկզբան անդ թաղէին , ապա՝ ի յաձախել մեռելոցն օր ըստ օրէ , և՝ ի մոլել ախտին՝ ձնացին դեհակունք անթաղ , և չքեռալք ախտիւն՝ անխնամ : Իր ընդ ախտին այնմիկ խառն և ախտ Թանչակալ , և տենդ ուժգին , գելումն աղեաց , կսկիծք ամ անդադար մարմնոյ , զառանցութիւն մտաց , և կատաղութիւն՝ մինչև կեղեքել զամ որ՝ ի ձեռս նոցա անկանէր :

Օ այն յաջողութի գտեալ Ալխինեսիս՝ դիմեաց՝ ի վերայ Թշնամեաց , որք վաղագոյն ախտիւն պարտեալք՝ ոչ զօրէին զդէմ ունել : Նաւացն բազմութենէ կէաք՝ ի գերութի վարեալ , և կէաք հրձիգ եղեն , և ոչ մի՝ ի նոցանէ գրեթէ ապրեցաւ . Հնակիչք Ախրակուայ ծերք և կանայք և տղայք խուռն արտաքս դիմեալ՝ իբր հրաշունչ լինէին : Գեռս՝ ի յերկինս ամբարձեալ զդիմի գոհանալոյն զինամակալաց քաղաքին՝ վասն լուծի խնդրելոյ սրբոց մեհենացս և պղծութենէ չերմանց՝ ի բարբարոսաց անտի : Նա՝ ի հասանել գիշերոյն դարձան ամենեքեան յիւրաքանչիւր տեղի : Օ այն ժամ պատճհ առեալ Խմել կոն առաքեաց խնդրեաց՝ ի Վիտեսեայ՝ զդունդն սակաւ առնել , որ ապրեցան՝ ի հարուածոց , ներել նմա ածել ընդ իւր՝ ի Վաբքեդոն , և որ ինչ արծաթ՝ ի ձեռին ինա՝ ցեալ էր՝ զնոյն ետ նմա վերեբարիւր տաղանդս : Նա՝ ետ հրաման ետ նմա վասն կաբքեդոնացւոցն միայն՝ և գիշեր բագնաց ընդ նոսա փախստեայ լինէր , Թողեալ զայլազգի զօրականն՝ ի ձեռս Թշնամեաց :

Նախպէս մեհենեցաւ՝ ի Ախրակուսայ զօրագլուխն կարքեդոնացի որ յանդուգն խիզախէր , գառն ողալով զաղէտս չարեաց իւրոց և զանխարհին . և առ վշտին ցաւ մմբէ մեծաւ զդիմն Թշնամաներ՝ Թէ՝ ի նոցանէ հասին արկածքն այն : Նէ կարէ , ասէ , պարծել Թշնամին՝ Թէ՝ պէտև միխեթարի՝ ի վերայ չարեաց մերոց . քանզի զնա կաբքեդոնացիք պարտեցին , այլ զկաբքեդոնացիսն մահ , Չաւ է ինձ և խոց կարելիէր՝ զի տեսանեմ զարև յետ

քաջացն պատերազմողաց, որ զԼին ի ձեռին անկան ի պատերազմի. այլ ցուցից ընդ հուպ զի ոչ զիս երկիւղ մահուն ապրեցոյց, այլ զի զմնացուածն հիգ և տառապեալ լինցին ի հայրենիսն տարեալ հասուցից։ Վասնզի ընդ ժամանել ի Կարքեդոն իբրև յանապատ անմարդի՝ եմուտ ի տուն իւր, և զամենեսեան արտաքս հանեալ և զդրկս իւր, և զդրուճան աղխեալ՝ չոքաւ զիւրումն. ա բիւումիթ՝ որ յաչս հեթանոսաց կարծեցեալ զարմանալի, այլ ինքն յոտահատումէ գործ էր։

Օ այնու ժամանակաւ Թշուառումիթք ի ԹշուառուԹենէ հասին կարքեդոնացւոց։ Վասնզի ափրիկէցիք, որ միշտ ոխումիթ էին ընդ նոսա, առաւել ևս յայնժամ զրգռեալք զի զգաւառակիցս իւրեանց Թողին նոքա ի Միհակուսա ի սուր Թշնամեաց՝ միաբանեցին ի զէն ընԹացան որպէս ցնորեալք, և նուաճեալ վաղվաղակի զՀունսն՝ անտի դիմեցին բազմութիւն արանց աւելի քան երկերիւր հազարաց ի Կարքեդոն. և էր կորուստ քաղաքին մեծ առ դուրս հասեալ։ Օ որ կարքեդոնացիք ի ցասմանէ դիմի վարկուցեալ՝ որք մինչ ի քաղաք անդր ի բունն նոցա հալածէին գնոսա, խորհեցան ըստ նա նրահատատ իւրեանց բարոյիցն՝ նախ քան զնոսայ հաշտ առնել գնոսա յադէտս հասարակաց վտանգին։ Եւ կան գնեցին անդրիմ մեծամեծս Վեսիոսրի և Պերսեփոնեայ, որ ցայնկայր անձանօԹ էին յաշխարհին, փոխանակ Թըշնամանացն՝ զի կողոպտեցին զնեհեանս նոցա։ Եւ կացուցին քուրմն նոցա ի մեծամեծաց քաղաքին, և զնոսա և պատարագս ըստ հելլէն կրօնիդ մատուցին, զնոմ գուն գործեալ անցուցանել զցասումն նոցա։ Եւ ապա խորհուրդ կալան պահ ունել քաղաքին։ Բայ բազդին և զնալ կարքեդոնացւոց՝ ստուար բանակին Թշնամեաց, օրինակ իմն անկենդան մարմնոյ, ոչ էր զօրագլուխ, ոչ համբարձ նոցա և ոչ մեքենայք պատերազմի, ոչ կրԹուԹիւն և ոչ հնարՔ. այլ այր իւրաքանչիւր հրամանատու և ինքնիշխան։ Մինչև պատահումն ի մէջ նոցա եղեալ, և տալ ի վերայ նոցա օր ըստ օրէ սատակացեալ զաձան չիւրաքանչիւր տեղիս, և ի մեծալուտ ահեղ վտանգէն վերծաւ Կարքեդոն։

Կարքեդոնացիք, և ոչ ի միոջէ ինչ երկիւղէ վհատեցան՝ ձեռնԹափ լինել ի հնարիցն ընդդէմ Սիկիլիոյ։ Վասն զօրաւոր նոցա, մի յերկուց Սոփետաց, նախնի եղև մեծաւ պատերազմաւ և սպանաւ։ Վերհատոցը քաջ զաբին խորհեցան ի հաշտուԹիՔ. այլ Թշնամիք խնդրելին

մեկնել նոցա յամ՝ քաղաքաց Աեկելոյ, և տուժել զնոսա ծախս պատերազմին։ Զորքս որպէս ընկալեալ զայսմանս խաղաղութեան, խնդրեցին դադարումն առնել զնուագ մինչև հրաման ի Պարքեդոնէ ընկալցին։ ԵՒ պարագ առեալ զօրաժողով եղեն, և մարզեցին զնոսա ի պատերազմ։ և զօրագլուխս եկայ նոցա Աադոն որդի Աադմէ սպանելոյն, պատանի քաջ անուամբ և վաստակաւոր, Աը ի կատարումն ժամանակաւ աւուրցն հասեալ ի Աեկելոս, էս պատերազմ ընդ Պիտնեսիոսի, յորում եկ անոս ոմն ի զօրավարաց բռնաւորին անկաւ՝ սիրակուսացւոցմէ հանդերձ արամբք աւելի քան չորեքտասան հազարաւ։ ԵՒ յաղթող եղեալ՝ իշխանաբար արար հաշտութեան, պահեալ կարքեդոնացւոց զաշխարհակալութեան նոցա ի Աեկելիա՝ յաւելուածով հանդերձ, և զծախս պատերազմին էառ հազար տաղանդ։

Ո այսու ժամանակաւ կարքեդոնացւոց ուրուանն Նամա- Յ---ք. Ք.
կագիր եղեալ առ Պիտնեսիոս յունաստէն՝ մատնել նմա զքո զօրականին, արգելաւ վճռով աւագանւոյն մի և ումեք ի կարքեդոնացւոց ուսանել հելլէն բարբառ կամ դպրութիւն, զի մի և նա կարասցեն բանադնաց լինել առ նմանս։

Ի ժամանակին յայնմիկ արկածք այլ՝ սրածութեամբ պատ- Դիոդ. ԺԶ.
կառեալ զկարքեդոն, և արար կոտորած մեծ։ Ի քրտաւիրք 344։
յանկարծահաս և մոլեգնութեամբ ի վերայ անկեալ վարաւ կէտոց պատուն, էլանէին խուճապաւ ի տանէ սուր ի ձեռին՝ որպէս այն թէ թշնամիք տիրեն քաղաքին, և հարկանէին և սպանանէին՝ որ որ ընդ առաջ լինէր նոցա։ Ո այն ժամ պատուհ համարեցան ափըիկեցիք և սարդինեացիք ի թօթափել զլուծն՝ զոր բռնի կրէին. այլ ոչ որպէս կարծէին՝ պատերազմին վճարեցաւ, քանզի նկուն եղեն։ Ո նոյն և Պիտնեսիոս ի ժամանակին յայնմիկ խորհեցաւ ի Աեկելիա, այլ և ոչ նմա յաջողեաց։ ԵՒ ի վերայ այնորիկ ոչ յերկարակեաց եղեալ մեռաւ, և զնա պատգամատուց որդի նորա համանուն հօրն։

Ո առաջին դաշինս որ ընդ Հռովմայեցիսն և ընդ կարթ- Պոլիբ. ա.
քեդոնացիս կռեցան՝ կանխեցի ասել։ Յերկորդ անգամ 178։
դաշնադրութեանն նոցա զոր Ադրոսիս ի չորեքպարսիւորդի երկորդի ամի չկնութեանն Հռովմայ ասէ Լեալ, հանդերձ զի ժամանակիս այսմիկ։ ԵՒ ի սմա նոյն գրեմք պայմանսն էին, բայց միայն զի յառաջնումն ընդ կարքեդոնացիս և տիբացիք և ուտիկեցիք յանուանէ յիշատակեին։

ԱՄԱՀԱՐԿ ԴԻՒՐ. ԺԲ. 459-472. ՊԱՏՄ. Ի ՏԻՐ. 3656 . 490

Օ՜հի՛ Վիմնեսեայ երիցու մեռանելոյ՝ խռովուեցիք մեծամեծք եղէն ի Սիրակաւսա՝ կրսերն Վիմնեսիոս, որ աքսորեալն էր ի քաղաքէ անտի, եկն եհաս պատերազմաւ ի ներքս և բռնակալեաց զքաղաքն, և արար անգթութիւն բազում ընդ բնակիչս. յորոց կէսք օգնութիւն ի բռնաւորէն լհռնատացոց խնդրեցին զի էր նա բնիկ սիրակաւսացի։ Ինքդեռ նորա զայնու աղմկաւն եկեալ խորհեցան կարգեդռնայիք տիրել Սիսիլոյ, և տոքմիզ յաւ գնախումբ նաւաց անդր խաղացուցին Հայն ազգաս տիրակաւսի՝ զգօնք ի սիրակաւսացւոց օգնուի խնդրելոյն ի կորնթացւոց, որոց ինքեանք զօրավիգն բազում անգամ լեալ էին ի պատերազմի, և զի քան զայր ազգս Հայնոց նոքա առաւել ասիք էին բռնաւորութեամբ և ախոյեանք ազատութեան։ Նոքա զօր ի ձեռն գումարեալ Տիմոլէոնի առն մեծի և վաստակաւորի, որ նախանձու բարեաց աշխարհին ազատեցոյց զՀայրենին ի լծոյ բռնութեանն զայնմանէ առեալ զիւաս ազգատոհմին, յուզարկեցին գնա ի Կորնթոս նաւուք տասամբ. որ հասեալ ի Հռեգիոն՝ ձաթատար Հնարիւք ցրեաց զնորհռոմս կարգեդռնացւոց, որոց զգացեալ զբռ նոքա՝ խորհէին խափանել զանց նորա ի Սիսիլիա։

Տիմոլէոն սակաւաձեռն գնդաւ՝ արամբք որպէս թէ հազարաւ, գնայր անվեհեր ի Թիկունս սիրակաւսացւոց. այլ զօրք նորա երեթալով երեՅային և ստուարանային զՀանդարձին։ Սիրակաւսացիք ի յետին վտանգ հասեալ՝ վհատեալ էին յիւրմէ յուսոյ փրկութեանէ. զի կարգեդռնացիք գնաւաՀանպատն կալան, Խնկատաս զքաղաքն, և զամբոյն Վիմնեսիոս։ Այլ դէպք ի բարի յաջողեցին նոցա՝ Հասանել անդր Տիմոլէոնի։ Վանգի Վիմնեսիոս եթող ի նա և զամբոյն և զզօրս և զպէն և զպատշար, զի ոչ գոյր նմա ուսուեք յոյս օգնականութեան, և ապրեցոյց զանձն ի ձեռն նորա ի Կորնթոս։ Խանաքնաց եղև Տիմոլէոն ընդ այլազգի զօրականին, որ մեծաւ մասամբ Հայք էին, և յորում էր ամ զօրուն բանակին Մագոն՝ որպէս զայս ի թերութիւնս կարգեդռնացւոց յուշ արարի, զի ոչ ի դէպ է Հայնոյ մանել զՍիսիլիա ի ձեռս բարբարոսաց, որք ապա անցցեն անտի ի յունաստան. զի զնդրդ Հնար է յերկրի Հեռաւ տանէ գալ նոցա՝ զի զՍկետաս միայն կացուսցեն բռնաւոր ի Սիրակուսա։ Իբրև զայսոյս այս յաՀախեաց ի բանակին, երկուցեալ անտի Մագոն՝ խորհէր ի բաց մեկնել ի զօրացն, Թէ գուցէ նենգ ինչ կրեսցէ ի նոցանէ։

Այլ հրամանն ետ նահապետին ելանել ի նահատանգատէն, առագաստաւոր ի Կարքեդոն։ Այլ իբրև մեկնեցաւ նա անտի, Ակեստաս անդ միայնակ մնացեալ՝ ոչ կարաց կալ առաջի կորնթացւոց, և կալան նոքա զքաղաքն։

Ադամ իբրև եհաս ի Կարքեդոն՝ կոչեցաւ ի դատաստան. այլ կանխեցոյց նա զպատուհաս իւր երթեալ զիւրոքինն։ Զորոյ զդիակն հանին ի կախաղան ի տեսիլ ամենեցուն։ Օրաժողով եղեն զարձեալ կարքեդոնացիք, և խաղացուցին ի Սիկիլիա բազմութեամբ նահատանգաւ՝ առաւել քան զառաջինն. և ի վերայ այնոցիկ վարքայս երեքարիւր. և թիւ հասարոյ զօրաց նոցա էր աւելի քան զեօթանասուն բիւրս։ Որոց հասեալ ի Լիլիբէոն, առաջորդեալ Լ՝Սիլկարայ և Լ՝Ֆնիբաղայ, փութային բազխել ընդ կորնթացիս։ Եւ սպասեաց նոցա Տիմոկեոն, այլ ինքն կանխեաց ընդ առաջ նոցա։ Ասայց սիրակուացիք այնպէս լուծեալ էին և լքեալ զի յամ զօրաց, որ էին անդ, երեք հազար միայն եկին ընդ նորա բնակեալն, և յորեք հազար այլազգիք, յորոց և հազար ի հետուաձով փախստեայք գնացին առ ածխագործսն։ Այլ և յայսմ ամենայնի ոչ վհատեցաւ Տիմոկեոն, այլ զինուցեալս ի զօրացն խրախուսեր՝ քաջութիւն պատերազմել ի վերայ փրկութեան և ազատութեան հիզակակից բարեկամացն. և Հակատեցոյց զնոսա ընդդէմ Թշնամեացն առ վտակաւն Կրիմեսու, քանզի անդ բանակեալ էին։ Յանդգնութիւն Թուէր ելանել ընդդէմ բազմամբոխ բանակի յորիւք կամ, Թէ աւելի, հինգ հազարաւ հետևաց կայ և հազար հեծելովք. բայց Տիմոկեոն խորհեցաւ ի մոլ իւրում զի քաջութիւն և խիստութիւն յաղթանակէ ի վերայ բազմութեան, և յոտացաւ ի զօրս իւր՝ որոց զդիս իւրեանց եդեալ էր պատերազմել մինչև ցմահ, և մի նահանջել. որք ստիպեալ մեծաւ խնդրելն ի նմանէ վաղ հասանել առ թշնամիսն Ետ ամ ակնկալութիւն Տիմոկեոնի՝ նոյնպէս և պատերազմին վճարեցաւ։ Հաւան ի դիմի, խորտակեցան կարքեդոնացիք. և անկան ի նոցա նէ աւելի քան զրեւր մի, երեք հազարք ի նոցանէ՝ բնակ կարքեդոնացիք. և նոտաւ քաղաքն նոցա ի սուգ մեծ և ի վհատութիւն։ Այլ յանկածէ պատերազմին եղեն թշնամեաց փութամ մեծութիւք և գերի բազում։

Ընդ աւետաւորս յաղթութեան առաքեաց Տիմոկեոն ի Կորնթոս զէնս գեղեցիկս յաւարէ պատերազմին։ Վասնզի ցանկայր զԿորնթոս մեծ և ի վեր առնել առաւել քան զամ քաղաքս յունաստանեայ և ի փառս ամ

երկրի, մեծաշուք զմեհեանսն յօրինեալ՝ ոչ աւարօք բնիկ աշխարհին՝ որ համազգեաց արեամբն շաղախեալ են տիւր ի տեսիլ, այլ յաւարէ բարբարոսաց՝ որ զաւազ ըողոքն զբաջութիւն և զկրօնասիրութիւն գեղեցիկ արձաքանագրութիւնքն ի գէմս ածէին։ Յորս էր և այս արձանագիր. ԿՈՐՆԵԱՑԻՒԸ ԶՕՐԱՎԱՐԱԻՆ ՏԻՄՈԼԵԱՒ ԱԶԱՏԵՑՈՒԹԵԱՒ, Ի ԼՕՈՑ ԿԱՐԳԵՑՈՂԱՑԻՈՑ ԶՑՈՒՑՆՍ ՌՆԱ ԿԵԱՒՍ Ի ՍԻԿՈՒԼԻԱ. ԱՍՏ Ի ՄԵՀԵՆԻՒ ԶԶԷՆՍ ԶԱՑՈՒ ՍԻՒ ԿԱԽԵՑԻՆ Ի ԳՈՀՈՒԹԻՒՆ ԶԴՐՁՆ ԱՆՄԱՀԻՑ։

Տիմոլէոն Թողեալ յերկիրը Թէմաւեաց զայլազգի գունդս յաւար և ի կողոպուտ, ինքն գարձաւ ի Սիրակաւսա. և զՀայաբ զօրականսն գասալիքս աքսորեաց ի Սիկիլիոյ, ժամագրումբ ի վերայ նոցա սահմանեալ նախ քան ըզմտանել արևւու մեկնել ի Սիրակուսայ։ Կա և քաղաքս բազումս յաղթութիւն կալսն կորնթացիք, մինչև խոնարհել կարեգտասցուց խնդրել հաշտութիւն։ Ուանդր սոքա զոր օրինակ ժամանակեայ յաջողութիւնքն իրթիսու սեին ի մեծամեծ Ձգունս և ի գումարել զօրս ընդ ծով և ընդ ցամաք, և զեղծանէին յաղթութիւնքն ի խեռութիւն և յանպատրաստ, այսպէս և յարկածս վտանգաց լքեալ վհատեին. մինչև խնդրել վատութիւնքն հնարս ի տակաւ թշնամւոյն, և յանձն առնուլ պայմանս խիստս և անարգս։ Որպէս և աստ ահա ի պայմանս խաղաղութիւն յանձն առին՝ մի անգր քան զՂլևկոն։ գետ աշխարհս կալել, և զի ազատ իցեն բնակիչք երկրին նոցա տամբք իւրեանց և ամ մեծութիւք երթալ բնակել ի Սիրակուսա, և զի մի ընդ բռնաւորս դաշնակից և համախոհ լիս նիցին։

Յոյսն.եան. Օ այսու ժամանակաւ երևի լեալ՝ զոր Յուստինոս վկայագրէ, զի Կինոն ի զօրաւորաց կարգեդմնի խոր հեցաւ կորուսանել զամ աւագանին, և միահեծան ուհնել զսպատութիւնն։ Եւ յարեաց խորհրդոյն օր սահմանեաց զհարսանիս դստերն իւրոյ՝ յոր հրաւիրել հանդեձեալ էր զամ աւագանին, և անդ դեղ մահու արբեցանել նոցա։ Յայտնեցաւ գաւաճանութիւն, այլ զհզօր եղեռնատուրն վտանգ էր պատուհասել։ Խարւոք Թուեցաւ աւագանւոյն զառաջս միայն չարեացն առնուլ, և հրաւարտակ արար մի ուիք շռայլել ի ծախս հարսանեացս, այլ չափով զպետսն վճարել։ Յորմէ խորամանկ

1 Ոչ ինչ խոչ հեռի էր գնա Պլուտարքոս Լիւնն անուանէն, իսկ այս Ալեքսանդրացւոյ. զոր Գիոդորոս Բոսի. վերոյհաս։

կութիւն այնուիկ ոչ յայլոցանէ Կիմոնի, բռնութիւն ասպա ԱՄ ԱՀ:ՀԿ
խորհեցաւ առնել զայն՝ զինուորեալ ընդ իւր զդերիս ։
Այլ և ոչ խորհուրդն այն ծանկեցաւ յաւագանւոյն .
և Հարկ եղև Կիմոնի քան Հազար սպառազէն գերւոմն
զերծանել՝ի բերդ մի ամուր , և քանացաւ միաբանել
ընդ իւր զաւիրիկեցիս և զարքայն մաւրիտանացւոց , այլ
ոչ կարաց . և Լուծն ըմբռնեալ ածաւ՝ի Կարքեդոն։ Կնդ
բրածէծ արարեալ գնա , խլեցին զաչս նորա և խորտա-
կեցին զգաղուկսն և զգարձս , և սպանեալ գնա՝ի տեսիլ
ամբոխին զկեղեքեալ՝ի Հարուածոց մարմին նորա կախե-
ցին զփայտէ ։ Որդիք նորա Թէպէտև չէին ընդ խորհուրդս նորա , սակայն ընդ նմա՝ի մահ գատապարտեցան , զի մի տալիրատու Թէ նորա զբ Հայոցդ լնցի կամ մանուկն վրէժխնդիր ։ Այսպիսիք էին կարքեդոնացիք խիստ և անողորմ՝ի պատուհասել առանց չափոյ և զանմեղս , ոչ յերաւունս խնայեալ , ոչ՝ի պատշաճսն , և ոչ յերախտիս ։

Ժամանակ է ասել վասն պատերազմից, զոր՝ի Սիկիլ Դիոդ. ԺԲ. 651-760 ։ Յոստիան. Բ. 3685. 527
լիա և զոր անդ Հիփրիկէ մնելոյն կարքեդոնացիք ընդ Հռոմայեցիսդ, որ զգաղուտ առն Հանապազորդեաց ընդ նոսա՝ի մարտս։ Եւ եր Հռոմեդիոս գաւառաւս սիկիլիայ , յանհնարս ազգէ և սոսկական որ . որ օգնականեալ՝ի կարքեդոնացւոց անտի առեալ՝ բռնակալեաց՝ի Սիրակուսա որպէս արդարև բռնաւոր ։ Ոչ յանդգնութեան գործս նորա խափանեցին զառաջինն կարքեդոնացիք, և Հիմիլկար զօրավար նոցա բռնադատեաց երդնիլ և դաշնաւոր արար գնա ընդ իւրեանս , զի առանց պատրիկ մնչ Հնար էր իրաց աշխարհին Սիկիլեայ խաղաղուլ առնուլ։ Այլ նորա ոչ յերկարեալ՝ի գաշինն , նոցին իսկ կարքեդոնացւոց ոսոխ եկաց։ Եւ նկուն եղեալ Հիմիլկարայ՝ի Հնակառս պատերազմի ՝ , ամբացաւ՝ի Սիրակուսա ։ Կնդր Հասին կարքեդոնացիք, և պաշարեցին զքաղաքն ամուր , որով բովանդակ զՍիկիլիա կարող էին նուաճել ։

Հռոմեդիոս տկարագոյն լոյժ քան զնոսա , և վասն խուժադուժ անդթութեն լքեալ յամենեցունց՝ի նիզակս կակուցն, խորհեցաւ խորհուրդ յանդուգն և դժուարաւ գործ, որ և յետ յաջողութեն Թուէր անհնարին։ Վասն զի խորհէր ածել պատերազմ Հիփրիկէ և գալ պաշարել զկարքեդոն՝ի ժամանակի յորում և ոչ յաշխար-

1 Աշ. գետ. և հնդկեպ տղային Հիմերայ։

հին իւրում՝ ի Եկեղիւս կարեր կալ առաջի Թէոմաեաց, և պահ ունել Սիրակասայ։ Եւ երկին զարմանք՝ գաղ- մոի պահել խորհրդոյն. զի ոչ ոք գիտայ ինչ՝ ի նմանի՝ բայց միայն զի ելս վտանգին հնարի. քանզի քաջալերեր նա զամբոխն և առ սուղ ինչ ժամանակ նեղուեցեալ համ բերել պաշարման քաղաքին։ Եւ հրաման ետ զի որ ոչ կամին լմնել ընդ իւր՝ մեկնեսցին ի քաղաքէ անտի. և ելին գնացին հազար և վեց հարիւր արք։ Եթող անդ ի Սիրակասա զեղբայր իւր Գնատնդրոս, և նստոյց անդ զոր բազում, և պահար ի լուծեր բաւականին ետ նոցա, պահել զքաղաքն և սրիթաբար ի վերայ նորա մարտնել։ Գտաեցոյց զամ գերին կարող ի պատերազմ. և ուխ- տիւ հաւատարմութեամբ գումարեաց զնոսա ընդ զօրս իւր։ Եւ արձաքէ յիսուն տաղանդ էառ ընդ իւր՝ որ առ ժամն պիտոյ էին նմա. քանզի յոլով մեծաւ ակն ուներ գտա- նել զամ ինչ կարևոր յերկիրն Թէոմաեաց։ Ոմն արար որդւովքն հանդերձ երկոքումբք, անուն միումն Գրիգո- գաճէն և երկրորդին Հերակլիոս. և ոչ ոք գիտեր յո՞ զտորմիւ նաւացն վարէ։ Արձակեին առնեաքին յԱտալիա կամ՝ ի Սարդինիա առպատակել նոցա, կամ՝ ի ծովեր- գեա Եկեղիւսոյ գիմել յաւար՝ ի վերնակ Թէոմաեաց։ Ընդ յեղակարծ չուս նորա պակուցեալ կարգեդոնացիք՝ խորո- հեին խափանել զնա. բայց Գաթնկղէս եհաս ի խորս ծովուն զերծեալ ի հետամտից։ Եւ ոչ ումեք մերկա- ցաս զխորհուրդս իւր՝ մինչև եկին հասին յԱրիկէ. յայնժամ ապա ժողովեալ զզօրս իւր, եցոյց նոցա առանց երկարելոյ՝ եթէ միայն հնարք ազատութեան հայրենեաց այս է, աճել պատերազմ յերկիրն Թէոմաեաց։ Եւ ասէ. ահա երթայք դուք պատերազմողք քաջք ընդդէմ վա- տաց և մեղկելոց յանձնդիւր դատարկութեան և յախտիյն գրգռանաց։ Ընտիրք աշխարհին տաղտկացեալ ի խիստ և յանարգ լծոյ ծառայութեան, իբրև լսեցին զգալուստ մեր՝ եկեսցեն խառնեսցին ընդ մեզ։ Եւ համբաւն իսկ յանդուգն համարձակութեան խուճապեցուսցէ զքրիստ- ոս, որք զամ գնաւաւ ածեալ՝ այլ առ դուրս քաղաքին տեսանել զմեզ ոչ կասկածեն։ Եւ զի՞ յերկարեմ. չիք առաւել քան զայս օգուտ մեզ և փառք. մեծութիւք ինքն քեզանի՝ յաղթանակ պատրաստեալ էն մեզ, և քաջուե- ձերոյ յիշատակք կացցեն անմահ՝ ի յաւետս ի գովեստ և ի զարմացումն աշխարհի։ Եւ զօրքն ամ՝ ձայնիւ ցնծու- թեաք գովեցին զնա, իբրև անդստին տիրեալք Արքեդո- նի։ Ի յաչ էև փարատեալ էր ի նոցանէ խեթ կասկա-

ծանոյց խաւարելոյ արեգականն յեր իւրեանց ի Սիկիւ-
լեայ ։ Վանդի և աղէտ բարդաւաձեալք ի գիտութիւն չև
էին յայնժամ հասու եղեալ պատահարաց այսոցիկ քնու-
թեն ։ և յերկիցն իւրեանց և ի գուշակաց ուսեալ ի նա-
նրահաւատ և ի մուտի կարծիս անկանելին, յորոց էր առ
նոսա կարևորաց ամի ուղղութիւն ։ Ասացը Պաղթոհղէս
քաջալերեաց զնոսա , թէ այն պատահարք ի լուսաւորն
յեղափոխութեն իրաց աշխարհի գուշակք բնաւորեալ էն
լինել, և վախճան յաջողութեն կարգեդնացուցն սպառ-
նան , և մեզ բաղդին էն կարապետք ։

Պալա իբրև եհաս կալմ և պատրաստ զզօրականսն՝
յանդգնագոյն ևս խորհուրդ կալաւ և դժուարին քան
զառաջինն , հրձիգ առնել զնաւս որովք անցոյց զզօրս
իւր Այֆրիկէ ։ Վանդի նաւահանդիստ ապահով ոչ էր
նմա անդ , և կարգեդնացիքն ծովակալք՝ տիրէին վաղ
վաղակի նաւաց նորա առանց ուրուք ընդդէմ դառնա-
լոյ , և ոչ նստուցանել անդ կարէր պահապանս՝ զօրա
հատոյց եղեալ ի սահմանաձեռն բանակին ։ քանզի այս
պէս ոչ ինչ էր օգուտ յանմոխակ արշաւանաց, որ շուտ
պատն և ամբոխիւ յաջողէ ։ Այս զօրականացն դարձեալ
խորհէր չթողուլ տեղի ապաստանի, զի յաղթութեն միայն
ուշ ունկնդիր ։ Այլ որ ի ծայր քաջասրտութեն չկոչ հա-
սեալ, նա յայսպիսի խորհուրդս մնաքերել ոչ կարէ ։
Պաղթոհղէս հաւանեցոյց և զսպաց , որ մնադիւրագոյն
ամ ակնարկութեն նորա հնազանդէին ։ Այս յանկարծա-
կի ի միջ զօրացն կացեալ պահաւոր ի հանդերձս պայ-
ծառս , որպէս ի պաշտամունս կրօնիցն , ասէ ։ Ի ժամա-
նակի իբրև յուղի անկեալք մեկնեցաք մեք ի Սիբակու-
սայ , ինչ դեռ Թշնամին հալածէր զմեզ , ի մեծի վտան-
գին զինամնակալս Սիկիլեայ զԳեւեռոս և զՊերը-
սեփոնէ , և ուխտեցի նոցա զի ի տապետաղ վտանգէն
նոքօք զերծեալք՝ ընդ հասանել մեր այսր հրկեզ տրա-
ւիս նոցա զամ զնաւս մեր ։ Զեռն տուք , զօրականք ա-
ռաքինիք , կատարել զուխտ իմ։ վարձս ընդ այսքանդ
նուիրի ոչ յամեցուին չնորհել դէք ։ Այս զայս իբրև ասաց՝
ընթացաւ վաղվաղակի ջահ՝ի ձեռին, և խանձ՝ի նեղքս
արկեալ՝ բորբոքեցոյց զնաւ իւր . զկետ նորա և սպայք ,
և զօրականք զկետ նոցա հետևեցին ։ Փողոց հնչեցուցք
և արձագանգք ձայնից ուրախութեան ընդ ամ բանակին
հնչէին . և ի սուղ ժամանակի ամ տորմիղ նաւացն բո-
ցակիզեցաւ , և ոչ եղև պարապ զօրականին ընտրողու-
թիւ զնոցն խորհրդածել՝ զայրացու եռանդեամբ ի

գործն փութացեալք. այլ երբև սեպհեցան, յայնժամ ապա ի միտ առին զահագին անդունդս ծովուն՝ որ անջը պետեր ընոսա ի հայրենեացն. և յերկիր Թշնամեաց անուրեք անփախուստ՝ զձայն ցնծութեան և զդոչիւն միաբարբառ աղաղակին լուեցուցին ի դառն և ի սգաստեսիլ տիրուն Թէ՝

Խորհեցաւ Ղազարոկղէս զբաղեցուցանել զնորհրդս նոցա, և խաղացոյց զնոսա յամուրսն կոչեցեալ Ամեծաքաղաք, որ ընդ իշխանութիւբ կարբեդոնացւոցն էր։ Ձա նապաստիկ ընդ որ գնային՝ վայրք զուարճալիք և զբօսացուցանողք, հովիտք շուրջանակի վայելուչք ի տեսանել, և մարգագետինք ոռոգեալք ի պտուղից վտակաց՝ ուր ազգ ազգ կենդանեացն մակաղէին, շինուածք հրաշալեղք ամարաստան ապարանից, և ծառատունկ բազում ձիթենեաց և ազգի ազգի ծառոց մրգաբերաց, և պարտէզք բուրաստանաց մեծամեծք՝ ձարտար արուեստիւ մշակեալք, և զմայլելոցիչք աչաց գեղոյն։ Ոգի առին զօրականք ի տեսլիւն յայն, և խրախուսեալք հաւսին ի Ամեծ քաղաքն և առին զայն անձան պատերազմաւ, և լցան աւարաւն՝ զոր եձող նոցա Ղազաթոկղէս։

Ղազ եղև կարբեդոնացւոց զի Թշնամիք հասին յաշխարհն, և դիմեալ գան շտապաւ ի քաղաք մեզր ի բուհն նոցա, և զաշխ հարան։ Ամուեցաւ նոցա ի պաշտօնեայ մատնեալ բանակին իւրեանց որ ի Ամերակուսս, և տոքմիր նաւացն խորտակեալ ի սպառ։ Խուժեաց ոամիկն ի հրապարակ մեզր քաղաքին, հոլմնեցաւ աւազանին խաւձապաւ՝ խորհել վասն փրկուելոյ քաղաքին։ Օ օրք ոչ էին նոցա ի պատրաստի՝ հասել ի Հանգստեան Թշնամեաց, և ոչ պարապ առ մեծաշուք վտանգին գուսպեղոյ ի դաշտակամաց անտի կամ ի դաշնաւորաց ազգ գայ։ Ոչ կաց ապա այս բան ի խորհրդի անդ՝ սպառազինել զնոսա քաղաքացիս. և եղև Թիւ հանդերձ նոցա քառասուն հազար հետևակաց և հազար հեծելոց, և կառք զեղմնդազինք երկու հազար։ Օ օրսանաւ ի վերայ նոցա կացին Ղենան և Խոմիկար, Թէպետ և ինքեանք խնդիր էին ընդ միմեանս։ Ընդ առաջ եղեն Թշնամեաց և Հանգստեան ի պատերազմ։ Ղազաթոկղէս ոչ ինչ աւելի զօրք էին քան զերեքտասան կամ զչորեքօրտասն հազար։ Ղենան ետուն մարտի կողմանք երկաքանչիւր։ Ղենան նուիրագանասուն իւրով գնդաւ յընտրելոցն կարբեդոնացւոց՝ յերկար դիմամարտեալ և մերթ ընդ մերթ Հարուածս խիստս ի վերայ Յունաց ածեալ, ապա ի վերջս պատերազմին

ի կարկաչ քարանձն նկուն եղեալ, և անկաւ վիրաւորեալ։ Յակ Խոմիլկար փոխանակ սաստկացուցանելոյ զմարտն, ոչ գիտեմ երբ աղաղաւ, ապախտ արարեալ զիառս Հայրենեացն՝ յետս ընկրկեցաւ զնդաւն իւրով, և ամ բա նակն զՀետ նորա գնացին՝ ակամայ Թողեալ զթշնամին։ Լքաթոկդէս Հալածեալ առ վայր մի զթշնամիս, ապա դարձաւ Ժողովել զաւար բանակին։ Լաւ գտան անդ բան Հաղար զոյզք ձեռակապից ի կարքեդոնացւոց անբ տի պատրաստեալ ի կապանս գերւոյն՝ զոր առանց յերբ կուանալոյ կարծէին ունել։ Լաւ կալան Հոյակը քաղաքս բազում, և ի բնակչաց երկրին բազումք ապստամբեալ ի կարքեդոնացւոց՝ յաւելան ի նոսա։

Լաթ. Խ. Ե։

Լաթ կարծեմ և Ակիպիոնի յետ ժամանակաց յոր դորեալ զնոյն փորձ փորձել՝ ի Սեկիլիոյ Լիբրիկ ասպատակեալ։ Վանդղ և ի ստգտանել Փաբիոսի գլանդուքն խորհուրդս նորա՝ օրինակ ի ներքս երեր նա զԼքաթոկդէս, և եցոյց զի բազում անգամ յաջողէ ընդդէմ Հզօր Թշնամւոյ արշաւել յերկիր նորա. և զի առաւել է արիւնթէն յարձակել ի վերայ այլոյ՝ քան պաշտպանել անձին։

Ինչդեռ կարքեդոնացիք զպնու պատերազմաւն կէնսհաման Հրեշտակաբ ի Տիւրոսէ խնդրել օգնութիւն ընդդէմ Լքեքսանդրի մեծի, զի պաշարեաց զնոսա, և մոտ էր յառնուլ զքաղաքն։ Կարքեդոնացիք քանզի Հայրենասիրեցս իւրեանց զարիւրացեսն Համարէին, ողորմեալ ընդ վիշտս վտանգի նոցա որպէս ընդ իւրեանցն, իբրև այլով իւրք ոչ կարէին օգնել՝ խորհեցան դէթ միմիաբել զնա. և առաքեցին երեսուն այր ի ամենամեծաց քաղաքին՝ կարելիոյ լինել ընդ նոսա զի ոչ կարացին ձեռն տալ նոցա ի վտանգի։ Նոքա վերկեալ ի միակ յուսոյն՝ ոչ վհատեցան. այլ եկեալցն արանց յանձն արարեալ զնաւնայս և զորդիս իւրեանց և զձերս, և աղատացեալ ի Հոգոց սիրելեաց՝ անձանց և քաղաքին պահպանեցին, յանձն առեալ զայմ վտանգս։ Իսկ կարքեդոնացիք սիրով մեծաւ, որպէս կարող էին, զառաւապեալ ընտանիսն հիւրընկալեցին, մարդասիրեալ յարժանիսն կարեկցեցեալ Թեան՝ որչափ ինչ ի բարեգութ ծնողաց մարթ էր անհկալել։

Լքեքսանդրի տիւրացւոյ ի կարքեդոն առ ասպատակութիւ սիրակուսացւոցն Լիբրիկ ժամանակագրե Կ. Կուրտիոս, յորում ժամանակի մինչև ի կարքեդոն Հասին նոքա պատերազմաւ։ Լաւ այսքիկ ոչ ես կիցք

Դէպ. ձէ. 519։ Կոռպ. Թ. Փ։

ժամանակաւ. քանզի պաշարուէն Տիւրոսի Համդիսի կանխագոյն՝ ամօք աւելի քան զքսան։

Բայց կարգեդմանացիք և աշխարհին իւրեանց հնարս ազատութեանէ ի չարեաց խնդրելին։ Վասնզի համարեին զայն ի ցաւմանէ դիցն կրել արժանաւոր պատուհաս. մանաւանդ վասն անարգութեանէ հայրենականացն դից, զի զօրինաւոր զսահմանեալ պաշտամունս նոցա ապախտ արարին։ Վասնզի անդատին ի հաստատելոյ քաղաքիս օրինաք էին նոցա առաքել ամի ամի ի Տիւրոս, ուսուի գաղթեցեալն, տասանորդս յիւր եկամտից պետութենէն ի նուէր Հերակլեայ, զի էր նա խնամակալ և պահապան երկաքանչիւրոց քաղաքացն։ Այլ երբեմն ընդարձակ կեցին զաշխարհակալութիւնս իւրեանց, ի յաձախել եկամտիցն նուագեցուցին ի տասանորդաց աստուածոյն։ Եւ զայս յայնժամ ի միտ առեալ՝ հարան ի խղճէ, և սորջացեալք աշխարհաւ ի չարեաց իւրեանց՝ ընդ սեղա նահապետա ադահունեն առաքեցին պատարագս բազումս ի Տիւրոս, և խոյրս ոսկի ծանրագինս յոյժ։

Այս ևս զեղջ էր մնացեալ նոցա ոչ ինչ նուազ քան զառաջինն՝ ըստ անդորոյ և մտոյ պաշտաման իւրեանց։ Հազատերամ մանկտուցն Կարքեդոնի սովորութիւն էր ի սկզբանէ զոհել տղայս Կռնոսի. և ընդ ամպարիշտ նենգութիւնէ իւրեանց խղճելին յայնժամ, զի ընդ ազատացն տղայոց փոխանակեալ արծաթագին մանկունս աղքատաց և դերեաց՝ զնոսա զոհելին։ Ընդ մեծի օրինազանցութենէն զոհ քաւութիւն արուեստանաւ աստուածոյն մատուցին երկերիւք մանկտի, ըստ ընտրանաւ յերևելեաց քաղաքէն. և վեսասպարտք մեծեղեռն յանցանացն, որք աւելի քան երեքարիւր, մատուցին զանձինս իւրեանց ի զոհ անցուցանել արեամբ իւրեանց զցասումն դիցն։

Երբև վախձան եղև զոհիցն արձակեցին ապա հրեշտակս ի Սիկիլիա առ Գիլիկաւ, յուցանել նմա որ ինչ անցք անցին ընդ նոսա Ասիրիկէ, և փութացուցանել զնա յօգնութիւն։ Բայց հրեշտակացն պատուէր ետուն լուել զյաղթութիւն Գաթոկղէ, և զնախառակն աւետել նմա՝ թէ խորտակեցաւ Գաթոկղ ամ զօրօք իւրովք, և տոքմիլ նաւաց նորա անկաւ ի ձեռս կարքեդոնացւոց. և ի հաւաստիս բանիցն զայրեցելոց նաւաց նորա երկաթս ետուն ընդ նոսա։ Վիւբարտաւան եղեն այնմ սիրակու սացիք. և երբև խորհեցին բազումք ի նոցանէ դաշինս կռել և անձնատուր լինել առ Թէյամիս, ահա հասեալ անդր նաւ պատերազմիկ Թիովք երեմնիւք, զոր

Ղազարիկի նորոգ կառուցեալ էր, եւմուտ ի նաւահանգիստն, և աշխատութիւք բազմաւ և վտանգօք առ պաշար բերելոյ անդր մատեաւ։ Եւ ոչ եղև վաղվաղակի ընդ քաղաքն աւերակք յաղթութեան Ղազարիկի, և քաջալերեալ ցնծացան բնակիչքն նմա։ Եւ ասատկացոյց Ղազարիկ զպակասութիւնս որ ի վերայ քաղաքին, այլ մեծամեծ հարուածովք ի բաց վանեալ՝ երթարձ զպաշարումն, և յղեաց հինգ հնգ զոր այր յօգնութիւն կարգեցոյն։ Եւ ասա զարձաւ միամտամ պաշարել զքաղաքն, և խորհէր գիշերային յանդգնութիւ ի վերայ անկանել Թշնամեաց՝ այլ ոչ ծածկեցաւ խորհուրդն այն, և ինքն Ղազարիկ անկաւ կենդանւոյն ի ձեռս նոցա. որք կատամամբ արարին զնա, և զգլուխ նորա առեալ առաքեցին առ Ղազարիկ ի կարքեդոն։ Որ ի բանակ անդր կարքեդոնացւոց մատուցեալ, լքեցեալ զնոսա սրտաբեկս՝ ցուցեալ զգլուխ զօրավարին իւրեանց, զուշակել նոսաւ զանց չարեացն որ անցին ընդ նոսա ի Սիկիլիա։

Դէպ. 779-781։ Յովհան. Եփ. Է։

յայսպիսի դէպս յոյժ էն աղետաբերք։ Կացուցին ապա
փոխանակ նորա զՄիլկար Խարկաս։ Ան արդարև քան
Տէրակ Տամբատյն և զպատակն եցոյց։ Իբարձ նախ

զպաշարումն Աստիկեայ . յետ այնորիկ խաղաց ՚ի վերայ զօրացն՝ որ առ Այրեդունաւ էին բանակեալ, և զօրաց ցեալ ՚ի վերայ նոցա՝ զնայրս ամուրս գրեթէ բովանդակ Թափեաց ՚ի ձեռաց նոցա : Եւ յաջողութեամբն այնու խրախուսեցան կարքեդունացիք :

Վարաւս այն ազատորդի իշխան նուիրագուց, քանզի մեծարեր յոյժ զՎարկաս վասն որ ՚ի նմա լուռութեանցն, գումարեալ ընդ իւր երկու հազար այր ՚ի նուիրագուց անտի, եկն յարեցաւ ՚ի նա և եղև զօրավիդն մեծ : Աւրով առաւել հզօրացեալ Վարկաս, խաղաց ՚ի վերայ ապստամբացն՝ որ շրջէր զնովաւ նստէին յընդարձակ հովտին, եՀաղ ՚ի նոցանէ բիւր մի, և կալաւ գերի չորեքհազար . և առաքինացաւ ՚ի մարտի անդ պատանեական նուիրագի : Վարկաս զօրս ՚ի գերելոց անտի կամեցաւն զինուորել ընդ զօրագլուխսն նորա՝ ընկալաւ զնոսա . և զայլս արձակեաց յազատութիւն, երկիւղ մնձու ՚ի վերայ նոցա եդեալ՝ եԹէ դարձեալ ընդդէմ կարքեդունի զէն առեալ ՚ի բուռն անկանիցին : Եւ տէս ասա զիմաստութիւն զօրավարին, զի քան զանաւատ խստութիւն լաւ համարեցաւ արձակել զնոսա . և կարի խնամատէր . զի ուր ապստամբացն ստուար է ամբոխ, և բազումք ՚ի նոցանէ ՚ի հրապոյր այլոց կամ յերկիւղէ յաւելեալ իցեն ՚ի նոսա, յաջողել անդ բազում անգամ գԹուԹիւն :

Պենդխոս առաջնորդ ապստամբութեանն կասկածեալ զի գուցէ յողջ Վարկասայ յոլովք յիւրոցն յաւելցին, խորհեցաւ նորանչան պատուհասիս բառնալ զոյս նոցա ընդէն գտանելոյ անդրէն առաջի նորա : Ոմին իրի արար ընԹեռնուլ առաջի զօրացն նամակաին սուտ կեղծեալ, յորս էին բարւոքք դաւաճանութեանն զինուորաց ոմանց ընդ Վիսգոմի, որպէս Թէ ապատեր խորհէին գնա ՚ի բանտէն՝ յոր արգելեալ կայր ՚ի բազում ժամանակաց, և առանց ողբոմութեան հրամայն ետ սպանանել զՎիսգոմն և զնմ գերին, և որ բանիւ միայն իշխեր կարեկից լինել նոցա՝ մնձու մեռանէր : Հանին ՚ի բանտէ զՀէք զօրավարն և զեօԹն Հարիւր գերին ընդ նմա, և ածին կացուցին յանդիման բանակին. և նախ զՎիսգոմն և ապա զայլոցն առնեցուն հատեալ զՀեռս, և զբարձս խորտակեալ, Թաղեցին զնոսա կենդանւոյն ՚ի խորխորատ մի, Եւ ոչ ղդիակունս նոցա ետուն կարքեդունացւոց ՚ի Թաղել . այլ սպառնացան նոցա զի և պատգամաւոր խաղաղութեան Թէ եկեսցէ ՚ի նոցանէ, կամ դեսպան Թէ արձակեսցի, զնոյն և ընդ նոսա արասցեն : Եւ զօրաժողով

հաւանութիւն սահմանեցին ի մէջ իւրեանց՝ այնպէս զա-
մենայն ոք պատուհասել որ ի կարգեդմացոց անկցին
ի ձեռս իւրեանց. իսկ զնիզակակից նոցա այլազգիս՝ ան-
պիտան ի ձեռացն առնել և արձակել ի բաց։ Զոր և
արարին իսկ։

Այնչափեւ ակն ունէին կարգեդմացիք հանդարտել
առ վայր մի, վիշտք ի վշտաց հասին ի վերայ նոցա։ Ի
զօրավարս բանակին եղև պատահումն. և մերկիկ զհամ-
բարս նոցա կորոյս ի տափնապ ժամանակին. և խոց կա-
րեվէր վտարանդութեան երկուց քաղաքացն եղև նոցա, որք
յիամ ժամանակի հաւատարիմք էին, և սերտ բարեկա-
մութեամբ անլուծանելի կապեալ ընդ նոսա, Լստիկ և
Լսպակրա։ Որք, մինչ պատճառանաց ոչ գիտեմ, յա-
ւելան յապստամբս. և հանդոյն նոցա մոլեգնեալ՝ սպա-
նին զզօրավարն գնդաւն հանդերձ, որ նոցա յօգնակա-
նութեամբ ածեալ էր. և ոչ զդիակունս սպանելոցն եւտուն՝
անողորմելիք յաղաչանս կարգեդմացւոց։

Ի յաջողութենէ աստի խրախուսեալ ապստամբացն՝
եկին պաշարեցին զՎաբգերդն, այլ ոչ անդ յերկարել
կարացին՝ վասնեալք ի բաց։ Ոչ անդադարք ի պատե-
բազմի՝ զօրաժողով եղեն դարձեալ ամ բազմութեամբ
առաւել քան զերբրս հինգ նիզակակցօքն հանդերձ, և
զՀետ եղեն բանակին Վիրկաբայ, և զարձունս հետա-
զտեին զի մի ի դիւրի զօրասցի Թշնամին հեծելովքն և
փղօք։ Վիրկար հմուտ քան զնոսա ի պատերազմ՝ ոչ
եՀաղ զօրանալ նոցա ի վերայ իւր, այլ ինքն նոցա վրէ-
պակօքն զօրանայր, և յարձակեր ասէպ ի բանակ նոցա՝
առ փոքր մի մեկնել զօրականին, և տափնապեցուցանէր
զնոսա, և զորս միանգամ ի բուռն անկանէին՝ գէշ ար-
կանէր գազանաց։ Այնչափ ապա, երբէք ոչ ինչ կասկածէ-
ին, յանդգնացին ի վերայ հասեալ՝ վարեաց զնոսա ի
դժուարածս անձնողպրելի. ուր ոչ ի մարտ համարձա-
կեալ և ոչ ի փախուստ, սկսան ամրացուցանել շուրջս
նակի զանակ իւրեանց իրարմէ և ցանկօք։

Այլ ոսոխ աշաւորդոյն քան զարտաքինն տագնա-
պեր զնոսա ի ներքուստ սով ուժգին, մինչև զմիմեանս
առ քաղցի ուտել. ածախինամ տեսչութենէ այպէս ինձ
ցանե վրէժ խնդրեալ, ասէ Պողիբիոս, զերաժգուժ
անպթութենէն՝ որով առ այլս ինքեանք վարեցան։

ԵՒ եսուրեք գոյր նոցա ապաստան. և գիտեին՝ որպէս
սի պատուհասք մնան նոցա՝ եԹէ ի ձեռս Թշնամեաց
մնանէսցին։ Այլ ոչ իշխեին խօսել ընդ նոսա ի հաշ-

տուեցի և յիրաւախոհութեի՝ յետ անպատուելոյն զոր ա-
րարին ընդ նոսա ։ Եւ օգնականութեի ընդ վայր խնդրե-
ին ի գնդէն որ էր ի Տուինա ։ Եւ սուին եւս քան զեւս
սատակայր ի վերայ նոցա, մինչեւ զանտարգելսն ու-
տել և զգերիս ։ Այս իբրեւ մերձ եկին և ի միմեանս ձեռն
արկանել, ոչ եւս Հանդուրժեալ զօրագլխոց տրտնջելոյ և
խռովութեան ամբոխին՝ որ սպառնային սատակել զնո-
սա եթէ ոչ անձնատուր լինիցին, եկին յանդիման լինել
Պիլկարայ՝ ընկալեալ ի նմանէ կիր խաղաղական ։ Եւ
այս գաշինք եղան ։ ընտրել կաթեդռնացւոց տասն այր
յասպատաքաց, և առնել ընդ նոսա՝ որ ինչ կամք էցէն ։
իսկ այլոց զէնանան միայն Հնօրհեալ՝ արձակել ի բաց ։
Իբրեւ Հաստատեցաւ մուրհակ դաշինն, զնոսին իսկ զօ-
րագլուխս կալան կաթեդռնացիքն, յայտ արարեալ որ
պիսի ինչ էր յայս իւրեանց Հաւատարմութեի ։ Զգէ եղև
ապստամբեայ զի արդեւլան զօրագլուխքն նոցա առ Թէոս-
միս, և ոչ ինչ զդաշնացն պետելոյ դաւաճանութեի Հա-
մարեցան զործեալ նոցա ի Թէոսմեաց, և ի զէն ընթա-
ցան ։ Այլ Պիլկար յամենայն կողմանց խուճապեցոյց
զնոսա փղօք, որք աւելի քան զբիւրս տրս ի նոցա-
նէ առ աճուր Հարին, ի վերայ բազմութեի անկելոցն
սրով։

Պետի ամ քաղաքք աշխարհին ափրիկեցւոց զգաստա-
ցեալ՝ զարձան ի Հնազանդութեի, վասն Թէոսացաւ չու արար
Պիլկար ի Տուինա՝ որ անդստին ի սկզբանէ մայրաքոյ
և տեղի ապաւենի ապստամբացն էր, և պաշարեաց զայն
աստի, և Պինիքաղ իշխանակից իւր անտի ։ Հուպ ի
պարիսպս անդր ետ ամբաստնել կախաղանս, և զնմանէ
ետ կախել և սպանանել զՊենդիոս զառաջնորդ ապըս-
տամբութեին, և որ ընդ նմա կալեալ եղէն ։ Լսեալ Պա-
թոս վերակացու քաղաքին, որ Համախոհ էր ընդ նմա,
ի տեսիլ ողջոյն պատուհասին ծանեաւ և որ ինչ ինքեան
պահեալ էր, և առաւել եւս պատրաստեցաւ ի դիմա-
մարտել ։ Եւ իբրեւ Պինիքաղ անեղիևան ընդ յաղթու-
թիւնն յանդգնեալ էր, յանկարծակի յարձակեալ ի վերայ
նոցա՝ եմուտ ի պատնէշս նորա, եհար զզաւազան ի կար-
քեդռնացւոց անտի, և կալաւ զերծ բազում և զնա ինքն
զՊինիքաղ զօրավար նոցա, և առ աւար զամ առիս
բանակին ։ Լծուցեալ ապա զՊենդիոս ի կախաղանէ
անտի, ետ Հանել անդր զՊինիքաղ խոտ տանջանօք ։
Եւ զգեհակարն Պենդիոյ ետ խողխողել երեսուն այր
ի գլխատրաց կաթեդռնացւոց՝ ի սպանդ վրէժխնդրու-

թեան իւրոյ։ Կանգնի կողմն զկողմամբ ելանել Թուէին ի խժդժութիւն։

Կարկաս ոչ էր անդ յայնժամ. և անագան գոյժ առեալ զաղէտից իշխանակիցն, ոչ կարէր փութալ ժամանել նմա յօգնութիւն վասն դժուարին անկոխ ձանապարհացն ընդ մէջ երկուց բանակաց։ Զարկածից աստի չարեաց զարհուրեցան կարգեդոնացիք յոյժ։ Յրևիւն ի պատերազմն յայս հուպ ընդ հուպ փոխանորդել արկածք և յաջողութիւնք, երկիւղ յուսոյ, և ուրախութիւն՝ տրտմութիւն. քանզի այսպէս յողդողդ եղեն երկուստեք, և չար ի փոփոխութիւն պատահարք։

Չարկ եղև կարգեդոնացւոց պատրաստել ի յետին ձիկն։ Սպառազինեցան ամ այր հասարակաչափ կարող ի պատերազմ. և Կինոն օգնական առաքեցաւ Կիլիկիա բոյ, և ընդ նմա երեսուն այր յառաջնեցոյն՝ յուխտ ընդ աչխարհին մաճծանել զերկոսին զօրավարս որք Թրշնամութիւք էին ընդ միմեանս, զի անյիչաչար լինալ միմեանց՝ ի վերայ բարւոյն հասարակաց Թողգեն զվերնժինդրութիւն։ Չոր և յորդորեալք՝ անկեղծ սիրով համբուրեցան ընդ միմեանս ի հաշտութիւն։ Յայնմ հետէ ամ ինչ յաջող ղեաց կարգեդոնացւոց։ Պաճուոյն մտայաղթ եղեալ ամ ուրեք ի ձախատուս, խորհեցաւ ապա դիմագրաւել մեծի ցանկալի պատերազմին՝ յոր վախձան չարեացն և բաղդ երկաքանչիւրոցն հաստատեալ էր։ Յովին խորհրդով կազմեցին իրանուսեցին երկուստեք զզօրս ի պատերազմ, և ապա ընդ միմեանս գումարքն երկոքին Կարան։ Ել յերկարեաց գործ պատերազմին, և ի փախուստ դարձան ապստամբք։ Պակաւք ոմանք յափրիկեցւոցն ի կոտորածէ անտի ապրեալ, եղեն և նոքա անձնատուր. և Պաճուոյ կենդանւոյն կալեալ ածաւ ի Կարքեդոն։ Չնազանդեցաւ ամ Կիպրիկէ, բաց յերկուց բերտից դրուժ քաղաքացն որք յետ աւուրեցուն վտարանդեցին։ այլ և նոքա ընդ հուպ նուաձեցան։

Դարձան ապա յաղթողքն ի Կարքեդոն, և ընդ առաջ եղև նոցա քաղաքն ամ ձայնիւ ցնծութիւն, և ծափս հարեալ գովէին զնոսա։ Պաճուոյ և որ ընդ նմայն էին՝ նշաւակեալք ի զարդ յաղթանակի, ածան ապա ի պատուհաս՝ զվատ և զանօրէն մատնութիւնն և զանգութ անզգամութիւնն անարգանաց և չարաչար կատարածիւ ընկալեալ զդատաստան։ Կայս վախճան եղև լիբեական պատերազմին ընդդէմ վարձուորաց, որ տեւեաց զերիս ամս և զտաս աւիս։ Կրատ մեծ ամ ազգաց, ասէ Պողո-

բիոս, պատերազմն այս ընծայել՝ մի քան զընկիկն յոլովել զայլազգի զօրականն, և մի պահպանս աշխարհին առնել զզօրս՝ որոց ոչ ինչ փոյթ է գմանել, և ոչ անտի շահ։

Յապաղեցի ցայսօրայր ասել զանցս՝ որ ի Վարդենիս զամենս ժամանակաւ անցին։ Վանդն այսոքիկ իբրև արգասիք չարեաց պատճառս ի պատերազմէ վարձկանացն առին. և նոյն շշուկ ապստամբութեան և անլուր անազգակալութեցն, իբրև հողմ մըրկալից և մրրկիկն անդամսին յափրիկեցւոց աշխարհին հնչեաց ի Վարդենիս։ Վանդն լուր հասեալ անդր ապստամբութենն զօրականք վարձուորք, որ էին ի կղզւոջ անդ, ընկերեցին և նոքա ըզլուծ ծառայուե. և զԽոստաւր զօրավար իւրեանց սպանին, և զկաբեդոնացիս զամենեսեան որ էին ընդ նմա։ Այլ որ փախանակ նոքա առաքեցին կաբեդոնացիք զօրավար. և զօրքն որ ընդ նմանն էին՝ միաբանեալ ընդ ապստամբս, կախեցին գնա զփայտե, և զայր կաբեդոնացի ընդ ամ կղզին անխնայ կոտորեցին։ Այս մի ըստ միոջէ զբաղաքս նուաձեալ, ի սուղ ժամանակի բռնադակ կալան զկղզին։ Այսպա երկպառակութեի եղեալ ընդ նոսա և ընդ բնակիչս կղզւոյն, հալածական վարեցան վարձկանքն ամ զօրք, և անկան փախստեայք Յոտալիա։ Այս կորեաւ ի կաբեդոնացւոց Վարդենիս, կղզի ընդարձակ և բազմաբնակ և արգաւանդաշող, որ օգուտ մեծ նոցա մատակարարէր։

Հռովմայեցիք յորմէ հետէ հաշտութիւն արարին ընդ կաբեդոնացիս՝ արգարութեբ մեծաւ և խոստութեամբ վարէին ընդ նոսա։ Այլ գժտութեի ինչ եղեալ ի նոսա, քանզի կաբեդոնացիք գերի կալան զնաւականս ոմանս հռովմայեցիս՝ որք պարէնս առ Թշնամիս անդր անցուցանէին, դարձեալ միւսանգամ գրգռեցան ընդ միմեանս։ Խողք կալան հռովմայեցիք, և իսկ իսկ ազատեցուցեալ զնաւականսն՝ դարձան անդրէն յառաջինն բարեկամութեին, պանծացեալքն ի վերհանձնութեի և յարդարութե. և ի հաձել զնոսա՝ արգելին որքան էր նոցա կարողութե, մի ուրեք ի վաճառականաց ածել ուրեք պարէնս բայց միայն ի Կաբեդոնս։ Այս մերժեցին զապստամբս սարդինիացիս, որք հրաւիրեին զնոսա գալ տիրել կղզւոյն։

Այլ ոչ կացին ի սպառ յարդարութե[1]. և վկայուի

[1] Ընդ ամ ժամանակս պուհէ. զութե և ի դադարել զինուց, բայկեան պատերազմացն, ի խաղա. զամ ինչ եղեան գործեցին կաթ.

Նեսարու զՀաւատաբմուԹենէ նոցա, զոր ածէ Ապուս- ԱՄԱՀ.Կ
տոս, ոչ ունի աստ արդարանալ ։ Ոչ ի ընդ ամենայն
ժամանակս, ասէ, ափրիկեան պատերազմին՝ բազում
ինչ գրժանս գործեցին կարքեդոնացիք ՚ի խաղաղու-ԹԷ
և ՚ի դադարել զինուց, որոց ոչ գնոյնս փոխարինեցին
Հռովմայեցիք. քանզի ոչ յայն Հայէին զոր արդարու-Ք
օրէն էր առնել, այլ որ փառս նոցա յաւելցուր ։

Որք Իտալիա փախստեայքն գնացին վարձկան զօրա- 3767 . 609
կանք, զորոց ասացի, Հաւանեցուցին զՀռովմայեցիս ան-
ցանել տիրել ՚ի Սարդինիա ։ Իշզ եղև կարքեդոնաց-
ւոց, և սրտմտեցան յոյժ ։ Այս բողոք կալեալ՝ զի ին-
քեանց քան նոցա անկ է իշխանութիւն Սարդինիոյ ,
պատրաստեին ՚ի պատերազմ՝ վրէժ ինդրել յայնցանէ
որ ապստամբեցուցին զսարդինիացիս ։ Ետայ Հռովմայե-
ցիք պատճառանօք որպէս Թէ ՚ի վերայ իւրեանց զօրա-
ժողով լեին կարքեդոնացիք՝ յայսո արարին առ նոսա
պատերազմ։ Այսքա քանզի ՚ի սպառ վատԹարեալ՝ և այն
ինչ սկսանէին յայնժամ զօրանալ , անկարողք ՚ի դիմա-
մարտուԹիւն՝ Հարկեցան ըստ պատշաճի իրաց ժամանակին
տեղի տալ Հզօրագունիս։ Պաշինս անդրէն կռեցին՝ Թո-
ղեալ ՚ի նոսա զՍարդինիա , և յանձն առեալ տոյժս ՚ի
վերայ առաջնոցն Հազար և երկերիւր տաղանդ՝ զերծա-
նել ՚ի սպառնացեալ պատերազմէն ։ ՅանիրաւուԹենէ
աստի Հռովմայեցւոց պատճառս կալաւ երկրորդն պուա-
նիկեան պատերազմ, յոր մնասցի ։

ԳՕԴՈՒԱԾ Գ.

Յաղագս երկրորդի պունիկեան պատերազմին։

Ա յս որ ՚ի ձեռինս է, երկրորդ պատերազմն պունիկ- Լիւ. ին. ։։
կեան , մի ՚ի նշանաւոր պատերազմացն է աւանդելոց ՚ի
վեպս . արժանալուր ըստ արիական ձեռնարկու-ԹեաննՒ ,
ըստ խնամատուն առաջնորդու-ԹԷ , ըստ երկայնամիտ ուժ-
գին ձգանաց երկուց նախանձընդդէմ ազգացն , ըստ դիւ-
րաւարատաստ հնարից նոցա յարկածս մեծամեծս , ըստ
անակնկալ բազմադիմի պատահարաց , ըստ կեղակարծ

քեզոնացիք՝ յորոց յետս կացին Հռովմայեցիք, ապաքեն արարեալ և զպատեհ կարծողու-ԹենՒ . քանզի որ ինչ պատշաճն էր ինքեանց՝ զայն ինդրէին, և ոչ զոր արդարու-ԹիՒ օրէն էր առնել նոցա ։ Սու. դե-զեալ կոտիւ։

ելից երկաբաժիք և խիտ պատերազմին, և համայն ա-
սել՝ ըստ անբաւութեանն չքնաղ օրինակաց բիւր աղգի աղ-
գի վատակոց քաջութեանն, և ըստ բազմաշահ խրատուց՝
զոր ընծայէ պատմութիւն, պիտանիս ի խաղաղութեանն և ի
պատերազմի։ Եւ ուրեք քաջաբեր կամ ազգք պատե-
բազմեցք քան զոսոս, մանաւանդ թէ և հզօրագոյնք,
եւտուն ընդ միմեանս պատերազմ՝ և այս մինչ դեռ երկաբ
քանչիւր ի ծայր փառացն էին և զօրութեան։ Հռոմ և
Պարթեւստան, քաղաքք ականաւորք ի ժամանակին յայնմ
միկ ընդ տիեզերս, յառաջնումն պունիկեան մարտի
զնորձ առեալ զօրութեանն միմեանց, և կողմն երկաբանչիւր
զՀակառակորդին հմտութեանն յիրս պատերազմի քաջ ծա-
նուցեալ, յերկրորդիս յայսմիկ այնպէս հաւասարացեր
եղեն զէնք նոցա, և պատահարք այնպէս յողողոջք և
յեղեղեալք, զի որ յաղթեացն նոյն և ի յետին վտանգ
եղև կորստեան։ Վասն զհզօր զօրութեանն, եթէ այսպէս
պարտ իցէ ասել, առաւել էր ի նոսա ատելութիւն առ
միմեանս։ Ոչ ետ հռոմայեցին սրամտեալ, զի որ պար-
տեցաւն առաջի իւր՝ նոյն դարձեալ իշխէ ի վերայ իւր
յաւնել. և ասի կարբեդմացին ոչ համագործեալ
խաղալութեանն։

Զթողացուցանէ զմեզ առաջարկեալս կարգ մանրա-
պատում առնել զպատերազմունս որ եղեն Հռոմայեա
ի Սիկիլիա, ի Սպանիա և Աֆրիկէ։ Վասնզի այս ընդ
հռոմայականին կարևորագոյն ունի կցորդութեանն պատ-
մութեանն քան ընդ առաջիկայիս։ Ոչ պարտ ինչ ի կարբե-
դոնացոյն ունին ակնարկութեանն, զայն հոգացայց ասել. և
տալ, որպէս հնար է, զտեսութեանն հանճարոյ և գործա-
րութեանն Անիբաղայ՝ որ Թերևս քան զամենեսեան իսկ,
որք ի վաղ ժամանակս կացին զօրավարք, քաջ և հզօր
եղև յիրս պատերազմի։

ՈՒՍՏԻ ԵՐԿՐՈՐԴՈՒ ԱՑՍ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՊԱՏՃԱՌՈՒՍ ԿԱՌԱՒՆ Ի ՍԿԶԲԱՆՑ, ԵՒ ԱՊԱ ԶԻՆՁ ՊԱՏՃԱՌՈՒՑ ՅԱՂԵԼԱՆ

Ասարի է նախ քան զսկիզբն պատերազմիս՝ զպատ-
ճառսն բնախօսել, ևրք ի սկզբանէ ձեզնամուխ եղեալ այս ի
մէջ հռոմայեցւոցն և կարբեդոնացւոց գրգռեցաւ։
Պոլբիոս յայժ ի Ա՛ գլխոյրեանէ, ասէ Պաղիբեոս, որ
զնուաձառն Ադուստոսի Անիբաղայ՝ համարին ստոյգ

ք. 162-168։

պատճառ պատերազմիս այսմ։ Օ եղբ կարքեդոնացւոց՝ ԱՄ ԱՀ.ՀՀ
ղի վայրապար հրաժարեցէք ի Մնիկիէից ի վախճան ա-
ռաջոյ պատնիկեան պատերազմին ի կռել զդաշինսն,
աներաւութիւն և բռնութիւն հռովմայեցւոց՝ որովք զնուռ-
մեղիա աշխարհին ափրիկէացւոց պատեհ առեալ, Թա-
փեցին ի կարքեդոնացւոց անտի զԱթդիմիա, և յա-
ւելին ի վերայ նոցա հարկս, և յաջողութիւնք դարձեալ
և աշխատհակութիւնք կարքեդոնացւոց ի Պարսիս, այ-
սոքիկ եղեն ստոյգ պատճառք լուծանելոյ դաշինացն, որ-
պէս Ջիտաս Լիւիոս ի Պողբեայ առեալ սուղ բանիւ
ի սկիզբն պատմութեանն իւրոյ երկրորդի պատնիկեան պա-
տերազմիս ցուցանէ[1]։ Ջագնապէր այնմ ամծախոհ ընդ
կորուստ Մնիկիէից և Ասդրնիբէլ։ զի զՄնիկիէիս տարա-
ժամ վհատութիւնք Թողին, և զԱթդրնիբա ի խոտորութեան
աշխարհին նենգութիւնք Հանին ի նոցանէ հռովմայեցիք՝
Հարկս ի վերայ նոցա յաւելեալ։ Քանզի ոչ կամէր Ռաս-
կաս ընդ յետինն այն դաշնադրութեանն, և յարկածից ժա-
մանակին Հարկեալ կարքեդոնացիք յանձն առնուլ զայն՝
ինդրելոյն պարապ լուծանելոյ զդաշինսն։

Իբրև Հանդարտեաց աղմուկ խոտորութեանն յԱթդրնիբէ, Պ.ԱԲ.Ք. 90։
պատրաստեցաւ Ասդրնիբար արշաւել ի վերայ նումիդաց-
ւոց. և անդ առաքինացեալ, կարգեցաւ զօրավար՝ խա-
զալ պատերազմնեւ ի Սպանիս։ Ընդերաքոյ որդի նորա ՟Բ. 167։
մանուկ ինդնեմեան ինդրեր ստէպ երթալ ընդ նմա, և ԼՒ.Ի.Ա.։
մանկական խանդաղանօք, որ յայժ ազդոդակիք են ի
սիրտ հօր, ազերսեր զնա։ Ոչ Հայրն երդմնեցոյց զնա ի
բանսն անհաւատ թշնամութիւն ունել ընդ հռովմայեցիս՝
երբև ի հասակ և ի միտս լինի, և առ տարաւ զնա ընդ
իւր։

Ոչ ինչ Թերի եր Ասդրնիբար ի պատահիդ քաջի զօրա-
վարի. ընդ քաղցր և Համբոյր բարուց կցորդ եր ի նմա
արհուեստ անպարտելի և խոհեմութիւն ծայրագոյն։ Ոլորվք
ի սուղ ժամանակի, Հաւանողական կամ բռնադատական
բանիւ, առաւել քան զկէս աշխարհին սպանիացւոց կա-
լաւ։ և զամս ինն Տրամմատաւոր կացեալ անդ՝ ըստ որ
ժամին իւրում վհատեաց զկեանս, ի ձախատուր ուրեք
անկեալ փոխանակ Հայրենեացն։

Եւ կացուցին կարքեդոնացիք զԱսդրուբաղ փեսայ Յ776 · 520

1 Վիշտ եր մեծի առնն կորուստ ի հռովմայեցւոց յայմահս աշ-
Մնիկիէից և Ասդրնիբէից. քանզի խարէին, և ասյժս ի վերայ այնո-
զՄնիկիա տարաժամ վհատութիւնք բեկ յանձն առեալ։ ԼՒ.Ի.Ա.։
Թողին, և զԱթդրնիբա՝ պատերազմ

Պ-ԸԲ-Ք.101։ Նորա ընդ նորա ։ Ա՛ա զաշխարհակալումն Պաղնիոյ յա-
պահովել խորհեցաւ, և չինեաց անդ քաղաք՝ որ զրկին
օգնականութիւք, նաւակայիցն հանդստութիւք, ամրու-
թիւքն, և առ՚ի դիւրութենէն վաճառականութիւն փարթամ մե-
ծութիւք, եղև ապա մի յերևելի քաղաքաց աշխարհի,
և անուանեցաւ նոր Ալբեդոն որ արդ կոչի Ալբեդա-
գենէ ։

Յերևի յայտնապէս ՚ի գործոց երկուց այսոցիկ զօրա-
վարաց, զի մեծ ինչ ՚ի միտս իւրեանց երկնէին կալքե-
դոնացիք, առ որ և զամ ինչ անդստին ՚ի հեռուստ ուղ-
ղեալ պատրաստէին ։ Օ՞այս անագան և հոռովմայեցիք
ծանեան, և զղջացան ընդ դանդաղելն և ընդ յուշոյն
իւրեանց, զի ինքեանք որպէս ՚ի քուն ներհին՝ մինչ
Թշնամին ընդարձակեր զաշխարհակալուիս իւր ՚ի Սպա-
նիա, և չար ՚ի վերայ իւրեանց պատրաստեր։ Չանկային,
Լեհ էր Հնար, նկուն առնել զնոսա մեծաւ պատերազմաւ,
և հանել ՚ի նոցանէ զաշխարհն. բայց միւս ա՛յլ Թշնամի
ոչ նուազ աշաւոր, գաղղիացին, ուներ զնոսա հանդարտ.
քանզի կասկածելին ունել զնա առ դուրս՝ ընդ ելանել
՚ի պատերազմ։ Ա՛յնմ իրի գաղտաբար հնարիւք գաղթիս
հաստատելոյ ընդ Ա՛գրուբազայ՝ մի անգր քան զԱբե-
րոս իշխել կարբեդոնացւոց, լռեցեալ զայլոց տեղեաց
Պաղնիոյ ։

Պ-ԸԲ-Ք.123։ Ա՛գրուբազ երթայր և տարաճաներ զաշխարհակա-
Լ՚Ե. Ք. Ե։ լութիւն իւր ՚ի սահմանեալ ասպարիզին. և իւրով հաւատ
և ամոք բարոյիւք զամին զմեծամեծս աշխարհին ՚ի քնէն
յանկուցեալ յարեցոյց. և ողոքով քան բազում յաջո-
ղէին իրք կարբեդոնացւոց ՚ի ձեռն նորա ։ Ա՛ւ նա զամե-
ուք ՚ի Պաղնիա կուսակալեալ սպանաւ ողորմ մահուամբ
՚ի միջի ՚ի զօրականացն գաղղիացւոց, որ առ փոքր ինչ
գժտութիւն վրդիժնդիր եղև։

Լ՚Ե. Ք. Ե։ Ա՛ակնապոյն երիւք ամօք քան զմահ իւր գրեաց նա ՚ի
Ն Ք։ Ալբեդոն յղել առ ինքն զՆեբրիդաղ, որ եր յայնժամ
ամաց քսան և երկուց։ Ա՛յլ տարակոյս ՚ի միջի կայր կա-
տարելոյ զնմանիր նորա. քանզի աւագանին երկպառա-
կեալ եր անդստին յաւուրց Ա՛միկարայ ՚ի յանձնանձնս
իւրաց աշխարհին։ Ա՛ոաջնորդ կիսոյն Ա՛ինան, որում
տոհմ և վաստակք և նախանձ բարեաց աշխարհին յա-
ւելուին իշխանութիւն մեծ յատենի խորհրդոց. և սոքա
լաւագոյն զնաղաղալն համարէին և սերկևանն՝ որով և
զաշխարհակալուիս իւրեանց ՚ի Պաղնիա անկորուստ կա-
րող էին ունել քան զկեղակարծ եւս տաժանաւոր պատե-

բազմին՝ որուհի կորձանումամբ Հայրենեացն զրաւ լինել ԱՄ ԱԸ.ՀԿ
կասուծէին ։ Այլ կէաք բարկասեանքն անուանեալ, զի
կուսակիցք էին Խարկասայ և աղգատոհմի նորա, որք
ընդ վաղեմի համբաւոյն ի քաղաքի՝ և արուեստ վաստա-
կօքն Յիւկարայ և Յոգրուբաղայ պանծային, և սոքա
կամէին ընդ պատերազմ։ Այսր աղգաւ Կենոն յատե-
նի աւագանւոյն՝ որ գումարեցան խորհել վասն Յո-
գրուբաղայ, Ա տանդ է, ասէ, ի տարաժամ յայդմ հա-
սակի յղել ի բանակ անդր զպատանի զոր՝ որ ամբաւ-
տաւանութեաւն և իշխանական պերձութեաւ այժմկն համա-
նմանեալ չօրն, կարօտ է ընդ ձեռամբ դատաւորաց կա-
ղոյ յերկար և ընդ հպատակութեաւ օրինաց՝ զի ուսցի հնա-
զանդել, և մի՛ ձոխանալ ի վերայ այլոց։ Երկնչիմ յոյժ
գուցէ հրդեհ բռնածաւալ յարուսցէ ժամանակաւ կայծգ
այդ, որ արդ արձարծանել սկսանի ։

Յայլ նա ի զուր խօսեցաւ, և բարկասեանցն խոր-
հուրդ յաղթեաց յատենի անդ, և չոր արար Կենիքեաղ
երթալ ի Պապնիա ։ Կնդր Հասեալ զնա տեսանելիս և
զսիրտս ամենեցուն յինքն կորզեաց· զի զՅիւկար Թուէ
ին տեսանել ի նմա կենդանացեալ, զնոյն բոց յաչս
նորա ցոլացեալ, զնոյն եռանդն քաջութեաւն ի դէմն, և
կերպարանս նոյն և գնոյն նմանութեաւն։ Այլ առաւել
քան այսոքիսք՝ լաւութեաւնն իւրովք եղև մեծարոյ ։ Ա-
ինչ ի նմա թերի էր՝ որ երևելի մարդկան անկ էն, Կրբ
կայնմտութեաւն անպարտելի ի վաստակս, ժուժկալութիւն
խիստ ի կերիս մարմնոյ, արիութեաւն անսասան ի մեծամեծ
վտանգս, գթաստութեաւն անհնարին ի տագնապ գործոց,
և այն ևս զարմանալի՝ հլութեաւն դիւրապատրաստ ի հնա-
զանդել որպէս ի հրամայել, որով զօրացն առաւել ե-
թէ զօրավարին հաճոյ էր և սիրելի՝ ոչ կարեմ ասել Ա այ
յերկիս ձակատս պատերազմին եղև, մինչ դեռ կենդանին
էր Յոգրուբաղ։

Յերև Յոգրուբաղ մեռաւ, միաբանեցին կարքեդո- Պ.ԱԲ. Ջ.
նացիք զօրականաւն հանդերձ՝ կացուցանել զԿնիքեաղ ւնշ։
փոխանակ նորա ։ Ի ժամանակին յայնմիկ, կամ սուղ 3784. 626
ինչ զինի, խորհեցան կարքեդոնացիք իշխանութեաւնն մեծա-
րել զնա . և կացուցին զնա Ասփետ, որ էր իշխանութեաւն ԱՂԱՖ. Է։
մեծ աշխարհին՝ զոր և զօրավարացն տային մերթ։ Ո այս
Աւանելիոս Կեսոս ասանդէ, ունելով բանին այսպէս .
" Ա այ ընդ դառնալն ի Ալաքեդոն յետ կռելոյ դաշնոյն
խաղաղութեաւն՝ դատաւոր եկաց, որ կանխագոյն քան և
երկու ամաք կացեալ էր Թագաւոր ։

Պոզիէ. ֆ. 170-175։ Լխ. եա. Ը. ծէ։

Ի՛նքեաղ խրբև եկաց զօրավար, որպէս վէճական կալեալ զՅոտալիա և պարտս յանձն առեալ յարուցանել պատերազմ՛ի վերայ Հռովմայեցւոց, անդր զնա՛մ խորհուրդս իւր ժողովեաց. և փուճայր առանց ա՛մ յապաղելո՛ղ ոչ մի խրբև՛ի հայր իւր և՛ի քեռայր կանխեսցէ և՛ի վերայ իւր օրհաս մահն։ Ապաւ քաջութե՛ի Ապահա քաղաքս բազում, և նուաճեաց ազգս յոլովս։ Եւ որո՛մ առաւել քան զրիւրս տան էին Թշնամիք՝ բազմաթիւ յոյժ քան զիւրսն, զտեղի և զժամանակ օգնական իւր առեալ, եհար և խորտակեաց զնոսա։ Իւ՛որ չեա այնորիկ խրևեր կալ առաջի նորա. այլ չեւ ևս բարւոք Թուեցաւ նմա մարտնել՛ի վերայ Ապուննոսի [1] Թէ գուցէ պատճառս կացին Հռովմայեցիք կանխել ելանել՛ի պատերազմ՛ մինչ չեւ էր պատրաստեալ զնա՛մ կարևորս գործոյն մեծի, որպէս խրատ ընկալեալ էր՛ի Տօրէ իւրմէ։ Յոգացաւ [2] քան զնա՛մ ինչ զսիրտս քաղաքացոյն և զդաչնաւոր ազգաց պատրաստել առ ինքն, և յուսացուցանել զնոսա յանձն իւր՝ առատաբար զառար Թշնամեացն քաղելով նոցա, և զխափանած Թշնակին անսխալ Տատուցանելով։ Ա՛յսոցիկ խմաստուն Հոգով կցորդէն միշտ արգահիք։

Ապուննոսացիք կասկածեալ՛ի սպառնալեաց վտանգին՝ ազգ արարին Հռովմայեցոց գյաւաքիատացուցեալն Ի՛նքեաղայ։ Իւ նոքա առաքեցին առս՛ի Ապահա՝ ստուգագոյնս գիտել վասն իւացն, պատուէր տուեալ բազք ունել առ Ի՛նքեաղ յորժամ՛ի դէպ Թուեսցի. և եթէ նա ապահա արասցե զիրաւունս նոցա, երթալ բռ զզրել՛ի Ապրեդոն։ Հայմա՛ վայրի պաշարեաց Ի՛նքեաղ զԱպաւնոսն, զմնաւ ածեալ զի զօրավիգն մեծ էր նմա քաղաքն այն։ Ա՛ռանդ նուաւ գժուարին առնէր Հռովմայեցւոց մնել պատերազմ՛ի Պահա, և ամենայնացուցանէր զքաղաքս նուաճեալս ընդ իւրև, և անկասկած ինքն յառաջ խաղայր՝ ոչ ունելով Թշնամի՛ի Թիկանց. և զի դրամագործոյ խորհէր առնել անտի՛ի ծախս պատերազմին, և աւարհարուածէն խրախուսել զՀետ իւր

1 Ապուննոսացւոցն զքաղաքացիսոցն և զինեալսակից ազգաց զրիւս Ապուննոս՝ որ պայմանել սահմանն էին ապաբարձակալութե՛ն Հռովմայեցոց։

2 Ծանեցուցն զքաղաքացիսոցն զկնի ինքեան յարեցոյց լսելի զնոսա փարեցամ աւարաւ, և զխափանած Թշնակացն արգարութե՛ն հատուցեալ, Լխ. եա. Ը։

զզօրականն, և յինքն արկանել զսիրտս քաղաքացւոցն՝ զկապուտ կողղպուտ քաղաքին յղեալ ի Կաքբեդոն։ Օ այսոսիկ զմոտս ածեալ տատակացուցանէր զպաշտ- պանսն ի վերայ քաղաքին անխնայ. և յանձնէ օրինակ տայր զօրականին՝ գնամ աշխատութեի և զվտանգս մե- ծամեծս յանձն առեալ։

Լ՚հաս վաղվաղակի ի Հռոմի Համբաւ պատերմանն Սագունտոնի. հռովմայեցիք, որոց պարտ էր փութալ վաղագոյն յօգնութեի քաղաքին, դանդաղեցան ի խոր- հուրդս մնոտիս և ի նաիւք պատգամաւորութեն։ Կ՚ա- րս պատասխանի արար Կ՚ենիբալ՝ եթէ ոչ է լինձ պա- րապ ունկնդիր լինելոյ բանից պատգամաց. և չբան պատգամաւորքն ի Կարքեդոն, և անտի դարձան ու- նայն. զի և զտղոցն նոցա և զպատձառս Կ՚ենոնի մերժե- ցին բարկասեռիք։

Այնչ դէտ հռովմայեցիք խորհուրդս խորհէին և պատգամագնաց լինէին, Կ՚ենիբալ Հաննասդրդեալ ի պաշարումն քաղաքին՝ հարկեցոյց զնահակիչս առ սովուն վտանգի խօսել ի խաղաղութեի. այլ զայսմանս խիստ, զորս պահանջէր ի նոցանէ Կ՚ենիբալ ոչ առեալ յանձն գվեսաւորք քաղաքին՝ ածէն ի հրապարակ գնամ ոսկի և զարծաթ, զինչս իւրեանց և զգանձս հասարակաց, և սպրե- ցին ի տուր, և զանձինս իւրեանց արկին ի խարդախ անդր։ Ի նմին պահու և աշտարակ մի քաղաքին ի տեղի հա- րուածոյ թշնամեաց տապալեալ անկաւ յանկարծակի. և ընդ խրամատ պարսպին ի ներքս խուժեալ կարքե- դոնացիք՝ կալան անխափան զքաղաքն, կոտորեցին զոյր կարող ի պատերազմ, և առին աւար բազում յոյժ ի վերայ այրեցելոցն։ Եւ ինչ յաւարէ յաղթութենէն առ իւր ուներ Կ՚ենիբալ, գնամ սպառեալ ի յաջողութենէն խորհրդոցն։ Օ որ և Պողիբիոս ասէ, թէ նուաձութեի Սագունտոյ լցեալ զօրականաք փարթամ աւարաւ՝ խրա- խուսեցին յուսով հանդերձելոցն. և զմիտս աւագանւոցն հաձեաց նովաւ Կ՚ենիբալ՝ պարգևս յաւարէ անտի տուեալ նոցա։

Եւ կարեմ ասել զայս և զվհատութեի հռովմայեցւոց Պ-գԼԲ. 174.
ընդ գոյժ նուաձութեն և աղետից Սագունտոնի։ Կա- 175։
րեկոյսն ընդ չարաբաստ քաղաքին, նախատինք՝ զի Լ՚ս. բա. ծգ.
անօգնական թողին գՀաւատարիմ Հռոմայեցիսն, սրտ- մտութեի արդար ընդդէմ չարեացապարտ կաբքեդոնաց- ւոցն, երկիւղ ահագին աշխարհակալութեցն Կ՚ենիբա- ղայ՝ զոր ի բերն առ դուրս Հռովմայ թուէին տեսանել,

այնպէս խռովեցուցին զնոսա, զի զառաջինին վարանեալք՝ վշտանային միայն, և արտասուս մեծամեծս յաչացն իջուցանէին ի վերայ կորստեան քաղաքին, որ ընդ անմեղադատութեամբ իւրով առ նիզակակից նոցա անմիտ դանդաղանօքն կրեաց զայն աղէտս։ Այսպա իբրև սակաւ ինչ սթափեցան ի չարէն, խորհուրդ կոչեալ հաստատեցան ի պատերազմ ընդդէմ կարքեդոնացւոց։

ՀՐԱՏԱՐԱԿԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Պ-ԴԷՓ. 187։ ԼԽ. Բ. ԺԸ ԺԶ։

Վբողջ զամ զկարգս օրինացն կալեալ Հռովմայեցիք՝ հրեշտակս արարին ի Կարքեդոն, զի եթէ Կինթեալ ի հրամանէ աւտգանէն պաշարեաց զԱգունտոն՝ յայտ արասցեն ի վերայ աշխարհին պատերազմ. ապա թէ յանձնէի իւրմէ՝ խնդրեսցեն տալ զնա ի ձեռս իւրեանց։ Իբրև նոքա ոչ ինչ յայտ եղուն պատասխանի, մի ոմն ի պատգամաւորացն գոգ զդրօշակ հանդերձին գործեալ՝ ասէ սպառնալեօք. Կհա խաղաղութեի և պատերազմ, զոր համայ իցէ ընտրեցէք։ Կոքա եղուն պատասխանի. Զոմ քեզէն ընտրեա։ Կյս նա պարզեալ զգեստից համգերձին՝ Կնտրեցի, ասէ, զպատերազմ։ Կս կարքեդոնացիքդ զայրագին՝ Օնոն և մեք ընկալաք մնադիւթ և ընտրեցաք։ Կյս սկիզբն եղև երկրորդի պատկիկեան պատերազմին։

Պ-ԴԷՓ. Թ. 184. 185։

Կթէ ասէի արդարև պատճառս կալաւ պատերազմին այն, ասէ Պողիբիոս, կարքեդոնացիք գտանին յանցաւոր՝ տարապարտուց զԱգունտոն պաշարեալ, որ ի դաշինսն յայնմանէս արգելեալ էր՝ մի ընդ դաշնաւորս միմեանց տալ պատերազմ։ Կյլ ի վեր և խաղացեալ ի ժամանակ անդր բռնի հանելոյ հռովմայեցւոց ի ձեռս նոցա զԱրդինիա, և հարկս առանց արդարութեի ի վեր լայ նոցա արկանելոյ, հարկ է խոստովանել երկրորդումիք այսոքիւք մեղապարտ զհռովմայեցիսն լեալ՝ որ քնաւ իսկ անիրաւութեիք արարին զայն և բռնութեիք։ Յորոց կարքեդոնացիք եթէ առանց պատ ի պատ բանից անբաւ զայսպէս խնդրելին զհատուցումն երկուց այսոցիկ զրկանացդ, և մերժեալք ի նոցանէ՝ ապա յառնէին պատերազմ ի վերայ նոցա, ամ իրաւունք էին նոցա և արդարութեի։

Կնդ կատարած առաջնոյ պունիկեան մարտին և ընդ սկիզբն երկրորդիս՝ ժողովին ամք քսան և չորք։

Հաստատեցան երկուստեք և հրատարակեցին զպա- 3787. 629
տերազմն։ Իր յայնժամ Ինքնիշխող քան և վեց ամաց Պ.ղէբ. ֆ.
կամ քան և եօթն. որ մինչ չև զխորհուրդն մեծ մերկա- 187։
ցեալ հոգացաւ ամրացուցանել զԱպանիա և զՔրիկէ. և Լե. ֆա. է
և փոխեաց ընդ միմեանս զզօրս երկուց աշխարհացն, զա
փրկեցեալսն ի պահպանութիւն ածեալ Ապանիոյ, և զապա
հեցեալսն աշխարհին ափրիկեացւոց. որպէս զի հեռի ի
հայրենեացս ժրասցին ի գործ, և հաւատարմագոյն եր-
կաքանչիւր ծառայեսցեն նմա՝ իբրև պատանդք միմեանց։
Եւ եր Թիւ հանդերձ զօրացն, զորս նատոյց Ա՛փրիկէ,
քառասուն հազար. հազար և երկերիւր ի նոցանէ հե-
ծեալ։ Ւսկ ի Ապանիա՝ տուղ ինչ աւելի քան զՏնգե-
տասան հազար. յորոց էին երկու հազար հինգ հարիւր
և լիսուն՝ հեծեալք։ Օ օրալար անդ ի Ապանիա կա-
ցոյց զԱդրուբաղ գեղապայր իւր, և նաւս վաճառուն է
Թող նմա՝ պահ ունել նաւօքք ծովեզերեայց, և ետ նմա
պատուէրս իմաստութեաւ՝ որ ինչ պարտ էր առնել ընդ
սպանիացիս և ընդ հռովմայեցիս ի Ճակատու պատե-
բազմի։

Ինքնիշխող մինչ չև յառաքեալ ի պատերազմ՝ որպէս 1587. 628
զրկ զնամանէ Լիւիոս, չարաս ի Վադիա՝ կատարել Պ.ղէբ. ֆ.
զուխտ իւր, և արար անդ ուխտ նոր վասն յաջողելոյ 187։
պատերազմին՝ որ առաջի կայր։ Պողիբիոս սուղ բանիւ Լե. ֆա. է
տայ գՀաւատսի տեսութեաւ վայրացն՝ ընդ որս Հարկ էր
Ինքնիշխողայ գնալ Ա՛տալիա։ Ի Կարթագենեայ, ուս-
տի չու արար, մինչև ցԼբերոս են ասպարէզք երկու հա-
զար երկերիւր. Ա՛լբերեայ մինչև Ա՛նիոբրիոն քաղաք
փորը ծովեզերեայ՝ որ բաժանէ ընդ Ապանիա և ընդ
Վաղղիա, ըստ Ստրաբոնի, հազար վեցհարիւր ասպա- ֆ. 159.
բեզք. Ա՛նիոբրիոնէ ցՀռոդանոս գարձեալ նոյնչափ.
Ի Հռոդանոսէ մինչև Ա՛լպեան լերինս՝ հազար չորեքա-
բիւր ասպարէզք. և Ա՛լպեանցն մինչև ի գաշտս Խոս-
լոյ՝ հազար և երկերիւր ասպարէզք. ի միասին ի կար-
Թագինեայ մինչև Ա՛տալիա ութ հազար ասպարէզք։

Ի բաղում ժամանակաց քաջհմտիւտ լեալ եր Ինքնիշխող Պ.ղէբ. ֆ.
բաղ վայրացն՝ ընդ որս առաջի կայր նմա անցանել, և 188։
ծանուցեալ զսիրտս գաղղիացւոցն՝ Թէ զիա՛րդ են ընդ Լե. ֆա. է
հռովմայեցիս, և զչքնաւորս նոցա զօշաքաղս չինչն ալ

կ'ելաք կաշառօք, որպէս զի ի սէր և ի հաւատարմութենէ մասին ինչ բազմութենէ ժողովրդոյն անկասկած յուսալ ցի [1]։ Վախէր զտաժանաւոր ուղեգնացութենէ [2] Լլեհաստցն. այլ զի ոչ ի սպառ անմատոյցք էին՝ զայն շատ համարեցաւ։

Ընդ հասանել գարնայնոյ չոլ արար ի Այրարատ. նեաց՝ ուր ձմերէրն. և թէպէտ համարոյ զօրաց նորա աւելի քան զրիւրս տասն, յորոց էին երկոտասան հազարք հեծեալ և փիղք ընդ նմա քառասուն։ Ընդեալ ընդ Աբեբոս՝ նուաձեաց ի սուղ ժամանակի զայդս որ էին ի ձմեռնապարհին, ամբոխս բազում ի պատերազմունսն անդ կորուսեալ։ Ընդ եթող զԱյնմն ի վերայ ամ գաւառին ընդ մէջ Աբերոսի և պիւրենեանցն լերանց՝ մեռաւսան հազար զօրօք, և զայնս բանակին ի նոսա եթող. և նոյնպէս այլս ի զօրացն արձակեաց ի տունս իւրեանց, յուսացեալ ի հնազանդութենէ նոցա՝ թէ դարձցեն անդրէն ի տիպել վտանգին ի զինուորութենէ. և այլոց խոստացաւ ազատութենէ թէ արձակել կամեսցին։ Ապա ընդ պիւրենեան լերինս, և խաղաց մինչև ի Հռոդանոս՝ յիսուն հազար հետևակօք և ինն հազար հեծելովք, որք քան ամբոխիս բազմութեն՝ աշաւորագոյն էին քաջութենէ, և որք ի Սպանիա զամն բազում ընդ քաջաշխատ զօրավարօք մարզեալ էին ի հրահանգս պատերազմի, որպիսիք ոչ էղեն ի սկզբանէ ի Այրբեդոն։

ՑԱՂԱԴՍ ԱՆՑԻՑՆ ԸՆԴ ՀՌՈԴԱՆՈՍ

Պ-ւիէ. Ֆ. 195-200։ Լ-ս. թ. եղ Բ։

Անցեալ հասեալ ի Հռոդանոս, իբրև չորեքօրեայ ճանապարհ հեռի էր ի տեղւոջէն՝ ուր բերանացեալ հոսէ գետն այն ի ծով,[3] պատրաստեցաւ անցանել. յայն կոյս ընդ հունն ընդ այն, ուր ընդ յատակին զօրէն հանապազօր ամիսոփեալ էր գետն։ Այլ հաւ ի բնակեաց երկրին արձաթոյ մակոյկս և գետանաւս, զի էին նոցա յառաջսոյնէ ի պէտս վաճառաց ածելոյ. և այլս ևս հրամայեաց կազմել վաղվաղակի նաւակս և վարքայս և և լաստս։ Այնմ անդ կայն կոյս գետոյն բանակեալ գաղ-

1 Գիտացին զի վաղու ևս հրաց ցա մերթ ընդ մերթ կաշառօք, պատրաստ են յԱղեքսեղոյ գաղ. յոր սովի ազգն այն։ Լ-ս. թ. ի. դիտացեք. այլ զի և նմա անսասանեն՝ եթէ ոչ ամրեսցէ զգվաստրս նոր.

2 Սոյն-ինչ ի վայ տան զԱլեքսիոն։

ղեացիք՝ արգելուլ զանցս նորա, ընդ որս ի գիմաց բաղխել ոչ էր հնար։ Իսկ զօրաշատույց եղև Ներսիսեան, առաքեաց զԻնան որդի Խոմիկարայ անցանել ընդ վեր կոյս գետոյն. գիշերային գնաստ արձակեաց, ծածկել ի Թշնամեացդ զխորհուրդ իւր։ Իստ ամ ամենալուեճ նորա եղև յաջողուլեճ, և ի վաղիւ անդր անցին անխափան ընդ գետն։ Իսկ զայն օր դադարեալ յայն կոյս գետոյն ապա գիշերային զանխլաբար հասին կացին յետ կուսէ Թշնամեացդ։ Իսկ ընդ առաւօտն փող հարեալ ըստ ժամադրուլեճ նշանին՝ խաղացոյց Ներսիսեան զզօրս իւր անցանել ընդ գետն։ Նկեսք ի միոց Թամբեալ կային կազմեալ ի նաւակս, զի ընդ հասանել յայն կոյս՝ յարձակեսցին խակեակ հեծեալք ի Թշնամիս. զայլս ի լոյ անցուցանէին երկուստեք նոցին նաւակաց, զերից և զջորից միանգամայն զամնձա կալեալ այլ մի ի նաւակին։ Իսկ հետեւակք ի լաստս էին և ի վարքայս և ի նորաձև նաւակս՝ զոր ինքեանք հիւսանէին, գոգեալ զբազում ծառոց։ Օ ըստ առաքագոյնս ի նաւակաց ի վեր կոյս գետոյն կարգեաց առաջի բանուլեճ ջուրցն հոսանաց՝ դիւրել փոքունցն զանցս։ Իբրև տեսին զնոսա գաղղիացիքն զի ահա անցան նոքա ընդ գետն՝ ընդ գոչիւն ահեղ աղաղակին, որպէս սովոր էին առնել, և ընդ կոփիւն վահանաց՝ զոր վերոյ գաւաճանցն չկարէին ընդ միանամս, տարափս նետից սկսան տեղալ ի նոսա։ Իսկ ահա շուրնդն ահագին խուռապէտ ցոյց գնոսա ի Թիկանց, և դարձան տեսին ի նոյն բոլբոքեալ զնամ զվրանս իւրեանց, և ասուի և անուի պաշարեալ զանձինս ի Թշնամեաց։ Իսկ իբրև ոչ գոյր նոցա այլ ապաստան՝ ցրուեցան փախստեայ յիւրաքանչիւր շէնս, և անցին խաղաղուլեճ մնացորդք զօրացն։

Պժուարէր եր յոյժ զիրկն անցուցանել։ այլ փութով զՆաւարս իրին գտեալ՝ անցուցին և զնոսա յաւուրն երկրորդի։ Ի սաստիկայ երկայն երկերիւր ոտնաչափ, և յիսուն ի լայնուլեճ, իջուցեալ ի գետն՝ ամրագոյնս անդ եցին ընդ գետափն սուուար պարանօք, և բոլանդակ ծածկեցին զայն հողով զի իբրև ընդ տրամ երիվիր գնասցեն ընդ այն գաղանքն։ Իսկ այլ լաստ Վարիւր ոտնաչափ յերկայնուլեճ զոգեալ էր ընդ նմա դիւրախզելի, յոր գաղանքն յատաչեալ անտի անցանէին։ Օ մատակն նախ խաղացուցեալ ընդ այն, և զՆետ նոցա զօրն, իբրև ան-

1 Երեսի անչեալ նոցա ընդ վեր վտ. մուրճ Հոգւոյն սրբոյ։ բայն՝ որ ելնէն Սեաւ Ժայռ, և կայ

յուցանէին զնոսա ի լսատն երկրորդ՝ անջատեալ զայն ձգելին յայս կոյս փոքումբք նաւակօք, և այսպէս զամէ նեսեան դաթիւք կրեցեալ՝ Լդէն ի փղաց անտի որ անկան ի ջուր, և ողջք իբրև զայլսն պրծան յայս կոյս, և ոչ հեղձաւ ի նոցանէ մինչև ի մի։

ՁՈՒ ԲԱՆԱԿԻՆ ՑԱՅՆ ԿՈՑՍ ՀՈՒՈԴԱՆՈՍ ԳԵՏՈՑ

Պ-ղԽԲ. Ճ. 200. 203։ ԼՃ-. ԹՈ. ՂԵ-ԼԲ։

Ի մուտս գարնանոյն ի տուն անկան բդեաշխք երկու, կուսակալք ի Հռովմայ առաքեալ. Պ. Ակիպիոն ի Պաղեխա վաթհուն նաւաւ, երկրաբուքք Հռովմայեցի լեգէոնօք, չորեքհազար հազար հետևակախումբ և հազար երկերիւր ձեծելագունդ նիզակակիօք. և Տիբ. Սեմպրոնիոս ի Սիկիլիա, և ընդ նմա հարիւր և վաթսուն նաւք, լեգէոնք երկու հռովմայեցիք, վեհտասան հազար հետևակք ի դաշնաւոր ազգաց, և այրուձի հազար և ութ հարիւր։ Լ եգէոնն հռովմայեցի էր յայն ժամ խումբ չորից հազարաց հետևակաց և երեքհարիւր ձեծելոց։ Ի Լիլիբէոն, որ է քաղաք նաւահանգիստ Սիկիլիոյ, կալեցեալ Սեմպրոնիոս ահեղ պատրաստուբք անցանել յանկարծ յԱֆրիկէ։ Խորհեցան Ակիպիոն յաջ խորհին սպանիացւոց տալ պատերազմ, քանզի համաբերբ այսպէս՝ թէ տակաւին անդ էցի Կինիբալ. այլ հասեալ լուեալ ի Մարսիլիա՝ զի հասեալ է նա ի Հռոդանոս և խորհի անցանել ընդ այն, յապուշ եղև։ Եւ առեալ ընդ իւր հեծեալս երեքհարիւր՝ չոքաւ լրտեսել զթշնամին։ Օդոյն և Կինիբալ ընդ լսել զգալուստ Ակիպիոնի՝ եթէ հասեալ նա ի բերան Հռոդանոս գետոյ, արձակեաց անդր արս հինգ հարիւր ի նուիրագւոց անմտի, մինչ ինքն զիրակոյսն անցուցանէր յայն կոյս։

Ի ժամանակին յայնմիկ հրեշտակ հասեալ առ Կինիբալ՝ մի ոմն յիշխանաց Վաղղոյ, որ ի կողմն Պաթիոս գետոյ, պատգամաւորել յերեսաց ազգին՝ թէ սպասեալ ինամ և պատրաստ են մնալ իւրազգին միաբանել ընդ նմա ընդդէմ հռովմայեցւոց, յանձն առնոյր անձամբ առաքնորդել բանակին ընդ Ձանապարհ՝ ուր առատ գոցեն կերակուր։ Եւ ժողովեաց Կինիբալ զիւր զգօրս իւր լսել նմա թաղմանաւ. և իբրև մեհենեցաւ իշխանն, խօսեցաւ ապա Կինիբալ ընդ զօրս իւր, և մեծացոյց զպատգամաւորութեն գաղղիացւոց ի խրախոյս նոցա՝ թէ

ազգաս նիզակակից լինին ինքեանց ։ Լաւ գոլեաց զքա-
ջութիւնս զօրացն զոր ցուցին, և յապայն յորդորեաց
զնոսին առնել անուն քաջութեձ և զխառս։ Լաւ նոքա քա-
ջալերեցան, և ձեռս յերկինս ամբարձեալ՝ ասեն, պա-
տրաստ եմք զհետ քո ընթանալ՝ յո և առաջնորդես ։
Լաւ սահմանեաց Կընիքաղ չու առնել առ վաղիւ. և
ուխտս դիցն մատուցեալ և աղօթս վասն կենաց ամ
բանակին, հրաման ետ ապա կերակուր առնուլ և հան-
գիստ ։

Ի նմին պահու նուիրագործք որ ի վերայ հռովմայեց-
ւոց երթեալ էին՝ պատահեցին նոցա սաստիկ պատերազ-
մաւ, և հարուած խիստ երկուստեք ընկալան գունդք
սակաւաձեռն ։ Օ ի հռովմայեցւոց անկան հարիւր և
վաթսուն այր, և աստի աւելի քան զերկերիւր ։ Իսկ
հռովմայեցիքն յաղթող մեկնեցան ի պատերազմէն, քան-
զի նուիրագործք յետս նահանջեցան ։ Յախաշաւիղս այս
մրցութեձ նշանակ ելից պատերազմին թուեցաւ, որ ծան-
րագին և բազմաքիրան յաղթութիւն հռովմայեցւոց
անդստին գուշակեր [1] ։ Կալերեալքն երկուստեք դարձան
պատմել զօրավարաց իւրեանց զանց պատերազմին ։

Ի վաղիւ անդր չու արար Կընիքաղ ի սահմանեալ
ժամանակին, և ընդ միջերկրեայս գաղղիոյ խաղաց ընդ
հիւսիսի. իբր ոչ եթէ զի կարճ էր ընդ այն՝ ձմեռապարհ
Ալպեանցն, այլ զի հեռագնաց եղեալ ի ծովէ մի պա-
տահեցե Ալկիպոնի. քանզի խորհեր ամ զօրութեամբն
մտանել Իտալիա, և մի ձախատու պատերազմի նուազե-
ցուցանել զզօրս իւր ։ Ալկիպոն առեալ տագնապալ փու-
թացեալ, անագան ապա չետ երից աւուրց եհաս ի տե-
ղին՝ ընդ որ էանց Կընիքաղ չայն կոյս. և ոչ յուսացեալ
հասանել զհետ նորա, գարձաւ էլ ի նաւս իւրովքն հան-
դերձ՝ հասանել ունել զառաջս նորա առ ստորոտովք
Ալպեանցն ։ Իսկ զեղբայր իւր զԿնէոս մեծաւ մասամբ
զօրուն եձոյ ի Ալպանիա՝ պահ ունել աշխարհին յերե-
սաց Իգդլուքաղայ. և ինքն չու արար վաղվաղակի ընդ
Վենուա, պատուէր տուեալ զօրացն՝ որ եկն ի Վաղ-
դիա առ Պաեթոս գետով, զդէմ ունել բանակին Կընի-
բաղայ ։

Կընիքաղ հասեալ չորեքօրեայ ի կղզի [2] մի ի մէջ եր-

1 Ցախաշաւիղս այս և գուշակ կարծ ելից գյաղթութեձն ցուցեալ, մարտին թէպէտև կատարած բա- Լխ. բն. իէ։
րեյոջող հռովմայեցւոցն աւեւտր, 2 Ի բնագիրս Պադիխոն և ի
այլ ոչ առանց արեան և կեղա- Լխոխն գոտնէմ ուր վեդխ ցոյ-

կուշ գետոց, որ խառնէին անդ ընդ միմեանս, ըստբեցաւ իբաւարար երկուց եղջերց՝ որ բարձաձիգ լինէին ի միմեանց. և ետ զերաւունս Թագաւորութիւնն որում անկ էր. և նա փոխարէն բարեացն զոր ընկալաւ՝ պատրաստեաց զպաշար, զգենս և զՀանդերձ ամ բանակիցն նորա։ Այս էին յաշխարհն յայն բնակեալ Ալբրդոգք. քանզի այսպէս երբեմն կոչէին ժողովուրդք կողմանցն Կասպեական, և Հինայ և Վրաստանուսպնոյ։ Այս հասեալ Ալնիեցւոյ յաջողութիւնք անվտանգ ի Վրուանիա, անտի յառաջ խաղաց անխափան մինչև ի ստորոտս Ալպեանցն։

ՑԱՂԱԳՈՒ ԱՆՑԻՑՆ ԸՆԴ ԱԼՊԵԱՆ ԼԵՐԻՆՍ

Պ.ղ.իէ. 203. 208։ Լ.ո. թա. լ.ե։

Ի տեսիլ երկնածայր ձիւնախառաղալ լերանցն, յորս ոչ այլ ինչ գոյր տեսանել բայց հիւղս գեղջկից այսր անդր ի կատարս անմատոյց ժայռից, և հօտս և անդեայս վտիտս ընդաղմացեալս ի ցրտից, և զմարդիկ թաւահերս վայրենիս և դժնեհայեացս, յայն տեսիլ յաւելան արհաւիրք զօրացն՝ զոր ի հեռատեսութենէ ուներին, և աշիւ պակեան ամենեքին։ Այս ի վերելակել իւրեանց՝ տեսին զնմանիչս լերանցն զի ունէին զարձրաբերձ վայրս՝ արգելուլ զանցս նոցա, և հասեցան։ Ոչք եթէ դարձանմանս լեալ, ասէ Պողիբիոս, թեղուլին մնալ նոցա ի դժուարածս լերանցն, և ապա յեզակարծում ի վերայ անկանէին, կորուստ անճողոպրելի ամ զօրացն հասանել։ Իբրև գիտաց Հնիբաղ՝ զի զցայգ մեհենին նոքա ի բաց, և զերեկ պահ ունին բարձանցն, գիշերի կալաւ զայնոսիկ։ Այս ընդ առաւօտն դարձեալ գաղղիացիք և տեսեալ զթշնամին տիրեալ բարձանցն՝ ընդարմացան։ Այլ ի վերայ այսորիկ ոչ սրտաբեկեալ, քանզի սովոր էին սողել ընդ ժայռս, յարձակեցան ի վերայ կարքեդոնացւոց ընդ լեռնագնաց անցս, և նե-

ւնալ ի թեզաւոյ որ Աբարբս և Հռոդանոս խառնին յիրեարս, յորում վայրի խառացա ջերայ Լարիցան փայտ. որ յայսմի ի վրիպակ գալ. և ընդ յոմանս հանին ՀԱՆՈՒԱՅ Սկօտաս տպրէալ ԱԲԱՐՈՍ Ալառաօս։ Յակոբ Փրօնտ վիս ասէ ընկերեալ ի միասի առնել ի յերաւոիքեր օրինակաց Լիւիոսի զանոսն գետոյն որ Պիսարտա Bisarat, որ-

յոյս է ոչգետափն գալ ընկերօգոսի խառացա և Հռոդանոս գետ, և ոչ Աբարբս և Հռոդանոս. քանզի նզնին այն, զորս են բանս այս, եր ի թեզաւոյ յորում խոչ և Հռոդանոս գետ խառնին։ Այսոյ յայսմի վայրն և բնակիչսն անդ Ալաբերտ, զորոյ բանս լինին ստորոտ։

զԼԷին զնոսա յԻմ կողմանց։ Վանդլ ընդ ափափայս, ուր Հազիւ կուսան ոտիւ գտանէին, անդ և ընդ Թշնամիս դիմամարտել հարկ էր։ Ա՛յլ առաւել զնոսա տագնապեցուցանէին երիվարք և գրաստք կարասկիրք, որոց խրտուցեալ յաղաղակէ և ի գոչմանց գաղղիացւոց՝ որք զԼերկնս ահագին արձագանգօքն հնչեցուցանէին, և հառաչեալ ի լեռնականաց անտի, անկանէին ի վերայ զօրացն և գահավիժ ընդ խրբեանս հոսէին զնոսա ընդ զառ ի վայր սպառուածոց շաւղացն։ Ո՛մանք ածեալ Ա՛նիբաղայ՝ զի ի կարասւոյն կողտեսնէ և ամ բանակէին Հասանել կորուստ, փութացաք յօգնութիւն զօրացն, վանեաց զԹշնամին, և խաղացոյց զնոսա անխռով և անվտանգ. և եկն եհաս ի դղեակ մի՝ որ էր քաղաք հզօր յաշխարհին։ Այս զայն առեալ և զամ զԼճնն նորա շուրջ Քանակի, եղիտ անդ ցորեան և անասունս բազում ի լիութիւն բառականի եռօրեայ պարէնից ամ բանակին։

Ա՛յլ իմն վտանգ զՀետ յաջողուէին եհաս նոցա։ Վազ զԼայնք իբր յարկածից զրացեայն իւրեանց խրատեալ, որք չար գործեցին դիմամարտել նմա, եկին ընդ առաջ նորա՝ ածեալ զպէտս կարեւորս, և յանձն առին առաջնորդել զայրացն, պատանդս հաւատարմութեան տուեալ։ Այլ Ա՛նիբաղայ ոչ վստահացեալ ի նոսա՝ խաղացոյց յառաջն բանակին զփղակոյն և զՀեծեալսզօր, և ինքն զՀետ գայր ամբոխիս Հետեւակաց ամ զգուշութիւն։ Իբրև հասին ի կիրճ մի անձուկ և դժուարին, անդ ի բարձունսն դարանեալ գաղղիացիք՝ յանկարծ ի դուրս յարձակեցան պաշարել զկարքեդոնացիս, և քաջքինս ի նոսա տեղային, և մերձ էին ի սպառ խորտակել զանանկն, այլ Ձիգն մեծ Ա՛նիբաղայ ապրեցոյց զզօրսն յայնպիսի վտանգէն։

Այհաս ապա յաւուրն հինէլսորդի ի կատարս Ա՛լպեանցն. և անդ երկաւուրս դադարեալ Հանգչել յաշխատութենէ Ճանապարհին, ապա չու արար անդրէն։ Այլ յաւուրս աշխատութ քանզի շարխլք լերանցն ծածկեալ էին յառատ ձիւնաբերեաց, խռովէցան յոյժ զօրքն և սրտաբեկ եղեն։ Ոմանց Ա՛նիբաղ ի բարձրաւանդակաւն կալով ի տեղոջ, ուստի երևէր յանդիման աշխարհ Ամ Իտալիա, եցոյց զդաշտս պարարտաբուսս, ջրաբեր ի Պաթոսէ, զի անդ մերձ հասեալ էին, և խրախուսեաց զնոսա փոքր մի եւս քան յանձն առնուլ հասանել անդր։ Ա՛նով և երկրորդմբ, ասէ, Ճակատու պսակեալ ի աշխատութիւս մեր, և լցնէք փարթամ մեծութիւք, և

լինկջիք տեարը մեծի քաղաքին Հռովմայեցւոց՝ Ի խրա խոյս քաղցր և ողբ բանիցն, և ազդողագոյն ևս Ի տե սիլ աչխարհին քաջալերեալ յցան խնդուքիւք վատասրբ տեալ զօրականքն, և երթային զՀանապարհն. որ ոչ միայն ոչ դիւրեցաւ առաջի նոցա, այլ և առաւել վտան գաւոր էր յԷջմ զառ Ի վայր. քանզի էին վախք յամ կողմանց, և Հանապարհք նեղ և լերիծ, ընդ որս սայԹա քեալ միանգամ՝ ոչ ևս Հնար էր յոտին կալ կամ զկայ առնուլ, այլ Ի վերայ իրերացց գլորել Հարկ էր և զմի մեանս կործանել։

Հասին ապա Ի գԺուարագոյն անցս՝ Ի տեղի Թաւալա գոյն Ի քնե, և առաւել ևս այնու սեպագեալ՝ զի Հողա կոյտ ստուար փլուզեալ էր առաջի նորա, և բացեալ վիՀ խորանդունդ առաւել քան զՀազար ոտնաչափ։ Այս ե կաց արձանացաւ Հիծելազօրն Ի տեղւոջ անդ անշարժե լի. որում ոչ կարացեալ Ճնիւթաղ Հասու լինել գանգա ղելոյ նոցա՝ եկին և ետես անձամբ զտեղին զի անանց էր, Խորհուրդ կալաւ պատել ընդ երկայն Հանապարհ՝ որ ոչ եղև նման դիւրին քան զառաջինն։ Վասզի Ի վերայ բաղմաժամանակեալ սառուցեալ ձեանցն նորոգ տեղա ցեալ ձիւնք, դիւրեցին առաջնոց զընթացս՝ ոտին կռիւ պատրաստեալ նոցա. այլ երբեմն Ի կոխ նոցա և առ աԹաւր գրաստուցն լուծաւ որ չերեսս սառին ձիւնն էր, քանզի և ոչ Թանձր ինչ էր, այնուհետեւ Ի վերայ լոր ծուտ գԺուարակուռ սառին Հարկ էր ընԹանալ՝ ստէպ սահեցմամբ, ուր ոչ Թուլք էին կամ ոստք և կամ ար մատք ծառոց՝ բուռն փոցանել Հարկանելոյ Ի սայԹաքել ոտին, և ձեռամբ կամ ծնգօքն չհնուլ Ի նոսա։ Այս այն ևս չար քան զամ, զի երիվարքը ուժգին Ի վերայ սառին կո խեալ զի մի սայԹաքեացին՝ խրէին ոտիւքն Ի նմա, և ոչ կարէին չարժել զոտս՝ ըմբռնեալք խրվև յորոգայԹի. որում այլ ինչ Հնարս խորհել Հարկ եղև։

Հրամայեաց Ի Ճնիթաղ բանակել զօրացն և Հանդչել Ի սարահարԹ լերինն յԱրդարձակ վայրի, աշխատութիՀ բաղմաւ Ի բաց Ղոսեալ զձիւնն և զառաւն՝ որովք էր ծած կեալ տեղին այն։ Այս ապա երկայնամիտ արուեստիւ և եռանդեամբ մեծաւ Հատին զօրականքն շաւիղ յապա ռաժի անդ. և առ ընդարձակեցոյ զընդմիջաշաւիղն գայն՝ կոտորեցին զանտառս, որ մերձ Ի տեղւոջ անդ էին, և փայտակոյտ արարեալ շուրջանակի գԺայռիսն՝ Հուր Ի նեբբս մատուցին։ Այս բատ բաղդին եղեալ նոցա՝ Հնձեաց Հողմ սաստիկ և բորբոքեցոյց Հրատ մեծ, յորմէ բնաւ և

ասպառաժք չողացան։ Լբդ եթէ արժանի հաւատարմու-
թէ վարկանի աք գՏիտոսին Լևխոսի պատմութէն, քանզի
զայսմանէ ոչ ինչ ծանօթ մտ Պողիբիոս, հրամանն ետ
Ինքնիշաղ Թագեղ ի վերայ ժայռին քացախ բաղում՝ ¹,
որպ Թափանցեալ ընդ խնդրուածս վիմին հերձուածելս ի
բռնութենէ հրոյն՝ կակղացոյց զայն լուծեալ ի կիր։ Լը-
ասպ հատին ի նմա շաւիղ կամակոր՝ դիւրել զվայր-
էջմն, ընդ որ համարձակ զօրքն և գրաստք սղնաղեալք
և փիղք ելին ի լեառնէն։ Լյյ ի յերկարել գործոյն յա-
ւուրս չորս՝ սովամահ լինէին գրաստք. զի ի ձիւնապատ
լերինն անդ ոչ գոյր նոցա ճարակ, մինչև հասին յերկիր
միակեալ և ի պարարտ՝ ուր արօտ երիվարացն և զամե-
նայն պարէնս գտին առատութէ։

ՄՈՒՏՔ ՑԻՏԱԼԻԱ

Ել սակաւք պակասեցին ի զօրացն Ինքնիշաղ յե- Պ-գԷ. Ջ. 209. 212։
լիցն ի Սպանիոյ մինչև ի մուտս Իտալիա. քանզի Լա. Լուս. կէ։
ի Հանապարհին կորեան բազումք ի պատերազմունս
Թշնամեաց և յանցս գետոց։ Ի վերոյ բիւրուց մնացին
երեք բիւրք հետևակաց և ութ հազար հեծեալ, յետ
անցից ընդ Հրոդանոս։ Լյս ընդ Լպեան լերինս կիսոյ
չափ դարձեալ նուազեցին. և մնացին երկոտասան հա-
զար ափրիկեցիք, ութ հազար հետևակք սպանիացիք, և
վեց հազար հեծեալ, որպէս զայս ինքն Ինքնիշաղ ի սեան
ուրեք արձանագրեաց՝ մերձ ի լակինեանն հրուանդան։
Ընդ միջ վեցերորդի ամենայն՝ յետ ելիցն ի Կարթագէ
նեայ, հանդերձ հնդետասան աւուրբք անցից ընդ Լվ-
պեան լերինս, պարզեցոյց Ինքնիշաղ զդրօշակս իւր ի
դաշտավայրս առ Պադոսիս ի մուտս Տրվանին Պեդեմոն-
տեայ, յամենայն որպէս կարծեմ սեպհեմբերի։

Հոդացաւ նախ հանգիստ առնել անդ խոնջ և վաս-
տակ զօրականին. և իբրև կազդուրեցան՝ ած զնոսա ի
վերայ տաւրինացւոցն զի հետեցին նմա, և բանակեալ
զմեծաւ քաղաքաւ նոցա՝ կալաւ զայն յաւուրս երիս, և

1 Բայց յայտնի է որ այս բան, բայց զչորութենէն տարակոյս առնէ Պլինիոս՝ զի Հաքրինս զորս ոչ հերձանէ հուր, քացախ ի վե- րայ արկեալ հերձցէ. (իէ. ա։) Վասն որոյ և Լուկ Տուդոսին Հաւիթ նուաձեալ ամ իրաց. (լէ. է։)

Դիմն ի փշերալ յորամ զգայարանս Լուսաբերիոյ զարմի, զրուկ տարակոյս զարմանս նորա ասէ տիկնու. (լէ. 8։) Ապա անհատականն ևս այն բան, գիտելն Ադնիբալայ առաքուել տուղ- կայ ի լերինն անդ։

սրակոխ հրամայեաց առնել զնա. դիմախաչս։ Յորմէ բարբարոսք երկրին զարհուրեալ՝ եկին անձնատուր եղեն նմա։ Ի նոյն խորհիւն և գաղղիացիք, այլ երկիւղ զօրացն հռովմայեցւոց՝ որք գային և մերձենային, կասեցուցեալ զնոսա։ Ո մեռաւ ած Ինձիբաղ թէ պարտ է ածապարել յառաջ խաղալ և արիանալ ի պատերազմ, զի որ գայթ ի գայթի կայնի ազգք յիւրեանց անկանին աներկեւեան։ Զայն հնարին երագութենէ Ինձիբազայ պակեան և զարհուրեցան հռովմայեցիքն։ Հրամայն առաքեցին ի Ակիլիա առ Աեմպրոնիոս՝ գալ հասանել յօգնութիւն աշխարհին. և Պ. Ակիպիոն բդեաշխ ատեպ տագնապաւ խաղաց ի վերայ Թշնամւոյն, անց ընդ Պաճոս, և եկեալ բանակեցաւ առ Տիկինոն գետով [1]։

ՁԱԿԱՏԱՄԱՐՏ ՀԵԾԵԼԱԳՈՒԻՆ ԱՌ ՏԻԿԻՆՈՆ ԳԵՏՈՎ.

Պ-ԷԲ. Ք. 214-218։ ԼՒ. ԻՍ. ԼԶ. Ի-Ե։

Վայրն հանդէպ միմեանց գունդքն երկոքեան, և զօրավարքն երկաքանչիւր խօսեցան ընդ զօրս իւրեանց։ Ակիպիոն զիաւս աշխարհին յուշ արարեալ իւրոցն և զարուեստ գործս նախնեաց նոցա, ասէ. Ինչուշտ է ձեզ յաղթութիւն, ո զօրականք, ի պատերազմի՝ զոր ընդ կարքեդոնացիսն հանդերձիք պատերազմել. ազգ՝ զոր ի նուաղս բազումս նուաճեցաք, և ի քսան ամաց հարկատու էն մեզ, և ի վաղնջուց սովորեալք մեզ ի ստրկութիւն։ Յաղթութիւն, զոր ի վերայ այրընտիր հեծելոցն կալայք, և անխոթ առհասարակ յաջողութեան մեծի պատերազմիս։ Ո ընտիրս բանակին վանեցաք Ինձիբազ ի լերինս, և ապրեալք նորա տկարացեալ են ի սովոյ և ի ցրտոյ, յաշխատութենէ և ի վշտաց, որք ընդ տեսիլ երեսաց ձերոց՝ իբրև ցորս գիշերականս հալածեսցին։ Վաջութիւն ձերում անն ոնի ոչ միայն Իտալիա ի մեծի վտանգին, այլ և Հռովմ. քանզի բազդ նորա ի պատերազմս յայս հաստատեալ է. որում չիք այլ զօրութիւն հանել ընդդէմ թշնամեաց։

Ինձիբազ զիւրմն Թանձրամիտ՝ ընդ այս նոցա խորհեցաւ յորդորել նախ քան ընդ լսելիս, և մինչ չև ինչ խօսեցեալ ընդ նոսա՝ ի տեսիլ գործոյն եռանդն ած նոցա։ Ի լեռնականացն գերելոց, որ էին ընդ նմա, զի-

1 Գետ էտրի Իտալիոյ ի Լիգուրիա։

նուոքեաց զբազումն, և երկու երկու ՚ի կռիւ մատոյց յանդիման ՅՀ՝ բանակին՝ ազատուԼԵՅ խոստացեալ յաղթ թողացն, և պարգեւս մեծամեծս։ Իսկ ՚ի խնդուԼՅենէ մեծի բարբարոսացն, որով խրախուսեին ՚ի կռիւ ակն կալուԼՅԵ մրցանակին, պատնառաս առեալ Ներսիսեան՝ մեծահայիւն զառաջնակաց պատերազմին Ճշգրիտ պատկեր եցոյց իւրոցն, որոց ոչ գոյր հնար փախստի, և կամաւ ԼԵԼ ակամայ՝ սակաւն հարկ էր նոցա յաղԼԵԼ կամ մեռանել, զի տպրեսցին յանքաւ աղետիցն՝ որ սպառնացեալ էին փախուցելոցն վատուԼԵ ՚ի պատերազմէն։ Օ մեծամեծ վարձս վաստակոց նոցա յուշ արար՝ զեՓուԼԵԼ ՅՀ Իտալիոյ, զազգմահարուստ և գմեծապանծ քաղաքին հռովմայեցւոց զաւար, զյաղԹուԼԵԼ՝ որպիսի ոչ ոք կալաւ յաշխարհի, և զպարծանս յաւիտենական։ ՅՐհամարհ եցոյց նոցա զզօրուն հռովմայեցւոց. Իրն ՚ՀԼԵ, ասէ, մնոտի՝ և ոչ կարէ շրտուցանել զոր ՚ի ՀեՓակլեան արձանաց այսր յաշխարհիդ Իտալիոյ արշաւեցին անվեհեր ընդ ազգս ամենից։ Իսկ ընդ Ակիսխանի հաւատարեցոյն Ներսիսեան, ընդ վեցամեայ զօրավարին՝ մեռաւն մահապարտ և ծնեալ ՚ի վտանս Միխլսրայ Հօր իւրոյ, որ զսպանիացին նուաՃեաց և զգաղ ղհայիս և զբնակիչս Ալպեանց, նա և զԱլպեանն իսկ ղլերինս։ Իր զգրգռեաց զցասումն զօրականին ընդ ժպրխուԼԵԼիւն հռովմայեցւոց, զի խնդրեցին զնա մատնել ՚ի ձեռս իւրեանց Հանդերձ զօրականաւն՝ որ առին զՄագուստոն, և վառեաց զնախանձ նոցա ընդ դժոխսրմեր սէգ և հպարտ ամբարտաւանուԼԵԼ նոցա, որ պարտ Համարէին ամենեցուն Հպատակել ՚ինքեանց, և օրէնս կամին տալ ՅՀ երկրի։ Օ այսոսիկ երկուտեաք խօսեցեալ ընդ զօրականին՝ կազմեցան ապա ՚ի պատերազմ։ Ակիսխան կամուրջ արկեալ ՚ի Տիկինոն՝ անցոյց զզօրս իւր յայն կոյս. այլ նոքա յերկուց ինչ չարեաց գուշակուԼԵԼ խոռոչեալ և զարհուրեալ էին. իսկ կարգեդմացիք լն նախանձու խրախուսէին։ Օ որս դարձեալ վերստին քաջալերեաց Ներսիսեան խոստմամբք. և ՚ի յաղԹ վիճակ զգառն զոչինչս, մաղԹեաց յՅՐամագղպ զնոսն հատուցանել նմա՝ ԼԵԼ զրժեսցէ խոստմանցն իւրոց։

Ակիսխան զաղեղնաւորս և զՀեծելագունդն գաղղիացի առաջի բանակին կացոյց. և զՀետ նոցա զընտիրս ՚ի հեծելոց նիզակակից ազգաց, և մեղմով խաղացուցանէր զնոսա։ Իսկ առաջ եղև նմա Ներսիսեան Համագունդ հեծելովքն. զսանձաւորս ՚ի միջոցին Ձախատեցուցեալ և յաջ

մէ և յահեկէ զայրութեան նուիրակացն՝ չուրջ պատեալ զԹըշ-
նամին։ Օ օրալարք և հեծեալք միով խորհրդով սկսան
ի մարտ։ Յառաջնում ճակատու զօրականք Ալխոմանի
Թեղեաւգինք այն ինչ քուռն յաղեղն արկանէին ի նե-
տադրութիւն, զարհուրեալք ի գրոհելոյ հեծելոց Թըշ-
նամեացն՝ թէ գուցէ առ աճապար երիվարաց նոցա կոխեա-
ցին, յետս ընկրկեցան ամրանալ յանջրպետս գումար-
տակացն։ Յերկարեաց գործ պատերազմին՝ քաջք քա-
ջաց պատահեալ։ Լաւ բաղումք ի հեծելոց իջեալ երկ-
ոտեաք յերիվարացն՝ խառն ի խուռն մարտնչէին հե-
ծեալ և հետեւակ։ Յայնմ վայրի նուիրակացիք պատեալ
զԹշնամին և անկեալ յետ կուսէ ի վերայ աղեղնաւորացն
վախուցելոց՝ սմբակակոխ զնոսա արարին։ Լաւ որ յա-
ւաղն քաջալեթք ի միջավայր բանակին տային պատե-
բազմ հնոլմայեցիք, զի և յամբոխէ դիակացն անկե-
լոց յերեսս դաշտին՝ առաւել բազմաւ կարգեդնացիք
էին, խառնապեցան ապա յարձակմամբ նուիրակացոյն.
մնուատանդ զի և բդեաշխն նոցա վիրաւորեաց, և ոչ և
կարէր պատերազմել։ Օ որ որդի նորա, որ էր յարձակ-
եօթն և տասն ամաց, արիաբար քաջալեթք ապրեցոյց
զհայր իւր ի ձեռաց Թշնամեաց. այն որ յետոյ փառաւ
բազմաք ի գլուխս ածեալ զայս պատերազմ, Ալբրիկեցի
անուանեցաւ։

Խզեաշին խոց կարեւվէր՝ սակայն անխոտով կալեալ
զկարգս պատերազմին, յետս նահանջեցաւ ի բանակն.
չուրջ պար առեալ ի ստուար հեծելազնդէն՝ որ պատսպա-
րէին զնովաւ զհետ և անձամբ. և զօրն ամ գային ըզ-
կնի նոցա։ Հասին ստիպաւ ի Պադոս, և անցեալ ընդ
այն՝ հատին զկամուրջն առ ի խափանելոյ զանցս Ալնի-
քաղայ։

Օ այս առաջին յաղթութէն հեծելովքն խրոխտ կա-
լաւ Ալնիքաղայ. յաղագս որոյ զօրութէն մեծ կարգեդո-
նացւոց բանակին յետ այնորիկ ի հեծեալն համարե-
ցաւ։ Ո՝ ասն այնորիկ և հնոլմայեցիք խոյս տային այ-
նուհետեւ յընդարձակ և յանուրբք դաշտաց, որպիսիք
էին և հովիտք Ալբեանցն լերանց առ Պադոսիւ։

Օ հետ պատերազմին առ Ջիվինան գետով գաղղիա-
ցիք որ չուրջ քնակեալ էին՝ փութացան եկին անձնատուր
ղեն Ալնիքաղայ զնուորել նմա, զնմ հոգս պիտոյից
անակին յանձն առեալ։ Ի Բանդի այս ակնկալութիւն,

1 Ուրս էրիվերտան ու սանյո էին, ու էրեսունս, և ու Բամբ։

որպէս ազդ առնէ Պողբիոս, համարձակեցոյց զՀանճա-
բեղ և զքաջ զօրավարն՝ սակաւաձեռն և վաստակաբեկ
զօրականաւն մնանել ՚ի մարտ, յոր հարկաւորեաւն խոկ
էր. զի ոչ էա հնար էր նմա այնուհետեւ դառնալ յետս,
թէ և կամէր. և ոչ զոյր նմա այլ ապաւէն ՚ի մեծի
վտանգին՝ բայց միայն նիզակակցուն գաղղիացւոց, զորս
պատերազմաւն այնուիկ կարօղ էր յինքն արկանել։

ՁԱԿԱՏԱՄԱՐՏՆ ԱՌ ՏՐԵՐԵԱՒ

Ասմպրոնիոս բդեաշխ հրամանաւ ծերակուտին անց ՚ի Պ. Ք. ամ. 320-227։ Լ. ամ. ք.
Սիկիլիոյ յԱրբիմնոն, և անտի ՚ի Տրեբիա գետ փոքրիկ
՚ի Լոմպարտիա՝ որ անկանի ՚ի Պադոս, ոչ ինչ կարի հե-
ռի ՚ի Պլակենտիոյ. և խառնեցաւ անդ ընդ բանակին
Սկիպիոնի։ Ընդր հասեալ և Ընիբալ բանակեցաւ
յայնմ կուսէ գետոյն. և ատեպ մնաւորութիւ բանա-
կացն զրգռէին ՚ի սկզբնաւաւիղ մարտին։ Այլ ՚ի միւմ
ուրեք ձակատու զօրացեալ Սեմպրոնիոս հեծելովքն ՚ի
վերայ մասին ինչ զօրացն կաղքեդոնացւոց, և կալեալ
յաղթութիւն կիսամասնեայ, ամբարտաւանեաց ընդ քա-
ջութիւն իւր, և ընդ այն զոյգն յաջողեաւծ իւրոմ յաղ-
թութիւն մեծ արարեալ պարծէր՝ յառաջումն ձակա-
տու նուաճելով զթշնամին, յորմէ իշխանակիցն իւր
պարտեցաւ. և որպէս թէ քաջութեամբ իւրով խրա-
խուսեալ զՀռովմայեցիս զորտաբեկեալսն Այպա հաստա-
տեալ ՚ի միոս տալ անգանդաղ զվերջին պատերազին՝
խորհեցաւ հարցանել նախ զՍկիպիոն. բայց նա ոչ հա-
ւանեցաւ ընդ այն, այլ դեռընտիր զօրականին գձմեռն
զսոյն պարապ տալ առաւել օգուտ համարեր՝ զի ուսցին
՚ի պատերազմ։ Այս գաղղիացիքդ, ասէ, յոգդողդք և
կարձամիտք տակաւ ՚ի բաց թօթափեսցին յԸնիբա-
զայ. և ինձ լիցի ողջանալ ՚ի վերաց աստի, և մարտա-
կից լինել ՚ի վերայ հայրենեաց։ Այս յոյժ աղաչեաց զնա
մի փութալ ՚ի գործն յայն մեծ։

Այլ զնա ոչ հաւանեցուցին այս զօրաւոր պատճառք։
Այն առ նմա վերստաւան հազար հռովմայեցի զօրականք,
և բիւրք երկու գաշնակիցք՝ ՚ի վերայ հեծելոցն. քանզի
ընդ այն ժամանակս բդեշխին երկոցունց ՚ի միասին այս-
քան էին զօրք ՚ի բանակի. Հաւասարէին գրեթէ և
թշնամիքն բազմութիւ։ Այս ոչ ինչ թուէր նմա խափան
առ ՚ի չպատերազմելոյ, և ասէր Համբաձակ. ամենևքեան

կամին ընդ պատերազմ՝ բայց միայն յիշխանակից իմն. որ ի վերացն, զոր ընկալաւ, Հոգւով առաւել քան մարմնով ակարացեալ՝ ոչ Հանդուրժէ և զՀառաս պատերազմի լսել։ Այլ ինչ արժան Թողուլ և ամ բանակին վատասրտել ընդ նմա։ Սակայն ամ կայ Ակիպիոն. Թերևս զի բգեաշէս ոք այլ Հասանէ ի Թիկունս, կամ լեգէոնն նոր։ Օ այսոսիկ լու ի լու զօրացն խօսէր, և անդէն իսկ ի խորանին Ակիպիոնի։ Ուանզի ժամանակ իշխանութեանն իւրոյ մերձ ի վախճան Հասեալ էր, և խնայր Թէ գուցէ այլ ոք փոխանակ իւր կացցէ՝ մինչ չև էր վաստակել զգործ քաջութեն, և զի դադեալ զնօքեծու թեն իշխանակցին պատեհ առեալ՝ միայնակ խորհէր տանել զՀառաս յաղթութեն։ Այլ փառամոլութեն ոչ Հայեցեալ ի դէպ ժամանակին, ասէ Պողբիոս, և ի նոյն վրիպակ խորհուրդ յամառեալ՝ Հրամանն ետ զօրացն կազմել ի պատերազմ։

Ընդ այս կամեր և Ուենիբաղ, գիտելով զի զօրավարք որ ի տար աշխարհ յերկիրք Թշնամեացն երթեալ ի գործ մեծ՝ ոչ յայղեսցի եԹէ ոչ նորանոր արուեստք գոյս նիզակակցացն սինդ կալցի. և զի գիտէր դադեալ զի դեռ ընտիր և մանրաժ են զօրք Թշնամեաց, և ցանկայր յօգուտ արկանել զեռանդն գաղղիացւոց՝ որ ծարաւի էին ի պատերազմ, և զակարուԹեն Ակիպիոնի զի ոչ կալ բեր մտանել ի պատերազմ։ Հրամանն ետ Մագոնի ի դարանի առնել արս երկու Հազար, Հեծեալ և Հետևակ, Թփամուտ ի խորաձոր գետափանցն ընդ միջ երկուց բանակաց։ Ուանզի յաձախագոյն յայղոյէ դարան ի գիւրի ի Թփուտս, որպես եը տեղիս այս, քան յամտառս՝ ուր կասկածէն միշտ Թշնամիք։ Այս ասպ Հեծելոցն նուա միպացւոց պատուէր ետ անցանել ընդ Տրեբիա, և ընդ այդն յարձակել մինչև ի սահմանս բանակին Թշնամեաց և զրգռել զնոսա ի մարտ. և անդրէն յետս գադձեալ ընդ գետն՝ ձգել զՀռոմմայեցիսն զՀետ իւրեանց, որ և յայղոյեաց իսկ։ Ուանզի Սեմպրոնիոս անժայժ եռանդեամբն ձակատեցոյց նախ ընդդէմ նուամիպացւոցն զՀեծեալս իւր, ապա զաղեղնաւորս, և ապա զամ բանակին, Այլ նուամիպացւոցն պատՀառանաւք ի փախուստ դարձեալ՝ զՀետ իւրեանց ձգեցին զՀռոմմայեցիս, և անցին անվտախն ընդ Տրեբիա՝ այլ մեծաւ աշխատուԹեբ. քանզի զի փարհաներ ջուր մինչև յանկս նոցա. զի էր գետն յորդեալ յուղիւք՝ որ ի գիշերին յայնմիկ իջին ի մեր ձակայ լերանց. և ժամանակն մերձ ի ձմերայինն արևա-

զարձ յեղկելային յամենան դեկտեմբերի, և ձիւնաբերը
և ցուրտ սաստիկ։ Այլ Թող զայս, հնովմայեցիք ան-
սուաղք էին և անպատրաստ ամենևին. իսկ կարքեդոնա-
յիք կանխագոյն հրամանաւ զօրավարին կշտացուցեալք և
գինեզինք, զարմանեալ վերիվարս իւրեանց և օձեալ
իւղով, և առ հրով սպառազինեալք։

Այսու պատրաստութեամբ մնին նոքա ի պատերազմ.
օրոց հնովմայեցիք յերկար ղգիմ կալան քաջութիւն, այլ
քաղց և ցուրտ և խանջ կիթուցեալ նուաղեցուցեալ էր
զնոսա։ Իրով հեծեալք կարքեդոնացւոց առաւելեալ
յոյժ քան զհնովմայեցւոցն և Թուով և զօրութիւ, հա-
րին վանեցին զնոսա։ Այնուհետև այլ աղմուկ շփոթի անկաւ
ի հեռւսկն. քանզի գունդն գարմանամուտ պատեհ
գտեալ հասին կուսէ և աստիպեալ հարեալ խոր-
տակեցին զնոսա։ Իսիւր մի և աւելի ի զօրականէն քա-
ջութիւն ընդ մէջ գաղղիացւոցն և ափրիկեցւոց անցեալ՝
արարին ի նոսա կոտորած մեծ. այլ ոչ կարացեալ ապա
յիւրեանցն ձեռնտու լինել կամ անդրէն ի բանակն
դառնալ, քանզի հեծեալք նուաճեցուց կալան զանց
նոցա, և գեան և հեղեղք անձրևաց խափան եղէն, խոյս
ետուն կարգաւ պատերազմի ի Պլակենտիա։ Այլք գրե-
թէ ամենեքին կորեան յեղերս գետոյն առ ածուր փղացն
և երիվարաց։ Այս որ միանգամ փախստեամբն ապրե-
ցան՝ եկին յարեցան ի գունդն յայն. և ինքն իսկ Վկե-
սիոն ի միւսում գիշերի անդր ի Պլակենտիա չորաս։
Ի նմ Թերի էր ի յաղթութենէ կարքեդոնացւոցն,
և Թիւ կորուսելոցն ի նոցանէ սակաւ, այլ ցուրտն և
անձրև և ձիւն յերիվարաց նոցա զբազումս կորուսին,
և զիիղն զամ՝ բաց ի միջէն որ ապրեցաւ։ Ի պատե- Պ.ԱՒԷ. Է.
րազմէն յայնմանէ և առ յապա յաջողեցին իրը հնով 228։
մայեցւոց ի Սպանիա. քանզի Կն. Վկիպիոն նուաճեաց Լիս. բա. ի.
կալաւ զամ վայրս մինչև ցԻբերոս՝ խորտակեալ զբա-
նակ Վհննիբ. և զնա ինքն ձերբակալ արար։

Ո Ժամանակ ձմերայնոյն Վհննիբաղ զզօրականն ի ձմե-
րոցս արձակեալ, խորհէր յինքն արկանել զնաւակիւս աշ-
խարհին։ Այնմ իրի զամ գերին, զոր ի նիզակակոցաց
հնովմայեցւոցն կալեալ էր, ձրի առանց փրկանաց ե-
Թող գնալ ի տունս իւրեանց, և ասէ. Վհանգի ոչ ի
պատերազմել ընդ ձեզ եկեալ եմ, այլ ազատել զ-
ւնա և պաշտպանել ձեզ յերեսաց հնովմայեցւոց։

Իբրև ձմեռնն անկանէր՝ փութացաւ չու արար Ա-
տրուբիա, քանզի դժկամակեին ընդ նմա գաղղիացիք՝

տաղտկացեալք ընդ յաճել զօրաց նորա յերկիր իւրեանց, և զի ինքեանք կրէին զհամ ծանրութեան պատերազմին՝ զոր միաբանեցին ածել յերկիր հաստակաց Թշնամւոյն. և զի դարձեալ յանդուգն արշաւանաքն ահաբեկեսցէ զազգս Խոտլոյ՝ մինչև անդր ի Հռոմ մտեալ պատերազմ, և յաւելցէ ի խրախոյս զիւրսն և զդաղվիացիս աւարառ Թշնամեաց։ Իսկ ընդ Պահնիեանն լերինս եղև մնրկի ուժգին, և զբազումս ի զօրաց նորա սատակեաց. որպէս զի ի կորուստ նորա ցուցեալ և անձրև հողմք և կարկուտ դաշինս ընդ միմեանս Թուէին արաբեալ։ և վասնզի Պլեմանցն լերանց Թեթև էին անդ յայս կարբեդոնացւոց, Իբր դարձաւ Պինիքալ ի Պլեմեոս, և երկրորդ անգամ պատերազմ գումարեալ ընդ Ալեմպրնիոսի, քանզի դարձեալ էր նա ի Հռոմէ, երկուստեք էղեն անպարտելի։

Ի՝ն. խա. ծ. Պ. Ա՝ն. ի՛ր. ա. Ն՝ղդ. Հռոմ. ա՝ն. ՅԱյնմ ժամանակի էին զօրքն՝ հնարս որպէս արդարև կարբեդոնացի հնարեցաւ Պինիքալ ի Վանդի զհետս ըստ այլ և այլ չափոյ հասակի, և կեղծամն ըստ նմին պատշաճութեան, և ծպտեալ նոքօք մերթ ի կերպարանս ծերոյ և մերթ յերիտասարդի շրջէր անկասկած. մինչև հաղիւ ձանաչէլ զնա և բարեկամանց իւրոց, Թէպէտ Թէ օտարաց անցաւորաց։

Ի Հռոմէ կային բդեաշխք Կն. Պերուիլիոս, և Կ. Փլամինիոս։ Պզգ եղև Պինիքալայ Թէ Փլամինիոս հասեալ է Պերետին քաղաք Պետուրիա, և խորհեցաւ հանդիպել նմա պատերազմաւ։ Իսկ առ փութոյ համաձօտ կալաւ ճանապարհ զգաճուարակոին և զանպնալի, ընդ աղտիւր մեծ՝ ուր դառնաշխատ եղև զօրականն, զբոլոր տիւս և գիշերս ընդ ջուր ընթացեալ, և ոչ տուեալ նմին աւցին։ Իբր ինքն Պինիքալ նստեալ ի փղին, որ ի կատարածէն միայն ապրեցաւ, նեղութիւք բազմաւ եհաս յայն կոյս. մինչև յանկնդհատ տքնութենէն և ի սովոխեցն Թանձռնից, որ վերածխեին ի տղմուտ վայրացն, և ի դժուռակ օդոյն խստութենէ կորոյս զմի յաւացն։

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ԱՌ ՏՐԱՍԻՄԵՆԵԱՒ ԼՃԻՒՆ

Պ-ԷԲ. Գ-251-258: ԼՒՒ. ԻԲ. Գ-Ը:

Ի բազմամեայ տեղւոջէն Կընիբաղ Հաւատալի զերծեալ, Հանդոյց առ վայր մի զզօրսն. և ապա ած բա նակեցոյց զնոսա ընդ Կրետին և ընդ փեսուլա, յերկիր Ձոխս և բարեբեր ընդ ամ աշխարհն Լատրուբոյ: Հոգա ցաւ գիտել նախ զընաւորութիւն հոմանիցեցւոյ բդեշխին՝ որով իւիք տիարանայր նա, զի զայն յօգուտ իւր արկ ցէ. յոր Պողբիոս խրատէ նախակրթիլ առն զօրավա րի: Լուէ ծանեաւ զնա այր ինքնահաճ, յանձնապաստան յանդուգն, խրոխտ և վառասեր՝: Օ որ ի բնաւորա կանն ըմբռնել խորհեցեալ՝ սկսաւ գրգռել ի յան դգնութիւն, ապականեալ հրձիգ արարեալ առաջի նորա զամ անդաստանս: Իակ նա որ ի բնէ ոչ կարէր հան դարտել ի բանակի՝ թէպէտ և ոչ խլրտեր թշնամին, առաւել և յայնժամ՝ ի տեսիլ աւարհարութիւն և ապա կանելոյ երկրին նիզակակից բարեկամացն զայրացեալ, նախատինս իւր համարեցաւ և վաստութիւն Թողուլ նմա ասպատակել համաձակ յԻտալիա, և դիմել անխափան մինչև ի պարիսպս Հռոմայ: Լուէ մերժեաց զխորհուրդս քաջացն՝ որ խմաստութիւն խրատ տային նմա մնալ իշխա նակին իւրում, և արգելուլ միայն առ ժամն զաւարա ռութիւն Թշնամեաց:

Վասն և մերձենայր Կընիբաղ ի Հռոմ առ Ցրասխ մինեաւ Լճիւնչայմն, և զկորտնա ի ձախմէն ունելով: Կզգ եղև նմա թէ փլամինիոս Հասանէ գՀետ՝ տալ պա տերազմ, և խոպանել զանցս նորա. և տեսեալ զտեղին դիպուն մարտի՝ կազմեցաւ ի պատերազմ: Ցրասխմինեայ Լճին և լերանցն Կորտնայ էր ի միջոցին կապան, որ ա ձեր ի ձոր մեծ գաշտաձև, աստի և անտի մինչև ի սպառ գօտիք բլրոց բարձանց, և ի սպառուածին բլուր սեպա ձեալ գծուարամատոյց: Զոր երթեալ բանակեցաւ Կին նիբաղ մեծաւ մասամբ զօրացն, անցեալ ընդ Հովիտն երկայնաձիգ. և ի վերայ բլրոցն որ ընդ աջմէ կէին՝ գա բան կացոյց, և զկէս ի հեծելոց յետ կուսէ բլրոցն մինչ ի մուտս ձորոյն ինքեան, ընդ որ Հարկ էր փլամինիոսի ան ցանելու: Իակ նա խուճապաւ գՀետ մնեալ՝ Հասանել տալ

1 Ցանդուգն և խուճապող՝ նէլ կամեցեալ՝ զրգռէր և զայրա թուէր ի գործ. և գիւրագայթ ցուցանէր կարգեդոնացին: ԼՒՒ. զնա ի բնաւորական կերպ առ. ԻԲ. Գ:

պատերազմ՝ ի տարաժամու աւուրն եկն ի կապանն . և անդ զկիրեղն զայն առ Լշիւն երեկօթեաւ, ընդ այգն եամուտ ի ներքս ։

Զօտազօրդ գնա Կիւնիբադ յառաջ խաղալ բանակաւն մինչև գՄՂ ձորոյն մեծի . և իբրև՝ ի սպառուած հովտին մերձ եկն յառաջապահքն նորա , փող եհար , և հրամանս ետ իւրոյն ելանել՝ ի դաշտսաց շուրջ պատել զԼշնաձմին ։ Ել ե հարկ ասել զխուճապ տագնապին հռոմկլայեցւոց ։ Կամզի չև ձակատ յարդարեալ և ոչ ի զինս պատրաստեալ, և ահա աստի և անտի ի դիմաց և ի թիկ կանց խուժեցին Թշնամիքն ։ Կէս խառն ի խուռն ամ զբացն շփոթեալ, միայն Փլամինիոս ի հաստարակաց վշտուԹենն անվհետքն՝ ձեռաք և ձախիւ խրախուսեր զնոսա, սրով սուսերի առնել Ճանապարհ ընդ միջ Թշնամեաց ։ Կայր աղմուկ շփոթի և Թշնամեացն գոչիւն ահաւոր , և մանաւանդ Թանձրամած գողանալին զտեսիլ յայց և զլուր յականջաց ։ Կպա իբրև պաշարեցան՝ ի Թշնամեաց առ Լշիւն անփախստան , հարկեցան դիմագրաւել և հզօրապես ընդ ամ կողմն տալ պատերազմ, այնու կատաղուԹիՀ մարտուցեալք՝ զի և զսահմանուԹիՀ երկրին ոչ գիմացին, որ ի ժամանակին յայնմիկ եղեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ՝ տապալեաց զբաղաքս ի հիմանց ։ Ի գաղ զնացուց անտի ոչ կԱնտուբերաց ի խառն անդ սպան զվկամինիոս , և հռոմկլայեցիքն յետս ընկրկեալ նախ , ապա ի փախուստ դարձան ։ Յոլովք ի նոցանէ ընդ լերինս փութացեալ՝ հեղձան ի ջուր, այլք ընդ լեռնակողին դիմեալ՝ մնանեցան ի ձեռս Թշնամեաց յորոց փախչէին ։ Կինայն վէց հազար այր ընդ միջ յաղԹականաց անկան ի տեղի մի ամուր , և նոքա դարձեալ ի վաղիւ անդր գերեցան ։ Կէս անկան ի պատերազմի անդ հինգետասան հազար այր ի հռոմկլայեցւոց , բիւր մի ի նոցանէ ընդ այլ և այլ Ճանապարհ գերծեալ ի Հռոմ։ Օ որ ոք ի կատինայ ի գաշնաւորացն հռոմկլայեցւոց գերի կալեալ էր Կինիբադ՝ զամենեսեան ազատեցոյց առանց փրկանաց. և զդիակն Փլամինիոսի ինդրեաց՝ յուղարկաւորել գնա, այլ ոչ եգիտ ։ Կպա Հանդուցեալ զզօրսն՝ անկելոցն յիւրոց սպային, երեսնից արանց, արար յուղարկաւորուԹիւն ։ Իակ ընդ բնաւ անկեալքն ի բանակի նորա եղեն հազար և հինգ հարիւր այր , յորոց յոլովագոյնք էին գաղղիացիք ։

Աւուրհանդակս արար Կինիբադ ի ԿարԹէդոն աւետաւ տրոս յաղԹուԹեցն՝ զոր ի սկզբանէ մինչև ցայժմ կա-

լաւ յիշատակ։ Ուրախ եղեն կաթողիկոսացիք ընդ յաջողութեան, և հանդերձելոցն յուսով խրախուսեալ ոգիք նոցա՝ մնադիւրագոյն պատրաստելին զամ պէտս օգնականէ՛ ի յաջողութեի պատերազմին Յունից և Պարսից։ Յայնժամ սուգ և արցունիւք զհոմայեցիսն կալան՝ յորժամ՝ ի քաղաքաժողով հրապարակի ելեալ՝ ի բեմ հաղարապետ * Ժողովրդեանն գոյժ ետ նոցա՝ թէ Պատերազմ մեծ կորուսանք։ Զամ փոյթ ի մէջ առեալ ծերակոյտն վասն բարեաց աշխարհին, խորհուրդ կալաւ յահեղ և ի տխրող վտանգին ի հզօրագոյն հնարս ձեռն արկանել. և կացուցին իշխանապետ զԱլուհետոս փաբեոս զայր երևելի ազգաւն և խնամտութիբ։ Այն օրինաք ի Հռոմ դադարել ամ իշխանութեանց ի կալ իշխանապետին, բայց ի հաղարապետաց Ժողովրդեան։ Նոյնպէս Մինուկիոս եկաց զօրագլուխ հեծելոցն։ Այս ամ երկրորդ էր պատերազմին։

ՃԻԳՆ ԱՆՆՐԱՂԱՑ ԸՆԴԴԻՄ ՓԱՐԻՈՍԻ

Պ՝ուէբ. էջ. 239-255։ Լիւ. էջ. 6-ս

Ալ բարւոք թուեցաւ Յունիբատոյ իսկևիսկ գՀետ Ձա կատամարտին Տրասիմենեայ փութալ ի Հռոմ. այլ ա սպատակաւ աւերեր զանդաստանս և զաշխարհն։ Ընդ որ եալ ընդ Ալմբրիա և ընդ Պիկէնոն՝ յաւուրս տամն եկաս ի սահմանս Կդրիոյ [1], առեալ աւար բազում՝ ի Ձանապարհն։ Այլ առ ոխերիմ թշնամեն ընդ Հռոմ մայեցիս՝ պատուէր ետ իւրոցն, զի որ որ ընդ առաջ ելանիցեն նոցա կաթողք ի պատերազմ՝ զամենեսին սպանցեն. և յաղագ խաղաց անհագիան մինչև Լպուլիա, կողոպտեալ զբազաքս ընդ որ անցանէր, և զերկիրն ապականեալ՝ զի զընակիչս ապատամբեցուցէ ի Հռոմ մայեցուց, և ցուցանել ընդ ամ Յունիա՝ թէ նկուն եղև Հռոմ և խոնարհեցաւ։

Զու արար ի Հռոմմայ փաբիոս չորիւք լեգէոնօք և առաջնորդաւն հեծելոց Մինուկիոս, երթալ ընդդէմ թշնամեացն։ Այլ խորհէր ի մտի մի գրգռել զնա ի մարտ և մի բաղխել ընդ նմա՝ մինչև հմուտ լինի վայրացն, և ահեղութիւն զայզողութիւն պատերազմին տեսցէ պատրաս-

* Ձ Տրիբուն զբաղ և ծագեալ էր ի հաղարապետէ։

[1] Աբրիա գաւառ էտրուրիոյ յորմէ առնուն ծագ։

տեալ։ Իբրև մեռ եղեն առ միմեանս բանակք երկո-
քեան, Ներսիսեան առ երկեցուցանելոյ զհռովմայեցիս՝
մատեաւ ի պատեհս անդր բանակի նոցա որպէս ի հրա-
փիրել զնոսա ի պատերազմ։ Եւ իբրև նոքա ոչ ինչ
խլրտեցան, դարձաւ յետս՝ անդամանելով զվատութիւն
Թշնամեացն և նախատելով որպէս թէ զՅայրենին զոյժ և
զկորով և զոգի արիական կորուսեալ իցեն. այլ ի սրտե
վարաներ, քանզի ոչ էս ընդ Աեմոյրոմիոսի և ընդ Փլա-
մինիոսի պատերազմ էք նմա. և զի հռովմայեցիք ի ջա-
րեաց աղէտից իւրեանց խմաստնացեալ՝ գտին զոր որ կա-
րող էր կալ առաջի Ներսիսեան ։ Վասն զի ի յան-
դուգն և յոյժ զինի բաղխմանէ նորա ոչ է երկիւղ, այլ ի
խոհական և հանդարտ առաջնորդութենէ՝ յորմէ վտանգ
մեծ էր նմա։ Աայր նմա գիտել և զանյարդադող միտս
նորա. և փոյթ կալաւ զգուռել զնա, մերթ ասպատակաւ,
մերթ աւարհարուածիւ քաղաքաց, և մերթ հրձգութիւ
գիւղից և աւանաց։ Եւ զի խաղացուցաներ զանասին,
և էր զի ի խորաձոր գադաթեցուցանէր՝ զի Թերևս գրոհ
տացէ ի վերայ իւր ի հովտի։ Եսկ փաբեոս զարձամբք
զիւրմն յածեցուցանէր, գէտսին կալեալ միշտ ի վերայ
բանակի Թշնամեացն. ոչ յոյժ մերձ առ նոսա՝ զի մի գըր-
գռեսցին ի մարտ, և ոչ կարի հեռի ի նոցանէ՝ Թէ գուց
ոչ փախիցեն։ Ապա և համագունդ ունէր զզօրականն,
միայն ի դարմանն երիվարացն Թողացուցեալ ելանել նո-
ցա ի բանակէն, և զայն սպառազէնն ամրութիւ։ Հաղիւ
նախատուիլ առնէր երբեմն մարտին Թեթև մշտնաջո,
և զայն զգուշութիւ զի հզօրագոյն ելցեն իւրքն ի մար-
տէն։ Որով զսրտաբեկեալ զօրականն յերիս ձակատս
մարտին՝ խրախուսեալ անդրէնն յուսացոյց, որպէս եր-
բեմն յաւուրսն յաջողուէ, ի զօրութիւ բազկի իւրեանց
և յօդնութիւ բաղդին։

Ներսիսեան վհերեալ աւար բազում ի Պամպանիոյ
յերկար ասպատակս, չուարար անտի զի մի անդ զամ-
բարեալ պարէնսն սպառեսցէ՝ որոց պէտք էին ապա ի
ձմերան յանբեր ժամանակին։ Եւ զի գարձեալ յայգե-
ւէտ և ի բազմադրախտ երկիրն, ուր տեսաբանս ակնա-
պարար քան կերակուր գտանէին, Հարկ եր յաղտիւր
ի քարախիտ և յաւազուտ վայրս ձմերել, ուր Հռովմայե-
ցիք զնմ զպտս իւրեանց ի Պապուայ և յայլոց բա-
րեբեր կողմանց ածէին գիւրաքար։ Զաղագս որոյ խոր-
Հուրդ կալաւ երթալ գադարել յայլ տեղի։

Խորհեցաւ փաբեոս զի ընդ Ճանապարհ ընդ որ եկն

Ընկիբաղ՝ Հարկ է նմա ընդ նոյն դառնալ, և դիւրին էր ընկերանալ նմա ի ձանապարհին, փութացաւ ամրացոյց զԱսիլինն քաղաք փոքրիկ առ Ալուտրնեաւն կառուցեալ՝ որ գերկիրն փաղերնեաց անջրպետեր յերկրէն Կաղուաց, և նստոյց անդ գունդ բազմաձեռն։ Լուեալք Հաղար այր կացոյց պահապանս ի կիրճին՝ ընդ որս Հարկ էր անցանել Ընկիբաղայ. և ինքն որպէս սովոր էր՝ չորս այլոցվք զօրօքն բանակել ի բլուրս զՀանապարհանեն։ Ընդ հասեալ Ընկիբաղ բանակեցաւ ի դաշտին առ ստորոտովք լերանցն, ի նոյն ըմբռնեալ յորոգայթ խառնամանկ կաթբեդունացին՝ յոր ըմբռնեաց զՎլամիխոս ի ձորն Ջրասխնեաց։ Հայեցաւ Ընկիբաղ և ահա անհնարին էր ապրել ի վտանգէն. զի այն անոյշ և եթ էին, և զայն հռովմայեցիք կալան։ Ասէ Վաթիոս անփախուստ զօրսն համարեալ՝ խորհէր զի հնարիւք մեքենասուրք թէ ինչ լցցի հնար ըմբռնել գնա. և յուսայր հաստատութիւն վհարել նովաւ զպատերազմին. բայց միայն առ վաղիւ խորհեցաւ առնել զյարձակումն։

Վասն այնիբաղ զի հնարիւքն իւրովք զանձն իւր դաւեն՝ ։ Ի վտանգս յայսոսիկ զօրավար քաջ արձուն կայ և արի, խելամուտ լինել մեծամեծ վտանգին անվեհեր սրտիւ, և առանց վարանելոյ ամենայն ապաստանի դիւրապատրաստ գտանել։ Հրամայեաց Ընկիբաղ ածել վաղվաղակի բազմութիւն արջառոց իբրև երկուց հազարաց, և կապել յեղջիւրս նոցա խոփ. և ընդ միջ գիշերի խանձ ի խոխան արկեալ, վարեցին զնախիրն ընդ լերինս՝ ուր բանակեալ էին հռովմայեցիքն։ Այլ ի խառնոյն բորբոքել ազդեալ բոց ի մարմինս նոցա, առ կսկիծ այրմանն այսր անդր ընդ ամենայն կողմանս սկսեալ՝ չուր Հարկն ընդ մացառս և ընդ թուփս ընդ որս անցանէին։ Օ Հետ նոր և օտար փաղանգին արձակեաց Ընկիբաղ և գունդ մեծ ի զօրացն՝ ունել զարձունսն, և չալածել զնա՝ ոսոխ դիմակաց։ Այլ յաջողեցաւ ի խորհուրդս իւր. քանզի հռովմայեցիք որ զկիրճն պահէին՝ տեսեալ զՀրդեհն բոցածաւալ ընդ բլուրս, համարեցան հրազէն զգուշութիւն մեհնել Ընկիբաղայ ընդ այն կողմն. և թողեալ զպահապանութիւն կրճիցն՝ անդր աճապարեցին խաչփանել զնա։ Իսկ որ ի բուն բանակին էին, և ինքն վաճիոս, ոչ գիտելով զինչ իրք խռովութեան էցեն՝ երկեան

1 ։ Ոչ ծածկեցաւ Ընկիբաղայ՝ զի ձարտարութեամբն իւրով դառնին նմա։ Լխ. իբ.

ելանել դիւերայն ՚ի բանակէն Թէ գուցէ դարան դոր-
ծեալ իցէ նոցա ՚ի Թշնամեաց , և մնային լուսանալոյ ա-
ւուրն : Օ այն պարագ առեալ Աստիճանէր խաղացոյց
զղօրս իւր և զաւարն ընդ կիրճն առաջի ՚ի պահապանաց,
և վերծոյց վնասս յահեղ վտանգէն : Օ ի եթէ վաթիոսի
փոքր ի ևս արիացեալ էր՝ սաստկապէս հարեալ զաս-
տակ նոցա խորտակէր, և կամ դէթ բեկեալ զղօրուն Թէ-
նոբա : Կորճ է և զվրիպակս անձին յօգուտ իւր արկա-
նել , և առնել նոքօք պարծանս անձին :

Աստիճանէր կալաւ Ճանապարհ ընդ Ալուլիա , որում
դէմ մնեալ Հռովմայեցիքք՝ խուճապեցուցանէին զնա :
՚ի ժամանակին յայնմիկ Տարի եղև Վաթիոսի գառնալ
՚ի Հռոմ վասն պաշտամանց կրօնից . և մինչ չև էր
մեկնեալ ՚ի բանակէն՝ աղերս արար զօրագլխի Հեծելոցն՝
մի զրգռել ընդ Թշնամին ՚ի մարտ՝ մինչև ինքն չիցէ
անդ : Խայց Աինուվիոս արհամարհեալ վերատ և զա-
ղերսանս նորա , ընդ առնուլ պատէ՝ զի կէս ՚ի զօրաց
Աստիճանէրայ երթեալ էին զՀամբարոց , յարձակեցաւ ՚ի
վերայ այլոցն . և առ փոքր մի զօրացեալ , գրեաց վաղ-
վաղակի ՚ի Հռոմ՝ յայնժամ մեծ կալեալ : Իբրև
այս Համբաւ բարեաց հնչեալ ընդ Հաւլ փոխանորդեաց
գուժկանն , յարեաւ ՚ի Հռոմ տրտունջ և քրթմնջիւն
ընդ դանդաղ և երկչոտ զգուշութեն Վաթիոսի . և այն-
պէս բանն այն Համարձակեցաւ՝ զի Հռովմայեցիքն Հաւա-
սարեցին նմա իշխանութեաբ զղօրագլուխ հեծելոցն . որ-
պիսի ինչ ոչ էր լեալ ՚ի սկզբանէ : Օայս ՚ի Ճանապար-
հի լուաւ Վաթիոս , քանզի փութացաւ մեկնել ՚ի Հռոմ
մայ՝ զի մի տեսցէ որ ինչ Հակառակ անձին իւրոյ Հնա-
րիցին քաղաքացիքն : Աւլ ոչ սասանեցաւ նա ՚ի Հաստա-
տութենէն մտացն . ՚ քանզի գիտէր իսկ զի ոչ որպէս
զիշխանութենէն և Տմտութենէ իւրոց պատերազմի բաժանեա-
ցի ընդ նմա . որ և Հաւատարիմ եղև առա :

Աինուվիոս խրոխտացեալ զօրութեաբն ՚ի վերայ իշխա-
նակիցն, առաջի արար նմա՝ օր ընդ միջ կամ տաճմանեալ
ժամանակաւ իշխել երկաքանչիւր ՚ի բանակին : Աւլ
գայն ոչ էած նմա յանձն Վաթիոս վտանգել զնմա բա-
նակն յաւուրս իշխանութե նորա , այլ լաւագոյն ընտրեաց
բաժանել զզօրս . զի զիւրմն գէթ ապրեցուսցէ :

Իբրև գայն զգաց Աինէբաղ ուրախ եղև յոյժ ընդ

1 քանզի տեղեակ իսկ էր , զի և ՚ի Տմտութենէ իրաց պատերազմի
ոչ եթէ զօրութեաբ իշխանութեանն հաւասարեսցէ իւր : Լխ . ԹԷ :

անմիաբանութեի երկուց զօրավարացն։ Լսորհեցաւ խայծ արկանել, որպայթ լարել ամբարտաւանութեե Պիհուռ կիսոի. և նա զայացու յանդգնութեամբ ըմբռնեցաւ ի նմա։ Վասանդի գրգռեցաւ տալ ընդ նմա պատերազմ ի վերայ միոյ ուրուք ի բլրոց՝ ուր դարան թագուցեալ էր նմա, և խուճապեալ չփոթեցան զօրք նորա, և իբրև մերձ էին ի խորտակել ի սպառ, ընդ գուչուն վիրաւորացն ընդոստուցեալ վաթիոս ձայն ետ իւրոցն։ Փութ թացուք ի թիկունս՝ խլել զյաղթութեի ի ձեռաց թըշնամեաց, և զսպաշաւ ի քաղաքակացս։ Նոյնժամ ի վերայ հասեալ՝ հարկեցոյց զՊինիքեաց փող հարկանել յետս կոչել զզօրականն. որ ի դառնալ իւրում ասէ, Ցառաջատեսիլ ամին այն ի գլուխս լերանց՝ աստ ուրեմն գոռաց ահագին որոտմամբ, և յուզեաց ամպրոպ մեծ։ Ա յս օգնութիւն ի կարևոր վտանգին եթաց զաչս Պինհասի՝ գիտել զվերկայական իւր. և զպատշաճ հնազանդութեին մատոյց անդադար իշխանապետին, յայտ արա րեալ՝ զի քան զչախալել պանծագոյն է երբեմն ուղղել զսխալանս։

ԻՐՔ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ Ի ՍՊԱՆԻԱ

Պ սկիպիոն պատերազմիս յորժամ կայ. Ասկիպիոն չանգգաստից ի վերայ հասեալ նաւացն կաբքեդոնացւոց, որոց առաջնորդէր Ասդրուբաղ, յաղթեաց նոցա և գերեաց նաւս քսան և հինգ և տարաւ աւար բազում, ի միտ առնն հռովմայեցիք թէ հոգ մեծ զերաց աչխարհին սպանիացւոց պարտ է ունել. զի անտի զօրավիդն էր Ասդրուբաղ արծաթով և զօրու։ Ասէ առաքեցին անդր նաւուք զԱսկիպիոն, որ անդ ընդ եղբօր իւրում միաբանեալ՝ վաստակս մեծամեծս հատոյց հայրենեացն։ Ոչ և ևս ցայնժամ հռովմայեցիք անցանել ընդ Իբերոս հարձակեալ էին. և մեծ ինչ Թուէր նոցա զայս կոյս գետոյն նիզակակից իւրեանց ունել և բարեկամ. այլ առ Պօբզիոսիս և անդր քան զգետն զօրացան զինուք։ Ասէ յայնժամեցաւ նոցա այս՝ մանուածէ սպանիացւոց ուրումն ի Ասդուտան, ուր Պինիքեաց զպատանդս սպանիացւոց և զազատագունդ մանկտին նոցա յատնդ Թողեալ էր։ Հատանեցոյց Ասքեղոս, քանզի այս անուն էր սպանիացւոյն, զՎոստար զինչխան դղեկին՝ դարձուցանել զմանկտին ի տունս իւրեանց՝ զի առաւել ի բարեկամութեի

Պոլիբ. գ. 245-250։ Լիւ. խբ. 3Ռ-ԽԲ։

ԱՄԱՀՀ զսպանիայիսն յորդորեսցէ։ Այլ զՀոգ գործիւնացա յանձն առեալ՝ էած զնոսա առ Հռովմայեցիս. և նոքա արձակեցին զնոսա առ իւրաքանչիւր ծնողս, և Հաճոյական ընծայիւն արարին բարեկամս իւրեանց զսպանիայիսն։

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ԱՒՐ ԿԱՆՆԵԱՒ

3789 · 533 Պ-ԱՀԲ · Ք· 255 268։ ԼՒ· ԼԲ· ՒՔ-ՅԲ։

Ի մեւոս գարնանայն կայսէր բդեաշխն ի Հռովմ Կ-Տերենտիոս Վարրոն, և Լ· Լիվիոս Պօղոս։ Յայմ ամ երերորդ եր երկրորդի պատերազմին. Յորում ժամանակի, ըստ ոչ սովորութեանէ, յաւելից լեգեոնաց կազմեցին Հռովմայեցիք բանակ՝ հինգ հազար այր առ լեգէոն մի, ի վերայ օգնական նիզակակից գրեալ գոյն։ Ի՝անզի Հռովմայեցիք, որպէս կանխեցի ասել, ոչ յաւելուին զբազմութեն զօրացն քան զչորից լեգէոնացդ, չորեքհազար հետեւակ առ լեգէոն մի, և երեքբիւր հեծեալ[1]։ Իսկ ի տագնապ վտանգի հինգ հազար հետեւակ առ լեգէոն, և չորեքբիւր հեծեալ։ Այս ի նմանէ զսակաւից զօրացդ գունդս համալեթիս ըստ հետեւակացն գործելոյն, այլ զհեծեալս նոցա՝ երեքկին։ Այս երկաքանչիւրացն բդեշխից լեգէոնս կրկին և զկէս օգնական զրնգացն տային՝ ուրոյն ի միմեանց առնել պատերազմ, գունս ուրեք միահամուռ զամ զբանակն խաղացուցեալ ի մի պատերազմ։ Այլ ասա ի սպառնալեաց մեծի վտանգին այնպես սասանեցան Հռովմայեցիք, զի ի վեց օրայ չորիցն այլ և յաւելին չորս լեգէոնս։ Հաճոյ Յռեցյաւ գարձեալ ծերակուտին, զի որ յառաջն կային բդեաշխք Աերուլիոս և Պոպիլիոս՝ կացցեն և յայսմ հետ ի բանակին փոխանակ բդեշխիցն. բայց Պոպիլիոս, քանզի ծեր եր, ոչ կարաց առնել զայն։

Ա արրոն, երբև չու առներ ի Հռովմայ, խրոխտաբար նեաց՝ ընդ հասանել առ Թշնամին պատահել նմա և վաճառն առնել պատերազմին. և Թէ ցորչափ նմանեալք Վաբիոսի կացցեն զօրավարք՝ ոչ երբեք վճարեսցի պատերազմն այն։ Այաւել և յամբարտաւանութիւն և ի յանդգնութիւն ած զնա յաղթութիւն պատերազմին, զոր ի սկզբան անդ կալաւ ի վերայ կարքեդոնացւոց՝ սպանեալ ի նոցանէ արս իբրև հազար և եօթն հարիւր։ Այս Ա-

1 Պ-ԱՀԲՒ-ս երիւրիւս հեծեալս գնե մարի պայ· ինալուսն մարկնագրին կամ ա-ԼՔՔեան, այլ Յ-ոսոս Լիպսիա հա- գրէին։

նիբաղ օգուտ իւր վարկաւ զկորուսան զայն ՚ի հրապուրանս զեղխին՝ զի յանդգնեսցի սկիզբն առնել մեծի պատերազմին, որում ինքն ցանկայր։ Օ՜, որպէս յայտնի ևս եղև յետոյ, չայն կարօտեալ պարենից հասեալ էր՝ որ և աւուրս տասն ոչ կարէր յերկարել սկզբնա. որք զի և սպասեալք խորհրդոյ ձեռնհասք լինել յօգնականութեանն. և յանհաւատիս հասանելիս իրք նորա, եթէ ոչ բան բաղդին նորա եղեալ՝ ժամանեալ մնար ևս արդեն։

Օ՜ հետ բազմապատիկ խղճմտանց՝ ապա առ միմեանս Հակառակեցան բանակքն երկոքին հուսկ ՚ի Կամնի, քաղաք փոքրիկ Հայոցլիա առ Եփրատ գետով։ Եւ բաւական թուեցաւ Հայկազնեան տեղին այն ՚ի պատերազմ, քանզի Հնինիբաղ բանակեալ էր ՚ի բացարձակ գաշտի առաւել սյրուձիովք. այլ խորհէր ձգել գնա ՚ի տեղի՝ ուր հետևակք յաջողեսցին ՚ի պատերազմ։ Իսկ իշխանակից նորա, անհմտութ իրաց պատերազմի, զհակառակն խորհէր։ Վասնզի այս չարիք են երկուց զօրավարաց իշխելոյ ՚ի միում բանակի, որք յաճախ ՚ի նախանձուէ կամ ՚ի նեղհակակիրք բարուց և կամ յայլախորհուրդ մնաց ոչ միաբանին ընդ միմեանս։

Ի նախաշաւիղ մրցմանէնս բազում անգամ եղեալ կողմանք երկոքին, ապա յաւուր միում՝ յորում առաջնորդ էր Ա արքայն, քանզի օր ընդ մէջ փոխանակաւ իշխէին զդեաղեաքն, կազմեցան հանդուցեալ ՚ի պատերազմ՝ ոչ ինչ հաւցեալ զԱ՜միլիոս, որ թէպէտ և բազում կալաւ, այլ ոչ կարացեալ խափանել զԱ արքայն՝ օգնական եղև նմա, որպէս կարէր, յօգուտ աշխարհին։

Յաւետգաւ Հնինիբաղ ընդ զօրականին իւրում և ասէ. Եթէ էր մեզ իշխանութիւն ընտրելոյ զհակառակ պատերազմիս տեղի, սակայն ոչ կարող էաք գտանել քան զտեղիս զայս քաջադէպ բազմութեանդ հեծելոցս։ Ջուր փառս անմահից՝ զի այսր աձին ձգելոյն զիշնամիս, տալ ի ձեռս ձեր պաղթութեան. և Հնինիբաղայ՝ զի հարկեցոյց զնոսա ասել ՚ի պատերազմ։ Օ՜ հետ երեքկին մեծամեծ յաղթութեանն՝ զորս հուսկ ընդ հուսկ ՚ի վերայ միմեանց կալաք, զինչ տաց խրախոյս ձեզ՝ բայց զքաջութիւնս ձեր յուշ ածել. նոքօք զդաշտս նուաճեցիք, սովիմբ տեսաք լինելիցիք հանուրց քաղաքաց, իշխեցիք տալ զի և առնոյն մեծութեանց և պետութեանն Հռոմայ։ Ա՜յլ աստ կացցեն բանք, ժամնակ է գործելոյ. յուսացեալ եմ ՚ի դիցս օգնականութ, և տեսանիցէք ընդ հուսկ զարդիւնս բանից։

Եւ էր հաւասարութեան բազմութեան զօրացն երկաքան-

ՀԱՐԵՒ. քանզի Հռովմայեցւոց Հանդերձ նիզակակոչքն էին ուԹառն Հազար Հետևակք, և վեց Հազար Հեծեալ սուղ ինչ աւելի : Իսկ կարքեդոնացւոց քառասուն Հազար Հետևակք կերԹք ի պատերազմ, և տասն Հազար Հեծեալ : Լիվիոս առաջնորդեր յաջոյմ Թևի Հռովմայեցւոց, և արդն ի ձախումն. իսկ Պերուիլիոս ի ձախոցդաց բդեշխին ի բուն բանակին : Կինիբազ, որ զնմ յաջոմէԹի յօգուտ արկանէր, այնպես զնւրն ձակատեցոյց՝ զի Հողին Հարաւոյ, որ առՀմամեալ ժամանակաւ ընդ անդ, Հանդեպ երեսացն Հռովմայեցւոց ի ժամ պատերազմին անկցի՝ մերկել ի վերայ նոցա զփոշին : Օգեան Լիբիդ ի ձախմէ կալաւ. և զայրանձին յաջ և յահեակ Թև զատոյց, և ընդ միջ ձակատուն զսպանիացիսն կարգեաց և զպաղտիացիսն Հետևակս, և զսպառազէն ախրևկեցիս ընդ աջմէ և ընդ ահեակ ի մի կարգ ընդ հեծեալսն : Լե իբրև ձակատեցան կացին, եկաց և նիքն ի միջ ձակատուն ընդ սպանիացիսն և ընդ գաղղիացիս Հետևակս, և զնոսա յառաջ խաղացոյց ընկիզն առնել մարտին. և ըստ մերձենալ առ Թշնամին՝ յետս երկուստեք զձակատն երկայներ, ի ձև իմն կիսաթոլոր՝ զի մի ընդ դունդն յառաջխաղացեալ և ընդ կարգ սպառազէնն Հետևակացն, որ անշարժ կային, լինի անջրպետ :

Ակիզբն եղև մարտին. և լեգէոնք Հռովմայեցւոց, որ ընդ աջմէն էին և ընդ ահեակ, իբրև տեսին զՀարուածս խիստս որ ընդ միջ ձակատուն գործէր՝ դիմեցին ի կողմանէ պատահել Թշնամեացն : Իսկ որ ընդ Կինիբազայ էին գունդն՝ քաջութիՔ զդէմ կալեալ, իբրև յետ կողմանց յաձախէին Հարուածք, խուսեցին յամբոխն միջն և ամենայն ի միջոց անդր ձակատուն : Օհետ նոցա մտին և Հռովմայեցիք խառն ի խուռն խուճապս. և երկարին Թևք բանակին Կինիբազայ, Հետևակախումբն ախրևկեցի անխոնջ և սպառազէն, շրջան առեալ կիսաբոլոր՝ պատեցին զվայրն ուր խառն ի խուռն չարձակեալ կեալ էին Հռովմայեցիք խումբք ի պատերազմին. և սատկապես Հարին զնոսա յետ կողմանց, ոչ տուեալ նոցա Հանդիստ և պարապ ձակատ յարդարելոյ : Բայց վայրի և ձեՀեալք աշ և ահեակ Թևացն Հարեալ զայրուձին Հռովմայեցւոց զսակաւաձեռն կէսք զետ մղեցան փախստէից զի մի անդրէն գունդ գործեսցեն, և կէսք պատեցին յետ կուտ զՀետևակազօրն Հռովմայեցւոց, որք միանդամայն ի Հեծելոց և ի Հետևակաց պա-

շարեալ, թէպէտ և արիաբար ընդդէմ նոցա Ձդինեցան, այլ ոչ ոք ի նոցանէ ապրեցաւ։ Լսելիւս վերս բազումս ի մարտի անդ ընկալեալ սպանաւ ապա յանճանութեամ ի խմբէ Թշնամեացն։ և ընդ նմա անկան ի գանճապետաց անաւ երկու, և ի հազարապետաց բանակին քսան և մի այլ, և յոլովք յայնցանէ որ զդեաղիք երբեմն կացեալ էին կամ կուսապալք *, Աերսիլիոս զդեաչն անցելոց ամին, Աինուկիոս զօրագլուխ Հեծելոյն կացեալ ընդ փարիսիս, և ուխտուն այր յաւագայ ծերակուտին. միաշամուռ անկեալք ի պատերազմի անդ ¹ աւելի քան զեօթեն բիւր մարդիկ։ Նչ միայնոգեռ կարբեդոնացիք մեռեալ՝ ոչ գաղարէին ի հարուածոյ, ի խուռն անդ կռուողին գոչեր ատէպ Աինիբալ Շ ատ է արդ։ գադաբեցէք ի զօրականք, խնայեցէք ի պարտեալն ²։ Խակ բիւր մի զօրականաց, որ պահէին զբանակն, յետ պատերազմին և նոքա գերեցան։ Աիայն Ա արրոն փախստեայ անկաւ ի Ա Հնուսիա ընդ Հեծեալս եօթանասուն, և չբնչհաղալ զօրականք ի քաղաքս մնատուրս ապրեցան։ Նչ բռնանդակ կալաւ Աինիբալ զյաղթութիւն. և յաջողեցաւ նմա այն իբրև զառաջինն՝ բազմութիւ Հեծելազնդին։ Նչ անկան ի նմանի ի Ձակատս անդ չորեք հազար զաղղիացիք, հազար և հինգ հարիւր ի սպանիաց ազգն և յաւերիկեցւոց, և Հեծեալք երեկերիւր։

Նչ իբրեւ տեսաւ անդ Աահարբաղ, մի ի սպայից կարքեդոնացւոց, դիմել անդէն ի Հռոմ. և ի հինգերորդումն աւուր խոստանայր տալ Ձաշել անդ ի Կապետոլին. որում Աինիբալ Պարապսով, ասէ, յորդիկ սպառ է վասն բանիդ այդորիկ։ Նչ Աահարբալ Չեմանեմ քաջ և ոչ միում ումեք տուեալ դից զնմ խնամատուութիւն։ Վ Ձաջ ես դու ի յաղթել, Աինիբալ, այլ ոչ և յօգուտ արկանել զյաղթութիւդ ³։

Համարեցան բազումք, և ինքն Ցիտոս Լսելիս ի դանդաղել աստի Աինիբալայ ապրեալ զՀռոմ և զպետութիւն Հռոմոց. յոր և միջոցակս սխալեալ զնա ասեն։ Նայլք խոհականագոյնք զնոսա՝ խնայելին մեղա-

* ՕԳՈՒԵՒՈՒՆ ԸՍՒ ԼԼԻՆ պաշտօնն ձերն դասաւոր Լսելոյ ձերն Կոսասիալ։

1 Տիտոս Լիվիոս Նասաւնյոյն գԼիւսանիկեսին ձիւնն ի գասաւոն և Եբեր հասար. այլ ես արքանի հասապարտա. Ինչան սասանել պՈՒԵՒՆԵՒՈՒ համարիմ։

2 Ի յագեցուցանել զբարտոսս. Թիւն Թշնամեաց բանակք կրկին մեծամեծք հարան, մինչև գոչել Աինիբալայ առ զօրականն Ինայեցէք ի ձեր ձերմէ։ Փաստ. ա։ ը։

3 Նչ որ Ա Ահարբաղ. Ուչ գնմ միում ումեք ետուն գից. գիտես յաղթել, Աինիբալ, այլ ոչ յօգուտ գյաղթութիւն արկանել։ Լիւս. իբ. ծա։

դրել վայրապար այնքանոյ զօրավարին, որ ամ ուրեք հանձարեղ ընտրողն էր, և սմանի և երագ ի կատա-
րումն խորհրդոցն։ Լաւ սոցա ձեռնտու է Պողիբիոս վկայ-
ուածքի իւրով, կամ գէթ լուռեմնամբն. զի ի ձառել
զանցս մեծամեծս, որ գՀետ մեծի յաղթութենէն յաջորդե-
ցին, թէպէտև յուսացեալ ասէ զկարբեդոնացիսն առ-
նուել յետ այնորիկ պատերազմանս զՀռոմէ՝ այլ զի ոչ
ինչ յաւելուլ եթէ ոչ պակս էր հնար զբազմաժողով քա-
զաքն զայն նուաճել և զառաւելեալսն յոյժ հմտութիւ
իրաց պատերազմի, զամբապարիսպն և զզգուշացեալ ի
կրկին լեզուանաց, այսու անհնարին գիրն զայն կարծէ
ցուցանել, և անսուգիտ գԱնիբեալ ի դանդաղելոյ յայն։
Օ որ և հաւաստեաւ քննեալ՝ ոչ ի դէպ էր առնել ըստ
օրինաց պատերազմի։ Վասնզի այս ինչ յայտ է՝ զի ամ
հետևակազօրն Անիբեալայ նախ քան զձակատ մարտին
ոչ ինչ աւելի էին քան զքառասուն հազար, յորոց վեց
հազար ի պատերազմին անկան, և վիրաւորք հարիւս
բազումք քան զանկեալսն եղեն, անվարդք ի պատե-
րազմ. որով ինացին առ նմա քան և վեց կամ քսան և
եօթն հազարք հետևակաց զօրաւորաց ի պատերազմ.
որք զի սակաւք յոյժ էին ի պաշարել զքաղաքն զայն
մեծ և գետով ամրացեալ, յայտ է. և դարձեալ զի ոչ
գոյին նմա մնուբենայք և համբարք, և որ ինչ այլ ի պա
Լե. իբ. ն. շարել զքաղաքս կարևոր են։ Այս ասելիկ յաղթող և
ե իզ. ձէ. զեալ առ Տրասիմենեամ՝ զուր ջանացաւ ապա պաշարել
զՍպոլետոն. քանզի խակիսկ զինի ձակատուն Կան-
նեայ՝ հարկ եղև Թողուլ զայն, զքաղաքն փոքրիկ զան-
նայն և զանզօր։ Վարձեալ և ոչ է մարթ ժխտել՝ զի ի
ձախողել իրացն, որպէս և կասկածելի էր, կործանումն
անհրաժեշտ ի վերայ կայր Կարքեդոնի։ Այլ ուղիղ զայս
ցանկ դատաստան առնելոյ՝ հարկ է հմուտ լինել արուե-
ստին, և ժամանակակից իրացն։ Ի վաղ ժամանակաց
յուղին վէմքս այս, և ներհուն զօրականին անկ է այսո
ցիկ հաւաստեաւ քննութիւն։

Լե. իզ. Ինդ վախճանել ձակատու պատերազմին առ Կան-
ը-ձէ. նեաւ՝ յղեաց Անիբեալ զԱդան զեղայր իւր աւետա-
ւոր յաղթութենէն ի Կարքեդոն, խնդրել օգնութիւն ի
սպառ նուաձելոյ զՔնամին։ Ընդր հաւատ Ադան՝
եղոյգ յատենի աւագանւոյն պերճ բանիւ զարութիւն եղ-
բօր իւրոյ, և զմեծամեծ յաղթութիւնն զորս կալաւ ի
վերայ հռովմայեցւոց։ Լաւ առ ակներև ցոյց հաւատար
մութիւնն՝ եհեղ յատենի ծերակուտին գրուանաւ

մատանիս ոսկի, զորս ի ձեռաց աւազանին Հռոմէից կողոպտեալ էր անկելոց ի պատերազմին, և ի կատարած բանիցն խնդրեաց ձեռն տալ զորօք և արծաթով և օգնականութեամբ համբարոց։ Եւ ցաւ ամ առեանն խընդրելոյ. և ականատես լինելոյն, որ կուսակիցն էր Ընկիբաղայ և համախոհ, զայն ժամ պատեհ համարեալ ի կշտամբել զԸնկնն զառաջնորդ հակառակ կողմանն՝ ասէ, ոչ կամիցիս ընդ պատերազմ ընդդէմ Հռոմէացւոց, կամ թէ խորհիցիս և արդ տալ ի ձեռս նոցա զԸնկնիբաղ։ Ապրում Ընկնն հանդարտութեամբ ետ պատասխանի. Ինձ և արդ նոյն խորհուրդք են. և թէ իցեն իսկ հաւաստի՝ ոչ հաձոյ են ինձ յաղթութեիւք, եթէ ոչ հաշտութիւն ածցին մեզ յօգուտ, և ապա սուտ եցոյց և առասպելս զարուեթեան՝ զորս Ադոն պանծացուցանէր, և զոր ի դիմաց Ընկիբաղայ տայր զոյց՝ թէ հարի ի սուր սուսերի զորս հռոմէացւոց, և արդ ձեռն տուք ինձ զօրօք։ Օ ինչ այլ ինայր նմա, ասէ, խնդրել՝ եթէ նկուն լիներ ի պատերազմին։ Պանծայ՝ երկիցս ասար առեալ զբազմահարուստ բանակ Թշնամեաց գլխն ամ կարևորօք պատերազմի, և ապա պարէնս խնդրէ և արծաթ. մի թէ այլ ինչ ի կորուսանել զզօրսն առներ մեզ զրոյց։ Ընդ որ յաղագս Ատեանց անձնատուր Ընկիբաղայ, կամ խնդրեցին հռոմէացիք հաշտութեիւն, Եւ իբրև նա տիպեցաւ խոստովան լինել թէ ոչ՝ Ապա ուրեմն, ասէ, պատերազմ խիստ սպառնացեալ է մեզ Ատալա՝ քան զոր ի վաղնջուց մինչև ցայսր պատերազմունս կրեցաք։ Եւ կատարեաց զբանս իւր՝ մի առաքել զօրս և մի արծաթ Ընկիբաղայ։ Ասյց կուսակիցք Ընկիբաղայ, հզօրք ի ժամանակին յայմիկ, ոչ անսացին բանիցն Ընկնի իբրև նախանձ և մտաշնեթեք. և հրամանն եղև դրամաժողով առնել, զօր ժողովել յօգնութեիւն Ընկիբաղայ։ Ուս արար Ադոն ի Ապանիա՝ առնել անտի գումարուսակ քան և չորից հազար հետևակաց, և չորեքարիւր հեծելոց. որ յետոյ խափանեցան երթալ գումարել ընդ Ընկիբաղայ, և այլուր ածան ի պատերազմ. քանզի հակառակորդք Ընկիբաղայ հնկնէին խափան լինել մեծի խորհրդոյ զօրավարին՝ ընդ որում խեռային։ Ինչ դեռ ի Հռոմի փառաւորեր բզեռչին փախուցեալ ի պատերազմէ այնու զի յուսացաւ ի քաղաքացիս իւր, կարգեցուսցիք ընդ ակամբ հայէին Ընկիբաղ ի յաղթող զօրավարն. զի ոչ հանդուրժեր Ընկնն ընդ յաջողութեիւն պատերազ-

մին՝ ընդ որ ոչ կամէր ։ Ալ ըհժխնդիը խորհրդոց խրոց քան բարեաց աշխարհին, և առաւել թշնամի հանդգոյ զօրավարին քան հռովմայեցւոյն, զնա՛ւ ինչ հնար բեր զի զակնկալեալ յաջողութիւնն խափանեսցէ, կամ զնախակալն եղծանել։

ԶՄԵՐԵԼ ԱՆՆԻՒԱՆԱՑ Ի ԿԱՊՈՒԱ

Լա։ իզ։ իբ։ Յաղթուէ՛ն առ Կաննեաւ նուաճեցան ազգք հզօրք Իտալիոյ ընդ ձեռամբ Կնիոբաղայ, և յաւելաւ ի նա մեծն յուսասան՝ Տարենտեաւ հանդերձ քաղաքաւ, և Թողին զՀռովմայեցիս վաղվաղուց նիզակակիցք նոցա, յորոց մի յառաջնոցն էր Կապուա ։ Վաղաքս այս պտղաբերութիւք երկրին և ի քնե տեղւոյն և խաղաղութիւքն, յոր ի բազում ժամանակաց վայելէր, մեծացեալ էր յոյժ և զօրացեալ. և զեղխութիւն և փափկութիւն, կցորդք փարթամութեան, ի ներքս սպրդեալ՝ ապականեալ էին զբարս քաղաքացոցն, որ բնաւորաբար ձգէին ի հեշտախտութիւն և ի շռայլութիւն ։ Ո քաղաքս զայս ընտրեաց Կնիոբաղ՝ իւր ի ձմերոց ։ Կնդ զօրականաք, սովորեալ՝ ի տաժանաւոր վաստակս, որ ամենևին ի մեծամեծ վտանգս և մշտայաղեք էին, ի զեղխութենէն և ի հեշտ ախտից պարտեցան, անսովորութիւն առաւել և շռայլեալ ի նոսա զանձինս ։ Զյսոյ օրինակաւ կուրով պատերազմի ընդարմացաւ ի նոսա, և զսակաւն զայն ձիկն յետ այնորիկ՝ խրախոյս առաջնոց յաղթութեանցն զործէր ի նոսա, և ոչ զի զօրութիւն ինչ գոյր նոցա ։ Ոչք ի չուել ի քաղաքէ անտի այլ չայլևի լեալ էին. քանզի գատարկանձնութիւնք ուսեալք ի բնակարանս հանդստեան, և կեցեալք ի յղփութիւն, ոչ ևս կարող էին բերել զքաղց և զծարաւ, զսքնութիւն, զերկար ուղեւնացութիւն, և զայլն ևս վաստակս մարտի. և ոչ լսել զօրավարին և զհնուազական կրթութեանց հպատակել։

Որ ինչ զայսմանէ գտի ասացեալ առ Տիտոսէ Լիւիոս՝ սի՛ զնոյն որպէս է առ մատենագրին ածեմ այսր. կալցի ոք զայսոսիկ որպէս և լսել ախորժէ. այլ նա զձմերել

1 Կնդ ընդ չարկաք զմեծ մասն ձմերայնոյն կալաւ. զզօրն՝ որ զնա՛ւ վիշտս մարգկեղէնս սահել և ընդ երկար կրեալ, անփորձ էր և անսովոր ի գեւրութենէնս մարմնոյ ։

Կշռ որոց ոչն չայթեցին վիշտք և չարիք զնոսա կորոյս զեղխութենէն և փափկութենէ չոյժ. մանաւանդ զի չանդնդել հեշտութենն անչա հեղին զանձինս։ Լա։ իզ։ ծշ։

Ինքեարացայ ՚ի Կապուա ստգիւտ մեծ առաքնորդութեանն Նորա Համարի . և առաւել յոյժ քան զամենայնէն խոսել ՚ի Հռովմ՝ Վանդի սնոտ յայտնեցոյց , ասէ , ՚ի գյաղթութեն . իսկ ատ վրիպակաւն կորոյս ՚ի սպառ զքաջ յոյս յաղթութեն։ Որով բանիւ՝ որպէս ասացն Արիւզոս . Որ ինչ հռովմայեցիք առ Կամնեաս , զնոյն կրեցին ՚ի Կապուա կաքեդոնացիք [2]. անդ պատերազմականն նոցա արութեն շինաւ , և զինուորական կրթութեց տենչ . անդ և փառք նոցա առաջինք բարձան , և պատրաստեցոյն ակնկալութեն ։ Վանդի յայմմ հետէ կաքեդոնացւոցն իրք երեսային և վատթարեին . որպէս այն թէ կուսակից խոհեմութեն քաղդն եղեալ , և յաջողութեն պատերազմի գաշնաւորեալ ընդ հռովմայեցիս ։

Խռովմնակութեք արդեօք , ոչ գիտեմ , ընծայէ Տիտոս Լիւիոս զայն ամ չարիս՝ ձմերելոյ զօրացն կաքեդոնացւոցն ՚ի զեղծ քաղաքին . քանզի մանրախոսութիւ զսյնոսիկ քննեալ , ոչ արդարև կարծին՝ այն ամ արկածք ձախտզութեն զինուցին Կնիքեարացի ՚ի ձմերոցէ անտի առեալ պատճառս ։ Կյաքէն և աստի եղեն նոցա ՚ի նաւաքն , այլ ըստ մասին ։ Կրե ահա արութիւնք , որովք և յետ այնոքիկ զօրացան նոքա ՚ի վերոյ բդեխիցն և կուսակալաց , և նուաճեցին առին ՚ի հռովմայեցւոց քաղաքս , և կացին մնացին Կապուա զամս չորեքտասան՝ անկորուստ պահել զաշխարհակալութիւն , զի և ոչ ոք Կալածել զնոսա կարաց , այսոքիկ յայտ առնեն՝ թէ ստուարացուցանել Լիւիոս զինքսս չարեաց ձմերոցին։

Ի այլ հաւաստի պատճառ եղծանելոյ իրացն Կնիքեարացի՝ զի ձեռնհասք եղեն իւրքն յօգնականութեանէ նորա ։ Վանդի ուագանին զպատգամն զայն ընկալեալ ՚ի ձեռն Կագռնի՝ խորհուրդ կալաւ առ ընդարձակելոյ զաշխարհակալութիւն Կապուա՝ յղել նմա յօգնութեի սպրուձի բազմաձեռն ՚ի նուիրացուց անտի , փիղս քաւստուն , և հազար տաղանդ , և հեծեալս ՚ի վարձունել ՚ի սպանիացւոց բիւրս երկու , և հեծեալս չորեքհազար յամրութիւն քանակացն Կպանիոյ և Կտալիոյ ։ Կայլ ասպս երկոտասան հազար միայն հետևակաց և երկու հազար հինգ հարիւր հեծեալք զումարեցան ՚ի ձեռս

Լէս. իզ. ծՓ. լԲ։

1 Ընդ դանդաղումն յապաղեր պէս կանխ . անդ արութեն սպցոյց զյաղթութեն , ասա վրիպակ բնաւ իսկ երբէք զզօրութեն յաղթութեն ։ Լէս . իզ . ծԸ։

որպէս կանխ . անդ արութեն սպեւրացմէ , անդ զինուորականին հրահանգք , անդ կանխակալ յաղթանակացն փառք և ակնկալութեն

2 Եղև Կնիքեարացի Կապուա հանդերձելոցն չինքան։ Լէս . իզ . Խե։

ԱՄ ԱՀ.ՀՀ Ա՛ազոխ, Որովք էբբև չու առնէը յիտալիա, սակաւա ձեռն գնդաւն քան զահմանեաըն յաւագանւոյն, և զայ նոսիկ պատուիրեցին նմա ածել՝ի Ապամիա։ Եւ մնաց Ա՛ենիբաղ, յետ մեծաւեծ խոստմանց նոցա, առանց օ գնակատելե և հետևակաց և հեծելոց և փղաց և ար ծաթոյ՝ քան և վեց հազար հետևակօքն իւրովք և ինն հազար հեծելովք հնարել զօդուտ աշխարհին։ Եւ որ պէս էր հնար այսու դոյզն գնդաւ ունել զամենբս յեր կիր Թշնամեաց, սանձակոծել զազգս նիզակակիցս, ան կորուստ պահել զաշխարհակալութեն, և այլ՝ի վերայ առաջնոցն յաւելուլ, և պատերազմ մղել ընդդեմ կըր կին լեգեռնախառնն բանակաց հռովմայեցւոց, ընդ որոց ամի ամի այլք փոխանակէին։ Ա՛յս է ահա ստոյգ պատ Ճառ ձախողելոյ պատերազմին Ա՛ենիբաղայ և կործան մանն կարքեդոնացւոց։ Ա՛թէ այսոցիկ պատմութե՛ի Պռ զիբիոսէ վիսպգրեալն հասանէը առ մեզ, գտանեաք անդ՝ քան զձմերելն՝ի Լապուա, զայս պատՃառս արկա ծէցին համարեալ, ընդ այս մի՛ ոք տարակուսեսցի։

ՍՊԱՆՒՈՑ ԵՒ ՍԱՐԴՒՆՒՈՑ ՑԱՑՄ ՎԱՑՐԻ ԻՐՔՆ

3790 · 534 Ա՛Ինչ դեռ Ա՛կիպիոնեանքն երկոքին զօրավարք աշ
ԼՒ·ԻՀ·ՒԷ խարհակալէին՝ի Սպանիա՝ հրամանն եհաս՝ի Կարքեդո
Նէ առ Ա՛նդրուբաղ, որ միայն կարող էր զդէմ ունել նոցա, անցանել յԻտալիա յօգնութե՛ի եղբօր իւրոյ։ Եւ մինչ չև մեկնեալ էր անտի՝ գրեաց առ աւագանին՝ յղել անդր զայլ ոք փոխանակ իւր, որ կարող իցէ կալ առաջ ի հռովմայեցւոց։ Եւ առաքեցին նոքա անդր զՄիլկոն զօրօք հանդերձ, և Ա՛նդրուբաղ չու արար երթալ գու մարել ընդ եղեօր իւրում։ Եթրև լուա եղև բանս այս՝ յաւելան վաղվաղակի յոլովք՝ի քաղաքաց Սպանիաց ւոց՝ի Ա՛կիպիոնեանն։ Որովք նոքա զօրացեալ՝ խորհե ցան խափանել զԱ՛նդրուբաղ մինչ չև եղեալ էր յաշ խարհին, և սպրեցուցանել զհռովմայեցիսն՝ի վտանգէ. որք մինչ դեռ աշխատութե՛ք բազմու զդէմ ունէին միայ նոյ Ա՛ենիբաղայ, և նա և՝ս երթայր ծանր ամբոխիւ յա ւելուլ յեղբայրն իւր։ Եւ հասեալ զհետ նորա՝ ստիպե ցին զնա՝ի պատերազմ, յորում նիւսն եղեալ՝ և ոչ անդ յաշխարհին սպանիացւոց եգիտ ապատան, որ յՏտա լիայն խորհէր անցանել։

Ոչ ինչ առաւել յայլոցէն կարդեցոյց իրը՛ի ԱՄԱՐԱՀԱ
Մարդկինա. զի աղմուկս խռովութենէ արարեալ անդ՝
որպէս օգուտ աշխարհին իւրեանց Թուեցաւ նոցա, եր-
կուասան հազար զօրական՝ի միում ուրեք ձախատու
կորուսին. և գերի բազում ածին՝ի նոցանէ հռովմայե-
ցիք, յորս էին և Կղոդուբաղ՝ մանկանուանեալն Ձաղատ,
և Կինոն, և Մագոն [1], արք երևելիք ազգաւ և ըստ
զինուորական աւագութեցն։

ԱՐԿԱԾՔ ՈՐ ՀԱՍԻՆ ԱՆՆԻՒԱՂԱՑ. ՊԱՇԱՐԵԼ,
ԿԱՊՈՒԱՑ ԵՒ ՓԱՂԱՔԻՆ ՀՌՈՎՄԱՑԵՑԻՈՑ

Ձևս, յետ ձմերելոյ Կինիբաղայ՝ի Կապուա, յա- 3791 · 533
ջորեցան կարքեդոնացիք Յոտալիա նովին փառօք։ Ա- Լխ· Բէ·
Մարկելղոս կուսակալ և բդեաշխ մեծապես այսմ յետս Ն Բե· Խբ·
փոխուեցեալ իրաց եղև սատար։ Վճռեալ սա ամենայնիւ Ն Իզ· Ե֊Ծ֊
ինդրեր տագնապեցուցանել զԿինիբաղ. ոչ նեղէր բա-
նակել ուրեք զօրացն, կամ պաշարել զքաղաքս, և տեղ
՝ի վերայ յարձակէր նոցա. մինչև Սուսեր Հռովմայ կո-
չել նմա, զոր օրինակ Փաբիոսի եղև կոչել Վ ահան։

Կռաւել և պաշարմանքն Կապուայ խուճապեցուցին 3793 · 537
հռովմայեցիք զԿինիբաղ։ Ոչ նախատինս իւր Համա-
բեալ առաջի նիզակակից ազգայ դանդաղել յօգնութենէ
այնոցիկ՝ որ առաջինքն էին՝ի նոսա, փութացաւ անդր,
և յանդիման քաղաքին յարձակեալ՝ի վերայ հռովմայ-
եցւոց՝ յերկարաձգին նուաղօք ետ ընդ նոսա պատերազմ
՝ի վաներ զնոսա. այլ ընդ վայր ջանացեալ՝ խորհեցաւ
ապա բաժանել զզօրութենէ նոցա՝ և խաղոց տագնապաւ
՝ի Հռովմ, ոչ ինչ երկուացեալ անահնկալ աղվիաւ
նուաձել զկողմն մի քաղաքին, և զի՝ի վտանգ անդր դի-
մեցեն զօրավարքը հռովմայեցւոց՝ամ զօրքն յօգնութենէ
հայրենեաց՝ Թողեալ ազատ զԿապուա. և կամ էթէ
ոչ՝ի սպառ բառնայցեն զպաշարումն, սակայն քաժա-
նեսցի զօրութենէ նոցա, և լինի Թեթևս ինքեան կամ պա-
շարելոցն պատեհ՝ հարկանելոյ հեշտեաւ զսակաւաձեռն
Թշնամին։ Հռովմայեցիք զարմացեալ յայժ՝ այլ ոչ խոռ-
վեցան։ Այլ ոմն յաւագաց ծերակուտին խօսեցաւ յա-
տենի՝ կոչել զնմա զօրս՝ի Հռովմ յօգնութենէ աշխարհին.
որում Փաբիոս պատասխանի ետ՝ Թէ նախատինք էն առ

[1] Ուս՝ որ եէ՞տյն էր Անիբաղայ։

ամ խլրտումն Աշնիբազայ խուճապիլ և յեղամոել[1], Նայց միայն Կ. Փոլղուխոսի փոխանակի բզեզիկին, միւսմ յերկուց զօրավարաց, հրաման արարին՝ զօրահատոյց լինել գալ ի Հռոմ։

Աշնիբազ այսը անդր առ վայր մի ասպատակեալ՝ չաւ կատեցոյց ասա զզօրս իւր առ քաղաքաւն ի պատե բազմ. և բդեաշխն ի հանդիպոյ ։ Նէ իբրև կազմեցան երկուստեք քաջօրէն պատերազմել ի վերայ Հռոմայ, մրրիկ խիստ դադարեցոյց զնոսա . և ընդ մտանել ի բա նակ իւրեանց՝ եղև խաղաղութիւն օդոյն և պարզութիւն. և ոչ միանգամ՝ այլ յաճախեցին այս արկածք օդոց. մինչև ի դից ուրեմն համարել զայն Աշնիբազայ, և ա սել՝ Նա առաքել զՀռոմ մերթ բաղդ և մերթ յօժա րութիւն պահանեն յիս ։ Որպէս զայս Տիտոս Լիւիոս ի համբաւոյ առանդ[2] ։

Յառաւել յայժ ի զարմանս եղև Աշնիբազ և յերկիւ ղն, զի մինչ դեռ ինքն առ դրան Հռոմայոյ բանակեալ էր՝ ընդ այլ դաւն քաղաքին խաղացուցին թշնամիք գունդս զօրաց յօգնութիւն բանակին ի Պաճախ . և զի զերկիւղն, յորում բանակեալ էր, վաճառեցին յաւուրն յայնոսիկ՝ ոչ ինչ դիւրագին քան զոր սրճէրն յառաջա գոյն ։ Ընդ այն արշամարհանս զայրացեալ՝ ի վաճառ եհան և ինքն ի ձայն մանեակի զամ կրպակս ոսկերչաց, որ էին շուրջ զմեծաւ հրապարակաւն Հռոմայ ։ Նէ զայն խրոխտ սպառնալիս արարեալ՝ յետս կասեցաւ ի քաղաքէն, և եառ աւար զմեծագանձ մեհեանն աստուա ծուհւոյն Փերսեփոնէ ։

Խոկ բնակիչք կապուայ առանց օգնականութեան ոչ ընդ երկար կարացին դիմանալել. և որք յաւագանւոյն առաջնորդք ապստամբուէին էին, որոց ոչ գոյր յոյս նե բելոյ Թողուել ի Հռոմայեցւոց մտի, մանաւանդ զան ձին յողոյմ մահ. և քաղաքն եղև անձնատուր ։ Ի յաջողութենէ սոսի պաշարմանն Կապուայ, որ զերկա քանչիւրոց կողմանցն զբաղդ սահմանեաց, և զՀռոմ մայեցիսն յաղթող եցոյց, երեւի դարձեալ՝ որպէս ասէ աղբ էին Հռոմայեցիք ի վրէժ պատուհասի հաւատա դրուժ դաշնաւորսայ, և որպէս տեսր Աշնիբազ յօդնել այնոցիկ՝ որ ի նա ապաւինեցան[3].

1 Նախատինք են երկնչել և խուճապիլ յայժ ապառնալեաց Աշնիբազայ ։ Լե. իկ. Շ։

2 Աւանդեն զայս ինչ Աշնիբազայ զայ ասացեալ. Ի Նուաճել զՀռոմ՝ է զի կամք և է զի բաղդ պահանեն յիս ։ Լե. իկ. ԾԵ։

3 Աշխուշա խոստովանութիւն

ԱՄԱՀՀ

ԲԵԿՈՒՄՆ ԶՕՐԱՑ ԵՒ ՄԱՀ ԵՐԿՈՑ ՍԿԻՊԻՈՆԵԱՆՑՆ Ի ՍՊԱՆԻԱ

Զախողակի յետս ընդդէմն ի Պանիա պատահէ- 3793 · 537
ցին Հռովմայեցւոց· Լիւն անդ կարգեդնացաւց բանակք երեք· առաջնումն զօրավար Պոդրուբաղ որդի Վիա- դմի, երկրորդին Պոդրուբաղ որդի Միլկարայ, և երրորդին Ատդն, որ համագունդ ընդ առաջնումն տայր պատերազմ· Յորհէցան Աիկիսիոնականք Կնէոս և Պոբղիոս երկինդել զզօրս իւրեանց, և ուրուն ի վերայ Թշնամեացն իաղալ· և այս եղև նոցա ի կորուստ· Հաս տատեղին զի Կնէոս, սակաւաձեռն հռովմայեցի գնդաւն և երեսուն հազարաւ ի Կելտիբերայս, պատահեցեալ ա- միկարեանն Պոդրուբաղայ, և որ այլ ևս գունդք էին հռովմայեցիք և յազգաց գաշնաւորաց Յոտալից՝ պա տերազմել նոքօք Պոբղիոսի ընդ այլ երկուս զօրավարս· Եկաս ի վերայ Պոբղիոսի եղև Տարուած· Կոտմարեցաւ ընդ Թշնամիս նոցա և Աոսինեսաս, խորխտացեալ յաղ- Թութեամբն՝ որով ի ժամանակին յայնմիկ նուաճեալ էր զԱիմաքս, և Հնդիբիղէս իշխան հզօր ի Պանիա՝ փութայր հասանել զՏետ նորա· Եկն ինչ լմներ ձեռն ի գործ առնել պատերազմին, Տարուածս յիմ կող- մանց ընկալեալ հռովմայեցիք՝ արիաբար զառաջինն մար- տեան ընդդէմ Թշնամեաց, ցորչափ զօրավար նոցա ի գլուխս ձակատուն կայր· Եկն իբրև նա անկաւ դիտա- պատ, հալիւ ապրեալք ոմանք ի կոտորածէն գաղձան ի փախուստ·

Ի աղվաղակի գունդքն երեքեան զրոհ ետուն ի վերայ Կնէոսի, Տարկանել և զնա, և զպատերազմին վճարել· Իակ Կնէոս կանխաւ իսկ հասեալ էր ի վտանգ պարտու- Թեան, քանզի ԹօԹափէյան ի նմանէ զօրքն նիզակա կիսք· ի խրատ մեծ զօրավարացն հռովմայեցւոց՝ զի մի զպարագեն զօրականսն քան զնևնկան յաւելցին ի բանա կին· Իբրև եռես նա զյաղնախումբ Թշնամիսն ի վե-

Թշնամւոյ՝ Թէ օրպես հզօրք էին ի խրատ՝ զդոյշ լինին զօրավարք հռովմայեցւոց մի յայլոյ օգնութեն յոյժ ապատան լինել, այլ առա- ւել զնւրեանց կորով և զքնին զօ- րութեն կալցին ի բանակի· Լխ·չիշ·

1 Ջայս առաջի աչաց ունելով

ԱՄԱՀԱՐ ըսպ իւր Տասեալ դուշակեաց զբեկումն և զմահ եղբօր իւրոյ. և ոչ ինքն յերկարակեաց քան զնա եղեալ անհաւ՝ի մարտի անդ։ Յվերայ երկուց քաջազուն սպասցն կոծեցան քաղաքակիցք նոցա և նիզակակիցք, և ողջոց Պասիխ՝ զի կորոյս զարդարակորով տեսուչս իւր։ Յոր մինչ դեռ վտանգ անհրաժարելի՝ի վերայ կայր հաւմմայ եցւոց կորուսանել՝ի սպառ զընդարձակ աշխարհակալութիւնս իւրեանց՝ի Պասիխ՝քաջութէ մոց՝ի սպայիցն, որում անուն էր Յ։ Պարիսոս՝ ասպետ հաւմմայեցի, անկորուստ պահեցան՝ մինչև եՀաս անդր կրտսերն Պկիպիոն խնդրել զվրէժ հօր իւրոյ և զՀօրեղբօր, և կանգնեաց անդրէն զղօրութիւն հաւմմայեցւոց։

ԲԵԿՈՒՄՆ ՋՕՐԱՑ ԵՒ ՄԱՀ ԱՍԴՐՈՒԲԱԼԱՑ

3798 · 542
պ.ք.ա. ժա.
622-625 ·
Լ.Ս. Լ.
Ս-Ն։

Պարաւած անակնկալ ցրուեաց զնմ խորհուրդս Յնիբաղայ, որ ինչ պատրաստեր առնել Յհռոմ։ Յմի ամ երկոտասաներորդ եր երկրորդի պունիկեան պատերազմին, զանցս յոլովս յայմ վայրի՝ի բաց Թողեալ սմանս համառօտութէ։ Յոր կային յայնժամ բդեշխք Ա։ Կղուդիոս Ցներոն, և Պ։ Իւիոս, որում անհաճոյ բաժին Պտաղիա յայս կոյս Պլեռեանցն՝ ուր ընդ Յադրուբաղայ առաջի կայր նմա տալ պատերազմ, որ՝ի լերինս անդր մեռձեալ էր։ Իսկ Ցներոն յաշխարհին բրուտացւոց և Պուկանիոյ եկաց կուսակալ՝ի միւս ծայր Իտալիոյ, զդէմ ունել Յհնիբաղայ։

Ոչ յոյժ աշխատ եղև Յադրուբաղ յամցս լերանցն, քանզի ձմեռապարհ անդ հորդեալ էր նմա յեղջօրէն, և մեռադիւրագոյն դարձեալ ազգք, ընդ որս անցանէր, ընդունելին զնա։ Յաքեաց ապա սուրհանդակս առ Յհնիբաղ, որք գերեցան՝ի ձմեռապարհն. և՝ի նամակահանէն, զոր տանէին, գիտաց Ցներոն զի Պէմբրիա է զօրաժողով նոցա. և խորհեցաւ՝ի կարևոր վտանգին, յոր փըրկուիցէ աշխարհին հաստատեալ էր, զգօնանալ քան զօրէնս յօդուտ հայրենեաց [1], և անակնկալ յանդգնութէ յամ և յերկիւղ Թշնամեաց՝ փութալ Տասանել խառնել բանակ ընդ բանակի իշխանակին, և միախուռն ուժգին զօրութեամբ պատերազմիլ ընդ Յադրուբաղայ։

1 Քանզի օրէնս էին զրահաւորս չինել նոցա, զոլ պահերազմ. և ի յայլոյ բաժանէիւր սահմանս, որ հատագոյս սահման անուանէր։

Յոբ ոչ զայս մեղադրեացե՛ր ոք նմա՝ ստուգիւբ զնո՛ր իրս պա-
տերազմին քննեա՛լ. զի արդարև տալերեցոյց զաշխարհն՝
խափանելովն զԱդրութեաղ գումարել ընդ եղեօր իւ-
րում ։ Որ Թէ և ազգ լինէր Աղնիւզազայ չու նորա , ոչ
մեծ ինչ էր վտանգ ։ Վասզի ի քառասուն և եղուց
հազար արանց , զօրահատոյց արար նուազուցոյն , եօԹն
հազար այր զընտիրս բանակին . իսկ այլք ի բանակեղ-
անդր զակիզ ածեալ ամրացեալ նստէին , քանզի և ոչ
կասկածելի էր յարձակել անդր Աղնիւբաղայ , և աւերել
զբանակ հզօր՝ ամրապահետ յերեսուն և հինգ հազար
արանց ։

Զու արար Աերոն . և ոչ ինչ նախ զօրականին յայ-
մանեալ իբրև հարուստ մի յառաջ խաղացեալ՝ աներկիւղ
ապա ի վտանգե յայտնեաց նոցա զնորհուրդս իւր , ա-
սե . ԱղԹամբ ահա ի յաղԹութեի աներկեւան , ի պա-
տերազմ՝ յոր համբաւ փախանակ ձեր մարտիցէ , և ընդ
լուր հասանելոյ ձերոյ խուճապելոյն կարբեդունացիք .
իսկ փառք յաղԹութեին բովանդակ ձեր եղիցի ։ Այսպա-
ցին գնացին ատեպ տարհասապա , և հասեալ գիշերային
խառնեցան ի բանակ հրովմայեցւոց , այլ ոչ զբանակ-
ետուն ընդարձակեցին՝ զի մի ինչ զգայցէ Թշնամին ։ Պոր-
կիոս բանակեալ էր մերձ ի բանակ բդեշխին , և եկեալ
յաւետեալ ի գունդս Իւիոսի , ատեան կոչեցին ընդ
առաւօտն՝ խորհել վասն պատերազմին ։ Իւիոս առ
վայր մի հանգիստ ասէր տալ զօրացն , այլ աղաչեաց զնա
Աերոն՝ զի մի դանդաղանօք ի յանդգնութեի խորհուրդս
մեր փոխեսցի , որում Ձեպով միայն հնար է յաջողել .
այլ զնաթս Թշնամեաց փութաստեղ յօգուտ արկանել ,
զՀեռաւորացն և որ մնա աստ առ մեզս կան , մինչ դեռ
անկասկածքն էն ։ Այմին իբրև փող Հարին ի պատերազմ ։
Աստրեբաղ յառաջ անդր մատեաւ ի Ձակատ բանա-
կին , և գյաւելուլ զօրաց Թշնամեաց բաղում իրօք գու-
շակեալ , գիտաց աներկիւղ զի ի միւսմի բանակին անդր
եկեալ էն . և կասկածէր բեկումն չար հասեալ եղեօր
իւրում , և վարանէր յոյժ զի անագանեաց հասանել
նմա յօգնութեի ։ Ի վարանս տարակուսին փող եհար կո-
չեաց յետս զբանակն , և խառն ի խուռն տագնապաւ
խաղացեալ գնոսա ի չու ։ Աիւերք ի վերայ եհաս , և ու-
զեցոյցք հմուտք վայրացն Թողին գնա և գնացին ։ և ոչ
գիտեր յո՛ երԹայր , մինչև եկին անկաւ յանկ Ասեաւս
բոս գետոյ . և իբրև խորհէր անցանել ընդ այն՝ ահա հա-
սին ի վերայ նորա երեքին բանակք Թշնամեաց ։ Նոյն

անշրաժարելի վտանգ մարտին զեմ ինչ հոգացաւ Լա-
դրուբաղ իբրև զօրավար քաջ և հարտաւր՝ անսխալ կալ-
գօք։ Կալաւ ամրագոյն տեղի գիւրձն ձորոյ՝ յոր տա-
րագուհին իւրում ձախոյ Թևին մի կարասցէն Թշնամիք
ի դիմի հարկանիլ, և կամ ի կողոպ. և խորագոյն ըղ-
բուն բանակն իւր և զաջոյ Թևն խորհէր յարդարել առ-
անձամբ ի Հակատուն։ Այս Հակատեցուցեալ Հեծելով
զզօրսն՝ եկայ ինքն ի բուն բանակին, և խաղաց ի վե-
րայ ձախոյ Թևի Թշնամեաց։ Վխտեր զի ի վախձան Հա-
սեալ է պատերազմին, և Հարկ է յաղթել կամ մեռա-
նել։ Յերկարեաց մարտն յերկոցունց կողմանց անսպառ
տելի։ Ամաւտնդ Լատրուբաղ ի Հակատու աստ պա-
տերազմի լուծին արար փառացն՝ զոր ի սկզբանէն արու-
Թեամբք բազմաց ստացեալ էր։ Օ գունդս պատաքե-
կեալս և որ զարհուրեին մարտնչել ընդ Թշնամեայ՝ որ
բազմաԹեամբն և արիաԹիք յոյժ առաւել էր, խաղաց
ցոյց գնոսա՝ խրախուսեալ բանիւ և օրինակաւ. և զգա-
ստիք զօրականն ողջոյն և սպառնալեօք Հնարեցաւ
դարձուցանել. մինչև ասպ իբրև զօրացան Հռոմայեց-
ցիք՝ ոչ կամեցեալ կեալ ի վերայ անկելոցն բիւրաւո-
րաց, որոց Թողեալ գՀայրենիս՝ յօժարամիԹք եկեալ Էին
գՀետ նորա, ետ զանձն ի խուժան մարտամեծոն լեգէո-
նացն, և քաջալիԹք անկաւ անդ որպէս արդարև որդի
Ամիկարայ, և Ամնիբաղայ եղբայր։

Ուր զեմ Հակատս պատերազմին՝ այս առաւել ա-
ղետաւոր եղև կաքեդոնացւոց, մանաւանդ զօրավարին
և անկելոցն բազմաԹիք, զորէն ինն ի վերէ Հարուածոյն՝
զոր առ Կամնեաւ ընկալան Հռոմայեցիք։ Վասնզի ի
կարքեդոնացւոց անտի անկան յաւուր յայնմիկ արք ի-
բրև չիսոս և Հինգ Հազար՝, և վեց Հազար այր գերի
վարեցան. իսկ ի Հռոմայեցւոց անկան ութ Հազարք։
Օ օրականն ապրեալ այնպէս խոնջեալ էր ի կոտոր-
ձէն, զի իբրև ձայն ետ նոցա Լիւիոս Թէ խումբ մեծ
Թշնամեաց Հեծի ի փախստ՝ Եռուն պատասխանի. լաւ
է ապրել նոցա՝ զի տարցին զոյժ պարտուԹիք իւրեանց
ի կաքեդոն։

Օ Հետ պատերազմին խակիսկ ի գիշերին յայնմիկ
չու արար Լիւիոս. և ընդ ամ տեղիս ընդ որ անցանէր՝
ընդ առաջ ելանէին նմա ձայնիւ ցնծութիք ծափս Հար-

1 Պ-ԱՒԻՒՈՒ Նոյնպէս յոյժ գԼԻՒ- ՈՒՒՆԵՑՈՅՆ, ՈՒ ԻՆՔ ՈՒՐԻՒ ՈՒՈՅՆԱԼ ՏՈՒ ԳԼԻՒՈՐ Գ ։

կանելոյ, փոխանակ առաջին արհաւրացն և տագնապին՝ զոր յայմ տեղւոջ ի գալ իւրում եհաղ, Ի կատարած աւուրն վեցերորդի հասեալ առ իւրն, ընկէց ի մէջ բանակին կարքեդոնացւոց զղջալս Աստուածաղաղ՝ յայտ առնել Աստիբազայ զդառն օրհաս եղեալ իւրոյ։ Ընդ ողորմ տեսիլն ծանեաւ Աստիբազ զանկնտս Կարքեդոնի, և ասէ. Աղդ վհատեալ է վասն նորա, արդ ոչ ևս աւետաւոր անդր առաքեցից պանծանօք. կորեաւ ընդ եղեալ խնամ Աստուածազայ և ամ ակնկալութիւն և բաղդ։ Այլ վաղվաղակի ամփոփեցաւ յերկերս սահմանաց աշխարհին բրուտացւոց, անդր գնամ զօրս իւր ժողովել՝ զօրս հաղիւս կեցուցանեալ առանց օգնականութեան ընդունելոյ ի կարքեդոնէ։

3799 · 543
Պատէր. ժա. 650.ժԳ.677. ԺԸ. 689։
Լաս. խԲ. ա. ծղ. Ը. Ֆ. ԹԹ. Ե. Ֆ.

ՆՈՒԱՃԵԼ ՍԿՕՊՈՒՆՑ ԶՍՊԱՆՆԱ, ԵՒ ԲԴԵՇԽ ԿԱՑԵԱԼ ԱՆՑԱՆԵԼ ՅԱՓՐԻԿԷ · ԱՆԴՐ ԵՒ ԿԱՐՔԵԴՈՆԱՑԻՈՑ ԿՈՉԵԼ ԶԱՆՆԻՐԱՂ

Ել ինչ առաւել յաջողեցին երբ կարքեդոնացւոց ի Սպանիա։ Կրտսերն Սկիպիոնի աժխոյժք խորհրդական կանգնեցին անդ վերստին զղօրութիւն հռովմայեցւոց, որպէս կանխաւ յայտնեալ արիական գանդաղութիւն վարբիոսի։ Վասնզի զերեսին զօրաւարս կարքեդոնացւոց, զԱդրուբաղ զիսգոնեան, զԱնննա և զԱզատ, յոչնախումբ զօրօքն բազում անգամ վանեալ խորտակեցին լերկինք հռովմայեցւոց, և կալաւ Սկիպիոն զաշխարհն, և ի սպառ նուաճեաց զայն ընդ ձեռամբ հռովմայեցւոց։ Սասենիսա իշխան մեծազօր ի Սպանիա, և նա յաւելաւ ի հռովմայեցիս։ Իսկ Սիփաքս միաբանեաց ընդ կարքեդոնացիս։ Այլ զարձաւ Սկիպիոն ի Հռոմ, և եկաց զդէսպէս յերեսուն ամի տիոցն իւրոց, և ընդ նմա Պ. Լիկինիոս Կրասոս։ Սկիպիոնի անկաւ բաժին Սիկիլիա, հանդերձ իշխանութիւնբ՝ զի կասցուցանիցէ զկարողութիւն յԱֆրիկէ ըստ պատշաճի իրաց ժամանակին. և չոբաւ վաղվաղակի ի գաւառ իշխանութեան իւրոյ։ Իսկ Կրասոսի կուսակալել զերկիրն՝ յոր ամբացեալ էր Աստիբազ։

Մի այլ դէսպանք ի Լիբիա
Տարցին զնեն համաբան պերճ.
Անկան ընդ մահ Ադրուբաղայ,
Ցոյս մեր և բաղդ առին վերջ։
Ռնոփ. փաքէրտ. ջ. Ե։

2 Ռնոփոս ի գեղեցիկ փաղիս, յորում զբեղոճն զբոյն Աննիբողայ ոտրոտեցէ, այսոքս փայ Բորբոռեալ նմա.

ԱՄ ԱՀՀԱ Ակիսին իմաստութեամբն և արիութիւնբ և ամ ձար-
տարութիւբ, որ անկ է հմուտ զօրավարի, կալեալ զնորս
Կարքեդոն և զամ Պաղեխա, այսու միայն կարող էր
առնել իւր անմահ յիշատակ. այլ նա զայսոսիկ նախա-
դրունս վարկաւ և աշխատասս բարձրագունսն խորհրդոյն՝
զոր երկնէր ի մտի, նուաճել զՀիբիկ. ուր և էանոյն
իսկ, և արար իւր ասպարէզ մարտի զաշարհն զայն.
Ընդ ի բազում տեղիս ասպատակեալ, և զԻտիկէ
զմեծամուբ քաղաքն պաշարեալ, զԱիփաբա և զՆոգու-
բաղ զօրաքն հանդերձ ի սպառ խորտակեալ, զնիոյն բա-
նակեղ հրձիգ արարեալ և զմիւսն զԱիփաբա, որ ամուր
զօրավիգն էր կարքեդոնացւոց, գերի վարեալ՝ ստիպեաց
յետոյ ուրեմն զնմանակիսբ աշխարհին խորհել ի հաշտուի.
Ընդաքեցին նոքա երեսուն այր յառաջնոց աւագանւոյն
ի մեծարոյ առնէին՝ որ Հաբիւբողբեարն անուանեբ. Ոբք
իբրև մտին ի խորանն Ակիսինի՝ անկեալ յերկիր, որ-
պէս էր սովորութիւն յաշխարհին, խօսեցան առաջի նո-
բա ցաճուքեամբ՝ զամ ինաս չարեացն Ընդհիբալ հա-
նելով. և յանձն առին ի գիմաց աւագանւոյն՝ հնազան-
դել ամ ակնարկութեբ կամաց ժողովրդեանն Հռովմայ.
Որոց պատասխանի ետ Ակիսին. Թէպէտև ի նուա-
ճել եկեալ եմ զՀիբիկ և ոչ ի հաշտութիւն, սակայն
զիրեալ նեբեցից. Ընդ դուք զամ գերին, փախստական
առ ձեզ ի հռովմայեցւոց, տուք ի դուբս. ամիոփեցէք
զզօրս ձեր յատելոյ և ի պաղղոյ, և մի ևս մտջիք ի
Պաղեխա, եղիք մեհեսցարուք ի կղզեաց՝ որ են ընդ Իտ-
տալիա և ընդ Սիբիկէ. և զամ գնասս ձեր, բայց միայն
ի քանիցդ, Թողէք ի հռովմայեցիս. և յետուն բիւր գրիւ
ցորենոյ տուժեցարուբ, և երեսուն բիւր դարեայ, և ար-
ծաթոյ հինգ հազար քանեար. Ընդոբիկ եթէ հաձոյ
Թուին ձեզ՝ արձակեացեն հրեշտակք ի Հռովմ՝ Ընդա-
վեր ի վերոյ յանձն առին զպայմանսն՝ մինչև դարձցի
Ընդհիբալ. Իսկ պարապ առեալ՝ խսկևիսկ արձակեցին
ընդ հրեշտակսն, որ երթայնն ի Հռովմ, պատուեր առ
Ընդհիբալ դառնալ յՍիբիկէ.

3802 . 546 Իսկ նա յայնժամ, որպէս յառաջ ասացի, ամրացեալ
յերկն սահմանաց Իտալիոյ. Որ երբև ընկալաբ զհրա-
մանն՝ ոչ կարաց ժուժել յարտասուաց, և հառաչմամբ
և կրձտելով զատամունսն զայրասլբ ի Թողուլ զերն
պատրաստական. Ել ոբ ընդ աբսորել ի հայրենեաց այն-
պէս դժկամակ եղև, որպէս Ընդհիբալ ի մեհեալ յեր-
կրե Թշնամեաց. Պատնայր ստեպ, շուրջ աճեր զաբ

իւր ընդ ծովեզերս Ասորւոց՝ բոլոր կալեալ վասն չա-
բեացն զղից և զմարդկանէ և զանձնէ ևս, ասէ Ի-ւիթոս,
անիծիւք բազմօք՝ Թէ ընդէր իակաւիակ գՀետ պատե-
Վադարեաց պատերազմին. այլ Սասինիսաս պահ ուներ առ ստորոտով բլրոյն՝ յոր բանակեալ էր Թշնամին, և ոչ թողոյր պարկիս անդր ածել և կամ զօրս յօգնա կանութեի։ Այլ ասէ պատգամաւորք Հասին ի Հռոմ մայ, զի եթէ յարկածից ինչ նկուն լեալ իցէ Սասինիսա՝ զրաւ արասցին պատերազմին. ապա եթէ զօրացեալ՝ խրախուսել և եթ գնա. զոր և արարին իսկ։ Այլ սոքին ևս քան զևս սատկանայր ի վերայ բանակի Թշնամեաց. և նոր այլ աղէտք՝ սրածու թեի խօթուքեի ձաբակեալ ի նոսա, առնէր հարուած սաստիկ. մինչև յանկնարինս մտեալ անձնատուր եղեն ի Սասինիսաս. յանձն առեալ տալ ի ձեռս նորա զՀատուածեալսն ի նմանի, և հինգ հազար տաղանդ արծաթոյ տուժել յաման յիսուն, և լուծանել զերդումն իւրեանց և զարձուցանել զաքսորեալսն։ Նոցին ամենեքին ընդ լծովն, և զրկելեալ միով գնացին ի բաց։ Յակ Գուլուսաս ի վրէժ արհամարհուածեին զոր ընկալաւ, առաքեաց գՀետ նոցա գունդ մի հեծելոց. յորոց ոչ կարացեալ խուսափել և ոչ զդիմունել նոցա անզէն և անզօր, ի լիսուն և ութ հազար արանց սակաւք ոմանք ապրեալ դարձան ի Կարքեդոն։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Յաղագս երրորդի պատերազմի։

3955. 697 Երրորդս այս պատերազմ՝ Թեթեև քան զառաջինն Թուէեալ վասն սակաւախոհձման քաջեամ ժամանակին, և զի բաղխմունք ՚ի սմա Ճակատուցն ոչ յոլովք եղեն և ոչ խիտ, սակայն ծանր և սաստիկ կա- տարածիւն եղև, քնաբարձ կործանմամբ Կարքեդոնի։

Ես.17.41.42: Ա՝ղ զգայնն կարքեդոնացիք անդստին ՚ի ժամանա- կի վերջին պարտութենէն՝ զի վտանգ է նոցա ՚ի հռովմայ- եցւոց. որք Հանապազ չարակնեին ընդ նոսա՝ քանիցս անգամ բողոք կալան նորա ՚ի պատճառս վերնոյն ընդ Ասդրուբաղ։ Իւր ՚ի խափանել զվտանգն՝ վճիռ արար աւագանին, և միաբանութեամբ աշխարհին եղոյց զՍդրու- բաղ զօրավար բնիկ զօրականին, և զԱրքեթալեն զինեալ կակիս զօրացն[1], իբրև պատճառաւ առաքինորդ պատե- բազմին ընդդէմ նուիրագացոց։ Հրեշտակս արձակեցին ապա ՚ի Հռովմ՝ գիտել յինչ միտս յինչ խորհրդի էցէ ծերակոյտն, և զի և նմանդեպ հռովմայեցիք. և ընկալան պատգամ խիտ՝ զի աւագանւոյ և ժողովրդեանն Կար- քեդոնի անկ է խորհել թէ ի՛նչ հաձեսցեն զնոսա։ Ալբե- նեալ անդրէն հրեշտակս արձակեցին. և ոչ առեալ պատասխանի, կամ պատ ՚ի պատ պատգամն ընկալեալ՝ ՚ի վաղնս եղեն աշխ մեծաւ անցելոց չարեացն, և մեռ առ դուրս Թուէր նոցա Թշնամին հասեալ, և անդստին զդառնացեալս ելս երկարաձիգ պաշարմանն զնուաձոլեթի քաղաքին յանդիման ասլոց նկարեին։

Պլուտ. ՚ի Նում. 352: Ի՛սկ ՚ի Հռովմ խնդիր եր յատենի ծերակուտին վասն բանիս այսորիկ. և նորոգեցան վէճք ընդ Վատն երեց և ընդ Վկիպիոն Նասիկա, զի հակառակ միաձայն էին խորհրդոք նոցա։ Վատն անդէն իսկ ՚ի դառնալ իւ- րում յաշարհէն ասէրիկեցւոց՝ զանգիտեցոյց զՀռոմ- մայեցիսերկիրսն։ Վ՚ասզի զոի ասէ, զԱրքեդոն՝ ոչ որ պէս կարծէքդ անմարդի և աղքատ և նկուն և խոնարհ, այլ բարգաւաձեալ բազմութիք առոյգ երիտասարդաց, փարեալ մեծութիքը ոսկւոյ և արծաթոյ, բազմամեայք

1 Մի՛տամ գեամ ՚ի նկատմունէ գիտաց եէին այլ և այլ զբաղմունս յիւրաքանչ- լինէր ազգէ, և անհնարին գանգամայն զբաղմամբ էր օգնական Աղգիանոս անուանէ։

թիւրացդի զինուք և ամենակազմ պատրաստութիւնք պա-
տերազմի, և այնպէս խրոխտացեալ՝ի նոսա և քաջայոյս՝
զի առ ՝ամ ինչ յանդգնեալ խիզախել։ Ոչ ապա աւանդ
դէն ընկեցեալ՝ի միջ առնէին Թուրս՝ի Թզենեաց աշ-
խարհին սփրիւկեցւոց՝ զոր ընդ Հանդերձին ծաճկեալ ու-
նէր։ և՝ի զարմանալ ամենեցունն ընդ գեղ և ընդ մեծու-
թիւն նոցա՝ ասէ։ Ոչինա երից աւուրց կուիւք էին։ պիտասիկք պէրճ.ծ.
զի այսչափ ինչ անջրպետուի է վայրաց ընդ միով և ընդ
Հնդկաստան։ Ապատան և Ոսպիկաց երկաքանչիւրոցն էին պատ. ՝ի
պատճառք։ Ոսպիկաց Հայեցեալ՝ի ժողովուրդ Հռոմ. կոփ. 352։
մայ՝ զի առ յոյժ ժպրհուիթէ չիմ ինչ յանդգնի լինել
ձեռներէց, և յաջողուիթքն յոխորտանայ և՝ի վերայ
ծերակուտին, և այնպէս զօրացեալ՝ զի՝ի կամն իւր բըռ-
նադատել զհաստարակապետութիւնն, լաւ համարիր զէր-
կիւղ վտանգին յերեսաց կաքսեդոնացւոց՝ի սամնահա-
րել և՝ի նուաճել զյանդգնութիւն նորա։ քանզի պիտէր
զի ոչ այնպէս զօրաւորք էին նոքա՝ զի և զՀռոմ ընկե-
ճել կարասցեն, և ոչ յոյժ տկար առ արհամարհելոյ ըզ-
նոսա։ Իսկ Կատոն խորհէր այսպէս, զի ժողովրդեան՝
որ խրոխտացեալ յաղթութիւք, և անսանձ համարձա-
կութէն չիմ եղեալն խարդաւանի, չիք ինչ բազմաճառանգ՝
օրպէս ունել իւր ոսոխս նախանձորդ, հնձոր անդատին՝ի
սկզբանէ, և՝ի ժամանակին չայնմիկ խոհեմացեալ և՝ի
զգուշանալ՝ի խրատեալ յիւրոց աղետից։ և ունել դաբ-
ձեալ երկիւղ արատաբուստ՝ մինչ դեռ սպառնալիք մեծա-
մեծ չարեաց են նմա՝ի ներքուստ։

Ոչ առ վայր մի՝ի բաց եդեալ զօրէնս արդարուէ՝
ընտրեսցեն քննողք, ո՞յերկուց աստի մեծարոյ արանց
իմաստասիրաց գտաւ ըստ հանձարեղ կարգաց քաղաքա-
վարութէ, և՝ի շահ օգտի աշխարհին։ Ոչ յոս ինչ՝ հա-
ւասար է վկայուիթէ՝ ամ վիպասպատում մատենագրաց,
զի յետ Կաբբեդոնի կործանելոյ՝ փոխոխուին մեծ եղև-
բարուց և իշխանութէ հռոմայեցւոց։ Ոչնկարագրութէք
այնուհետև ոչ երկիւղիւ և չարամբի՝ի ներքս սպրդե-

1 Իբրև Կարքեդոն, նախանձորդ ախոյեան հռոմայեցւոց աշխարհին, կործանեցաւ՝ի հիմանց, ... վայրենացեալ չայնժամ բաղդն խռովիր զնմ։ Սալուստ.։ ի դարէբ. Կոպէս։

Մինչ չև էր Կարքեդոն կործանեալ, ոսամին և ծերակոյտ Հռոմայոց խաղալուիթ և սղղուհ-

Թեամբ խառն վարէին զնշխանու-
թիւն։ ... Երկիւղ Թշնամոյն՝ի
բարեկարգութիւն ունէր զՀռոմ։
Իսկ երբև արհաւիրք երկիւղին
փարատեցան՝ի մտաց, հռւայ ընդ
հուպ փոխանորգեցին սկրկիւք չա-
ղոցութիւն, խրոխտութիւն և անառա-
կութիւն։ Կոյն. դարէբալ Յոփ։

ցին անկանել, այլ ամ համարձակուԹիւ գրոհ տուեալ. մինչև ի սուղ ժամանակի զօրանալ ունել զամ կարգս պետուԹեան. զի ամ ոք առանց ամենայն հեղգին զանձինս ի զեղուԹիւն և ի մեղկուԹիւն, որք կոծանելոյ աշխարհին կարապետք են։ Երեցն Ակիսիան[1], ասէ Պատերազմողս ի նաւս հռոմայեցւոց, նա հինն արկ հանդերձելոյ նոցա մեծուԹեան. իսկ կրտսերն նովին աշխարհս կալուԹիւ իւրով արար մնալոյ ամ անկարգուԹեաց և ցասփուԹեց։ Երբև կարքեդոն հինն ի վեր կոծանեցաւ, այն որ ի մարզս կրԹուԹիւ ունէր զհռոմայեցիսն անդառնդար ի վերայ իշխանուԹեան պայքարեալ ընդ նոսա, ոչ մեզմով և տակաւ ապականուելի բարուց ի նեղբս եմուտ՝ այլ յախտուն միանգամայն։

Ադդ. 42։ Ապա այս որպես և է, սահմանեաց ծերակոյտն պատերազմ ի վերայ կարքեդոնացւոց՝ պատճառս, մանաւանդ Թէ բաղաղայս ի վերայ նոցա յուզեալ զի հակառակ ուխտի դաշնացն նաւս առ իւրեանս կալեալ էին, և պատերազմ արտաքոյ քան զաշխարհ իւրեանց ածեալ՝ ի վերայ Թագաւորին Նիզակակցի հռոմայեցւոց, և յորդին նորա բռնացեալ, և ի պատգամաւորս հռոմայեցւոց՝ որ էին ընդ նմա։

Ինչ զեռ նոքա յայսմ մտաց խորհրդի էին, դէպք լինի ի բաղի յաջողեալ առաւել և խրախուսեցին զնոսա ի պատերազմն։ Վասնզի հրեշտակք յատուկ ըստ աշխարհին հասին ի հռոմ անծնատուր լինել հռոմայեցւոց, տալ զինս և զերկիր և զբաղաքս իւրեանց ի ձեռս նոցա։ Ինչ բարեբաղդուԹիւն։ Ուսիկ երկրորդ քաղաք էր յաշխարհին ափրիկեցւոց բազմահարուստ ծնխուԹիւք, և առ նմա նաւահանգիստ ապահով և ընդարձակ, հեռի ի կարքեդոնէ վաՀանուն ասպարիզաւ, տեղի քաջագործ ի զօրանիստ։ Որով ոչ ևս դանդաղեալ հրամանակեցին օրինօք զպատերազմն։ Եւ վաղվաղակի հրամանն առեալ Ա. Անիկլեոս և Վ. Արկիոս Ակիսորինոս բդեաշիք առանց իրիք յապաղելոյ չոչ առնել, և ծածկաբար պատուէր ընկալեալ ի ծերակուտէն մի առնել վաՀանան պատերազմին մինչև զկարքեդոն դիցեն ի փոչի, աճապարեցին հասին ի Լիլիբէոն Ակիկլեոյ։ Եւ նա

1 Երեցն Ակիսիան՝ առաջնորդ հռոմայեցւոց ի զօրուԹէ, կրտսերն ի զեղուԹէ։ Քանզի ընդ փարատել երկիրն Կարքեդոնի, և ընդ բառնալ նախանձոր գին, ոչ ոան ոան մեզմաբար՝ այլ սրընԹաց յատաբիուԹէ յախտս չարուԹեան ևս յաւժմուԹէ։ Ագաթեաս։ ։

ատորմիով ընդ նոսա բազմախուռն նաւաց, յորս էին ումեք բիւր հեւաւակաց, և հեծելազ իբրև չորեքհազար։

Ձև համբաւոյն հասեալ ի Կարքեդոն, պատասխանի պ-ԼԲ. 672։
զոր բերին պագամաւորքն՝ առաւել ևս խռովեցոյց զքաղաքն, և յաւելին վարանս կարքեդոնացւոց բանիւն՝ թէ նոցա անկ է խորհել ևս հաձիացին զհռովմայեցիս ։ Նչ յաղեաս տարակուսին արձակեցին հրեշտակս անդրէն ի Հռովմ, տուեալ նոցա զնամ իշխանութեն առնել որ ինչ օգուտ թուեսցի նոցա. մինչև զոր ոչ երբէք յանձն առեալ էին ի պատերազմնա, զանձինս ի բանս և զնամ ինչ թողուլ ի ձեռս հռովմայեցւոց, տեարս ունել զնոսա, և զանձինս՝ ծառայս նոցա ։ Ա.ՀԼ և ի խոնարհութենէ աստի ոչ գոյր նոցա յոյս յաջողուԹե. քանզի կանխեցին ուտիկեցիք բարձին ի նոցանէ զնամ արգասիս կամակար հնազանդութենն ։

Հասին հրեշտակքն ի Հռովմ, և լուան զհրատարաս կել մարտին և զչու զօրացն ։ Նչ գիտացեալ զի սուբ հանդակէք ի Հռովմայ երթեալ էին ի Կարքեդոն՝ ա ծել զվճիռ ծերակուտին և ազգ առնել զչու նաւատորմն մին, ոչ ևս ինայր նոցա խորհել. այլ անձնատուր եղեն ամենայնիւ՝ որ նոցա էր, ի ձեռս հռովմայեցւոց ։ Նոքա Հետուն պատասխանի. ։Բանզի խորհեցարուք զբարին՝ հաձոյ է ծերակուտին տալ ձեզ ազատութեն, վարել ըստ ձերոց օրինաց, և ունել զինչ և զատացուածս զնբա քանչիւր և զհասարակացն. բայց միայն առաքեցէք պատանեսն ի Լիլիբէոն երեք հարիւր մանկտի յազատագրոց քաղաքիդ, և ժամադրութեն ահա սահմանեալ ձեզ աւուրբ երեսուն, և յանձն առնուցուք զնամ զոր միանգամ տացուցեն ձեզ բդեաշխք։ Ինդ յետինս այս պայման խռովեցան յոյժ պատգամաւորքն կարքեդոնացւոց, և առ տաքնապ խորհրդոյն՝ ոչ ինչ կարացեալ տալ պատասխանի կամ յայտնագոյնս ինչ խնդրել հրատման, թէպէտ և ոչ յայտնեալ օգուտ ինչ էր նոցա, մեհենեան գնացին ի Կարքեդոն, և ցուցին անդ զնամ իբրև ստուգութեն։

Խնամ էին և անբերելի պայմանքն, այլ այն առաւել տագնապեցոյց զնոսա՝ զի բնաւ լուեին հռովմայեցիք զքաղաքաց՝ ի տալ նոցա զայլ ազատութեն ։ Ոակայն Հարկ էր Հնազանդել. քանզի ի վերայ առաջոց և զվերջինն զայն Տարուած ընկալեալ՝ ոչ ևս կարող էին կալ առաջի նոցա, այնուհետև՝ զոր և ոչ զդէմ ունել կարացին Ա՝ սինիսացւ։ Յամենայնէ չբաւորք էին. ի զօրաց, ի Հաւ բարոց, ի նաւաց, ի նիզակակցաց, և ի կարեւորէն քան

զամենեսեան՝ ի յուսոյ և ի քաջալերուԹիւն։ Լաւ հաւ մարեցան կախիլ և յատաջ քան զժամանակիէն հրաւ մանին հնազանդեալ՝ ամբոխել զթշնամին, և արձակեցին իսկեալ զպատանդսն՝ ԹէպԹա և օգտի ինչ այն ոչ ուշ նեղուլ։ Այլ մանկտին յուզարկաւոր՝ էին յաղնուական նաց քաղաքին ընտրեալք, ակնկալուԹիւ իւրաքանչիւր ազգատոհմին։ Ի վաղուց անհնարին՝ ի ձայն գուժին և արտասուաձոյ հեծեծանաց ամենեցուն, մանաւանդ մարցն՝ որ ցաւագին ողբովք զՀերսն խղճին, զկուրծս բաղխեին, և խելայեղեալք իմն առ ցաւոց և յուսահատուԹ ողբոմ աղաղակաւն զընտաս խոտասիրուտս ի մարդկանէ ի գուԹ ածէին։ Այլ աղետատոր ևս էր տեսիլ ի չարաժամ պահու մեհենեցոյ նոցա ի քաղաքին։ Օր մինչ ի նաւ անդր յուզարկեալ գնասա մարցն, և գյեղտին հրաժարական ողջոյնն տուեալ նոցա՝ ոչ ևս այն ուշ նեղուլ տեսանել զորդիան, Թանալին գնոսա արտասուօք իւրեանց, և գիրկընդխառն փարեալ գնոքօք՝ ոչ կա բէին Թողուլ գնոսա, մինչև հարկ լինել բռնի ի գրկաց մարցն կորզել զմանկտին. որ նոցա դառն էր քան զանգնան փեռեկել Հանել ի նոցանէ։ Հասեալ նաւացն ի Մխիթարա, անտի արձակեցան պատանդքն ի Հռովմ. և ցպատգամաւորս ասէն բդեաշխքն, ի ժամանել յԱԹտի կէ՝ տացուք գիտել ձեզ զպատուեր ծերակուտին։

Պ-ղԼԲ. 675։ Ընդ. 44-46։ Յայսոսիկ պատահարս կասկած երկիւղին առաւել և առաւել անսանձելի, որով օր անդէտ հանդերձելոցն խիԹայ յամ չարեաց։ Իբրև լու եղև հասանել նաւացն յԱԹտիկէ՝ եկին պատգամաւորք ի բանակն Հռովմայեցւոց, և ասեն. Գամք ի Պարբեդտէ լսել զպատուեր ձեր՝ պատրաստ ի հնազանդել։ Գովեաց բդեաշխն գյօժարուԹէն նոցա և գՀրամայեաց ածել առ ինքն վաղվաղակի զամ զինս իւրեանց առնենգ հատատարմուԹիւ։ Այրքա յանձն առին, այլ ասեն. Դուշ լեցի քեզ յոր վտանգ հասուցանես զմեզ ի ժամանակի յորում Ընդրուքաղ գժգոհեալ ընդ մեզ, այնու գի հնազանդիմք ի սպառ հռովմայեցւոց, մերձ առ գրոս մեր հասեալ կայ երկրաշարժ բիւրուք սպառազինեալով։ Խոհեալն ասէ. Հռովմայ անկ է հոգդ այդ։ Ել գանդաղեցան կարբեդոնացիք առնել գՀրամանն. և ահա հասանէին ի Պարբեդտէն անգր ի բանակն հռովմայեցւոց բազմութիւն սայլից աղխաղեալ ծանրաբեռնեալ կահիւ կարասեաւ պատերազմի, երկերիւր հազարաց մարդկան ամենակազմ սպառազինուԹիւ. և խուռն նետից և նիզակաց, և մեծ

քհնայք երկու հազար, քառաձիգ և նետաձիգ։ Օ՜հետ գային հրեշտակք կարքեդոնի, և ծերունիք արդյք աւա դանդոն, և երկոցունք 'ի քրմացն, 'ի գուշ ածել ըզհռովմայեցիսն՝ որ ահ հանդերձեալ էին դառնալոյ գնոսա 'ի յաւէժ սպրկուն։ Այնուամենայնիւ բդեաշխ, քանզի ինքն էր առաջնորդ բանին, յոտն եկաց ընդ հասանել նոցա՝ գուշ և քաղցրութիւն ցուցանելով. և ապա այլափոխեալ յանկարծակի զդէմն՝ լուրջ և խիստ երեսօք ասէ. Վասն զյօժարութեն ձեր առ պատուէր հրամանի ծերակուտին. այլ հրամանն է ինձ յայտ առնել զլերքինն նորա կամ՝ ելանել մեկնել ձեզ 'ի կարքեդոնէ, զի կործանեալ զքաղաքդ զայդ սահմանեաց, և փոխել ձեզ այլուր զնակուտեն ձեր՝ ուր և հաճոյ թուեսցի 'ի սահմանս տերունեն ձերոյ, 'ի մերկերկրեայս աշխարհիդ հեռի 'ի ծովէ ուխտուն ասպարիզաւ։

Որպէս շանթ 'ի յերկինէ վիհոս այս եղ 'ի բերանոյ բդեշխին. և գուժիւ և աղաղակաւ, որպէս հարեալք յահմանէ կարքեդոնացիք, ոչ գիտեին յարհատրացն՝ ուր իցեն կամ զի գործեցեն։ Իսկ երկիր թաւալեալ, զօձիս պատառեալ, և զտարտնոպ սրտի հեծեծելով և հառաչմամբ յայտ առնէին։ Այսպէս իբրև առ փորր ի անձին զգացին. մերթ առ դիմս գձեռս իւրեանց առ բարձեալ պղտատէին և մերթ առ հռովմայեցիս, աղերսելով գնոսա առնել գթութեն և իրաւունս ընդ ժողովուրդ անոյս։ Այլ իբրև ոչ ոք էր որ լսէր նոցա, դարձուցին զպաղատանսն 'ի թշնամանս և յանէծս ցաւագին, սպառնացեալ վրէժխնդրուել 'ի դիմս ծածկատեսց 'ի վերայ ապրկատութեն և ուխտադրժութեն նոցա։ Այ տեսիլ աղետից ոչ կարէին և ինքեանք հռովմայեցիք ժոյժ ունէլ յարատասուց, այլ անդադար սահմանեալ էր վիհոն։ Այլ ոչ պատգամաւորացն ժամ եւտուն էրթալ միւսանգամ յանդիման լինել ծերակուտին 'ի գարձուցանել զվիհոն. այլ Տարկեցուցին գնոսա տանել զպատգամ Տրամանին 'ի կարքեդոն։ Իսկ անդ քաղաքացիքն ահիւ մեծաւ սպառեալ յիսկոյն ժամ 'ի ժամ Տասանելոյ պատգամաւորացն։ Այդքա աշխատութեբ բազմաւ զամբոխն փարատեալ, քանզի խռնեին գնդօքք լսել զպատգամն՝ զոր և 'ի կերպարանս նոցա մարթ էր վերծանել, եկին յանդիման եղեն աւագանւոյն և ցուցին զնորդոմ Տրամանն։ Այ միաբարբառ գոչեն առնին գուշակեաց ժողովուրդն զպյժ դառնութեն. և էին սգաստեհաւք 'ի քաղաքին ողբք և յուսահատութեն և ցասումն և կատաղութեն։

Տացի ինձ դադարել ասա առ վայր մի, և քննել զոր ինչ արարին հռովմայեցիք ընդ կարքեդոնացիս։ Այլ ա՛ւաղ՝ ի հատուած բանիցն Պողիբիոսի, յորում իրքս այս պատմին, ապառն ասա՛ ի կարևոր մասին պատմութենէ։ Վասնզի յոյժ ցանկալի եր ինձ տալ ինչ մտածութիւն իրաւախոհ մանեակագրին զայսմանէ, քան զերկարաձիգ ձառս՝ զոր Պղպիանոս պատմի հրեշտակացն խօսեցեալ ընդ բդեշխին։ Այլ ես ոչ կարծեմ՝ թէ Պողիբիոս, այլ իմաստուն, խոհական և արդարասէր, անքասիր առնէր զհռովմայեցիս։ Օ՛ի ոչ գտանեմ ես ի գործս յայս ընկերագիրը նախնի հռովմայեցւոցն՝ զինծանձնութենէ, զանզուսականութենէ, զուշզուշէ, գաղշել ի խարդախութենէ, և ի մեղմիկ կեղծաւորութենէ, որ որպէս այլոցս ասացաւ՝ օտար են այսոքիկ ի հռովմկական հոգւոյ։ Օ՛ի ոչ ձանձրացեալ պատերազմաւ բազմկին ընդ կարքեդոնաց յիս։ Այլ ընդ՛որ անլուծանելի սրբազան դաշամբք խոստացեալ նոցա ազատութիւն, և ինքնօրէն աղխիամի զնոսա թողացեալ, թագուցին ընդ նոքօք պայմանս ի կործանումն նոցա ի սպառ։ Հիմ՛ ընենգաւոր խորհուրդ կործանման կարքեդոնի գարանեցին ընդ վատ լուսնթին գաղաղաց, որպէս եթէ անիրաւութենէ ի պատ՛ի պատ բանից արդարացի։ Այլ թող զայսոսիկ։ ընդ՛որ ոչ ետուն ձանձրացեալ զվերջին հրամանս իւրեանց՝ մինչ չև թաւփեալ՝ ի ձեռաց նոցա զպատանդսն և զղէնս, որովք տկարացուցեալ հարկեցուցին զնոսա յանձն առնուլ զնոմ պայմանս։ Յայսմնի իսկ պատճառաքն էն. քանզի կարքեդոն յետ այնչափ հարուածոց և պարտութեց տկար և անզօր և մերկացեալ յամենայնէ՝ տակաւին սարսեալ զնոսա, և ոչ էր նոցա անկասկածելի պատեբաղմանս նուաձել զնա։ Այս վտանգ մեծ է զօրանալ յոյժ մինչև լինել անվտանգ յանիրաւութենէ, մանաւանդ եթէ մեծաշահ օգտութենէ անտի կայցէ անկասկածելի։ Վասնզի ուր շահ օգտին է, անդ անիրաւութենէ անհրաժարելի լեալ՝ յոմ պետութենէն փորձոյ կայցա է։

Պ՝ղիբ. ժբ. 6դ։ Յայժ օտար ի սոցանէ զաքայեցիսն լեալ վկայէ Պոլիբիոս գովութիւ մեծաւ։ Վասնզի ժողովուրդ, ասէ, հեռի ի նենգութենէ և ի պատրէզ զազգս գաշնաւորս առ ի մեծութիւն իւրեանց, որք և ոչ ընդ երկնամիս այնպիսի ինչ առնել օրէն համարէին։ և յաղթուն արդար և փառաց արժանի զայն միայն համարէին՝ զոր վնաւք և արիւնիւ և քաջութիւ կանգնեսցեն ոք։ Այլ յառաջ մատուցեալ զգանան՝ Պռ հռովմայեցիս, ասէ, հաղիւ արդ

հետք նախնեացն իւրեանց առաքինութեանց նշմարին. զոր նշանակել պարտ համարիմ յեղծումն մտաց խնամոցն՝ որ այժմ առ ամ իշխանս աշխարհաց ընկալեալ է, թէ անկեղծ հաւատարմութեամբ և բարւոք քաղաքավարութեամբ ի միասին պատահել ոչ կարեն, և թէ առանց դաւոյ և նենգութեան չիցէ յաջողութեամբ իրաց հասարակաց ի պատերազմի և ի խաղաղութեան։

Ա.Յլ ես դարձայ ուստի էի։ Ել աձապարեցին բը- Եզր. 55։
դեաշխք դիմել ի վերայ Պարքեդմին, ոչ ինչ երկուցեալ Մոր. Ժ.
յանգիտ քաղաքին. և դանդաղութեամբ նոցա պարապ ա- 833։
ռին կարբեդմնայիք պատրաստել ի պատերազմ. և միա բանեցին պահ ունել քաղաքին։ Պատերազմողացն արտաքոյ քաղաքին զօրավար եկաց Խոզրուբադ, երկուց բիւրուց։ Վասնի աղաչաւորս առ նա առաքեցին՝ անյապաղ լինել ի սէր հայրենեաց, զի առ աչի հաւանեցեալ ոմանք անհրաւեցին նմա։ Նա ոչ ի ներքս ի քաղաքի անդ զօրքն էին՝ նոցա զօրավար եկաց միւս Խոզրուբադ Թոռն Վահնիսայ։ Օ հնս անհնարին երագութեամբ անդրէն դարձնեալ պատրաստեցին, զպարանս և զմեհեանս և զերդարակս ի դարբնոց փոխեալ յորս արք և կանայք անդադար ի գործ լինէին գրիւ և գիշերս. և օր ըստ օրէ կազմածոյ զինուցն Թիւ՝ հարիւր և քառասուն վահան, սուսերք երեք հարիւր և հինգ հարիւր նիզակք, հազար նետք, և մինչեւնայք բազմաթիւ ի ձգել զանոսիկ։ Ընդ և ի լնուլ գերիսն նիւթոյ լարից աղեղանց՝ հասին կանայք զդիսակս իւրեանց, և եռուն ի լնուլ թէն բաւականի։

Ասայ Վահնիսայ ընդ այն ինչ գժուարեցաւ՝ զի ի վաստակս իւր մտանէին պղտք. քանզի ինքն զպարեգոտնացեան տկարացոյց ի սպառ, և ապա ի յաղթութիւն մատուցին և ոչ խորհրդակից գնա ընդունէին հաւանմանէ ցկէ, և ցրտացաւ ի սիրոյ նոցա։

Զու արարին հաւանմանէիք երթալ պաշարել զՊարքեդմն, ի մտի եդեալ անձամբ պատերազմաւ ունել զքաղաքն. և ընդ անակնկալ յանդգնութէ պաշարելոցն ի դէմ մանարատուի յոյժ զարմացան։ Վասնի յարձակէին նոքա ստէպ, զմինչեւնայս հրձիգ առնէին, և նեղէին զսոսիկ՝ որ զնարակոյ կենդանեաց երթային ի բանակէն։ Ետուն կենաւրինս, և Վանիլաս անտի հարկանէին զքաղաքն. իսկ Ակիսիոս, որ Ալիքնկեցին կոչեցաւ յետոյ, հազարապետ զօրացն էր յայնժամ և երևելի ի մէջ սպայիցն՝ խնամս տանէր իւրով և քաջութեամբ։ Հաղում ուրէք սխալեաց

ԱՄ ԱՀ:ՀՀ բդեաշխն, որում սա զինուորեր, ոչ անսացեալ խորհրդոյ սորա. իսկ ինքն դեռ ևս ի ծաղկի պատանեկութենէն՝ ի բազմապատիկ չարեաց զգօրան զերծոյց, զվատնգեալս անչմուռճք զօրագլխացն։ Վասէաս ոմն ի քաջաց, որ հին ծերագունդն Թշնամեաց զօրավարն էր, և ստեպ յարձակմամբ Հարկանէր զերթեալսն ի Հարակ գրաստուց, ընդ տեսանել զԱկիպիոն ընդ նոսա՝ ոչ ևս իշխէր երևել առ տաքոյ բանակին. քանզի այսպէս նա ի կարգի ուշեր զգօրս, և զգաստէ պատէ տեղիս առնոյր յօգնականութենէ։ Ի հրաւիրեալ անուանէ նորա ոմանք ի սկզբան ի նախանձ չարժեցան. այլ ի զարմանս զնախանձ նոցա փութեաց Ակիպիոն զգաստութենէ իւրում և զգուշութենէ. մինչ և ի գալ հրեշտակաց ի ծերակուտէն՝ գիտել զզրոյց բանակին, միաբանեցեալ ամ բանակն ի գովել զնա, զօրականք և սպայք, և զօրավարք գլխովին, իբրև ի միոջէ բարբառոյ բարձրացուցեալ զվաստակս արի պատանւոյն։ Վանզի յոյժ կարևոր է աղօտացուցանել զպայծառութենէ նորա՝ դիւրընտրել և Հաւնոտ գնացիւք, և մի զպարզացուցանել զնախանձ սեգ և յանձնապաստան իշխանութեամբ, որ զանձնասիրութիւն պղտոց զգուռել գնաւտ իւրում է, և զվաստակս առաքինութեն ատելի առնել յաչս նոցա։

3857. Ճօ։ Յաւուրն յայնմիկ հիւանդացաւ Ասինխոսա ի մահ, և կոչեաց առ ինքն զԱկիպիոն՝ տալ նմա զնամ իշխանութենէ ուղղելոյ զիւր աշխարհին և զնմ ինչ զիւր, որպէս Հաճոյ Թուեցի նմա և յօգուտ արքայութեան։ Ասէ մինչ չև Ակիպիոնի Հասեալ՝ օրհաս մահուն կանչեցեալ։ Այս պատուէր եմ Ասինխոսա որդւոց իւրոց ի մեռանել իւրում, անսալ առնելոյն զօր և ասացէ Ակիպիոն, և զնա եդ նոցա ի Հայր և յոստիկան. Ո ազգ և զպայազատուն որդւոց Ասինխոսայ ընդարձակագոյն յԼատց Հառեցոյը՝ զի մի կարքեդոնացւոցն ասա կարգ պատմութենէ ընդՀատեսցի։

Պատանին Ակիպիոն յոյժ մեծարոյ եղև առաջի փառաւոց, մինչև լքանել զիւրն և առ Հռովմայեցիսն անդր Հատուածել առելի քան երկու Հազարաւ հեծելոց յանդիման եղեալ նմա. որ ապա զօրավիգն մեծ պաշարք ղացն եղև։

Կալպուրնիոս Պիսոն նորոգ կացեալ բդեաշխ, և փոխանորդ նորա Պ. Ասինկինոս Հասին յԱլբիկ ի մէջս գարնայնոյն, որոց զաւուրս պատերազմի անգործ արաբեալ ոչ միայն արուեստիւն ինչ ոչ գործեցին, այլև Հա-

բուածս բազումս ընկալեալ զԵռնեայ դանդաղեին սաստ-
կացուցանել զպաշարումն ի վերայ քաղաքին։ Որով
կարգեդծացիք քաջալերեալ յաւելուին օր ըստ օրէ, և
ստուարացուցանէին զնիզակակացոյն բազմութիւն։ Ա՛յս-
քեղեն մինչև ի Աղեքսանդրիա առ սուտ վիլլպատն՝,
որ կարծեցուցանէր զանձն որդի Պերսեոսի, հնարել
յորդորել զնա ի գործ պատերազմին՝ զոր խորհեր տալ
ընդ հռովմայեցիս. և խոստանայրն նաւօք և գանձիւք
օգնել նմա։ Ո՛յսոսիկ զգացեալ հռովմայեցիքն՝ կեղա-
կարծեին օր ըստ օրէ ընդ ելս իրացն, և քան զոր կար-
ծէին ի սկզբան՝ ծանրանայր տակաւ ի վերայ նոցա
գործ պատերազմին։

Զոյժ առելի եր նոցա դանդաղութիւն զօրավարացն իւ-
րեանց, և բամբասէին զնոսա. և եռանդն եր ամենեցուն
ի գովել զպատանին Ալիպիոն, և ի պանծացուցանել
զչքնաղ առաքինութիւնս նորա։ Ա՛յս ինքն յաւուրսն յայ-
նոսիկ եկն ի Հռովմ խնդրել զշնորհատուէն. որ իբրև
եկաց յատենի՝ անուն նորա և տեսիլ կերպարանին,
հռչակ համբաւոյն և հասարակաց կարծիք մնաց՝ զի ա-
մենեքին համարէին իբրև ի դիցն զնա սահմանեալ՝ ի
վճարել զերդորդն զայն պատերազմ, որպէս
երեյն Ալիպիոն՝ որում թոռն եր սա որդեգրութիւն զեր
կրորդն վճարեաց, այս ամ յորդորեցին յոյժ զսիրտ ժո-
ղովրդեանն՝ մինչև հակառակ օրինաց և ծերակուտին
օրինասէր վըհմխրութիւնք կացուցանել զնա բդեաշխ
փոխանակ շինապետի. և առանց վիճակ արկանելոյ գա-
ւառացն, որպէս էին օրէնք, հնուսկալ զնա կարգեցին
Ա՛սիոյիկ, Թեսպէտ և իշխանակից նորա Պուբլոս հակա-
ռակ եկաց։

Իսկ իակ զօրաժողով եղև Ալիպիոն, ելից զթիւ պա- Աղ. 69։
հասելոյն. և չու արարեալ ընդ Սիկիլիա՝ հնաս վաղվա-
ղակի ՀՈւտիկ։ Ո՛չ հնաս ի դէպ ժամանակի. քանզի
Ա՛նանկիոս փոխանորդ Պիսոնի յանդգնութիւնք ի գժուա-
բաձս անկեալ, և արգելեալ փակեալ անդ ի Թէնամեաց,
ի վաղուն կոտորել ի նոցանէ հանդերձեալ էր՝ եթէ
ոչ Ալիպիոն, ընդ ժամանել իւրում անդր, իրագէկ լեալ
վտանգին՝ խաղացուցաներ գիշերայն ընդ ծով զզօրսն
հասանել նմա ի Թիկունս։

Ո՛չ ոք զայն զնա՛մ հոգացաւ անդ Ալիպիոն նորոգել զըզ- Աե. 76։
հրահանգս զօրականին, քանզի եղծեալ էին ի նոսա ի

1 Աերեւոյ։

սպառ կարգք և աստիճանք և հնազանդութիւն բարձեալ՝ այլ ամ հոգք էին նոցա յաւարառութիւն, ի շռայլել և ի զբօսանս։ Օ անպիտանս ի նոցանէ ի բաց վարեաց, և որ զնպարտին ածէին՝ հրամանն ետ նոցա կերակուր անպատճառն ըստ պատշաճի զինուորացն ածել, և խստիւ արգել զնփափուկս և զպատս զեղխութիւն։ Օ այսոսիկ ի սուղ ժամանակի և դիւրաբ յարդարեալ և ուղղեալ, քանզի յանձնէ տայր ամենայնի օրինակ, ապա համարձ գաւ ունել զօրս, և խորհել հաստատութիւն ի պաշարումն։ Պատուէր ետ զօրացն բառնալ տապարս և լծակս և սանդուղս, և ած զնոսա գիշերի լուելեայն ընդ կողմն քաղաքին՝ որ կոչէր Աղեգարա. և հրամայն ետ յանկարծ աղաղակ ուժգին բառնալ ամենեցուն, և յարձակեցաւ սաստկութիւն։ Իսկ որ ի ներքս ի քաղաքին էին՝ ի յե զակարծում գիշերային պահուն զարհուրեալք զառաջինն, ասպ զդէմ կալան քաջութիւն, և ոչ որք ետին թշնա մեաց ի պարիսպն անդր ի վեր ելանել։ Վէտանին արկեալ Ակիսիան յաշտարակ մի լքեալ ամայի արտաքոյ քաղաքին հուպ ի պարիսպն, զօրահատոյց արար անդր գունդ առնդի և քաջասիրտ զօրականաց, որք կամէրք արկեալ անտի ի պարիսպն մտին ի Աղեգարա, և ըղ գրուանն խորտակեցին։ Աշտապետաց և Ակիսիան ի ներքս, հալածել անտի զթշնամին։ Վազբա խուճապեալ յանակնկալ յարձակմանէն, և կարծելով եթէ կայսն թշնամիք զբաղքն դիմեցին առնդանել՝ ի դղեակն։ Աղբ և զօրքն բանակեալ արտաքոյ քաղաքին փութա յան զհետ նոցա, Թողեալ զանակատն ի ձեռս թշնա մեաց և փախուցեալ։

Ադդ. 56. 57։
Սոբոէ. 383։

Աղդ. 56. Ասկէ չեմ այլ ևս յառաջ մատուցեալ կարևոր համա բիւմ տեղապրել սուղ ինչ զդիպս և զմեծամեծն Պարքե դոնի, յորում էին բնակեալ ի սկզբան անդ պատերազ մին եօթանասուն բիւր մարդիկ։ Իր քաղաքս այս կա ռուցեալ ի ծոց ծովու իբրև ցամաքակղզի, այր պարա նոց կամ կիրճ կցորդութեամբ ընդ ցամաք՝ քան և չինգ ասպարէզ ի լայնուն. և չրջապատ նորա՝ երեքբարիւր և վեցհարիւր ասպարէզ։ Ջարևմտից կողմանն բաղուկ կար կառուեալ ի ծով իբրև կէս ասպարէզ, որ ընդ տղմուտն անջրպետէր, և ժայռք չամ կողմանց, և միով չրջա պատեալ պարսպաւ։ Իսկ ի չարաչ և ի ցամաք կուսէ, ուր էր դղեակն Խերսա, պատեալ երեքկին պարս պաբ՝ երեսուն կանգուն ի բարձրութիւն, և ամրա ցեալ չուրջանակի մարտկոցօք և աշտարակօք՝ հե-

ոք ՚ի միմեանց ուղեցուն ձորագոփ : Ջորեքջայրկեան աշտարակքն էին , և պարիսպքն կրկնայարկ . և կամարակապք ՚ի ներքոյ , և ընդ նոքօք դադարք փղոյ երեքաբիւրօրոյ՝ ամենակազմ պատրաստութիւք , և ՚ի վերայ՝ ասպատան չորեք հազարաց ձիոյ , հանդերձ մարտագօք : Այս օթևանաք քսան հազար հետևակաց և չորեքհազար այրուձիոյ : Այս ամենայն կազմութիւն ՚ի պարիսպն անդր էին : Ընդ մի ևեթ կողմն քաղաքին խոնարհագոյն էր պարիսպն , և տակաւ յամայի ուրեք անկեան՝ սկիզբն ՚ի բազկաձև ցամաքէին առեալ , և աւարտ ՚ի նաւահանգիստ՝ որ յարևմտից կողմանէ կային : Ուստի կրկին էին անդ նաւահանգիստք հազարդեալք ընդ միմեանս , և մի մուտ էր նոցա՝ եօթանասուն ոտնաչափ ՚ի լայնութիւն , շղթայափակ : Յաջմէնն նաւահանգիստ վաճառականաց , և ՚ի նմա օթևանաք նաւապետ բազում և զինուց . երկրորդն ներքագոյն՝ պատերազմիկ նաւաց , և ՚ի միջի նորա կղզի մի կոթող անուն , և շուրջ զնովաւ և զնաւահանգստիսն թաւմբ քարապատուար , և ՚ի նմա խորշ առ խորշիւ նաւակաչք ուրոյն՝ ՚ի յարկ ծածկութեան երկերիւք և քսան նաւաց . և շտեմարանք ՚ի վերայ նոցա՝ յորս պահէին սպառազինուն և ամենայն կազմածք նաւաց : Ներքանչիւրոյ ՚ի նաւակայիցն մուտք կրկին սեամբք զարդարեալ , սիւնք կնճեայ յոսկեան կարգաւ . որպէս զի և կղզին այն և նաւահանգիստ երկուսեքին իբրև սրահք ճեմելիք հրաշակերտք տեսողացն երևէին : Այս ծովեզերեայն ապարանք էին ՚ի կղզւոջ անդ հանդիպ մտից նաւահանգստին՝ ծովահայեաց ՚ի տեսանել զամենայն , այլ ՚ի ծովէ անտի ոչ էր մարթ ՚ի ներքս ՚ի նաւահանգիստն հայել : Այս ոչ յարտաքին նաւահանգստին ՚ի ներքսագոյնն ակնարկել վաճառականաք կարէին՝ կրկին պարսպօք անջրսկեառեալ . և նաւահանգստիցն երկաքանչիւր այլ և այլ դրունք էին անդստին ՚ի քաղաքն մտանել : Որովք յերես Կարքեդոն բաժանի . ՚ի նաւահանգ Պաւղ . ՚ի պիսան կրկնակ՝ որ յամուտն կղզւոյն Կոթոն երբեմն կոչի , Փաղ . 512 : ՚ի դղեակն կոչեցեալ Իվերսա , և ՚ի բուն քաղաքն տեղի բնակութեանն զդղեկան՝ որ կոչէր Կեգաբա :

Յաղթութեամբ ՚ի վաղիւ անդր զամենայսդայտ հարուած Ագաթ . 72 : ծոյն վըճիռ կայսեցեալ խնդրել ՚ի Թէոդեմաց , և բառնալ ՚ի քաղաքացոց զնմ յոյս հաշտութեանն ներելոյ , եհան

1 Ասի որ նախնոյ պրոկոպեայ Կեսարացւոյ պատմագրի հռոմայեցւոց , և յորմէ ետուն սա տիտղոսին տալոյն :

ի վերայ պարսպաց ի տեսիլ ամ բանակին հռովմայեց-
ւոց զնա զամ գերին, և զնա ազգս տանջանաց ած ի վերայ
նոցա, զանձն բրեալ, և յընչայն և յականջս անսպառն
գնոսա արարեալ, և զմատուցեան ծայրատեալ, և զմերք
մարմնոց նոցա գեղեբեալ սանտրաձև երկաթի քերչօք. և
յետ ամ պատուհասիցն հրամայեաց հռոմէ զնոսա ընդ
պարիսպն։ Ընդ այս գործ անկաթեն Ազգուբաղայ
սոսկացան կաքեդոնացիք. խոկ նա և զբազումն յաւա-
դանչէն, որք խափանել ջանային զնմա, ետ անհնոյ
սպանանել։

Ակիպիոն նուաձեալ ի սպառ զպարսպոցն, հրձիգ ա-
րար զտեղի բանակին լքեալ ի Թշնամեաց, և արար զբ-
բանակին իւրում նոր այլ բանակեցեալ քաջախուսի, պա-
մնեչս շուրջանակի ածեալ սուսար և խոր և չերտափակ
ամրացուցեալ։ Այս ընդ կողմն Թշնամեաց կառոյց պա-
րիսպ երկոտասան ոտնաչափ ի բարձրութեի, խիտ ան
խիտ աշտարակօք և մարտկոցօք. և ի միջումն յաշտա-
բակացն գիտանոց փայտակերտ բարձր յոյժ տեսանել
զնմ որ գործէին ի քաղաքին։ Այս էր պարսպին երկայ-
նութեի քան և հինգ ասպարէզ, ընդ ամ լայնութեի պա-
րանոցին ձգեալ։ Ածէնամիջ նեաբնակեց խորոցաւ հեռի ի
տեղւոջէն կացեալ՝ յոյժ ձգնեցան խափանել զգործն.
այլ սպառ ամ բանակին աշխատեալ գիւր և զգիչեր՝ կա-
տարեցին զայն յաւուրս քսան և չորս։ Արկին յայսմանէ
օգուտ էր Ակիպիոնի. զի անդ անկասկած և յանդորը
կային զօրականն, և զի զպաշար Թշնամեացն խափանէր
ընդ ցամաք, և ընդ ծով միայն մնայր նոցա ածել պա-
ւէնս. և զայն գժուարաւ յոյժ, զի ոչ միայն ստեպ յայմ
կողմանէ հողմակոծէր ծովն, այլ և զի նաւք հռովմայեց-
ւոց պահ ունէին անդ զպուշտէ. որ առաւել ձեպեցոյց
ի վերայ քաղաքին զանձն, և Ազգուբաղ զցորեանն ըն-
կալեալ՝ միայն իւրոցն բաշխէր երեսուն հազար զօրաց,
ոչ ինչ վասն այլոց հոգացեալ։

Աղդ. 74։ Խորհեցաւ Ակիպիոն ի սպառ կարձել ի նոցանէ ըզ-
պաշար, և ձեռն էարկ խնուլ զնուստս նաւաշհանգստին՝
Թումբս արգելս արկեալ ի բաղկաձև ցամաքէնն, որ հուպ
ի նաւահանգիստն էր, մինչև անդր։ Ածնամիջն զառա-
ջինն Թուեցաւ քաղաքացոց գործն այն, և ծաղր առ-
նէին զգործաւորս. այլ իբրև օր ըստ օրէ ելեաներ յաճե-
ղութիւն գործոյն ի ձեռս նոցա՝ սկսան կասկածել, և
խորհուրդ կալան խափանել զայն։ Հասյս ձեռն ի գործ
արարին ամ բազմութեին կամաքեզ և մանկաւոյ, և պա-

տրաստեին ի ծածուկ այնու զգուշանալեաւ՝ զի և ոչ ի կե-
րելոյն ինչ գիտել կարաց Ախիմն , որք դղրդիւն մեծ
լսելի լինել ի նաւահանգստին պատճին նմա , այլ թէ
զի գործեն ոչ գիտեաք ։ Իբրև զամ ինչ կազմեցին կար-
քեդոնացիք , յանկարծակի ասպ ընդ այլ կողմն նաւա-
հանգստին էջս գործեալ՝ ծածկեցին զերեսս ծովու բազ-
մութեաւ նաւաց , զորս նորոգ կառուցեալ էր ի նիւթոց՝
որ ի վաղ ժամանակաց ի շուռամարանն մեծերեալ պա-
հէին ։ Յետոյ անակնկալ էր յարձակումն այն , մինչև
կարծել ամենց՝ զի եթէ յայնժամ կարքեդոնացիք դի-
մէին ի վերայ հռովմայեցւոց՝ գերելին զամ նաւս նոցա .
քանզի նոքա անկասկած յայլ ինչ իրս զբաղեալ էին՝
առանց նաւաստեաց և զօրականաց և սպայից զնաւն
Թողեալ ։ Այլ այսպէս սահմանեալ էր , ասէ վիպագիրն ,
զի կարքեդոն կործանեսցի . նմին իրն նախատինս միայն
արարեալ հռովմայեցւոց և ջոյց քաջութեաւ , դարձան
անդրէն ի նաւահանգիստն ։

Զետ երկուց աւուրց վերստին յարձակեալ պատահել
Թշնամւոյն , գոն զնա կազմ և պատրաստ ։ Ալ երկինս
այս ձախատ մարտի՝ յոր երկաքանչիւր կողմանցն բազդ
հաստատեալ էր , խիստ եղև և ընդերկար՝ անհնարին
զօրութեամբ երկուստեք պատերազմեալ . կէաք ի վերայ
փրկութեաւ հայրենեաց՝ որ յայն յետին վտանգ հասեալ
էր , և կէաք ի կանգնել ի սպառ զյաղթութիւն ։ Ընդ
կարքեդոնացիք փոքուիքը պատերազմիկ նաւակօքն առ
ծոցով ստուարամարմին նաւացն հռովմայեցւոց սողոս-
կեալ՝ մերթ զխէլս նոցա խորտակէին , մերթ զղեակս և
մերթ զծիս . և սրընթաց երագութեամբն ի վտանգս
ի բաց խուսափեալ՝ անդրէն նոյնհետայն գառնային ի
վերայ նոցա ։ Իսկ երկուստեք անպարտելի ստրմիզք նա-
ւացն մինչև ի մուտս արևու մարտուցեալ՝ ապա չետս
կացին կարքեդոնացիք , ոչ առ ուրարութեաւ՝ այլ զի միւս
անգամ ի վաղուն գառնայցեն ի պատերազմ ։ Իսկ
կէաք ի նաւացն ոչ կարացեալ յայծորոյթեամբ ի նա-
ւահանգիստն մտանել՝ վասն անձկութեաւ մնիցն , ամիրափե-
ցան կացին զառաջեաւ ընդարձակ բարձանդակին , որ
յանդիման պարսպացն կամպնեալ էր՝ առ ի թափելոյ
անդ զբեռինս վաճառաց . և ի ժամնակի պատերազմին
դոյզն պատնէշ զնովաւ ածեալ էր՝ զի մի թշնամիք կալ-
ցին զայն ։ Ընդ վերստին զրգռեցաւ նաւամարտ սաստիկ
քան զառաջինն ցմեծ ժամն գլխերցոյն , մինչև կարքեդո-
նացիք հարուածս բազումս ընկալեալ՝ անկան ի նաւա-

հանպիսանս մնացելովք նուաւցին ։ Ի վաղիւ անդր ընդ ա-
ռաւօտն՝ խաղաց Ակիպիոն ի բարձունդակին, և մեծաւ
պատերազմաւ նուաճեալ զայն՝ անդ զտեղի էառ և ա-
մրացաւ . և պատուար ընդ կողմն քաղաքին ետ կանգնել
հուպ ի պարիսպն՝ զուգաչափ բարձրութիւ ։ Եւ անդր
հանեալ արս չորեքհազար՝ հրաման ետ նոցա նետս և նիզ-
ակս տեղալ անդադար ի Թշնամիս , որով խուճապեալ
ցոյց յոյժ զինշամիսն . քանզի ի հաւասար բարձրութիւն
նէին անվրէպ գնետսն դիպելոցս։ և այսու օրինակ
կաւ վախճան եղև պատերազմին այն ։

Անդ · 78 · Ո ժամանակ ձմերայնոյն փոխէ կալաւ Ակիպիոն ա-
մպանալ ի գնդաց Թշնամեացն՝ որք արտաքոյ քաղաքին
էին . յորոց նեղուեալքն յոյժ էր այնոցիկ՝ որ գՀամբարս
իւրոցն ածէին , և Թշնամեացն գիւրութիւն ։ Այնից իրի
յարձակեցաւ յամուրսն մեծամեծ ի կռնեցեալն Վիսե-
րիս՝ ուր ամրացեալն էին ։ Եւ ի յետնումս ձակատու-
եհար ի Թշնամեացդ արս աւելի քան զեօթանասուն հա-
զար ի զօրացն և յամբոխէն՝ որ անդր ժողովեալ էին ։
Եւ աւուրս քսան և երկու պաշարեալ զայն , սաստկա-
գոյդ ասպ զպատերազմն ի վերայ նորա և էառ զայն .
և անձնատուր եղեն նմա յետ այնորիկ ամ քաղաքք աշ-
խարհին ափրիկեցւոց , և Կարքեդոն գլխովին յառնուել
եղև , զի ոչ գոյր նորա հակառակ ։

Ի հասանել գարնանոյդ յարձակեցաւ Ակիպիոն ի նա-
ւահանգիստն ի Լոմեան , և ի վերայ դղեկին տայր պա-
տերազմ ։ Եւ կալեալ շուրջանակի զնաւահանգստիսն
զպարիսպս , էջ ի հրապարակ անդր քաղաքին ի մեծ՝ որ
հուպ էր անդր . և անտի վերելեալ էին ընդ մուտս երկու
ի դղեակն . և աստի և անտի վերելիցն բազմաւ տանց ,
յորոց տարափք նետից ի վերայ հաւմնդեցւոցն տեղայ-
ին ի տանեաց . և հարկ եղև նոցա միով ձև յառաջ մա-
տուցեալ՝ նուաճել զդրս ի ստորոտին էին տուսս , և ի
նոցանէ պատերազմել ընդ դրացի Թշնամիսն և վանել
զնոսա ։ Եւ աւուրս վեց պատերազմն այս տեւեաց , ի վե-
րստ և ի նեղբուստ տանէ ի տուն գործեալ կոտրած
մեծ ։ Իսկ վասն պնդացման մաքրելոյ չանցս զօրականին՝
քարչելին ձանիկօք դղեակատնս քանդելոցն՝ զանկելոցն հա-
րուածովք և գՀոսելոցն ի բարձանց , և վիճ փոսացու-
ցեալ՝ ընկեն ի նոսա , և զբազում ևս ընդ նոսա կիսա-
մեռն՝ որոց գեռ շունչ յունդունն էր ։ Եւ զայս փոխա-
նակաւ գործեցին զօրքն զվեց տիւ և զվեց գիշեր , առ ի
տոկ տարժանաւոր աշխատութեն ։ Այլ միայն Ակիպիոն

զնմ զվեց օրն զայն աբնեցաւ ի հրամայել զօրականին. և հաղիւ զոգեպահ կերակուրն առնոյր։

Ա Ինչդեռ վտանգ էր յերկարաձգելոյ պաշարմանն և Առդ. 81։
արեանց բազմաց հեղլոյ, ահա յաւուրն եօթներորդի եկին յանդիման եղէն արք ոմանք աղաչաւորք, և խընդրեին զկեանն միայն ընդունել՝ որոց կամիցին ինքանել ի գղեկէն՝ և ընդունեցաւ նոցա՝ բաց ի դասալիք փախստեայն։ Այլ էլեն արտաքս յիսուն հազար ոգի, ընդ այր և ընդ կին, զորս զգուշութեամբ պահապանաց անցուցին ընդ դաշտն։ Ոսկ հատուածեալքն յաւսահատեալ արք լինն հարեալ, երթեալ փակեցան ի մեհեան Ա՚պղեպէսի, և Ա՚պդրուբալ ընդ նոսա՝ հնաւն Հանդերձ և երկու օրդ տալք։ Արք թեպետ և սակաւաւորք եկին, այլ տեղւոյն ամրութեամբ զօրեին զդէմ ունել ընդ երկար. զի ի վերոյ բարձրաբերձ ժայռից կառուցեալ եր՝ յոր ընդ վաթսուն աստիձանս եկն վերելք։ Ա՚յլ ի սոլոյ տաւ գնապետ, և յանդրուն սքանչել, և յերկիւղ մնատ լուտ մահուան՝ ոչ ևս ժայռ ունելն. և Թողեալ զերեքհատուն մեհենին՝ ամրացան ի վերնայարկն, ի մտի եդեալ մինչ ի սպառ պատերազմել անտի։

Ա՚այց Ա՚պդրուբալ խորհեցաւ ապրեցուցանել զանձն, և էջ ծածկաբար առ Ա՚կիպիան՝ ոստ ձիոնէն ի ձեռն ոմնելով, և անկաւ յոտս նորա։ Այս վաղվաղակի Ա՚կիպիան ած զնա ի տեսիլ սարսուցելոյն. ընդ որ զայրաց գնեալ յայծ և բիւր թշնամանս առ կատաղութեամբ ընդդէմ նորա արձակեալ, հուր հարին այրել զմեհեանն։ Այս մինդեռ վառեալ բորբոքեր, հնոյն Ա՚պդրուբալայ, որպէս աւանդեն, արկեալ զիւրև որ ինչ զարդ առ ձեռն եկին նմա ըստ ժամանակին, և կայեալ որդւովքն Հանդերձ յերեսելի տեղւոջ ի տեսիլ Ա՚կիպիանի՝ ասէ ցնա ի ձայն բարձր. Ա՚ղքեզ անիծանեմ, ո՛ հալածիչ, զի դու օրինօք պատերազմի վարեցար. այլ քա ամեհական դիք հատուսցեն զդատաստան անօրինին՝ որ Հայրենասացն զից և զնոյն և որդւոց մատն եղեւ։ Այս ասա առ Ա՚պարուբալ ասէ. Վ՚ենգատուր, չարագործ, վատ արանց, հուրս այս լիցի դերեզման ինձ և որդւոց իմոց. այլ դու անարժան զօրավար Կարքեդոնի՝ կեցցես ի զարդ յաղթանակի յաղեղին, արդարապէս լինել նշանակ յանդիման ամ՝ Հռոմայեց։ Այս նա զայս օրինակ զայր իւր նզովելով սպան զօրդիս իւր և ընկէց ի հուր, և զանձն ջնջեցաւ նոցա։ Օ՚չխեր նորա և դասալիք զօրականն այրեցան առ հասարակ։

ԱՄԱՐՇԻ Հայեցաւ Ակիսիոն զի ահա կարգեցաւն, որ յեօթն
հարիւր ամաց հետէ բարգաւաճէալն էր, և մի՛ ի յաղթ
պետութեանցն՝ ընդարձակածաւալ ընդ ծով և ընդ ցամաք
տերութեամբն, աւազակեալ ամբոխիւ զօրացն, և բազ-
մութեամբ նաւաց, և փղերամբն, և փարեմամբ ձիոյու-
թեամբ, և արհուեստիւն և մեծանշանութեամբ՝ ի վեր
քան զամ ազիսս, որ և ի զինուցն կատեալ և ի նա-
ւաց՝ զդէմ կալաւ քաջութեամբ զամս երիս բազմաղէտ
յարեաց երկարաձիգ պաշարմանն, և ահա քաղաքն այն
աւերեալ կործանեալ էր. և ընդ յարայաւր օրհաս նորա,
աւանդեն, ոչ կարացեալ ժայժ ունել յարտատաց՝
Խորհեր չանձն իւր՝ թէ ահա և քաղաքք և ազգք և
պետութիւք, երբեք զմի՛ ի մարդկանէ, ներքոյ կան յերգա-
փոխութեան. և զի նոյն ազէտք անցին երբեմն և ընդ մե-
ծազօրն Ցրուաղատ, և յետ նորա ընդ ասորեստանեայսն
և ընդ Պարս և ընդ Պարսիկս՝ որոց լայնատարած տերու-
թիւնք էին, և ի մեծաց ընդ մակեդոնացիս՝ որոց հռչակ
համբաւոյն ընդհանուր տարածեալ էր. Այլ ի թոխիծ
սրտին գՀռոմերականն՝ յոյժ ածէր՝ թէ եկեսցէ ժամանակ
յորում դիցանուէրն Խլիոն կորիցէ, և Պրեամոս, և
քաջատեսն Պրեամոս ազգն. յայտ արարեալ գՀնդեր-
ձեալ ազէտս Հռովմայ, որպէս ինքն իսկ խոստովան եղև
զայս Պողիբիոսի՝ ի խնդրել նորա զիմաստս բանին.
Այնէ չառապայթեալ էր ի նա լայն Հնմարտութիւնն խե-
Սէր. Ժ. 8. լամուտ լինէր ասացելոյն յիմծայնէն գիւռ, զի " Կա-
դաւորութիւն ազգէ յազգ փոխի. և վասն անիրաւութիւն
և հպարտութեան կորնչին ". Կործանեցաւ Կարքեդոն՝
վասն զի ապահովեալ և նենգութիւն և անգթութիւն՝ ի մայր
յարեաց հասեալ էին. Օ նոյն դատաստան ընկալցէ և
Հռովմ, յորժամ զնպատեալն արտաքոյարգարդ ուղղու-
թեամբ և արդարութիւ՝ զփառամոլութիւն նորա և զամ-
բարտաւանութիւն և զբռնահարուն պատուհասեալ, կոր-
ծանեալ զնա բաշխողն տերութեանց առ ի խրատ աշխարհի.

3859 · 701 Ակիսիոն այսու օրինակաւ տիրեալ Կարքեդոնի՝ ասպա
Ն.Ք.Ո · 83 · տուրս քանի մի պարապ էտ զօրականին ասար առնուլ
զքաղաքն, բայց միայն մի ազգ արձակել՝ ի մեհեանս յոյ-
կին և յարծաթ, ի դրօշեալս և ի նուէրս. և բաշխեաց

1 Ջի դիցանուէրն անկեալ երբեմն Խլիոն,
Եւ քաջատեսն կորիցէ անդ Պրեամ,
Եւ Պրեամոս ազգն ընդ նմին համերամ։
Խլիական. Ը. 447։

մրցանակս առատութիւնք նոցա և սպայիցն , յորս նշանաւորք եղեն յոյժ Տիք. Վրակկոս , և Պաչիոս Փանիկոս , քանզի նոքա կամեցեալ էլլին ի վեր ի պարիսպն . Իսկ նաև մի ակաղձեալ լցեալ յաւարէ Թշնամեաց արձակեաց ի Հռոմ՝ աւետել զյաղթութիւն . Ի ժամմանակին յայնմիկ և ի Սիկիլիա ազգ արար՝ գալ և առնուլ իւրաքանչիւր զնկարագործ պատկերս իւրեանց և զանդրիս , զորս ի նոցանէ բարձեալ էին կաբքեդոնացիք ի պատերազմունս . Իսկ ի դարձուցանել յակրագանդացիս զզազմահրաչակ ցուցն փաղարեան՝ ասէ . Յուլս այս լեցի զբաժան յիշատակի նախնի Թագաւորացն ձերոց անդթութե , և այժմու տեսանդգ բարեդթութիւնք . սա ուսուցէք ձեզ՝ որ լաւ իցէ , ընդ լծով սիկիլացւոցն կալ , քան ընդ իշխանութեամբ հռոմայեցւոց . Յաւարէն կաբքեդոնի և մասն ինչ ի վաճառ ածեալ արգել խստիւ ընտանեաց իւրոց մի ինչ ընաւ գրաւել յայնցանէ կամ գնոց առնուլ . քանզի այսպէս զգոյշ էր առ ի չտալոյ կասկած զօրաբաղձութե զանձնէ կամ զիւրոցն ։

Օ աւետիս նուաճմանն կաբքեդոնի ընկալեալ հռոմ. Ադր 83 ։
մայեցիք՝ լի եղեն ինդութե , որպէս թէ յայնժամ յանդորր եղեալ հռոմ՝ Զիշխին գաբիս՝ զոր անցուցին ընդ նոսա կաբքեդոնացիք ի Սիկիլիա և ի Սպանիա և անդէն իսկ Հաոալիա զամն վերջասան , զի քաղաքս չորեքհարիւր կալաւ անդ Ոչնիբաղ , կոտորեալ ի նուաճել զայնոսիկ , երեսուն բիւր մարդիկ , որ և զհռոմի հասոյց ի յետին վտանգ . Իսկ ասէին այր ցընկերս իւր , եթէ Ոչմարիտ իցէ զի կործանեցաւ Կաբքեդոն . և յաճախէին քան զիմաստնս՝ ի զոհս ելից , և զոչս աշխարհս խոսքիւ հանդիսիս և մաղթանս մատուցանելին՝ զաւուրս բազումս , և խաղս և տեսարանս ի հանդէս ածին ։

Ի բռնակեցան ապա ի ծերակուտէն զործակալք տասն Հ փերկէ՝ ուղղել ընդ Սիկիլիոնի զկրս աշխարհին , և կարգս հնոցիւնաւորս սահմանել անդ ։ Ոորոց առաջին փայթ եղև քանզել որ ինչ միացուած էր քաղաքին ։ Ի անդր Հռոմի ։ միահեծան գրեթէ կալեալ զաշխարհ ,

1 Իբրև յակրագանդացիան դարձուցանէր Սիկիլիան զցուցն զայն, աւանդեն զնմանէ ասացեալ զնոսա . Լեթէ արդեօք լաւ իցէ Սիկիլիոյ՝ իւրոցն ի ծառայութե կալքան ի հնազանդութե Հռոմոց, խորհեցարուք . ահա զցուցդ զայդ ձերոյ ընաանի անդթութե և մերոյ մարդասիրութեն կալ չիք արձան յիշատակի : ԿԻ . Վէրր . ին .

2 Ի՛ր ոչ Հռոմի, նուաճեալ զծագս երկրի, անբրկեան զանձն համարեցաւ՝ զորչափ անուանն կացէ Կարքեդոնի . Քանզի այսպէս և յերկար քան զերկիսն տեւէ աութե պատճառս ի պատե-

ոչ համարեցաւ զանձն իւր յահաւտանալի ցորչափ յիշատակն կացցէ Կաթողիկոսի. զի և ի լուծանել երիվարին՝ տեւէ ատելութիւն, այն որ Ձարակեալ և Հնացեալ է ի խիստ և յերկար պատերազմունս. որ ոչ դադարեաց մինչ չև ատելոյն ի միջի ի բաց բարձեալ։

Հրովարտակ արարին Հաւատացեալքն՝ մի ումեք յայմհետէ բնակել ի Կաթողիկոն. նղովս ահագին ի վերայ նոցա կարդացեալ որք Հակառակ հրամանին կառուցին անդ շինուածս, մանաւանդ ի տեղւոջն կոչեցեալ Խերսա և ի Աեգաբա։ Կայր մնանել ի ներքս օրէն էր. քանզի այսպէս Հաճոյ Թուեցաւ Ակիսխանի՝ զի երևելի կացցեն մարդկան անշուք աւերակք քաղաքին, որ ի վերայ իշխանութեան խիզախեաց ընդ Հռովմայ ի պատերազմ։ Հրամանն եռուն կործանել և զքաղաքն՝ որ ի պատեբազմին յայնմիկ միաբանեցին ընդ կաթողիկոնացիս. և զերկիրն եռուն ի կալուածս նիւթակացաց իւրեանց, պաՀել ուտիճեցւոց զամ զգաւառն՝ որ էր ընդ Կաթողիկոն և ընդ Խպպատա։ Օյլ ամ երկիրն ի Տարկի կացուցին՝ ընդ նահանգաւ արարեալ. և ամի ամի առաքէին անդր կուսակալս։

Ակիսխան զամ ինչ ուղեալ և յարդարեալ՝ դարձաւ ասպ ի Հռովմ նոր և չքնաղ յաղթանակաւ։ Կանգնի անդրէնս բազումս, և որ ցանկալի և պատուական ինչ էր՝ առեալ բերեր ընդ իւր ի Կաթողիկոսէ, և ձեռաւ կերտս անպնիս, զորս ի բազում ամս լինելոց իւրոյ Կաթողիկէ ժողովեալ էր։ Ի վերայ այսոցիկ և արծաթի բազում յոյժ՝ որ մնին ի գանձ հասարակաց։

Ադդ. 85։ Պետ. Դուռն։

Ընդդէմ ամ յառաջագրելոյ զպուշութենէն վերստին չհնազոյց Կաթողիկոսի, մինչ չև էին անցեալ առնը երեսուն, և մինչ գեռ կենդանին էր Ակիսխան, մի ոմն ի Կրակեաց զմիտս կամեցեալ հաձել ժողովրդեանն, սկսաւ բնակիլ յցանէ՝ զկաթողիկոն՝ վեց հազար հռովմայեցի աձեալ անդր գաղթական։ Կայր եղև ծերակուտին՝ զի նշանք չարագուշակք ի տեղւոջ էին մնալնոցա երկար ժամանակս, և կամեցաւ խափանել զգործն. բայց հաղարապետն, որում ոչ ինչ փոյթ էր զկրօնիկ և ոչ երկիւղածութեան,

բազմաց առեալ, և ոչ պատուէր սահմանեալ, և մինչ չև ատելոյն բարձեալ՝ ոչ դադարէ։ Վէթ Պետ. էրէն. ա. ձբ։

1 Որպէս զի տեղին իսկ վկայեսց

աղեաց նոցա ցուցցէ՝ որք բնակ քաղաքին այսմիկ ի վերայ իշխանութեան։ Ակն. յղ. ագաբան. բ. ֆ։

արհամարհել զՀնոյս չարեացն՝ փութացոյց կատարեալ
ի սահս աւուրս զդործս։ Ի.յս առաջին գաղթական՝ ի
Հռովմ առաքեցաւ արտաքոյ քան զԼատիա։

Ի.Ա.ոչ ինչ չինաւածք մեծամեծք, որպէս երևի, կա-
ուցան անդ. այլ աղքատին տնակք։ Վ.Ան՝ի՝ ի ժա-
մանակի իբրև փախեաւ Աթրիոս Ա.փրիկէ, և մինա-
կեաց լինելը անդ, աւանդէն գնմանէ՝ զի աղքատութիւ-
ընդ աւեր և ընդ կործանեալ յարկաբոյն Կաբրեդոնի,
չարաշուք տեսլեամբ նորա ինչն սփոփիլը, և իբր ի սիո-
փանին նմա լիներ նմանաւիշտ բաղդիւն։

Յուլիոս կեսար յետ Պոմպէի մեռանելոյ իբրև անց Ան. 85։
Ա.ֆրիկէ, եաես ի քուն յերազի զոր մեծ՝ որ կարդայ-
ին առ նա արտասուօք. և անտի եդ ի մոլ իւրում չի-
նել վերստին զԿարքեդոն և զկորնեթոս, և ի դիս յի-
շատակաց նշանակեաց զկորՀուրդսն։ Իսկ ինքն կանխա-
զրաւ մահու սպանեալ ի դաւակցաց, ( )դոստոս կայսր
որդեգիր նորա եգիտ զԼիուղիա յիշատակաց նորա, և
կանգնեաց վերստին զԿարքեդոն՝ փոքր ինչ ի բացեայ ի
տեղւոջէ Հնոյն, զի մի զանէծսն ժառանգեսցէ՝ որ ի ժա-
մանակի կործանելոյ նորա եգան, որոյ վերստին կանգնեա-
ցեալն զայն։ Ո.այս այսպէս աւանդէ Ա.պպիանոս՝ ոչ գի-
տեմ յոյր վկայելոյ։ Վ.Անգն Կարաբան զԿարքեդոն վեր- Ժէ. 833։
ստին կանգնեալ ասէ ընդ Կորնեթոսի յաստուածոց ու-
նիմն կեսարէ. և աստուած տուղ ինչ վերագոյն զՀու-
լիոս Կեսար անուանէ։ Իւ Պլուտարքոս ի վարս նորա՝ 83։
նմա յայտնապէս ընծայէ զկիրկին գաղթականաց այսոցիկ
զՀաստատութի՛ն, և զայս ինչ զնոցանէ ազգ առնէ՝ զի զոր 734։
օրինակ ի միւմ ժամանակի նուաճեալ կործանեցան,
այսպէս և միանգամայն կանգնեցան վերստին և լցան
քնակչօք։

Լոկ այս որպէս և է, բայց գիտեմք ի Կատրեռնէ
զԿարքեդոն բազմամարդ լեալ առ ժամանակօք իւրովք՝
իբրև զայլս ի քաղաքաց աշխարհին ափրիկեցւոց. և
յաւուրս կայսերաց որ յետ այնորիկ կացին՝ մայրաքա-
ղաք աշխարհին էր միշտ Կարքեդոն։ Իւ եկաց այլ ևս
իբր եօթն հարիւր ամն ի պայծառութի՛ն, մինչև ասպա ի
սպառ քանդեցին զայն Կարակինեանց ազգն ի մուտս
եօթներորդ դարու, և ոչ Հնոյն գյիշատակ նորա և զտե-
ղի յաշխարհին անդ։

1 Կարթաս գիմեաց Ա.ֆրիկէ. ի Կարքեդոն, և Կարքեդոն ի նա և աղքատութի՛ն կեցեալ անդ ի Հայեցեալ իւրերք մինիարեին։ Հիւզս յաւելն Կարքեդոնի, ինքն Վէսս. Պատերկ. ի. ծի։

ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ԲԱՐՈՒՑ ԵՒ ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴՆ ՍԿԻՊԻՈՆԻ ԱՔՐԻԿԵՅԻՑ

Ակիպիոս այս աւերող կարգեդմնի՝ էր որդի երևելւոյն Պօղոսի Լիմիլեոսի, այն որ յաղթահարեալն զՊեր-սէոս զվերջինն ի Թագաւորս մակեդոնացւոց, և Թուն համանուան նորա Պօղոսի Լիմիլեոսի՝ որ անկաւ ի կամ նեայ պատերազմին։ Օ սա ընկալաւ իւր յորդեգիրս որ-դի մեծին Ակիպիոսի, և անուանեաց Ակիպիոն Լիմիլիա նոս. քանզի այսպէս օրէնք էին՝ զազգին և զտրդեգրուե անուանին լծորդել։ Որ վերկաքանչիւրոցն զպարծանս [1] անարատ կալաւ ամ առաքինութիւնք՝ որ ի պատերազմի և ի խաղաղութիւն գործէն փառս. և յամ կեանն իւ-րում, ասէ մատենագիրն, գովելի եղև յիր և ի բան և ի խորհուրդ։ Լաւ որ ամենևին իսկ առ մեօք գժուարա գիւտ է ի զինուորականին հետևողս արուեստի, անուա նի յոյժ եղև յախորժակս բանասիրութիւն և ամ գիտու թեանց, և մեծարեր յոյժ զբանասէրս և զգիտունս։ Օ ի ահա և գկատակերգուելիս Տերենտիոսի սմա ընծայէին, որ ըստ ընտիր և ըստ պերճ յօրինուածոյն կատարե լագոյն է ի գործս մատենագրացն հռովմայեցւոց։ Լաւ զայս ինչ ի գովեստ նորա ասանդեն [2], զի ոչ ոք իբրև զնա հանդիպեաց ընդ վաստակոց գիտաց բարեխառնել, և զամ պարապոյ ժամանակս ջանիւ և ախորժակաւ յար-գել։ Պատահեալ ի զէն և ի գերս, մերթ տաժաներ ի գործս պատերազմի, մերթ յանդորր ի գիւանին պարա պեր, էր զի զմարմինն ի զինուորական վարժս կրթեր, և էր զի զհոգին ի գիտութեացն մակացուելիս։ Չայտ արա րեալ՝ զի չէք առն աղնուականի, յոր կարգ և վիճակեալ իցէ, առաւել վայելուչ՝ քան զբանասիրութիւն։ Օ գան նոփոնի գերծն հանապազ ի ձեռին ունէր, ասէ զնմանէ

1 Պ. Ակիպիոն Եմիլեանոս հա-մանման հայրենականացն առաքի-նութեաց հօր իւրոյ Լ. Պօղոսի, և հաւօղն իւրոյ Պ. Ափրիկիկացոյ, քանզ ի պատերազմի և ի խաղա-ղութեան, գեր ի վերոյ քան զամ ժամանակակից իւր հանճարով և գիտութիւք, որ յամ կեանս իւ-րում գովելին եղև յիր և ի բան և ի խոհուրդ։ Վէլլ. Պաթերկ. ա. ծ։

2 Ուր որ իբրև զԱկիպիոն հան-գիստ ընդ մէջ վաստակոց գիտաց բարեխառնել. հանապազ զբաղեալ յերս պատերազմի և խաղաղու-թեան, անպարապ ի զինուց և յուսմանէ. մերթ զմարմինն կրթեալ ի վէյս պատնի, մերթ զհոգին ի հրա հանգս գիտութեանց։ Վէլլ. Պա-թերկ. ա. ծ։

Ակիլերուն, զայն որ լմն է զօրավարական և քաղաքավա-
րական իրաց կարևոր խրատուք ։

Ա՛յս գեղեցիկ ախորժակը բանասիրութեա՛ն և գիտու- Պլուտ. ։ Պո-
թեանց՝ հին արձակաբերը բարւոք դաստիարակութեան, յոր ղ. Կ֊Գ։
Պօղոս Լ֊միլիոս հոգացաւ կրթել զորդիս իւր ։ քանզի
վարժապետս քաջս՝ մա՛ գիտութեա՛ց կարգեաց նոցա՝ ոչ
ինայեալ՝ ի ծախս, թէպէտ և ոչ բազմահարուստ ոք
էր ։ և պարապ առեալ՝ ի հոգոյ աշխարհին՝ հանապազ
և ինքն առ ընթեր կայր ի վարժ֊նոցա, որպէս վկայէն
նոցա ուսուցիչ ։

Ակիլեան և մտերիմ բարեկամութեամբն ընդ Պողո- Պղտխ. ։ 17-
բիոսի՝ զբաբեվճական բնութեա՛ն և զբարւոք դաստիարա- 163։
կութեան ձիրս զարգացոյց ։ Վ֊անգի սա բազմութեամբ
աքայեացւոց, որ կասկածաւոր կին առ հռովմայեցիս ի
ժամանակաց պատերազմին Պերսէայ, ի դիպահող կայր
ի Հռովմ. ուր հռչակ համբաւոյն ծանոյց զնա վաղվա-
ղակի և ցանկալի արար մեծամեծաց քաղաքին ։ Ակի-
պիոն յոլովուստն ամաց հասակին աշակերտեացաւ նմա,
բազդ մեծ վարկուցեալ զսպասիսին ունել վարժապետ՝
որ կենացս կցորդութեա՛ն արդոյ էր յայս նորա քան զա՛մ
մնասի զբաղութիւն, որ հրապոյրք են երիտասարդական հա-
սակին ։

Պողիբիոս անդստին գարշեցոյց զնա յա՛մ ինասակար
և յանմեծոյ կրից, յորս մանկտին Հռովմայ յայնց ժա-
մանակաց մեծաւ մասամբ ըմբռնեալ էին, զեղծեալք և
անկարգացեալք ի զեղխութենէ և ի հանապազու թենէ՝
զորս մեծութիւք և աշխարհակալութիւք մուծին ի Հռովմ՝
Օ՜ սակս հինգ ի դերասանած գպրոցին բազում֊ ինչ օգ-
տակարս ուսաւ ի խրատուց, և զծայրք և գիրապուրանս
հասակիցց մանկտուցն արհամարհեալ յայնմ հասակի
պատկառելի եղև ի քաղաքին, որպէս օրինակ համես-
տութե՛ն և զգօնութե՛ն ։ Նմանի ասպ դիւրաբար և յաղ-
ճուականութե՛ն թևաւորեաց, առեալ զօրաքաղութիւն և
բարւոք ընդհատն վարել ։ Ա֊յս այս են առաքինութիւք կա-
րևորք իշխանաց, որք պայծառ փայլէցին ի Ակիլեան,
որպէս երևի ի գործս նորա զարմանալիս՝ զորս պատմէ
Պողիբիոս ։

Լ֊միլիա [2] հին երեցոյն Ակիլեանի Պ֊բրիկեացւոյ, և մայր
այնորիկ՝ որ ընկալաւ իւր յորդեգիրս զկրսեր֊ Ակիլեան,

1 Հանապազ ի ձեռն խրատ 2 Քոյր Պօղոսի Լ֊միլեայ, որ էր
կրէր զսոկրատեանն Քսանթոսն հայր երիցուդէս Սիհոսի Ա֊ֆրիկեա֊։
Ա֊ֆրիկեցին Ակիլեան։ Տ֊ոմ. ք֊ե։

զորմէ խօսի աստ Պողիբիոս, ժառանգութիւն բազում եղեալ սմա ի մեռանել իւրում։ Իսկ նորա զայ յադամանդին և յայգէի ազգի ականց պատուականաց ի զարդուց տիկնոց՝ և սպասք զոհից ոսկեղինք և արծաթեղինք բազում յոյժ, և կարասի փարեամ և կաւք, և ծառայք և սպրակք և աղախնայք, և ամէն ինչ ըստ մեծու թեան ազգատոհմին՝ որում հարմացեալ էր։ Օգոս ամէն ի մեռանել նորա չնորհեաց Աքիպիոս մեր իւրում Պապիբիոյ, զոր Պողոս Էմիլիոս ժամանակօք ինչ յառաջ ի բաց արձակեալ էր, և առ չքաւորութեան անչքեւութեամբ կեացր, և ոչ գնայր ի ժողովս և յաշխարհախառնութիւն հանդէս պաշտամանց։ Իսկ երբեմն կալաւ անդրէն զնախկին չուքն առատաձեռնութեամբ Աքիպիոնի՝ փառս մեծ յաւել նմա, մանաւանդ առաջի տիկնոց՝ որ ոչ լռէին ի հռչակելոյ զիւրն զգայն ի քաղաքի, յորում ոչ ոք կամէր յընկեցն հրաժարէր՝ ասէ Պողիբիոս։

Էյսպէս և բազում այլ ուրեք զարմանալի եղև Աքիպիոն։ Օի և վասն ժառանգութեանն, զոր կալաւ ի հանոյ իւրմէ, պարտապան լեալ տալ զկնի օժտին երկուց դստերաց երիցոյն Աքիպիոնի՝ տաղանդս իբրև չի սուն յերիս ամս, նա յատկացուցեալ ամէն զամենայն հանգամանսն աւանդեաց ի ձեռս սեղանաւորին։ Օգոր Տիբերիոս Պրակկոս և Աքիպիոն Նասիկա, փեսայք դստերացն, վերիպակաւ գործել զայն Աքիպիոնի կարծեցեալ, չորան ապզ արարին նմա զհամայն ժամանակին՝ զերիս մանն ամի ամի հատուցանելոյ։ Իսկ պատանին Աքիպիոն քանզի քաջ գիտեր զայն՝ պատասխանի էտ նոցա և ասէ, լեցի լինձ առ օտարս Հռոմիս պահել զարգասրուեն։ իսկ առ բարեկամն և ազգականս պարտ է առնս տաձեռն լինել և մի խորագէտ։ և աղաչեաց զնոսա ընդունել առ ժամայն զամ զգալուք արծաթոյն։ Նա գաղձան ի նմանէ զարմանալ յոյժ ընդ ազնուականութեն նորա, և ամենեցեալ ընդ անարգ շահասիրուն իւրեանց, Թէպէտ և յիշմանաց քաղաքին էին և ի պատուականացս։ Նա այնչափ առաւել զարմանք Թուէին նոցա՝ որ չափ գի ոչ ոք ի Հռոմ, ասէ Պողիբիոս, և աւուրբ միով կանխեր հատուցանել հազար դահեկան, Թող Թէ միսուն հազարս ամօք յառաջ։

Էյսպէս և յետ երկուց ամաց ի մեռանել Տօր իւրում Պողոսի Էմիլիոսի՝ գնան ժառանգութիւն իւրոց, աւելի քան զառաջագս վաթսուն, եթող յերկայր իւր ի փաբիոս՝ հաւասարել զնա ընդ իւր մեծութիւք, գի ինքն

ընկերագործն էր։ Պարձեալ նա ինքն Փաբիոս ի մեռա-
նել Հօրն առաքեամբառ առնել կամեցաւ, որպէս սովո-
րութիւն էր, ի պատիւ Ապիտակի նորա. և իբրև ոչ էր
ձեռն նորա բաւական ի յաձախութիւն ծախուցն՝ ինքն
Ակիպիոն պարգևեաց նմա հնգետասան տաղանդ, զկէս
ծախուցն։

Պարգևք բազմագանձ, զոր Պապիբիոս յորգւոյ իւր-
մէ ի Ակիպիոնէ ընկալաւ, ՚ի իբրաւամբք նմա գար-
ձեալ անկ էին յետ մահուն իւրոյ, և ոչ քերցն օրինք
էին պահանջել զայն։ Բայց նա համարեցաւ զայն նա-
խատինս իւր, և որպէս տարբանալ ընդ պարգևին, առ-
նուլ անդրէն զպատուին. և եթող քերցն իւրոյ զայն ՚ի
հարուստ մեծութիւնս. և առաւել յաձախեցին նմա
փառք՝ վերհանձնութեամբն և բարեգործութիւք առ ըն-
տանիսն։

Այս ՚ի առաւաձեռնութիւք Ակիպիոնի, որ համա-
գումար ՚ի միասին գանձ մեծ ժողովին, առաւել և աս-
պայ էն ոլովքն, ժամնամակաւն՝ յորում զպարգևան
առնէր, և մնաւանդ յաղնութական և ՚ի մարդասէր բա-
րութիւն՝ որով քաղցրացուցանէր զնա։

Այսոքիկ, որ ինչ ցայս վայր ասացի, այնպէս օտար էն
՚ի սովորութիւն ժամնամակիս, զի կասկածեալ՝ թէ տուա-
բացուցանել զոր համարեսցի վիպասանին զիաւս դիւցա-
զին իւրոյ։ Այլ ոչ եթէ գոյն զի մնաւնոգիր զայսո-
սիկ աւանդէ, այլ Պոլիբիոս՝ որ սկսաւատ ՚Հնմարտասէր
րութիւն և ՚ի մարդահաճութիւն բանից խորշանի՝ բազում
իրօք վկայեալ է։ Որ և ինքն իսկ ՚ի ձառս անդ խոստա-
նայ գՀաւատին ՚ի քաջութեանց նորա և ՚ի չքնաղ առա-
քինութեանց ՚ի գրի առնել. քանզի Հռովմայեցւոցն տայր
զայն յընթերցուածն՝ որ Հմուտք էին վարուց և գործոց
առնն մեծի, և զտուութիւն նորա կարող էին հաւատմամբ՝ թէ
ուրեք խոտորեր ՚ի ՚Հնմարտութիւն, և մնաւնոգրի՝ որ ըզ-
բարի Համբաւոյ ոչ անհոգեթ արարեալ իցէ, գժարարին
է նմա վայրապար արկանել զանձն ՚ի վտանգ։

Ակիպիոն, որպէս յառաջ ասացի, ոչ յարեցաւ յան-
կարգութիւն և ՚ի ցոփութիւն մանկտացն Հռովմայեցւոց. և
ընդ կանուխ ժուժկալութենէն կալաւ զանվթար առող-
ջութիւն և զկորով մարմնոյ, որով յօրինեալ Հաձոյն
վայելեալ, և զայնպիսի մեծամեծ արուեստիւն գործեաց՝
որ փառս յաձախեցին նմա։ Ոլոսախրութեամբն յաւել
՚ի զօրութիւն, մինչև կարող լինել ՚ի տուկ խիստ և տար-
ժանաւոր աշխատութեանց։ ՚Ի Մահեդոնիա յերկիր քաջ

Երէ , ուր ջեքաս Ակիսին զինի Հօր իւրոյ մեռանելոյ , յապեցոյց զտենչ իւր . քանզի անդ ի պատձառս պատեր բազմի՝ դադարեալ էր ի բաղում ժամանակաց որսոր դուրեն, թագաւորացն Հանապազորդ զբաղումն, և եգիտ զաշխարհն որապէս ։ Պօզոս Լիմիլոս Հայր նորա զբաղումն բարի պատրաստեալ նմա՝ առ ի պահել զնա ի ձեռսակարացն, Թողացոյց նմա ամ ազատութիւ սեռա փէլ յորս , ի ժամանակի յորում զկղմնիքն զանա քիւք գեգերեր բանակն Հռովմայեցւոց՝ յաղթեալ Պերսեայ ։ Լ՚ս պատանին Ակիսին ըստ որսատենչ բարուցն զնամ պարապոյ ժամանակն ի վայելչական մանկականի տից ասպարիզին պատազեալ ի մարզս , ոչ ինչ նուազ առաքինանայր յանմեզանչական գաղանամարտին , քան զՀայրն ի ձակատամարտին ընդդէմ մակեդոնացւոց ։

Լ՚նտի դարձ արարեալ Ակիսին ի Հռովմ՝ եգիտ անդ զՊողիբիոս, և կապեցաւ ոգի նորա ընդ նմա . որ յօգուտ մեծ եղև նմա և յանկապուտ փառս՝ ոչ ինչ ընդհատ յաշխարհակալուեցին ։ Լ՚նդ սոսա երկուս եղբարս նաև սեղա նակից և քնակակից երևի լեալ Պողիբիոս ։ Վեպ եղև օր մի՝ զի միաձայն եղեալ Ակիսին ընդ Պողիբեայ , ողբով և քաղցրութիւ աղերս արար՝ համարձակեալ առաջի նո րա , թէ ընդ էր միայն ընդ եղբօր իմում խօսիս ի սեղա նի . գիտեմ զի և քեզ որպէս քաղաքացոյն իմոյ պղերգ Թուիմ և անմահն յախորժակաց՝ որ արդ յաձախեալ են ի Հռովմ, այսու զի ոչ փոյթ առնեմ առեհական վարժից և ի հրահանգս ձարտարախօսութե ։ Լ՚ապ զի արդ իցէ պարապել ինձ յայդոսիկ , քանզի լսեմ՝ ասելոյ բազմից՝ զի ի Ակիսիմեանցն զօրաւարի սպասեն և ոչ առեհաբանի ։ Ցուր ինձ ասել զիրաւունս համարձակու թեամբ . այդ քո առ իս արհամարհուեքն՝ կարեկիր խո ցէ զսիրտ իմ ։ Օ արմացաւ Պողիբիոս ընդ մեամիկալ բանին, սիրտ եաց զնա որպէս կարէր, և հաւատարմացոյց՝ զի ոչ արհամարհելով զնա՝ ընդ եղբօրն յաձախեր խօսել , այլ զի երկցադոյն եր նա հասակաւ , և ասէ . Ցուսա ցեալ ի համամիտ ելոյդ սիրոյդ ձեր , ընդ միումդ խօ սելով հաւարիմ ընդ երկաքանչիւրդ խօսել ։ Լակ եթէ կեզակարծ քեզ Թուի այս , աղէ հրամայն տուր և պա տրաստ եմ առ ամենայն ։ Վիտուեցաց ամենայնի , որոց ցանկացող զքեզ տեսանեմ՝ գոցես ամբոխ վարժապե տաց , որ Հանապազօր այսր յելեադացւոց աշխարհէն ու զևորէն ։ Լակ ի պատերազմականին ախորժակս , զոր ընտրեցեր և յոր յօժարեալդ ես , անձամբ օգնեցից քեզ ։

Յայնժամ Ակիլեան սկսաւ կալեալ զձեռաց նորա սկ
բուի՝ Օհն այն, ասէ, յաւուրս բարուքեիւ յորում ազա
տացեալ ի բազմազբօս զաղանացդ, ընդ իս միայն էիցես՝
զստոյգ փառս իշխանութեի, և որ իցէ մեծութեի նորա:
Վասնզի է պաշտպանել հայրենեացս, արմատացուցանել
զբարին, և զչարիս խափանել, զիրաւունս և զօրինս պայ-
ծառացուցանել, յարգոյ առնել զլաւութեի և զառաքի-
նութեի, և առատութեի և խաղաղութիւն պատրաստել
աշխարհին. և զվիշտս վտանգին սիրով յանձն առնուլ
յուսով այսոցիկ մեծամեծ բարեաց՝ որ նոցա արգասիքն
են: Որպիսի որ եղև Ղումա ի Հռոմ, որպիսիք և
յայլոց ինքնակալացն եղեն, որք բռնադբօսելով եդան
զԹագ:

Վարձայց ասել, չէք և չէք ինչ մեծ և զարմա-
նալի իբրև զայս առաքինութեի. այլ համեստութեի սուտ,
և առաքինութեի իբրև զԻովվկայն ի յաջողութիւն փա-
ռասիրութեի խորհրդոց, այլազգ քան զոր էն ի քնէ՝ է
բևեռցուցանել զանձն, ծանրանալ և հրաժարել յայն-
մանէ՝ որում ցանկութեբ մեծաւ փութայր հասանել խո-
րամանի և գաղանի հնարիւք, է կեղծաւորութեի անարդ
և վատթար՝ որ ածէ նողկանս, և զպայծառութեի այլոցն
վաստակոց նսեմացուցանէ:

ԴԻՈՒՂ

որ ներփաորբեայ ամս չիսուան ևս երեք:

Յ2ղ. 7.10 Երբ որ ու. ընդ. ձա.

Վասին ընդ առնուլ զԹագաւորութեի՝ քանացաւ ոչ
ի գերև հանել զակնկալութեի այնոցիկ՝ որք ի խաղա-
ղութեի աշխարհին կացուցին զնա Թագաւոր: Իսկ և իսկ

յաւել՝ի փառս աքքունի գիմ՝նշանակս պատուոյ և փա-
ռաց՝ որովք ահեղ է և մեծարոյ անձն արքային, և ըն-
արեաց հաւատարիմն ի Պարսս անտի Թիւինապահն զսէ-
բելիս իւր՝ յորս վստահ էր : Այս զանձն յապահովեալ՝
ապա ձեռն էարկ հրահանգել զազգն և ի քաղաքակա-
նութիւն ածել, որք ի դաշտս սովորեալ և ի գիւղօրեա
առանց քաղաքական կարգաց և օրինաց՝ բնաւ վայրէ-
նացեալ էին : Հրամանն էտ նոցա քաղաք կառուցանել
եօթնպարիսպ, և ինքն գՀերմիդ և զձեւ պարսպացն և
ցոյց, աստիճանաւոր զարձրութիւն նոցա առնել՝ պահպօքն
չափ զիերծօք բարձրացեալ : Այս որ և դիւրք տեղւոյն,
բլուրք յամ կողմանց սեպացեալ, ձեռնտու էին : Ի
բուն պարսպամիջին յանձուկ տեղւոյն էին ապարանք
Թագաւորին և նմ գանձք նորա . յրեգ միջաշուխին վեց
հերդ, որ կոչուգ էր այնմ, էին չինուածք բազմայարկք
ի բնակութիւն պաշտօնէից արքային, և յայլն ի հնգեսին
միջոցս պարսպաց էին տունք ժողովրդեան : Պահպին և
ընդարձակ քան զայլս, էր գրեթէ ի չափ մեծութիւն քա-
ղաքին աթենացւոց : Այս կոչեցաւ քաղաքս այս Այկբա-
տան : Չհասկ նորա մեծագործ և հրաշակերտ՝ եօթնկար-
գեան պարսպօքն իւրով զթատերացն չուրջ տեսանելեաց
տեղիս, և շրջունք պարսպացն ի գոյն այլ և այլ հաձոյ
ասաց տեսողացն էրևէին :

Իրբև կատարեաց Դիովկ զՀկբատան և բնակեցոյց,
ապա զարթեկարգութիւն աշխարհին հոգացեալ՝ սահմա-
նեաց օրէնս : Յորհետ զի երեսաց Թագաւորի առա-
ւել ի հեռուստ յատկանէն մեծապանք, և ի սկզբանէ
Թագաւորութեանն իւրոյ՝ ներքսագոյն ապարանս բնակիր՝
անտես և անմատոյց ի ժողովրդոց . և օրէնս եդ գրովք
միայն աղերսանաց կամ միջնորդաւ խօսել ընդ նմա և
զկարիս իւրեանց յայտնել . և որոց մատչէինն առ նա՝
ոչ էր օրէն ծիծաղել կամ խուսս առնել նորա արկա-
նել : Վանդն հմուտ էր քաղաքավարութեանն, և ամեա-
ցոյց այսպէս զԹագաւորութեան իւր . զի ի միջ վայրագա-
սունս մարդկանն բնակեալ, որ չէ և գիտէին զվաստակս
ձնմարիտս, երկեաւ զի գուցէ կարի յոյժ ընտանութիւնն
յարհամարհութիւն գնա ածցէ, և դաւաճանս համախոհս
ի վերայ իւր պատրաստեսցէ, զի նորածնեալ իշխանու-
յոլովք են մանկացաղք և դժկամակք : Այս իբրև ծած-
կեալ կայր ի տեսութենէ ամբոխին, հաստատութիւն միայն
խնամատուն օրինացն ծանուցեալ գնա և անուանս դա-
տաստանաւորն՝ որովք հանդէս առներ արդարութեան, յա-

ԱՄԱՀՆԻՒ Հեղուկին ի մեծարանս և ի պատիւ նորա ։

Լ՚ԱՆդԱԿՆ՝ ԵԹԷ լսեսաք ի նմանի կարգեալք զԻՄ՚ԱՆ մեծ կամ փոքր հասուցանելին նմա, և ոչ ինչ Թաքչէր ի գիտութենէ նորա, և ոչ յանցանք առանց վրէժխնդրուե անցանելին, և զԻՄ՚ եղեռն և զոչնուԹիւն արագ պատուհասիւն խափանէր ։ Ա՚ԼԼ այսոքիկ առհմանաւ իմանալի են։ Իսկ լսէ անպարսաւ սովորութիւն այն, զոր անձին իւրում սահմանեաց Պիտովկ, և ի նմանի կալան այլք ի Թագաւորացն արևելից, Թորթուելլ յաքրունիս և պաշտօնեայս ընդ ԻՄ՚ տեղիս կարգեալ՝ նոքօք միայն անտեսանել զաչխարհն, ի հաւատս բանից նոցա հաստատել զԻՄ՚ գիտութենէ, ի բերանոյ նոցա լսել զորոշ տապետից և զիրաւունս անմեղաց, նոցա՝ որք մտահաձելիք կամ հաշառօք մարթեն խոտորեցուցանել զդատաստան, և խափանել զիրաւունս զրկելոց. մանաւանդ զի դիւրաւ յաչըսկի նոցա պիտոյ ի ծածուկ և անպատուհաս գործել զանիրաւութիւն ։ Այս Թող զայս, խոստովանեալ նուքին իմն անպիտանութիւնք Թուի ինձ այս փոյԹ Թագաւորաց անտես գոլոյ ի մարդկանէ՝ զի մի զվատութիւն իւրեանց ի լոյս ածիցեն ։ Պիտովկ պատահեալ յընդելացուցանել զՍ՚արս, ի զգծուելն և ի հրահանգս ածել զնոսա, և սահմանել նոցա կարգս իշխանութիւն, այ հաւ պարապ պատերազմելոյ ընդ ազգս՝ որ շուրջ բնակեալ էին, Թէպէտ և յերկարաձգեաց եղև ի Թագաւորութիւն. զի մեռաւ՝ Թագաւորեալ ամս ևսնն և երեք ։

ՓՐԱՒՈՐՏ

որ Խափառեցաւ ամս ևսան և երիս ։

3347 · 657 Եբդ. ա. ՃԲ։ Յետ Պիտովկայ մեռանելոյ՝ փրաւորտէ կՍ՚էրաւարտ որդի նորա կալաւ զաԹոռն։ Օ սա նմանութեամբ և եԹ ձայնի անուանն ի դէպ եր կարծել նոյն ընդ ԱՅՍՄ՝ զոր ՃԱՅԼԻՆ գիրք Ա՚ըխաքատ կոչէն. բայց են և այլ ինչ հաւաստագոյն պատՃառք, զորս գտցեն ինդրողք ի բազմահմուտ Ճառին Ա՚ռնիբրմի, յորմէ բազում ինչ առեալ մեծի այսը ։ Որ ի Պիտոս Յուդիթայ գրեալ է Թէ Ա՚ըխաքատ “Շ՚ինեաց քաղաք, և ած շուրջ զեկ-

Ճոսէփ. ա. ։

1 Ա՚յոդէ անուանել սա Սիմէոնէ։

բատանացուվքն պարիսպս ,, , անտի յոգուհք ի մատեռ նագրաց վերպեցին կարծել թէ Ա՛ւրիաքսագ նոյն ինքն իսկ Պիտովկ որ զՅերեսաան չնեաց , այլ յորին ոչ պարզաբար չնել ասէ , այլ վերստին չնել . Թերևս զի ոչ կարացեալ Տօրն քաջ աւարտել զմեծամասոյց քաղաքն , որգին գՏօրն ելից զթերին ։

Վրաւորս այր քաջ պատերազմող՝ Տայրենի ժառանգութեամբն ոչ շատացեալ աշխարհաէն Ա՛արաց , խաղաց ի վերայ Պաբսից . և յաղթող եղեալ մեծաւ պատերազմաւ՝ նուաձեաց և զաշխարհ նոցա ։ Յե հզօրացեալ պարսիկ զօրականաւն՝ տակաւ զտհմանակից ազգս նուաձեր , մինչ գրեթէ բոլորովին տիրել մեծին Ա՛սիոյ , կալեալ զնմ աշխարհն՝ որ կայ ի հիւսիսոյ լերինն Տաւրոսի , յաշխարհէն Ա՛արաց մինչև Ա՛լիս գետ ։

Ի յաղթութենէ տատի խրոխտացեալ՝ ամբարձ զձեռն իւր և ի վերայ ասորեստանեայց , որք թէպետ և տակաւացեալք վտարանդութեաբ ազգաց բազմաց՝ Տզօր էին յինչ քեաեաս ։ Օ՞ զօրաժողով եղև Ա՛ատաքսերքն կամ՝ Ա՛ռաւրոդոնոսոր արքայ ծամր ամբոխիս , և առաքեաց առ ազգս բազումս արևելից՝ առնուլ ի նոցանէ զօրս յօգնականութեէ . և ստահակեալ ասպետս արարին զանս նորա , և մերժեցին զՀրեշտակն , և ոչ երկեան յինչնա կալուլեէ որ երբեմն ընդ խոտ լծուն գյոլովս յայգացն յայնցանէ նուաձեր ։ Յե բարկացաւ Ա՛ռաւրոդոնոսոր ի վերայ նոցա , և երդուաւ յիւր Թագաւորութիւնն և յաթոռ իւր՝ թէ խնդրեցից ես , ասէ , վրէժ ի ներանց անտի՝ սրով զամենեսեան սպառել ։ Յե պատրաստեցաւ և ձակատեցաւ ամ զօրութեբ իւրով ի սահմանս Հնդուաց , և եՀար սատակեաց զվիրաւորս , զՀրեշտակսն նոր քս Հալածեաց և զկառն խորտակեաց , և բովանդակ կալեալ գյաղթութիւն՝ խաղաց Տամարձակ յաշխարհն Ա՛արաց , և նուաձեալ զբազաքս նոցա՝ եՀաս մինչև Ա՛ղեքսանաս , և կալաւ զաշտարակս նորա և զպարիսպս , և զքաղաքն մատնեաց յաւար զօրականին կողոպտել զնմ զարդս նորա ։ Լսակ Հիքն Թշուառականն փրաւորս վերծեալ ի լերինս Հնդուաց , անկաւ ապա ի ձեռս Ա՛ռաւրոդոնոսորայ . որ Տրամայեաց նեետաՀար սպանանել զնա ։ Յե դարձաւ ի Ա՛լիսուէ բազմաձեռն բանակաւ , և էր անդ յանՀոգութեբ և յուրախութեբ ինքն և ամ զօրք իւր զամիս չորս ։

Լսակ զօր ի վրէժ քինու ստուգանալոյ Տրամանին առ ձակաց զՀողոփեեան զօրօք բազմաք ի վերայ ազգացն

ԱՄ ԱՀՒՆԳ անհնազանդելոց, և զյառաջխաղացութիւն և զանգիտուէ գործս Հոլոփեռնեայ, և զահ և զերկիւղ ազգաց ամենեցուն առաջի նորա, և զխորհուրդ քաջութեան իսրայէլացւոցն՝ զի խորհեցան զդէմ ունել նմա յուսացեալք յԱստ, զնեղութիւն բնակչացն Բետիղուայ՝ ի պաշարմանէն և զիմ ազգին Հրեից, զբանակելն մերկութեամբ քաղաքին՝ արի և անվհեր խնամատարութեամբ Յուդիթայ, և միանգամայն խոկ զատաւումն բանակին ասորեստանեայց, զայս ամ պատմեն գիրք Յուդիթայ։

ԿԻԱՒՍԱՐ ԱՌԱՋԻՆ

որ նախաորելոյ անս գահաւորեան։

635 · 3369 · ԱՀ. ՀՀ.

Ո՛վքեր փրաւորեայ մեռանելոյ՝ կալաւ զաթոռն որ դի նորա Կիաքսար. պատանի հզօր և աշխոյժ, որ զամ առումն զօրացն ասորեստանեայց պատեհ առեալ՝ ամրացոյց նաեւ զաշխարհ իւր, և ապա կալաւ զմեծն Ասիա լըհիւ իւրով։ Այս ոմանք մեծաւ խաղաց ի վերայ Կիւ նեւէի, ինդրել զվրէժ մահու հօր իւրոյ կործանմանէ քաղաքին։ Ընդ առաջ եղեն նմա ասորեստանեայք ապրեալք ի մեծի կոտորածէն առ Աստիղուաւ, և ձա կատու պատերազմի ի պարսից թիւն մատնեալ անկան փախստեայ մինչև ի գրուն Կիւնեւէի։ Այս որ Հայաձերն գնասա Կիաքսար՝ պաշարեաց զքաղաքն, մինչև յառնուլ եղև Կիւնեւէ. այլ զի չև էր օրհաս պատուհասի չարեացն՝ զորս անցոյց ընդ այլ ազինս, զերծաւ ի մեծ տալուստ վտանգէն այսպէս։

Առանակ մեծ սկիւթացւոցն եղեալ ի սահմանսդ մեռոյ տեան ընդէմ, հալածեալ զԿիմերս Հայաստոյ՝ խաղային գայլն գՀետ նոցա, և Մադիս արքայ առաջնորդ նոցա։ Յորոց Կիմերքն խոյս տուեալ՝ ինքեանք եկին հասին մինչև ի սահմանս աշխարհին Մարաց։ Զզդ եղև Կիաքսարայ, և թողեալ զԿիմերն խաղացոյց զամենեն ընդդէմ բազմամբոխս խուժանին, որք չանդգնին ուղիւք հնղեցոյց գայլն ողոռմանել զնմա։ Ձակատեցան ի պատերազմ, պարտեցին զՄարս, և համարձակ անհնազանդեան ոչ միայն ընդ աշխարհն Մարաց այլև ցծագս Ասիոյ սփռեցան։ Ընդ գրոհեցին յաշխարհն եգիպտացւոց. այլ Վասմետիքոս արքայ առատ պարգևօք կալաւ զա-

ռաջս նոցա. և դարձան եկին յաշխարհն պաղեստինաց-
ւոց, կէսք ի նոցանէ յաւարի առին Յ|ակաղան զ|ստ-
ղկանն զմեհեան զՆագոյնն ի մեհեանս նորա, և կէսք
ի Յ|եման քաղաք ցեղին Ա|մաաեի յայս կայս Ձորգա-
նանու արարին բնակուԹիւն, յորոց կոչեցաս ասպա քա-
ղաքն այն Ա|կիւԹաւօլիս։

Օ ամս քան և ուԹ կալան սկիւԹացիք զմեծն Յ|սիա.
յորում են մեծն Հայք և Փոքրն, Վասիրք, Պիտոս,
Աղղքիս, և աշխարհն Ա| բաց. և զամ երկիր զոր և կո-
խեցին՝ յաւեր և յանապատ դարձուցին։ Իսկ Ա|ծրք
նեՀգաւ ի նոցանէ ազատեցան. զի իբր յանլոյծ Հաստա-
տուԹեաւ ուխտին ընդ նոսա՝ Հրաւիրեցին զնոսա բազմուԹ-
ի տունս իւրաքանչիւր ի կոչունս, և արբեցուցեալ զնո-
սա՝ այր զիւրաքանչիւր կոչնակաս սպանին, և յորովք
քան զսահաւս ի սկիւԹացւոյն պահպանեալ՝ կալան ան-
զգիչն Ա|ծրք զընտիկ աշխարհն իւրեանց, և ընդարձակե-
ցին միջանգամ զիշխանուԹիւն իւրեանց մինչև Յ|ելիս
գետ, յեզր առաջին ահմանացն յարևմտից կուսէ։

Իսկ որ ոչն էին ի կոչունն անդ սկիւԹացիք, զգա- Եւտր. ս. ԺԲ.
ցեալ զկատարած Համազգեացն՝ փախստեայ գնացին յաշ-
խարհն լիւդացւոց առ Ա|զիաւէս արքայ, որ մարգասէ
բուԹիւն ընկալաւ զնոսա. և ասաի Ա|արացն ընդ լիւդա-
ցիս գրգռեցաւ պատերազմ։ Օ ըր հաղագայց Ա|իաքսար
յԼլս սահմանայ Լիւդիոյ, և զամս Հինգ ազգքն երկո-
քին մարտեան ընդ միմեանս անպարտելի։ Ա|յս ի վեց
երորդումն ամին, այն ամ նշանաւոր եղև պատերազմին՝
խաւարումնք մեծաւ արեգականն գիշեր Թանձր ի տունս
ջեան եղեալ, զոր Թաղեսի միլետացւոյ յառաջագոյն
դուշակեալ էր, մինչ գեռ ստստկապէս ընդ միմեանս
մարտնչէին Ա|ծրք և լիւդացիք՝ զահի Հարեալ ի յերկս
կարծ երևմանէն որպէս յաստուածասաստ սպառնա-
լեաց, յետս կասեցան ի պատերազմէն, և խօսեցան ի
խաղաղուԹիւն՝ Հաշտարար ի մէջ նոցա կացեալ Ա|իւենե
սիս արբայ կիլկեկեցւոց, և Լաբադոդոնոսոր [1] բաբելաց-
ւոց։ Ի անլուծանելի ՀաստատուԹիւն ուխտին՝ խնամե
խօս լինել նոցա միմեանց սահմանեցին Թագաւորք երկո-
քեան, տալ Ա|ղետեայ զդուստր իւր Ա|րիադնէ Ա|ժա-
Հակայ մեդրանկին Ա|իաքսարայ կնութիւն։ Օ արմանալի
ինչ օրէնք էին ազգացն այնոցիկ ի կռել զուխտս, զի ի

1 Ջոր Եւտրոս Լաբինեա անասնէ։

ԱՄ ԱՀ.Ն.Ք վերայ հելլենականացն սովորութիւնց՝ և վէտս ի բազուկս
միմեանց արարեալ, լեզուին զարիւն իւերաց։

3378 · 626 Եւս. ա. 3Հ։ Իսկևիսկ զկնի խաղաղութեանն փութացաւ Կիաքսար դառնալ պաշարել զԿնիւհ, յորմէ յարձակմամբ սիւրացոցն խափանեցաւ։ Կաբուսպատար արքայ բաբելացւոց, ընդ որում այն ինչ դաշինս հաստատեալ էր, միաբանեաց և նա ընդ նմա ընդդէմ ասորեստանեայց, և համադումար զօրօքն պաշարեալ զԿնիւհ առին զայն, և զԱրաքսոս արքայ սպանին, և կործանեցին զքաղաքն զայն մեծ։ Կանգի կանխագոյն հարիւր ամաւ սպառնացեալ էր այ մարգարէիւքն՝ խնդրել յամպարիշտ քաղաքէն զվրէժ արեան ծառայից իւրոց, որով արբեցան թագաւորք երկրին իբրև գազանք արիւնախանձք, և լինել առաջնորդ զօրացն եկելոց ի պաշարել զայն, արձակել առաջն նոցա զահ և զարհաւիրս, մատնել ի սուր սուսերի անողորմ զօրականին զծերս, զմանս և զտղայս, և ի ձեռս անյագ աւարառուաց զգանձս քաղաքին, քակել զայն ի հիմանց և յատակել, զի հարցուասցի ծով հարցանիցեն անցաւորք Ճանապարհին՝ թէ ընաւ ուր իցէ քաղաքն իսրահատեալ Կինուէ։ Կայր ընդկին զմարգարէիցն լուիցուք զլռանս։

Ի· 1· «Ո՜ քաղաք արեանց, գոչէ Կաւուտ, ամենևին սուտ
Ի· 1· լի անիրաւութե՛ն. որպ զինեսցի որսդ։ Կանգի եղ որ փչէ
Ի· 2·3· ընդ երեսս քո։ Զայն հարուածոց, ձայն շարժմանն անուոյ,
շաչիւն կառաց, շահատակիւն ՀԵծելոց, փայլիւն զինուս,
Ի· 4· շողալ սուսերի։ Տեսիլ նորա իբրև զլամպարաց հրոյ, և
Ա· 1-6· իբրև զփայլակն չայս կոյս չայն կոյս ընթասցին։ Ի՞նչ նաւհանդոյ և վրէժխնդիր տէր, բարկութե՛ն խնդրէ տէր
վրէժ։ Կերկիր շարժեցան ի նմանէ և բլուրք սասանեցան, խախտեցաւ երկիր յերեսաց նորա, և համբերին ամ բնակիչք նորա. առաջն բարկութե՛ն նորա ո՞հան։
Ի· 5· զարտեցաք։ Կհաւասիկ ես ի վերայ քո, ասէ տէր ամենակալ, և չայսանեչից զչեւուսւստ քո, և արարից
Ի· 9· զքեզ խայտառակ։ Չափշտակիչն զարձամբ չափշտակիչն զոսկի. և ոչ գոյր չափ զարգուհոյսս. ծանրացան քան
10· զնմ սպառք նորա ցանկալիք։ Կոխեմափումն և ձգտումն
և սոսկումն սրտի և լթումն ծնգաց, և երիսունք ի վերայ
6· ամ միջոց։ Կրունք քաղաքաց բացան, և կործանեցան արքունիք, և ատացուածք չայսանեցաւ։ Կնչեն ելանէր և նաժիշտք իւր առաջի գազանի, իբրև զաղաւնիս ի սրտիկս
Ի· 11· իւրեանց ճչէին։ Կոր էն արդ մայրիք առիւծուցն և որաք կրեանց նոցա. ուր չորաւ առիւծն մնոանել, կո-

բիւն առիւծուն, և ոչ ոք էր որ զարհուրեցուցանէր ։ ԱՄ ԱՇՆ.
Յ.առիւծ որսացաւ բառնական կորեանց իւրոց, և եղից զմսա-
բիս որսով և զճահուէնի իւր յափշտակութիւն։ Յե ձգե. Ս.Ե.Ի. 15.
ցից զձեռն իմ ՚ի վերայ հիւսիսոյ, և սատակեցից զասո-
րեստանեայն, և եղից զԼինուէ յապականութիւն անջրդի
իբրև զանապատ. և արածեսցին ՚ի միջի նորա հօտք և
ամ գազանք երկրի, և գեռնառիւծք և ոզնիք ՚ի յարկս
նորա բնակեսցին, և գազանք գիշեսցեն ՚ի նկուղս նորա,
և սակուռք ՚ի դրունս նորա. քանզի իբրև զմայր է բար-
ձրուն նորա ։ Յ.այս քաղաք վըխժագործ բնակեալ յոյ-
սով, որ ասէր ՚ի սրտի իւրում՝ ես եմ և ոչ ևս ոք իցէ
յետ իմ, ամ որ անցանիցէ ընդ նա՝ շչեսցէ և շարժեսցէ
զձեռս իւր ։։

Նահակք երկոքին լցան աւարաւ Նինուէի, և Կիաքսա-
սար յառաջ մղեալ զյաղթող զէնսն՝ նուաճեաց զամ
քաղաքս աշխարհին ասորեստանեայց, բաց ՚ի Նաբելոնէ
և յերկրէն քաղդէացւոց՝ որ էին ընդ ձեռամբ Նաբու-
պաղասարայ ։ Օ.Հետ արշաւանացս մեռանի Կիաքսար՝
Թողեալ զթագաւորութիւնն որդւոյ իւրում Յ.ժդահակայ,

ԱԺԴԱՀԱԿ

որ Նաբոպաղասարայ ամ էրեսուն և հինգ ։

Օ.սա Յ.սուերոս ՚ճծայինն գիրք անուանեն. որ թէ. 3409 · 595
պէտ և յերկարեաց ՚ի Թագաւորութէ, այլ ոչ ինչ նո-
րա մեծամեծ գործք պատմին ։ Նդէն նմա ուստր մի և
դուստր՝ որոց անուանք յայտնի են, Կիաքսար Յ.երիա-
գնեայ, և Յ՚անդամէ յատաջնմէ տիկնոջէն ։ Օ.դուստրն
Հարմանացոյց Կամբիւսեայ որդւոյ Յ.քեմենեայ արքային
Պարսից, յորմէ ծնաւ Կիւրոս ամաւ միով յետոյ քան
զկիաքսար զքեռւի իւր ։ Նյ կալաւ Կիաքսար զՅ՚ասր
զհետ հօր իւրոյ ։

1 Վերջի նիստիքիր անդրմ ոչխ. ւսորջ բնակիւսը՝ հանուանք գերիւսյս,
հարիւ ինոչսորդն ասորեստանեայց, և խաղաղացանկին գասուն ՚ի Նինուէ։
որ ասորեաբ խղդոցին գամ ոչխ

ԿԻՒՐՈՍԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Ա՛ա է կոչեցեալն՝ի սուրբ գիրս Պարեհ Աստ՝ որ՝ ընդ սմա աջակցեալ Աիւրոս՝ առ գԱսբելն, և՝ի նա եթող զայն։ Իսկ յետ մեռանելոյ նորա և Աամբիւսեայ Տօր իւրոյ՝ միահեծան ինքն կալաւ զանձնարհն Պարսից և զԱ՛ստաց. և յայնմ հետէ մի պետուէ յերկուցն եկաց։ Օ՛որա պատմեցեալ՝ի Աիւրոսէ սկսայց, կից ընդ նմին ասել և որ ինչ գնախորդաց նորա զԱիւաքսարայ և զԴժդահակայ աւանդեն վիպագիրք։ Բ՛ԱՀ սուղ ինչ գլխոց դաշտոյն Թագաւորաց նախ Հարկ է ասել, զի Աբեսոսի լուծաչոյն բազում ինչ կցորդութեամբ է ընդ պատմեն՝ յոր մտանել հանդերձեալ եմ։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

ՊԱՏՄԱԲԱՆԻՆ ԼԻՏԱՑՈՑ։

Ա՛ՐԴԱՏԱՏ զառաջին Թագաւորս լիւդացւոց Կոտ-
[illegible] ասեմս անուանել, սերեալս՝ի Լիւդեայ յորդւոյ Կոտ-
սայ. և որ յառաջն մեռանացիք կոչեին ազգն այն՝ ի Լիւդեայ ընկալան ապա լիւդացիք անուանակոչել։

Հերակլեանք գՀետ նոցա յաջորդեալ, սերունդն Հե-
րակլէսի, կալան զահերութեամբ զամս Հինգ հարիւր և Հինգ։ 2761 · 1223
Կ՛ԱՐԴՈՆ որդի Հերակլեայ Թառնն Կզկեոսի, ՚ի Հե-
րակլեանցն նախկին Թագաւոր եկաց՝ի Լիւդիա, և վերջին

ԿԱՆԴԱՒԼԷՍ. Սորա յոյժ զկին իւր սիրելով վասն չքնաղադեղ կերպարանին, պարծէր Հանապազ. և խոր-
հեցաւ ցուցանել զնա միւսոյ ումեք յառաջնոց իշ-
խանացն իւրոց, որում անուն էր Գիւգէս, զի և նա ականատես եղեալ վկայեսցէ բանիցն.՝ որպէս ոչ բա-
ւական համարեալ զկատուէն իւր, կամ թէ թերի առ-
նէր ըստ թեամբն զգեղ նորա։ Եւ թէպետ յոյժ զգու-
շացաւ զի մի գշխոյն գիտացէ զայն, այլ նա ետես զգ-

՚ Ոչ չատ համաբերեցաւ զգիւ- որպէս եղծումն գեղոյ նորա զգե-
ստուն իւր՚ի լուսոյ ցանկութեն... ռանթիւնն վարկուցեալ։

Վիւգէս՝ միոջ ի տեղւոջէ Թագաւորացն խոյս տայր, և ամ ՌՀՀ.Ն.Ը
չտեսեալսն պարս։ Լսէ եթէ արդար ասէ մատենագիրն,
խորհեցեալ դշխոյին զի գանձ անկանելի պատառանիք
են փշոջ եդ ի մոյ վրէժխնդիր լինել, և մեծագոյն յան-
ցաւորութիւնք զանցեալս առնեն պատուհասել։ Ա.Յլ առա-
ւել թերևս քան զվրէժխնդրութիւն անարգանացն՝ զօրաւ
ցալ ի սիրտ նորա ցանկութիւնն առ Վիւգէս։ Որպէս
ինչ և իցէ, կոչեաց նա առ ինքն զՎիւգէս և ասէ, ընդ
արեա քեզ զմի յերկուց աստի՝ կորուսեալ քոյ կամ
Թագաւորին քաւել զանցսդ։ Ընդունայն աղերս ա-
րարեալ նմա Վիւգէս, յանձն առ անալ զերկրորդ պակ-
մանն։ և սպանեալ զկանդակղէս՝ էառ ինքն զկին նո-
րա և զաթոռ։ և այսպէս ի հերակլեանցն էանց Թագա- 5ա86 . 718
ւորութիւն ի մերինեանս։

Ո այմա ժամանակաւ եկաց Ա.ղբիղոբոս քերթող,
զղջմամբ Ա.յրոդոտոսս պատմէ՝ զանցս Վիւգեայ ի քեր-
թուածս իւր մուծեալ։

Կամիմ և ոչ զայն լռել՝ զոր Ա.յրոդոտ զարձեալ ասէ,
թէ առ լուդացիս և առ ՝ամ գրեթէ խուժադուժ ազինս
յամենի հանարեալ էր և յանարգանս՝ նա և առն մար-
դոյ մերկ երևեալ։ Ո՞ր պարտ է մեծ համարիլ զայն-
պիսի նշմար պատկառանաց առ հեթանոսս պահեալ։ Ա՛ն
է հարկ ասել և որ առ հռովմայեցիսն օրինք էին՝ մին-
կանց ի չափ հասելոց մի ընդ հարս իւրեանց մտանել՝ ի
բաղանիս, և մի փեսայից ընդ անեղս. և զայն պարկեշ-
տութիւն և ժուժկալութիւն առ օրէնս բնութիւն ունելին նո-
քա, և եղծանել զայն՝ յանցանս մեծ ։ Ո արմանք են
զի արդ առ մեօք անկարգութիւնս այս, յայսպիսի առնե-
լոյ իշխանաց, համարձակեալ է՝ի բաղանիս. որ յայնմի
իսկ հակառակ է օրինաց հեթանոսէ մարդկան և պատ-
կառանաց, և միաւսկաւքր պատանեաց և օրիորդաց, որ
և առ հեթանոսս դատապարտեալ էր խստիւ։

Ա.յլազգ Ա.յրոդոտոսէ աւանդէ Պղատոն զվէպս Պղատ. հուլդ.
Վիւգեայ. մատանի՝ի ձեռին առելով ուներ նմա, զո- էՀ. 359 .
րոյ յինքն կոյս շրջեալ զկասիճ ականն՝ անտես յայլոց տե-
սանել ինքն զայլս. և թէ համախոհութիւնք դշխոյին մա-
տանեաւն այնուիկ ընկէց զկանդաւղէս յանթոռոյ՝ քաջ-

1 Օրէնք էն առ մեղ՝ մի յայր- ռանս, որուհ բնութիւնն ինքն ա-
բուն հասակին մատնել որդւոց րաշխրգ է և վարդապետ։ Կիւ-
ընդ ձեռնն՝ի բաղանիս, և մի վե- յդ. գաղղեացի. ա. ձԽէ։
սոյից ընդ անեղս։ Էր պարտ է էչգեռն մեծ համարեր մերկ և
հասատատուն ունել զայս պատկա- բևեր։ Վ.ՂՂ. Մ՜ոս. էՀ. ա։

ԱՄ ԱՀՎՒՔ ձեալ՝ի կենաց ։ Ոլով Թերևս զխորամանկութիւնէ և ըզհնարս չարարուեստ ուշխատելն տայ խմանալ, որպէս վարեցաւ Պիւգէս՝ի յաջողելոյ չարութիւնէ խորհրդոյն, զոր՝ի ժամանակիս յայսմիկ հանձարեղ և ճարտար քաղաքավարութիւն կոչի, որ՝ի գաղտնիս սրտից մարդկան մնեալ՝ զիւրսն ամենայնիւ թաքուցանէ ։ Ոլով ես զայս առաւել քան զԱրդուոտեայն արժանի հաւատ տարմանել վարկանիմ ։

Օ բազմահնձակ առասպելս գիւգեան մատանւոյն և Կինէրոնի յիշատակեալ, ասէ . Ոչն խմաստնոյ Թեպետ և իցէ մատանիս այս , սակայն ոչ զէղծիցի նուաւ . զի առաքինութեանէ ոչ գիտէ և ոչ խնդրէ զնաւար ։

ԳԻՒՂՍ

որ Նափաորքեաց ամն էրէսոսի և ասի ։

3283 . 718 Եւրտ. ա. թգ . թէ ։

Ընդմուկ երկպառակութեանէ յարուցեալ՝ի մէջ լիւդացւոց ընդ մայ կանդաւղեայ , առանց պատերազմի միա բանեցին լսել Կանդիեայ պատգամախօսին՝ի հաստատութեանէ Պիւգեայ . վասն որոյ և ընծայս բազումս Պիւգէս նուիրեաց մեհենին Կանդիեայ , մանն ինչ Թերևս յառաջագոյն կանխեալ առաքեալ՝ զի նպաստաւորս իւր ընկալաւ զպատգամն ։ Ընդ նուէրսն այսոսիկ յիշէ Հերոդոտոս և բաժակս վեց ոսկիս՝ որ կըշռէին տալանդս և բեսուն ։

Երբև յաջողեցաւ Թագաւորութէ՝ի ձեռս նորա , խաչաց պատերազմաւ և էառ զՄիլետոն և զՕ միւռնա և զՂողմիոն , զմեծահարուստ քաղաքս ազգացն՝ որ շուրջ բնակեալ էին ։ Ոչ մեռաւ Պիւգէս , և կալաւ զաթոռն որդւի նորա

1 Երէ իցէ խմաստնոյն մատա- ՚ի ծածուկ ինչ գործին՝ զայն խրն- նիս այս և եթէ ոչ , սակայն ան- դրէ այր լաւ , այլ որ ինչ վայել արժան զմեզս համարի. զի ոչ որ է . յղ. գործոցին. ֆ. 12։

ԱՐԴԻՍ

որ ընթաւորէաց ամս չատասուն և չինն ։

Ա՛ռ սովաւ Ալիմելք հալածեալք ի սիւրեթացւոցն Ա՛ր 3324 . 680
մադաց՝ անցին յԱ՛սիա, և կալան զԱրդիկէ քաղաք ա- Եւտ. ԺԶ ։
ւանց պարսպացն ։

ՍԱԴՈՒԱՏԻՍ

որ ընթաւորէաց ամս երկոտասան ։

Ա՛ա ի վերայ բնակչացն Ա՛ղէտեայ երեթեալ պատէ- 3373 . 621
բազմաւ՝ պաշարեաց զքաղաք նոցա . Ի՛նդ ժամանակին
ընդ այնոսիկ առանց պատերազմի չառնին զպաշարմունս
գործէին՝ նստեալ զքաղաքաջք . վասն այնորիկ և յերկա-
րածգէին՝ նստեալ քաղաքաց յաման բազում ։ Ա՛յլ մեռաւ
Ադիատէս մինչ չև կալեալ զքաղաքն, և յաջորդեաց
որդի նորա

ԱՂԻԱՏԻՍ

որ ընթաւորէաց ամս չետասն և եօթն ։

Ի՛նդ Ա՛ղիաբասայ արքային Ա՛ռաց ետ սա պատէ- 3385 . 619
բազմ՝ հալածեաց զԱ՛ղէտս յԱ՛սիոյ, և էառ պատերազ- Եւտ.ԺՀ-ԺԹ։
մաւ զՕ միւռնա և զԱզոմինէ ։ Ա՛յլ զառ ի չօրէն
իւրմէ սկսեալ զմարդան մեծաց ընդդէմ միլետացւոց, և
աստուածպղծ զպաշարումն քաղաքին զամն վեց՝ որչափ
ժամանակ և հայր նորա պաշարեալ էր ։ Ա՛յլ այս կա-
տարած եղև մարտին ։ Ա՛ղետս հրամայ առեալ ի
Ա՛ղեքսիոյ պատգամախօսէն հրեշտակ աւրաւ ի քաղաք
անդր՝ խօսել ի դադարումն զինուց ամենս ինչ ։ Ա՛ղ
եղև ի(ն)րասխքուղեայ , որ բռնակալէր ի Ա՛ղետեան , և
հրամայեաց ածել կուտել ի հրապարակ քաղաքին ցո-
ւեան և այլ պաշարս ի մէկերից իւրեանց, և ի լցնել
նշանի՝ բազմել ամենեցուն ի խրախճանս կռնոյ . և ա-
բարձին այնպէս ։ Օ՛ր տեսեալ պատգամաւորին՝ զարմա-

ԱՄ ԱՀՒՆՔ ցաւ յոյժ ընդ առաւտիւ պաշարոյն, և գարձաւ եցոյց զնա տեառն իւրում։ Եւ նորա անդրէն եղեալ առնուլ զքաղաքն սովով, լաւ համարեցաւ զնաղաղել քան զկիզեալ պատերազին, և եբարձ զպաշարումն։

ԿՐԵՍՈՍ

3444 · 56։ Ա՛նուն խոկ սորա առակաւ զմեծագանձ Հոխուսիոյ Լայտ առեալ· զորոյ զամբաւ մեծութիւն յրնծայիցն ոք դիւրաւ գուշակեսցէ՝ զորս նուիրեաց ի մեհեանն Դե՛ղֆէայ· քանզի այսքիկ բազմաբիւր տաղանդաց նուէրքն կային ցաման Լդրոտոեայ։ Եւ ին Թերևս մեծուէց նորա աղբիւրք բովքն, զորոց ասէ Ստրաբոն ընդ մէջ Պերգամայ և Ա՛տարնեայ գոլ, և Պահտոդոն գետ փորը ոսկեհան, որ խառն ընդ աւազոյն ծերեր ոսկի։ Ա՛յլ այս ի ժամանակս Ստրաբոնի ոչ ևս էր։

Սթրաբ· ԺԳ· 6ա5.ԺԳ.68։

Երոտ· ա· 1ԷԲԵ։

Ի՛ մեծութենէ աստի ոչ թողացաւ արիւրձէր նորա, որպէս և սովորութի մարդկան։ Վա՛նգիր զանգործ և զմեղկ կեանս՝ նախատինս համարէր առն Թագաւորի։ Օ՛ն՛ի ձեռին ընդարձակեր անդադար զաշխարհակալութիւնս իւր, և զսահմանակից իւր նահանգս խառնեաց յաշխարհ իւր՝ զՓռիւգիա, զԼի՛սիա, զՄամիխլագոնիա, զԼիւթեանիա, զՄամիխլիա, և զայլ երկիրն կարեացոց, եւ աղաղակեաց և դօրացուց։ Ա՛ս նախ ընդ լծոյլ սարայ ըզՀայոս՝ զազգ որ չև ևն անկեալ ընդ իշխանութիւ։ զայս ինչ Լդրոտոտոս աւանդէ զՀունաց, որպէս Հաւաստի կարծեմ, որ ի փոքրն Ա՛սիա բնակիւն։

Եւ այս առաւել է զարմանալի, զի այլ պատերազմոյ և Հարուստ մեծութիւք՝ գիտութենէց ցանկացող էր և բանասէր։ Ա՛ղբունիք նորա էին օթևարան ակամաւ բայց գիտնոց՝ անուանեալ էօթանց խնամասնոյն յունաց։

Էրոտ· ա· էէ-ւֆ։

Ասէն մի յերևելեացն ի նոցանէ օրէնսդիր ա- Պլո՛տ. Դ Սո- ղամ Ա՛թենայ առ ժամանակ մի, և զամն ինչ պա- ղաս 93։ տալ առեալ՝ շրջել յայլ և այլ կողմանս աշխարհի։ և էին ի Մարդիէ, և ընկալան զնա ժողովուրդն փառօք մեծաւ՝ որպես վայել էր նմա։ Եւ երևեցաւ նմա Թագաւորն յատենի, շուրջ լեալ ի բազմութենէ աւագանւոյն, և արքայական փառաւք՝ ի Հանդերձս երևելիս ոսկեՀուռս ընդելուզեալս ակամբք պատուականաւք։ Եւ ինչ

ընդ չքնաղ տեսիլն զարմացաւ Սողոմ, և ոչ բանիւ զարմանս եցոյց. միտս առեալ խմաստոյ՝ զի այնպիսի փոքրոյ մարգման անկ էն, ստոյգ գեղեցկութեամբ և մեծութեամբ անգիտ եղելոց։ Իսդ այս ոչ սիրելի կերպարանս խմաստասիրին դժկամակեալ Թագաւորն՝ հրաման էտ ցուցանել նմա և զնա գանձս իւր, և զասպարանս մեծաս գործս և զազգմածախս, և զնմ կամ արքունեացն, որպէս ի յաղթահարել զանգգայ միտս նորա յանձնառութեամբ ապատուցն և քարանց պատուականաց և անդրեակ և նկարագործ պատկերաց։ Իսկ նա Թագաւորին յայտ եկեալ եր, և ոչ ի տես որմից և սեղեակաց ապարանիցն։ Օ ի ոչ հանգերձանաք շքեղ տպաստց որ արտաքոյ էն անձին Թագաւորի՝ գուշակք էն, ասէր, քաջութեամբ նորա, և ոչ այսքիւք մեծարի արքայ, այլ բնականոր յինքեան լուսովքըն։ Իսկ ուրեմն հարկ եր Թագաւորաց ընդ արհաւիրս ի միայնութեամբ բնակել։ Իսե տեսեալ Սողոմի զնմ, էին անդրէն յանդիմման եղև Թագաւորին, Իշխարց ցնս Թագաւորն. Օ ո՛ յամ ձանապարհորդութեամբ քոմ տեսեր քան զնմ զբ երջանիկ։ Պատասխանի ետ Սողոմ. Օ ՚ետղոս աթենացի զայր լաւ և բարեկեցիկ, զի անկաթոտ զնմ աւուրս իւր եկեաց, և եթող որդիս՝ որ ուներին չորս առ նմ ժողովուրդս, և զորդիս որդւոց իւրոց էտես, և առ կենդանութեամբ իւրով տակաւ զնոյնն նման յաւելեալ ի պայծառութիւն, և մեռաւ փառաւք՝ փոխանակեալ զանձն ի վերայ հոյերնեաց։

Օ այն պատասխանի խմաստասիրին, որով զսկին և զարծաթ արհամարհեաց, համարեցաւ Կրեսոս չնահատադոյն և տխմարագ վայել բանս. այլ ակն ունելով երկրորդի փառացն վիճակել՝ եհարց գարձեալ. Իսե զոհ յետ աթենացւոյն այն տեսեր երջանիկ։ Սողոմ ասէ. Օ եղբարս կրկին արգիացիս՝ զԿղեոբիս և զԲիտոն զանազիթաք օրինակս եղբայրսերութեան և մեծարանաց առ ծնողս[1]։ Օ ի ի միում աւուրց, յորում մայր նոցա քրմանհին ՚երոյ հանդերձեալ եր գնալ սայլիս ի մեհեան և յամենին եղիցն, տեսի գնասս մտեալս ընդ լծոյ ձգել զսայլն մինչև ի մեհեան անդր ընդ քառասուն ասպարէզ։ Իսդ որ սքանչացեալ երանեին մայրք զբերքմանհին զնոյր այնպիսեացն որդւոց. և նա ուրախ եղեալ և գոհացեալ, խնդրեաց յաստուածուհւոյն տալ որդւոց իւրոց փոխարէնս՝ որ ինչ առաւել լաւ իցէ մարդկան։

1 Ջաքս գերազանց եղբայրասէրս և մայրասէրս։

Այլ լուաւ Հերա աղօթից քրմուհւոյն, և ի վախձան լմնել պատարագացն՝ անկաւ մնջորդ քուն քաղցր ի մէջ հնձի անդ, և հանգստեաւմբ վճարեցան ի կենաց[1], որոց արդեացիք անդրմս ի մեհենին Վահեկեայ ի մէջ ծառոյս առաքինութեամբ նոցա կանգնեցին։

Յաւուր ինդ բանս նորա և ասէ. իակ զկարգ, և ոչ զկրեսոս համարիցիս երջանիկ։ Իակ Սողոն զի ոչ մարդասիրութիւն կամիր, և ոչ զգրգռել զնոսա ուրս, ասէ քաղցրութիւն։ Ինդ բազմագիտ պարկաւ զոր Հելլենացս ազգի հնորհեաց աստուած, արքայ լինադացոց, յաւել և գնդի համեստութեամբ և ժուժկալութեամբ, որ զնմանատիպութիւնս զայս զարդ և զանուանս ծնաւ ի մեզ, որ զվերհանձն հանդիսականսն առանց ամբարշաւանութեամբ և մնափառութեամբ բերել յինքեան՝ օտար յարքունեաց, և որ խելամիտ եղեալ մանկանաս ցուացս յորդորդ բաղկի, ոչ ի մէջ բարիս յոր վայելեմբ՝ նեղել պանծալ, և ոչ զայլոց բարեբաստութիւնս երանել զփախչող և զանհաստատ։ Այլ եղոյց ասա՝ զի եթէ անհաստուն անաւ յոլովից կեանք սահմանին. և ի քան և հինգ հաղար հինգ հարիւր և յիսուն աւուրց անայն այնոցիկ և ոչ մին միւսոյմ նման է, և հանգերձեալն իւրաքանչիւրոյմ՝ յայնորդութեամբ բիւրակերպ պատահարաց, զորս գուշակել կանխաւ անհնարին է, վասն որի զնոսա երանեմբ, ասէ, որոց ի բարութեամբ ետուն դէպ զկեանս իւրեանց կատարել. իակ որ բիւրուց վտանգաց նեղբոյ կան հանապազօր, կեղակարծ բաղդ նոցա թուի մեզ որպէս զսպան պատերազմողի՝ որ չէ կալեալ է զղյաղթութեամբ։ Այլ եւ Սողոն յերեսաց արքայի՝ գնդեցոյ զնա խրատուբն։ Ի ժամանակին յայնմիկ եր յարքունիս Կրեսոսի առակախօսն Այսոպոս՝ սիրելի յաչս արքայի. սա կարեկից եղեալ ընդ արհամարհանս Սողոնի՝ ասէ ցնա իրրև ընդ խրատ. Պարտ է, ո Սողոն, կամ ոչ ինչ[2] առ Թագաւորս խոսել, կամ հաճոյական ինչ։ Այլ որ Սողոն Աթենացի ասէ, պարտ է մանաւանդ կամ ոչ ինչ խոսել կամ օգտակար ինչ։

Յաւուրց անտի Պղուտարքոսի կարծիք եղեն ոմանց յիմանալոց՝ թէ վերնակ ժամանակագրութեամբ իցէ ասա, և անհնար վարկան Սողոնի և Կրեսոսի տեսանել զմի-

1 Թ.Ե.Բ.Ո. առ խանի վաճառ.ոյ ձա. Խոպոտրէին դիպաս Նոցա պատանել։

2 Հ.Յ.Ն.Ի.Ն.Ա.Կ.Ա.Ն Նմանակոյն ոսնի պիտոյ, ոչ ինչ և հաճոյական ինչ. ա՛ն

ա՛ուցտա, ա՛ս ի՛պ՛ի՛ս՛տա ա՛ս խրատա, զոր ու և նոր օրդնս ն՛ն՝ ի՛ն՛ա՛ք՛ն՛ի՛ն՝ ի՛ա՛ր՛ք՛ա՛մ՛ն՛ե՛լ՛ն՛ա՛յ՛ս՛ ե՛ա՛ք՛։

մեռանս և խօսակից լինել։ Խայց Թուսկանուհիէն ժամա-
նակին անյայտութիւ՝ ակաթ զառաջուածն զայն Համա-
բեցաւ Հանձարեղ վիպագիրն, ընդդէմ բազմաց Հաւա-
տարիմ մատենագրացն վկայելով՝ որք զպատմութիւնս
զայս առանդին։

Որ ինչ զՎրէսոսէ ասացի, այս և առ Տամ Թագաւորս
և իշխանս յաձախ պատահի պատրել՝ ի մարդահաձոյ-
ից։ Եւ երկու ինչ կուրութեանս պատճառք Հանապազ
Հաւաս վկայեն իրքս այս. առաջին զանզգոյշ յօժարուի
սրտի ընաւորեալ՝ ի մարդիկ, մանաւանդ՝ ի մեծամեծս,
ի լուր գովութեան և ի պատուել զայնոսիկ՝ որ զարմա-
նան ընդ նոսա և զՀանձոյս նոցա առնեն Հանապազ. և
միւս ևս՝ նմանութիւն մարդահաձութեան ընդ անկեղծ
սիրոյ և ընդ պատշաճ մեծարանաց, որ Հարատար կեղծա-
ւորութեամբն և զկարի իմաստնս պատրէ՝ եթէ ոչ
զգոյշ լինիցին անձանց։

Օ կրեսոս գիտեմք ի պատմութենէ լեալ Թագաւոր
քաջ և բազում մասամբք գովելի, զի էր նա քաղցր և
մարդասէր և ազնուական, և արբունիք Նորա աստղա-
կան իմաստնոց և Հանձարեղաց. և յայտ յայտնի է,
զի և ոչ ինքն անբաժ էր յիմաստութէ և՝ ի գիտուեց,
Այլ ընչասիրութեամբն աՀա և մեծութեցն ցանկութք
զառածեալ՝ ի չափ Ձորհութեց զերծանութէ իւր սահմա-
ներ, և զատոգ և զանանցանելի փառս Թագաւորութէ
ընդ շքոյ և պերձութէ փոխանակէր, և ի տարապարտ
մեծարանս այնոցիկ բերկրէր՝ որք սակաւ ինչ ընդՀատ
ի դից պաշտօն մատուցանէին նմա։

Որ գնովաւն էին իմաստնոց և Հանձարեղաց, և առ-
դամն բազմութեան՝ որք ի սեղանոյ Նորա ուտէին Հանա-
պազ, և զեղծութեանցն կցորդք էին, և խորհրդակիցք
խորհրդոց Նորա, շահեալք յատուցաձեռնութէ Նորա,
և ի պարգեւաց Նորա մեծացեալ, ոչ ինչ փոյթ էր Հա-
կառակել Հանդիպից կամաց Նորա, և ոչ ի պատրանացն
ազատել զնա և ի վրիպակ խորհրդոց. այլ մանաւանդ
առաւել էնա ի նոյն հրապուրիչն զնա գովութիք՝ որպէս
թէ ոչ որ ի ժամանակին յայնմիկ էր իրրև զնա Հա-
րուստ ի Թագաւորս, և ընդ բազմադամս մեծութեան
զարմանային և ընդ մեծագործութէ ապարանիցն, կա-
տական բանիւք ստուերացուցեալ զայնոսիկ. զի այսպէս
յաջողէր նոցա Հնարս գտանել առ նմա։ ՎՀանգի մար-
դահաձութէ զինչ է, բայց տուրևառ ստութէ՝ Հաձա-
սիրութէն փոխանակեալ ընդ փառասիրութէ։ Օ՛ր որ

մարդահամէն՝ զաւագութէ թեկն աճէ, և խնդրէ շահել մեծութէս. իսկ թագաւոր ցանկայ գովելի լինել և ի զարմանս ամենեցուն, և է ինքն նախ անձին իւրում շողոմարար. չարաթոյն զդէղ մահուն անդամք անձին պատրաստեալ քան զոր այլք ընծայեն նմա չարբուսին։

Լաւալոյս, այն որ երբեմն գերին էր և ոչ օտարացեալ ապա յառաջին բնաւորութենէն և ի մտացն՝ այլ յաւելեալ ի նոյն և զնարտարութէն հմուտ և խորագէտ պալատականի, սուղ բանիւն զոր ասաց ցՅողոն՝ թէ ընդառն թագաւորի կամ մի բնաւ և կամ զհաճոյն պարտ է խօսել, չայտ առնէ քանի խուճապն մարդահամոյից էին չարքունիս կրեսոսի, զի անկեղծութէն անդ ոչ էր, և ոչ հաւատարմութէն և օրինաւոր ծառայութէն։ Վ ան աշորիկ ոչ հաճոյ եղև նմա վէմ և առաքինի համարձակութիւն խնամատարին, զոր պարտ էր մանաւանդ մեծ համարել՝ եթէ գիտէր զի է գանձ ցանկալի այլ բարեկամ, որ յանձն և եթէ թագաւորի և ոչ ի բաղդ նորա հայեցեալ և ի մեծութէն՝ ոչ թաքուցանէ ի նմանէ լըռչմարիտն. որ թէպէտ և անձնասիրութէն նորա գառն է առ ժամանակ մի, այլ ապա օգտակար լոյժ նմա և պիտանի ի կեանս։ Ո՞ անկեղծ և դհաւատարիմ բարեկամին օգուտ մեծ առ թագաւորն՝ ցուցեալ Վենեկայ, յարէ ապա որպէս զնոյն ինքն զՎրեսոսէ առեալով։ Տուր թագաւորի խորհուրդս պիտանիս, և գէթ միանգամ ի կեանն լուռ զբաբառ ճշմարտութէն յունէն նորա՝ զոր հանապազորդ մարդահամոյիցն ճարիք հնչեցուցանեն։ Իսկ որով իւիք օգտեացես նմա՝ որ ի բուն ծայր բարեբաստութէն անցեալ է. ուստ նմա մի յուսալ յայն, և բարձ ի նմանէ զմտաի վստահութէն ի կարծեցեալ մխտաւոր փառս և ի մեծութէն, և յողդողդ և կորստական ցոյց նմա զշնորհս բաղդին և զոխրոտութէն։ Խեղճամտ արա զնա, զի ընդ բարձրանէ և ընդ կործանումն՝ բազում այն է զի վայրկեան մի խորոց է ի միջի։

Լրեսոս · ա · ԳԼԻՒ ։

Ո՛վ յետ բազում ժամանակաց զիորձ հաս Լրեսոս Աշմարտութէ բանիցն Սողնի։ Այն նորա երկու որդիք

1 Ձնունն լեալ չորմնութէ՝ նորա գյանդուքն վատահութէն ազդեցի գեթ երբեմն Աշմարտու. ի կարծեցեալ մշտաւոր մեծութէն, թէն բաբառ. տուր խրատ նմա և յողդողդ զպարգեա բաղդին ոչ օգտակար։ Իսկ իւ օգտեացես երբ սուցեալ նմա, և զի ընդ բարեքանկին. Թերայոյս զնա արա յերբ. բաղդութէն և ընդ չարաթոյնդուքն կործանութէն խրտ։ Օգուտ մեծ Թէն չիք բազում անգամ խոհ։ գործես նմա՝ բարեալ ի մտաց Սենէկա. յդ. Բառեր. Ը. ՃԼ։

մի ի նոցանէ համբացաւ, և էր հանապազ վիշտ սրտի նորա. և զմիւսն, զառաւել սիրելին, որ քան զհասա- կակից մանկտին զարգացեալ էր ամ առաքինութիւք, և անուն նմա Ալոխ, տեսանէր յերազի անկեալ սրով, և այլ վիշտ յայսմանէ յաւելեալ նմա։ Ի բաց հրամայեաց բառնալ ի տեղւոջէ բնակութեան մանկանն զամ զէն, զսուր, զդեզարդն, զնիզակ և զնետ, և արգել մի ու- մեք առնել ընդ նմա զրոյց պատերազմի կամ պաշարու- ց քաղաքաց կամ բանակի։ Վասն եղև յաւուրն յայ- նոսիկ ազատագունդ մանկտոյ պալատանն յոգս արշա- ւել, զի կինդ վայրենի զամ զշրջակայ վայրս աշխարհին ապականեր, և զնա եղիցն հարկանել։ Ուր Թախմանեակ Ալոխ զՅայրն՝ զի տացէ հրաման ի զնին կալ Տանդիխն, Ոչ կարաց Յայրն մերժել զՅոյժաւած նորա, և երիտա- սարդ մի էչխան Ալգրատոս անուն նորա՝ որ փախստեամբ անկեալ էր անդր, զնա պահապան կացոյց նմա։ Այս ինքն Ալգրատոս վերպակաս զնեաց ի մանուկն ուղղեալ զնա փոխանակ որոյն սպան։ Ալդ ես ոչ կարեմ զնկիճ Տօքն ասել ընդ գոյժ մահու մանկանին, և ոչ զանպատա- կան սպանողին, այն որ առ վիշտս ցաւոյն անգնին իսկ ի խորհեցաւ թաղաւորն զոյժ մի գժուարագուշակ գոլ ընդ ՅԸՆԹԵՑՔ
Ալմ կրկին ի գառն հեծուելիէ եղեալ ընդ կորուստ մանկանին, ապա սթափեցաւ ի Տամբաւոյ Կիւրոսի և ի ամեծամեծ քաջութիւնց նորա. և փարատեալ գուգ խոր- հեր այնչհետև Թուաբս ամբարտակս ընդգէմ զօրութիւն Պարսից կանգնել, որ օր ըստ օրէ յառաջ խաղացեալ ընդարձակէին զսահմանս իւրեանց։ Ալև երկիւղած էր նա ի գիշն, և ոչ կամէցաւ միանչ չև գնացս Տարցեալ՝ մեռ- ի գործ առնել. բայց և ոչ կայր յանդգնութիւք յուսա- ցեալ ի պատգամս նոցա՝ խորհեցաւ Տաւատալ նախ թէ խօսիցին ճշմարիտ։ Ամն իրի Տրեշտակ արար ընդ ամ աշխարհն ելլադացւոց և ընդ Ալքրիկէ առ Տռչակաւորս ի պատգամախօսացն, Տարցանել թէ, զայս օր յայս ժամ պինչ Տանդերձեալ լիցեմ գործել։ Կատարեցաւ Տրա- մանն, և յամենեցունց ի նոցանէ Վհեղփեայ պատգամն գտաւ արդարախօս, որ ի վերոյ ասացեալ տողս ունէր զայս խնդաստ. "Վխտեմ զառաջին թիւ, և զչորի ծո- վս. զարբառ Տամերն լսեմ և զդիեցկիս. ի զգայու- թիւնս իմ Տարաւ Տոտ զրահանորթ կրպչին, որ ընդ ոչխարենւոյ եփի պղինձ ի վերոյ պղինձ ի ներքոյ։ Վանա զի խորհեցաւ Թագաւորն գործ մի գժարագուշակ գոլ ծել, և եթէ զկրայ ընդ գառնն ի սան պղնձի։ Օրմ

սուրբն Ոգոստինոս յոլով ուրեք ազդ առնէ, զի՛ ի պա-
տուհաս կուրութենէ կռամոլիցն՝ նեղեր երբեմն ած պատ-
գամն Աշխարհատ տալ գիւաց ։

Ապա այնուհետեւ ոչ ինչ Թերահաւատութենէ եղեալ Աբեսոսի յաստուածն՝ զոր խորհեր Տարցանել, մնայոց նմա զոհս երեք հազար . և սպասս բազումս և եռոտանս նախ և սեղանս ոսկիս ետ ձուլել՝ ի քաւուրս գառագնաց ձեւս Հարիւր և տասն, որոց մէկն մի կշռեին կրկին տա-
ղանդ, և նուիրեաց զայնոսիկ՝ ի գամնա մեհենին Դելֆիս։ և այլ նուէրս բազումս, յորս էր և առիւծ ոսկե ձոյլ՝ ի կշիռ տասն տաղանդաց, և անօթք կրկին մեծա-
մեծք յոյժ, մէկն ոսկի՝ ուրից տաղանդաց և կիսոյ, և միւս արծաթեայ՝ որ տասեր սափորս վեց Հարիւր։ Ոյսու-
սիկ Աբգարոսոս աւանդէ, և այլ բազում նուէրս՝ որ ցա-
ւուրս նորա կային . զորոյզ զնոյ առնեմ՝ Համառօտու-
թեան խնամ տարեալ ։

Աբգիս ինչ պատգամուորեցան հրեշտակքն Տարցա-
նել յաստուածոյն . մի՝ Թէ ելցի՞ Աբեսոս ի պատերազմ ընդդէմ Պարսից, և միւս եւ՝ Թէ կոչեսցի՞ իւր նեղակա-
կիցս յօտար ազգաց ։ Այլ ընկալան նախ պատգամ, զի Աբեսոս երթեալ ընդդէմ Պարսից՝ քակեսցէ զնշխա-
նութենէն մեծ . և առ երկրորդն, Թէ՝ ի քաջացն Հելլենաց առեալ զօրավիգն՝ բարւոք արասցէ ։ Ոյսոսիկ ընկա-
լեալ պատգամն՝ եհարց գարձեալ Աբեսոս, Թէ՝ ցմբռաւ ժամանակս կացցէ Թագաւորութենէ նորա . և պատգամն ասէ, մինչև Ջրոյ ի գահ Ասպաց ելանիցէ . զոր Աբեսոս յաւէրժ հաստատութենէ աթոռոյն նշանակ համարեցաւ ։ Այս ըստ դիցն Հրամանին յուխտ եմուտ ընդ աթենացիս, որոց առաջնորդէր յայնժամ Պիսիստրատ, և ընդ սպարտացիս . զի առքս՝ ի ժամանակին յայնմիկ առաւել քան զայլ ազգս Յունաց հզօրք էին՝ առանց իրիք երկ-
բայութեան ։

Ի լուգացուց անտի ամն, անուանի խնամատութեամբ, Իրատս Հանձարեղս ետ Աբեսոսի և ասէ . Ցուսմ բա-
նագատեալ, արբեայ քաջ, զէն ածես՝ ի վերայ Պարսից . ազգ՝ որ յերկիր կորդ և՝ ի խիստ ծնեալ, ի տարժանա-
րոր աշխատութենէս՝ ի մանկութենէն բրտացեալ են, որ խոշորագոյնք և վայրագասունք ուսեալ՝ Հացիւ միայն և Ջրով շատանան, որ ոչ գիտեն զդիւրութենէ և զփափ-
կուն . որք, միանգամայն իսկ ասացեալ, ոչ ինչ՝ ի պար-
տէն կորուսանեն, այլ յաղթող եղեալ՝ զնմ՝ ինչ ստաս-
ցին . և որոց միանգամ տուեալ զձաշակ փափկութե՝ աշ-

խատուԹիՒ մեծաւ ապա յերկիւղ ածի վանել զնոսա կա-
բասցուք ։ Իսկ Թուի՝ զոհանալ մանաւանդ պարտ էր
զդից վի ոչ նեբեցին Պարսից խորհել ՚ի վերայ լուսաց-
ուցս ՚ի պատերազմ՝ քան մեզին զրգռել զնոսա ։ Ասայց
Արեսոս յամառեալ ՚ի խորհուրդս իւր՝ ոչ լուաւ նմա ։

Օ մնացորդ բանիցն Արեսոսի բովանդակեցից խառն
ընդ պատմուԹիՒ Արիւբոսի , յորս ահա մնաջիմ ։

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՍԿԻԶՐՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԻՑ ԵՒ ՄԱՐԱՑ

ՆԱԽԱԴՊՈՒԹԻՒՆ

Ո պատմեմ Թագաւորութիւնէ Կիւրոսի և Կամբիսեայ և Շ մերդեայ մոգի ունկն տալ գիրքս այս. այլ մանաւանդ զԿիւրոսն, զի վերկացոյն այլոց սա կաւ ինչ իրք են մատենագրելոյ արժանի, և պատմութիւն նոցա հանառօտ յոյժ։

Ես գոյզն վարանս 'ի սկզբան առ գրոցս կրեցի. զի զպատմութիւնս, զոր աւանդեալ եմ այլոցս 'ի գիրս իմ[1], հարկ է ինձ երկորդել առ 'ի քնիկ տեղւոջ իւրեանց։ Լաւ ևս էր այլազգ դպիրսսիկ շարադրել առ վերատին. այլ ոչ է յիս այս հանձար բիւրաբերգուն և ոճ բազմակերպ. և դարձեալ զի է աշխատութիւն անշահ։ Այլոց և այլոցս 'ի գիրս իմ հրաւիրել զընթերցողն՝ ընդհատեալ զկարգ պատմութեանս, և զլուծել գործոցս Թերի առնել և կիսամամնեայ։ Խորհեցայ ասել, և ոչ վայրապար, առնուլ և ածել անտի այսր զկարևորս յանսխալ շարադրութենէ վիպասանութեանէ խմոյ, վնասն և չատաչագիմ կոյս գործոցս հաստատեալ եմ առնել։ Ո՛վ որ զվեսամակս այլոց առանց կշտամբութեանէ, որպէս ինձ Թուի, տալ մնդրձակեցայ գրուել. յիս 'ի պատեհ պատեհ տեղիս, ա ռաւել և ևս ներբեսցեն ինձ վերծանողք՝ զիմ բանս ասելոյն կրկնագրել։ Այս ազատութեանէ, զոր յանձին կալայ ոչ 'ի փառս ինձ՝ այլ ձեռնտու պերգութեանէ, ոչ սակաւ օգնեմ 'ի չատաչագիմութենէն գործոցս և 'ի զարդ, լցեալ զայն վայելչութեանէ և փարթամ Հռետութեանէ զոր չայլոցն ժողովեցի։ Ո՛չ այս և հաստարակաբար կարեմ ասել զդովանդակ գործոցս. զի միայն աչխատութենէ է ինձ ասա՝ առնուլ ընտրանաւ 'ի նախնի մատենագրաց զդէղեցիկ հա-

[1] Եղեսիոյ ասացեալ. Հատ. Գ. 'ի Յոյն գործոցն.

առաջս բանից ըստ անցից իրացն պատմելէն և ըստ մնացումելէցն, ոչ ինչ գրելէ յաւելեալ՝ ի նոսա։

Զնմանատոյն մանագրեալ [1] ի վարիչեան օրագրին ասդաստանիս՝ զի զՀռովմայեցւոցն պատմութիւն Թողն ի բաց ի կարգէ ասի, որ և այն ի տեղւոջ իւրում ցանկալի կալի էր։ Փառս մեծ անձին իմոյ զատիւս զայս վարկուցեալ՝ չկարեմ լռել զպատասխանին։ Զի ժխտեմ զի զայն մանն հնախօսութիւն արտաքոյ Թողն ի կարգէս, իբր ոչ եթէ խոտան ինչ և անպէտ համարեալ զայն՝ որ քան զնմա մնացեանն ձոխ և առատ ցանկալին է մեծաւ մեծ և բիւրազգի դիպուածովքն, և մեծերք պանծալի վկայութեանց նախնեացն գնացանի՝ հրապուրեն նպաստութիւն զմտենդագիրն յայն վաստակ՝ թէպէտև և դժուար բաբիրան, այլ զի անաց բազմաց գործն այն կարօտ էր։ Զդդ էս և առանց այսորիկ՝ իմնատութեամբ արդեօք, ոչ գիտեմ, ձեռն արկի յայսմ հատակիս յերկարաբանութեան գործս յայս՝ վիպագրել զպատմութիւն Հռոմայ, առ որ ոչ ինչ մեծերեալ պատրաստեալ ունիմ նիւթս, բայց միայն հատարակաբար նախնեացն բանից ունելով տեղեկութիւն, որպէս է այս ամենեցուն օրոց իմում կարգիս սակի էն, առանց կանխակալ այսր դիտաւորութեան՝ ի մնատեանս նոցա պարապելոյ։ Վ՚ժխտեմ քաջ զի առ գործ մի այսպիսի՝ հարկ էր զերիս և զչորս ամ մնադիր լինել յընթերցումն այնոցիկ, և նշանակել որ ինչ առ ուշ նպատակիս անկ էն։ զի բազում ուրեք անկցորդ ընդ մերձակայ Ճառիցն և անակնկալ ընդ առաջ լինին իրք ցանկալիք և քննութիւնք կարևորք։ Զի էս ոչ կալայ զայս դիւրութեի՝ փութացեալ ի գործ։ Զնայ ինձ ասել, զի ի մեծարանս և ի չնորհակալութեն իմնասնոց՝ որ զվաստակ իմ յարգեն, ձեպիմ ողբան ի յիս կարզութեի՝ յառաջ վարել զայն, և ի նոյն լինել անգադար ամ ջանիս՝ ի բաց թողեալ որ ինչ խափան ինձ իցէն ի գործս յայս։ Վանդի մանն կարևոր պարտուց իմոց և պաշտամանս հանդիսիմ արդ զայս ի ցանկալի պարապութեն՝ զոր ի բազում ամաց չնորհեցին ինձ երկինք, զոր մարթ էր ինձ լաւ ևս յարկել՝ եթէ վաղագոյն խորհէի յայս վաստակ հնախօսութես։

1 Յաղագս մասին մարդ. 1730։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Պատմութիւն Կիւրոսի։

Օքսորդ իբր պալազդ Հրոդոտոսի պատմի եւ պալազդ Քսենոփոնի։ Որում եւ ես հաւանեալ եմ հետեւիլ ընդ մասնաւոր յայսմիկ յայժ առաւել արժանահաւատ է քան զՀրոդոտոս։ Քանզի եւ զՀրոդոտեայն յաւելից սուտ բաւ նիւ՝ յորս ինչ երկեան է ի նմանէ։ Օ Քսենոփոն գիտէ ամ՝ որ ժամանակս բազումս ճառայեալ կրտսերին Կիւրոսի ի բանակին, յորում յոլովք յաղնաւականացն Պարսից էին, եւ ընդ նոսա առանց երկիք երկայաւելի խօսիլ յաձախ եւ խելամուտ լինիլ բարուց եւ սովորութեանց նոցա եւ աշխարհակալութեանց, մանաւանդ Կիւրոսի՝ որ կանգնեաց զպետութիւն նոցա, քանզի զպատմութիւն նորա հանդերձեալ էր գրել։ Այսքն իսկ ի գլուխ գրոյն դասս տիարակութիւն Կիւրոսի ասէ. «Պանզի կանխաւ ի սկզբ բանի սքանչելի էր ինձ վիճակն այն, խորհեցայ քննել զծնունդ նորա եւ զնաւարութիւն եւ զմնունդ՝ իւ եղև նա այսպիսի, եւ գիաւասարն ուսեալ պատմիմ»։

Իսկ զոր Կիւրոն ասէ յաւաջնում թղթին առ եղբայր իւր Կամբիսոս, «Պքսենոփոնի ոչ բան ձշմարտուն իրացն արարեալ զպատմութիւն Կիւրոսի, այլ ի տալ օրինակ ուղիղ առաջնորդութեան, ոչ այս գիտատարմութիւն բանից խոհական մատենագրին եւ գլարգ նորա նուազել, այլ միայն բանիւն այնուիկ խնամանք ասացեալ զնի Քսենոփոն, խնամատարն հանձարեզ եւ քաջ զօրավարն, ոչ զպատմութիւն Կիւրոսի։ Եւ եթէ Կիւրոսի ուշ կալաւ գրել, այլ եւ խրատեալ նովաւ զնագատաւոս ի բարւոք առաջնորդութիւն, եւ զնի պերձութեամբն հանդերձ եւ բարձրութիւն աքբունի իշխանութեան՝ սիրելի իցէն ժողովրդեանս։ Այս յաւել նա ի գիւցազն իւր խորհուրդս ինչ եւ խնամատս եւ բանս, այլ գիպք իրացն եւ գործք զորս պատմ՝ Ձշմարիտք են։ Եւ ապացոյց՝ համաձայնութեամբ այնոցիկ ընդ ածային գիրս։ Օ այսմանէ խօսի եւ Պանիէլ ի յիշատակագիր բանասիրացս կաձառոյն[2]։

---

1 Ուր Ձշգրտապատում գիրս օրինակ եւս ուղիղ առաջնորդութեան։ Կիւրոսի աբար Քսենոփոն, այլ 2 Հրոդ. գ. 400։

Օ պատմեցէք Աիւբոսի յերիս բաժանեամ՝ առ՝ի քաւ ամաչ.ն.ր
ցայսմանէ. յառաջնումն ասել՝ի ծննդենէ նորա մինչև
ցպաշարումն Յաբելոնի. յերկրորդումն նկարագրել
զպաշարումն և զառնուել քաղաքին, և որ ինչ՝ի գոթս
յայս ունէ պատկանին. և յերրորդումն՝ի նուաճումենէ
Յաբելոնի սկիզբն արարեալ՝ հանգուցանել զամս՝ի
մահ նորա։

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Պատմութիւն Աիւբոսի՝ ի ծննդենէ նորա մինչև ցպաշարումն Յաբելոնի։

Օ գաստիարակուի Աիւբոսի և զերթ նորա՝ի Պարս առ Ք.ժդահակ հաւ իւր, և զառաջին զօրաժողովս նորա պատմէ պարագս այս, և որ զհե տայնոցիկ զարշաւանս նորա։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Դաստիարակութիւն Աիւբոսի։

Աիւբոս որդի Կամբիւսեայ արքային Պարսից՝ի Պարս 3405 · 599
զանեայ դաւելէն Ք.ժդահակայ Պարսից արքային, ծնաւ Ք.-Ն.Ի.Ք.
ամաւ միով զկնի Աիւաքարայ քեռւոյ իւրոյ եղբօր Պարս զանեայ։

Ի ժամանակին յայնմիկ Պարսք, երկոտասան ցեղաւ սլետուելք, ամենեքեան սահմանեցին՝ի գաւառ մի այրը ընդարձակ աշխարհին՝ որ յետ ժամանակաց յանուն նո ցա կոչեցաւ. և ոչ ինչ աւելի էին բազմութիւք քան զերկոտասան բիւրս արանց։ Իսկ Աիւբոս խնամոտելոյ իւրում և քաջութիւք կալեալ զիշխանութիւն արևելից՝ անուա նի վնասս ազգ ընդ երկիր յաջողելով բաղդին, և ընդ արձակեաց զաշխարհն Պարսից յարևելից յարևմտեան Հնդոս գետոյ մինչ՝ի Տիգրիս, և՝ի հիւսիսոյ ընդ հաւ բաւ՝ի Կասպից ծովէ մինչև Հիւկիանոս. որ է և այժմ պարսկաստան։

Ի յս Աիւբոս գեղապատշաճ մարմնով՝ առաւել և նախամտութեամբք հոգւոյն էր պատեալ, քաղցր՝ի

քնել և մարդասէր, սիրող գիտութեաց և նախանձաւոր փառաց, որ և ոչ ի միոջէ ինչ երկիւղ սասանեցաւ, և ոչ լքաւ յաշխատութենէ ի նուաճել զիառս։ Կրթեցաւ ըստ օրինացն Պաբպից՝ որոց ոչ ոք յայլոց ազգաց հաւասարէր ի ժամանակին յայնմիկ ի մասին դաստիարակ կոնեաց։

Պռոփ.ա.3-8։ Ակնզէն և վախճան ամ օրինաց նոցա՝ էին օգուտ և բարին հասարակաց. վասն այնորիկ երկիցագոյն խնամ դաստիարակութենէ որդւոց իւրեանց ունէին, և էր այս առաքինութիւնէ աշխարհին կարևոր մասն։ Ել Թագուհին զայն ի ծնողաց՝ որք բազում այն է զի կոյր և դորովալ կան սիրոյն ոչ բարւոք դաստիարակէր էն նոցա, այլ աշխարհին էր այն հոգ։ Խազմեալ մանկտոյն ի ազգ դաստիարակութենէ էր. ամ ինչ սահմանեալ էր նոցա, տեղին և ժամանակ կրթութենչ, ձաշաժամն և կերակուր և ըմպելի, վարժապետացն թիւ, և պատուհասք զանազանեալ։ Վճռեցուն նոցա տղայոցն և պատանեաց պահքն հաց և կոտեմ ջրոյն և ջուր. զի ի մանկութենէն զնոսա կրթէին ի սակաւակերութենէ և ի պարկեշտութենէ. և այսու պարզ կերակրոյն անխառն ի հանդերձանաց և ի համեմից՝ կազդուրէին մարմինք նոցա, և ի զօրաւոր առողջութենէ հաստատեին տանեալ ծանր վաստակոց պատերազմի մինչ ի ծերութենէ։ Օ արդարեւ ի զպրոցս ուսանէին Պարսք, որպէս այլք յայլազգ զպրութենէ և զդիւտութենս. և քան զամ եղեռն խոտիւ առ նոսա պատուհասէք ապերախտութենէ։

Օ այսոսիկ խնամտութենէ կարգս՝ յաւաքարգելս չաբեաց սահմանեցին նոքա, լաւագոյն գիտելով խոխանել զչարիս քան պատուհասել. և իբրև այլք յազգաց պատիժս միայն ի վերայ չարագործացն օրինադրէին, նոցա փոյթ եղև՝ զի և բնաւ իսկ չարագործք մի իցեն յաշխարհին։

Ի ինչ ցվէշտասան և ցեօթին և տասն ամ տիոյն կայրն ի զպրոցս տղայոց՝ ի վարժս ազեղութեան և ի նիզակաձգութենէ. և ապա մնանէին ի կարգ պատանեաց։ Որոց առաւել խստութենէ էր՝ վասն այնր հասակին առաւել քան զամ հասակս խեղուէին։ Օ ամն տասն և աստ կացեալ՝ զամ զիշերս ի խումբս գիշերապահաց հսկէին, ի պահպանութենէ քաղաքին և ի տուկ աշխատութեանց։ Եւ զցերեկ յոտուին պարապէին առ ոտս վարժապետաց կամ ի հրահանգս վարժից, և կամ ընկերակից զբօսից ի հեծանել յօրս։

Ընդդարձի դասուն կային զամն քսան և հինգ արք ի չափ հասեալք. յորոց ընտրեին իշխանք ի գործաւորուն և յատագուժն և ի վերայ գործոց աշխարհին. Ի յինամանից և ի վեր ազատք եկին ի զինուորուն արտաքոյ աշխարհին։

Ինսի անցանելին ի վերջին դաս. ուստի իմաստնագոյնքն և քաջահմուտք լինելին խորհրդականք արքային, և ի նոցանէ կայր ատեան դատաւորաց։ Որովք քաղաքացոցն առնեցուն օրէնք բարի և պատուոյ ակն ունել. այլ ընդ կարգս աստիճանաց այսոցիկ հարկ էր անդր հասանել, զի տակաւ կրթութիւքն լիցին արժանի իշխանութեանց։ Յմենեցուն ազատութիւն էր մնանել ի կարգսն յայն, այլ յաձախ սովորութիւք մեծատունքն միայն մուծանելին անդր զմանկունս իւրեանց, որոց ձեռն բաւական էր ի պահել զնոսա առանց կարօտութեան։

Ի հրահանգս յայսոսիկ մնաւ Կիւրոս, յամի գերաց զանգեալ ի մէջ ընկերացն՝ ուշիմութիւք և արիութիւք և ամենաջողակ ձարտարութեամբն։ Դասք. ա. 8-22։

ԳՕՊՈՒԱՆ Բ.

Լուր Կիւրոսի առ Աքթահակ հաս էր և գառնալ անդրէն ի Պարս։

Իբրև եղեն Կիւրոսի ամք երկոտասան՝ Մանդանէ Մայր նորա աճ զնա ի Մարս առ Աժդահակ հայր իւր, քանզի յայժ ցանկայր նա տեսանել զմնուկն վասն բազում համբաւոյն՝ զոր լսեր զնմանէ։ Յտես անդ Կիւրոս բարս ներհակութիւրս աշխարհին իւրոյ. քանզի անդ ամենայն պերճութիւք էր և զեղջութիւք և մեծադործութիւն։ Օ արդարեր Աժդահակ ի հանդերձս երևելիս, զայնս ի ծալիր՝ և զդէմս ի մեպոյր շալարեր, և կեղծամս ընդ 3418 · 586

1 ի վազ ժամանակս ի պայծառ թ. 30.) էի ։ Ձարդեաց զայս ոյոգոմեն պիղծ դեմոն ի յարեաթայէլ իւր ։։ Ըստ դէպ այս սեմմաման զպայն նիմեայ մարմնոյ աղէտալիս բոլորեն ինիր զարհամարհս, և մի վիմարս յոմնէ մինէն ի նոցանէն ծագան այն երկնէն, որ նախնեացն ծորբեին. և զարհամարհան նոյնպես հաճոյ էր. (Պլին. լիբ. ը.) Ընտի ի վտանգսն ալոյ. Ասա ե առ ե Հռոմէս և զատաստանն կոմա Բրայեանի յամարիաւ էր, որպես չգիե չեայս խոլ։ ։։ Մեծամարհան Հեդրիանոյ փառնէն առաջեալ (թ. լեգ. բա ։։

վարսս իւր խառնամաներ. քանզի սովոր էին Աարք մեղ-
նել իբրև զկնայս, ծերանագգեաց լինել, և քառամա-
նեակս արիանել և ապարանչանս, ընդ հակառակն Պար-
սից՝ որք անպատճոյ զգեստուին։ Ոչ շեացաւ Կիւրոս ի
պայծառութենէ անտի, և ոչ պարսաւագիտ լեալ տեսե-
լոցն՝ սիրդ կալաւ զուսումն մանկութենէ իւրոյ։ Օ մայ-
լեցուցանէր զԻժդահակ աչխոյժ հանձարաբանութեանն,
և ունէր ընդ առ ամենեսեան աշխատական և սիրելի
քնաւորութեամբն։ Ի բազմից անտի հանձարեղ գոյ-
ծոց նորա՝ միոմն և զայս ընթերցողք գուշակեսցեն։

Խորհեցաւ Իժդահակ մոռացուցանել նմա զՀայրե-
նիսն, և ետ պատրաստել մեծասպաս կոչունս ամ շնայ-
լութիւ՝ ըստ յաճախութենէ խորտկացն և ըստ աշխուժե-
կակ Կիւրոս յայն ամ սպասս ցանկալիս արհամարհանօք
Հայեցեալ իբրև զարմանայր ընդ նա Իժդահակ, ասէ.
Ոչ այսու բազմապատիկ և երկայն աշխատութիւք յաղե-
ցուցանեն Պարսք զքաղց. Համառօտ է առ նոսա Ճանա-
պարհ, Հացիւ և կոտեմաւ շատանան։ Իսկ հրաման ա-
ռեալ ի նմանէ բաշխել անձամբ զկերակուրս՝ որ էին ի
սեղանի անդ, ետ ամենեցուն իշխանաց արքային մասն՝
ըստ իւրաքանչիւր վաստակոց, միայն զի ձիավարել ու-
սուցանէր նմա, և միւսում զի բարւոք ծառայեր արբ-
քային, և այլում զի խնամեր զհայր իւր, և տակառա-
պետին Իժդահակայ, որում անուն էր Շակաս, ոչ է-
հան բաժին. զի էր այն ոչ միայն մատառակ արքային,
այլ և զամենեսեան որ կամէին մտանել առ արքայ՝ ընդ
մէճմաներ. և զի ոչ որպէս կամէին Կիւրոս մատուցա-
նէր զնա առ Իժդահակ, դժուարեալ ընդ այն՝ եթէպէ
զգասուսին իւր անդ։ Իսկ ի գժկամակել Իժդահակայ
ընդ նախատինս իշխանին՝ զի յոյժ սիրելի էր նմա ձաղ-
տար մատառակութեամբ բաժակին, ասէ ցնա Կիւրոս.
Իմէկ ոչ այլով իւիք քան զայդ, Հնար իցէ գտանել
ընդ առաքի քո, Հայր, դիւրաւ գտանիցեմ զայդ ձաղ
տարագոյն քան զնա մատառակելով։ Իսկ զգեցեալ ան
դէն զկերպարանս մատառակի՝ մատեաւ մեջմարայ և
ակնածութիւք, զերկնակ ի յուս, և զբաժակ ի ձեռին բա-
րեձևութիւք ծայրիւք մատանցն ունելով, մատոյց արքայի
այնպէս ձարտարութեամբ մինչև ի զարմանս զնա ածել
և զմանդակ զհայր իւր։ Իսկ ասա անկեալ զպարա-
նոցաս Հաւոյն իւրոյ և Համբուրեալ զնա՝ գոչէր ինդու-
թեամբ, Իշամ ո՞Շ ակաս կորուսեր զիպառագ, և ես կա-
լայ զայն։ Իսկ Իժդահակ սիրեաց զնա և ասէ. Վկաջ

է, որդեակ իմ, և ոչ էր հնար լաւ ևս սպասաւորել. այլ զկարեւորն մոռացար՝ առնուլ նախ զձայնակ գինւոյն։ Իսկ զայդ այս սովորութեամբ էր մատուռակին՝ արկանել, սակս կաւ ինչ՝ ի բաժակէ անտի յահեակ ձեռն իւր, և անյամբ նախ ձայնակեալ՝ ապա մատուցանել զբաժակին առքայի։ Պատասխանի ետ Կիւրոս, Իչ ակամայ սխալեցեալ զայդ։ — Այլ ընդէր։ — Օ՛ի մի Թոյն իցէ՛ ի բաժակին, — Ճշմարիտ, և ասէպս։ — Իսկանզի յառաջ քան զաւուրս զայսոսիկ՝ ի կուտնան՝ զոր ետուր մեծամեծաց քոց իշխանաց, իբրև սակաւ մի՛ ի բաժակէ այտի արբին՝ կոչնականացն ամենեցուն շուրջ դալ Թուէր աշխարհս, և երդեին և աղաղակէին և բամս զառանցելոց մեռց բազբանջէին. նոցա զծառայութեի իւրեանց մոռացեալ, և զո զաբքայութեի, և իբրև կաքաւել կամիքի՝ ոչ կարաց ցեր յոտին կալ։ — Այո՛ երբէք այդ անցք և ընդ հայր քո անցին։ — Ինձ ամենևին ոչ։ — Իսկ ասպէս. և ասէ Կիւրոս, Իսկանզի ըմպելեաւ նա զծարաւն բուժէ, և այս միայն անցք անցանեն ընդ նա։

Իսկ է մարթի ըստ արժան բաւականին զարմանալ աստ ընդ Ճարտարութեի վիպագրին՝ ի տալ զիշատս զայս զգաստութեե։ Իսկ վասն բանիւք իշխանաբար մատուցանել զայն հանդոյն խնամտասիրի, այն որ ընդ պատերազմող քաջութեին ոչ ատրև էր և խնամտասիրութեք քան զվար դապետն իւր զՈկրատ, այլ մանկան տղոյոյ տայ բաւ բաւել, և քօղարկել զայն դոյզն պատմութեք, որ՝ ի յոյն ընագրին ՚ամ արուեստիւ և գեղեցկութեք վիպագրեալ է։

Իբրև պատրաստեր Կանդամեն դառնալ՝ ի Պարս, Կիւրոս՝ ի Թամանձամաց Կժգահակայ յանձն էառ մոռացիւր միալ անգ՝ ի Կարս. քանզի ասէր Կժգահակ՝ զի չև ևս քաջ ձիավարել ուսեալ, և պարտալով աստ զարգացիս՝ ի կատարումն արուեստին՝ որ անծանօթ է՝ ի Պարս. զի առ՝ ի չգոյէ անդր արօտոյ՝ ի լեռնակոխ աշխարհին՝ ոչ էր հնար երիվարս դարմանել։

Կնդ յարքունիս Կժգահակայ ժամանակս բազումս կացեալ՝ անուանի եղև յոյժ և սիրելի ամենեցուն. զի էր նա քաղցր և ընտելասեր, բարերար, ձեռնտու ամենեցուն և առատ։ Կի ձեռն նորա մանկունք խնդրելին շնորհս յարքայէ. և ինասասալարսիցն՝ ի նոցա նէ նա ինքն բարեխօս լինէր առ արքայ, զբարին նոցա իբրև զիւրն հոգացեալ. և զամ զոր և խնդրէր՝ առնոյր յարքայէ Ճարտարութեամբ։

Իբրև էին նորա ամք վեցտասան՝ Կդմբովգաք որդի

ԱՄԱՀՆՈՒ [1]աթուղդոնոսորայ արքային բաբելացւոց [2], մինչ էին եր ամանացեալ, յորս արշաւեաց . և խորհեցաւ ապա առնել քաջութիւն, և ասպատակեաց անտի յերկիրն Աբրահամ ։ [3]Ընդ առաջ եղև նմա [4]ժրահակ զօրագլուխ . և անդ նախ զնորձ հաւ Աիւրոս զգործոյ պատերազմի . և այնչափ արիացաւ յասպարիզին՝ զի առաւել քաջութեամբ նորա պատեհան բաբելացիք ։

343ա . 583 [1]Ի միւսում ամին կռնեցեալ [2]ի Կամբիւսեայ՝ դառնալ [3]ի Պարս, և զկարգս կրթութեցն ետարտել, յուղի անկաւ վաղվաղակի՝ թէ գուցէ զանդաղանօքն [4]ի Տօրէն իւրմէ կամ [5]ի քաղաքացոցն բամբասեսցի . Աչ յայտնի եղև յայնժամ՝ որպէս սիրելի էր Աբրահամ ամենեցուն . զի յուղարկաւորքն նմա մանկտին հասակակիցք իւր և երիտասարդք և ծերք երեսային . և լինէն իսկ [6]ժրահակ հարուստ մի ըստ քաղաքն արտաքս եւ ընդ նմա հեծեալ յերիվար . և [7]ի մերկել նոցա [8]ի միանց՝ բազում ար ատաուտաց հեղմունք լինէին ։

Աչ դարձաւ Աիւրոս [9]ի Պարս, և զայն ամ ևս եկաց ընդ մանկտին [10]ի տաորին դասու . [11]Ոչ ոք համարէին օտար ըացեալ զնա յատաչին բնութենէն՝ տալորեալ [12]ի գրան արքային Աբրահամ [13]ի զեղծութիւն և [14]ի պերճութիւն . այլ իբրև տեսին գնա՝ զի հասարակաց իւրեանց կերակրովն շատանայր , և [15]ի կոչունս ուրեք լեալ՝ առաւել քան զա մենեսին զգաստ էր և պարկեշտ , առաւել և զարմանային ։ [16]Ի տաորին գասէ անտի յերկրորդն անցեալ [17]ի կարգ պատանեաց , և անդ տուչութիւք յաջողութենէն և համբերութեամբ և հլութեամբ առաւելեաց քան զամենեսեան ։ 343ա . 572 [1]Ոչ ոք յետ տասն ամաց եմուտ [2]ի կարգ երիտասարդաց , և եղև անդ զերբաստան ամ՝ մինչև առաջնորդաց , և եղև անդ զերբաստան ամ՝ մինչև առաջնորդ եկաց պարսկական զօրաց՝ գնալ [3]ի Թիկունս քեռոյ իւրում Աիաքսարայ ։

1 Ջբաբելացիք՝ աստրոպանեայս ամ Նինուէացիք՝ յորոց բարեաս ամենայն
աստեն իւրն Աբրահամ . որ բերեալ և իշխանութենէ իւրեանմէ մայրաքաղաքին
աստրոպանեայ էին՝ այլ բնակիլ ի՛ն Նորա Ղնինուէի, որպես յոյսած ։
Բեւնի . և ի ընոսա վերնեսէ ոչ ընդ

Ի չախէն պատերազմ Կիւրոսի զոր եւ ընդ Քաբելացիս յերկիր Խորոմ յօգնականին Կիւքսարայ։

Ովժգահակ արքայ Աստուած պայազատեաց որդի նո- 3444 · 560
ցա Կիւքսար քեռի Կիւրոսի ։ Որ իբրև կալաւ զիշխա- Դ·ԽԲ· ա·
նութիւն՝ եհաս նմա տալ պատերազմ մեծ · քանզի ազգ 22-27։
եղև նմա զի Կիւղաստարոս արքայ բաբելացւոց զօրաժո-
ղով է ի վերայ նորա , ընդ իւր գումարեալ զազգսն
ի Թագաւորայ , նա և զԿիրեսոս արքայ Լուգացւոց · և զի
առ արքայ հնդկաց հրեշտակս արարեալ է յաղացուցա-
նել զնա ի վերայ Աստուց և Պարսից , զարհուրեցու-
ցեալ զնա Թէ գուցէ երկրեաւն նոքա ազգք հզօրք միա-
բանեալ ընդ միմեանս ուխտիւ անլուծանելի , նուաձեա-
ցեն զնա՝ ազգս՝ Լեհ ոչ այժմէն կանխեսցուք ունել զա-
ռաջս նոցա ։ Այլ առաքեաց Կիւքսար առ Կամբիւս
խնդրել ի նմանէ օգնութիւն , պատուէր տուեալ հրեշ-
տակացն՝ զի հնարեսցին զԿիւրոս տալ կացուցանել զօ-
բսաւոր օգնական գնդին . և դիւրաւ յաղողեաց նոցա ,
Վասդ եղև ի Աստուս զի Կիւրոս զօրավար եկաց բանակին,
և ուրախ եղեն ամենեքեան ։ Այլ էր Թիւ զօրաց նորա ե-
րեք բիւրք և հազար մի հետեւակաց , զի չէ ևս յայնժամ
հնձելազօրք էին Պարսից · ամենեքին արք ընտիրք , և
կրթեալք՝ ոչ իբրև զայլազգի զօրականս ։ Հազարա-
գունդ բազմութենէն զատոյց Կիւրոս երկերիւր սպայ ,
և հրամայեաց նոցա ընտրել իւրաքանչիւր այլ ևս չորս
իշխանակից իւրեանց , որ միահամուռ եղեն հազար այր ,
և անուն նոցա Համապատիւ , որք ապա յետ դէպս
նշանաւորք եղեն ։ Այլ եաւ նոցա իշխանութիւն՝ առնուլ
իւրաքանչիւր յամբոխէն տիգաւորս տասն Թերեւս ոչ էին,
տասն պարսաւոր , և աղեղնաւորս նոյնպէս · որ գումա-
րեցան եղեն ընդ առաջինն երեսուն և մի հազար այր ։

Ինչ չև երկերիւրոց սպայիցն զօրընտիր լեալ՝ խո-
սեցաւ ընդ նոսա Կիւրոս , գովեաց և բարձրացոյց զքաջ
ջուարճ նոցա , և աներկիւղ յուսով յաղթութեան քաջա-
լերեալ զնոսա՝ ասէ · Վասն որոյ ընդ այդ է ձեզ պա-
տերազմ , ընդ արս մեղկս անպիտանս և կիսամարդս ,
որ այժմէն գրեթէ պարտեալք են ի զեղուածէն , որ

ԱՄԱՀՆԿ ոչ կարէն քաղցի համբերել և ծարաւոց, և ի դիւրն աշխատութենէն և ի վտանգաց վատասրտեն. ընդ սոսս երթայք պատերազմել՝ սովորեալքդ ի մանկութենէն ի զգաստ և ի խիստ կեանս. որոց համեմք կերակրոցդ՝ քաղց է և ծարաւ, և զրօսանք աշխատութիւն, և քեզ կրօնքդ՝ ի վտանգս, և ՚ամ ցանկութիւն սրտի ձերոյ՝ սէր հայրենեաց և փառաց։ Լաւ[1] ինչ յաչս ձեր Թուի ի վերայ արդարութենէ մարտնչել. Թշնամիք ի վերայ մեր յարուցեալ են, դաչնաւորք զմեզ ի Թիկունս կոչեն. զինչ այլ իրաւացի՝ քան զդէմ ունել անխրատութենէ. և որ փառք առաւել՝ քան նպաստ ի կռիւ լինել բարեկամաց։ Լ՚այլ առաւել ի դիմս յուսացեալ եմք. զնոցա օգնականութիւն, մինչ չև ձեռնարկեալ ի պատերազմն էայս, մաղթեցեր ի Թիկունս. վիտէք իսկ զի ատոյ սկիզբն է հնձ ՚ամ գործոց։

3445 . 559 Ի՚նանգամ ասա մինչ չև չոբ արարեալ՝ զդիմն խնա մախալս աշխարհին յօգնութիւն կարգաց, զայս ի հօրէն խրատ ընկալեալ՝ մի ինչ անհրամանն ի դիցն գործել։ Վ՚անգն ստէպ յուշ առնէր նմա կամբիւս՝ զի սահմանք են իմաստութենէ մարդկան, և անձուկ միտք նոցա, և ոչ կարեն զհանդերձեալն զուշակել, և ի շահ բազում անգամ վարկանին՝ որ ինչ է նոցա ի կործանումն։ Լ՚այլ դիք անժամանակք են, և հանդերձելոյն վիտանել և անցելոյ հիքեալ է առ նոսա անխտիր. և սիրելեաց իւրեանց զօգտակարսն ցուցանեն, ոչ ըստ պարտեաց՝ այլ ընդհարհիւ, որոց կարդանն առ նոսա և զնոսա հարցանեն։

Լաւ յուղարկեաց զնա կամբիւս մինչև ի սահմանս պարսից, և խրատս գեղեցիկս տայր նմա զհամապարհայն երթել ոխսկս պարտ է զօրավարել։ Վ՚անգի կիւրոս երկարբուսումն լեալ առ ոսս հնձատ վարժապետաց՝ որ էին ի ժամանակին յայնմիկ, համարէր գնամ իրս պատերազմի։ Լաւ եհարց զնա կամբիւս, Թէ զօրէնս տետեսութեան ուսեալ է քո՝ նախահօդ լինել պետոյից զօրականին, պատրաստել զպարէնս նոցա, խափանել ի նոցանէ զախտս, առողջս ունել զնոսա, և կազդուրել տեպ երթեալք, եռանդն նախանձաւորութեան ածել նոցա, հնազանդել զնոսա, և արգոյ և սիրելի լինել նոցա։ Լաւ կիւրոս ասէ. Լ՚այդ իսկ լսեմ զայդոսիկ։ Լաւ ասէ. Օ՚ինչ ապա ուսուցին քեզ վարդապետք քո։ Լաւ կիւրոս ասէ. Օ՚էն շարժել, աղեղն լարել, արգնչնկեց լինել, կազմել զօրինակ մարտին, զակիւ ածել, ռազմ կարգել, հանդէս առնել զօրականին, խաղացուցանել

զնոսա և ածել ընդ կիրճն, և քանակ տարկանել։ Նո֊ ծաղեցաւ Կամբիւս և ասէ. Ցգէտ ուրեմն ես կարևո֊ րաց քաջի սպայի և հզօր զօրավարի։ Այլ սուղ քանիւք, յորս համբակաց զինուորութե՛ւ արժան է խոհալ և խե֊ լամուտ լինել, ուսոյց նմա առաւել յոյժ՝ քան զքաջա֊ մեայ վարժս զինուորութե՛ն։ Որպէսզի միով կարձա֊ ռօտիս զլռեցեալն տացուք գուշակել։

Իմդիւք ի մէջ անկեալ՝ թէ ոչ պատս պարտ իցէ հլու և հնազանդ առնել զզօրականն, Պիւբաս որպէս կարծեմ, ասէ Կիւրոս, և անխիտն յաջողեսցի սա՝ ի գովել զհնազանդեալս ի նոցանէ և ի վարձատրել, և ի պա֊ տուհասել և նշաւակել զանապատս։ Այս Կամբիւս ասէ. Ե՞ստ է այդ ի հնազանդել զնոսա բռնութե՛ւ, այլ զործ է յօժարեցուցանել զնոսա ի հնազանդութե՛ն, Իակ առ այս հարկ է խելամուտ առնել զնոսա, թէ որ առա֊ ջնորդէն՝ լաւ ևս զօգուտ նոցա գիտէ. զի վատահո֊ղե֊ն այնուիկ մնագիւք հնազանդին։ Օ՛ն ոչ այլ իւիք հե֊ ւանդն անբժկիմ լսէ բժշկի, և անապ առաջնորդին ու֊ ղեօր, և նաւորդ ղեկավարին, բայց զի զբաժնին և զա֊ ւաջնորդ և զղեկավար առաւել քան զինքեանս գիտեն հմուտս գոլ և յիւրաքանչիւր արուեստս քաջախոհ։ Այ֊ հարց Կիւրոս. Այս ոչպէս հմուտ զանձն և քաջախոհ հնար է կարծեցուցանել զօրականին։ Կամբիւս ասէ. Այդեալ այնպիսի. իսկ առ այս հարկ է մանացու լինել արուեստին, ուսանել զնո՛ օրինս նորա, և զհմուտս այնոցիկ Յանիւ և հլուեալիւ հարցանել, և մի անփոյթ առնել ամենայնի՝ որ ի յաջողուե՛ն գործոյն օգնեն. և առաւել քան զնո՛ մնաղեալ զդիպ օրականաւո֊ր֊ե՛ն որոց է տալ վնասատուե՛ն և գյաջողուե՛ն։

Կիւրոս Հասեալ ի Սարս առ Կիւաքսար, յետ պա֊ Դասք. Ք. տուհասրուե՛ան բանից աղջնկին՝ փոյթ կալաւ գիտել 38-44. վաղագոյն զե՛ւ և գհնազանդութս զօրաց նորա և զծնօ֊ ղեացս։ Այս գտաւ Թշնամեացն վեց բիւր հեծելոց, և եր֊ կոտասան բիւր հետևակաց. իսկ Սարացն և Պարսից միանգամայն հետևակք կիսոց չափ Թշնամեացն, և հե֊ ծեալք նուազ քան զերիս մասն։ Այս վարանեալ Կիւաք֊ սար, քանզի երկեաւ սակաւաձեռն զօրաքն կալ առաջի բազմութե՛ Թշնամեաց, խորհեր միայն հնարս ի վտան֊ գին՝ ածել այլ ևս օգնութե՛ յաշխարհին Պարսից. սա֊ կայն և այս դժուարին էր, և յոյժ անագան։ Խորհուրդ օգտակարագոյն և դիւրին ետ նմա Կիւրոս, փոխել զղէնս Պարսից, և փոխանակ աղեղան և գեղարդեանց՝

որովք ի հեռուստ մարտնչէին ընդ Թշնամին, և հարկ էր նոցա սակաւուցն պարտել ի բազմաց, վառել սար-
ռազէն, և համախուռն ընդ Թշնամին ի մեծոյ կռուել, զի անպիտան ամբոխ բազումքէն լինցի նոցա : Հաճոյ
Թուեցաւ առնել ըստ խրատուն Կիւրոսի : Եւ յորժ-
նեաց նա արուեստիւ զնախան, և ձոխ պարգեւօք և
աղնուական մարդասիրութեամբ նախանձեցոյց զզօրսն
ընդ միմեանս : Վասնզի զարծաթ ի վարձս միայն զօրա-
կանին պիտանացու համարեր . և բաշխեր ամենեցուն
պարգեւս առատապէս ըստ իւրաքանչիւր քաջութեան և
ըստ պատուոյ , ուստիև վահան , միւսում սուսեր , և այլ
ինչ այլումք : Եւ այլ ինչ խոտոր օրէն համարեր առնել զօ-
րավարին ի զօրականէն՝ բայց միայն զնիճանձնուել , զա-
ռաքինութեն և զյաժարութեն ի բարերարել , և ոչ զեղ-
ծութեն սեպհականոց պերձութեն , կամ մա-
Ը. 207. նաւանդ ամբարտաւանութեն և խրոխտութեն : Եւ կարեւր,
ասեր , բարերարել առ ամենեսին , սմին իբրև բարեկա-
մեթիւն առ ամենեսեան ունել պարտ համարիմ . զի
բաշխիւք պարգեւաց՝ և օրէք զի չքաւորի իշխան , այլ
մարդասէր կամաքէն ազնիւազ է՝ ի կարեկից լինել և իբրև
գակից պղտոց յանկեղծ մտաց և գործուք :

Յաւուր միում իբրև հանդէս առնէր զօրացն Կիւ-
րոս՝ եկն սուրհանդակ ի Կիլիաբարայ կոչել զնա , և ա-
սէ . Պատգամաւորք հասին ի հնդկաց , և արդ առա-
քէ արքայ պատմէնան չքեղ՝ զի զգեցեալ փառաւք յան-
դիման լինցին նոցա ի պատիւ : Եւ փութացաւ Կիւրոս
եւ գնաց գնդաւն իւրով առ Կիլիաբար՝ նովին անշուք
զգեստուն , և որպէս հելլէն բնագիրն ունի , անսխեղծ
պարսիկ պատմէնանուն : Եւ իբրև գժգոհեցաւ Կիլիաք-
սար ի տեսանել զնա , ասէ ցնա Կիւրոս . Եթէ առա-
ւել մեծարիի զարքայ՝ յապաղեալ ի զգենուլ ծիրանիս
և յատարանջամս ածել և շղթայս ոսկի , քան զոր այժմ
ընդ քեզոն եկեալ եմ՝ առ շտապ տալոյ տագնապի կատարելոյ
հրամանիդ յօրինակ ամենեցուն : Եւ Հաճոյ Թուեցաւ
արքային , և հրամայեաց ածել ի ներքս զպատգամա-
ւորսն : Խօսեցան նոքա և ասեն . Պիտեր եկեալ եմք
զպատճառս պատերազմիդ բաբելացւոց ընդ Ասորւոց . և
աստի անդր առ բաբելացիս անցանել հրամայեն ի մեզ՝
լսել և ի նոցանէ , զի որոց իրաւունք իցեն և արդա-
րութիւնք՝ զպատերազմ նոցա և տէր մեր արքայ պատե-
րազմեացի : Յորմէրբդ ազնուական և գովելի . արժա-
նի հզօր իշխանութեն սրում իրաւունք և արդարութիւն

առաջնորդէն, և որ խոովութեամբ պլոց ոչ ինդրէ մե- ԱՄԱԸ·ՆՁ
ծաճառ, և խրախուսէ ընդդէմ անվրաւեն՝ օգնական
լեալ անմեղին։ Կիաքսար և Կիւբրս եւուն պատասխա-
նի։ Ի՝ներ անվրաւեալ չէք առ նոսա, և զարքայն եհմով
պացւոց մնադիւրագոյն ընդունիմք չերբաւարար։ Յա-
յնց գնա ընդ Տուտ ի կողմն եղեալ Ի՝արաց։

Ի Ժամանակին յայնմիկ հայաստանեայք հարկատուք 3447· 55ղ
Ի՝արաց՝ հայեցեալ ի սպառնալիս ահեղ միաբանութենէն Դ·ոոր· ք·
ի վերայ նոցա, ժամ պատեհ համարեցան լինել լծէն 58·6ա·ֆ·6ա·
կեց. և խափանեցին զսակ հարկին, և ոչ առաքեցին նո-
ցա զօրս յօգնականութի՝ ուխտից զրժեալ։ Ի՝ վարանս
եղև Կիաքսար, և երկեաւ յաւելուլ իւր թշնամիս ի
զբոիս ժամանակին, և ստիպել գնոսա կալ ի պայման
ուխտից։ Իսկ Կիւբրսի տեղեկացեալ վայրաց աշխար-
հին Հայոց և զօրաւորէ նոցա՝ յանձն եառ զգործ վրէժ-
խնդրութեան. այլ դժուարին էր գնորհուրդսն թաքուս
ցանել, յորմէ էր ամ յաջողութիւն գործոյն։ Որս մեծ
պատրաստեցաւ առնել ի տանմնոս հայաստան աշխար-
հին, որպէս սովոր էր յառնալ ընդ արքայորդւոյն Հայոց
և ընդ ազատագունդ մանկտւոյն նոցա հեծանել զկետ
երկոց. և օր և ժամ սահմանեալ, խառնց ամբոխիս մե-
ծաւ. և զօրականին պատուէր ետ ի հեռուստ հետևել
միմեանց այլ ինչ տացէ նոցա հրաման։ Այս եղեալ յարշա-
ւանս որոցն աւուրս քանի մի, մինչև մերձ եղեն յա-
միւրն՝ ուր բնակեր արքայն Հայոց իւրովքն, ապա յայտ
նեաց զիտորհուրդս իւր ապայից զօրականին. և զօրահա-
տոյց եղեալ զԻ՝բհամատոս զմի ի նոցանէ յղեաց ի վե-
րայ միոյ ուրուք դժուարամատոյց լերին՝ ուր ի վտանգս
երկիւղի անկաներ արքայ Հայոց ընտանեաքն Հանդերձ
և մնասուք գանձուցն։

Հրեշտակ արար ապա առ Թագաւորն Հայոց յիշե-
ցուցանել զպայման ուխտից, և յառաջ խառնացոյց
զգօրս իւր։ Այս զարհուրեցաւ արքայ և խոովեցաւ, և
անագան ի միտ էառ զանխրատուն իւր։ Այս առաքեաց
ընդ ամ կողմանս աշխարհին զօրաժողով լինել, և գիրս
սեր որդի իւր զՀ աւարշ, կանաչքն Հանդերձ և գտանէ-
լոցն և ամ ծանրագին առիւծ, յղեաց ամրանալ ի լե-
ռինս։ Ի՝ւր գիտացեալ ի լրտեսաց իւրոց՝ զի Հալածէ
գնոսա Կիւբրս, լքաւ ի սպառ. և ձեռնհասի եղեալ ի
դիմամարտելոյ զանձն միայն խորհեցաւ ապրեցուցանել.
ըստ նմին օրինակի փախեան և ամ Հայք՝ ամրացուցա
նել իւրաքանչիւր զինչս իւրեանց ցանկալիս։ Հայեցաւ

Կիւրոս յամբոխ փախստէից՝ զի երթայրին ամրանալ յով և ձմեռալքէը ոք, և առաքեաց առ նոսա՝ նստել հանդարտել իւրաքանչիւր ընդ յարկաւ իւրով, զի ոչ ումեք հասցէ չար՝ բայց միայն որ ի փախստի ըմբռնեսցին։ Նոքա հանդարտեաց ամ բազմութիւն՝ բաց յերեսաց զնոցն զհեռի արքայէն։

Յակ որ զտիկնայն ածեալ տանէին ի լերինս, նոցա դարանակալ եղեալ Ս. Հրիսանտոս գերեաց զբեթէ զամենեսեան. և անկան ի ձեռս Պարսից որդի արքային և դստերք նորա և կին նորա և Տարսն անդրանիկն, ամ գանիւքն հանդերձ։ Գոյժ եհաս արքային, և վարանեալ յանձն իւր՝ անկաւ ի մի ի բլրոց, և շուրջ պատեալ ի թշնամեաց՝ հարկեցաւ լինել անձնատուր։ Նոքա հրաման ետ Կիւրոս ածել կացուցանել զնա ամենայն տաճկին ի միջ բանակին։ Ընդ որ ի նմին պահու հանեալ և անդրանիկն նորա Տիգրան, զի դառնայր ի տուր աշխարհն, և տեսեալ զաղէտսն՝ ոչ կարաց ժոյժ ունել յարտասուաց։ Նմա ցնա Կիւրոս. Ի դէպ ժամու եկիր, արքայորդի Հայոց, լինել առ ընթեր յատեան դատաստանի հօր քո։ Նոքա վաղվաղակի ժողովեալ զզօրաց գլուխս Պարսից և Մարաց, հրամանն ետ կոչել և զմեծամեծս Հայոց. այլ և տիկնայն, որ անդր մերձ էին կառաջ իւրեանց, Թոյլ ետ լսել և տեսանել զամենայն։

Յորև կազմեցաւ ատեանն, լռեցոյց Կիւրոս զամենեսեան, և սուիսեաց զարքայն Հայոց միամտութեամբ առնել ամենայնի պատասխանի. քանզի չէք, ասէր, առն Թագաւորի դժպատեհ քան զկիզճիս և զստութիւն։ և յանձն էառ Թագաւորն։ Նոքա եհարց զնա Կիւրոս հարցուածս բազումս. Ո՞ դու ի պատերազմի անդ պարտեալ կուեցեր ընդ նմա դաշինս. ո՞ ի դաշինն անդ յանձն առեր հարկս տալ և զօրս այլեպէս, և ոչ ունել յաշխարհիդ բեզդաքաղաք։ Նոքա ոչ կարաց Թագաւորն ժխտել և ոչ բան մի, քանզի համարձակ ամենեցուն յայտնի էին իրքն այն։ Նոքա ասէ Կիւրոս. Յակ ընդ ելեր դժբեցեր ուխտիցդ։ Հայկազնն ասէ. Վանզի գիտէի զի փառք են լծնկեզ լինել, ազատօրէն կեալ, և ազատ որդիս Թողուլ։ Կիւրոս ասէ. Փառք են, գիտեմ և ես, ի վերայ ազատութեն մարտնչել. այլ Թէ ի սարկաց քոց ի փախուստս ոք խորհէր՝ զինչ առնէիր դու ընդ նմա։ Ն. լբայն ասէ. Պատուհասէի զնա։ — Նոքա Թէ յիշխանաց քոց յանցաներ ոք։ — Փոխան նորա զայլ ոք կացու-

յանեի։ — Ա՛ւ եթէ գանձս բազումս յարագործուածքեն մեծերը։ — Օ՜ ամենայն ինչս նորա յաչըռնիս հատա- նեի։ — Ա՛խ ապա եթէ ընդ թշնամիս քո միաբանիր, Հայոց Թագաւորն ասէ։ Ա՛յս ուրեմն ինքնագլա՛ խնդիրս, սակայն զՀշմարտութենէն Տիգրանայ չհալ է խոստովանել. մահապարտ գնա առնեի։ Ա՛ւ ընկէց որդի նորա զկոյրն ի գետոյ իւրմէ, և պատառեաց զՀանդերձս, և ձիչ բարձեալ սիրէացն գոչեին, քանզի անձամբ զանձն դա- տակիքեաց ի մահ։

Ա՛ւեցոյց դարձեալ Կիւրոս զաճիռն, և խօսեցաւ ընդ Նմա Տիգրան և ասէ. Օ՜ Հայր իմ խորհիս սպանա- նել իշխան մեծագոր. և իցէ իմոյսոյն քում արժան արհամարհել զօգուտ քո։ — Ա՛ւ զո՞ր օգուտ։ — Ա՛յն իսկ զի ծառայեսցէ նա քեզ յայսմ հետէ՝ որպէս ոչ երբ- եք ծառայեաց։ Կիւրոս ասէ, Իսկ որպէս. եթէ վրէ- պակք նախագործք յաւելուցին զքաջնաթիւն և մեծա- բեսցեն զայր։ Տիգրան ասէ. Ա՛ւ կարի իսկ քաջ՝ եթէ զգծնասցի նոքօք. զի յոյժ ծանրագին է իմոյսոյն, և անկշռելի ընդ գանձուց և ընդ աջողուն և ընդ արիու- թեան. Հայրն իմ աշա արդ իմոյսոյնացաւ, գիտէ արդ զինչ է ուիտագործուածիւն. ծանեաւ զի դու ի վեր ես քան զնա։ Ա՛յս չկարաց և ոչ ինչ ի խորհրդոյ իւրոց կա- տարել, դու զնմա կատարեցեր այնու երագուածիւմբ և ծածկանօք՝ զի յանզգաստից փակեցեր զձիշամին ընդ ձեռամբ, և ի տեղի ապաւինին՝ անդ պատրաստեցեր նմա կորուստ։ Կիւրոս ասէ. Ա՛յլ չէ ևս չար ինչ պա- տահեաց նմա ի զգաստութենէ։ Տիգրան ասէ. Երկիւղ չարին, որպիսի սպառնացեալն էր, առաւել քան զչարն ազդէ ի սիրտ։ Ա՛յլ ներեա ինձ ասել, զի և բարեբա- րուածի առաւել յորդորէ ի զգաստութենէ. որպէս զի թէ չնորհեա նմա առատաբար զինչսն, զազատութենէ, զձագ, զկեանս, զհանգիստ և զօրդիս, չիցէ ոք երեխատապարտ քեզ քան զՀայրն իմ, և ոչ Հզօրագոյն և բազմոպատիկ յոգիս յանկուցանիցես զոք քեզ ի ծառայութենէ։

Դարձաւ ապա Կիւրոս ի Թագաւորն և ասէ. Ա՛նաք է. և որպէս ինչ զօրս և գանձս տացես ընդդէմ բաբէ- լացւոց՝ եթէ լուայց ազաչանաց որդւոյդ։ Թագաւորն ասէ. Ըստ զօրք են ինձ և գանձք, ամենայն քո է. են յաշխարհիս չորք բիւրք հետևակաց և ութ հազար հեծեալ. և գանձք ի Հայրենի ժառանգութենէ իմէն երեք հազար տալանդ արծաթոյ. այլ ամ առաջի քո է։ Ա՛ւ Կիւրոս զկէս զօրացն, և զկէսն եթող առ նմա ի

պահպանուէին աշխարհին ընդդէմ Յաղթեաց՝ զի պատերազմին ընդ նմա։ Եւ զկրնապատիկ տարեդարձին հարկին պահանջէաց ի նմանէ հարիւր տաղանդ՝ փոխանակ յիսնից, և հարիւր եւս փոխ էառ ի նմանէ, և ասաց. Եւ զինչ փրկանս տացես ընդ կնոջ քումմէ։ Պատասխան. Ո՞ամենայն որ ինչ է, ինձ յաշխարհի։ — Եւ զինչ ընդ որդւոյդ քումմէ։ — Ո՞նդր դարձեալ։ — Պատ ուբեմն կրկին զոր ունիցի՝ պարտասեան ես ինձ, Եւ առ Տիգրան ասէ. Եւ զինչ դու տացես ընդ կնոջ քումմ, Եւ նա առ խանդակաթ սէր նորոյ հարսինն՝ զանձն իմ, ասէ, բիւր անգամ ընդ նմա փոխանակեցից։ Եւ առեալ եմոյծ զնոսա զամենեսեան Կիւրոս ի խորան իւր ի ձաշ։ Ել է հարկ ասել՝ քանի ուրախութեամբ ի կոչումն անդ եղեւ։

Եւ ի խօսակից լինել նոցա միմեանց զկնի ձաշուն, Կիւրոսի առեալ ի կողմն զՏիգրան՝ եհարց զողջոյնն իշխանի ուրումն, զոր ստէպ տեսանէր յորս և յոյժ մեծարոյ եր յաչս իւր, թէ զի՞ եղեւ նմա։ Եւ Տիգրան հառաչեալ ընդ միտ նորա՝ ասէ. ոչ կարեմ ասել ծրպես զնա կորուսի։ Եւ բռնադատեաց զնա Կիւրոս, և ասէ Տիգրան. Վասնզի յոյժ մտերմութեամբ սիրեի զնա՝ հայրն իմ՝ ի նախանձ մնեալ սպան զնա։ Յայլ պարն ապրուանս կոչեաց զնա առ ինքն ի չունչ վախճանին և ասէ. Որ մանկի՝ ի սերտ քո, Տիգրան, առելութիւն չար ընդ ինձ մի՛ ունիցի զի ոչ նա առ չարութեամբ սպան զայս ընդ իս, այլ ի կանխակալ մտոտի կասկածանաց։ Եւ Կիւրոս ասէ, Արդեւ պրն մեծ. և մի դու մոռասցես զերծատ նորա յեսին։ Եւ ապա Կիւրոս զիրկս արկեալ ամենեցուն ի նշան հաշտութեամբ, արձակեաց զնոսա։ Եւ նոքա երեալ ի կառս հանդերձ կանամբք իւրեանց՝ մեկնեցան անտի գոհութեամբ և մեծաւ զարմանալեօք։ Եւ զնմանէ ընդ երթալն իւրեանց խօսէին, կէսք զնմանատութեամբ նորա գովեցուլ, այլք զարհուրեալ, այլք զբաղցրութեամբ, և կէսք դառձեալ զգեղապատշաճ վայելչութեամբ անձինն և զվէմ կերպարանս նորա։ Ապաքէն Տիգրան և ասէ ցՏարսն իւր. Տեղ զնարդ Թուեցաւ Կիւրոս։ Խակ նա ասէ. Ել խակ հայեի ընդ նա, Տիգրան ասէ. Եւ յո՞ հայեիր։ Եւ նա ասէ. Ինչն որ ասեր բիւր անգամ փոխանակել զանձն ի վերայ իմ։

Ի վաղիւ անդր առաքեաց արքայ Հայոց պատարագս առ Կիւրոս, և կերակուր ամ զօրաց նորա, և զկրնապատիկ արծաթոյն՝ զոր պահանջեաց։ Յայլ Կիւրոս զգաց

հանդէսն միայն կալաւ, և զկէսն դարձոյց ի բաց։ Իսկ հայակոյտ գնդին պատուէր եղեւ կազմել պատրաստել ի չուս յաւուրն երրորդի, որոց ինքնակամ զօրավար էս կաց Տիգրան։

Հազմապատիկ իրօք պարտ համարեցայ մանրապատում առնել զերս զայս ի Վաչէհոփոխէ, թէպէտ և կիս այ կէս զեղչեալ։ Վասն զի ծանիցէն սովաւ ընթերցողք զկերպարանս բանից քոյին վիպագրին, մանաւանդ եթէ ի յոյն բնագիրըն վերծանիցէն։ Վանգն բնական վայել չուեցեալն, որ ի նմա, և անբռնազբօս ձօնով բանիցն արդարանան քաջախոհքն քննաբանք, որ ի սկզբանէ հետէ յարգելոյն զընտիր պարզախօսութեն նորա։ Իսկ որ լիցի օրինակ միայն անկեղծ պատասխանի հարցմանն Տիգրանայ՝ թէ ի քեզ միայն յաւեալ նայիէ. զիարդ պատկառանօք է և հաւատուածէ և ընտանի և գողտր, Իսկ երկրորդ՝ զի այն հակիրճ և ստիպող հարցուածք, որ ոչ տային տեղի բաղբաղանաց, ցուցանեն զՎաչէհոփոխ ախորժակաց վարդապետին իւրոյ Յովհաւսեայ քաջ աշա կերտեալ։

Վարձեալ տացէ սա հմուտին դաստիարակութեանն Կիւրոսի մատանեալ գրոցս Վաչէհոփոխայ, ուր զնշանաւորութենէ խոհ և պերճ հանգամանօք պատկե մատենագրին՝ խրատս պիտանիս և օրէնս գերիմաստս ասացեալ ուղիղ առաքինութենէ։ Օ՜ի ահա ձեմարտութենէ պատմութեանս՝ այս ինչ է. ուխտադրժութենէ արքային Հայոց և ոչ տալ հարկս Պարսից, և Կիւրոսի յանկարծահաս տիրել ամրին և տամ նորա, և տուժել ի նմանէ զսակ հարկին և զղօրս ըստ նիզակակցութենէ դաշինն, և քաղցրութենէ և ազնուականութենէ յինքն արկեալ զնա՝ առնել նիզակակից արքային Պարսից՝ հատատարիմ և սիրելի քան զնա՝ դաշնաւորս։ Իսկ ահա սեթեւեթէ՝ վիպագրին հանդարտ է, և ոչ իրացն ստուգութենէ։

Իսկ կարելի գուշակել զկորստրդի հարցուածոյն Կիւրոսի ցՏիգրան վասն իշխանին՝ զոր սպան հայր նորա, թէպէտ և զիտէի զիտաւորսն ինչ լինել անդ մատենագրին, եթէ ոչ միայ ուրուն յերևելեացս ի հանդարեղ և ի քաջ պերճաբանից անցելոց դարուն, ներհուն հելլէն մատենից՝, խելամտեցուցեալ եր զիս ի բազում անաց հետէ ստոյգ իմաստից, որպէս ինձ Թուխ, առակաբան նուէնն. զոր տակաւին յիշեմ՝ թէ ասէր զհաճ վարդա

1 Սեպ-ան Թուխեանց։

պետին իւրոյ Մոկրատայ ակնարկել անդ Վրաստոփանի, Վրացոյ նա մանկաւարն ածենայուց յոյժ սիրելի եղեալ կասկածաւոր եղև իշխանութեանն, և նմին իբր զդատակնիք մահուան հեղութեանն և անտրտունջ ընկալաւ։

Հանդերձ այսու ամենայնիւ՝ խորհեցայ և զչքնաղ առաքինութիւնս դիւցազնին, զորմէ խօսիմ, ցուցանել այսու պատեհաւ. Վրացոյ այսորիկ սակաւուց էն նմին վիճակելոց բաղդի, և որոց էնն՝ առաւել քան զպատերազմական արուեստեցն հանդէս փառաւորեն զնոսա, և ի յաղողութեն խորհրդոց նոցա սատարեն. Այն՝ի յոլովս յաշխարհակալաց՝ տուչութեն յաղողուածոց՝ ի մարտս, համարձակութեն, արիութեն, քաջասրտութեն, և այլ ինչ սոցին սակի առաքինութեանք հաշակատրեք՝ որք պայծառու թեամբն իւրեանց զաչս շլացուցանեն. իսկ բարութիւն, քաղցրութեն, կարեկցութեն, ի չափս ունել զանձն և մի խրոխտալ ի յաղողուածս և ի յաղթութեսն, որոք և անհրիչ բարք, յիրեն արկանել զսիրտս, սիրով քան վար ձոք առնել բարեկամն, փոյթ մնդութեն, և անխոտոր յարդարութեն առնել հանապազ ուղղութն և իրաւունս՝ որ ի թշնամեաց է պատկառելի, անոխակալութեն ակա մայ և ոչ առ չարի յանցուցելոցն, և տեղի տալ սարքա նաց և զգաստութեն, այսորիկ գժուարադէպ առաքինու թիւնք են՝ յաշխարհակալս անուանիս նահանի ժամանա կացն. սակայն էին ամենայնին ի Կիւրոս։ Ա՛յլ ես ի կարգ պատմութեանն դարձայց։

Դասք. ք. 70-76։ Ա՛ինչ և մեկնեալ էր Կիւրոս յաշխարհէն Հայոց, խորհեցաւ սպաս մեծ առնել արքայի. Խաղտիք սահման նակիցք աշխարհին, ազգ պատերազմող, անդադար սասա տակաւ նեղէին զՀայս, և անդաստանիք բազումք աշ խարհին խափանեալ էին անգործ. Վրնտեաց տեղեկա ցաւ Կիւրոս զազգին զայնոցիկ զոյժ և զընութի և զվայրս աշխարհին նոցա, և խորհեցաւ ի վերայ նոցա պատերազ մաւ։ Ա՛զգ եղև Խաղտեաց, և ամրացան ի լեռնակող մանս ի վայրս ապաստանի իւրեանց։ Իսկ Կիւրոս առնա պարեալ ի վերայ նոցա՝ ոչ եթող բանակ կազմել։ Հայք յառաջամարտիկք երկուցեալ զառաջինն՝ ի փախուստ դարձան. բայց Կիւրոս նախատէտ խորհրդով առաջի բանակին կարգեալ էր զնոսա՝ զի զրգռեալքն թշնամիք ի պատերազմ։ Ամք երբև ընդ պարսիկս Հարան ի պա տերազմ, ոչ կարացեալ կալ առաջի նոցա և խոռ վեալք՝ ի պարտութեն մատնեցան. բազումք ի նոցանէ գերեցան, և այլք ցրուեցան։ Յօտեցաւ Կիւրոս ընդ

գերին և ասէ. Ահ՛ի՞ պասել եկեալ եմ և յաւար հար- ԱՄ ԱՀ.ՆՔ
կանել գերկիր ձեր. այլ օրինաւոր պայմանօք իրաւա-
խոհ լինել ընդ ձեզ՝ ի հաշտութիւն: Ահ արձակեաց զնո-
սա. և հասին հրեշտակք՝ ի խաղտեաց, և խօսեցան՝ ի
խաղաղութիւն: Ահ՛ ի հաստատութի՛ երկաքանչիւրոցն
կամք կատարեալ Կիւրոս ի բարձրաւանդակ լերին աւրոց
պարահայեաց՝ ի վերայ ամ երկրին, և նստոյց անդ զօրս
՝ի պահպանութիւն՝ վրէժխնդիրք լինել որ ոչ կացցեն
յուխտին:

Վախճացեալ Կիւրոսի եթէ բազում ինչ բանք էին
խաղտեաց ընդ եթովպացիս, խորհեցաւ՝ ի ձեռն նոցա
առաքել զպատգամաւորս իւր՝ ի հնդիկս: Վանգի խրն
դրէր առնուլ՝ ի նոցանէ արծաթ՝ ի պէտս նոր զօրաց
ժողովելոյ յաշխարհին Պարսից, խոստացեալ արքային
հնդկաց ոչ ապաւտաւոր լինել նմա՝ եթէ օգնականութիւ
դիցին բարւոք պատերազմին վէմարեսցի: Վիւրին էր խաղ
տեաց քաջ կատարել զայն՝ ցուցանելով հնդկաց զա-
րուին նորա, և թէ որպիսի ոք էր Կիւրոս: Ոչ արար
ապա՝ ի վաղիւ պատգամաւորն, և ընդ նմա յերևելեաց
աշխարհին արք՝ որոց պատուէր տուեալ էր հնարել ա-
ռանց ամ յապաղման կատարել զգործն զայն, փոխանակ
բարեաց զոր արար ընդ նոսա Կիւրոս:

Յաղթողութեամբ բազմաւ վէմարեալ զարչաւանսն՝ ի
Հայս՝ չուեաց ապա Կիւրոս դառնալ առ Կիւաքսար, և
ընդ տաղաւրք ընդ նմա այրընտիր զօրականք՝ ի խաղ-
տեաց անտի: Ահ արքայ Հայոց խաղաղացեալ՝ ի թշ-
նամեաց, յաւել՝ ի տամբր արանցն՝ զոր խոստացեալ էր
տալ նմա յօգնականութի: Ահ եհաս Կիւրոս ի Մարս
բազմութեամբ գանձուց, և առաւել բազմանձեռն զօրօք
քան զորս էին նմա յերթալն իւրում:

ԳՕՂՈՒԱՆ Ը.

Յաղթութիւն արշաւանացն Կիւրոսի և Կիւրոսի ընդդէմ
Բաբելացւոց, և նախկին ճակատու պատերազմին:

Զերեամ աստի և անտի՝ ի պատրաստութի՛ պատե- 3448. 556
բազմին եղեալ և՝ ի յոլովել նեղակրիցս, ապա երբև Դ.Ոոր. Ֆ.
եաես զԿիւրոս սիրադակազմ յօժարամիտս՝ ի պա- 78-87:

տեբազմ՝ խօսեցաւ ընդ Վիւաքսարայ ածել զնոսա ի վէրայ ասորեստանեայն. ասէ, Վաւելեմ թէ թեւացուցանել ի քէն վաղագոյն զնոդ և զպահպանութիւն կրկին բանակաց. ընդէր զերկիր տէրութեանդ քո սպառեսցեն, և ոչ մանաւանդ զձիաժողովս։ Զարհեան արշաւանաց ատելի սարսեսցէ Հնդեաստանն, և խրախուսեսցեն մեզբս ի պատերազմ։ Վասնզի յաղթութիւն, որպէս յառաջն ի քէն լուեալ եմ և ի հօրէ իմմէ, ոչ ի բազումն է՝ այլ ի կորովիս և ի քաջասիրտս։ Հաճոյ Հռուեաւ Վիւաքսարայ խորհուրդն այն. և զօրինաւոր զհնն մատուցեալ խաղացուցին զզօրսն։ Օ դիւն խնամակալս աշխարհին աղաչեաց Վիւրոս ի դիմաց ամ բանակին՝ յաշղել յարշաւանս նոցա, մերձ կալ, առաջնորդել, համադունդ ընդ նոսա պատերազմել, ազդել ի նոսա զօրութիւն և խնստութիւն ի բազմախտանդ մարտին, և տալ նոցա յաղթութիւն ի սպառ։ Յառաւօր Վիւրոս զպատուէր հօրն կատարեաց՝ որպէս խրատեալ էր սիրիզն և աւարտ ամենայնի զաղօթսն առնել։ Եւ ամ ուրեք նախ քան զպատերազմն և յելս մարտին էլից անխափան զայս պարտս կրօնիդ յանդիման ամ բանակին։

Ինչ դեռ Թշնամիք իբր տասնօրեայ ձանապարհաւ հեռի էին՝ տեսին Վիւրոս զվիաքսար աճապարել ընդ առաջ նոցա։ Եկին ձակատեցան բանակքն երկոքեան առ միմեանս. ասորեստանեայցն բանակեալ ի դաշտի, և որպէս էր նոցա սովորութիւն, զօր և հաւլ մայեզիք կալան յետոյ, իբրամ լայն շուրջ զբանակսն հատեալ յարմուրեղէ. իսկ Վիւրոս յետ կոտ զիվրից և բլրոց՝ զի մի սակաւաձեռն զօրութիւն իւր նշանակեսցի։ Եւ կացին երկուստեք աւուրս ինչ՝ պահ կալեալ բանակին։ Յայս ի դուրս յարձակեցան ասորեստանեայք՝ առ բոլոիս մեծաւ, և խաղացոյց Վիւրոս զզօրս իւր ընդ առաջ նոցա։ Ինչ չև նետընկէց մի մեծ հասեալ առ Թշնամիս՝ նշան ետ կազմ լինել իւրոցն. և էր բարբառ նշանին՝ Վիւրոս մարտակից մեզ և առաջնորդ։ Եւ հրաման ետ զսովորութիւն նուագն ի պատիս Վիւրոսկուբացւոցն հնչեցուցանել Կաստոլոի և Պոդիտևկեայ. և զբանակն երկիւղածութեամբ գՏէտ կցէին յորդ ձայնիւ։ Եւ էր յայմ բանակին Վիւրոսի ցնծութիւն, նախանձ, սրտութիւն, քաջալերել զմիմեանս, խրախոյս ի գործ ակնարկութեանց զօրավարին։ Ուրոյ յայտ առնէին, ասէ

1 Ջէյս Պուրդ հեւսն անուամբ խոչեմ խալս ասք Քունեֆեֆ.

մաեհնագիրն, զի որ երկիւղածքն էն յայ՝ աներկիւղք
էն ՚ի մարգիանէ ՚ի վտանգս ։ Խորեստանեայցն աղեղ-
նաւորք և պարսաւորք և տիգաւորք, մինչ դեռ անգր և
էին Թշնամիք քան զվնասկեց, ձգէին զվնաս իւրեանց ։
Ընդ Պարսք խրախուսեալ գՀետ Կիւրոսի՝ առնապարե-
ցին ՚ի վերայ Թշնամեաց, հարին ցրուեցին զնախաման-
տիկ գունդս նոցա ։ Ընտի Կրէսոս լուգացին, և Թա-
գաւոր նոցա քաջալերէին զզօրականսն. այլ նոցա ոչ կա-
րացեալ կալ առաջի Թշնամեաց ՚ի փախուստ դարձան ։
Օ՚Հետ հեծելազնդին նոցա Տասին հեծեալք Պարաց,
և ՚ի հարուածս մեծամեծս վանեցին զնա։ Լրե սաստիկ
պէս զԹշնամիսն հարեալ հալածէին մինչև անգր ՚ի բա-
նակեղ նոցա ։ ՚Ի խուռն անդ անկաւ և Թագաւորն
սորեստանեայց Կրէզոսարոս ։ Խորհեցաւ Կիւրոս՝ զի
վտանգ է մինչ ՚ի պատնիշս անգր բանակին Թշնամեաց
Տուսլ լինել, և փոյ Տնչեցոյց յետս դառնալ զօրականին։

Մինչ դեռ սորեստանեայք ընդ մահ ալքային իւ- ք. 87-104.
րեանց և ընդ կորուստ բազմութեի քաջացն լքեալ վհա-
տեալ կային, յայն ամենն չիտեին ոչ ևս յուսացեալ
Կրէսոս սրտապնդել զնոսա՝ դարձաւ յետս ։ Խստ նմին ը. 160։
օրինակի և այլք ՚ի նիզակակցացն Տատեալ գյոյս, զի
չերթդնաց փախստեացք ապրեցան ։

Ա ազագոյն գուշակեաց զայս Կիւրոս, և պատրաստէր
Տալածել զնոսա ։ Խայց հեծեալք սակաւք էին յոյժ
Պարսից, որպես նախ ասացի. և ենկն Կիւրոս յայսմեաց
Կիւաքսարայ զնոՏուրդ իւր ։ Ընդ Թուեցաւ նմա խոր-
Տուրդն այն. զի գՀնդօր Թշնամին վտանգ է, ասէ, խուձա-
սեցուցանել՝ Թէ գուցէ առ տապնալ վտանգին արծարծ
ծեսցի ՚ի նմա ոգի զօրութե. խնամտութի է ՚ի չափս
ունել գաջողուած բաղդին, և մի առ յոյժ եռանդեան՝
կորուսանել զարգասիս յաղթութե. տացուք առ վայր
մի Տանգիստ զօրականին՝ որում արժանի է, և մի ՚ի
սպառ աշխատեցուք զնա ։ Խակ Կիւրոս խնդրեաց ՚ի
նմանէ՝ Տրամայ տալ այնոցիկ որ ինքնակամ գՀետ իւր
գայցեն ։ Ընդում Կիւաքսար դիւրաՏաւան եղև. և ինքն
առանց Տոգոց պարապէր ՚ի կոչունս և յուրախութի ընդ
սպասս, և վայելէր չարգասիս յաղթութե[ն]ն ։

Օ օրականին մեր գրեթէ առ Տասարակ ամենեցուն
ընդ Կիւրոսի գՀետ Թշնամեաց ։ Ընդ առաջ եղեն նո-
ցա զՀանապարՀայն սուրՀանդակք [1] վրկանիկք, ազգ

1 Վրիպիւ սուտ ու է պարտ խմբագրել զպատ բեակ ու կապոյտ ծո-

դաշնաւոր ընդ աստբեստանեայս , յուշանալ Թէ պա-
արաստ են ձեռն տալ ՚ի նա՝ ընդ հաստանել նորա՚ի Ա ըր-
կանս , որպէս և արարին իսկ : Ալ դանդաղեաց ընդ նո-
սա Ալիւրոս , այլ զդիւրեցն ամ առիւսաւ վարեալ զգօրն՝
մերձեցաւ առ Թէշամիս : Արեստի յառաջագոյն զկա-
նայսն յուզարկեալ էր գիւբերայն՝ զի մի ՚ի տօթի ու-
ղևորեացին, քանզի ամառն էր . և ինքն հեծելովք ոմանքք
երթայր զհետ նոցա : Իբրև տեսին աստբեստանեայք
մեծ հասեալ զՀնշամիան, խուճապեալք հալածական եր-
թային առաջի նոցա , և բազումք ՚ի փախստի անդ ան-
կան . և ինացեալքն ՚ի բանակին՝ եղեն անձնատուր :
Հրաման ետ Ալիւրոս պահել զգուշութիւն զերիվարս՝ որ
էին ՚ի բանակի անդ , և յայնմ ժամանակէ խորհուրդ
կալաւ կազմել և Պարսից հեծելագունդ , զի չև ևս եր
նոցա : Օ ամենայն ինչ աւար ցանկալի պահեաց Ալիաք-
սապաց , և զդերին արձակեաց յաջատութիւն. բայց միայն
զՀնդկէից աթար ընտա և զգաւառակիցս նոցա՝ զի մի
դարձցին ՚ի պատերազմ. և խոստացաւ պաշտպանել նո-
ցա ՚ի Թէշամեաց , և խաղաղութիւն առնել աշխարհին՝
գործել զերկիր իւրեանց անեղևականութիւն :

Ալ՚ինչ դեռ Ա՚ալբ և վրկանիկք զհետ էին Թէշամեաց,
հրամայեաց Ալիւրոս պատրաստել ձաշ և բաղանիս՝ զի
՚ի դառնալն առցեն կերակուր . և զաւարն յետ դարձի
նոցա ձեռք բառնել : Իսկ յայնմ վայրի քաջ ասպարա-
պետն և ամենատեսուչ յորդորեր զպարսիկ զօրականն
մեծասոհ լինել առ նիզակակիցսն . Ալ՚ի, ասէ, ծանր
Թուեսցի ձեզ՝ վայրիկ մի սպասել , մինչև եկեսցեն խոտ-
նել ընդ ձեզ յաւարատուն և ՚ի ձաշ պղտիկ՝ յորոց
զօրավիգն մեծ ընկալայք, և մեծագունեին ամն ունիք առ
յապայն . աստանօր քան զամենայն օգուտ և զդիւրուՀ՚
զայնոյն լաւագոյն ընտրեցէք՝ Ա՚յսպէս զնոսա բարեկեան
ձեզ առնիք՝ լինել նորօք միաբան ձեր . և ՚ի գոյն շահից
առ սեր դաշնաւորացդ զիւեալ , զբազմապատիկն սպա
շահեսջիք : Ալ՚ւ հաւանեցան նմա՝ Իսկ իբրև հետամուտք
՚ի փախստեից զարձան , եդ Ալիւրոս առաջի նոյ սեղան՝
զոր պատրաստեալն էր , և հաց աշտուձ ասաց տանել
առ պարսիկ զօրականն՝ որպէս Թէ ոչ իւիք կարօտ
իցեն նոքա կերակրոյ կամ ըմպելեաց : Ա՚յլ նոցա քաղցն

ՀՀՀ, այլ որ ըրեւօրէն լիսի հնգ. հարու բնակելէն, ընդ որ անցանէր
բեայ ճանապարհս ՚ի Ըսբէլտնի ընդ յոյնքամ բանակն Ալիւրոսի :

էր ՚ի կերակուր ընդ հացի, և ջուր գեղոյ յերմկելի. քանզի այսպէս ՚ի մանկութենէ սովորեալ էին։

Ի վաղիւ անդր առաւօտուն ՚ի բաժանել զաւարն կռնեաց Կիւրոս նախ զքուրմն՝ ընտրել անտի որ ինչ պատշաճ էր ՚ի նուէր գինւոյ։ Ապա տրաման ետ Մարաց և վրկանիկ զօրականին բաշխել զնուագեալսն ՚ի զօրուն առ հասարակ։ Այնքա՛ զՊարս ստիպելին լինել բաժանարար, և ոչ առնն յանձն պարսիկք. և Տարկ եղև առնել ըստ հրամանացն Կիւրոսի, և առնէրքին հաճ և հաւան եղեն։

Օ գիւղքն, յորում չէ արար Կիւրոս գՏետ Թշնա- Ք. 104-108։
մեաց, Կիաքսար հանեալ ՚ի խրախուճէն և ՚ի գինէրբուս՝ արբեցաւ ինքն և ամ սպասք նորա։ Նէ իբրև զարթեաւ Թեւս ընդ առաւօտն և սթափեցաւ, տեսեալ զիւրև սակաւս ումանս ՚ի զօրականէն՝ յապուշ եղև. և լի բարկութի՛ սուրհանդակս գՏետ Կիւրոսի ՀՀեպեցոյց ՚ի բանակին՝ խոտիւ կշտամբել զնա, և զարձուցանել անյապաղ այսրէն զզօրս Մարաց։ Ոչ ինչ փոյթ եղև Կիւրոսի ընդ անիւրաս հրամանին. և արիաբար համարձակութի՛ գրեաց առ նա Թուղթ՝ յորում ցածուն՛ի առնէր վասն անձին պատասխանի, յուշ արարեալ զի ոչ ինքնաս հրաման եկին գՏետ իւր Մարք։ Նէ յաշխարհն Պարսից առաքեաց խնդրել անդրէն զօրս յօդնականութի՛, զի ՚ի մտի եդեալ էր՝ անդր ևս մղել զաշխարհակալութի՛ իւր։

Նէր ՚ի մէջ կերէլոյն երիտասարդուհի չքնաղագեղ, Ե. 114-117։
Պանթէա անուն նորա, դշխոյ Ապրադատայ արքային Ը. 153-155։
խուժաստանի, զոր պահեցին Կիւրոսի։ Այլ Կիւրոս իբրև լուաւ զգեղեցկութենէն նորա՝ ոչ կամեցաւ տեսանել զնա, թէ գուցէ ՚ի տեսիլ կեղոյ նորա հարեալ խանգեսցի ՚ի մեծամեծաց իւրոց խորհրդոցն։ Ել ինչ երկբայիմ զի Կիւրոս բարւոք դաստիարակութի՛ն ՚ի մանկու- ա. 34։
Թենէ եկն յայս զդաստութի՛. քանզի առ Պարս ոչ էր օրէնն առաջի մանկտոյն խօսել զարտփանայ, թէ գուցէ յօժարութի՛ բնութենն գիւրաշարժ ՚ի նոյն ըստ մատաղ հասակին թէթեւութի՛ զրգռեալ յեղուցւ զնոսա ՚ի խնդիր պղծութի՛։

Պարապ երիտասարդ ազնուական Պար ազգաւ՝ պահպան էր տիկնոջն, և սա ՚ի ժուժկալութիւն իւր յուսացեալ էր, յամառեալ՝ թէ իշխէ այր ՚ի վերայ սրտի իւրոյ։ Օ՜ սա Կիւրոս, միւսանգամ նմա զՊանթէա յանձնեալ, խրատեաց խնամութի՛ թէ բազումք հզօրք յաչս անձանց՝ ակամայ ըմբռնեցան սուտ ՚ի հնարոյս

սխտին, և ամաչելագալը և սորջացեալը խոստովան եղէն
Թէ՝ ի գերութենէն յայնմանէ չկը ազատանալ, և է
ցաւ անբուժելի ապստամբ ի դէղոց և՝ ի հնարից մարդ-
կան, և հարկ իմն անհրաժեշտ և կապանք դժուարա-
խզելի քան զամ շղթայս զօրաւորս։ Ել ինչ է երկիւղ,
ասէ Ի՛բասպ, վստահ եմ յիս, և մեռցի Ի՛բասպ՝ Թէ անց-
ցէ ընդ նմա չար։ Ասյց ժամանակաւ ցանկալի՝ ի նմա
զայրացեալ, իբրև քաղցրութիւ հրապուրել զնա ոչ կա-
րաց՝ բռնաբարել խորհեցաւ։ Ո՛ զաղջց զայն կիւրոսի
Պանթէա, և վաղվաղակի Ի՛բրատաւղ մի՝ ի սպայիցն
եկեալ՝ ի նմանէ առ Ի՛բասպ՝ խօսեցաւ ընդ նմա սաս-
տիւ, խստագոյնս կշտամբեալ զնա։ Ասկ նա՝ ի խոր խո-
ցեալ, առ տագնապ յուսահատութենէն յարտասուս հա-
բաւ։ և առ յոյժ ամեծոյ և յերկիւղէն խելայեղեալ՝
կորուսեալ զանձն համարէր։

Իբրև աւուրք ինչ՝ ի վերայ անցին՝ կոչեաց զնա առ
ինքն կիւրոս, և էին եկաց առաջի նորա դողալով։ Ել
առեալ զնա մեկուսի կիւրոսի, փոխանակ դառն կշտամ
բութե՝ որում ակն ունէր, ասէ քաղցրութիւ։ Ես ինձէն
անձամբ անձին արարի թշնամանս, զի ոչ իմաստութիւ
գործեցի՝ յարկակից քեզ զահաւոր թշնամին տուեալ,
Ի՛նամնտնելի քաղցրութեամբն զդաստացեալ Ի՛բասպ,
և առ ինդուրեի և պատկառանաց և երախտագիտ սի-
բոյն՝ արատասս յորդ յաչացն ի՛ջուցանելով ասէ։ Ի՛նչ
արդ ծանեայ զանձն, գիտացի արդ զի ոչիք կրկին հա-
կառակիք էն յիս՝ ի յորդոր բարւոյն և՝ ի հրապոյրս չա-
րին։ և յաղթէ բարին՝ եթէ դու օգնես ինձ և խօսես
ցիս ընդ իս, իսկ եթէ ոչ՝ յաղթականէ չար։ Ել ինա-
սուն փոխարինեաց ծառայութեամբն մեծաւ՝ զոր արար
կիւրոսի։ քանզի գժդմուելիւն ընդ նմա պատճառեալ
էանց առ ասորեստանեայս՝ լըտեսել և տալ զոյցս կիւ-
րոսի։

Ի՛նդ կորուստ քաջի առնն, զոր արդարև առ գժդմու-
Թէ կարծէին Հատուածեալ առ Ի՛ժամիս, խոովեցաւ
բանակն ամ։ Պանթէա առ իւթ խռովուելին՝ խոստացաւ
զայլ ոք համանման՝ ի տեղի նորա փոխանակել, զնա
ինքն զի՛բրադատ զայր իւր։ Ել գրեաց առ նա՝ գալ
վաղվաղակի՝ ի բանակն երկու Հազարաւ հեծելոց։ Ել
մեծեալ զնա նախ՝ ի խորան իւր, պատմեաց նմա խրն-
դութեամբ և արտասուօք զոր մարդասիրուելն և խնամն
արար ընդ նմա կիւրոս։ Ել Ի՛բրադատ ասէ, զի՞նչ
ընդ երախտեաց առնն Հատուցուք։ Պանթէա

ասէ . Օ սէր՝ զոր ինքն արար ընդ իս ։ Այլ ընթացեալ
վաղվաղակի Աբրադատ առ Կիւրոս, և համբուրեալ
զբարեմատոյց ձեռնն, ասէ . Ասասի է առաջի քո մեծ
բիմ ի բարեկամն, յօժարագոյն ի ծառայս, և հաւա-
տարիմ ի նիզակակիցս քո, որ այլով իւիք ոչ կարացեալ
երախտահատոյց լինել քումմ բարերարութեանդ զանձն քո
լոյսնտեր տայ քեզ ի ծառայութեանդ։ Այնմարեաց գնաց
Կիւրոս, և սէր և քաղցրութեամբ բազում յոյժ արար ընդ
նմա, որպէս զի զոր ինչ ի կնոջին լուեալ էր Աբրադատ
վասն առաքինութեանց նորա՝ ոչ ինչ թուելին նմա ։

Օ օրալիւղն մեծ եղեն Կիւրոսի և իշխանք երկու՝ Դաս. Ֆ.
հզօրք յաշխարհին ասորեստանեայց ։ Այզ եղև Կիւրոս 111-125
սի զի խորհին նորա հնազանդել ։ Այն ի նոցանէ էր Վա-
բրիաս այր ծեր՝ պատկառելի հասակաւն և իմաստու-
թեամբ, զոր ՚Ի հեզաստրոս ընդ մեծի վաստակոցն պա-
տուեալ խորհեր տալ զդուստր իւր որդւոյ նորա ինու-
թեանէ, և վասն այնորիկ առ իւր ունէր զորդին նորա յար-
քունիս ։ Այդև ի միում աւուրց հեծանել նմա ընդ ար-
քայորդւոյն յորս, և էհար նետիւ զմի յերկոց վայրկ
որ ի նետից արքայորդւոյն զերծեալ էր . և նա ցասեաւ
և էհար նիզակաւ զորդի իշխանին և սպան ։ Ի սոյն ա-
նորիկ աղաչէր Վաբրիաս զԿիւրոս՝ ինքդիւ զվրէժ սպա
նութեանէ որդւոյ իւրոյ և պաշտպանել ամ տան իւրոյ . զի
և դուստր էր նորա միամոր ի բազում ժամանակաց խո-
սեցեալ ի հարմանութեանէ արքայորդւոյն՝ որ դեռ ևս յայն-
ժամ Թագաւորեալ էր , և ոչ կամէր սպանողին եղբօր
նորա առնել գնա կին ։ Այն ինքն է Աբեսորաբոս՝ որ
զինն ամիս Թագաւորեաց , և որում յաջողեաց Կյաո-
զինոս կամ Աբինիտ՝ անուանեալն Կադատասար , և
Թագաւորեաց ամն եօթն և տասն ։ Այնմ ետ Վարդա- Ջ. 121-124.
տաս իշխան նախարար մեծի և հզօր ազգի , արշամար-
հել յաչս արքային ի սկզբանէ Թագաւորութեանէ նորա,
քանզի մի ի հարճիցն երանեաց առաջի արքայի ասմ՝
որում լինի հարճանալ Վաղատայ՝ վասն բարեմեսիլ
առնն գիտոյ ։

Ի յայս օգնականութեանէ նոցա հասատեցաւ Կիւրոս Ջ. 119-123.
միջամուխ լինել յերկիրը Թշնամեաց . այլ նախատակ առ
պարիզին Վաբելոն էր , մայրաքաղաք աշխարհին, և
զնամ խորհուրդս իւր ուղղէր ի նուաճել զայն. և արշա-
ւէր անդր ոչ ի չարձակել իսկ և իսկ պատերազմաւ ի
վերայ նորա, այլ ի զննել տեսանել անձամբ զքաղաքն,
և որպէս հնար էր՝ սարսուցանել զնիզակակիցս Թա-

գաւօրէին, և կանխել պատրաստել որ ինչ կարևոր էին ի պաշարումն նորա։ Ձու արաբ երթալ նախ առ Վաւ բրիաս. զի էր քաղաք բնակուելոյ նորա անառիկ, ի տե ղի մի դժուարամատոյց՝ ամբացեալ յամէ կողմանց։ Ինդ առաջ եղև նմա Վաւբրիաս՝ կերակուր ամ զօրականին բերեալ ընդ իւր։ Իբրև եմուտ Ալիբոս յամուրն՝ ած կատեաց Վաւբրիաս առ ոտս նորա անօթս և սպաս ոսկի և արծաթի անթիւս, և քսակս բազումս լի ոսկւով՝ ի դրամոց երկրին, և զդուստր իւր կացոյց առաջի նորա զչքաղաղելն առդիգ հասակաւ, որ սպազդեաց ձևովք ընդ մահ եղեալ իւրոյ՝ վայելուչ ևս երևեր, և ազա չեաց զԱլիբոս խնամարկել նմա, և զնուէրսն մտերիմ սիրոյ հաձել ընդունել։ Որում պատասխանի էտ Ալիբ րոս. Ինկալայ սիրով զպանձս զայդոսիկ, և յօժիտ գըս տեր քո յաւելումն. գոցես ի գրան իմում այլ դմա ալ ժանի, որ ոչ գՀարսինն և ոչ զևւր Ճոխութեն հանարէս ցի ինչ, մի երկմտեր. զի բազումք են առ իս, որոց ար համարհ են գանձք Ինաբելոյի՝ առանց քաջութեան և առաքինութեն. և չանդգնագոյն ասացից, յանձնէ ու սուցեալ եմ նոցա՝ մեծ համարել միայն զՀատատար մուն առ բարեկամս, ահաւոր լինել առ թշնամիս, և առ գիմս երկիւղած։ Այս բռնագատեաց Վաւբրիաս զԱլիբ րոս ձաղել առ իւր, և ոչ յանձն էառ Ալիբոս. և ա ռեալ ընդ իւր զՎաւբրիաս՝ գարձաւ ի բանակն, և ընդ սպայն սեղանակից իւր զնա արար։ Ինարգագետին գա լարագեղ բազմական էր նոցա, և այլն ամ սպասք սեղա նոյ ըստ այմ ախորժակաց։ Ի միտ էառ Վաւբրիաս հան ձարոյն՝ զի քանի առաւել էր այն այնպէս պարզութիւն քան զընդունայն պերձութեին իւր. և ասէր համարձակ՝ թէ մնախառք են ասօրեսյանեայք, իակ Պարսք ի վա տակս քաջութեան փառաւորեալ։ Այս մնաւանդ ընդ գգոն զուարձաբանութեան և ընդ խրախուսս սեղանոյն զարմանային։

124-140։ Ալիբոս զկատարած խորհրդոյն երկիւղ հանապազ ի մտի իւրում. և ի միասին ընդ Վաւբրիայ ջրաւ առ Վա դատաս յերկիր իշխանութեն նորա յայն կոյս Ինաբելոյն։ Ինքն ի սահմանս անդր էր դղեակ ամուր՝ որ հայէր ի վերայ Ինակաց՝ երկրին և Ինատասց, և անդ իշխան յար քային բաբելացւոց կայր՝ ունել ի հնազանդութեն զեր կիրն։ Ձև ևս յայնժամ հանդրձակ յայտնեալ էին իրք

1 Ոլ են ոտս սիւնաձեւք։

միաբանութիւն Պատգամսդ ընդ Պաբոս, և նա օգնական եղեալ իշխանին ի պահպանութիւն կարեւոր ամրին՝ ետ զայն ի ձեռս Կիւրոսի, կամեսար համախոհ եղեալ ընդ նմա։ Ո ամրոյն զայն կալեալ՝ նուաձեաց առա Կիւրոս զամ երկիրն Սակաց և Կատաց։ Ապա ի քաղցրութենէ նորա և ի բազում մարդասիրութենէն յորդոբեալք յարեցան ի նա ամենեքեան։ Իսկ գումարեցին ընդ նմա Կատուք բիւրս երկու հետեւակաց, և Սակք բիւր մի աղեղնաւորաց և երկու հազար հեծելոց։

Ի ժամանակին յայնմիկ էլ աբքայ ասորեստանեայց հնազանդել զՊատատաս զապստամբեան։ Ընդ առաջ եղև նմա Կիւրոս, եհար զզօրս նորա ի հարուածս մեծամեծս, և հարկեցոյց զնա դառնալ ի Կապելոն. և զաւուրս բազումս ասպատակէր յերկիրն յայն։ Աբգահրութիւք զօր արար ընդ գերին՝ ազատեցուցեալ զնա, հրամէտեցաւ համբաւ նորա ընդ ամ տեղիս, և յաւելաւ ի նա ազգք բազումք, և ստուարացան գունդք զօրաց նորա։ Իբրև մերձ եղև Կիւրոս ի Կապելոն խնդեցաւ ընդ աբքային ասորեստանեայց՝ մինամսեայ ձիաւորացն վձարել, այլ ոչ յանձն էառ զայն Թագաւորն. և խորհեցաւ Կիւրոս գալ առնել զնուազ ժամանակ մի, զի ի միեղել իւրում ի կողմանց ամուր՝ անկասկած լիցին նիզակակիցք իւր. և միաբանեցին երկուսեքեան Թագալ համարձակ պարապել իւրաքանչիւր արարչ իւրում։ Իսկ Կիւրոս լտեսեալ զաշխարհն ամ և զդիրս Կապելոնի, և յաւելեալ բարեկամս իւր և նիզակակիցս, և յամախեալ զայրուձին, գարձ արար առա ի Կապս։

Հասեալ ի գլուխ սահմանաց աշխարհին, առաքեաց հրեշտակս առաջի իւր՝ տալ զրոյցս Կիւրոսի, և զիտել զնորհուրդս նորա Կ բարւոք Թուեցաւ նմա՝ զայն ամենայն զօրաց մեծամեծ յաշխարհ իւր, մնայատիք զի չորք կամ բիւրք յերկիրն Պարսից գային յաւելուլ ի նոսա. և եղ ի վաղիւ անդր ընդ առաջ նորա մեացեալովք առ իւր հեծելովքն։ Իսկ ելին առ նա Կիւրոս բազմութիք զօրաց՝ որ առաւել էին Թուով և աջողագոյնք. ընդ որ յարաւնեաց Կիւրոս և խոժոռեցաւ, և վեր ի վերոյ ընկալեալ զնա, և զերեսն գարձուցեալ ի համբուրելոյ՝ արտասուեաց։ Իսկ հրամն ետ Կիւրոս հեռանալ անտի զօրացն, և խօսեցաւ ընդ նմա առանձինն քաղցրութեամբ և ցածութեամբ և աղերսիւ, և հաւասի արար նմա զանկեղծութիւն իւր, զպատճառանս,

զսէր անդրժելի, և զիոյթ սկսուելիք յօգուտ նորա, և փարատեաց զայմ խէթ կասկածանաց ի նմանե. և գալ ձան յառաջին սէրն՝ զերկ ընդ խառն եղեալ ընդ միմեանս արտասուօք։

Ուրախ եղեն յոյժ զըրջ Աբրամ և Պարսից՝ որք գուշեամբ և կասկածանօք ինային վախճանելոյ բանից նոցա։ Էյտպ Կիաքսար և Կիւբրոս ոտն ածեալ ի ձի աշտանակեցին, և գրոհ ետուն Աբրը զՀետ Կիաքսարայ, և զՀետ Կիւբրոսի Պարսք, որպէս ինքն խոչ Կիւբրոս ակնարկեաց նոցա, և այլ ազգք իւրաքանչիւր զՀետ բնիկ զօրավարացն։ Հասին ի բանակն և իջուցին զԿիաքսար ի խորանն՝ որ յառաջագոյն պատրաստեալ էր նմա. և անդր յոլովք ի Աբրամ գային պատարագօք ողջունել զնա. կէաք ինքնայօդոր, և այլք ի տրամանէն Կիւբրոսի, Օ ուարձացաւ յանձն իւր Կիաքսար, և խելամուտ եղև՝ զի ոչ խոտորեցուցեալ էր Կիւբրոսի զսիրտ ժողովրդոյ նորա, և զի զառաջին սէրն ունէին ընդ նմա Աբրը։

Ա՛յս վախճան եղև առաջին արշաւանացն Կիւբրոսի ընդդէմ Կրեսոսի և բաբելացւոց. և աշխմանեցաւ յաւուրսն խորհրդոց յանդիման Կիաքսարայ և ամասպայիցն՝ մնել չառաջ զպատերազմն։ Վ՚անգի զայսոցիկ պատմեալ է առանց ժամանակագրութեան կարգի Վ՚ենոփոն, լնցի մեզ չաւելուլ ընդ Ասկերիոսի ամն յոլովս ընդ մէջ երկուց պատերազմացն՝ ընդդէմ Կրեսոսի և բաբելացւոց, յորս երկուստեք կազմէին ի պատերազմն մեծ՝ որ առաջին կայր։ Էյտ ի միջոցի թուի ինձ լեալ ամս մնասորել Կիւբրոսի[1]։ Օ ի իբրև խորհէր նա դառնալ ի Պարսս յետ հպելից և կամ վեց ամաց մեկնելոյ իւրոյ անտի, յայտնեաց նմա Կիաքսար զսէր իւր մեծ, և մեծարեաց զնա յոյժ։ Օ ի ոչ գոյր նորա որդի՝ այլ դուստր

1 Քենոփոն չեզոյ ժամ պատահալ Քաբելացի ամէ զԿիւբրոս ամասպացիս. այլ զի ի ժամանակի ամէ զնմանէ ինձոն պատմեալ էր՝ անհատականացն ի ամ ինչ ցոյնիամ չորանալ նմա զամասորէն. այլ ազգաս հատաքար. Համարիմ ինչ ի ամ կանելու գիամանակ էրայն։ Մանաւանդ զի զամ նորա ի ամ նէն եղեն ամաց գիամանակ Կիաքսար ի ամ փառս ի ամ, և ըստ ինքնամանն կամ հնգից պատահ ամաց վճամանելու, որամ ոչ ճամասորէն այս արշաւանք նորա յերգիպտոս և յԵրիոպիա։ Ե ոչ այլ ևս անդր յառաջս նորա ևս պատմէ ի վիպագրոյս։ Ա՛յլ ինքնա պատահալ ի ամ ինչ ամանակ ի ամ ինչ ամանակ ի ամ ինչ ամանակ

միամիտ, և զայն մատոյց Կիւրոսի ի Տարսոնէ՝ պաշտատական տուեալ նմա զաշխարհն Կարաց։ Ուրախ եղև յոյժ Կիւրոս, և ընդ մեծի պարգևին շնորհս կալաւ զնմանէ, այլ ոչ կալաւ զայն յանձն մինչև հրամանս առցէ ի հօրէ իւրմէ և ի մօրէ. և եթող աշխարհի չքնաղ օրինակ խոնարհ հպատակութեամբ առ ծնողս, և անթերի հնազանդութեամբն զոր պարտական էն որդիք ի մասինս յայտիկ առ նոսա, թէպէտ և ի չափ հասեալ իցեն և յաջողեալ բարձր մեծութեամբ և իշխանութեան։ Եւ իբրև դարձաւ անդրէն Կիւրոս, էառ զօրիորդն զդուստր Կիաքսարայ իւր ի կնութ յորմէ ծնաւ զԿամբիւս։

Իբրև յանկ ելին աւուրքն հարանեցին՝ եկն Կիւրոս ի բանակն, և ի ժամանակի խաղաղութեան որ մնայր նմա՝ ամրացոյց զսահմանս իշխանութեամբ իւրով, և խորհեցաւ ընդ նիզակակիցսն ի հնարս կարևորս յաջողութեամբ մեծի խորհրդոյն։ Եւ քանզի կասկածէր, ասէ Վէնոփոն, [ժ. 151։] յերկարելոյ այլ և այնպատրաստութեամբ պատերազմին հրամանն ետ զօրացն բանակել ի դիպան տեղւոջ ընդ առաջ օդոյվք, և որպէս էր հնար՝ ամրացոյց զտեղին զայն, և անդ կրթեալ զզօրս իւր, և սնդակազմ ունէր զնոսա՝ որպէս յանդիման ունելով զթշնամին։

Ու եղև ի փախստէիցն և ի գերեաց, որք օր ըստ օրէ ածեալ լինէին ի բանակն, թէ արքայն բաբելացւոց անց ի Լուգիա յաշխատութեամբ գանձուց ոսկւոյ և արծաթոյ։ Օրնականն ի կարծիս եղև՝ թէ առ ահի զգամնան զերծուցանէ, իսկ Կիւրոս կասկածէր թէ գնայ միաբանել ընդ իւր և զայլ ազգս ի վերայ նոցա. և պատրաստէր ինքն միանգամ ի պատերազմ։ Ամենանդ զայրեալ ձին պարսիկ զօրացոյց, և նորանձև Հարտարութիւն գիտնոն ետ սպառազինել. քանզի առաջինքն ի տրտմացւոց անտի ածանդեալ որովք ցայն վայր ամ ասիացիք վարէին, Թերակատարք էին և դժուարին ի գործ։

Ի ժամանակին յայնմիկ դեսպանք հասին ի հնդկաց՝ [156-159։] բերեալ գանձս բազումս առ Կիւրոս, և ցուցին նմա զպատգամ տեառն իւրեանց. քանզի յոյժ ուրախ եղև զի գիտաց զկարօտութիւն նորա, և բարեկամ նմա և նիզակակից ցանկայր լինել. և ասեն, եթէ այլ ևս պէտք ինչ իցեն արծաթոյ՝ ծանուսցես մեզ, զի այսպէս պատուէր ընկալաք յարքայէ՝ լսել առնոյնի զոր հրամայեսցես ցնա։ Ընդ նորա կալաւ Կիւրոս ընդ այն ամենայնս, և մեծապարգև մեծարեաց զպատգամաւորս. և զմտադիւր

յօժարութիւն նոցա ի ծառայութիւն պատեհ առեալ, ասաց երիցն ի նոցանէ պատգամաւորել առ Թէնամիս իբրև յաբբայէն հնդկաց, և խելամուտ լեալ խորհրդոյ նոցա՝ դառնալ յուսցանել նմա զայն։ Յանձն առին հանեցեալ նմա արքն, և կատարեցին զպատուէր նորա յաջողութիւն։ Ապա Կիւրոս խոտորեցաւ աստ յբնտանի ուղղութենէն, և ոչ տեսանէմ աստ ի նմա զառաջինն հաստատութիւն։ Վասն չէր իսկ հնար անգիտանալ նմա զերաբանութեան ազգաց, որոց դրժեալ՝ զլուսեան իբրև պատգամաւորս առաքեալ, որոց դժպատեհ էր և պարտութեան այն և նենգութենէ։

Ել դադարէր Կիւրոս ի պատրաստութենէ պատերազմին, ի մեծամեծս զուշ մտացն յառնել։ Ել զահմանեալն և եթ յատենի խորհրդոյ փութայր առնել, այլ և նախանձեցուցանել զսպայս ընդ միմեանս ի գնալ շարժել, ի ձիավարել, յաղեղն և ի տեզընկէց, և ի տակ աշխատութենէ։ Վայելն էրի և յորս արշաւեցուցանէր գնոսա ատեպ, և շահատակելոցն պարգեւս տայր փոխարէն։ Այլ ի սպայէն որ բարւոք վերակացու լինէին զբաց՝ գովէր զնոսա հանդիսակ առ ի խրախոյս նոցա, և ըստ ձեռին բաւականի մեծարէր։ Ի խուճապ տօնից վարժք գնուորութենէ էին խաղք նոցա, յորս առատ մրցանակաբեր յորդորէր գնոսա, և յեռանդն մեծ ածէր։ Այլ միանգամայն ասէր, սպարապետն այն յամ գործս ի հանգստեան և ի բերկրութենէ, ի խնջոյս և ի զրոյց և ի զբօսանս՝ ի յաջողութենէ պատերազմին խորհէր. որոյ եղեւն իսկ աշխարհակալ անուանի ի վերայ երկրի։

Այլ զաբձան դէսպանքն լըտեսեալ զանակ Թէնամեաց, և պատմեցին Կիւրոսի՝ եթէ Կրէսոս սպարապետ ընտրեցաւ ամ զօրացն, և Թագաւորք և իշխանք նիզակակիցք միաբանեալ էն օգնել նոցա արծաթով՝ ի ծախս զօրաց ժողովելոց, գումարեցան և Թրակացիք ընդ զրօշակաւ նոցա, և յօդութենէ հասանէն նոցա ընդ ծով Յոպիպոսէ բիւրք իբրև երկոտասան, և գունդ պղ՝ ի Կիւպրոսէ։ Այլ ի կիլիկեցւոց, և ի մեծէն Փռիւգիոյ և ի փոքունէն, ի Լիկայոնիոյ, ի Կամիրոյ, Ասիքիոյ և ի փինիկիոյ վաղագոյն հասեալ էին։ Այլ և ասորեաց տանեաք և արքայ բարելացւոց և յունիացիք, եւ ողաքացիք և Ցիպիք ամ բնակեալք Ասիա կոչեցեալ էն յօնգնականութենէ։ Հրեշտակս արար Կրէսոս և առ սպարատայիս՝ միաբանել ընդ իւրեանս։ Այլ գպղիս ժողովէին մերձ ի Պակտոլոս՝ երթալ անտի ի Թիմբրեա, զի անդ

էր զօրաժողով զօրացն։ Ի յամ ամենայնի և գերեալքն վիրաւորեին, և այլ լսեալք։ Իւ զարհուրեցաւ զօրականն ի լուր համբաւոյն, և ժողովեալ առ ինքն Կիւրոս զսպայս բանակին, եցոյց նոցա զիարիր մեծ զօրացն իւրեանց և Թշնամեաց, և քաջալերեաց զնոսա անդրէն։

Օ՞ւմ պէտս կարևորս զչէ և զգործ պատերազմին 148-163։
յառաջադոյն խորհեցեալ Կիւրոսի՝ ետ պատուէրս զօրացն յերկար և գեղեցիկ բանախօսութեամբն, զոր մանեակարկ Վ[անենափան, մինչ ի յետինն ի սպայից ինձ-ցեալ զնաւս իւր. քանզի գիտեր զի ի փոքունս յայտնի յաջողութիւն յաղթութեն հատատեալ է, և ի դոյզն իրաց անփոյթ առնելոյ՝ ձախողին արկածք, զոր օրինակ կասի և դադարէ անդործ և անշարժ կալմած գործատանտրն՝ ի թերութենէ որ ի նմա փանաք և փոքրիկ անուշն։

Օ իւրաքանչիւր որ ի սպայիցն յականէ և յանուանէ Ե. 151. 152։
գիտէր Կիւրոս, և առակ իմն Թանձր՝ այլ զօրաւորք ի-մաստիւք ածեալ, ասէր ստէպ. Օ արմանք են զի զիւ-րաքանչիւրոց ի գործեացն գիտէ արուեստաւոր զա-նուանս, և սպարապետաք գիտել զսպայիցն, որ են նոցա գործիք յաղթութենն, անփոյթ առնելն։ Անաւանդ զի ի փառաց անտի արիանան նոքա ի պատերազմ՝ իբրև յանուանէ ճանուցեալք զօրավարացն, և պատուականք յաչս նոցա։

Իբրև տի ինչ կազմ էր և պատրաստ՝ չու արար Կիւ- Ե. 160. 161։
րոս, և Կիւաքսար եկաց անդ ի Մարս երից մասամբ զօ-րականն՝ զի մի թափուր մնասցէ աշխարհն և անպատս-պար։ Խորհեցաւ Կիւրոս զի առաւել օգուտ է տալ պատերազմ յերկիրսն Թշնամեաց, և ոչ մնացեալ բարե-լաւացոյն յարձակելոյ յերկիրս անդր՝ խաղացոյց ինքն զզօրս իւր, զի զարդիւնս երկրին Թշնամեաց կերիցեն զօրքն, և զի զարձեալ երագութեամբն և յանդգնու-թեամբ խուճապեցուսցէ զԹշնամին։ Իւ Ձմեռապարհ բազում արարեալ՝ եհաս առ նոսա ի Փիմբրիա քաղաք Լիւդացւոց, մերձ ի Մարդիկէ մայրաքաղաք աշխարհին։ Իւրքա քանզի չհաւատային Թէ Կիւրոս սակաւաձեռն գնդաւ, կիսով զօրաց նոցա, դիմեցեալ ի բուն անդր յեր-կիր նոցա՝ տագնապեցան ի տեսանել զնա մեծ առ իւ-րեանս հասեալ. և ոչ եղև նոցա պարապ՝ պատրաստել բազմաթիւ զօրականին պաշար, և համախմբել կազմել գնոսա ի բանակ։

ԳՕԴՈՒԱԾ Զ.

Հաղթիւ Ճակատու պատերազմին Ալէքսեայ ընդ Ալբեսեայ առ Լիմնքեաս։

Ի նշանաւոր անցից հնախօսութենէ մի է և պատերազմն այս, որով դադարեցին վէճք ասորեստանեայցն բաբելացւոց ընդ Պարսս ի վերայ ինքնակալութեան Ասիոյ, Հոր Վիրէրէ, ի բանասիրաց կամառայս, պարապով աշխատասիրեաց[1]. զի որպէս ինքն իսկ նշանակէ, ի կարգառուր պատերազմն՝ որոց մանրապատում վէպք հասին առ մեզ, սա առաջին է։ Ո վաստակ այլոց յօգուտ ինձ գրաւել ոչ խղճեցի, այլ ոչ զիւառս նոցա խորհրդով և փոփոխութիւնս ինչ կարևորս առնել ի նոսա օրէն համարիմ։ Ասա ոչ սովորութիւն իմոյ երկար և ձիգ ի մտի եդեալ էր առնել զնկարագրութիւնն պատերազմիս. քանզի և Ալիբոս ընդ քաջ զօրավարսն կարգեալ՝ որք կային ի սկզբանէ, համարեաւթիցն նորա պատերազմականաց ցանկալի է զնոսին որս ոսն ոսն հետևել։ Այլ առանց այսորիկ, օրիւնակ պատերազմի առաջնոցն՝ մնան է կարևոր պատմութիւնս նոցա։

Դասք. ջ. 167։ Այնմ ժամանակի Ալիբոսի բաժանեալ ի խումբս խումբս հարիւրոց հետևակաց, և կային իւրաքանչիւրոց նոցա հարիւրապետք. և խումբքն հարիւրեակք բաժանէին ի գումարտակս չորս, իւրաքանչիւր արք քսան և չորք և սպայ մի ի վերայ նոցա. և գումարտակք իւրաքանչիւր ի կրկին դասակարգս։ Քառասն ի խմբիցն հարիւրեակաց էր հազարապետ մի, և ի վերայ տասանց հազարապետաց այլ ոք՝ զոր բիւրապետ մարքի է անուանել։

Ալիբոս, որպէս կանխաւ նշանակեցի, ի գալ իւրում երիւք բիւրուք պարսիկ զօրականաւ առ Ալիաքսար քեռի իւր՝ արար փոփոխութիւն մեծ ի նոսա։ Վասնզի զօրք նորա կրկին երիւք մասամբ ազեղնաւորք էին և պարսաւորք, և ի բացաւստ միայն կարէին պատերազմել. զորս Ալիբոս լանջապահ զրահիւ սպառազինեալ և սպայսաբաւ՝ եդ ի ձեռս նոցա տապար և սուսեր, և սակաւք

1 Ի յիշատակարանի բանասիրաց հատուածս։ Հատ. ջ. 53։

'ի նոսա ինացին Թէթևազէնք ։ 'Ի ժամանակին յայնմիկ
ևևա հեծեալք էին առ պարսիկս. և խորհեցաւ Կիւ- Ք. 99. 100.
բոս՝ զի զօրավիղն մեծ 'ի պատերազմի այրուձին է, և Ե. 118.
խմաստուԹեամբ բազմաց հոգացաւ դժպատեհ լերին դար-
ման առնել. և կազմեաց տակաւ հեծելագունդ պարսիկ
յինտրելոց զօրականին երբև բիւր մի արանց։

Չուզից այլուր և զօր 'ի սպառազէն կառն արար
փոխոխաւԹի, Համանակ է արդ զԹիւ Համարոյ զօրացն
ասել զերկաքանչիւր բանակաց, զօր դուշակել միայն կա-
րեմ՝ զայլ և այլ բանս Ինենոփոնի 'ի տեղեաց տեղեաց
'ի մի վայր ածեալ. քանզի նա զՀամազումաւր Թիւ զօ-
բացն ոչ գնէ, ընդ որ յոյժ զարմանամ ընդ պատերազ-
մափորձ մատենագրին ասելոտիս ։

Լինն Կիւբոսի ինն և տասն բիւր և վեց Հազար զօ-
բականն՝ ընդ հետևակ և ընդ հեծեալ. եօԹն բիւրք 'ի
նոցանէ բնիկք յաշխարհին Պարսից, յորոց բիւր մի հե-
ծեալք էին զօՀաւորք, երկու բիւրք հետևակք զՀաւա-
ւորք, և երկու այլ բիւրք տիգաւորք, և բիւրք զարձեալ
կրկին Թէթևազէնքն։ Իսկ ինացելոց անտի յերկուտասան
բիւր և 'ի վեց Հազար զօրականէն՝ էին քան և վեց Հա-
զար հեծեալք 'ի Հարաց 'ի Հայոց և յարաբացւոցն
բաբելացւոց. և այլ տասն բիւր հետևակաց 'ի նոյն ազ-
գաց ։

'Ի վերայ այսոցիկ էին Կիւբոսի և կառք գերանդաւ Ք. 152. 158.
զինք երեքարիւր, 'ի չորից չորից ձգեալ յերկիլեաց, որ
առ միմեանս լծեալ էին, և զրահիք ընդդէմ նետից
ամփացեալ. երբև զօսպառազէն պարսիկ զօրականն։ Ի-
կազմել և կառս մեծամեծս բազումս, մարտկոցս 'ի վե-
բայ նոցա ամբարձեալ յուԹ և տասն կամ 'ի քան ո-
անաչափ, յորս ազեղնաւորք ամրանային. և եղինք վեշ-
տասն լծեալք առ միմեանս ձգէին զկառն զայնոսիկ,
և անիւք փոքրիկ էին կառացն։ Ի ուղտերամիակք էին
Կիւբոսի, յորս երկու երկու յաղեղնաւորացն արաբա-
ցւոց հեծանէին՝ առ միմեանս Թիկամբքն յեցեալ միասին
'ի գլուխն կոյս հայելով և միւսամբ 'ի գաւառն։

Իսկ Կրեսոսի կրկին և աւելի ևս զօրք էին քան զՊ-
արսիցն. զի էր Թիւ նոցա քառասուն և երկու բիւր զօ-
բանակաւոց, վեց բիւրք 'ի նոցանէ հեծեալք։ Յոլովք
քան զանակաւս 'ի նոցանէ էին բաբելացիք, լուդացիք,
փռիւգացիք, կապադովկացիք, էլլեսպոնտացիք և եգիպ-
տացիք. ընդ բնաւ՝ երեսունն և վեց բիւրք, յորոց էին
եգիպտացիք երկոտասան բիւր, և տասներք նոցա ամրա-

ծածուկ բոլոր անձին, և տէգը երկայնաձիգը, և սակը
ընդ սուսերի։ Իակ այլք ի զօրացն փուխիկեցիք էին և
կիսոլացիք, կիլիկեցիք, լեկայոնացիք, պամփիլագոնացիք
և Թրակացիք և Հոյիք։

166-170։ Իսկ Ձակատեցան զօրք Կրեսոսի ի պատերազմ, ուազմ
գործեալ հեռեւակազօրն ի միջակին և հեծելագունդք
ի թեւս։ Իլինչ աւելի էր Թանձրութեի Ձակատացն քան
զերեսուն արանց։ Իդիպատացիքն, որպէս ասացի, երիս
տասան բիւրք՝ յորս էր զօրութի մեծ հեռեւակազօրացն
Կրեսոսի, ի միջավայրին էին, բաշխեալք յերկոտասան
ի ստուար խումբս՝ վաշտ քառակուսի բիւրք իւրաքանչ
իւր կազմեալ՝ հարիւր այր ի լայնութիւն և հարիւր ի
Թանձրութի. և վաշտք իւրաքանչիւր անջրպետեալք ի
միմեանց՝ զի համարձակ անխափան յիրերաց մարտիցեն։
Խորհէր Կրեսոս այլ ևս զԹանձրութի նոցա նուազել,
և յաւելուլ երկայնել զՁակատն, քանզի ի դաշտ լայ
նատարած երկուատեր բանակեալ էին՝ յորում յայլ և
յահեակ մարթ էր զԹիւս ընդարձակել, և փակել շուր
ջանակի զբանակ Պարսից՝ յոր ջամ յոյս յաղթութենն
հաստատեալ էր. այլ ոչ յանձն առին եղեալսացիք փո
խել զկարգ իւրեանց։ Իսկ էր Ձակատս բանակին երե
կայնութի ասպարիզք իրրև քառասուն։

Իբրասոյ, այն որ պատճառանօք գժդութի հատուա
ծեցաւ ի բանակ Կրեսոսի՝ գինել տեսանել գյօրինուած
Ձակատն, որպէս պատուէր ի Կիւրոսէ ընկալաւ, ա
ւուրբ յառաջ քան զպատերազմն գարձաւ անդրէն. և
ստուգագոյնս ի նմանէ տեղեկացեալ Կիւրոսի զամ՝
ըստ այմ զզօրն Ձակատեցոյց։

Ձակատն Պարսից խորութի էր սակաւականն քան
և չորից արանց. բայց Կիւրոս փոխեաց զայն, և որպէս
էր Տնար առանց տպարագուցանելոյ զդասդս իւր՝ եր
կայնեաց զայն, զի մի ի Թշնամիք պաշարել կարասցեն։
Հեռեւակք նոցա էին ընտրեալք սպառազինք զրահիւք,
և տէգք էին նոցա և աշտեայ սուսեր. որոց առաջի
լուդացիքն տիգաւ միով և ԹէԹև իւրեանց վահանօքն ոչ
կարէին կալ ի մեծոց։ Իյոր ազգաւք զբազմութի կար
գացն կիսոց չտիւ նուազեցուցեալ, կարգս երկոտասան
եՀազ ի խորութիւն։ Իակ ընդ քեռաւ Հեռեւակք պար
սիկք էին ինքեանք և երեք հազարք։ Հեծելոցն որ
յաջ և յահեակ Թև բաժանեալ էին՝ աջոյն զօրավար
էր Տիբրիանտ, և Ալ շատագոյ ձախոնն։ Իյս ամ էր
կայնութիւն Ձակատն ասպարիզք երեսուն և երիս,

անձկադոյն երկուստեք քան զՀակատ Թշնամեաց երիւք ասպարիզօք՝ սուղ ինչ աւելի ։

Յետ կոսկ առաջնոյ դասակարգին կացոյց զսիպա-ւորս, և զՀետ նոցա զաղեղնաւորս, որ յառաջակաց զօ-րակառուն ամրացեալ՝ ի վերոյ գլխոյ նոցա նետաձիգ և տէգընկէց ի Թշնամին լինէին։ Եւ զօր ընտիր ի մի-ջի բանակին կացոյց վերջապահն՝ դիտել զյառաջա-կացս, քաջալերել զսրտի զօրականն, և վատասրտելոցն սպառնալ, և զխախտեալս երբև զնահնչիւն սպանանել, զի առաւել ի Թիկանց քան յառաջագ ի Թշնամեացն երթ կիցեն վտանգ ։

Զետ պարսիկ զօրականին կայեն մարտիկքն՝ զոր ասացի՝ շարժականք, յասպարէզ զուգահաւասար յեր-կայնութեն Հակատացն՝ անջրպետ ուղիղ ի միջին ունելով. յորոց աղեղնաւորք տապնապէնն գՆշնամին անդադար, և էին այնոքիկ զօրացն Պարսից որպէս ամրոցք կամ դղեակք կրելի՝ յորս ի Հալածելոյ կամ ի Հարուածոց Թշնամեաց ամրացեալ, կազմին անդրէն ի պատերազմ։ Զետ այնոցիկ էին և կարգք երկու դարձեալ ընդ երկայնութեն Հակատացն զուգահաւասար անջրպետաւք ։ ի միում աղեղք, և ի միւսում կառք՝ որ բարձեալ բերէին զկանայս և զանկարգոս ի պատերազմ։ Զետ ամենայնցն և յամրութեն նոցա կացոյց Կիւրոս ի տասրոտ բա-նակին՝ երկու հազար այրուձի և ուղտերաձայս անթիւ ի բազմութենէ։ Զայս ձև օրինակի զաղեամախան կաղ-դեալ՝ խորհէր ստուար քան զոր էին կարծեցեալ Թշնամեաց զբանակ իւր, և Հարկ առնել նոցա՝ զի Թե պարտեսցեն զղօրս իւր, որպէս և Հարաւար դիտէր ըզ-խորհուրդ նոցա, տակաւասկին մեծաւ չրջանաւն ։

Յակ կառք սպառազինք Պարսից բաժանեալ էին յե-րիս Հարիւրեակս. ի միջավայր Հակատացն մի ի նոցանէ եկայ՝ որում վերագոյն եր Ա՛քբադատ արքայ խու-ժաստանի, և երկուքն այլք յաջ և յահեակ Թև։ Ա՛յս յօրինուած եր Հակատս պատերազմին՝ յոր կազմեցան երկուստեք առուրբ յառաջ ։

Ի վաղիւ անգր ընդ առաւօտն մինչ դեռ զօրքն առ-նուին կերակուր ի զօրանալ՝ զոմ մատոյց Կիւրոս, և զօրականք քաւուքեաս հեղեալ դիցն՝ ի վէն ընթացան։ Ա՛նդ շուք պերճ սպառազինացն, ամենեքին նոցա և զրահք և սաղաւարտք և սպասքը գմայլեցուցանէին զաչս տե-սողացն ։ և մանդիկ և երիվարք փողփղեալք ի շղիւն սղնձապատ զինուցն և ծիրանեաց ։

Մինչ դեռ Քրդաստ ասդնաթռուոյ կայնիւն կոտա-
ւի զրահաւորեր, ըստ սովորութեան երկրին, կին նորա
Պանթեխ երեք մատոյց նմա սաղաւարտ ոսկի և բաղ-
պանս և ապարանջանս, և օձոց ըստ պատշաճութեան
հասակին խորշաքաղ՝ ի վերջաւորսն, և ցցունս սաղա-
ւարտին ծիրանեգոյն, զորս գաղտ յատնէին պատրաս-
տեալ էր՝ սպաս առնել նմա։ Եւ ոչ կարաց անհագ աչօք
զդեցուցանել զայնոսիկ՝ թեպէտ և յոյժ բռնաւորեր
զարտասուս։ Վակայն և առ յոյժ սիրոյն յորդորեր
զնա զչին ի ձեռին քաջութիւն մեռանել, և առնել անուն
արժանի ազգատոհմին, և արժանի գովութեանն՝ զոր ա-
րար զնմանէ առ Կիւրոս։ Վանդի, ասէ, յոյժ երախ-
տապարտ եմք նմա. զի ի գերութենէ վարեալ և ի կնու-
թենն սահմանեալ եղէ ազատ, և փառօք ազատեցոյց
զնս։ Իբրև զՀարպն եղբօր իւրոյ՝ այնպէս կալաւ զնս
առ իւր. և խոստացաւ էս իբրև ի քէն ոչ ապաշնորհ
լինել առ երախտիս նորա։ Եւ Քրդաստ զայս ի վեր
ամբարձեալ ասէ մեծամտեալ. Ցուր ինձ, ո Քրամազդ,
լինել յաւուր յայսմիկ արժանի իմոյն Պանթեխայ, և
վհշմեն բարերարին արժանի բարեկամ։ Եւ վաղվա-
գեաց ի կառս իւր, մինչև Պանթեխայ ոչ ժամանեալ
գերկս արկանել նմա՝ զկռուան հանդուերձից, և սկս-
ցեալ հայէր զՀետ նորա՝ մինչև ծածկեցաւ յաչացն, և
ապա դարձաւ յետս։

Իբրև վախճան եղև զոհից, և կատարեաց Կիւրոս
տալ զպատուերս սպայիցն, յուշ արար նոցա աղօթել
դից. և ապա կալան զօրքն զիւրաքանչիւր տեղի։ Հայեմ
վայրի մատուցին նմա զօրավարք գինի և կերակուր. և
նա սակաւ ինչ յոտնկայս ձաշակեալ՝ ետ զինւոցեսին
բաշխել որոց անդն կային։ Եւ ի բաժակին քաւութիւն Ա. 123.
հեղեալ գինւն, ապա զինւոցեալն արք. զոր և այլք ամե-
նեքին ըստ նմին օրինակի արարին։ Եւ դարձեալ վե-
րստին զդիմն Հայրենիս մաղթելով առաջնորդ լինել իւր
և հոլանի՝ եղ յերկար, և հրամայն ետ զօրացն գալ ըզ-
հետ իւր։ Եւ իբրև վարաներ ընդ ոմ կողմն հորդան տալ
զօրացն, և ահա յայնմ կողմանէ ձայն լուաւ որոտման և
ասէ. Օ հետ քո ընծայուսք Քրամազդ մեծ.[1] և մերձ
կեաց զերկիրացն, առեալ ընդ այնմ զԿրնսամատ զօ-
րագլուխն հեծելոց, և զԿրշամ՝ի ձախմէ առաջնորդ
հետեւակաց. և պատուէր ետ նոցա խաղացուցանել ըզ-

1 Եւ ոտրուն յետ անդրադարձ առաքեցեալ նմա, այլ ոչ Կերամազդին։

զօրսն միանգամայն, և քան զնոսա զդուշութիւբ պահել զդիօջն արքունի զարծուենչան, որ եր ի տեգ նիզակի աբծուի տաւառնեալ ոսկեձոյլ՝ Արվին դիօջու յամեմ հետե վարեցան Թագաւորք Պարսից։ Ի հանգոյս երևս՝ առ պարէզս իբրև քան յառաջեալ, տեսին ապա զԼճնա մի։

Իբրև յանդիման եղեն միմեանց կողմանք երկոքեան, առ- 175-176։
ատրեստանեայք յուսացեալ յընդարձակութեն հանա- տուն իւրեանց քան զԼճնաւեացն՝ յառաջ խաղացին յամեմ և յահեկէ պատել զնոսա չուրջանակի, և միանգամայն յիմ կողմանց յարձակել ի նոսա. բաբելացիք որ ի միջոց հակատուն էին՝ նոքա անդ զկայ առին։ Ել ինչ զանգիտեաց Կիւրոս՝ քանզի կանխաւ գիտէը զայն։ Նշան ետ զօրականին կամ լինել, և էր բարբառ նշա- նին՝ Բամանդ հուլանի մեր և առաջնորդ. և մեկնեցաւ յամեմ Թևէ՝ քաջալերեալ զնոսա վաղ հասանել անդ դրէն, մարտակից լինել նոցա ի յաղթուի՝ գիշն օգնա- կանութեբ։ Իսկ ընդ դասակարգս զօրացն ընթացեալ պատուէր տայր և խրախոյս, և որ յառաջն մեղմով և ցածուխեամբ խօսէր՝ անդ իշխանաբար վճռաւ տալ մեղբ. զհետ իմ լերուք նիզակակիցք քաջք, անշուշտ ի մեզ յաղթուիլն, համագունդ ընդ մեզ դիք պատե- բազմիւ։ Իսկ հայեցեալ ետես զի բազում՝ ի զօրագըլ- խաց, և Բքրադատ ինքնին, խուովեալ ելին ընդ խլրտել լուդացւոցն յամեմ և յահեկէ՝ զի գային յարձակել ի նոսա, և ասէ. Բհասարիկ յորոց զարհուրիքն ի նոցանէ սկսցի խորտակումն ի Թշնամիս. և այն ժամ Տարուա ծոյն, Բքրադատ, լեցի քեզ նշան, և խաղացուցանես զդառս ընդդէմ Թշնամեաց։ Իսկ եղև այնպէս։ Իսկ Կիւրոս կատարեալ զպատուէրսն՝ զարձաւ անդրէնն ի տեղի իւր։

Իբրև գունդք կրկին լուդացւոցն Տարուստ մի յա- ռաջ խաղացին՝ ձայն ետ Կրեսոս իւրոցն յարձակել ի վերայ Պարսից, մինչ դեռ լուդացիքն ի կողաց յարձա- կէին, և փակել պաշարել զզօրս Կիւրոսի յերից կող- մանց՝ իբրև երիւք ստուար բանակօք. և որպես Բաե- նոփոն ասէ՝ քառակուսի ի քառակուսւոջ երևէր բա- նակն Կիւրոսի։ Իսկ Նշան ետ զօրացն Կիւրոս, և զարձան իակևիակ, և խաղալ լուսնեայ զէւս իրացն ինքնին տե- սանել։ Օ այն ժամ պատեհ Համարեցաւ Կիւրոս և զը- պատերազմական նուագն հնչեցոյց, և ամ բանակին զհետ կցորդեալ զԲրէս յօգնութեն կարգեցին։ Իսբ առեալ

ընդ իւր գունդս հիծելոց և ամբոխ հետևակաց, աճա-
պարեաց ՚ի վերայ Թշնամեաց՝ որ զայլ Թև բանակին
խորհէին պաշարել, և յարձակեալ ՚ի Թևէ խուռնեաց
գնոսա : Կռիւ և կառացն բուռն զօրութիւք հասեալ՝ հա-
րին խորտակեցին ՚ի սպառ զլուծացիսն : Իսկ որ ՚ի ձա-
խումբ Թևի անդ էին՝ յամբոխել աղաղակին զգացեալ
զաղետել այլ Թևացին՝ խուռացին և նոքա ՚ի վերայ Թշնա-
մեաց, յառաջայ զուզաերամակսն վարեալ՝ որպէս պա-
տուէր ետ նոցա Ալիբոս. զոր ոչ զմտաւ ածէին հիծելոք
Թշնամեաց : Յոր ակն ընդ մերձենալ առ նոսա ուղտուցն՝
խրտեան երիվարք ՚ի հոտոյ նոցա . և յետս զմիմեանս
խռնեալ, և բազումք ՚ի նոցանէ յոգն երթեալ՝ հարին
զգետնի զվերելեակս իւրեանց : Յր Ա՛ռատագրսաս ջո-
կատիս միայ փոքու հիծելոցն Ալիբոսի սատան եղև նո-
ցա , և ոչ եթող կազմել անդրէն ՚ի պատերազմ: և
կառք գերանդազինք ՚ի վերայ հասին սաստկութիք ՚ի բե-
կումն և ՚ի կոտորած աշագին Թշնամեաց :

177-180: Յայնմ վայրի Ա՛ռատագատ, քանզի զայն նշան ՚ի Ալի-
բոսէ ընկալաւ բաղխելոյ ընդ բուն բանակին Թշնամեաց,
խուռացոյց յանկարծ զնմ բազմութիւն կառացն . որոց ոչ
կարացեալ Թշնամիք զդէմ ունել բռնութեան՝ խռովե-
ցան ընդ միմեանս : Յր Ա՛ռատագատ խորտակեալ զնոսա
և ցրուեալ՝ եհաս ասպ ՚ի վերայ գնդին եգիպտացւոց :
Նոքա ասպաբարիկ շուրջանակի գործեցին՝ մի տալ
մուտս կառացն, և կացին յերկար պնդակազմ: այլ ապա
՚ի Թափոյ երիվարացն՝ որք առ աՀՀոյ զնոսա կոխեին,
քակտեցաւ ռազմն : Յր եր տեսիլ ահաւոր՝ շէջջակոյտ
մարդկանն անկելոց և երիվարաց, և կառացն խորտակե-
լոց և բեկելոց զննուց , և արշաւիրք սպրասուր գերանդ-
դեացն՝ որ միջակտուր առնէին զմմ խոչ դիմադարձ .
Ա՛յլ յարիածիչ չարի՝ կործանեալ կառացն Ա՛ռատագ-
տայ , և յերկիր ինքն տապալեալ՝ սպանաւ իւրովքն ,
արուեստ բազմաւ պատերազմելոյ : Իսկ եգիպտացիք վա-
հանափակ հովանեաւն յատաջ խաղացեալ՝ հալածեցին
զՀետևակազօրն պարսից անդր ևս քան զշրջրորդ գա-
ւակարգ բանակին մինչ ՚ի մուրբենայսն : Ընդ տագնապե-
ցան եգիպտացիք ՚ի Թանձրատարափ նետիցն և նիզա-
կաց՝ զորս ՚ի մարտկոցացն տեղային ՚ի նոսա Թշնամիք .
և գունդք վերջապահք Պարսից սուսերամերկ ՚ի վերայ
հասեալ՝ եղէն խափան ապերնաւորացն յետս խուսափե-
լոյ , և Հարկեցուցին զնոսա ՚ի պատերազմ:

Յ Հիծելոց և զՀետևակս ձախոյ Թևին եգիպտացւոց

հալածական տարեալ Ալիբոս՝ գՀետ լինէր տակաւին փախստեից. և վարեալ զնոսա ի միջավայր անդր ձա-կատուն, եւ ետես ապա զՊարսս նեղեալ ի թշնամեաց և ի վտանգ փախստեան, և տրտմեցաւ յոյժ։ Եւ ածեալ զնոսա զի չետոտսա միայն յարձակմամբ ուրթ է զառաջս ունել եղիպատացւոց՝ հարաւ չետ կուսէ. անգր և այրուձիս փութանակի հասեալ՝ անկաւ ուժգին ի վերայ նոցա։ Եգիպատացիքն պաշարեալ չուրջանակի՝ քաջապէս ընդ ամ կռղ՚ա դիմամարտէին։ Յայնմ վայրի վտանգ մեծ և Ալիբոսի հասանէր՝ վերաւորել երիվարին ընդ փոր և անկանել ընդ նովաւ, և մնալ նմա ի մէջ թշնամեաց։ Ընդ յայտնի եղև, ասէ Խենոփոն, զի յոյժ կարևոր է և օգուտ մեծ զօրավարին՝ սիրելի զօրացն լինել. քանզի սպայք և զօրականք խոռվեալք առ հասարակ ընդ վտանգ սպարապետին, յարձակեցան գազանաբար ընդ մէջ բիւրաւոր նիզակաց և սուսերաց՝ ապրեցուցանել զնա։ Եւ հեծաւ Ալիբոս յայլ ձի, և աստիճացաւ պա տերազմն և արեան հնապաղնք գնային։ Հայեցաւ Ալիբոս ի քաջութիւն եգիպատացոցն, և կարեկից եղեալ ընդ կորովի ազգին կորուստ խօսեցաւ ընդ նոսա գալ ի հաշտութիւն առանց վատութեան, մինչ դեռ յայմ բարեհամբաւ անօգնական միացեալ էին։ Եւ քաջ յանձն առին պայմանս՝ զի մի սատիպեսցէ զնոսա տալ պատերազմ ընդդէմ Արեսոսի, զի յօգնութիւն եկեալ էին նմա. քանզի ոչ ինչ ընդհատ ի քաջութենէն և հաւատարիմէ էին։ Եւ յայմ հետ անկեղծ հաւատարմութիւն զմմ պատերազմնա Պարսից պատերազմին։ Եւ ետ նոցա Ալիբոս զի արիսա քաղաք, և զկիլլենի հուսկ ի Կումս առ եզր ծովու, և այլ ևս ամուր տեղիս ի միջերկրեայս աշխարհին, և բնակիչն անդ զաւակ նոցա մինչև ցամն Խենոփոնի՝ որ զայսոսիկ և զանուն քաղաքացն այնոցիկ մատենագրէ, զի կոչէին յատուրս նորա՝ քաղաքք եգիպատացոց։ Յայսմանէ, և որ այլ ինչ այսպիսի ի հաւատարմութիւն պատմեցին յոլով ուրեք ի ներքս ածէ Խենոփոն, յայտ է առուգապատում առնել նմա զանցս Ալիբոսի, եթէ ոչ ամենայնիւ՝ գԵթ կարևորագոյն մասամբ։ Ո՞չ այսպէս խնամատեաքն ազգ առնէ աստ Ֆերերէ։

Յերկարել գործոյ պատերազմին մինչև ցերեկոյ՝ փութացաւ Արեսոս անկաւ ի Սարդիկէ հանդերձ բանակ կուսն, և այլ ազգք իւրաքանչիւր գիշերագնաց եղեն յաշխարհն իւրեանց։ Եւ Ալիբոս յաղթող եղեալ պա

տերազմին՝ կարդեաց գունդս ի պահպանութիւն, և հրամայեաց զօրացն առնուլ կերակուր, և հանգեան ի պատերազմէ։

Յորժամայ ի նկարագիրս յայս՝ անտեսիւր հեղինէն բնագրին հետևել Խենոփոնի, զի ոչ ամենայնիւ հաւատաւ զթագաւորութիւն գոյ։ Օ կարգաւորուն պատերազմիս ցուցի հմուտ եղելոց արուեստին, և գտին սխալեալ անդ Կիւրոսի՝ զի ոչ ամենայնցոյ զկողս բանակին, պահել ի վտանգաց զչերանդազէն կառս, և զդէմ ուղղել երկուց խմբից՝ զորս Կրեսոս խառնացոյց հարկանել զնա ի թևև։ Խ.ԼՀ թերևս ինքն Խենոփոն մոռացաւ նշանակել զայն յիւրում պատմութեան։

Ըստ որ երկայնասցի թէ յաղթութիւն պատերազմիս ի պարսկական հեծելագնդին քաջութենէ յաջողեաց, զոր Կիւրոս մնադիւրութիւն իւրով և ձարտարութիւն հնարեցաւ նորոգ կազմեաց՝ ի բարեկարգել և ի զարգացուցանել զազգ իւր և ի մնասիս յայսմիկ պիտուղութիւն, յոր մինչև ցայնժամ թերի էին։ Օ օրալիդն մեծ եղեն ի պատերազմի անդ և գերանդազէն կառք, որովք յայնմ հետէ վարեցան Պարսք։ Խ ուղեբամակքն և այլ պիտանացու եղեն անդ՝ զորս Խենոփոն արհամարհէ իբրև մնպիտանս, քանզի կարասեկիրս միայն պնդացեալ ասէ թէ էին յաւուրս իւր։

Ըստ ե հարկ պանծացուցանել աստ զքաջութիւն վատուհան Կիւրոսի. համառօտիւ ասացեալ ամենեւին ի նմա տեսանի նկարագիր քաջի սպարապետի։ Կախ քան զպատերազմի՝ խորագիտութիւն և ամենազգաստ արթնութիւն, որով հնարք թշնամանի նշաւակեալ նանրանան. փոյթ և նախահոգ խնամք կարօտութիւն զօրականին և կատարելոյ հրամանացն իւրոց անխափան, ձարտարութիւն մեծ յինքն արկանելոյ զսիրտ զօրականին և իրախոյս և եռանդն ածելոյ նոցա։ Կակ ի տաստկացեալ պատերազմի՝ աշխոյժք անշփոթք ի հրամանատարութիւն պատրաստ ձիոյն, անվեհեր արիութիւն, և մարդասիրութիւն առ թշնամին՝ պատուեալ ի նմա զքաջութիւն, և զնայելն ի նոսա պարտ համարել։ Կակ որպես յետ պատերազմին յօդուտ հարկ գյաղթութիւն տեսցուք ի մեծոց։

Խ.ԼՀ առաւել խելամուտ և զարմանալոյ արժանի այն թուի ինձ ի Կիւրոս, զի ոչ ուրեք վերջացաւ ի պաշտամանէն՝ զոր պարտ համարեր ընծայել դիցն։ Օ ի ոմէ ոք զանց պատերազմիս ընթերցեալ՝ ոչ զարմացի ընդ նա, զի յանդիման ամ բանակին յաձախ զդիմն կար-

դայը, զոհս ստէպ մատուցանէր նոցա, քաւութիւն հե-
ղոյը, ի նոսա ապաւինէր, և ի նոցանէ խնդրէր օգնու-
թիւն։ Այսոսիկ որպէս առ մատենագրին գոի՝ ա-
ռանց յաւելուածոյ ասելի, զորս ոչ նախատինս համա-
րեցաւ այլեն պատերազմիղ մանրապատում առնել։ Որ
ամեն և որ յանդիմանութիւն զօրավարացդ քրիստո-
նէից և սպային, թէ ամաչէն իբրև զհեթանոսն իշ-
խան կրօնասէրքդ երևել ի պատերազմինս, և թէ ա-
ռաւել գտանիցին ազդեցեալ ի նա մնոտիապատիր
դիցն կրօնք, քան ի սոսա հաստատ ճշմարիտ յայծն զո-
րութեց։

Իսկ Արեսոսի ոչ ինչ հանդէսք քաջութեե պատմին ի
պատերազմի անդ. և Ալենոփոն խորին լռութիւն զա-
զարեալ ինչ թուի ինձ ասել, և տայ մեզ խմանալ եթէ
մարթի լինել և թագաւոր հզօր և մեծահարուստ վեր-
ջացեալ ի քաջութենէ պատերազմի։

Ինդր ի պատերազմն Պարսից գառնամ։ Ոչ է հարկ 184-186։
ասել զարտմութիւն Պանեթէայ ընդ գոյժ մահուն Աբրա-
գատայ առն իւրոյ։ Ձեզր Պակտոզոս գեղոյ զդիւնորա
ետ բերել կառօք, և զգլուխս նորա առեալ ի վերայ
ծնգացն, և որպէս ցնորեալ անմարթափ աչօք պղու-
ցեալ Հայեր ի նա, և սգալի արիւնաթաթաւ տեսլեամբն
զգաւս սրտին ճարակեալ զայրացուցանէր։ Ազդ եղև
Կիւրոսի, և ընթացաւ անդր՝ արտասուակցորդ լինել
հիւծացելոյ հարսինն, զամ փոյթ ի մէջ առեալ ի միւ-
թարել զնա. և հրամայեն ետ յուղարկաւորել զդին մե-
ռելոյն փառօք մեծաւ։ Իսկ իբրև մեկնեցաւ անտի Կիւ-
րոս, Պանթէա յաղթեալ ի ցաւոցն ետս զդաշոյն և
մխեաց ի սիրտ իւր, և ի վերայ առն իւրոյ անկաւ մե-
ռեալ։ Այս կանգնեցին նոցա շիրիմ ի տեղւոջ անդ, և
եր մինչև ի ժամանակս Ալենոփոնի։

ԳՕԴՈՒԱԾ Է·

Լ՚ընդոյ Կիւրոսի զՍարդիկէ, և յերբեմն առնել զՎրէսոս։

Ի վաղիւ անդր ընդ առաւօտն խաղաց Կիւրոս ի վերայ Սարդիկեայ։ Ոչինչ չև հասեալ էր ի քաղաք անդր պաշարել զնա՝ փուճացաւ Կրէսոս, ըստ Հերոդոտեայ, եւ ընդ առաջ նորա պատերազմաւ։ Իւրացիքն, ասէ Հերոդոտոս, էին Լ՚ասիա ազգ դուռ պատերազմող, և էր զօրուքեն նոցա մեծ յայրուձին։ Օ որ Կիւրոսի անպիտան առնել կամեցեալ՝ յառաջ մղեաց զուտերամարկան. և ձիոցն ի տեսլենէ նոցա և ի հոտոյ հրտուցեալ՝ չետս փախեան։ Հե՛ւ հեծեալք իջեալ յերիվարացն՝ դարձան զայրագին ի պատերազմ, այլ ապա նկուն եղեալ՝ անկան փախստեայ ի քաղաքն։ Ընդ պաշարեաց զնոսա Կիւրոս, և մինչքենայս ի պարիսպն մատուցեալ՝ սակս դուռս վերելից անդր պատրաստեր։ Որովք զսարդիկեցիսն պատաղեցուցեալ՝ ի վաղուեան գիշերին կալաւ զդղեակն, առաջնորդեալ ընդ դաղուղի անցս յումինէ ի պարսիպ գերեացն՝ որ երբեմն իշխանի տեղւոյն ծառայեալ էր։ Հե՛ւ ընդ ծագել արեւու եհաւտ անխափան ի քաղաքն, վասն մեծ կալաւ անդ ի խափանել զզօրսն յաւար հարկանելոյ, քանզի գիտաց զի քաղդեացիքն թողեալ զանառիկն՝ այսր անդր ցրուեալ էին։ Ի քաղաքն առնինաճոյն լցեալ մեծութիւք, ի Սարդիկէ, հզօր իշխանութենէն Կիւրոսի էր՝ հրամանաւ լսկով արգելուլ, և որպէս կալել զձեռս ընչաքաղց այլազգի զօրականին յաւարառութենէ։ Վարազ ետ կարդալ ի քաղաքին՝ կեալ ամենեցուն, և մի ձեռն ուրուք ի կանայս նոցա կամ յորդիս մերձենալ, բայց միայն եթէ տացեն ի դուրս զամ ոսկի և զարծաթ գտեալ ի քաղաքին։ Լրեալ յանձն առին, և Կրեսոս եղև յօրինակ ամենեցուն՝ զամ ըզգանձս իւր տուեալ ի ձեռս Կիւրոսի, քանզի զնա ձերբակալ արարեալ՝ ածին կենդանւոյն առաջի յաղթականին։

Յերկրորդ զամ իրս քաղաքին յարդարեալ ուղեաց Կիւրոս, խօսեցաւ ապա առանձինն ընդ Թագաւորին և

ա. 45-46։

Դասք. է. 180-183։

եհարց զնա՝ յինչ խորհուրդս յինչ միտս իցէ զդեղիեան պատգամացն և զաստուածօդն զոր պաշտէր։ Ասայ Կրէս սոս անձին իւրում մեղ դնէր՝ թէ ես ինձէն չարժեցի զարգար զգաստին նորա ի վերայ իմ, թերահաւատ եղեալ բանից նորա, փորձելով զնա անպատեհ և ծաղր հարցուածովն, և ոչ կարեմ բողոք ունել զնմանէ։ Օ՜ չարցի զնա թէ ի՞նչ կեցցեմ ի բարուքեն։ և ետ ինձ պատգամ, թէ գիտիցես զանձն՝ ի ծայր բարեբաղդութեան կեցցես անցողդողդ։ Ա՜յլ իմ մոռացեալ զանձն, և ի չաճախ գովութեցն պատրեալ՝ թուեցայ յայնմ անձին որ պիսի ոչն էի ի բնէ, և կացեալ սպարատես ի վերայ մեծի բանակին, յանդուգն ձեռն արկի ի պատերազմ ընդդէմ հզօրագունին յոյժ։ Ա՜յլ արդ ի պարտութենէ աստի խրատեալ, սկայց գիտել զանձն՝ զի լցիմ բարեբաղդ. և եղէց՝ եթէ դու ինձ օգնեսցես, զի ի քեզ այսուհետև հաստատեալ է բաղդն իմ։ Վթացաւ ի նա Կիւրոս տեսանելով զնա յանկարծ ի բարձրութենէն փառաց յայն թշուառութեն անկեալ. և ընդ անխոռով ապրիլն նորա զարմացեալ յայնմ յեղափոխութեն բաղդին՝ արար ընդ նմա մարդասիրութեն յոյժ. և եթող ի նա զանուն և զիշատս թագաւորութեան և զայլ ինչ, բայց միայն զի մի իշխեսցէ տալ պատերազմ որով թէ թագաւորեսցէ ի նմանէ զծանրագոյն բեռն թագաւորութեն, որպէս ինքն խակ Կրեսոս խելամուտ եղև այնմ. և արձակեաց ի բարեբաղդութեն եկեաց յայնմ հետէ ազատ ի հոգոց և ի տառապանաց։ Այս յայմ պատերազմինս Կիւրոսի՝ էր ընդ նմա, քանզի սիրեաց զնա Կիւրոս, և խորհուրդ հարցանէր ի նմանէ, և խորագիտութեամբ դարձեալ առ իւր ունէր զնա՝ զի անբեկեան լիցի ի նմանէ։

Արդոտոս և այլք ի մտաենագրաց իրս ինչ արժանի գրոց յիշատակի չաւելուն ի պատմութենս յայս, զորս ոչ կամիմ լուել. թէպէտ և զարմանալի քան հաւատալ իմ թուին ինձ բանք նոցա։

Կրեսոսի որդի մի մնացեալ էր, որպէս կանխաւ ասացի, և էր համր։ Այս յառնուլ քաղաքին տեսեալ զմի ի զօրականացն սուսերամերկ ի վերայ հօր իւրոյ յարձակեալ, յանդիմաս, առ տագնապ սրտին և հայրասէր գոլով՝ բուռն արար անձին, և լուծան կապանք լեզուի նորա, և աղաղակեաց. Մի՛ հարկաներ ով դու զԿրեսոս։

Կիւրոսի ձերբակալ արարեալ զԿրեսոս՝ հրամայեաց Էրդ. ա. այրել զնա կենդանւոյն։ Խակ իբրև պատրաստեցաւ խա-

ըղկին, և մատուցաւ նա ի հուր, յիշեալ զբանն Աղօ-
նի [1], և խելամուտ եղեալ Չէմարտութեանցն կարգադ
երեքկին, Ո՛վ Աղոն Աղոն Աղոն։ Յակ լուեալ Կիւ-
րոսի, որ անդ ի գինին կայր աւազանւոյն Հանդերձ, և
գիտացեալ Թէ ընդ Էր զանուն մեծի խնամտասիրին կար-
գադ յայնմ ի յետին տագնապին, յուշեցան գուշք
նորա ընդ յեղյեղուկ բաղդ մարդկան և ընդ աղէտս
Թագաւորին, և հրամայեաց ներել նմա զտանջանսն, և
մինչև ի վախճան ի պատուի ունէր զնա։ Լուա Աղոնի
եղև ի փառս՝ բանիւ միով զմի ի Թագաւորաց ապրե-
ցուցանել, և զմիւսն խրատել։

Այլոյն հրամանաւք Դեղփեայ պատգամախօսին խրա-
խուսեցաւ Կիւրոս ի պատերազմն յայս. Մի՛ զի ասէր,
յորժամ Ջորի Թագաւորեսցէ Պարսից, յայնժամ վտանգ
է Կիւրոսի. և միւս կա՝ Թէ Կիւրոս անցեալ ընդ
Ալիս գետ, քակեսցէ զիշխանութեն մեծ։ Զոյժսունիս
պատերեցաւ՝ անհնարաւորութեանէ իրին անկասկած եղեալ,
և երկրորդումն՝ զի յուսացաւ քակել զիշխանութեն Պա-
րսից։ Իսկ իբրև ընդդէմ եկին պատահեցին նմա, սուրհանդակս հրամանաւ Կիւրոսի յղեաց ի Դեղփիս՝ շղթայս
ոսկի ի կշտամբանս աստուածոյն տանել, զի ի վերայ
յաձախումն պատարագացն խոբեաց զնա անիրաւ պատ-
գամաւք։ Զայլ դիւրաւ զպատասխանին ետ պատգամա-
խօսն, Ջորւով զԿիւրոս խորհրդաբանեալ՝ քանզի երկաս
սեռ էր, պարսիկ ի հօրէ և Մար ի մօրէ. և քակա-
մամբ իշխանութեանէ զԿիւրոսին և ոչ զՄարացն։ Զայս
քիւք առապատիր պատգամաւք՝ առումեցին հայր դևն
խաբէր զազգ մարդկան ի խաւարի անդ տգիտութեանէ,
երկիւղս պատասխանեաւ՝ որ և ի հակառակ եկս իրացն
արդարանայր։

Լուտ. ա. 3ԽԱ-ՅԲԳ։

Զազգ եղև յոմիսացոցն և էօղացոց՝ եթէ կալաւ
Կիւրոս զԼուդիա, և հրեշտակս արարչին առ նա ի
Սարդիկ. և աղաչէին զնա՝ նուիլն գաշանաքք, զոր ընդ
լուացեալն էդ, տիրել և ի վերայ Լուդեանց։ Իսկ Կիւ-
րոս քանզի յառաջագոյն յորդորեալ էր զնոսա միաբա-
նել ընդ Լուբ, և ոչ կարացեալ Հաւանեցուցանել, իբրև
եհաս զնոսա յայնժամ ակամայ խոնարհեալ՝ առակաւ
ետ նոցա պատասխանի, Թէ ձկնորսի զորինգն սուլելով
ի հրաւեր ձկանց՝ ոչ ինչ օգտեալ, միայն հնարս եգիտ
որսալոյ զնոսա՝ արկանել զուռկան ի ջուրս։ Այսպա վրկ-

1 Ջորի Խոխա ասացաւ. Գիրք. Ե. գլ. Ե։

պէտք ՚ի յուսոյ՝ առ սպարտացիսն անկան խնդրել ՚ի նոցանէ օգնութեան. և սպարտացիք հրեշտակս արարին առ Ալիբոս՝ զի եթէ ՚ի վերայ Հռովմայեցւոց ածիցես, պատրաստ լեր ՚ի պատերազմ: Ծածաղեցաւ Ալիբոս ընդ պատգամն և ասէ, ապա և դուք պատրաստ իցէք պահ ունել անձանց և աշխարհիդ:

Մնակեաց կղզեացն ոչ ինչ երկիւղ էր յայնժամ, զի չէ ևս տիրեալ էր Ալիբոսի ՚ի վերայ փխենիկեացոց, և ոչ էին Պարսից նաւք պատերազմի:

ՊՐԱԿ ԵՐԲՈՐԴ

Լրեալ հրովք պաշարեաց Ալիբոս զԱթենքն և առ պարս պաշտօնեայսն:

Եւտր. ա. 36: Դիոդ. Ի. 186-188:

՚Ի փոքրն Ասիա զտեղի կալաւ Ալիբոս մինչև ՚ի նուաձել ՚ի սպառ զընակիչս աշխարհին՝ յեգեան ծովէ մինչ ՚ի դէսն Լիկիրատ: Ելնտի էանց յերկիրն Ասորւոց և առ բաբաացւոց, և զայնոսիկ նուաճեաց: Եւ ապա եմուտ յասորեստան՝ հասեալ ՚ի վերայ Բաբելոնի, որ միայն մնացեալ էր յասւրեղէն դիմակաց նման: Եւ էր քաղաքն այն դժուարամատոյտ. քանզի պարիսպք բարձրաբերձք էին նման անմահացելի, և ամբոխ բազում պահանոցդաց ՚ի վերայ նորա, և պաշարպինդ ամմայեալ էր համբարօք մինչև քսան ամաց: Եւ այլ այսոքիկ ոչ խափանեցին զԱլիբոս ՚ի խորհրդոցն. այլ այս եղեալ պատերազմաւ առնուլ զքաղաքն՝ կեղծաւորեցաւ սովով նուաճել զայն: Հրամայեաց ետ խրամն խորացնոյր ընդարձակ շուրջ զքաղաքաւն հատանել. և զի մի վաստակաբեկ զզօրսն արասցէ՝ բաժանեաց զնոսա յերկուտասան դասս, ամենօրեայ ժամանակաւ կալ իւրաքանչիւր ՚ի պահպանութեան խրամնոյն: Եւ որ ՚ի ներքս ՚ի քաղաքն անդ էին՝ յամենայնի իւրեանց յուսացեալ և ՚ի բազմամեծ հարձարոցն առատութեան, թշնամանէին ՚ի բարձանց պարսպացն զԱլիբոս, և այսպէս առնէին զնա զի ՚ի նահիր աշխատ եղեալ ձգնեալ ընդդէմ նոցա:

ԳՕԴՈՒԱԾ Ա·

Իրեն ժրպէս գէր՛ ամենայնի պղտպղրել ի պատուել Իսրայելեան ըստ
նաբաւոր հանգամանացն նշանակելն այլ և այլ տեղեր ։

Վասնզի առնուլ Իսրայելոյ ի մի յերևելի անցից վաղ ժամանակաց, և բազում ամաքս յառաջագոյն յայտնի շունչ գիրս գուշակեալ՝ որ ինչ անդ մեծամեծք իրա- գործեցան, յառաջ քան զարտաքնոյն մատենագրացն զոյացս՝ ի գէպ համարիմ համառօտել աստ զբանս սուրբ գրոց վասն հետի ընթերցողացն, զի զարգիւնս իրին ընդ գուշակութեանն բաղդատել կարասցեն ։

Ա՛ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ ԳԵՐՈՒԹԵՆԱՆՆ ՀՐԻՒՑ Ի ԲԱԲԵԼՈՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՐԵԳԱՐՁԻՆ

Վաղ ժամանակաւ յառաջ գուշակեալ ՚այ մարգա- րէիւք զգէրութիւն ժողովրդեան իւրոյ ՚ի Իսրայէլեան, յա- ւել ծանոյց և զստոյգ ժամանակ գերութենն՝ ամ եօթա- նասուն, և զգերեդարձ նոցա ՚ի ընուլ եօթանասուն ա- մացն, անկանգնելի կործանմամբ քաղաքին՝ յոր գերե- ցան ։ „Ո՛ւառայեսցեն ազգքային բաբելացւոց եօթանա- սուն ամ“ ։

Երեմ. ԻԵ. 11.

Բ· ՊԱՏՃԱՌՔ ՅԱՄՄԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՚Ի ՎԻՐԱՑ ԲԱԲԵԼՈՆԻ

Սրոխտ ամբարտաւանութեանն Իսրայէլի, և անգութ խստութեանն ընդ Հրէայս, և սեղանագործ ամբարշտութեան Թագաւորին, այսոքիկ յուշեցին զգաստանն ՚այ ՚ի վերայ քաղաքին այնորիկ ։

Ես. ԽԷ. 7· 8։

Ո՛ Հպարտութենեն գրեալ է այսպէս · „ Իսկայեր յաւիտեան կացից իշխան ... որ նստիմի յանձնապաս- տան, և ասէիր ՚ի սրտի քումմ՝ թէ ես եմ և չկայ ոք իմ

բնակեր . ոչ նատպոյց յայրերէ , և ոչ ծանեայց զերբու-
թէ ։ | Չէ զանգեմելենէն ինքն ՅԱ ըսպոր կալեալ ա-
ած ։ „Չո բարկացեալ եմ ի վերայ ժողովրդեան իմոյ ... ած. 6. 7 և
ես մատնեցի զնա ի ձեռս քո , և դու ոչ արարեր ի վե- 11։
րայ նորա ողորմութիւն. ծանրացուցեր զլուծ ծերոց յոյժ ...
և եկեսցե ի վերայ քո թշուառութիւն “ ։

Իսկ սեզանակապատութիւն նորա յայտ է ի Յատտա-
սար . որ ոչ միայն զան կկուսան անարգեաց զՅԱ , այլ
որպես յաղթող եղեալ նմա՝ յափշտակեաց յաւարի էառ
զանօթս և զսպասս սրբութեց նորա , և ի պէտս իւր առ
անկն վարեաց զնոսա արհամարհանօք , որովք զպրացոյց
զՅԱ ։

Գ. ԴԱՏԱԿՆԻՒ Ի ՎԵՐԱՑ ԲԱԲԵԼՈՆԻ ԵՒ ԳՈՑԱԺ ՀԱՐԵԱՑ ՆՈՒԱՃԵԼՈՑ ԵՒ ԿՈՐՆԱՆՄԱՆ ՆՈՐԱ Ի ՍՊԱՆ

Զայն տայ մարգարէն Պարաց և Պարսից . „Ազա՛մ Երեմ. ծա. 11։
ջիկ ազեղունս , լցէք զնա զապարանս ։ Օ ի զօրեղոյց տէր զգի
Թագաւորին Պարաց . զի բարկութիւն նորա ի վերայ Բա-
բելոնի , և ջնջեսցէ զնա . զի վրէժխնդրութիւն տեառն
է , վրէժխնդրուն տաճարի նորա ։ ... Ազատիկ զի մերձ Եր. ժբ.
է օր տեառն ... զի ահաւասիկ տէր զօրութեց հասեալ 6. 9։
է անհնարին զի բարկութիւն , սրատմուա-
թիւ ։ ... Ի հասասիկ ես ինդրեցից վրէժ յարքայէն բա Երեմ. ծ. 18.
բելացւոց և յերկրի նորա , որպէս ինդրեցի վրէժ յար- 14. 15. 20.
քային ասորեստանեայց ։ ... Ձակատեցարուք շուրջ
զԲաբելոնիս ... զի տեառն մեղաւ ... Հատուցէք դմա
ըստ գործոց իւրոց , ըստ ամենայնի զոր արար արարէք
դմա ։ ... Ի՛ի խնայէք յերիտասարդս նորա , և ասպակա ծա. 3։
նեցէք զՅԱ զօրութիւն նորա ։ ... Ի՛ր բռնաւեցայի ի պար Եր. ժբ.
տութիւն մատնեցայ , և ժողովեալքն ի սուր անկցին ։ Ոչ 15-18։
զորդիս նոցա առաջի նոցա սատակեսցեն և զտունս նո-
ցա աւար հարկանեցեն , և վկանայս նոցա խայտառակեա-
ցեն ։ Ի հասասիկ յարուցանեմ ի վերայ ձեր զՄարս՝
որ ոչ ինչ համարին զարծաթ և զոսկի ։ Օ աղեղունս երի-
տասարդաց խորտակեսցեն , և որդւոցն ձերոց մի ողոր-
մեսցին , և ի մանկունս ձեր ոչ խնայեսցէ աչն նոցա ։ ...

1 Կարծանաբեր Ղևոնդեան ։

Սվ. ՃԸ. 11. 12։ Պատառ բաբելացւոց Թշուառական, երանի որ հատցէ զՀատուցումն քո զոր դուս մեզ հատուցեր. երանի որ կալ լաւ զմանկունսն քո և հար զքարի ։

Եզեկ. ԺԷ. 19-22։ » Այս եղեցի Տէրն Աստուած, որ փառաւորն կոչի ի Թագաւորէն քաղդէացւոց, որպէս կործանեաց զԱ՝ զՈդոմ և զԳոմոր ։ Այս ոչ բնակեսցէ յատիտեանս ժամանակաց, և ոչ մնացեն ի նմա յաղգս բազումս, և ոչ եւս անցցեն ընդ նա արաբացիք, և Հովիւք ոչ հանդիցեն ի նմա ։ Այլ անդ հանդիցեն գազանք վայրենիք, և լցցին տունքն նոցա աղաղակաւ. և անդ հանգիցեն համբարբառք, և անդ դեւք կաքաւեսցեն, և յուշկապարիկք բնակեսցեն ի նմա, և ոչնիք ձագս հանցեն յատարանս նորա։...

ԺԳ. 22-24։ Այարից զԱբէլեան աւերակ զի բնակեսցեն ի նմա ոչնիք, և եղիցի յոչինչ, և արարից զնա խորխորատ տղմոյ ի կորուստ ։ Ցարեայց ի վերայ նոցա, ասէ տէր Այաբաւոթի, և կորուսից զանուանս նոցա և զզարմ և զազգս։ Այսպէս ասէ տէր զօրութեանց. զոր օրինակ ասացի՝ այնպէս եղիցի, և որպէս խորհեալ եմ՝ այն կացցէ ։

Դ. ԽՐԱԽՈՑՍ ԱՌ ԿԻՒՐՈՍ Ի ԿՈՐՆԱՆՈՒՄՆ ԲԱԲԵԼՈՆԻ ԵՒ Ի ԳԵՐԵԴԱՐՁ ՈՐԴՒՈՑՆ ՅՈՒԴԱՑ

Եզեկ. ԽԸ. 1-4։ Ովիւբոս, զոր էառ ՚ի ձեռն՝ կատարել նովաւ զխորհուրդս բարութեի իւրոյ և զթուլթե առ ժողովուրդ իւր, աւելի քան երկերիւր ամաւ յառաջ քան զծնանել նորա՝ յանուանէ կոչեաց ի գործն յայն, և բարձրապատում բանիւք խոստացաւ առաքնորդել և ձեռնտու լինել նմա յայմ արշաւանս նորա, և հնազանդել նմա զամ Թագաւորս երկրի, զի մի ընդ երազ աշխարհակալութեան նորա ոք զարմացի ։ » Այսպէս, ասէ տէր ՚ի ձեռն ծառայիցն իւր ցՈվիւբոս. զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա՝ հնազանդեցուցանել առաջի նորա զազգս, և զգօրութիւն Թագաւորաց խորտակեցից, և բացից առաջի նորա դրունս, և քաղաքք մի փակեսցին ։ Այս երթայց առաջի քո, զլերինս հարթեցից, զդրունս պղնձիս խորտակեցից, և զնիգս երկաթիս փշրեցից. և տաց քեզ գանձս խաւարենս, և զաւանդս աներևոյթս բացից քեզ, զի ծանիցես թէ ես եմ տէր ած՝ որ կոչեցի զանուն

քո, ՚ած իսրայէլի, վասն Յակոբայ ծառայի իմոյ և Իսրայէլի ընտրելոյ իմոյ “։

Ե. ՀՐԱՒԻՐ ԱՍՏՈՒԱԾԱԽՐԱՒՈՑՆ ԱՒՐ ՉՕՐԱՑՎԱՐՍ ԵՒ ԱՒՐ ՉՕՐՍ ԵԼԱՆԵԼ Ի ՎԵՐԱՑ ԲԱԲԵԼՈՆԻ

„ Ի վերայ լերինն դաշտականի առէք նշան “, զի և Եսայի. ԺԳ. 2-17։
հեաւաւրը տեսցէն, և որ անասնն իւր առնէքին՝ ծանիցեն զնա զՏրամանս իմ։ „ Խարձրացուցէք զաւրբառ ձեր “, լսելի առնել մինչև ի ծագս երկրի։ „ Կոչեցէք ձեռամբ“, ձեպել ի հեռաստանէ զազգս ի լուր պատգամաց։ „ Հաւաքեցէք իշխանք “ զվրանս ձեր, զի առ ձեզ ժողովեսցին ազգք ի պատերազմ։ „ Այս տաց հրամայն. նուիրեալք էն, և ես ածից զնոսա “. զԹագաւորս՝ զորս ես կացուցի, և հնազանդեցուի նոցա զազգս՝ արբանեկիկ հրամանաց իմոց։ „ Կիմեալ գան սկսցք՝ յապեցուցանել զաւրամատևէն իմ“. լինի է զօրուէն նոցա և յաղթուէն և ժուժկալուէն մարտին և խնատուէն և յաջողուէն գործոց նոցա. անհնունք են՝ զի արբանեկիկն Տիրանանց իմոց. սարսեն առաջի նոցա տիեզերք՝ զի գահիճք են բարկուէն իմոյ և վրէժխնդրուք։ „ Կմտան գան միանգամայն “. յիս պանծացեալ յառաջորդ իւրեանց, և զի գան փրկել զժողովուրդ իմ զոր ընտրեցի, լե՛ի պատերազմ մտեալ՝ անբեկանք ընդ յաղթուէն։

Լե՛ս ապա ածախօս մարգարէն զաւրամացեալ ընդ մտա-
գուէն՝ զոչէ. „ Զայն ազգաց բազմաց ի վերայ լեռանց ի նմանուէն ազգաց բազմաց, ձայն Թագաւորաց և ազգաց միահամուռ ժողովելոց։ Տէր զօրութեաց հրամայեաց զաւրս սպառազինաց գալ յերկրէ հեռաստանէ ի ծագաց հիմանց երկնից “, ուր և ազդեցոյց Տրամանս իւր։ Կայ ոչ տեսիլ աշարհիս բանակին պահուցանել զիս, և ոչ Թագաւորաց երկրի. զաւր միայն տեսանիմ մեզ. այլն ամ՝ պաշտօնեայք են արդարութեան նորա։ „ Հասեալ է տէր իւրովք սպառազինօք աստակել զամ տիեզերս։ Կհազին է տեսիլն, և խոստուէն պատմեցաւ ինձ։ Որ արհամարհէցոյն է՝ արհամարհէ, և որ անօրէն նեղեցոյն է անօրինէ։ Ի վերայ իմ հասցեն եղամացիք,

1 Բաղաւսար արքայ Բաբելացոց։

և հրեշտակք Պաբսից գան ՚ի վերայ իմ՝, խափանել
Յիսուսի զանօրէնութիւնս նորա։

Զ· ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ ԳՈՒՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՆՑԻՑՆ
ՈՐ ԱՆՑԻՆ ՚Ի ՊԱՇԱՐԵԼ ԵՒ ՑԱՌՆՈՒԼ.
ԲԱԲԵԼՈՆ

Ա Ես ինչ աղդոզագոյն թուի ինձ ՚ի յորդորել զմիտս
յերկիւղածութեան առ կրօնս, և ՚ի խելամուտ առնել մե-
ծութեան այ, ոչ գայտատպատում գուշակութիւնս մարգա-
րէից· որովք ած և զպաշարումն և զառնուլ Յարեւե-
նի ըստ կարևոր մասանցն ծանոյց կանխաւ ՚ի վաղ ժա-
մանակաց։

Ա· Օ՛ջրք Պարսից և Պաբսից հանդերձեալ էին առ-
նուլ զԱբաբելն, որպես տեսաք վերագոյն, առաջնոր-
դեալ ՚ի Կիւրոսէ։

Ես. խէ. ԺԱ։ Բ· Հարուած և առնուլ քաղաքին հանդերձեալ էր
լինել յեղակարծ և անակնկալ· որպես ասէ, "Հասցէ
՚ի վերայ քո կորուստ՝ զոր ոչ գիտիցես, և խորխորատ՝
և անկցիս ՚ի նա· և եկեսցէ ՚ի վերայ քո Թշուառութիւն՝
և ոչ կարասցես սուրբ լինել, և եկեսցէ ՚ի վերայ քո
յանկարծակի կորուստ՝ և ոչ ծանիցիս։ ... Յո ըմբռնե-
Երեմ. Ծ. 24· սեսցիս, Յաբելն, և ոչ խնասցիս։

Գ· Յուսացաւ Յաբելն լինել անառիկ՝ Յիփրատայն
պարսպեալ, և խորխորատացաւ ՚ի խորայատակ գետոյն մեծի.
Ծաւ. 13։ այլ ասէ, "Քարացէ տեր զոր ինչ խօսեցաւ ՚ի վերայ
բնակչացն Յաբելոնի՝ բնակելոց առ ջուրբքն բազմօք"։
Օ՛ի եղև գեան այն նոցա ՚ի կորուստ, քանզի Կիւրոս
նորաստեղծ արուեստիս այլևս զջուրս գետոյն գարձու-
Ծաւ. 36։ ցեալ՝ եմուտ ՚ի քաղաք անգր բնդ ցամաք։ "Յերեկոյից
Ե. 38։ գծով նորա, և ցամաքեցուցից զաղբիւրս նորա։ ... Այս
Ծաւ. 39. 57։ ՚ի վերայ ջուրց նորա, և ամաչեացին"։

Դ· Յո առաւ քաղաքն գիւրիւր, յօր ցնծութիւն և ՚ի
ժամ ուրախութիւն՝ մինչ գեռ բնակիչքն ամ էին ՚ի գիւ-
ղերքուս· որպես ասէ, "Ի՞ Քերմն խշտեաց իւրեանց տաց
նոցա արշալիրս, և արբուցից գնոսա՝ զի Թմբրեսցին և
ննջեսցեն քուն յաւիտենից ... Ելքն տեր Տատուցանէ
նմա զՏատուցումն, և արբեցուսցէ արբեցութիւնք զզօրա-
վարս նորա։

Ես. իա. 3- Ե· Յո խուճապեցաւ Թագաւորն և տագնապք անչնա-
8։

բին պատաբէին զնա որպէս ասէ, „Լ ցաւ մեզ իմ դո-
ղուձիք, և երկունք կալան զիս իբրև զծնեղական. այլև
գեցայ զի մի լուայց, փութացայ զի մի տեսից։ Ուրա
իմ դարձաւ ի մելորուն ... անձն իմ եհաց ի դողուզ“։
Լաւ եղև տապնապս այս ի վերայ Նազտաւարայ յերևել
ձեռինն՝ որ գրեր ի վերայ բռնելոյ որմին գիր, զոր ոչ
ոք կարեաննոյն քաղդէացոց մեկնել կարացին կամ ըն-
թեռնուլ, մանաւանդ՝ իբրև եցոյց նմա Գաբրիէլ նշա-
նագրօքն զդատաստիսն մահուն՝ „Հատան, ասէ գիրն, Դան. է.
գոյիսք թագաւորին, և խորհուրդք նորա խռովեցուցա-
նէին զնա, և յօդք միջոց նորա լուծանէին, և ծունկքն
նորա զմիմեանս բաղխէին“։ Որպէս յայր և նման մի-
մեանց նկարագրէին մարգարէք երկոքեան զահ և զգո-
ղումն և զաւազակ թագաւորին, մին գուշակութիւք և
միւսն ականատես իրացն պատմիչք։ Պարտէին անշուշտ
նեղիլ լուսով գՅաղթելեալն նկատեր մարգարէին, զի
գՀետ նկարագրելոյ զաւազակ մեծ Նաղտաւարայ յարէ
վաղվաղակի. „Պատրաստեա սեղան, կեր, արբ“։ Օ՛ի Եսա. ԻԱ. ե.
ի խռովութենէ անտի և ի վհատութենէն մխիթարեցաք
զարձեալ թագաւորն փաղաքշելով իշխանացն, մանա-
ւանդ մեր նորա՝ որ անդադարն ի սկզբանէ տեսլեանն քա-
ջալերէր զնա, թէ „Մի՛ խռովեցայեն զբեղ խոր-
հուրդ քո, և գոյն երեսաց քոյ մի եղծցի“։ Լաւ խրա-
տեալ ի նոցանէ՝ պահանորդացն էտ հրամանն զգուշա-
նալ և զգացուցանել նմա զայր, և զարձաւ յառաջին
ուրախութենէն և ի խաղաղութիւն յորմէ խռովեցաւ եր-
կիւղիւն. „Պատրաստեա սեղան, կեր, արբ“։

Զ. Այլ իբրև մարդիկ իշխանաբար հրամանն տան՝ Եսթ. է.
հրամայէ և ած. „Քերք իշխանք, պատրաստեցէք վա-
հանս“. և ինքնին խրախուսէ զթագաւորս ի գին, մուա-
նել անդերկիւղ ի քաղաք անդր ընկղմեալ ի քուն յար-
բեցութենէ։

Է. Երկու ինչ կարևոր յայտնապատում առնէ Լայոյն՝
որ եղեն յառնուլ Բաբելոնի։ Մի՛ զի ոչ ոք ի բաղմու-
թենէ զօրացն, որովք լի էր քաղաքն, ընդդիմանայր
թշնամեաց յարքունիս կամ ի դիրկն կամ ի քաղա-
քամիջն անդ. այլ ամենեքին ի փախուստ գնային յոմ
և աձապարեր որ։ „Լաւ եղիցին, ասէ, ինացեալքն իբրև Եսա. ԺԴ.
գայծեանն փախուցեալ, և իբրև զոչխարս մոլորեալ“։ ԻԹ.
Լաւ միւս ևս՝ զի յոլովք ի զօրականաց անտի վարձկանք
էին և այլազգիք, և փախստեայ գնացին յիւրաքանչիւր
երկիր. որպէս ասէ. „Օ՛ի մարդն անդրէն ի ժողովուրդ

իւր գարձցի, և այլ իւրաքանչիւր յերկիր իւր հալածեսցի "։

Ը. Ցոդեալ գահակին կոտորած բնակչաց քաղաքին, ձերոյց և տղայոց և կանանց և որ յարգանդի մարդն էին մանկունք, որպէս ի բանս մարգարէիցն ասէ տեսաք, միանգամայն իսկ գնչանաւոր կատարած իրացն ասացից, զմահ արքային բաբելացւոց. զի գիահին նորա անձամբ եկաց, և անձէտ եղև ազգ նորա, զոր ՚ձ՚ձային գիրք ՀԲ. 19. 21։ ահեղ նկարագրէն ի խրատ Թագաւորացդ։ „Ո՛չ Թագաւորը ազգաց ննջեցին պատուով ... և գուբանկիս ի վերայ լերանց իբրև զմեռեալ գարնէլի ի մէջ բազում գիականց կոտորելոց սրով իջելոց ի գժոխս ... զի ապա կանեցեր զերկիր իմ, և գժոխոլուրդ իմ կոտորեցեր "։ Օ այսոսիկ ի վերայ Թագաւորին գատակիքեաւ, անկ ձանէ ապա և զղջաւակ նորա գահակից և հաղորդ հայրենի իշխանութեն, և գանկալութէն արքունի տանն, զորոյ մարգահաձոյք գՀանդերձեալ փառն պանծացուցանէին հանապազ, և զերծունդ Թագաւորացդ բազմոց ի նմանէ։ „Ո՛չ միասցես յաւիտեանս ժամանակաց զաւակ չար. պատրաստեա զորդիս քո ի սպանումն վասն մեղաց հարց իւրեանց, և մի յարիցեն և ժառանգեսցեն երկիրն։ ... Յարեայց ի վերայ նոցա, ասէ տէր Ա՛աբաւոթից, և կորուսից զանուանս նոցա և զզարմ և զզաւակ "։

ԳՕԴՈՒԱԾ Բ.

ՅԱՆ ԱՐՔԱՅ ԱՍՈՒՈՅ ԻՍԱՔԵԼՑՒ։

Յառաջիկայ է զսպառնալեացս մարգարէիցն գկատարումն տեսանել յամենարշտեալն Իսաքելցն, և զառաւմն քաղաքին։

Ի՚կատարել գայմմ գործ իրամանցն կատարեալ, պատրաստեցաւ ասպա Ա՚իւրոս ի գործ մեծի խորհրդոյն՝ զոր չէ եւս յայտնեալ էր ումեք։ Ի՚նամբ ՚ձեռ յաջողեցին նմա գայրս պատեհ, և ոչ լաւագունին մարթի էր ցանկալ։ Ի՚զգ եղև նմա զի տճն մեծ հասեալ է բաւելացեոց, յորում գգիշերն զնմ՚ ի գիներբուս շուայտին։ Դան. Ե. 1- Իսաղտասար արքայ առաւել քան զամենեսեան շուայլեալ 29։

'ի խրախուսանս, արաբ ընթերիս մեծամեծաց իւրոց և տիւ-
հանաց ։ Այլ երբեմն ընդ վինիս եմուտ՝ հրամայեաց բերել
զսպասս արծաթեայ և զոսկւոյ զոր եհան Հայրը նորա 'ի
տաճարին որ Յերուսաղէմ. և որպէս 'ի նախատինս ասէն
Ֆրէդիկ՝ ընդելին նոքօք թագաւորն և մեծամեծք իւր և
հարէմ նորա և կանայք ։ 'Ի նմին ժամու եղև ցասումն
այ 'ի վերայ ամենայնի տեառն և յանդիմանեաց նորա՝ յայ-
տնել նմա զփառս իւր, և ելին մատանեաւք ձեռին մարդոյ
և գրէին հանդէպ 'ի վերայ բեւեռացն որմոյ ։ Ցորմէ զար-
հուրեալ թագաւորն աղաղակեաց զօրուն՝ ածել զնոգս
և զքաղդէացս և զգէտս բաբելացւոց ։ զի ընթերցցին
զգիրն զայն և զմեկնութիւն նորա ցուցցեն նմա ։ Այլ ոչ
կարացին ընթեռնուել զայն և մեկնել՝ ըստ բանին Դանա-
եայ, որ գլուխարծ չարիան ասառնացեալ 'ի վերայ
բաբելացւոց՝ ասէ ։ „Ի՛նչ, կայ դու այժմ 'ի գիւմու- Եչ. 12-14.
թիս քո և 'ի բազում կախարդութիւն քում ... եթէ կա-
րասցե՛ս ինչ օգտել ... յարիցեն և ասիցեն զքեզ առ-
տեղադաբեր՝ որ նշմարեն զաստեղս երկնից. պատմեսցեն
քեզ վինչ գալոց է 'ի վերայ քո “ ։ Այլ զադացեալ զաղ-
մուկն մայր թագաւորին Վիտակրիս, տիկին բազմավաս-
տակ, եմուտ 'ի տաճար անդր խրախուսին, և քաջալերեաց
զնա, և խօսեցաւ ընդ նմա վասն Դանիէլի ։ քանզի գի-
տեր վինասուածն և զՀանճար նորա 'ի մեկնել զերազս.
զի յայմ դորձս աշխարհին ծառայեցուցեալ էր վնա ։

Յայնժամ հրամանն ետ արքայ և ածին առաջի նորա
զԴանիէլ և խօսեցաւ ընդ նմա Դանիէլ, համառձակու-
թիւբ իբրև յայ, և յիշեցոյց նմա զորպէս Նաբուքոդոնոսոր
հայր նորա զպատուհաս ամբարտաւանութեան ընկալաւ՝
զի զհզձանէր իշխանութիւնն՝ զՀաճոյս իւր որպէս օրէնս
կալեալ ։ „Ո՛րս կամէր՝ հարկանէր, զորս կամէր՝ սպա- Դան. Ե. 19-
նանէր, և զորս կամէր ինքն՝ բարձացուցանէր, և զորս 22-28.
կամէր ինքն՝ խոնարհեցուցանէր ։ Այլ դու, ասէ, որդի
նորա Նաղտասար ոչ խոնարհեցուցեր զսիրտ քո առա-
ջի այ, ուստի զայդ ամ գիտեիր. և ընդդէմ այ երկնից
հպարտացար, և զսպաս տան նորա բերին առաջի քո.
և դու և մեծամեծք քո, հարձք քո և կանայք քո ըմպէին
նոքօք գինի. և զաստուածս զոսկեղէնս և զարծաթեղէնս
և զպղինձս և զերկաթիս և զփայտեղէնս և զքարեղէնս,
որ ոչ տեսանեն և ոչ լսեն և ոչ իմանան, օրհնեիր. և
զայն՝ որոյ շունչ քո 'ի ձեռին նորա է և ամ ճանապարհք
քո, զնա ոչ փառաւորեցեր ։ Ի այն այսորիկ յերբեսաց
նորա առաքեցաւ թաթ ձեռինն, և զվիրդ զայդ գրեաց.

և այս ինչ է գիրդ՝ որ գրեալ է. մանկ, Թէկղեղ փա-
րէս [1], Լաւ այս է մեկնութիւն բանիդ. մանկ՝ չափեաց ա՞ծ
զԹագաւորութիւն քո, և վախճանեաց զնա. Թէկղէլ կըշ-
ռեցաւ ի կշռոս, և գտաւ պակասեալ. փարէս՝ բաժա-
նեցաւ Թագաւորութիւն քո, և տուաւ Պարսից և Պար-
սից։

Պարտ էր առաւել ևս տագնապել Թագաւորին ի
սպառնալեացն. այլ նա հեռաւոր զարիւն համարեալ,
և հնար խափանել զնոսա, ոչ կամեցաւ խռովել զը-
խրախուսն կռնականացն. և զհոդ կալեալ իրացն այ-
լում ժամանակի պահեալ, գործեալ բազմեցաւ ի սե-
ղան՝ շուայտել և արբենալ ցմեծ ժամս գիշերոյն։ Ալիւ-
րոսի տեղեկացեալ զամբոխ աղաղակի ոտնին յարբունխս
և ընդ քաղաքն, կացոյց զկնաս ի զօրացն ի տեղւոջ ընդ-
որ ի ներքս ի քաղաքն մտանէր գետն, և զայլս՝ ընդ որ
ելանէր գետն ի քաղաքին, և հրաման ետ նոցա՝ ընդ-
ցամաքել գետոյն գիտել գիշերային ի քաղաքն ընդ յա-
տակ նորա։ Լաւ զայմ պատուէրս տուեալ, և զսպացեալ
զՀետ իւր խրախուսեալ ի գիտն յատաջնորդս մարտին,
եբաց ընդ երեկս ղներսամ ի վայր և ի վեր կուսէ քաղա-
քին, և ընդ այնսոսիկ զջուրսն գնացուցեալ ցամաքեցոյց
զԱփրատ։ Լաւ գունդքն երկոքեան գրոհ ետուն ի քա-
ղաքն՝ որպէս պատուիրեաց նոցա Ալիւրոս. որոց ելին ա-
ջնորդք՝ միւսն Վոլբիաս, և միւսումն Վադատաս.
և ոչ ոք ընդդիմացաւ նոցա։ Օ՛ի որ խոստացան Ալիւ-
րոսի բանալ առաջի նորա զայմ գրունս, անբևդ[1]ձ ձե-
ռամբն առաջնորդեալ նմա՝ անհոգութիւ և անկարգու-
Թիւ քնակեաց քաղաքին կատարեաց զխոստումն իւր։ Օ՛ի
յուրախութիւն գիշերին ընկղմեալ ամենեքին ի գիներ-
բուս՝ ոչ փակեցին ընդդէմ Ալիւրոսի զդրունսն սղնձիս,
որ Տանէին ի գետոյն։ Լաւ մտին զօրքն անխափան ի
ներքս ի քաղաքամէջ անդր. և ըստ յառաջագոյն ժա-
մադրութեանն՝ Տանդիպեալ միմեանց գունդքն երկոքեան
յսպարանս Թագաւորին, յանդգնաստից ի վերայ անկան
պահապանացն, և Տարին սպանին զնոսա։ Իսկ որ ի
ներքս անդ էին՝ յարմարկ աղաղակին ընթացեալ, բացին
առաջի նոցա զդրունսն. և նոքա ի ներքս մտեալ Տամ-
պատակ՝ տիրեցին պալատանն. և զԹագաւորն, որ սուր
ի ձեռն գայր ընդ առաջ նոցա արամբք անկասուք՝ որ
առ նմա գտան յայնժամ օգնական նմա, սպանին. և

[1] Ո: Բոփմանն Թիւ, կշռեւ, և բաժին։

զարմն կոտորեցին անխնայ։ Եւ յաղթող եղեալ, գոհա- ԱՄԱՀՆԴ
ցան նմա զդիցն՝ զի հատուցին զդատաստան անօրէնու-
թեանն Թագաւորին։ Օ արմայեալ հիանամ աստ՝ սրպէս
Աստուածն կից և համաձայն ընդ ածային բանիցն խօսի
վասն անօրէնութեանն Թագաւորին։

Որոտեաց Աստուածն Աբելոնի բարձաւ ինքնակալութիւն քա- 3466. 538
բելացւոց, յետ երկերեսեան և տասն ամաց՝ յորմէ հետէ
հիմնեցոյց զայն Ներեսխա՝ յետ յիսուն ի վերայ անցեալ
աւերածոյ քաղաքին և տաճարին Երուսաղեմի, և խը-
րոխտ սկերձութեան աւերողին կործանեցաւ, որպէս սպառ-
նացան Եսայի, Երեմիա և Ամբակում։ Ինան ահաւորա-
գոյն այլ սպառնալիք և առաւել անահնկալ, այլ զայգ
նմին յայտնագոյն և հաստատագոյն գուշակեալ, և ամ-
մասամբքն անսխալ կատարեալ, բնաւարձ քանդումն
Աբաբելոնի, որ անժխտելի ճշմարտութեն հաւաստիք
կան մինչև ցայսօր։ Օ մեծի պատգամացս լուծմն ցու-
ցեալ, ապա մատեայդ՝ ի պատմել զանցս՝ որ անցին ի հետ
առաման քաղաքին։

ՑՕԴՈՒԱԾ Ջ.

Լրոյն սպառնալեաց մարգարէին՝ ի սպառ առեբածոյ Աբաբելոնի։

Օ սպառնալիս զայս յորով ուրեք գուժեն մարգարէք, այլ առաւել քան զամենեսեան Եսայի. զորոյ զրանն՝ ի ներբեւ ածի վերագոյն, զի ասէ կործանել Աբաբելոնի՝ ի հիմանց որպէս զԱդոմ և զԳոմոր զբաղաքսն ամպարշ տեալս, և ոչ ևս լինել նմա՝ ի բնակուտիւն, և ինալ աւեր բակ յաւիտեան, և մի արաբացւոց գրշակս պարզել անդ, և մի հովուաց դՀօտս իւրեանց տաւաղել. այլ գա զանաց վայրենեաց հանդչել՝ ի նմա և յուշկապարկաց, և եղիցի՝ ի տեղւոջ նորա խորխորատ տղմոյ, և հեւք նո- րա ծածկեսցին։ Օ այս վճիռ ետ Աստ՝ ի վերայ Աբաբելո- նի. և՝ ի հաստատուտիւն ճշմարտութեն երկնիցս օգնէ յոյժ քննել՝ եթէ արդեպս մի լսատ միտիւ ամ իրք մարգա- րէութեն կատարեցան։

Ա. Ասէ քան զամ բարձաւ շուք արքայական՝ ի Աբա- բելոնէ. քանզի Թագաւորք Պարսից Թողին զնա, և փա-

ԱՄ ԱՀ·ՆՒ ռաւորեցին զՔ օշ, զ|ակաատան, և զՊերսեպոլիս. և զամն ինչ նորա ինքեանք աւերեցին։

3880. 124 Բ. Յորում և Պլինիոս [1] աւանդէն, թէ մանեղա- նացիք յաջորդեալ զՊարս՝ ապատ արարին և նոքա զքաղաքն զայն, ոչ ինչ հոգացեալ նորոգել զնա և պայ- ծառացուցանել. և մերձ ի քաղաք անդր զԱելեւկիա կառուցին, զի լիցի նա ամայի և անբնակ։ Յայնժ հաւաս- տի քան զայս լրումն գուշակութեան թէ „Ել բնակեսցէ յաւիտեան“. ահա իշխանք նորա՝ նոքա հնարին մա- պատ առնել զնա։

Գ. Ա|ուամագամ ապա Թագաւորք Պարսից տիրեալ Խաբելեան, ի սպառ անմարդի զնա արարին զՏիսբոն կառուցեալ [2]։ Վասղն յորմէ հետէ ընդ անիծիւք ան- կաւ քաղաքն այն, ատելի իսն եղև և տեսարժն, և նոքա աւերել զնա ջանային. իբր ոչ համարձակ Թէնամուքն այլ անհնամ Թագեալ զնա. որով յայտնագոյն տեսանի ձեռն տեառն ի վերայ նոցա։

Ա|ուս. Գ. Ձետ ժամանակաց առաւել և աւերեալ, պա- Ա|ուտ.5օց. րիսպէն միայն մնացեալն. քանզի այսպէս զնմանէ ասէ Պաւ- սանիաս [3] ի գիրս Տիւռէ-Թէց յատնաստան. „Խաբելեան մեծն այն քան զամ քաղաքն՝ որ ընդ ամ երկիր կառու- ցան, այժմ ի պարիսպն միայն կայ“։

Ե. Ի|ադաւորք Պարսից տեսեալ զնա ամայի և աւե- րակ՝ արարին բակ երեից վայրենեաց, սեձափել անդ յորս. և լցան առ նա բանք մարգարէիցն լինել նմա ի բնակուի գազանաց, և ցիւք և վարազք, արջք և ընձ- առիւծք բնակեցին անդ փոխանակ մարդկան, և եղև Խաբելեան որջ ահարկու և ստուերախոյտ գազանաց։ Ա|այս և սուրբն Հերոնիմոս հաւաստարիմ առնէ յայս հաւատս ումեմիկ լուեալ, որ եր ազգաւ պարսիկ և ինքն հաւատացեալ „| ուաք, ասէ, յԵրամայուդ ումեմիկ, որ երբեմն միաբանակեաց գոլով այժմ միակեցական վարէ կեանս Հերմասաղէմ, որսոց Թագաւորացն տեղի լեալ

1 Ջաման մի քաղաքին Պարսք կործանեցին, և զման սպառեաց Ժամանակն և մանկտնացոյն Թողուալ զնա անհնամ, մանաւանդ յորմէ հետէ Աելեւկոս Նիկատոր կառոյց զԱելեւկիա յարեն Տիգրէ սի՝ երեքտարիւր ասպարիսաւ հեռի ի Բաբելոնէ։ Պլին. ժգ. 138։ Եղև անապատ և անմարդի Սե- լեւկիան՝ որ մերձ եր անդր, զոր վասն այնորիկ իսկ կառոյց Դե- կատոր ննուսուն (կամ քառասուն) տունաւ հեռի։ Պլին. ը. իզ։

2 Փոխանակ նորա զԱելեւկիա կառուցին և զՏիսբոն, որ էին քա- ղաքք հոյակապագ Պարսից։ Հերոն. ի ժգ. գլ. Եօ։

3 Պաուսանիաս Յարեհագիր եւնց յա- ուր Աիտտիկոսի խոյսէ՝ որ յոլոր տեսոյն Վաերիանոս։

զԱբաելեն, և զմայ ազգս գազանաց ի շրջապատ պարսպացն նորա փակեալ «։

2. Ասէ եր եթէ և պարիսպքն Աբաելեայ կային անկործան. սակայն և այնոքիկ տակաւ իրամնատեալ քայքայեցան, և բազմացն երեսից որսակամաց փախեան ի շրջափակէն, և մնացին անդ օձք և կարիճք յահաւոր կուեթի հնասիրացն՝ որ անդր երթային յայց։ Այս գեան Աբբատա, որ ընդ մէջ քաղաքին անցանէր, ոչ ևս գտեալ անցս ընդ այն՝ գարձոյց զգնացն ընդ այլ. մինչև յաւուրս Մանոգրեետայ և վտակ փոքրիկ, որ ընդ աւերակն գեռ ևս հոսէր, գադարեաց. և ոչ տեղի գտ ի վայր՝ հնասացն օգնեալ, ժողովեցան ջուրքն ի լիճ[1]։

Ե. Յայնմ հետէ ապականեցաւ ի սպառ Աբաելեն և որ շուրջ զնովաւ սահմանքն էին, և եղև ի սոսկումն և յարհաւիրս ամենեցուն.[2] մինչև ձարտարք յաշխարհս գիտաց ժամանակիս ոչ կարեն սահմանել զվայր բնակուեթ քաղաքին, որպէս ասէ. «Աբաելեայ գնա խորխորատ տղմոյ ի կորուստ»։

Զ. Ո այս ամ սպառնացեալ այ մարգարէիւք, և որպէս երդմամբ հաստատեալ զամս իւր հաւատով առնէ յաւետեն. «Ո որ օրինակ ասացի՝ այնպէս եղիցի, և որպէս խորհեալ եմ՝ այն կացցէ»։ Ապակոյն սպառնալիքս այս ոչ ի Աբաելեն միայն սահմանին, և ի բնակեալ ի նմա յիշխանս և ի ժողովուրդս, այլ տեղագրական զօրուեթէ է նմա, և ընդարձակագոյն յամ տիեզերս անէծքն այն և նզովք տարածանին առ ամ ամպարիշտս։ Վասն ահաւոր, որով որոշին յաւիտեան Աբաելեն և Երուսաղէմ ի միմեանց, անջրպետեսցէ ընդ սուրբս և ընդ ամ պարիշտս։ Ոչ նախագուշակ տուաք մարգարէիցն կացցեն յօր կատարման իւրեանց՝ որպէս գատաստիք յաւանդ ի եղեալ ի հաստատակաց դիւանի կրօնիցս։

Ը. Զայսպէս եթէ սպառնալեացս ի վերայ Աբաելեայ գրեթէ զամ առ ի լրութիւր մատենէն երկասիրողն ուրուն ի մարգարէուեան Հայոց, որ չէ ևս ի տիպ ածեալ է։

1 Երբեմն ընդ մէջ քաղաքին եր- քեան անցաներ, այլ արդ ջուրցն ընդ այլ շաւիղ գեռահասեալ, գոյզն ինչ վտակ ընդ աւերական հոսէ։ Թէոդոր. Լեւիտ. ե. 38։

2 Ոչ է արդ ապաւէն և ամայի, և ոչ աւերակք նորա կան։ Պ-։

ՅՕԹՈՒՆԱԾ Դ.

Որ ինչ չէիք առաքեալն Ադաբելին անդ։

Դ.Թագ. Ը. 193-208։

Ադիւրոս, որպէս վերոյ ասացի, մնեալ ի Ադաբելոն՝ հրամայեաց զօրացն կոտորել զամենեսեան որոց և պատահէսցէն, և ապրեցելոցն ածել ընկենուլ զղէնս իւրեանց՝ և փակել ի տունս իւրաքանչիւր։ Վասն որ ի միջ նաբերդին էին պահապանքն, ի վաղիւ անդր ընդ առաւօտն խմացեալ զառնուլ քաղաքին և զթագաւորին մահ, անձնատուր եղեն Ադիւրոսի. և խաղաղութիւն առանց պատերազմի կալաւ զքաղաքն Հզօր ընդ տիեզերս։ Ադևիսակ ապա գոհունիւնս դիցն մատուցեալ վասն յաղթութեանն՝ ժողովեաց զամ զօրավարս, և առաջի ամենեցուն գովեաց զարութեանն քաջութեանն նոցա, զնախանձ և զսէր նոցա առ ինքն, և բաշխեաց պարգեւս ամ զօրաւ կանին։ Յօսեցաւ ընդ նոսա և ասէ. Յաղթութեան, զոր ստացայք, կորիցէ ընդ հուպ՝ եթէ ոչ ի նոյն յառաջին առաքինութիւնդ կայցէք. զեղծանի յաղթութիւն որ չետ յաղթութենէն դատարկ և ըստ անձին դիւրն կեաց. և է ամենի մեծ յաղթող լինել զինուք քաջութեամբ, և նիւթոն յախտից։ Ձարկ է առ հաստատուն ունելոյ զփառս այլազգ վարել աստ ի Ադաբելոն, և մի որպէս ի հայրեն նիս մեր. և ի նոյն ըղդիս իւրաքանչիւր քաջ դաստիարակել ամ ինամբք։ Օ ի օր ըստ օրէ զարգասցին մանկունք օրինակաւ բարւոյն յառաքինութենէն, և դժուարին է նոցա ի վատթարութենէ հատանել՝ եթէ զառաքինութենէ եթ յորդորմունս տեսցեն ի մեզ, և լսեցեն հանապազօր ի պատշաճիցն գեղեցիկ կրթութենէ։

Այս կացոյց Ադիւրոս արս քաջս, ըստ իւրաքանչիւր վաստակոց, իշխանս և վերակացուս ի տեսչութենէ իւրաց աշխարհին. այլ զօրավարս և կուսակալս և սպասաւորս արքունի և դեսպանս ինքն ընտրեր, պահեալ անձին զգործն զայն իբրև պարտս թագաւորի. զի յայս իսկ հանատեալ գիտեր զիարս անուանն, գյաջողութենէ գործոց, և զիաղաղութենէ աշխարհին և զբարօրութենէն։ Օ առն առն զքնութենէ և զքաջութենէ ուսեալ կարգեր իւրաքանչիւր գործ անկաւոր՝ զի լցեն ամենեքեան պիտանի ի բա

բին հասարակաց . և այնու կարգօք վարեր զաշխարհն ,
զի ամենեքին ընդ միմեանս կցորդեալ և աղխաղեալ՝
օգնեսցին իրերօք : Ի՝անզի իւրաքանչիւր զիւրոյ պաշ
տամանն զհամար առագադունին տուեալ մինչ ի թա
գաւոր անգր ընդ կարգս իշխանութեանց իւրեանց վերացեալ
հասանէին . որով ընդ ամենեսեան նոցա և թագաւորն գոր
ծէր՝ որպէս հոգի ի մարմնի եղեալ յաշխարհին . և այ
նու դիւրութիւք վարեալ զաշխարհ՝ որպէս տանուտէրք
տնտեսի զտուն : Օ կնի ժամանակաց նախարարս ի վե
րայ նուաճելոց գաւառացն կացուցեալ, զստորակարգ ը. 229.
իշխանս քաղաքաց և զպետս զօրաց զորս կարգէր ի
պահպանութիւն տեղեացն՝ ընդ իւրով միայն հրամա
նաւն ունէր . զի եթէ իւրոխտացեալ ոք ի նոցանէ ընդ
բարձր աւագութեամն պատիւ կամ ընդ մեծութիւնս՝
զեղծանիցի իշխանութիւնն, իսկն յաշխարհի անդ անկրա
ւութիւն նորա վկայք և դատախազք : Ի՝ան յամ իրաց
զգոյշ էր ի հաւատալոյ միւսմ ումեք մինչեւիշխան տե
րութիւն . քանզի գիտէր թէ հարկ է սորինանալ ընդ հակ՝
նեբելոնիսնա խանարհեցուցանել զամենեսեան ընդ իւրև:
Կարգս գեղեցիկս իրաց պատերազմի և արբունի գան
ձուց և յատեանս գատաստանացն էր : Ի՝ին նմա լուտեաք 200-225.
յամ գաւառս՝ որք վկայեալք լաւութիք : Օ որս քաջս
և զվատահաւատս մեծապարգև մեծարէր : Ի՝ռաւել
յոյժ լաւ համարէր զգթութիւն քան զքաջութիւն ի պատե
րազմի . զի սա կործանումն և աւեր սովոր է ածել աղ
գաց և ազանց , իսկ ամ ուրեք բարերար է գթութիւն և
փրկաւէտ : Կ՝իտէր զի զբարս հրաշանգէն օրինք , այլ
զի առաւել պարտ է թագաւորի օրինակաւ տալ օրէնս
կենդանիս . և անկարող զնա համարէր ի հրամայել՝ որ
ոչ քան զՀնազանդեալն առաւել իւրէ գիտութիք և ա
ռաքինութիք : Ի՝չ զի ոչ է հնար մեծարոյ լինել առաջի
իշխանաց, և որ շուրջ զնովաւ են աւագանւոյն՝ առանց
մեծարելոյ զնոսա, ապա և մի ինչ առնել կամ խօսել ա
ռաջի նոցա օտար ի համեստութենէ և ի պարկեշտու
թենէ :

Օ առատաձեռնութիք բնիկ առաքինութիք համարէր
թագաւորի , և զփարթամութիք ի բաշխել միայն այլոց
մեծ և բերկրական . և ասէր ցիւրսն յաճախ , են ինձ
մեծութիք բազումք , ոչ ժխտեմ. նա՝ կամիմ զի և գիտասց
ցեն այլք : Օ ի որ ինչ իմ է՝ այն և ձեր է , և ոչ յիմ
պէտս միայն , կամ՝ ի վայելս զայնոսիկ ժողովեալ եմ, զի
զայս թէպէտ և կամիցիմ առնել՝ ոչ կարեմ , այլ ի

վարձս վաստակաւորաց, յօգուտ աշխարհին և յօգնութ կարօտելոցն։

Արեսոսի երբեմն խրատ տուեալ նման, թէ գուցէ ի քա-զում առատաձեռնութենէդ հասցէ չբաւարել քեզ՝ որ մեծահարուստ քան զամ թագաւորս երկրի կարող ես լինել և կուտել զանձս բազումս, ասէ ցնա Կիւրոս. Ընչասէր ծուխ քեզ թէ կարկեցեմ մխերել զանձս։ Ընդ Արեսոս ասաց նման զանձս բազմանել յոյժ։ Յայնժամ գրեաց Կիւրոս առ մեծամեծս դրան իւրոյ՝ թէ արծաթոյ պէտք են ինձ. և վաղվաղակի առաքեցին նմա զանձս առատս քան զոր Արեսոս ասաց։ Ընդ Կիւրոս ա-սէ. ահաւասիկ զանձք իմ, ահա արկեալք յորս զանձ ձեզ պահին ինձ մեծութենէք, ի սիրտ և ի սէր ժողովրդեան իմոյ։ Այրին աղագաւ և կարի մեծ համարէր զա-ռատաձեռնութեն. այլ առաւել ևս քան զայն զբարու-թեն, զքաղցրութեն և զմարդասիրութեն՝ առ ինքն ար-կանելոյ զսիրտ ժողովրդեանն և սիրելի լինել նոցա, զի այս իսկ է թագաւորել։ Օ՛ի ըստ յաճախաւէ մեծուեցն առաւելուլ քան զայլս առատաձեռնութիւնք՝ փոքր են զարմանք, քան յեզամակաւ ինն խոնարհել յանձուդ և հաւասարել ժողովրդեան։

Այլ քան զամ ինչ մեծագոչ պատուէր զբարեպաշ-տութեն առ գիս և զկրօնասէր երկիւղածութեն։ Այնմ երբ ի նուաճել զԱբելոն, երբ հանդարտեաց ի հո-գոց, նախ զամ խնամ կալաւ։ Ամրոց կացոյց երգել ա-ռաւօտուց գոհութեն գիցն, և զոմն մատուցանել. որ և յապա ժամանակս պահեցաւ կարգն այն։

Սովորութ է ժողովրդոց ըստ օրինակի և ըստ հաճոյից թագաւորացն վարել, և այն օրինք են և կանոնք յօժա-րութեն նոցա։ Տեսեալ Պարսից եթէ զամ ինչ յաջողէ Կիւրոսի՝ համարեցան ի միտս իւրեանց ի նոյն յաջողու-թեն բարեպաշտութեք ըստ նմին նմանութեն վայելել, մա-նաւանդ զի նովաւ և հաճոյ և սիրելի լինելին նմա։ Ա-րդարև լինէր Կիւրոս ընդ այսպիսի միտս նոցա, քանզի գի-տէր եթէ որ երկիւղածն է և կրօնասէրն նա և հաւատա-րիմ առ թագաւորսն է, և զանձն փոխանակէ ի վերայ նոցա և բարեաց աշխարհին։ Վարդեցիկ խնամոք և զգա-մանալի, այլ ի ձմարիտ կրօնս ստոյգ և հաստատուն։

Կիւրոսի կամեցեալ բնակուել իւր հաստատել ի Բա-բելոն քաղաք հզօր, այր բնակիչք կեզակարծք էին նմա, խորհեցաւ առաւել ևս զգոյշ լինել անձին։ Ել զոք ի բաղանիս և ի ժամ ձաշոյ և քնոյ, յորս վտանգք բա-

զուսք են դաւաճանութեաւ, թողոյր ընդ իւր՝ բայց միայն յորս վստահ էր և անկասկած։ Ի՞նչ այս ընդբերնիս ձանձրացուցանէ վարկաւ, որը զի անկին են և անզուսակ և ոչ դուն նոցա ընտանիք, և զի զարձեալ ցածագոյն են և անբարդ ի բան՝ հաւատարմիք առ տէրս իւրեանց սովոր են լինել, յորս է ամ բարեբաղդութեի իւրեանց և փառք և մեծութեիք։ Վայն իբր ի նոսա ապաստան արար ինամ դործ տանն աբբայնի. և կանխակալ սովորութեին այն՝ ընդ հանուր այնուհետեւ արհեստ տարածեցաւ։

Ընդ ասա, որպէս յայտ է, Հանց սովորութեաւ այս ի կայսերս Հռոմայ՝ առ որոյք հզօր կին յայժ ներբերնիք։ Վանգի տեսանելով զնոսա իշխանին վերաժխոյիս և քաջս ի պահպանութեի իւր, հարկաւ վստահեր ի նոսա՝ և զերս աշխարհին և զանձն և իւր հաւատայր ի նոսա։ Այդ խորագէտ աւազանին այն, յօգուտ արիական զգաստ հնութեի, յորժամ Թագաւորք ազատեալք ի ծանրաբեռն հոգոց իբրև սոսկականք ունայք ընդ պաշտօնեայսն վա րելին, կերպարանօք հաւատարմութեաւ նուաձեալ զսիրտս նոցա՝ համարձակեցան յաքքունեսն և զօրացան, կալան զառաջնորդութեի և գյանձանձանս իրաց աշխարհին, և ինքնիշխանաբար բարձ և պատիւ այլոց ընդհեին զրաւեալ շինքեանս զգերագահ իշխանութեի։

Ի յԱ ինքնակալք քաջք, որպիսի որ և Ի՞նքեանդրոս Աւերեցոյն էր, անարգելին զնոսա իբրև շահատեցս իւրեանց և Թշնամիս հաստարակաց ի բան, որը հնարելին պարանել զսիրտ իշխանին, և Թագուցանել ի նմանէ զկատութեի իրաց, մերժել ի նմանէ զարս քաջս վաստակաւորս, և սահմանել զնա յանձուկ չջնարակ երից կամ չորից արանց պաշտօնեից՝ որ տիրելին ի վերայ նորա և ծառայեցուցանելին զնա իւրեանց։

Ալիբոսի զինի իրս աշխարհին ուղղեալ և յարդարեալ կամեցաւ ապա ցուցանել զնաւս իւր առաջի ժողովրդեանն՝ զոր ստացաւ, և առաջի իւրոցն. և տօն մեծ դիցս արար՝ երիվարօք և բաղում երեւելի ապաստք մինչև ի բագինս անդր նոցա երթեալ՝ զոհ մատուցանել։ Օ՞նմ շուք և զսիրձութեան եղոյց ի հանդիսի անդ ի զարմացուցանել ընդ իւր զամբոխն։ Օ՞ն այն առաջին նաւագ խորհեցաւ, ասել մատենագրին, պատկառելի զանձն ընծայեցուցանել՝ ի պայծառութեի առաքինութեն յաւելեալ շուք և ապաս երեւելի, որ զանձն զօշտեն և զսիրտս կախարդեալ ձգէն առ իւրեանս։ Այնէսոց առ ինքն Ալիբոս զիշխանս Պարսից և զնիզակակից ազգաց,

և ետ պարգևս իւրաքանչիւր զգեստս ՚ի ձև Պարսից պատմուճանաց պճղնաւոր երփնագոյն գեղազանեալս՝ ուր կիՀուռ մանեալ արծաթով։ Այս այլ պատմուճանս ՚ի պարգև ստոյգակայից իշխանացն ետ նոցա՝ ոչ իբրև ըղ-նոցայն փառաւորս։ Յայնմ ժամանակի զձև Պարսից զգեցան Պարսք, և ըստ օրինակի նոցա զոյն ծարրելին և զգեստն շղարելին՝ վի ազազեղք և կարմրայտք տեսա-ղաց երևեսցին։

Ի հասանել աւուր հանդիսին՝ ընդ ծագել տուընջեան եկին ժողովեցան ամենեքին առ արքայ։ Օ օրակարք չը-բեքշազար Թիխնապահք՝ ըղբք ըղբք կարդեցան կացին յանդիման պալատանն, և այլք երկու հազար աստի և անտի։ Ընդ և հեծելազօրն Պարսից յաջմէ, և նիզա-կակցացն ՚ի ձախմէ կային, և կառք սպառազինք կէս աստի և կէս անտի։ Ընդ բանալ դրանց ապարանիցն ելանէին նախ բազումք ընտրելոց գեղեցիկ զուարակաց ըղբք ըղբք, զորս պատուիրանաւ մեծուցն ածէին ՚ի զոհ Աբամազդայ և այլոց դից։ Օ հետ նոցա գնային երիս-վաքք ՚ի զոհ արեգական. և ապա կառք սպիտակ ծաղ-կազարդեալ՝ ոսկիազօծ առեղաւ՝ ՚ի նուէր Աբամազդայ, և զհետ նորա այլ կառք արեգական, հաւասարք երկո-քեան ՚ի գոյն և ՚ի զարդ։ Այս ապա դարձեալ այլ կառք, և կաղմած երիվարաց նորա ՚ի գոյն ծիրանի. և յետոյ նորա բարձեալ տանիկին արք հուր սուրբ ՚ի վառարան մեծ։ Օ հետ ամենեցուն երթայր Կիւրոս ՚ի հառս, խոյր երկայնաձև ՚ի գլուխս նորա և պսակ գնովաս կամ գլխա-պատ արքունի, զգեցեալ պատմուճան ծիրանի սպիտա-կածաղիկ՝ որ Թագաւորացն պահեալ էր, և օձոց գար-ձեալ ծիրանի լայն վիւրև արկեալ։ այլ ձեաք նորա մերկ էին, և ոչ էր ածեալ ձեռս։ Յակառ ինչ ՚ի խոնարհ նստեր առ նմա և վինակիրն իւր, այր բարձրահասակ՝ որ առ նովաւ նկուն երևէր։ Ընդ սեասնել գնա՝ խո-նարհէին ամենեքեան, և օրինակաւ ազանց կարգելոց ՚ի խուռն ամբոխին, կամ ինքեանորդորդք յահաւորս Թիկնէ հանդիսին և ՚ի մեծաշուք պայծառութենէ արքունի փառացն՝ երկիր պագանէին նմա, որում չևևս ոք ՚ի Պարսից զայն սպաս արարեալ էր։

Ընդ ելս կառացն Կիւրոսի՝ չորեքհազար զօրքն Թի-կնապահք յառաջ խաղացին, և երկու այլ հազարքն երկ-ուսուկք կառացն երթային։ Նիզեքնիկք և իշխանք մե-ծամեծք սպասաւորք արքունեացն երեքարիւրք՝ ՚ի զգեստս պայծառս, նիզակ ՚ի ձեռին, հեծեալք յերիվարս ահի-

պարանոցս՝ կից զՀետ երթային կառացն, և նժդգռ առ պատանիսկս ամենակազմն զՀետ նոցա ածէին ասլք՝ ոսկեսարս և ոսկիասանձս։ Յետոյ նոցա գայր և Հեծելազօրն պարսիկ բիւրք չորք՝ի չորս գումարտակս. և զկնի նոցա Հեծեալք Պարաց և ազգաց դաշնաւորաց. զՀետ ամենեցուն կառք գերանդազինք չորք չորք զՀետ միմեանց։

Իբրև Տասին յանդաստանս դիցն, զոհ մատուցին Պռամադդայ՝ աղջակիզեալ զղուարական, և զերիվարս՝ աբեգական։ Օ ենին և Վեմէորի զոհս բազումս՝ ըստ մեզուցն Հրամանի, և կիսադիցն խնամակալուաց Պսորս[1]։ Խորհեցաւ ապա Կիւրոս Հանդիստ և ամփուսին առնել զօրացն յետ ահաւոր և լուրջ Հանդիպին, և ձէ ընթացս Հրամայեաց առնել և կառարշաւս։ Այլ զի էր տեղի ասպարիզին լայն և ընդարձակ՝ Հեռի իբրև Հինգ վտաւանաւ մրցանաւս եդ այլ և այլս ըստ իւրաքանչիւր ազգաց։ Օ պարսիցն մրցանակ ինքն կալաւ՝ի ձիընթացս, զի ոչ ոք քան զնա կորովի ձիավարէր։ Կրնպակս և կառացն արշաւաձանդէս՝ ուրոյն իւրաքանչիւր ազգացն կատարեցաւ։ Այսօրուընթաց այս ձիընթացից ընդ բազում ժամանակս յերկարաձգեցաւ ասպա առ Պարսս, Թէպէտ և զոհս ոչ միշտ զենուին՝ի նոսա։ Ի կատարած Հանդիսիցն զարձան ասպա նովին կարգաւք՝ի քաղաքն։

Յետ աւուրց ինչ արար Կիւրոս, իբրև՝ի Հանդէս 210-224։
յաղթանակի ձիավարական մրցանացն, ընծրխս մեծ իշխանացն Պարսից և Պարաց և այլոց ազգաց, որոց այնպիսի ինչ պերճ և մեծաժախս կոչունս ոչ էր տեսեալ։ Այլ պարգեւս մեծամեծս յետ ընթրեացն ետ իւրաքանչիւրոց նոցա. և զարձան՝ի նմանէ լի ուրախութիւ, զարմացեալք եւթատագէտ սրտիւ։ Այլ ինքնակալն Կիւրոս ընդ այմ արեալ էր, ընդ որով էին ազգք բազումք, ոչ ինչ նուաստութեի համարեցաւ յօդարկ երթալ նոցա մինչև՝ի դուռն բնակութեի իւրոյ. քանզի այս սովորութեի էր այնր ժամանակի մարդկանն՝ վաւաշութեի ընդ ցածուԹեան կցորդել։

1 Ջաւրեսպանեան բազմ. սրբ. Պսորս խնդիր նախկին տպագրութ.։

ԱՄԱՀՆ.

ՊՐԱԿ ԵՐԲՈՐԴ

Ի նոսաձելոյ Խաբելէնի դնել ցմահ Կիւրոսի։

Կիւրոս նուաձումէ Խաբելոնի կալեալ զնմ արևելս, ոչ յետ այսորիկ իբրև զայլս բազումս յաշխարհակալաց նահանգաց զիաուս յալեցումէն իւրոց՝ զախտն գրգռելով, որպէս օրէնն համարեալ զհետ տաժանակիր վաստակ կոց հեղուլ զանձն ի հեշտութէն. այլ խոհական և բազմատակ կենօքն, որովք ստացաւ անուն բարի, նոյնպէս և կալաւ զսմն հաստատուն ի պատշաճիչ իշխանութէն ոչ խոտորեալ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Երթալ Կիւրոսի ի Պարս, և գառնալ անդրէն, և սահմանել ի Խաբելէն զերկրի գահերձան պետութեանն. և յաղագս իշխանութեան Դանիէլի։

Դան. կէս. 1. Իբրև յաջողեցաւ իշխանութէն Խաբելոնի ի ձեռս Կիւրոսի, չորս ընդ աշխարհն Պարսից ի Պարս առ Կիւրոսայ քեռի իւր պատարագօք մեծամեծօք՝ տեսանել զողջոյն նորա, և ասէ. Ալպարանք շքեղ և ամենակազմ են ինձ ի Խաբելոն, յորժամ կամեսցիս՝ եկեսջիզ անդր առ իս իբրև ի բնիկ քաղաք քո։ Այլ ցորչափ ժամանակս եկեաց Կիւրոսայ՝ հաւատարուեցաւ ընդ նմա ուներ Կիւրոս զիշխանութէն աշխարհին, թէպէտ և քաջութէ իւրով ստացեալ էր զայն. նա և զառաջին պատուին նմա 3466. 538 մատուցանէր։ Օ՜ Կիւրոսայ զոյս սուրբ գիրքս Պարեհ Պարս անուանեն. առ սորա գերկեամ մի Թագաւորութիւն բազում յայտնութէնք եղեն Պանիէլի, որպէս հանդերձեալ եմ ասել։ Ի դառնալ Կիւրոսի յաշխարհին Պարսից Թուի ընդ իւր ածեալ զՊարեհ Կիւրոսայ ի Խաբելոն։

Դան. կէս. 1-29. Իբրև հասին նոքա անդր՝ միաբան խորհրդով սահմանեցին կարգս միահեծան տէրութէն աշխարհին, բաժա-

նեալ զայն ի Տարեւր և ի քաղաս նահանգս . և ի սկսա Դասք. Կ.Ե.
յաձախս տարաբերից արբունի հրամանաց՝ կացոյց Կիւ- 212:
րոս Հանգոյց ի Հանդուցէ օձեանս՝ յորս սուրհանդակք
կամ նամակատարք անդուլ ընթացուցք՝ գոցէն երկիսքս
պատրաստական . և երագուն ձեամբ բազմանալ երեւելիք
պատգամացն լինելին : Այս նախարարս ի վերայ գաւա-
ռացն կացուցին զպետսն՝ որ զօրավիգն էին ի պատե-
բազմի և վաստակաւորք : Այս ի վերայ նոցա երիս հրա-
մանատարս , որք յարբունեան էին, տալ նախարարացն
հրամանս և առնուլ ի նոցանէ համարս : Յերիսն ի նո-
սա էր իշխանութեամբ մեծ , և հոգ ամ աշխարհին . և մի ի
նոցանէ էր Վանիւել , և առաջին ի նոսա վասն բազմա-
հանճար իմաստութեանն՝ որով լցեալ ամ արեւելս հռչա-
կեալ էր , մանաւանդ յանգիտից անցելոց յընթերից Ղաղ
ատասրայ , և վասն երիցս եւեթ հասանելոյ և բազմամանաւ
կեայ հմտութեամբ ի գործս աշխարհին . քանզի ամք վաթ-
սուն և ութ անցեալ էին՝ յորմէ հետէ եկայ ի վերայ
ամ իշխանացն բաբելացւոց՝ ի չորրորդ ամի Թագաւո-
րութեան Աքաբուզոնոսորայ :

Այս նախանձեցան աւագանիքն ընդ փառս Վանիւելի ,
քանզի նա յամ Թագաւորութեանն երկրորդ էր յետ աք-
քայի և միաբանեցին կորուսանել զնա : Այս ոչ գտեալ
ուստեք պատճառս գնմանէ՝ բայց եթէ յօրէնսն այ իւ-
րոյ , բռնադատեցին զԹագաւորն՝ հաստատել հրամանն
զի եթէ իշխեսցէ ոք խնդրել խնդրուածս յամ աստու-
ծոյ կամ ի մարդոյ , բայց միայն յարքայէ , մինչև ցերե-
սուն օր՝ անկայն ի գուբն առիւծուց : Այս գտեալ զՎա-
նիւել զի ի Հանապազորդ աղօթեան կայր ընդդէմ Երու-
սաղէմի , ածին ընկեցին զնա ի գուբն : Այլ երից ամ
զբերանս առիւծուցն , և Հանուս Վանիւել ողջ ի գոմ
անտի , և արքն չարախօսսը ընկեցան ի գուբն , և ծախե-
ցան յառիւծուցն : Այս յայնմ հետէ առաւել յառնա-
խաց հռչակ Համբաւոյն Վանիւելի :

Ի վերջ կոյս տարւոյն , որ հանդերձ առաջին ամ Դան. Թ.
Վարեհի կոչեցելոյ Աշար , խելամուտ եղեւ Վանիւել 1-27:
Թուոյ ամաց կատարածի գերութեանն Յուդայ զոր Երե-
միայի մարգարէին ցուցեալ էր , և եկայ յաղօթս առ
տէր ամ պահօք և խորգով՝ յիշել զժողովուրդ իւր ,
տեսանել զաւերակսն Երուսաղէմի , և գԹուէք հարել
ի քաղաքն՝ յորոյ վերայ կոչեցեալ էր անուն տոքա , և
ի սրբութեանն որ ի նմա : Այս երեւեցաւ նմա Վաբրիէլ ,
և հաւաստի արար ոչ միայն զազատութեն որդւոցն Յու-

դայ ի ժամանակեայ գերութենէն, այլ և զհրաշափառ ազատութէն ազգի մարդկան ի ծառայութէ մեղաց՝ յետ եօթանասնից եօթներորդաց յելից անտի հրամանին վասն նորոգութեան Երուսաղէմի. այսինքն է յետ չորեքարիւր և հինսուն ամաց. քանզի օր ընդ տարւոյ հաշմարեալ, որպէս է ուրեք ուրեք սովորութէն գրոց, եօթանասունն եօթնեակք՝ գումարին ի չորեքարիւր և հինսուն։

Դան. կի։ 33։ Կիւրոս իբրև գաՀճաւ ի Բաբելոն՝ հրամանն ետ նմա զօրացոյց գալ ժողովել անդր։ Որոց հանդէս արարեալ եգիտ բիւրս երկոտասան հեծելոց, երկու հազար գերանդազէն կառս, և վաթսուն բիւր հետեւակ։ Եւ ի նոցանէ նստուցեալ զօրս ի պատեհ տեղիս ի պահպանութէի աշխարհին, չու արար այլովքն Ասորիս. և ուղեցաց անդ զնամ, և նուաճեաց զաշխարհն լրիւ իւրով մինչև ցծովն Լաբմիր, և մինչև ի սահմանս եթովպացւոց։ Ի միջի ասո, որպէս կարծեմ, պատահէ ընկենուլ Գանիէլի ի գուբ առիւծուցն և ապրել աքանչելեօք, որպէս ահա ասացաւ։ Ասա ի միջոցի կարծեմ և զդաբեհեան հրաւիրակաւոր ոսկի գրամոցն հատանել՝ որ յանուն Գարեհի կոչեցան, և ընդ դարս բազումս առ գեղեցկութենէն և ազնուութէի քան զայլ ամ դրամս յարգունք էին ընդ ամ արևելս։

ԳՕԴՈՒԱԾ Բ.

Աիէրքն նորոյ ենթականալոցն՝ գիտելոցն Աստուծ և Պաբելոյ։ Հաւանմանալ հրովարտակին Կիւրոսի. և յաղագս մարգարէութեանն Գանիէլի։

Ոգի Պարսից և գԱստուած Թագաւորութէ զսկիզբն քնաքսօսելով՝ ասա գտանեմ զայն, յորում ժամանակի յերկաբանչիւրոցն իշխանութենէն միապետութէի նոցա եկաց։ Եւ ժամանակ Թագաւորութէ նոցա՝ ի Կիւրոսէ, որ առաջին Թագաւոր եկաց, մինչև ի Գարեհ Կոդոմանոս՝ զոր Աղեքսանդր միծն նուաճեաց, ամք երկերիւր և վեց, յերեք հազար չորեքարիւր վաթսուն և ութ Թուականութէ աշխարհի մինչև յերեք հազար վեց հարիւր եօթանասուն և ի չորս։

3468 · 536

Եւ Կիւրոս Պարսից թագաւորեալ ամս եր[եսուն]. և յետ Կամբիւսեայ մեռանելոյ ի Պարսս դարձաւ Կիւրոս ի Բաբելոն, և միահեծան կալաւ զաշխարհն։ Ո ժամանակ թագաւորութեան Կիւրոսի այլ ոչ այլազգ հաշուէն. ոմանց յամս երեսուն ժողովեալ՝ սկիզբն յառաջին տուեալ նորա առնելով, յորում ժամանակի զօրավարութեամբ տղաւ յաշխարհն Պարսից յօթնեքի Կիւրոսեայ. և այլոց զումարեալ զայն յետ ամ՝ յորս յետ մահուն Կիւրոսեայ և Կամբիւսեայ միաւ պետեաց։

ԿԻՒՐՈՍ ա. Ի[ՒՐ].

Ի սկզբան եօթն ամաց ինքնակալութեանն նորա լցան եօթանասուն ամք գերութեան Իսրայէլ ի Բաբելոն. և ետան զհրովարտակն հռչակաւոր զդարձի գերւոյն. ուանց իրիք յերկուանալոյ՝ գերեդարձն այն օգնականութ[ի]ւ և աղերսանօքն Դանիելի յայրղեաց. քանզի յայժ մեծասոյ եր նա և պատուական ի գրան արքունի. Որ ած ի յորդոր մեծի ինքնին յայժ հաւանագոյն թուի թէ և զմարդարէութե[ի]ն Երայեայ եղոյց արքայի, որ առաւել քան երկերիւր ամաւ յառաջ քան զծնունդ նորա՝ յա նուանէ գուշակէր զնա սահմանեալ յայ տիեզերակալ հզօր, ի նուաճել ընդ տերութե[ի]ն իւրով ազգս բազումս, և լինել ազատարար Երեկին հրամանն տուեալ նոցա շինել վերստին զտաճարն, և ունել անդրէն զՀրաւտակեմ և զնիւթ աշխարհն իւրեանց զհրեաստան։ Կարաւղ ինձ թուի զհրովարտակն զայն ածել բովանդակել այսր, զսանդագոյնն ի գործս Կիւրոսի, որ և զայլ գերաշխարհիկ առաքինութեան նորա, և զմիահեծ յաջողութեան և զիշաւս յաղթութե[ի]ն յուշանել ածապարգև ձերս ի նմա եղեալ։

Ա. Եզր. ա։

«Հառաջնում ամին Կիւրոսի արքայի Պարսից, ի կատարել բանին տեառն ի բերանոյ Երեմիայի մարգարէի, զարթոյց տէր զոգին Կիւրոսի թագաւորին Պարսից, և ետ հրաման պատուիրանի յամ թագաւորութե[ի]ն իւրում, և գրեաց առ ամենեսեան օրինակ զայս։ Այսպէս ասէ Կիւրոս թագաւոր Պարսից. զամ թագաւորութե[ի]ն երկրի ետ ինձ տէր ած երկնից, և նա հրամայեաց ինձ առնել և շինել նմա տաճար Երուսաղէմ հրէաստանի։ Ո ոք և իցէ ի ձեզ յամ ժողովրդեան

տեառն, ընդ որում հիւծ նորա ընդ նմա, ելեալ Յերուսաղէմ հրեաստանի և չհեսցէ զառն տեառն ի խորանէն. և ինքն ած որ բնակեալ է Յերուսաղէմ՝ եղիցի ընդ նմա, և նա զնա պատրաստութեի իւր առցէ ընդ իւր, և տարցի ի տեղին յոր՝ ուր ինքն բնակեսցէ. և առցէ այր ընդ իւր զնա կազմած իւր՝ որ ինչ և իցէ պահաթեղէնն և ոսկեղէնն, և զայլ կահ և զանաստն հանդերձ ընկերօքն իւրեանց առցէն ընդ իւրեանս ի պատրաստութեի տաճարին տեառն ի Յերուսաղէմ »։ Եւ ես կիւրոս ի ձեռս Հրեից զնա սպաս և զկահ տաճարին տեառն՝ զոր առ Նաբուքոդոնոսոր Յերուսաղէմ, և եդ ի պահ ի տուն աստուածոց իւրոց։ Եւ կիւրոս ինչ ելիս Հրեայք ի Բաբելոնէ՝ դառնալ Յերկիր իւրեանց, և առաքեցոդեր նոցա Ովոբաբել։

Ա. 1-5։ Ամենայնիւք, ի սկզբանէ անտի ասելոք Հրէից, զնա հնարս հնարեցան ի խափանել զշինուած տաճարին. որք թէպէտ և զհրամանն հրովարտակին շրջել ոչ կարացին, այլ կաշառօք և նենգութեաբ հրապուրեալ զգործա կալս աւգուտի և զվերակացուս գործոյն՝ դադարեցուցին զգործն և յամեցուցին սմն բազումս։

Դան. Բ. 1-3։ Ընդ այս յերկար խափանումն հրովարտակին, որպէս կարծեմ, վհատացեալ Դանիէլ յերեքտասն ամի Թագաւորութեն Կիւրոսի ի Բերբերդումն ամենեան՝ ի սուգ եմուտ երից եօթնեքորդս աւուրց և պահէր. և էր յայնժամ ի Պաբա առ ափն գետոյն մեծի՝ որ է Տիգրիս։ Եւ ի կատարել պահոցն՝ եղև ի վերայ նորա տեսիլ յաջորդութեն Թագաւորութեն Պարսից և ինքնակալութեն

Ե. Ես. Ա։ մանկեդոնացւոց, և տիեզերակալութեն Յունաց, որպէս ի գիրն իւրում արձանագրեաց, և ի մեռոյ Հանգերձեալ եմ ասել զայնցանէ։

Օ որ ի կատարած երկոտասանեերորդ գլխոյն ասէ՝ Ձայն եղեալ նմա՝ թէ « Այդ հանգիր զի տակաւին են աւուրք և ժամք ի կատարումն վախճանի, և Հանգիցես և յարիցես ի ժամանակի քում ի վախճանի աւուրց »։ Եւ մեզ անտի ի միտ առնուլ զօրհնաս մանկու նորա. և լուեալ աւուրցն իսկ ցուցանէ՝ սակաւակեաց լեալ զնա Յետ այնորիկ. զի ոչ էին նմա յայնժամ նուագք քան զուեաւն և Հինգ ամն, Համարեալ զնա երկոտասանամեայ ի գերեվն ի Բաբելոն։ Ընդ սոսին յայնց ժամանակաց եցոյց նա յանձին իւրում զգերահաստատութեան իսկոստուածութեն՝ զզրպարտեալն Ը ուշան փրկելով։ Իսկ ապա Հնարէ մեծ կալաւ առ նմա Թագաւորս բաբելացւոց, փառաւո-

րեալ՝ ի նոցանէ մեծամեծ աւադութեամբք աշխարհին ։
Եւ միայն հանձար ածային էր ի նմա, և կենցաղա-
կան կարգաց իմաստութիւն, այլ և արուեստից և գիտու-
թեանց, և մանաւանդ հարտարապետութիւն ։ Օ նմանէ Պմ. նախ.
ասէ Յովսեպոս՝ թէ չինուած հրաշակաւ գործեաձև հառոյց Ժ. ձէ ։
ի Շ օշ՝, որ մինչև ցժամանակս մատենագրին կայր անկեղծ հրաշագան յօրինուածովն՝ իբրև նորահարտ գնահ-
կին պայծառութիւն պահեալ ։ Վասն էին չինելոյն յոլովից
ի Թագաւորացն Պարսից և Պարթեւաց ։ և առ ի պա-
տիւ հարտարապետին՝ առն հրեի պահպանել տեղւոյն
յանձնեալ էր յատուկ Յովսեպոսի ։ Վասնզի էր
բնակեաց աշխարհին թէ անդ ի նմին քաղաքի մեռանել
Վանիկէ, և զչիրիմ նորա ցուցանէին ի տեղւոջն։ Օ այս
ինչ գիտեմք հաւաստի զի յամենեսեան անդր Վանիկէ,
որպէս և ինքն ասէ գործել ի քաղաքի անդ զգործ ար- Դաս. ջ. 27։
քունի ։

ԽՈՐՀՈՒՐԴՔ ԳՈՒՀԱԿՈՒԹԵԱՆՑՆ ԴԱՆԻԷԼԻ

Յապաղեցի ցայս վայր զխորհուրդս մարգարէութեանցն
Վանիկելի յուշ առնել, որ առ հանձարեղս աներկբայա-
պէս հզօր ապացոյցք էն ձշմարտութեանն կրօնիցս ։
Եւ ինչ հարկ է ասել վասն պատուհասի ամբարտա- Է ։
ւանութեանն Վաբուբոդոնոսորայ, որպէս գուշակեալն էր
ընդ գազանս անապատի ունել նմա բնակութիւն, և
ի սահմանեալ ժամանակի դառնալ անդրէն յաթոռ ։
Վանիկ գիտեալ ամ որ՝ թէ այսոքիկ ըստ ամենայնի, որ-
պէս և ասացին Վանիկէլ, կատարեցան. զոր և ինքն իսկ
Թագաւորն խոստովան եղև աշխարհաքարոզ հրովար-
տակաւն ։ Եւ զնոր հրովարտակ սուտ կեղծել Վա-
նիկելի իբրև յաբբայէ, և արձանագրել զայն ի գիրս
իւր, և ընդ ամ աշխարհն սփռեալ ասել զայն, եթէ
չէր ուրուք տեսեալ զնոյն, և ի Խաբելոն ի մէջ քաղ-
մանել Հրէից և հեթանոսաց՝ ի տաճար ածել զխոս-
տովանութիւն զայն ի նախատինս յայժ Թագաւորին, եթէ
մարթի էր ստել զայն ։

1 Օ այն և Հերոդիոսի տաճարել բաժան որպես անկն այնմոս օրինակի ի գիտուրեն Վանիկելի. (գլ. ջ. 2.) Յովսեպոսի մատենի։
տնոսն տեղւոյն գնե Շօշ, և ոչ նեւ

Օ Համառօտագիծ պատկեր գուշակութեցն ընծայեմ ի տեսութիւն՝ յորս գայօրդութիւն յորեցունց Հզօր Թա-
գաւորութեցն ցուցանել մարգարէն. քանզի այսոցիկ ստոյգ
և ի բան կցորդութիւն է ընդ խնամ՝ բանիս՝ որ վերջնա-
կաղութեցն զայնցանէ հնախօսեր.

Ր Այլ է առաջին՝ի բանից անտի տեսիլ բազմանուագեայ
պատկերին, զոր եառեալ Կաբուքոդոնոսոր, յոսկւոյ և
յարծաթոյ՝ ի պղնձոյ և յերկաթոյ, զոր վեմ փորելիկ
եհար և մանրեաց իբրև ցիւրն, և եղև վէմն լեառն
մեծ, որպէս ընդարձակագոյն այլուր ասացաւ։ Այլ ե-
րբև յիսուն ի վերայ անցեալ՝ նա կնքեն Վանիել զտես-
իլ գաղանացն եառեալ՝ որ յահա ասացեալս ունի ակնար-
կումն։ Վանզի տեսանէր գազանս չորս մեծամեծս ելեալ
ի ծովէ՝ առաջինն իբրև զմատակ առիւծ Թևաւոր, և
Թևք նորա իբրև արծուոյ. երկրորդն նմանն արջոյ և եր-
բորդն ընձառւ, և չորք գլուխք էին նմա. և չորրորդ գա-
զանն՝ ահեղ և գարմանալի և առաւել հզօր, և այլա-
կերպ քան զնմա գազանսն՝ որ յառաջ քան զնա, և ժա-
նիք նորա երկաթիք. ուտէր և մանրէր, և զինացորդսն
առ ոտն կոտորէր, և եղ ջուրք տասն ի նմա. և այլ եղ-
ջիւր փոքրիկ ելանէր ի միջ նոցա, և աչք իբրև զաչս
մարդոյ յեղջերն յայնմիկ, և բերան՝ որ խօսէր զմեծա-
մեծս. և աձեաց եղջիւրն այն և մեծացաւ քան զայլսն,
և տայր պատերազմ ընդ սուրբս, և զօրանայր ի վերայ
նոցա. մինչև հինաւուրցն անժամանակն ած նստեալ յա-
Թոռ բարձրութեէ, և բիւրք բիւրուց հրեշտակք առաջի
նորա, էած դատաստիկք անդարձ ի վերայ չորից գազա-
նացն՝ որոց ատմնեալ էր ժամանակ, և էտ որդւոյն
մարդոյ իշխանութիւն ի վերայ ամ ազգաց և ազանց, և
իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական՝ որ ոչ ան-
ցանէ, և Թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի։

Հաւաստի է առ ամենեսեան խորհրդ չորեքեիւս
Թեաց պատկերին և չորից գազանացն, զի են չորք Թա-
գաւորութիքք՝ որ հանդերձեալ էին յաջորդել միմեանց
կործանեալ մի ըստ միոջէ, և ապա տեղի տալ անանց
Թագաւորութեէն Քրիստոսի՝ որում պահեալն էին։ Այս
այս գարձեալ անհակառակաբար ընդունելի է ամենից
ցան՝ զի չորեքին Թագաւորութիքն այն էին բաբելացւոցն,
Պարսից և Մարաց, մակեդոնացւոցն, և Հռոմայ[1].

1 Ցառաջնում ակ Բազաւորաց առանց դէնն վերափոխ Աստուած և
սրտին Բաբելացւոց։ եթէ պարսից գաշնէրդ Աղեքսանդրի։
2 Կէտ ի հինգ խոնարհ Ձ.

որում և կարդ պայազատուէ նոցա յայտնապէս վկայէ ։
Ի.ՀԼ զայն ուստի Ծանեաւ Պաղիւլ . « զփոփոխութիւն տերութեանց ցուցանել նմա կարէր , այլ այն՝ որ « Փոփ- Բ. 21 ։
խէ զժամանակս և զժամս , կացուցանէ զԹագաւորս և փոխէ , տայ իմաստութիւն իմաստոց և խորհուրդ խորհրդականաց , ինքն յայտնէ զխորս և զդաղտնիս . գիտ տէ որ կայ ՚ի խաւարի , և լոյս ընդ նմա » ։

Վնդ իսկ ՚ի յաջորդ բանս մարգարէութենն՝ պարզ և Ը: 20-22 ։
ընդարձակ խորհուրդ տեսանելոյն բացայայտեալ է . զի ընդ ձեռ զազանացն ցուցեալ նախ զԹագաւորութիւս Պարսից և զմահեդոնացւոց , ապա յայտնաբանէ . « Խոյն զոր տեսանէիր եղջերաւոր՝ Թագաւորն Պարսից և Ա՚ա բաց է . և քօչն այծեաց՝ Թագաւորն Յունաց է . և եղ- ջիւրն մեծ , որ էր ՚ի մէջ աչաց նորա , նոյն ինքն է Թա- գաւորն առաջինն » ։ Լաւ ուստի գիտաց Պաղիւլ Թէ յեր- կուց ազգաց , ՚ի Պարսից և ՚ի Պարսից , կայցէ միապե- տուի պարագայիւն , և Թագաւորուէ Յունաց հարցէ գնա և կործանեսցէ . և ո՞ եղոյզ նմա զպատկեր արագաթռիչ ընթացից աշխարհակալութեանն Ա՚ղեքսանդրի , զի վայե- լուչ նկարագրէ զայն՝ Թէ « Պայր ընդ երեսս երկրի , և յերկիր ոչ մերձենայր » . կամ ո՞ խելամուտ արար գնա՝ Թէ ոչ ոք Հաւասարեսցէ Ա՚ղեքսանդրի ՚ի յաջորդաց նո- քա , և որ զվիահեծան պետութիւն Յունաց գՀիմն եղ՝ նոյն և ՚ի կարգս Թագաւորաց նոցա Հղօրագոյն իցէ . Լա- իւ Եառնս դարձեալ ՚ եթէ ոչ լուսով երինասարգև Հոր- Հայ՝ չունել Ա՚ղեքսանդրի ժառանգ , և բաժանել իշխա- նութիւն նորա ՚ի չորս Թագաւորութիւս , և Թէ համապղիք պլատոնվիկք յաջորդեացեն նմա , և յաւերածոյ Թագա- ւորութենն , ՚ի սուղ ժամանակի Հղօրացեալոյս , բաժանե- ցին Թագաւորութիք ընդ չորս Հողմս երկնից , ընդ արևելս և ընդ արևմուտս , ընդ Հիւսիսի և ընդ Հարաւ ։

Պարձեալ և յաւելորդ և ՚ի մեսասանելորդ գլուխս գրոյն որպէս վաղ ժամանակօք յառաջ առ Կիւրոսիս [2] եղոյզ զգործս՝ որ գործեցան , յառնել չորրորդին [3] ՚ի

1 Եւ յարիցէ Թագաւոր Հզօր, և տիրեսցէ տերութիւ բազում, և արասցէ ըստ կամս իւր. և իբրև յարիցէ Թագաւորութիւն նորա փշրեսցի, և բաժանեսցի ՚ի չորս Հողմս երկնից, և ոչ ըստ վախճա- նի նորա և ոչ ըստ տերութեան նորա՝ զոր տիրեաց։ Դն. Յ. Ի։

Ըզոր Թագաւորք յաղգէ նորա յարիցեն, և ոչ իւրեանց զօրու- Թեամբ։ Ը. 22։

2 Ահա երեք Թագաւորք յա- րիցեն յերկիրէ Պարսից , և չոր- րորդն մեծասցի մեծութիւ մեծ քան զամենեսեան . և յետ զօրանալոյ նորա ՚ի մեծութիւ իւրում՝ յա- րիցէ ՚ի վերայ Թագաւորութեան Հունաց։ Դն. Ի։

3 Ռ-Եէ-Ե-Ե-Ե։

յաջորդաց Ակիբոսի՝ ի վերայ Յունաց առնոյին զօրուձէր իւրով։ Եւ որպէս զանցս ժամանակացն մնալա բայեցոց՝ ի հեռաստանէ մանրապատում արար, զՀալածանս Նտիոքոսի՝ ի վերայ Հրէից, զխափանել Հանալ պաշտօնդ զոհից՝ ի տաճարին Երուսաղէմ, զպղծուձէր սրբութեանն՝ պաշտամանէ զբօշելոց անդ, և զնաճասատ վրէժխնդրութենէն՝ ի վերայ այնորիկ։ Օ խորհ անդամին յառաջիկ ամ թագաւորութեն Պաբսից գուշակեաց զպատերազմունս յաջորդացն Ալէքսանդրի՝ որ Այնսբոս և որ Այգիպտոս, և զարշաւանս նոցա յերկիրս միմեանց, և զուխտագործութեն նոցա և զնենգաւորն խնամութեն։

Հանձարեղն և բարեպաշտ ընթերցող ՝ի միտ առնուլ՝ որ ինչ՝ ի յայտապատում գուշակութեց առաջ պարտ է խնամատարել։ Օ որոց անժխտելի Հշմարտուն այլով իւրք հերքել ոչ կարացեալ անպատկառ ոտիս քրիստոսական կրօնիցս Պորփիւր, ժպրհեցաւ ասել՝ ի՞նչ տոց յերեւութեալ զայնոսիկ իրրև անցից իրացն պատմուձի, և ոչ գուշակութենի Հանդերձելոց։

Ձերբեր. ի Դան. յԱԼ։

Այնչ և զտեսութենէ մարգարէական բանիցս տեսո՛ տեալ՝ աղաչեմ՝ որ զդիւրս զայս յայն արկանիցեն՝ ով վայ բասյար Հայել՝ ի խորհն, զոր գնե Հոգին ընդ Թագաւորութեան աշխարհի և ընդ Այրիատասին։ Այանգ՝ ի նոսա Համ ինչ պերձ և պայծառ երևին։ զօրութենէ, քաջութենէ, փառք, մեծվայելչութենէ որպես օժիտք են նոցա։ Այնոսա պայծառանան գոռ պատերազմօք, աշխարհակալք անուանիք, չանթք պատերազմի, ահ և սոսկումն տիեզերաց, ախոյեանք անպարտելիք։ այլ ամենեքին նոքա գազանք են վայրենիք, արջք, առիւծք, ինձք գիշխանձք յափշտակողք և ապականիչք։ Այնա Հշգրիտ պատկեր և նկարագիր Թագաւորութենէ աշխարհի, որ նշանակին զպատերանս մեր՝ եթէ բարձրագոյն ինչ զնացական կամ զՀիմնարկողաց նոցա և զառաջնորդաց կարծիցեմք։

Յակ Այբիատասին ոչ այսպիսի. եթէ՝ ի սկիզբն և՝ ի ծնունդ նորա Հայեցիմք, և թէ՝ ի զարգացումն յիւրաքանչիւր ժամանակի, երևի՝ ի նմա որպես գրոյմ խոկութենէն՝ խոհարհուն և տկարուն. մնասուցանդ, եթէ այսպէս ինչ մարթի իցէ ասել, և նուաստութենի, խոր է՝ ի զանգուած ծի, Հատ մնանմպոց, և վէմն փոքրիկ Հատեալ՝ ի լեռնէն։ Այակայն չկը մեծութենէ Հշմարիտ իբրև զնորայն. նախայաւիտեան Յանն Հինն էարկ նմա, և վարկ զայն. Համ թագաւորութենէ երկրի սպառ մնասցականն նմա, և յերկիր խոնարհին առաջի նորա։ Այապաւորի՝ ի փրկել

զմարդիկ, անանց ՀՈՐՀԵԼ նոցա բարեբաստութեի, առնել իւր ժողովուրդ սեպհական զսուրբս և զարդարս, և զնի ի նոցանէ Թագաւորս և տիեզերակալս։ Այդպա կայ աշխարՀս լըիւ իւրով, և իբրև լցոյի Թիւ նոցա՝ ապա եհեսցէ կատարած, ասէ առաքեալ, յորժամ տացէ ՏԸ. Կ.ՒՐՒԼ. ՎՐԻՍՏՈՍ ի ձեռս զԹագաւորութիւնն ՅՂ և Հօր, յոր. ԺՆ. 24։ ժամ խափանեսցէ զնամ իշխանութիւնս և զնամ պետութիւնէ և զգօրութիւն։

Ի բանից աստի մարգարէին խելամուտ եղեալ կատարածի Թագաւորութեց՝ զի ի ընալ իւրաքանչիւր չափու, զոր սահմանեաց ամենաԹագաւորն ԱԾ, ամենեքին ընդ Թագաւորութեամբն Վրիստոսի նուաձեսցին, մանտեղիսը վիպատամամ յարտաքնոյն զոգոյս պատասղեալ՝ ոչ դարձուսցէ զաչս իւր Հայել մերթ ընդ մերթ Յայն նպատակ մեծ, և ոչ այնմ ուշ կալցի առաջի աչաց ունել միշտ, կամ գնեթ ի հեռուստ նկատել զայն։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Ա ԷրԷնն ամ էչեսցն Աւետրոսի և Տաի Դորա։

Աւետրոս սիրելի եղեալ քենիկ ժողովրդոց և ազգաց Դասպ. Կ.ՒՐ. նուաձելոց ընդ իւրև, վայելէր ի խաղաղութեան յաւր Ը. 353։ գասիս վաստակոց իւրոց և յաղթութենց։ Պահմանք էին տերութեն նորա ընդ արեւելս՝ աշխարՀն Հնդկաց, ընդ Հիւսիսի՝ ծովն Կասպից և եւքսենեան, ընդ արեւմուտս՝ եգեան ծով, և ընդ Հարաւ՝ Աթովպիա և ծովն արաբացւոց։ Ի միջոց աշխարՀացս եգ զաթոռ իւր, և զՅմուռն զամիս ԵՀԼՆ բնակէր ի Աւգբէնն՝ վանն օդոց երկրին ՔԸրմանեի, զգաւառն ամիս երիս ի Շ օշ, և Ա Ի Կ ա տ ա ն զաւառս ՔԸրոտ ամառայնի՝ զամիս երկու։

Ո ամն ԵՀԼՆ ի քաղաքն յայսոսիկ բնակեալ, չոքաւ ասա ԵՀԼՆերորդ անգամ ի Պարս՝ յետ ՀաստատուԹեան միահեծան պետութեն։ որոյ երեւի սովորութիւն կալեալ ամի ամի երԹալ անդր։ Ի ժամանակաց Հետէ մեռեալ էր Կամբիւս. և ինքն Կիւրոս ծերացեալ յոյժ, զի էր Յայնժամ ամաց ԵՀԼՃամասից, ի քառասներորդ ամի ընտրեալ սպարապետ Պարսից, ի վաԹսուն և ի միւմ առեալ զԱւաբելն, և ի վաԹսուն և երբ

ըորդում միապետեալ՝ մահուամբն Կիւաքսարայ։

Իսկ ինչ՝ ի վախճան կենացն եկեաց ի խոր առողջութեան և ի զօրութեան, որ զգաստութեամբ նորա և սակաւապէտ կենացդ արդասիք էին։ Ընդ հակառակն շռայլութեան և զեղխ մարդկան՝ որ անդէն յերիտասարդութեան կրեն յանձինս զտառապանս ծերութեան, կիւրոս ի ծերութեան հասակին եր կորովի իբրև երիտասարդ։

Իբրև մերձեցաւ օրհաս մահուն, կոչեաց զորդիս իւր՝ որ ընդ նմա երթեալ էին ի Պարս, և զմեծամտիս իւր. և զոհացեալ զդիցն վասն ամբարութեանց՝ զոր արարին ընդ նմա ի կեանսն իւրում, և զնոսն օգնականութեամբ ի վերայ որդւոց իւրոց և բարեկամաց և հպարհնաչոյն մադթեալով, եցոյց զկամբիւս զանգրանիկ իւր ժառանգ թագաւորութեան, և զկրոսեան գՃանաչբաար կացոյց կողմնապահ՝ ի վերայ գաւառաց բազմաց աշխարհին։ Յետ խրատս դնելոյ ետ նոցա և ասէ. Ո՛չ ընդարձակութեամբ աշխարհաց և ոչ ի բազում զօրս և ի մեծութիւն է հասատութեան առնել, այլ յերկիւղածութեան ի դիցն, ի միաբանութիւն եղբարց, և ի յաճախել բարեկամս։ Պատուիրեմ ձեզ, որդեակք, յանուն դիցն՝ մեծարել զմիմեանս, եթէ ցանկայք և յետ մահու Հաշտ ունել զիս. քանզի յոտացեալ եմ՝ թէ ոչ կարծիցէք չքանալ ինձ մահուամբ։ Ո՛չ սպէտ և անբեւեղելի իցէ հոգիս, այլ ի զործոց նորա հատաստիք գոյութեանն անչեքնաւալի։ Այսպէսկն այսու կենօքս սահմաներ պատիւ ազոցդ՝ որոց մարմինք յաձիւն լուծան, եթէ հոգիք նոցա անքաժան էին յամենայն զօրութենէ։ Հոգին կենդանի ի մահկանացու մարմնի՝ չարթի մեռանել անջատեալ ի նմանեն։ Իսկ թէ խաբիմ, և չիայցեմ յետ մահու, սակայն ի դիցն անմահից երկերութ յամենատեսչէն և ի հզօրացս։ Ո՛չ նոցանէ երկերութ, և ոչ ինչ հակառակ կրծկից և արդարութեան զործիցէք կամ՝ թէ խորհիցէք բնաւ։ Ո՛չ ի մարդկանէ յետ դիցն երկերութ, և ի հանգերձելոց ժամանակաց։ Ո՛չ թողին զձեզ դիք ծածկեալ ի խաւարի, այլ ի լոյսս մեծ աճին ի տեսիլ ամ աշխարհի։ Ո՛չթէ իցեն զործք ձեր ուղիղ և սուրբ, անշուշտ յաւելցին ձեզ փառք և զօրութիւն։ Յակ զդիտեն իմ, որդեակք, մի սակաւ պատեր կամ արծաթասէր կամ

1 Ընդոբեն կիւրոս ի վերջին ծերութեան ժամակ և ասէ՝ թէ ոչ բանան զոր մեռանի ի մահ խոսեցաւ. գիտացի վկայով երիտասարդութեան որպես աւանդէ Քսենոփոն, յայնս նուազեալ չես։ Կիւ. չ. ծէ. Ը։

այլ ինչ պատուական նիւթով, այլ փուխրայք տուք զնա ԱՄ ԱՀՒՆՔ
հողոյ ։ Վասն զնաւնել և միանալ ընդ բարեբարի մեր
հասարակաց՝ զինչ այլ բարի կայցէ ։ Այլ ամենեքին որ
անդն կայիք համբուրեցին զաջ նորա. և նա իբրև յա-
դուցոյ պարզել ապաստան եղև՝ ասէ. Ի՞նչ թաղաղութ-
որդեակք իմ սիրելիք, տացին ձեզ դիք աւուրս բարու-
թեան. և զողջոյնս զայս յետին տուք և մեր ձերում յի-
նէն ։ Այս գուք, բարեկամք հաւատարիմք՝ որք աստ մնա
առ իս կայք և որ հետ, ընկալարուք զողջոյնս վերջին,
և կեցջիք խաղաղութիք ։ Այս վախճանեալ զանս իւր՝
միւսաւ. և կոծեցան զնա ամ ժողովուրդն ։ 3475. 529

ՆԵՐԲՈՂ, ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ ԿԻՒՐՈՍԻ

Ի մասանագոյն յաչխարհականս և լաւ քան զնմ թա-
գաւորս, որ յարտաքինոյն վէպս յիշատակին, օրէն է
ասել զԿիւրոս ։ Ի՞նոյնէ ինչ որ անկ էն մեծամեծ մարդ-
կան՝ զրկեալ անթերէն էին ի նմա. խնամատարել, չա-
փաւորել, արիւթել, վեհանձնութել, մեծախոհութ,
աջողութել յինքն յանկուցանելոյ զոգիս, քաջահմտութել
ամ՝ ժամանց գիտուորականին՝ որպէս մարթ էր ի ժամա-
նակին յայնմիկ, ընդարձակութել մտաց և հանճարոյ, և
ելկայմամութել ի խորհել և ի գործել զմեծամեծս ։

Որ յասպարէզ և ի գործ մարտի պայծառանան քա-
ջազունք, այլ ուրեք և յայլ գործս սովորութել է նոցա
նախամեծառս լինել ։ Օ արմասի որ ի տեսանել գիտոս
պատարոյ ասպարիզին անդէն առանց զօրականի, ի միտ
առեալ զրպէս ի միմանց զանազանին նուաստախոհք էն
նորա և անարիք, յորդանախանձք, շահասէրք, և առե-
լիք խրոխտ ամբարտաւանութեամբն . զի որով գիտաս
իւրեանց հնարին անկորուստ ունել՝ նովքին ձգէն յան-
ձինս քանհանս ։

Ի՞նչ ինչ յայսպիսեաց աստի ախտացաւ կիւրոս, ան-
այլայլակ յիւրում՝ բնութէն, միշտ մեծ՝ նաև ի փոքունս ։
Ի՞նաքինութիքն անկապտելի ունելով զմեծութի՝ քաղցր
և դիւրընտել առնելոյն զանձն ընծայելոցանէր, և
որչափ նա խնդարհէր հաւատարել ժողովրդեանն՝ այնչափ
առաւել ժողովուրդն զնա մեծարէր ։ Ի՞նչ որ ի թագա-
ւորաց գիտաց իբրև զնա սիրելի լինել ժողովրդոց. որ

կարևորն է արուեստ ի տեսչութիւն աշխարհի, և ի սա կատուց յոյժ ի կիր արիեալ։ Վասնզի նա թէ քանի՛ տգէտ է բան մի ի դէպ ժամանակի խօսեցեալ, և կէսպարան սիրոյ, պատճառաբ ի հրամանն խոտնեալ, պարգևաբ հանդերձ գովութիւն, և մեծաւմեծ ամաչ, որովք լի են վէպք պատմութեան նորա։

Ի՝ մեծագանձ ձոխութենէ նորա յոլովք ի թագաւորաց թափուր գտանին, որք զնմա՛ ինչ ունէին՝ և ոչ գոն նոցա բարեկամք հատատարիք. և մեծութիւնն զրաղեալ և յամբարտութիւն փառաց՝ կարօտանէ իւրեանց ոչ զգան։ Այլոյոս սիրելի էր ամենեցուն՝ զի սիրէր զամենեսեան՝. զի որ ոչ զոք սիրէ՝ ոմ իցէ նմա բարեկամ, կամ թէ իցէ՞ նա արժանի ունելոյ բարեկամ։ Վաղուց է տեսանել առ Վաճենփսին եթէ սիրելոյ Այլոյոս վարէր ընդ բարեկամս. զի միայն զպարտ և զպատշաճ պատիւն պահէալ, այլով ամենայնիւ օտար էր ի դժոխի ամբարտաւանութենէն՝ որով զրկին մեծամեծք յօրինաւոր զուարճութենէ, ոչ լեալ կենցաղակից ընդ խոնարհագոյնս իւրեանց ընդ պաշտ. վաստակաւոր ունձինս։ Ա՝ նա կանոն անվնաս աւագորեց՝ ոչ ի վարել ընդ բարեկամս. զի ոչ ազատութիւն միայն՝ այլ և պատուէր տայր բարեկամաց իւրոց, ասել համարձակ որ ինչ հաճոյ թուէր նոցա։ Վասպիտ և գերահաս ձար էր քան զնմա՛ աւագանին, այլ ոչ ինչ առանց խորհրդոյ նոցա առնէր. եթէ նորոգել ինչ խորհէր յերս աշխարհին, կամ զկարգ զօրացն փոփոխել, և կամ ձեռն ի գործ ինչ առնել, զնւրաքանչիւրոց նոցա լսէր զդատաստան, և յօգուտ արկանէր. Վակառակ այմ՝ զորմէ պաշտ. ա. խ. ասէ Տակիտոս, թէ զնմա՛ խորհուրդ քաջ արհամարհէր, այնու զի ոչ ինքն խորհեցաւ։

Թագ. ա՝ ա. ա։ Ել ոք, ասէ Վիկերոն, լուաւ բան խիստ ի նմանէ՝ որ զդերագոյ իշխանութիւն ունէր։ Ել և առն թագաւորի և իշխանի գովութիւն մեծ այս բան սուղ։ Վայս ուրեմն Այլոյոս ի բազմայոյզ խոտովութիւն աշխարհին, և ի ծայր իշխանութիւն, յիմնասութենէն ոչ խոտորեցաւ՝ անյողդողդ ի խաղաղութիւն կացեալ. և ոչ յարկածս ինչ կամ ի յեղակարծ պատահարս, և ոչ ի դժկամակս փոխեցաւ յընտանի քաղցրութենէն, կամ ձեռնամուխ ինչ և երգիծանօք ընդ ումեք խօսեցաւ։

Գ. ոտ. կ՝ ա. ձ։ Ի վերայ այսոցիկ և այլ ինչ մեծ և առաւելահրաշ առաքինութիւն այս էր ի նմա, զի զնմա՛ խորհուրդս ևր

1 Են քո բարեկամք, զի և դու ինքն բարեկամ։ Աերբ. Տուլ։

և զինամն ուղղէր ի բարեբաստութիւն ժողովրդեանն. քանզի համարեր առն Թագաւորի ոչ փառաւք մեծուձից և երևելի սպասուք, զեղծութիւք և բազմախորհուրդ սեղա նով զանազանել ի ժողովրդենէ, այլ առաւելութեամբ քաջութիւն յիրս իւրաքանչիւր. մանաւանդ անխոնջ վաս տակաւք յօգուտ ժողովրդեանն, և ի պատրաստել նո ցա հանդիստ և առատութիւն։ Իլը զպարտուց Թագաւո- Ե. 210։
րացն խօսելով ընդ աւագս գրանն՝ ասէր, Թէ պարտ է լինել նոցա իբրև Տղվիւս, որպէս և սրբազան և արտա քոյն Հնախօսութիւնք անուանեն զԹագաւորս քաջս՝, և տքնել որպէս զնոսա և խնամել զժողովուրդս և զԹա սիրել ի նոսա, Տկիել ի պահպանութիւն, սաստնձնել զՏոգս և զանձկութիւս նոցա, զօգուտ նոցա խորհել, և խափա նել զվնաս, ցանկալ առնլոյ նոցա և բազմանալոյ, և զանձն ի վերայ նոցա արիութիւք փոխանակել։ Ա.յս են Ձգրիտ տիպք և իսկաբանչ պատկեր Թագաւորի։ Պարտ է իշխեցելոցն զամ պէտս նորա Տարկանել, այլ առա ւել և պարտ է իշխանին փոյթ ունել բարօրութիւն նո ցա. զի չայս իսկ Թագաւորն, որպէս Տղվիւս ի խնամել զՏօտն, Օ ի որ Թագաւորն է՝ Տասարակաց է, և որ իշ խէն՝ վասն ժողովրդեան իշխէ։ Իլը ի Տրամայել ծնանի՝ այլոց ծնանի. զի իշխանութիւն յօգուտ այլոց սահմանեալ է։ Ահիմն և խարխիս բաղդին Թագաւորաց այս է՝ զի ոչ ևն անձանց, և գրաչմ մեծութիւն նոցա՝ փոխանակել զանձ նէնս ընդ բարւոյն Տասարակաց, իբրև Տրապի՝ որ ի բարձու եղեալ սփռէ զլոյս իւր յամենեսեան։ Լոյն ասէի արքայական փառացն նուաղութիւն։

Ա.յսքանեաւք առաքինութիւք լցեալ՝ ի սուղ ժամանա կի կանգնեաց զմեծատարած տէրութիւն, և վայելեաց ի խաղաղութիւն զամս բազումս յարդասիս աշխարհակալու թեանց իւրոց, այնպէս սիրելի եղեալ և պատուական առաջի բնիկ ժողովրդեանն և ազգաց ընդ իւրև նուա ձելոց, զի ի մեռանելն սուգ առին ամենեքին ի վերայ նորա իբրև Տօր Տասարակաց։ Լ.ւ արդ զի զայս ամ ա ռաքինութեանս ուղեաց Վիւրոս, առաքինութիւն իմն՝ որ Տեմանասցն անկ էր, ոչ ինչ են զարմանք. զի ինքն ամծ յարգարեաց զնա իւր պաշտօնեայ՝ արքանեկիկ կը թութիւն իւրոյ ի վերայ ժողովրդեան իւրում Լարայելի։ Իրը ոչ եմէ յանկարծակի չարան թօթափել արա րեալ զնա այնպես զարմանալի, որպէս վիպագիրքն նկա

1 Պետ Տովսեսեացես ժողովրդեան Ե. 2։) Ըստ Հերոդոս բարսմ ասելի իմոյ. ասէ ած Տրեսնէն (Ը. Թագ. Ժ հուէ- ասաքէ պէչեսան։

բագրէն, այլ ոչ-ոք բարւոյ վիճակեցոյց ինա, և արկ ի սիրտ նորա սերմանս գեղեցիկ բնաւորութեաց, և յօժարութեաւ առ չքնաղ առաքինութիւնս. և մանաւանդ քաջ դաստիարակութեաւ նորա խնամ կալաւ, որպէս զի կարող իցէ կատարել զնիծամեծ խորհուրդս իւր ցուցա-
ցեալս։ Վասնայն առաքինութիւնք Պիւրոսի բարւոք դաս-
տիարակութենէն էին արդասիք, ընդ այս մի ոք երկմտեա-
ցէ. զի ընդ ամենագիտից իւր հանասարեալ, և ոչ ինչ ընդհատ ի նոցանէ ներքոյ կացեալ իշխանութեաւ վարժա-
պետաց, զինքեան ի նմա խրոխտացոյց բնաւորեալն յան-
ձինս իշխանաց. ուստ լսել խրատուց և հնազանդել նախ քան զհրամայել, բրատցաւ ի վաստակս և յաշխա-
տութեաւ, և կրթեցաւ ի ժուժկալութիւն և ի պարկեշտու-
կերակրոյ և զգեստուց. միանգամայն ասացեալ՝ եղև այնպիսի որպէս տեսաք զինա ի Ճառս պատմութեանն, քաղցր, հաւատ, ազնուական, դիւրընտել. մարդասէր, առեցող զրգանաց և պերձութեաւ, և առաւել մարդա-
հաճութեան։

Ցաղագաւոր այսպիսի է մի ի մեծամեծ պարգեւաց՝ զոր երկինք չնորհեն մարդկան, զայս ոչ ոք ժխտել կարէ. զոր և հեթանոսք գլխովին ճանեան, և ստուերք մնալոց դէպին նոցա ոչ կարացին աղօտացուցանել զնշմարտու-
թիւնս զայս՝ եթէ ոյ պարգև է Թագաւոր բարի, և թէ ի միւսմի չայսմ պարգևի և այլք բազումք գանձեալ կան. քանզի չիք ինչ առաւել լաւ քան զպատկեր ոյ, և է վերագոյն նմանութեաւ ածականին Թագաւոր արդար և խնաստուն, ողջախոհ և բարեկիրթ, առ որով Թագաւ-
որէ առաքինութիւնն։ Վասպես նկարագրէ Պլինիոս զՏրայիանոս՝ յար և նման Պիւրոսի. քանզի ասէ, "Չիք գերագոյն և գեղեցիկ պարգև ոյ առ մարդիկ՝ քան զԹագաւոր սուրբ, ժուժկալ և ածանմանն"։

Օգիւցաղէն, զորմէ խօսիմ, զվէպսն մանրախուզիւ քննեալ՝ գտանեմ ինչ մի թերի ի պարծանս նորա. զի առաւել ևս փառք էին նմա՝ եթէ և յադեաս Թշուա-
ռութեաւ լեալ էր առ ժամանակ մի. և զգժուարաթաղ-
արկածից զփորձ առեալ Վխտեմ զի ինքնակալն Վաղ-
դա, յորժամ յորդեդիրս իւր ընկալաւ զՊիսոն, ասէր ցնա. "Չայս վայր զձախողակ բաղդին գփորձ առեր, գմեղեգոյն խնամեաւ յաջողուածք վարեն զոգի"։ և զպատճառան յաւել, զի Թշուառութիւք իբրև ծանրա-
նան ի վերայ մարդոյ՝ կազդուրի ոգին և զգօրութիւնս իւր յինքն ժողովի. իսկ յաջողուածք որպէս յանդգաս-

տից ՚ի վերայ Տաճատ ըմբռնեն զնա ՚ի տիարութեան, և զմահացու Թոյնան ծաղկապէս դեղուն ՚ի նա։ « Ա)ՀԸ-
շուտութեանց, ասէ, համբերեալք. բաւեքաղդութիք զեղ-
ծանիսն »։ Ա)ակայն և ՚ի Թշուառութիւնս սրինանալ և
անպարտելի համբերութիք յաղթել նոցա՝ փառք մեծ և
պարծանք են Թագաւորի, և ՚ի նոսա պայծառանան բազ-
մապատիկ առաքինութիքն նորա՝ որ ՚ի յայդողութիս ծած-
կեալ մնային. զոր օրինակ մեծանձնութիք՝ անայլայլելի
յարկածից, հաստատութիք սիրգակազմ՝ անսասանելի ՚ի
խիստ հարուածոց, արիութիք անվեհերք՝ որ առաւել և
՚ի վտանգս խրախուսէ, բազմաշնար ձարտարութիւն ՚ի
յեղակարծ պատահարս, ամենազգաստ արթնութիւն ՚ի
խնամել զիմ և ՚ի հրամայել, և ՚ի վերայ ամենայնի երբ
կասկածութիք՝ ոչ միայն զի մի ինքն վհատեսցի, այլ զի և
զայլս քաջալերեսցէ։

Ա)ՀԸրի եղեն Ալիբոսի այս փառք, որպէս և ինքն Դ֊սդ. կՒ֊ր.
վկայէ՝ յիմ կեանս իւր առանց արկածից հանապազ ջ. 234։
եղեալ ՚ի յաղողութեան, այլ ընդ նմին և դժուարա-
հաւատալի ինն ասէ զանձնէ, որով և առաքինացաւն
իսկ զգածութեին զայն և զչափաւորուն արժանի զարմա-
նալոյ, զի յանէրևևան յաղողութեան խիթայր միշտ՝ թէ
գուցէ պատահարք արկածից ինչ լինիցին. և երկիւղիւս
այսուիկ խափանէր ՚ի խրոխտ ամբարտաւանութենէ, և
՚ի չափս ունէր զուարթութենէ։

Պարտ էր մանրաքննին առնել զՀանգամանս յաղթու-
թեանց և աչխարհակալութեանցն Ալիբոսի, յորում է
ՀԱՄ գովութիւն նորա, այլ համառօտիւ ասացից։ Օ ի թէ
արդարև փառասիրութիք և անհրաւութիք բռնակալեր
զաշխարհս, փոխանակ գովելի ՚ի թիւս աչխարհաւեր ա-
նուանի ահագնակոյս կարգէր՝ Թշնամեաց ամենայն մարդ-
կան, որոց իրաւունք՝ բռնութիւնք նոցա եղեն [1], և զ-
րեթս արդարութեան համարձակ կարգեալ ամբոխիս մի-
այն, և անպատեհ Թագաւորի. որոց սահմանք ցանկութ
և իրաւանց՝ եղեն զինք իւրեանց, և առ փառամոլ ախտին՝
ոչ խնայէին յարիւն բիւրաւորաց մարդկան, և փառս
համարէին հեղեղաբար կամ բոցոյ ինն օրինակաւ աւեր-
ել ապականել զիմ, [2] և որպէս արջք և առիւծք այս-
պէս Թագաւորէին։

1 ՚ի ծայր բարեբաստութեան՝ յափշտակել Տակիտ. պատկ. ժԸ. ա։
բռնագործէին և արգարութիք՝ իւ- 2 Ա)ՀՐ ինչ ընդհանրեթէ առիւծք
րուն չառանձալ ժողովգեան, իսկ և արջք Թագաւորէին։ Ա)ԼՆԷ. յԶ.
պարծանք Թագաւորի՝ զօսարին գԲ. ա. խԸ։

Ի՝ամառսիկ ձմեռքիտ պատկեր բազմագունիցն ՚ի կար-
ծեցեալ գիւցազանց՝ ընդ որս զարմանամբ : Ալ՚ւէս տե-
սանէաք պարտ է ուղղել զմիտս բանից մատենագրաց
ոմանց՝ զոր ձախողակի գովութիւքն ազդեն յոգիս , և
զդաստատան բազմաց խաբելոցն ՚ի պատիր մեծութենէն ,
Ընդ որ եւ մնաչառութեամբ և ես գոլեցի զԱլիբոս . այլ
հնձ թուի խոիր մեծ լինել ընդ սա և ընդ այլ գիւցա-
զունս՝ զորոց ետուս զնկարագիրս : Իսկ ոչ եթէ ամենևին
արդար զսա ասիցեմ և անբաժ ՚ի փառասիրութենէն՝ որ
առանց երկբայութեան զրգիռ էր նմա յիմ՚ մեծագործու-
թիւնս , այլ զի Հպատակեր օրինաց , գիտեր զի ՚ի պա-
տերազմսյ՝ են որ անիրաւք են , և որ յանիրաւի որ զէն
առնու՝ արիւնհեղութենէց պատերազմին ինքն և պարտա-
ւոր : Ի՚ւ անիրաւ է պատերազմ յոր ձեռն արկանէ որ
իշխանսիրութի՚ւ՝ ընդարձակել կամեցեալ զաշխարհ իւր ,
կամ՝ առնել իւր անուն և մտոտի պերճանս , և կամ՝ ա-
հաւոր լինել այլոց :

Դ՚ոփ. Կէս. ա. 25։ Ի՚մ Ալիբոս , որպէս տեսաք գնա , գյաջողութի՚ւն պա-
տերազմին յարդարութենէն նորա գուշակեր , և նովաւ
քաջայոյս առնէր զիւրն արիանալ : Ալ՚ մեր , ասէ , յա-
րուցեալ եմք ՚ի վերայ այլոց՝ այլ նորա ՚ի վերայ մեր .
և դիք համագունդ ընդ մեզ մարտիցեն , որ ինքեանք է-
տուն զէն ՚ի ձեռս մեր՝ հասանել յօգնութի՚ւն նիզակակ-
ցաց մերոց նեղելոց յանիրաւաց բռնութե՚ւ : Իսկ զաշ-
խարհակալութենս Ալիբոսի ստուգիւ ոչ քննեսցէ , գտանէ
զամենայն արգասիս լեալ յայղութենէն՝ զոր կալաւ ՚ի
վերայ Կրետոսի արքային լիւգացւոց , որ իշխեր մեծի մա-
սին փոքուն Ա՚սիոյ , և ՚ի վերայ արքային բաբելացւոց՝
որ զմեծն Ա՚սիա ուներ բռավանդակ և այլ ևս աշխարհս
բազումս . և ահա երկոքին իսկ ինքեանք նախ յարեան
՚ի պատերազմ՝

Ա՚յս ուրեմն ոչ վայրապար Ալիբոս ՚ի կարգ մեծամեծ
թագաւորացն առաջնոց դասեցաւ , և օրինակ զինի եկե-
ղոյն տուաւ ՚ի բարւոք առաջնորդութիւն . որ եթէ ոչ
յարգարութի՚ւն հաստատեալ լեալ՝ ոչ է մարթ լինել նմա
բարի : Ո՚վ Ալիբոս , ասէ Ալիկերն , ՚ի տիպ պատկերի աբ-
դար թագաւորութե՚ւ նկարագրեաց Ա՚ղեքսիան ։

Թէոդ. — Կոնիոն. եպիս. ա. ա։

ՅՕԴՈՒԱՆ Դ.

Որ ինչ օտար ի Վախճոփէայ յաղագս Կիւրոսի պատմէ Յերդոտ։

Յերդոտոս և Վախնոփոն կիսին և կէսն թէսն պատմեն Կիւրոսի միաբանեալ, մանաւանդ յաջաւանս նորա ի Խաբեղոն և յայլ յաղթուս, իբր ինչ կարևորս օտար ի միմանց պատմեն. զոր օրինակ զծնունդ նորա և զմահ և զհաստատութիւն տէրութեան Պարսից։ Օ՛որ պարտ համարիմ և զՅերդոտեայ բանսն գլխաւորելով համառօտել աստ։

Վասնզի սա և ըստ սմանէ Յունաստնոս աւանդէն՝ երազ տեսեալ Աժդահակայ արքային Ասորւոց, զի որդի մի ծնանել դաստերն իւրում՝ մերժէր զնա ի Թագաւորուէ. և զարհուրեալ ի տեսլենէն՝ ետ զդուստր իւր զՄանդանէ հինաթեան առն ումեմն պարսկի ամենազան, որում անուն էր Կամբիւս։ Եւ իբրև ծնաւ որդի նմա՝ հրամայն ետ Աբրահայ ումեմն յիշխանաց իւրոց սպանանել զնա։ Կայց Աբրահ ետ զնա ի ձեռս միոյ ուրուք յարքունի հովուացն՝ ընկենուլ յանտառի։ Եւ զարմանալի իմն ի վերայ մանկանն լեալ ապրել յանտառին՝ մնուցանել զնա կին հովուին. և յետ ժամանակաց հասանել համբաւ իբրացն յաունին Աժդահակայ. որ տարաբրեալ զմանուկն ի սահմանս աշխարհին Պարսից՝ զամ զցասումն իւր ածէ ի վերայ Աբրահայ, զորդին նորա խորտիկ առաջի հօրն պատրաստեալ ի սեղան։ Յակ իբրև առնէր հայրն զորդի իւր, և սադրեալ ի նմանէ և գրդռեալ՝ զօրաժողով եղև յաշխարհին Պարսից, խաղաց գնաց ի վերայ Աժդահակայ, և յաղթեալ նմա պատերազմաւ՝ խառնեաց զտէրութիւն Ասորւոց ի Պարսս։

Այսր ինքն դարձեալ այլազգ աւանդէ զմահ Կիւրոսի, որպիսում ոչ էր արժանի աշխարհակալն մեծ։ Ի վերայ սիւրեցւոցն, ասէ, խաղաց ի պատերազմ. և յառաջնում ձակատու որպէս ի փախուստ դարձեալ՝ ելեղող զրանակն առաջի նոցա լի պաշարաւ ուտելեօք և ըմպելեօք. և իբրև սիւրեցիքն ցանկութիւն աւարին յառաջ

Յերդ. ա. ճե-ձէ։
Յոան. ա. ը-է։

Յերդ. ա.
Յոան. բ. ը։

մղեցան՝ դարձաւ ի վերայ նոցա Կիւրոս, և անդրան պա-
տերազմաւ զարբեալսն և զմնեալսը ի գիւղ եհար սա-
տակեաց, և տարաւ գերի բազում՝ յորս էր և որդի
Տոմիւբեայ դիւղայի զօրավարի զօրացն. զոր ոչ էառ
յամձն Կիւրոս արձակել առ մայր նորա։ Եւ իբրև սեաւ
փեցաւ պատանին Թագաւորացն ի գիւղ՝ առ յոյժ
ամենայ գերութենէն չորաւ գիւրովի։ Ընդ որ զայրացեալ
դիւղային՝ ձակատեցաւ միւսանգամ ընդդէմ Պարսից
առնուլ վրէժ ի նոցանէ. և դարձեալ ած ձգեաց
գնոսա անդր, ի նոյն խաբէութեն փախստեան ըմբռնեալ
գնոսա. և եհար ի նոցանէ բիւրս աւելի քան զքսան. և
զկիւրոս Թագաւոր նոցա սպան, և հատեալ գգլուխ նո-
քա՝ արկ ի տիկ արիւնալից, Թշնամանեալ գնա ասելով.
Լաւդ ի մահուդ, անողորմ դու, յայդեսքիր արեամբ
որում անյագ ծարաւեիր ի կեանսն քումմ։

Ոը ինչ գծինդեանէ Կիւրոսի վիպէ Ներոդոտոս՝ առաս-
պելք Թուին ինձ քան պատմութիւն։ Իսկ գմահուանէն՝
զոր ասէ, որպէս Կիւրոս բազմահմուտն իւրաց պատե-
րազմի, և խոհեմութեամբ առաւելեալն քան բազումք՝ որ
ա. ձիշ. գայթեաւ լինէր ի կնոջէ։ Պարծեալ և զոր գյանդուգն
ցասումնն նորա ասէ և գծանծաղամիտ վսեմիմնգրուէն,
Թէ զԼինդէս գետ հրամայեաց զօրացն իւրոց բաշխել
յերեքբարիւր և ի վաթսուն վտակ՝ փոխանակ զի ի
նուիրեալսանց ձիոցն իւրոց հեղձամ մնա ի նմա, գնաւ
Սէնէկ. յղ. օտար ե ի քաղցրութենէ նորա և ի հեղութենէ։ Եւ Թող
Ներն. գ. ԽԱ. զայս. եր հնար նմա յարշաւանսն անդ ի Խաբելոն՝
ի զոր ծախել գժամանակն՝ որ եր նմա պատեհական,
և սպառել զեռանդն զօրականին յընդդունայն վատա-
կոր ուսանիլ զպատերազմելոյ ընդ գեղջուկ փոխանակ պատերազմելոյ ընդ Թշնամիս։

Ահաձայնութենէ ածային գրոցն պատմութենէ հաւատա-
րիմ առնեմ զԱբենոփոն։ Վասնզի գտանելք անդ՝ ոչ
կործանմամբ տերութեան Ասորւոց կանգնեալ Կիւրոսի
զՊարսիցն, որպէս վիպէ Ներոդոտոս, այլ զի Պարսք և
Ասքը համադունդ ի վերայ Խաբելոնի չորան ի պատե-
բազմ, միաբանեալք ընդդէմ հզօր պետութենէն։ Օ մե-
ծի տարաձայնութենէ նոցա պատճառս ինքն իսկ Ներոդո-
տոս յայտ առնէ. որ ի պատմել զծնունդ և զմահ Կիւ-

1 Յագեսքիր, ասէ, արեամբ՝ որում ծարաւի էիր և անյագ՝ ի կեանսն քումմ։ Յոյսփ. ա. է։

ըոսի՝ զբոյցս պէսպէս գնացմանէ առեւ լինել. և ինքն ընտրեւ ԱՄ ԱՀՅՈՒ
յայցանել զոր կամի. բայց զղարմանալին և զդժուա-
բադէպս ախորժել Թուի վիլպակերն այն, և այնպիսեաց
գիւբահաւան գոլ. Իսկ Ալենոփոն խոհականագոյն էր
քան զնա և գժուարահաւան, որ և անդուստ ի սկզբա-
նէ պատմուճէն տայ հաւաստիս՝ Ձնմարտագոյն տեղեկու-
Թեանն վասն ծննդեան և քնութեանէ և դաստիարակուԹե
Կիւրոսի։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Պատմութիւն Կամբիւսեայ։

Կամբիւս ընդ Թագաւորել իւրում խորհեցաւ խա- 3475 · 529
զալ պատերազմաւ ի վերայ եգիպտացւոց, ի վրէժ քի- Ընդ. Բ.
նու Լիւդամանացն՝ զոր արար նմա Կիւրոս։ Ո այս պատ-
Ճառս տայ պատերազմին Հերոդոտոս. այլ Հաւանագոյն
Կս է Թէ Կիւրոսիս նուաձեալ ընդ Կիւրոսիս և Հարկա-
տու եղեալ նմա, ապա յետ մնալոյ նորա ոչ էառ յանձն
Հարկս Հարկանել որդւոյ նորա. և ընկեցեալ զնուճ
Պարսից՝ յարոյց զնոսա ի վերայ իւր ի պատերազմ։

Ի յաջողուԹիւն եղեալ մարտին արար Կամբիւս պա-
տրաստուԹիւն մեծ ընդ ծով և ընդ ցամաք. և միաբանեաց
ընդ իւր զԱխալոս և զԱիւնիկեացս՝ օգնական լինել նա-
ւուք։ Իսկ բազմացոյց զզօրս իւր ընդ ցամաք ի յունա-
ցւոց ամուր և յԱւղացւոց, յապզաց հզօրաց ի Հնդս։
Իսկ զօրավիգն առաւել քան զամենեսեան եղև Նաս ի
պատերազմին յայնմիկ Փանէս աղեկառնացի, զօրավար
սակաւուց Հնդացն՝ որ գումարեալ էին ընդ Կիւրոսեայ.
քանզի սա վասն գժուԹեաՀ իրիք անց ի կողմն Պարսից,
և առեղեակցոյց զԿամբիւս վայրագ աշխարհին և զօրուե
Թեամբ և օրինակի պատերազմին, որ ինչ կարևաւոր
էր ի յաջողուԹիւն յաղԹուԹեաՀ։ Իսկ և խորհրդով նո-
ցա Հաւանեցոյց Կամբիւս զաբքայ արաբացւոց, որ Հուպ
ի սահմանս Եգիպտոսի և աշխարհին պաղեստինացւոց
Թագաւորէր, արբուցանել ջուր բանակի իւրում ընդ
անապատն անձրևի՝ որ բաժանէր ընդ երկաքանչիւր աշ-
խարհն։ Իսկ առաքեաց նա ուղտերամարկ ջուկիրս յօ-
գնութիւն նմա, առանց որոյ ոչ էր Հնար Կամբիւսեայ անց
յանել ընդ անապատն ընդ այն բանակաւ։

Իբրև կազմեցաւ պատրաստեցաւ, ի չորրորդ ամի Թագաւորութեանն Իւրոյ խաղաց պատերազմաւ Յ|գիպտոս։ Եւ հասեալ ի մուտս սահմանաց աշխարհին՝ լուաւ համբաւ եթէ մեռաւ Լ|մասիս, և որպէս նորա վասնզի Թագաւորեալ՝ պատրաստի ամ զօրութեանն չԹողուլ նմա կոխել յերկիրն տերութեան Իւրոյ։ Իսկ եր հնար կամ|ուիս սեպ մտանել յաշխարհն անդր՝ մինչ չև կալեալ զինն զուսիոն, որ յայմմ կողմանէ իբրև դուռն եր Յ|գիպտոսի։ Եւ եր քաղաքն այն ամուր և դժուարամարտ. այլ նա հնարս իմն այսպիսի խորհեցաւ ի նուաճել զայն դիւրաւ, եթէ պարտ իցէ հաւատալ Պղինեոսի։ Վասն զի իրազեկ լեալ թէ պահակապանք քաղաքին եգիպտացիք էն, ի ձակատու ուրեք պատերազմին խաղացոյց առաջի իւր բազմութեանն շանց և կատուց և խաշունց և այլոց կենդանեաց՝ զոր պահեին ազգն այն։ Եւ ոչ իշեալ պահապանացն ձգել նետս և քարինս՝ թէ գուցէ հարցեն զոք ի կենդանեաց անտի, անխափան տիրեաց քաղաքին։

Եւրտ. Թ. ԺԵ. Եւ ահա գայր հասանէր Փասմենէս ստուարագոյտ զօրօք ունել զառաջս նորա. և մեռ առ միանգամ բանակքին երկոքեան ձակատեցան յահեղ պատերազմ։ Եւ մինչ չև զեն ի գործ արարեալ՝ ՀՀայեաք որ էին ընդ Փասմենէսեայ ի վրէժ քինու վտարանդութեանն Փանեայ կալան զերկոսին որպէս նորա, զոր ի փախչել իւրում հարկեսցաւ Թողուլ Յ|գիպտոս, և փողոտեալ գնասս յանդիման երկուց ձակատուցն՝ արբին զարիւն նոցա։ Եւ խրժդժութեամբն այնուիկ կորուսին զյաղթութեանն. քանզի ընդ անագորոյն տեսիլն զայրագնեալ զօրք Պարսից, յարձակեցան կատաղաբար, և զամ բանակն եգիպտացւոց հարին խորտակեցին. և բազումք ի զօրաց անտի կոտորեալ, սակաւք ոմանք մնացեալք զերծան ի Մեմփիս։

Ի ձառս պատերազմիս և զայս ինչ իբրև ականատես պատմէ Հերոդոտոս, թէ էին տակաւին ի տեղւոջ անդ ձակատուն խաղաղակոյտ ոսկերացն Պարսից և եգիպտացւոց ուրոյն ի միմեանց, և գանկք եգիպտացւոց կարծր և սերտք էին, և դժուարաւ յոչ և ուժգին հարուածովք վիմաց հազիւ ջաղխէին. իսկ Պարսից կակուղ և դիւրաիշխելիք։ Եւ պատճառք՝ զի եգիպտացիք ի մանուղ տիոց սովոր էին բաց ունել զգլուխս իւրեանց և զերծուել, իսկ Պարսք ծածկել միշտ փակեղամբ՝ որ շուք մեծ է առ նոսա։

Փախստեից զհետ մտեալ Լամբիւս մինչև ի Մեմ-

փես, յղեաց ՚ի քաղաք անդր հրեշտակ խաղաղութեան ՚ի նա՛ մխիթարացի՛ խօսել ընդ բնակիչս զի յանձն առ-ցեն հնազանդել կամաւ։ Ժողովուրդն սրտմտեալ, կա-լան զսպառազանսն և զորս ընդ նմայն էին, և անդամ անդամ կոտորեցին զնոսա։ Յետ սակաւ ժամանակի նուաձեաց Կամբիւս զքաղաքն, և ելոյծ զվրէժ անօրէ-նութեան բնակչացն, սպանեալ առաջի ամենեցուն ՚ի մեծամեծացն եգիպտացւոց տասն առ այր մի, որ չափ էին ՚ի նաւակի անդ՝ զորս սպանին։ Ընդ նոսա և անդրանիկն Փսամմենեայ սպանաւ. այլ ընդ Փսամմենս քաղցրութեամբ արարեալ՝ ոչ միայն զկեանսն ընդհեաց նմա Կամբիւս, այլ և ոռճիկ և դարմանս ըստ պատշաճի մե-ծութեանն նորա կարգեաց նմա։ Իսկ Թագաւորն մեծ եգիպտացւոց ոչ շատացեալ բարութիւնքն զոր ընկալաւ, յուզեր դարձեալ սրտիւկ չիմութիւն զարձուցանել զթագաւորութիւնն իւր։ Ոլ զդաստատան յանդգնութենէն ընկալաւ արեամբ ցլոյ, և մեռաւ՝ Թագաւորեալ զամիս վեց. և ՚ի Եգիպտոս եղև ընդ ձեռամբ Կամբիւսեայ։ Նա լրեկացիք և կիւրենացիք և բարկիսացիք լուեալ զհամբաւ նորա, առաքեցին պատարագօք հանդերձ հրեշ տակս առ նա հնազանդել նմա։

Ընդ չորս ՚ի Սայիս ՚ի գերեզմանս Թագաւորացն եգիպտացւոց. և մնեալ յարքունիսն՝ զդիակն Ամասեայ հրամայեաց հանել ՚ի շիրմ, և նախատանօք բազմօք և հնամանօք ետ այրել զնա ՚ի հուր, որպէս ոչ էր սովո-րութիւն Պարսից և եգիպտացւոց։ Ո՛ր չէիմնդրութենէնն այնուհետև ՚ի գիակն Ամասեայ՝ յայտ արար Կամբիւս զո-խութիւն իւր ընդ նմա. զորոյ Թէպէտ և զպատճառսն ա-սել ստուգութիւ՛ն ոչ կարեմ, սակայն յայնմանէ գրգռե-ցաւ նա զէն առնուլ ՚ի վերայ Եգիպտոսի։

Ո՛ գառնալ տաբօղն, ՚ի վեցերորդի ամի Թագաւո-րութեանն իւրոյ, խորհեցաւ հանել զօրս ընդ առաջս երթս, տալ պատերազմ ընդ կարքեդոնացիս, ընդ ամենացիս և ընդ եթովպացիս։ Ո՛չ ընդ կարքեդոնացիս ոչ կա-րեր. քանզի փիւնիկեցիք, որ միայն զօրավիգն էին նմա ՚ի պատերազմին, ոչ առին յանձն մարտակից լինել նմա ընդդէմ համազգեացն յինքեանց սերելոց, քանզի կար-քեդոնացիք ՚ի Տիւրոսէ գաղթեալ էին։

Հաստատեցաւ ապա դիմել ՚ի վերայ այլոց երկուց ազգացն. և առաքեաց հրեշտակս Ա՛յնեթովպիա՝ պատ-ճառանօք լատեսել զիրս աշխարհին և զզօրութիւն նոցա, և բերել նմա զրոյց։ Նա տարան նորա ընդ լուբեանս

պատաւրագ, ըստ սովորութեանն Պարսից, ծիրանիս և ապա
բանջանս ոսկիս և բուսաճառս և դինի։ Զայդ արարին
եթովպացիքն զընծայսն, զի ոչ ինչ գոյր ի նոսա պիտա-
նացու ի կեանս՝ բաց ի գինւոյ, և անարգեցին զՀրեշ-
տակն՝ զգացեալ զի ի լրտեսել զաշխարհն եկեալ էն։
Այլ Թագաւորն եթովպացւոց փոխարէն պարգեւեաց
արքային Պարսից աղեղն լայնալիձ, զոր այր պարսիկ հա-
զիւ քառնալ կարէր, իսկ լարել՝ ոչ ոք ի նոցանէ. զոր
և ձգեալ առաջի հրեշտակացն՝ ասէ. Օ այս խրատ տար
ջինք ինձէն առ արքայն Պարսից. յորժամ կարողացցին
Պարսք վարել դիւրաբար իբրև զիս զաղեղն մեծ և լա-
տուար որպէս զնա, ապա ելցեն ի վերայ եթովպացւոց.
սակայն և ոչ յայնժամ բաւեսցեն միայն զօրքդ Կամ-
բիւսեայ։ Այլ նա երթեալ շնորհս կալցի դինւոյ՝ որ ոչ
արկին ի սիրտ եթովպացւոց ցանկութեն ընդարձակելոյ
զտէրութեն իւրեանց արտաքոյ բնիկ աշխարհին։

Օ այն պատգամ ընկալեալ Կամբիւս ծանրացաւումն
եղև, և խաղացոյց իսկևիսկ զգանձսն՝ ոչ ինչ հոգա-
ցեալ պաշար ի լնութեն բաւականի զօրացն, և ոչ զայլ
ինչ պէտս։ Այլ զգունդն յոմանցն նստոյց յաշխար-
հին, զոր նորոգ կալաւ, պահ ունել ի թշնամեաց և
յապստամբելոյ քնակչացն՝ մինչև ինքն դարձցի։ Այս-
հաեալ ի Մեմբիտ՝ որ ի վերինն Եգիպտոս, զօրա-
հատոյց եղև ի վերայ ամենայնացւոց յիսուն հազար այր՝
ասպատակել աւար հարկանել զաշխարհն նոցա, և զի-
մացդայ Լիմենի զմեհեանն որ էր անդ աւերել։ Եւորա
ընդ բազմօրեայ ձանապարհ անապատին՝ ի հարաւային
սահմի հողմոյ ընկելոյ, որ զաւազ երկրին ի վերայ նոցա
մրրկեր, ընդ աւազակուտիւն Թաղեցան։

Իսկ Կամբիւս մնեցին ցասմամբ վարեր զզօրս իւր
ի Եթովպիա. այլ առ ի չգոյէ պաշարոյ՝ եհաս ի վերայ
նոցա սով սաստիկ։ Ուստր տակաւին ժամանակ, առէ
Հերոդոտոս, խափան առնելոյ չարեացն. բայց նա նախա-
տինս համարեցաւ ձեռնթափ լինել ի գործոյն, և առեալ
տագնապաւ վարեր զնոսա՝ մինչև առ քաղքի ուտել նո-
ցա զխոտ, զարմանս և զտերևս ծառոց, և ապա յան-
խոտ վայրն՝ զգրաստս բանակին։ Այս այնպէս ապա սաստ-
կացաւ ի վերայ նոցա սովն՝ զի վիճակաւք զտանեերորդս
ի զօրացն ուտէին։ "Զազուրդ դժոխոյ քան զսով"
ասէ Այեսխիլոս։ Իսկ Թագաւորն յամառեալ էր ի խոր-
հուրդս իւր, և ոչ ինչ փոյթ էր նմա ընդ կորուստ զօ-
րացն. բայց ապա կասկածեալ ի վտանգէ անձին՝ դար-

Ցն. Բուն. գ. Ի.

ձայց զնոսա յետս։ Ա՚յլ այն ևս զարմանալի՝ զի ՚ի սովի
անդ ոչ ինչ պակասեցին արքայի համադաքե. քանզի
« Ա՚յնմ նման տակաւին հաւք աղնիւք, և զսպաս խորտ- Ած.
կաց բարձեալ բերին ուղտք՝ մինչ դեռ զօրք նոցա
վիճակ արկանէին եթէ ո՛ չարաչար կատարածիւն կո-
րիցէ, և ո՛ չարաչար ևս կենօք կեցցէ ,,։

Ա՚հա բանսարկուն իւրով՚ի ՍԱբէէ՝ կորուսեալ զըն-
տուարագոյն մասն զօրաց իւրոց։ Եւ յաջողութիւք բազ-
մաև եւ անդ պատերազմ ընդ դիս՝ ընդ դիւրանկուսան
քան զմարդ։ Ա՚յ էր քաղաքն այն մեծագործ և բազմա- Դ.Ես. ա.43.
գանձ մեհենօք. զօրս կողոպտեալ զնա՛, հրամայեաց ա-
պա հուր հարկանել ՚ի նոսա։ Յաձախսութիւն գանձուցն
որ էին անդ՝ վկայեն և մնացուածք նոցա ապրեալք ՚ի
հրդեհէն, երեքբարիւր տաղանդ ոսկի և երկու հազար
երեքբարիւր արծաթի։ Ա՚յս և զանուանի զշընջանակ շիր-
մին Ա՚խմանդեայ արքային զոսկեղէնն, երեքբարիւր վեճ-
ատն և հինգ կանգուն ՚ի շրջաբերուն, յորում՝ համաս-
տեղութեանցն ելումուտ նշանակեալ էր, եբարձ անտի
Ա՚ամբիւս։

Ա՚յլ զարձեալ ՚ի Ա՚ՀԻմիխս, հրաման ետ Ձունոց որ եբարձ. Ե.
էին ընդ նմա՝ երթալ իւրաքանչիւր յաշխարհ իւր։ Ա՚յլ Եսթ.
տեսեալ զքաղաքն ՚ի ցնծութիւն մեծի՛ լի եղև բարկութիւ,
համարեալ ընդ միտս իւր՝ թէ ոտնհար լինիցէ եգիպտա-
ցիք ընդ արկածս ձախողութիւն իւրոյ։ Ա՚յլ զիշխանս քա-
ղաքին Տարոյեալ՝ լուաւ ՚ի նոցանէ զպատճառս ցնծութեն,
զի դեռ ևս գտեալ էր Ա՚սիս աստուածն նոցա. և ոչ հա-
ւատացեալ բանիցն՝ ետ կոտորել զամենեսեան որպէս
խաբեբայս միաբանեալս ՚ի ստէ։ Ա՚յլ ապա կոչեցեալ
առ ինքն զքուրմն, և ՚ի նոցանէ զնոյն պատասխանի
լուեալ՝ ասէ. իսկ եթէ այդպէս քաղցր և բնտելասէր
աստուած է ձեզ՝ մինչև երևել մարդկան, ածէք զնա առ
իս. կամիմ և ես տեսանել զնա։ Ա՚յլ ածին զուարակ
ընծուղ առեալ ածելին փոխանակ աստուածոյ. զոր ի-
րրև ետես Ա՚ամբիւս, առաւել ևս սրտմտեալ՝ ած զդա-
շոյն և եհար զաղջր նորա։ Ա՚յլ կշտամբեալ զանմտուն
քրմացն, հրամայեաց սաստիկ գան հարկանել զնոսա,
և կոտորել զամ եգիպտացիս՝ որ կատարելին զոճսն։
Ա՚սկ զաստուածն տարան անդրէն ՚ի մեհեան. և անդ
առ գաւոց վիրին տապալեալ առ վայր մի, մեռաւ։

Ա՚յնժէ առասպելին եգիպտացւոց պարտ իցէ հաւա-
տալ, ՚ի պատուհաս մեծի ամպարշտութեանն որպիսի ինչ
ոչ երբեք գործեցեալ էր յաշխարհն անդ, ախտ մոլե-

գնաւթն Հարաւ ի Կամբիւս։ Ի՛րլ զի վաղագոյն ախ-
ոյեան այնուիկ ըմբռնեալ էր՝ ի գործոց նորա յայտ է.
զոր և ապա բազում ուրեք երևեցոյց, որպես և յա-
ջորդք ցուցանեն։

Իբր նորա և այլ եղբայր Համանհայր և Համամայր,
անուն նորա Ջանաբասպ ըստ Ակենոփեայ, զոր Հրո-
դոտոս Շ միրդ անուանի, և Յուստինոս՝ Միրդիս։ Ինդ
սա մնասցաւ Թագաւորն զի նա միայն ի Պարսից գլուխ-
նալեձն առաքեալ յարքայն եթովպացաց ձգեաց երբ
կռուելիք գրեթէ մատաղիք. և ոչ Հանդուրժեալ ունել
գնա ընդ իւր ի բանակի՝ դարձոյց ի Պարսս։ Իբր ապա
երազ եառեալ Թագաւորել Շ միրդեայ, և կասկածեալ
Թէ խորհի նա յափշտակել գիշխանութիւն իւր, փութա-
ցոյց գՀետ նորա ի Պարսս զՊերքասպ զմի ի մտերիմ
ծառայից իւրոց՝ սպանանել զեղբայր իւր. որ և կատա-
րեաց գՀրաման ալբայի։

Իսաի ի միւս ևս յերեւնագոյն սպանանել ածաւ։
Իբր ընդ նմա ի բանակի անդ կրասեբագոյն քոյր նո-
րա Աերովէ, զորոյ դժպատեհ օրինակ ամենայնոցունե-
Թեանն ընդ եղբօր իւրում՝ այսպէս աւանդէ Հրոդո-
տոս։ Զքնազագեղին սիրով անշրաժարելի ըմբռնեալ,
կոչեաց առ ինքն գիրաւագետս զգաստասրտս աշխարհին՝
Հարցանել ի նոցանէ Թէ իցէ օրէն եղբօր զքոյր ամուս
նասրել ընդ ինքեան։ Արդ զմծղնէաբնութիւն նեղել
Համարձակ ոչ իշխեցին, և Հակառակել դարձեալ կա-
